1991

apm. cr 24
cr. 3, 1

12004

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԳԱԳԱՂԻԱՅԻՈՑ

1005-44



247235
9(44)
Հ-36
№ 4153.
№ 2847/8.57
Ленина
1589

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԳԱՂԳԱԾՈՅ

ՅՕՐԻՆԵԱՑ

Հ. ԱԲՐԱՀԱՄ Վ. ՃԱՐԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷ

ՀԱՏՈՐ Բ.

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲՆ ՂԱԶԱՐ

1849 – ՌՄՂԸ

9(44)
Ф.Ч.1.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԳԱՂԳԻԱՅՈՑ

№ 4153.

ԼՈՒԴՈՎԻԿՈՍ ԺԷ.

ԳԼՈՒԽ Ա.

Խնամք Լուդովիկեայ ԺԷ. 'ի Բուրբոնգոռնէն
Պէրոնէան թուոյ։

1774 – 1778.

ԼՈՒԴՈՎԻԿՈՍ ԺԷ. թոռն հնգետասանե-
րորդին քանամեայ պայազատեալ զհաւր, բազում բարեբաւութիւք առաւել գտաւ քան զբազում թագաւորս. քանզի սիրող էր և խնդրող օգտի և խաղաղութեան աշխարհին. սակայն և քան զամենայն թագաւորս տարաբաղդ գտաւ՝ անհնարին հանդիպեալ հակառակութեաց և խոչընդոտն խափանարարաց։

Յամբառնալ նորա 'ի գահն՝ գաղղիականն

պետութեան մեծաքայլ 'ի կործանումն դիմէր. վատթարեալ և դադարեալ էր վաճառականութիւն, ընչից և համբարոց նուազուն տիրեալ բովանդակ, և պետութեանն փառք խոնարհեալ ընկճեալ էր առաջի Անգղիացւոց և Ռուսաց: Ոչ օրէնք կարգաց ուղղութեամբ երեւէին 'ի նմա և ոչ կրօնք հաստատուն. 'ի ծայր ապականութեան հասեալ էր աշխարհն, և զեղծումն բարուց մարդկանն արհամարհ առնէր յաչս նոցա զամենայն իշխանութիւն: Եթէ փոքր մի ևս երկայնակեաց լինէր Լուդովիկոս ԺԵ տեսանէր անշուշտ ամբարձեալ զդրօշ ապստամբութեան, զոր յաջորդն նորա բնաձին քաղցրութեամբ իւրով յամեցոյց զամս հնգետասան, սահմանաւորեալ օրինօք 'ի ձեռն աւագանւոյն զմիապետականն իշխանութիւն, և յաջող պատերազմաւ սրբեալ զանարգանս պետութեանն Գաղղիոյ. թէպէտ և ոչ կարաց խափուցանել իսպառ զապստամբութեն հրդեհ:

Ի սկզբան թագաւորութեան իւրում մեծապէս վրիպեցաւ յընտրելանդ յանձնաձիչ վարչութեն զծերունի կոմն Մորբփա, զայր ունայնամիտ և անկարող 'ի տեսչութիւն, որոյ ոչ այլ ինչ արժանի վատաակք էին, բայց զի առ Լուդովիկոսիւ ԺԵ անկեալ էր 'ի պաշտամանէն 'ի գրգռութենէ տարփածուաց կնամարդի արքային: Խորհրդով սորա իբրև 'ի շնորհս աղաչանաց ժողովրդեան վերստին հաստատեաց Լուդովիկոս զխորհրդարանն. այլ ոչ կարաց

սանձել զնա. քանզի ամբարձան ընդդէմ բնաձին քաղցրութեան նորա և սատան կային թագաւորական իշխանութեանն ամփոփել հնարելով 'ի նմանէ զիրաւունս ինքն իշխան հրամանատուութեամբ զհարկաց աշխարհին: Վէճն տարապարտ երկարեալ՝ վախճան առնոյր ուր ուրեմն 'ի ժողով ընդհանուր, և կատարած նորին յապստամբութիւն յանկէր և 'ի մահ թագաւորին: Այլ տակաւին յառաջին ամսոն ճարտար տեսչութեամբ Դիւռկոյի աննուազելի կային հապք գանձուցն ալքունի: Բայց աւաղ, զի թէպէտ մեծախորհուրդ էր նա և յաջողակ և հզօր 'ի գործ, այլ ապականեալ էին միաք նորա յիմաստս վարդապետին իւրոյ Ռուսոյի, և 'ի տեսչութեան իւրում ընդ մեծամեծ խորհուրդսն յաւել և զանիրաւս: Ունէր իւր խորհրդակից զիմաստասէրն Լամուանեօն Մալհէռպ. և ոչ է պարտ ժխտել զի բազմաք նպաստ եղև ալքային, և բազում բարութեանց պատճառ. քանզի յերկուս ամս անդ իշխանութեան իւրոյ նուազեցոյց ըզպարտս տէրութեան, և զամենայն ջան 'ի գործ արկ 'ի զարգացումն երկրագործութեան և ձեռարուեստից: Յերիս ինչ իրս կարևորս առաւել միտ եդ. առաջին՝ յաշատութիւն վաճառոյ ցորենոյ 'ի պետութեանն, յորում երկիրս 'ի դերևեալ ատատ իշխանութեան նորա. երկրորդ՝ 'ի բարձումն արուեստից ընդունայնութեան. և երրորդ՝ 'ի հաւասարաբաժին առնել զհարկս կալուածոց ընդ աղատն և ընդ ռամիկն. այլ և

զայս ոչ կարաց հանել 'ի գլուխ։ Քանզի կոմսն Մորբփայ մախացեալ ընդ փառս նորա և ընդ շնորհս գտանել առ արքայի և առ աւագանւոյն, և մանաւանդ յաչս ժողովրդեան, միաբանեաց ընդ իւր զաղնուականս, որք միշտ խնթիւ հայէին ընդ իշխանութիւն նորա, երկուցեալ թէ գուցէ բառնայցէ զազատութիւնս նոցա։ Եւ այսպէս միաբանեալ ընդդէմ Դիւռկոյի իշխանք և առաջնորդք, համարակալք գանձուց և տաճկալք ընդ որս էր և ձեռն Մորբփայ և զբշխոյին Մարիամայ Անդոնիեգդայ, 'ի հուշակել անդ հրովարտակի ազատութեան վաճառուց ցորենոյ, հնարեցան արկանել սով 'ի մայրաքաղաքն, յաւարի հարկանել զվաճառանոցս ցորենոյ, հրձիգ առնել զաղօրիս, և ամալ 'ի գեաս զհամբարս 'ի ձեռն կաշառակուրծ արանց սիկարեանց, որք լրբեալ ժպրհեցան. իսկ իշխանաւք դիմել մինչև 'ի Վերսայլ՝ ահ արկանել արքայի։

Զանգիտեալ նորա յաղմկէ շփոթին, երևեցաւ առ ժողովուրդն ընդ պատուհանս ապարանիցն և խոստացաւ նուազեցուցանել զգին հացի. և խնթալով հրամանէ ընկճել զապստամբս զինու բռնութեամբ. ինքն այնուհետև սկսաւ վարանել ընդ անձն իւր և ընդ խորհուրդս։

Տեսեալ Դիւռկոյի զվերս հերոս միտս թագաւորին 'ի կատարումն հրամանացն, հրաժարեցաւ ելթող զպաշտօն գանձապետութեանն 'ի Քլիւնի, որում յաջորդեաց ապա Նէքէր մեծահամբաւ տեղանաւորն ճինեբ-

բացի 'ի Փարիզ, բարեկամ՝ տանն ալքունի և գիտնոց, և հակառակող կարծեաց Դիւռ-կոյի (1777)։ Թէպէտ Ճարտար գիտէր հը-նարս ընլոյ զպակասութիւն գանձուն, այլ առ հարևանցի ևեթ ցուցեալ փոյթ՝ շատ համարեցաւ պատրել զամենեսին Ճարտա-րութեամբն և Ճոռոմութեամբ։ Սա ե-ղև մի 'ի պատճառաց պատերազմին Գաղ-ղիոյ ընդ Անգղիացիս 'ի նպաստ օգնակա-նութեան գաղթականաց Ամերիկացւոց, յորմէ ոչ սակաւ գրգիռ եղև խռովութեան Գաղղիոյ. զի անդ յԱմերիկա վասնեցան գանձք պետութեանն, և անտի ածան տեն-չանք ազատութեան և ազատաբեր սեր-մանք վրդովիչք խաղաղութեան ժողովրդոց և պետութեանց։

ԳԼՈՒԽ Բ.

Զէն առնուլ Գաղղիոյ ընդդէմ Անգղիացւոց 'ի Ռիկուանս օգնականութեան գաղթականաց նոցա ապստամբելոց յԱմերիկա։

1778 – 1780.

ՋԾԱՆՐՈՒԹԻՒՆ հարկացն բաղբաղելով գաղթականաց Անգղիացւոց որ 'ի ցամաք երկիրն Ամերիկայ՝ նշկահեցին զմայր իւրեանց զպետութիւն Մեծին Բրիտանիոյ, յորմէ հա-տուած գնացեալ էին։ Նախ առաջինն Պոս-

թրն քաղաք Թոմասփեայ զլուծն, և ապա ամենայն նահանգացն նուիրակք ժողովեալ 'ի Փիլադելփիա քաղաք հաստատուԹեամբ սնդեցան տալ պատերազմ 'ի վերայ ազատուԹեան, սպարապետ կարգեալ իւրեանց զԱշինկԹրն. այլ զի անկարողք էին միայնակ տևել տոկալ անգղիական զօրուԹեան, 'ի հայց և 'ի խնդիր ելին նիզակակցաց յԵւրոպա:

Այն ինչ երևեցաւ հրեշտակուԹեամբ 'ի Փարիզ Բենիամին Ֆրանքլին, այրն մեծանուն և հռչակեալ իմաստուԹեամբ և գիտովքն, պարզուԹեամբ գնացին և վարուցն այնպէս իմն յանկոյց զմիտս Գաղղիացւոց, մինչև ամենեցուն բորբոքեալ ջեռան ոգիք ձեռն տալ Ամերիկացւոց: Գաղղիա, ասէին, միշտ ապաւէն է հարստահարելոց. և Թէ, Հենրիկոս Դ զօրավիգն եղև զինուք Հոլանտայ 'ի նախագրաւ ազատուԹիւն, ոչինչ նուազ լիցին փառք և Լուդովիկոսի ԺԶ վանան զօրուԹեան կալ ձգեալ զբազուկ իւր մինչև 'ի նոր աշխարհն. նա մանաւանդ ժամ իսկ է քերելոյ յանձանց զնախատինս դաշանցն կռելոց 'ի 1763 ամի, խոնարհեցուցանելով զԱնգղիա, և ամփոփելով 'ի վաղեմի ոսոխէն իւրեանց զիշխանուԹիւն ծովու:

Լուդովիկոս այր արդարակորով 'ի բնէ՝ չյօժարէր ընդ այս, քանզի ոչ արդարուԹեան Թուէր գործ և ոչ խորհուրդ խոհական սատար լինել ապստամբաց, և իրաւունս տալ ժողովրդոց նշկահելոյ զիշխանուԹիւն տերանց. սակայն ոչ կարաց կալ ընդ-

դէմ միաշուրջ հաւանութեամբ ազգին։ Քանզի երիտասարդք Գաղղիոյ վառեալ 'ի սէր փառաց և ազատութեան, իղձք լինէին կանխել անցանել յԱմերիկա 'ի սրբել զնախատինս ղինուց Գաղղիոյ. և վաղ իսկ մառքէզն Լաֆայէթ ցուցեալ գիւցազնական նահատակութիւն 'ի պատճառս ազատութեան ժողովրդոց, զինեալ իւրովք ծախիւք նաւ մի՝ ճանապարհեալ էր յօգնութիւն ապստամբացն՝ օրինակաւն և քաջութեամբ անձին քան զօրութեամբ զինու խրախուսեալ ըզգաղթականն, բարեկամ լինէր Վոշինկթընի և յաստիճան զօրավարութեան հասանէր։ Ի նոյն գործ քաջութեան վառէին և բազումք յազատանոյն Գաղղիոյ։ Զայսոսիկ տեսեալ Լուդովիկեայ, ետթող յակամայ կամս զիւր տեսութիւն և հաւանեցաւ ընդ ազատութիւն Միացելոց նահանգացն Ամերիկայ։

Սարթին հանճարեղ և գործունեայ պաշտօնեայ ճանապարհաց յոսին կանգնել զծովային զօրութիւն Գաղղիոյ, որ գոգցեաւ նուազեալ էր բոլորովին 'ի վերջին ամս Լուդովիկոսի ԺԵ. և այնչափ զօրացեալ ամրացոյց, մինչև բաւական լինել 'ի գործ ձեռնտուութեան Ամերիկացւոց։ Սպարապետաց կաց ծովամարտիկ գնդին կոմն Օրվիլիէր, և անյապաղ անկեալ 'ի չոր պատահեցաւ թշնամեաց առ Ուէսան կղզեաւ (1779)։ Բախեցան անդէն սաստկապէս, և Անգղիացիք հարուածեալ կորակոր յեաս ընկրկեցան։ Ծովակալն գաղղիական տորմիլն

հրաման եւ վերջապահ խմբի նաւացն ըղ-
դէմ ունել հողմոյն և փակեալ զվերջ թշնա-
մեաց երկուստեք հրձիգ 'ի նոսա լինել. բայց
առ անզգուշութեան կամ թէ առ անփու-
թութեան ոչ գիտեմ, ապախտ լեալ հրա-
մանին զերծան Անգլիացիք, և 'ի մութ գի-
շերոյն անցուցեալ զլապտերս կանթեղացն՝
զի մի տեսցին, հեռացան անտի :

Կէսք 'ի զօրավարացն Գաղղիացւոց ար-
շաւեցին 'ի կղզիս Ամերիկոյ, և զօրացուցին
զձեռս Ժողովրդեան վտարանջեալ ամերիկիւղ
յԱնգլիացւոց: Կոմն Էսթէն մարտիկ քաջ,
քան հմուտ զօրավար, ոխերիմ թշնամի Անգ-
լիացւոց, յորոց երբեմն 'ի պատերազմի
դերի վարեալ և խստագոյնս տառապեալ
էր, 'ի քէն վրիժուց վարազաբար յարձա-
կեցաւ 'ի վերայ նոցա յաչս եղեալ զմահ և
զպարտութիւն. մարտեաւ ընդ Կրընադ
կղզւոյ՝ իբրև զսոսկական ոք զինուոր ինքնին
դիմադրաւ շահատակեալ 'ի վտանգս 'ի ձա-
կատաւ պատերազմին: Ոմն 'ի ռմբաձիգ զօ-
րականէն ձեռն եւ նմա եղանեալ 'ի պա-
տուար թշնամւոյն, և ինքն զօրականն քաջ
անկաւ անդէն հարեալ 'ի հրազինուց առ
ոտս զօրավարին իւրոյ. « Բարեկամք իմ,
աղաղակեաց Էսթէն, վրէժխնդիր լերուք
արեան քաջիս. հապա զհետ իմ խուժեցէք
առաքինիք »: Այն ինչ բանքն 'ի բերան նո-
րա էին, ոստուցեալ դիմեաց 'ի ներքս 'ի
պատնէշն և զօրք նորա զկնի. սուր 'ի վեր
առեալ կոտորեցին զդիմակայս, և զմնա-
ցեալսն դերի վարեցին, առեալ յաւար հա-

րիւր հրազէնս և զամենայն նաւս զորս գտին անդ :

Յետ երկուց աւուրց երևէր յանկարծ հանդէպ կղզւոյն տորմիղն Անգղիացի քսան և մի նաւուք. Եհար զնոսա կոմսն և փախցուցեալ տարեալ հաստատեցաւ 'ի տերութեանն : Սակայն ոչ այսպէս յաջողեաց նոցա և պաշարումն Սաւանայ կղզւոյն. քանզի Անգղիացիք քաջութեամբ զդէմ կալան յարձակմանն, և ստստկացաւ գործ պատերազմին. կոմսն զոգի 'ի բուին եգեալ վէրս յանձին կրելով թէպէտ և արութեամբ կանգնէր զդրօշն 'ի պատնէշ թշնամւոյն, սակայն ոչ կարացեալ յաղթել բազմութեանոցա և քաջագէպ տեղւոյն, բռնադատէր փողել զնահանջ՝ թողեալ բազում դիակունս անդէն :

Յայնմ ժամանակի դաշինս նիզակակցութեան կռեցին օգնական Գաղղիացիք ընդ Սպանիոյ և ընդ Հոլանտայ, և ակնարկ տեսանիւր այնուհետև Անգղիացւոցն պարտութիւն, թէպէտ և ոչ թուլացան նոքա. և անդ էր տեսանել զգոռ պատերազմսդ պատութիւնս՝ որ զմիմեանսդ եղևէլս առնէին 'ի քաջութի և 'ի հակառակամարտ բազմութեանաւացդ գեբելոց երկուստեք. 'ի միջոց 1780 ամին կալան Անգղիացիք երեք հարիւր քառասուն և եօթն նաւս ընդ մարտիկ և ընդ վաճառաբարձ. սակայն և ինքեանք ոչինչ նուազ քան զհինգ հարիւր քառասուն և ութ նաւս կորուսին :

Ի նմին ամի հանին Գաղղիացիք նաւատորդ

միշ կրկին 'ի նաւահանգստէն Պրէսդայ. ա-
մենակազմն պատրաստութեամբ որպիսի չէր
երբէք երևեցուցեալ Գաղղիոյ. և էին միա-
համուռ երեք հարիւր և ութսուն և ութ
նաւք զանազանեալ մեծութեամբք, ուղ-
ղեկցեալ յերեսուն և վեց պատերազմիկ
նաւաց: Առաջնոյն զօրավար կացեալ կոմսն
Կրաս նաւարկէր յԱնտիլեանս, և երկրորդ-
ին որ 'ի Փոնթիշէրի ուղղեալ էր՝ իշխանն
Սիւֆրան ծովակալ մեծանուն ահրնկէց
Անգղիացւոց 'ի Հնդիկս, ուր ոչ թոյլ տայր
նոցա միսիլ'ի կալուածս Հոլանդացւոց: Ժի-
րաժիր քաջութեամբ և նախանձու հասա-
րակաց օգտի, հանճարո

չան և Մոթ-Փիքէ կամ Լա Մոթ-Փիքէ։ Թողեալ զբազում գործս արուեցեալ Մոթ-Փիքեայ՝ յիշեսցուք զերևելին որ 'ի Փորդ-Ռուայալ։ Մինչդեռ 'ի ծովափունս անդ խաբիսիս արկեալ էր 'ի նորոգել զնաւսն, ետես մերձեցեալ 'ի տեղին չորեքտասան նաւս Անգղիացւոց և յարձակեալս 'ի վերայ պաշարաբեր նաւացն իւրոց. և անդէն յառաջասաստեալ զմի 'ի նաւուցն՝ որ կազմ կայր, էլ 'ի ճակատ թշնամեաց, էհար վանեաց և յազատուելն եղեալ զպաշարաբեր նաւսն, դարձաւ անդրէն 'ի տեղի իւր։

ԳԼՈՒԽ Գ.

Խորտակիլ Անգղիացւոց առաջի հրոյ նիզակաձոցն և խոնարհիլ 'ի հաշտութիւն Ռոշէալ զգաղ-ռանոն իւրեանց յապաստութիւն։

1780 - 1783.

Մինչդեռ գաղղիացի ծովակալք վեր 'ի վայր առնէին զծովային զօրութիւն Անգղիոյ, 'ի ցամաքի ոչ ինչ ընդհատ տագնապ տարակուսի արկանէին զնոքօք երևելի զօրավարքն Վաշինկթըն, Ռոշամպոյ և Լա-Ֆայէթ։ Յամին 1780 Քոռնուէյլզ զօրավար անգղիացի էառ զՇարլըս-Թոուն քաղաք, որոյ պահակապանք էին բանակ մի զօրաց. և շլացեալ յաջողութեամբն զթշնա-

միս առ ոտս իւր աղերսաւորս տեսանելով՝ մխեցաւ յերկիր նոցա, այլ զանխորհուրդ յանդգնութեանն էլոյծ զվրէժ ծանրակշիռ։ Պաշարեալ ամենուստ 'ի թշնամեաց, յոգիս ապաստան, խորտակեալ ամենայն ուրեք չարաչար և սովաբեկ, ոչ կարելով բանակել ուրեք, հալածեցաւ 'ի յԵօրք–թուին յերեսաց Լաֆայէթայ։ Անդէն 'ի վերայ հասեալ Ռոշամպոյ և Վոշինկթընի պաշարեցին զնա, և հրձգութեամբ հրազենուցն և ռմբաց, և գժնդակագոյն ևս սովու նեղեալ խոնարհեցուցին զնա անձնատուր լինել. և գերի անկաւ ամենայն զօրքն։ Եւ այսպէս հաստատիմն ամրացաւ ազատութիւն Միացեալ Նահանգաց։

Ի գալ ամին երկրորդի միաբանեցան Գաղղիացիք և Սպանիացիք արշաւել պատերազմաւ յԵամայիքա կղզի՝ որ էր բազմահարուստ և ճոխ հատուած Անգղիացւոց։ Կազմեցան պատրաստեցան մեծաւ հանդերձանօք 'ի կարևոր արշաւանս, որով ընկճել խորհէին զթշնամին և վախճան առնել մարտին։ Տորմիլ երեսուն և հնգից նաւաց Գաղղիացւոց յափուռնս անդ Մարթինիկայ պատրաստէին առաջնորդութիւն կոմսին Կրասայ հանդերձ հարիւր և յիսուն զինաբարձ նաւուք յուղղն անկանել, և զափամբք քերեալ Սրբոյն Դոմինիկոսի կղզւոյ՝ առնուլ անտի ընդ իւրեանս և զեօթնեւտասան սպանիացի նաւսն պատերազմականս, և քսան հաղար մարտիկ՝ երկրագումար զօրականաց։ Ռոտնէյ ծովակալն անգղիացի՝ խարիսխ արկեալ

մերձ 'ի սուրբն Լուցիա, երեսուն և վեց նաւուք գէտ ակնկալեալ մնայր ջուրց կոմսին, աճապարեալ հարկանել զԳաղղիացիս, մինչ չև միացեալ նոցա ընդ սպանիական զինուց, թերևս ապրեցուցանել զկղզին Եամայիքա։

Արդ իբրև 'ի չու անկաւ Կրաս կանխեալ արձակեալ զպաշարաբարձ նաւս, աճապարեաց Ռոանէյ անկանել 'ի Թիկանց նոցա. թեթևընթացք 'ի նաւաց իւրոց հասին յեռամենայից գաղղիական տորմղին և սակաւել 'ի մարտ ոչ մարթացան, այլ նեղէին ևեթ. քանզի 'ի կամէն ճակատ յարդարել՝ տորմիզն Գաղղիացւոց առագաստալից հեռանայր յոյժ, մինչև անյոյս լինել Անգղիացւոց։ Յերկուս աւուրս հասին Գաղղիացիք 'ի հիւսիսակողմն Կուատալուպայ. անդ մին 'ի նաւաց նոցա հարաւ յանառաս ընդ նաւու ծովակալին, և վնասեալ յոյժ 'ի բախմանէն՝ մնաց յետս, մինչև ոչ ևս երևել։ Կրաս չածեալ զմնաւ հասանել ուներ ըզ Սուրբն Դոմինիկոս, զի էր լինչ մեծ կորուստ գերել նաւու միոյ՝ ուր մնայր նմա ընդ Սպանիացիս միանալ և ծովակալել, նշան եւ նաւացն հասանել զհետ Անգղիացւոց։ և թէպէտ զերծոյց զյետամենայ նաւն, սակայն բանադատեցաւ 'ի մարտ յորմէ խորշէին պարտ էր 'ի ժամուն։ Ռոանէյ հասեալ 'ի լուսին սենեանացն, հմտութիւն քաջութեանն անկաւ 'ի բուն նաւատորմին, և պուղեալ զկարգս նաւաց՝ մերձ հասանէր 'ի նաւ ծովակալին, և պաշարէր զնա հանդերձ այլովք հինգ նաւօք. որք յետ ուժգին դիմակալու-

թեան 'ի ձեռս անկանէին թշնամւոյն։ Անդ կոմսն Կրաս պաշարեալ ամենուստ 'ի հնգետասան նաւաց՝ քաջապէս մարտնչէր ժամս ձիգս, մինչև ծակոտեալ և խորտակեալ նաւուն զորինակ իմն բերելով կամրջի կառուցելոյ 'ի վերայ ջուրց, հաղիւ կարէր կալ յալիս անդ։ Ի վաղիւ անդր և երեք 'ի նաւացն խորտակելոց անկանէին 'ի ձեռս թշնամւոյն։ Այլք 'ի նաւացն ընդ պաշարաբերիցն հասին 'ի սուրբն Դոմինիկոս, սակայն զօրավարն գերի անկեալ թշնամւոյն, 'ի դերև ելշքեղ գործ պատերազմին Եմայիքայ։ Այս միայն 'ի յաղթութենէն եղև շահ Անգղիացւոց, որ առ բազում տուժիւք պատերազմացն զոր կրեցին՝ չէր մեծ և ոչ պահել նոցա քաջութեամբ զամուրն ճիպրալթար. որոյ արժանաւոր անցք պաշարմանն՝ առաւել արդեօք 'ի պատմութիւն Սպանիացւոց կամ Անգղիոյ պատշաճէր քան 'ի Գաղղիացւոցն. սակայն ոչինչ անդէպ իցէ համառօտիւ անցանել ընդ մեծահամբաւ պատերազմն, ուր հաւասար պատերազմակիցք էին և Գաղղիացիք։

Գերահռչակ ամրոցս այս կառուցեալ 'ի մուտս կրճին որ բաժանէ զԵւրոպա 'ի Լիբիոյ, երբեմն 'ի ձեռս Սպանիացւոց, զկնի ապա անց յԱնգղիացիս։ Քրիստոն զօրավար գաղղիական և սպանիական բանակին առեալ զՄինորիկա կղզի և զամրոցն սուրբ Փիլիպպոս, 'ի նեղ արկանէր պաշարմամբ զճիպրալթար. հրաղենուց և վառօդոց անչափ էր յոլովութիւն, նաև պատերազմիկք ընդ

մեծ և փոքր էին հարիւր և քառասուն, և երկրախումբ զօրաց բիւրք չորք. այս ամենայն ահագին պատրաստութիւնք գոգցեա ոչինչ երկեղուկս արկանէին քաջացն ամրականաց Անգղիացւոց, որք ոչինչ աւելի էին քան զու�հազար: Ի հրաձիգ ռմբացն՝ 'ի հուր դատեցան ամենայն շէնք քաղաքին, և 'ի տեղիս տեղիս կործանեցան պարիսպք ամրոցին. այլ զօրավարն Ելիոտ իշխան ամրոցին այր քաջ և ճարտար աճապարեալ արագ արագ տայր կարկատել զնարիսարեալ մասունսն: Յետ բազում և անօգուտ ջանից, պաշարիչք 'ի ձեռն Տարսոնի ճարտարապետի գաղղիացւոյ կանգնէին մարտկոցս տան 'ի վերայ սայլից. և իբրև նոքօք մեծայոյս էին առնուլ զքաղաքն, Ելիոտ յանկարծ 'ի բաց առեալ զփայտեայ պարիսպն՝ 'ի վեր երևեցուցանէր մարտկոցս հզօրագոյնս ընդդէմ մարտկոցաց նոցա, և ռումբս հրացեալս արկեալ 'ի նոսա յաճիւն դատէր զնոսա և զբազմութիւն թշնամեացն ծովակուր կորուսանէր, և ոմանց գթութեամբ ձեռն տուեալ 'ի քաղաքն ապրեցուցանէր: Ոչինչ լքան Գաղղիացիք ձախողութեամբն. և իբրև հանապազորդէին զպաշարումն, պայմանք խաղաղութե 'ի վերայ հասեալ՝ վախճան առնէին երեքամեայ պաշարմանն:

Ի չորից ամաց հետէ լինէր մարտ սաստիկ և 'ի Հնդիկս. թափեցին Անգղիացիք զՓոնթիշէրի 'ի ձեռաց Գաղղիացւոց, և զբազում քաղաքս հատին 'ի Հոլանտացւոց: Նիզա-

կակից էր Գաղղիոյ Հայտէր Ալի խան, Սուլ-
դանն Մայսուրի, և որդի նորա Թիփու
Սայիպ. ոչք թէպէտ հարան բաղումս ուրեք
յԱնգղիացւոց, այլ և զնոսա հարին և զնոսա
մեծամեծս հատուցին՝ առպատակաւ աւե-
րեալ զգաւառս նոցա, մինչև մահուամբ
Հայտէր Ալեայ վերսին զօրացան Անգ-
ղիացիք։ Այլ Սիւֆրան ծովակալ քաջու-
թեամբն անեղծ պահեալ զծովային զօրու-
թիւն Գաղղիոյ, ձեռն ետ Հոլանտացւոց.
և 'ի պահ գաղթականացն՝ որ 'ի Գլուխ Բա-
րեյուսոյ ընդդէմ Անգղիացւոց, և 'ի Քորո-
մանտէլ՝ նիզակակից ժողովրդովք իւրովք
յերիս և 'ի չորս պատերազմունս յաղթա-
նակս կանգնեաց 'ի վերայ թշնամեաց, մինչև
'ի լուր հաշտութեան դուլ արար պատե-
րազմին։ Եւ Թիփու Սայիպ ետհար զԱ՛սա-
թէոս զօրավար անգղիացի զհռչակեալն
գործովք անգթութեանց իւրոց, որոյ ա-
ռեալ զՕմանփոր քաղաք, ընդ սուր հա-
նեալ էր զամենայն բնակիչս քաղաքին, և
զչորեք հարիւր կանայս Հայտէրայ և Թիփու
Սայիպայ. վասն որոյ և ընդունէր 'ի նմանէ
զարժանաւոր պատուհաս անգթութեանն։

Յետ այսր ամենայնի արար Գաղղիա խա-
ղաղութիւն փառաւք, թափեալ անդրէն 'ի
ձեռաց Անգղիոյ զհատեալ կալուածս իւր
'ի Հնդիկս առ նախկին պատերազմաք, և
եբարձ զնախատալից դաշնադրութիւն՝ որ
վասն նաւահանգստին և ամրոցին Տընքէր-
քայ (1783)։

ԳԼՈՒԽ Դ.

Ներքին ողորմելի վիճակ Գաղղիոյ, մինչև 'ի ոչինչ ուղղաթռամբ ծողովոյն։

1783 – 1789։

ՄԻՆՉԴԵՌ յաղթող հանգիստանայր Գաղղիա արտաքուստ, առտնին 'ի վատթարն դիմէր միշտ։ Նէքէր գանձապետն արքունի որ յաջորդեալ էր զԴիւռկոյ և զՔլոնի, յետ ամաց ինչ-վասն անիրաւութեանցն 'ի բաց արձակեցաւ 'ի պաշտամանէն, թողեալ զպետութիւնն ընդ պարտիւք եօթն հարիւր երեսուն և երեք միլիոնից, որ առաւելագոյն մասամբ արդասիք էին համարակալ պաշտօնէին։ Յեկամտից հասարակաց անմարթ էր ընուլ զանչափ պակասութիւն գանձուն. զի ծախք պետութեանն յիսուն միլիոնաւ առաւելուին քան զմուտսն։ Այսպէս պէղէր նա խորխորատ՝ ընկլուզանել զտէրութիւնն 'ի ներքս։

Դաշնակցութիւն ընդ Անգղիոյ 'ի տուրևառ փոփոխումն վաճառաց երագեաց և ևս զկործանումն պետութեն. քանզի կարծելով եթէ այնու յաւելուցուն 'ի հարստութիւն մեծ՝ խաբեցան. զի մինչդեռ ան-

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

փութութեամբ և ընդունայնասիրութեամբ Գաղղիացիք զկերպասս Անգղիոյ 'ի կիր արկանէին, Անգղիացիք զՓորթոգալայն նախամեծար ընտրեալ զգինի, զԻտալիոյ զմետաքսեայս և զձէթ, փոխան վաճառուց դրամս հանէին 'ի Գաղղիոյ: Արագ արագ սպառեցան դրամք հասարակաց և տէրութիւնն երթայր և վատթարէր:

Յետ Նէքէրայ գանձապետ կացեալ Ժոլի Ֆլէօրի և Օրմըսօն՝ չեղեն ձեռնհաս դարման ինչ տանել չարեացն. ապա Քալոն այր հանճարեղ, նրբամիտ և զարմանալի 'ի գիւտս հնարից: Սա 'ի հանճար իւր վստահացեալ և 'ի բաղդն, և մանաւանդ 'ի բարեկամս, անփոյթ զկարևոր շահիւք պետութեան, զհակառակ Նէքէրայ կալաւ ճանապարհ. զառաջինն նենգանօք պատրեաց զամենեսին, այլ իբրև ոչ ևս էր հնար ծածկել զհնարսն՝ ձեռն էարկ հարկս արկանել 'ի վերայ ժողովրդեան. և իբրև ընդդէմ եկաց այսմ խորհրդարանն, 'ի ժողով գումարեաց զմեծամեծս տէրութեանն. և յայնմ ևս ոչ կարացեալ ըստ խորհրդոյ մտացն վճարել ինչ, հրաժարեցաւ 'ի պաշտամանէն. և յաջորդեաց զնա (1787) Լոմէնի Պրիէն արքեպիսկոպոս Տոլուսայ և յետոյ կարդինալ:

Ի վանդաւոր հանգամանս ժամանակին խորհեցաւ թագաւորն գիտել զկամս ժողովրդեան իւրոյ, և 'ի ժողով գումարեաց զմեծամեծս տէրութեանն. այլ առանց ինչ վճարելոյ լուծաւ ժողովն, խմաստութեամբ թագաւորին թողլով զհնարս յոտին կանգնելոյ

ղդանձն արքունի։ Յայնժամ սահմանեաց Լուդովիկոս զտուրս դրոշմաւոր թղթոյ՝ 'ի վերայ վաճառականաց, և հարկս կալուածոց 'ի վերայ տեարց երկրի ազատաց և սոսկակա-նաց. որով զերծանէին աղքատք 'ի տուժից։ Պարտ էր ընդունելի լինել մեծատանց հարկիս այսորիկ որ չէր ինչ հարստահարիչ, և աղքատաց՝ զի թեթևութիւն գործէր նոցա. այլ հակառակն դիպաւ։ Քանզի խորհրդա-րանն Փարիզու և մեծատունք տեարք կալուա-ծոց՝ մերժեցին զօրէնսն. նոյնպէս և խորհուր-դարանն Էսայ, Ռուանայ, և Պորտոյի՝ զա-մենայն զմեծութիւն իւրեանց 'ի վաճառակա-նութիւն խարսխեալ, հակառակ եղին տրոց դրոշմաւոր թղթոյ։ Լուդովիկոս՝ որ խնայ-օրէն ուղղէր զառանին ծախս իւր, անփո-փոխելի եկաց 'ի կատարումն հրամանացն. և զխորհրդարանն Փարիզու որ ժպրհէրն բո-ղոքել իբրև արտաքոյ օրինաց ինչ գործել արքայի՝ նոր տուրս յաւելով 'ի վերայ ժողո-վրդեան առանց հաճութեան իւրոյ, տարա-գիր արար։ Նոյնպէս և զդուքսն Աբրեղիո-նի ընկերօք իւրովք վասն խաթիւ խօսելոյ ընդ արքայի։ Այլ զօրավիգն կացին խոր-հրդարանին մեծամեծք, դատաւորք և ժո-ղովուրդն իսկ. որով յայտնի ծանուցաւ զի առ անձնախնդիր շահուց հակառակէին ա-տենակալք ընդդէմ նորոց հարկացն (1788)։

Մինչ հանապազորդէրն այս գժտութիւն, Լուդովիկոս ըստ խրատուն Պրիէնայ դար-ձոյց անդրէն զազատութիւն Կալուածակա-նաց որ հարիւր ամաք յառաջ յետս կոչ-

մամբ հրովարտակին Նանթեայ՝ ամփոփեալն էր։ Անշուշտ զղջացաւ ապա ընդ այս թագաւորն, յորժամ թշնամիս և դահիճս անձին իւրոյ տեսանէր զբազումս՝ որոց շնորհեացն զպատիւ և զիրաւունս քաղաքացւոյ։

Իսկ խորհրդարանն Փարիզու զկնի ամսոց վեց տաղտկացեալ ընդ վայրապար տարագրութիւնն, սկսաւ յօժարագոյնս զանձն ցուցանել՝ի կամս արքունեաց։ Իսկ սա յայնժամ կարօտ արծաթոյ՝ լուաւ նոցա մտադիւր, ոչ այլ ինչ պայմանս եդեալ առաջի, բայց զի հլուագոյնք այնուհետև լիցին՝ի հրամանս թագաւորին։

Այն ինչ հաստատեալ նոցա՝ի պաշտաման իւրեանց,՝ի մուռացօնս արկանէին զնոստումն իւրեանց. և Լոմէնի առ անհոգութեան և կամ առ նենգութեան չառնէր ինչ փոյթ ածելոյ զնոսա՝ի հնազանդութիւն. վասն որոյ անկեալ՝ի պատուոյն՝ միաբան հաւանութեամբ ժողովրդեան կարգեցաւ վերսային Նէքէր՝ի գանձապետութիւն, իբրև միայն կարող ուղղելոյ զթափրացեալ գանձ պետութեանն, և դարման տանելոյ չարեացս ամենայնի։

Իսկ նա նախանձաւոր փառաց իւրոց և նենգաւոր, առ՝ի գրաւել զսէր հասարակաց, օրինադրեաց ժողով աշխարհագումար տէրութեան՝ի Վերսայլ, յաղնուականաց, ՝ի կղերց և՝ի հասարակ ժողովրդենէ, և ընդդէմ խորհրդոյ աւագանւոյն շնորհեաց երկրորդի դասու ժողովոյն իշխանութիւն կըր-

կին տալոյ քուեայս հաւասար երկուց ա-
ռաջնոց կարգաց միանգամայն։ Քանզի այս
ընորհ, ասէր նենգամիտ իշխանն, ածցէ ըզ-
ժողովուրդն 'ի կարևոր նպաստ տէրութեանն։
Այլ սակայն նոյն իսկ զկնի 'ի բազմադիմի
աղէտս և 'ի խռովութիւնս և 'ի կործանումն
իսկ թագաւորութեան յանդէր։ Եւ ան-
դէն ահա յարեան յոյզք խռովութեանց
'ի գաւառս վասն ընտրութեան նուիրա-
կացն, և տարուբերէր աղմուկն զամենե-
ցուն զնորհուրդս։ Միրապոյ մերժեալ
յաղնուականաց դասուէն վասն անառակ
գնացիցն և ծանր պարտուց, խառնեցաւ
ընդ ռամկին. և ընդ այս նորանշան գործ
շփոթեցան ազնուականք, և դղրդէր Պրովին-
կիա ողջոյն։

Դարձեալ և քրիստինիլեն մեծ լսելի եղև
յարքունիս վասն դքսին Աւրեղիոնի որ դար-
ձեալ էր յաքսորանացն՝ որպէս թէ կուսա-
կիցս իւր առնիցէ 'ի նուիրակաց ժողովոյն.
և զի գրգռութեամբ նորա խառնիճաղանճն
հրձիգ արարեալ էր զաւուն թղթագործի ու-
ղուք, որ գործարանս բազումս ունէր և աւե-
լի քան զերեք հարիւր գործաւորս ընդ ձե-
ռամբ։ Իշխանս այս բնաւորութեամբ հանդի-
պեալ սիրելւոյ և ժառանգ հայրենի մեծի
գանձուց, անառակ կենաւքն զեղծանէր ձրիւք
բնութեամբ և բաղդի։ Անփոփոխ 'ի բնաւորու-
թենէն՝ մերթ անփոյթ ոք երևէր և մերթ
եռանդնոտ ռամկասէր. այսօր յանդուգն
և փառախնդիր, վաղիւ հեզ և անտենչիկ։
Ոխացեալ ընդ թագուհւոյն, թշնամացաւ

և ընդ ալքունիս. Ճապաղելով զդանձան հատ արալ զթիկունս կուսակցաք իւրովք, մեծամեծ իրաց ակն եդեալ, և բազմաք սատար եղև չարեացն Գաղղիոյ։

Այլ մեր մինչև առեալ պատմել զնոցուն և զԱզգայինն Ժողովոյ, տացուք համառօտիւ զպատկեր խռովութեան Գաղղիոյ՝ որ 'ի միջոց քառասուն ամաց չորիցս յեղափոխեցաւ։ Յառաջնումն պատերազմ ահաւոր գժտութեան ազգին ընդ իշխանութեն Թագաւորին և ընդ շնորհս ազնուականաց, զոր ասէր 'ի յաղթութիւն ժողովրդեան և յանկումն գահուն։ Յերկրորդումն՝ պատերազմունք ընդ օտարս և իշխանութիւն ռամկին, և բռնութիւն վայրագ և թիւր մարդկան, ընուն արեանհեղութեաք զԳաղղիա, մատնեալ յահ և յերկիւղ յերեսաց գազանաբարոյ մարդկան. որում զհետ անիշխանութիւն և ժամանակ հասարակապետութեան յաջորդեն։ Իսկ յերրորդումն խոնջեալ ազգն և յոգիս ապաստան յերեսաց չարեաց իւրոց, խնդրէ իւր ապաւէն 'ի միապետութեան հզօր զօրավարի։ Փոխի յայնժամ Գաղղիա յասպարէզ պատերազմաց, և զամն երկոտասան ընու յաղթանակաք իւրովք զԵւրոպա. և այս է ժամանակ հիւպատոսութեան և ինքնակալութեանն Նափոլէոնի։ Իսկ 'ի չորրորդումն՝ յետ անկման Նափոլէոնի զարթուցեալ վերատին 'ի սիրտ Գաղղիացւոց սէր ազատութեան և նորոգ սահմանադրութեան օրինաց՝ ամփոփէ ըզմիապետական իշխանութիւն Թագաւորին։

ԳԼՈՒԽ Ե.

Աղգային ժողով, և անուանագրել Նոր-Իրակաց ժողովրդեան հրամանի Ռագատորին :

Մեծամեծ և շքեղ պատրաստութիւնք լինէին 'ի գումարումն ժողովոյն. Թագաւորն և երիտասարդք՝ ժողովականաց և ամենայն պաշտօնեայք տէրութեան արկեալ իւրաքանչիւր զանձամբ զհանդերձս պատուոյ, և պերճութիւն արքունեաց մեծափայլ շողայր քան զօրէն սովորական : Առաջին կրկին կարգք ժողովոյն գեղայօրէն զարդարեալք՝ իշխանքն էին և դուքսք, աւագանին, ազնուականք, եպիսկոպոսունք արկեալ ծիրանիս և խոյրս փոլփոլեալս 'ի ցցունս : Փողոցք ընդ որս անցանէին, ծածկեալ էին դորգովք և ծաղկամէջք, և գունդք զօրաց Գաղղիացւոց և Հելուետիացւոց տողեալ կարգաւ 'ի մայր եկեղեցւոյ մինչև 'ի սուրբն Լուդովիկոս. պատուհանք զարդարեալք ճոխ դիպակօք և լցեալ հանդիսատեսօք. ամենայն հասակ, և ամենայն կարգ, արք և կանայք զարդարեալք էին ըստ իւրաքանչիւր պայմանի : Անչափ էր և անպատմելի խնդութիւն ժողովրդեանն. արբեալք իմն թուէին ամենեքին, երեսք ծաղկեալ և սիրտք 'ի հրճուանս ծափ զծափի հարկանէին. Թշնամեաց մոռացեալ զհեռ և

զատելութիւն, ձեռս 'ի ձեռս տուեալ, երաշէին զհանդերձեալ աւուրս բարու-
թեան և զերջանիկ աղատութեան և փա-
ռաց Գաղղիոյ։ Նուագարանացն ձայն ներ-
դաշնակ 'ի զանազան տեղեաց զոդն հնչէ-
ցուցանէր, դրնդիւն զօրաց, թնդիւն թըմբ-
կաց, հնչիւն փողոց, և վսեմնուագք կղերց՝
յայլ նոր աշխարհ զմիտս մարդկան յափրշ-
տակէին. և մանաւանդ ատենաբանութիւն
եպիսկոպոսին Նանսեայ յեկեղեցւոջ՝ զա-
մենեցուն զսիրտս վառէր բորբոքէր։ Եւ
զմտաւ երբէք ոք չածէր՝ զի յեղափոխու-
թիւնն այսպիսի՝ հանդերձեալ էր տատա-
նել 'ի հիմանց զկարգ քաղաքաժողով ընկե-
րութեան, սասանել զմարդկութիւն, զկրօնս,
զօրէնս, զկարգս, և այլափոխել զոգի, ըզ-
միտս և զբարս ազգին։ Էին անդ և նուի-
րակք ռամկին արկեալ զանձամբ ասուեայ
սեաւ. այլ պարզութիւն տարազուն ոչ թա-
գուցանէր զզօրութիւն իշխանութեանն։
Անդ և դուքսն Աւրեղիոնի զկնի աղնուա-
կանաց դասուն երթայր, ցանկանալով իմն
ընդ երկրորդի դասուն խառնել։ Ի վաղիւ-
անդր գումարեցաւ ժողովն 'ի Վերսայլ
'ի դահլճին Մընիւ Փլէզիր կոչեցելոյ. իբրև
եդաւ թագաւորն զնոյր իւր, և կղերք և
աղատախուսքն եդան զնոյրս իւրեանց,
և ապ և նուիրակք ռամկին՝ ընդդէմ սահմա-
նելոյ կարգին։ Խօսեցաւ նախ թագաւորն
'ի սկզբնաւորութիւն ժողովոյն, խօսեցաւ
և ատենադպիրն, զկնի ապա և նէքէր. և
ըուծաւ զայն օր ժողովն։

Ի միւսում աւուր 'ի գումարել ժողովոյն սկիզբն լինէր հակառակութեան վասն իշխանութեանն դասուց իւրաքանչիւր 'ի քուէարկութիւն : Ի զուր ուխտ եկեղեցւոյն Գաղղիոյ և ազատանին կանխեալ բողոք բառնային ընդդէմ հրամանին որ սակս հրաժարելոյ յազատութենէ իւրաքանչիւր պայազատութեանց , և ընդդէմ բռնաբարոյ իշխանութեան երրորդի դասու ժողովոյն , որ անդէն դեռ 'ի սկզբանն յանդուգն խրոխտայր . որ և յաւուր անդ սկզբան ազգախումբ ժողովոյն 'ի մայիսի 15 , պահանջէր ըստ վաղեմի սովորութեան մի միայն գումարել ատեան՝ հրաւիրելով անդր և զնուիրակս կղերոյ և ազատանւոյն . և բազմաց 'ի նոցանէ հնազանդեալ կոչոյն՝ երթային . և այսպէս յեօթնևատասն ամսեանն յունիսի ընդդէմ թագաւորական իշխանութեան՝ այս անիրաւ ժողով անուանէր իւրովն Ազգային ժողով :

Լուդովիկոս գուշակեալ կանխաւ զկատարած խռովայոյզ ժողովոյն՝ եդ 'ի մէջ խափանել զնոյն : Կոչեաց զնուրան 'ի խորհուրդ , և այսր ազագաւ փակեցան դահլիճքն զաւուրս ինչ : Կղերք և ազնուականք մեծարեցին զհրաման արքայի լուծանել զժողովն . այլ ռամիկն անգոսնեալ զայն , գումարեցաւ 'ի քսան և երկու ամսեան յունիսի 'ի սրահն ԺԷօ–սը Փոմ. և անդ թշնամանօք և լուտանօք հանդերձ ընդդէմ թագաւորին՝ երդուաւ մի՛ լուծանել զժողովն մինչև կարգեալ սահմանադիր

օրէնս պետութեան Գաղղիոյ։ Որպէս թէ երիցագոյնն 'ի պետութիւնս Եւրոպայ և զարգացեալն 'ի քաղաքականութեան՝ ոչ ունէր տակաւին զօրէնդրութիւն և զկարգ։

Ի վաղիւ անդր և յոլովք 'ի նուիրակաց կղերց և ազատանուոյն երթեալ խառնեցան ընդ երրորդի դասուն, միաբանեալ ընդ նմա։ Ինքին աւուր հոլոնեցաւ ժողովն. և Թագաւորն Լուդովիկոս արքայական պերճութեամբ մտեալ անդր, խօսեցաւ իբրև հայր քան իբրև տէր, և թղթով հրատարակեաց բաղում շնորհս ազատութեան հաւանութեամբ երկուց դասուց ժողովոյն, տուեալ առ երրորդ դաս ռամկին։ Եւ այսպէս վախճան առնէր բանիցն. "Պատուիրեմ ձեզ ցրուել զժողովդ, և վաղիւ 'ի կարգեալ տեղւոջ դումարել 'ի խորհուրդ"։ զայս ասաց և եկ թագաւորն արտաքս, եկին ընդ նմա և ազատանին և կէսք 'ի կղերց։ Ռամիկն իբրև զարհուրեալ լուա և յերկեայս կայր. յայնժամ 'ի վեր կանգնեալ Միրապոյն խրախուսեաց զժողովականն արհամարհել զթագաւորական իշխանութեամբ, և խրոխտայր օրէնս տալ թագաւորին. յուշ ածեալ զերդումն նոցա մի լուծանել զժողովն մինչև օրէնս կարգեալ պետութեան։ Եւ տա իշխանն՝ որ 'ի գիմաց արքայի գայր յորդորել զնոսա 'ի կատարումն թագաւորական հրամանին, համարձակագոյնս պատասխանի արարեալ ասէ. "Երթ, ասա ցտէր քո, հաւանութեամբ ժողովրդեան դումարեալ մեր ասա՝ զինուց բռնութեամբ

միայն հանցէ զմեզ ասել ,, : Զնոյն և ամենայն նուիրակքն հաստատեցին , և 'ի միբերան արտաքոյ ամենայն օրինաց ընդդէմ հայրագուութ խնամոց Թագաւորին՝ ժպրհեցան ազատս յարքունի իշխանութէ զանձինս հրատարակել , իբր նուիրականս ոմանս և անմեղանչելս :

Ընդ յանդուգն համարձակութիւն Ազգային ժողովոյն՝ տարակուսեալ երկբայէր Թագաւորն . անօգուտ և ընդ վայր համարէր այլ ևս յամառել , և անօգտակարագոյն ևս՝ զինչանել Թողութեամբ . կոչեաց առ ինքն զդուքսն Լուքսեմպուրկայ և զոմանս 'ի գլխաւորաց ազատախուռմբ նուիրակաց . հարցանէր ցնոսա Թէ " Յինչ միտս էին և զինչ խորհէին ,, : Եւ պատասխանի դուքսն , " Մեռցուք , տէր արքայ . այլ մինչև անկեալ ընդ զինուք ապստամբաց , 'ի դերև հանցուք զգործս նոցա , և Թերևս Թափեսցուք 'ի ժանեաց նոցա զԹագաւորական իշխանութիւն և զգահն ,, : Յայտնի էր վտանգն , և յոյժ կասկածելի յաջողութիւն գործոյն . վասն որոյ և մեծապէս խորհուրդս այս ազդէր 'ի միտս Թագաւորին , որ և եռանդեամբ ինն արար պատասխանի . " Եւ ես զնոյն հաստատեցի 'ի մտի . և աղաչեմ զառաքինի ազատանին միաբանել ընդ նուիրակս ժողովրդեան . և Եթէ աղաչանաք ոչ շատանայցեն , հրաման ևս 'ի վերայ ածեմ ։ Ոչ կամիմ զկորուստս և ոչ զմիոյ ուրուք 'ի հպատակացս վասն իմ ,, : Այսոքիկ վերջին բանք նորա օրէնք եղեն նմա յամենայն գործս ,

և պատճառք ամենայն աղէտից նորին։ Բարութիւն սրտին խաբեաց զնա, և ոչ էառ 'ի միտ՝ զի որպէս 'ի բնական մարմնի, նոյն և 'ի բարոյականին շահ օգտի 'ի գլխոյն յամենայն անդամս ծաւալի. և զի կաթիլք ինչ ճնաստակար արեան հեղեալ արդարութեամբ, փրկութիւն գործեն մարմնոյն առհասարակ։ Նովին արքունի հրամանաւ ստիպեալ աղնուականք և կղերք թողին զօգուտս անձանց և զբնածին ատելութիւն ընդդէմ ապստամբաց, և չոգան խառնեցան ընդ նոսա։

ԳԼՈՒԽ Զ.

Աղմուկ ապստամբութեան ժողովրդեանն, և առուտն ամրոցին Պասրինյլեայ։

ԻԲՐԵՒ զինչանելով թագաւորին և միաբանութեամբ ժողովոյն զարդարութեան զգենոյր կերպարանս ապստամբացն գործ, դարանակալ արքունի գահուն ահաւորագոյն 'ի վեր երևէր Փիլիպպոս դուքսն Աբրեղիոնի, որ զանխուլ ջանայր՝ լիաձեռն ճապաղմամբ արծաթոյ գողանալ զմիտս զօրուն, որ 'ի մայրաքաղաքին էին։ Քանզի Լուդովիկոս ըստ խորհրդոյ թագուհւոյն և եղբօր իւրոյ կոմսին Արդուայ, ածեալ էր գունդս զօրաց՝ սանձելնոքօք զապստամբու-

թիւնն՝ որ օր քան զօր բարձրագլուխ երևէր։
Իսկ Փիլիպպոս մեծապարգև կաշառացն
առատութեամբ յինքն յանկուցեալ զնոսա,
համբաւ իմն այսպիսի տարածանէր ընդ քա-
ղաքն՝ թէ չարիս խորհին արքունիք, և պա-
տրաստի դշխոյն ընդ սուր հանել զժողո-
վուրդն. յայս յաւելեալ և զլուր լուծանե-
լոյ Նէքէրի յիշխանութենէն և մեկնելոյ 'ի
Պրուքսէլ, վեր 'ի վայր յուզէր զքաղաքն։
Դարձեալ և յաղգային ժողովի անդ պատա-
նի ոմն Քամիլ Տէմուլէն անուն՝ ատրճանակ
'ի ձեռին և ոստ մի եդեալ 'ի գլուխ 'ի նշան
աղատութեան, կանգնեալ 'ի վերայ աթոռոյն
աղաղակ 'ի վեր ամբարձ. "Հապա, քաղա-
քացիք, զի՞ ընդ վայր դանդաղիք. արձա-
կուրդ Նէքէրայ նշան է 'ի սպառ 'ի սպուռ
կոտորածի հայրենասէր մարդկանս. յայսմ
իսկ գիշերի ելեալ վարձկան զօրուն յԱրի-
սեան դաշտէն, անողորմ խողխողեսցեն ըզ-
մեզ։ Ի զէնս մեր այսուհետև յեցեալ է չա-
րեացս ամենայնի դարման և փրկութիւն ան-
ձանց մերոց. 'ի զէ՛ն ապա, 'ի զէ՛ն,,։ Զնոյն
ձայն աղաղակի կրկնեալ և ամբոխին, դի-
մեալ յափշտակեցին զանդրիս Նէքէրայ և
զդքսին Աւրեղեանի, և յաղթանակաւ ածին
ընդ փողոցս. դղրդեցաւ քաղաքն համօրէն
և խրախուսեցին յարուարձանացն խառնի-
ճաղանճն արք վաթսուն հազար վարձեալք
'ի Փիլիպպեայ։ Զօրականք արքունի ցրուե-
ցին զսոսա, և իշխանն Լամպէսք սրակոտոր
արար զբազումս 'ի նոցանէ. այլ առաւել ևս
'ի զայրոյթ կատաղութեան վառեալ ամբո-

խին, հնչեցուցին զշանդակս, հուր 'ի պատ-
նէշս հարին, և յարձակեալ կողոպտեցին
զքինարանս, և անտի շուրջ յածեալ ընդ
քաղաքն՝ մտին և 'ի տունս տունս յաւար
և 'ի կողոպուտ։

Յաւուրն երրորդի յարձակեալ ժողո-
վրդեան 'ի հիւանդանոցս զինուորաց, առին
անտի զբազմութիւն հրազինուց և թնդանո-
թից, և խաղացին 'ի վերայ Պասթիլ ամրոցի։
ուր հարիւր չորեքտասան միայն էին ամրա-
պահք Հելուետիացիք և հիւանդք։ Պատե-
րազմն տևեաց ժամս հինգ. անկան 'ի ժո-
ղովրդենէ իննսուն և ութ ոգիք, և եօթա-
նասուն վիրաւորեցան, իսկ յամրականաց
մի ոք և եթ։ Այլ բերդակալն վատութեամբ
եբաց զդրունս առաջի ամբոխին, որ անա-
գորոյն անդթութեամբ նախ զնա ինքն խող-
խողեալ և ապա զսպայս և զբազուսն 'ի զո-
րականէն, կանգնեաց անդէն զյաղթանակ
ապստամբութեան։

Ընդ լուր ապստամբութեանս և առման
Պասթիլեայ խռովեցաւ թագաւորն, և
գրեաց առ կոմսն Արդուայ ամփոփել զգ-
ձեռն 'ի կալոյ ընդդէմ ժողովրդեան, "Զի
մի, ասէ, բռնութիւն անկցի թագաւորութիս,
և մեք ամենեքին կորնչիցիմք"։ և ինքն աճա-
պարեաց չոքաւ 'ի ժողովն հետիոտս առանց
ուղեկից սպասաւորաց. և անպաճոյճ և
ողոք բանիւք ծանոյց նոցա զի հրաման տը-
ւեալ էր հեռանալոյ զօրաց։ Ի ձայն ծա-
փահար գովութեանց ընկալաւ ժողովն զգ-
հրաման արքայի. համբաւ հաշտութեան

արքայի ընդ ժողովոյն ընթացաւ ընդ քա-
ղաքն 'ի ցնծութեան ամենեցուն։ Պայլի և Լա-
ֆայէթ միջնորդք խաղաղութեանս, մին 'ի
քաղաքապետութիւն ամբարձաւ 'ի Փարիզ,
և երկրորդն 'ի զօրավարութիւն ազգային
զօրաց. և խրատու սոցա Լուդովիկոս դարձ
արար 'ի Փարիզ 'ի նշանակ սիրոյ հաշտու-
թեան ընդ ժողովրդեանն։ Ընդ առաջ ե-
լեալ նմա քաղաքապետն Պայլի մատոյց ըզ-
բանալիս քաղաքին, որպէս երբեմն մատու-
ցանէին Հենրիկոսի Դ, և ասաց. "Թագա-
ւորն այն առաքինի՝ տիրեաց ժողովրդեան
իւրում, այսօր ժողովուրդն 'ի վերայ իւրոյ
Թագաւորին,,. և ընկալաւ զնշան ազատու-
թեան ժողովուրդն որ 'ի Փարիզ, յաւե-
լեալ յայն և զգոյն արքունի. և անտի յա-
մենայն գաւառս ծաւալեալ, և այր զարամբ
ելևէլս արարեալ, ածին 'ի գլուխս իւրեանց
զփունջն եռագոյն։

Յետ այսորիկ զօրացաւ կողմն ապստամ-
բաց, և ժողովն ազգային առնոյր զանձամբ
զիշխանութիւն օրինագրութեան. այլ ոչ
եթէ այսու 'ի լաւագոյն փոխէին իրք մայ-
րաքաղաքին։ Լաֆայէթ 'ի գլուխ ազգային
զօրուն զամս երկուս ջանայր պահել զհա-
սարակաց խաղաղութիւն, և 'ի գործ դնել
զօրէնս կարգեալս 'ի ժողովոյն։ Սա այր ազ-
նուական և 'ի հին տոհմէ գաղղիացւոյ, ոչ-
ինչ զեղծեալ աւագութեամբն, արդարա-
միտ և հաստատուն 'ի խորհուրդս, սիրող
ճշմարիտ փառաց՝ ձանձրացեալ յընդու-
նայնութենէ արքունեաց և 'ի մանկական

հրահանգաց զօրուն, անցեալ գնացեալ էր յԱմերիկա և ընդ Վոշինկթընի պատերազմակից լեալ յազատութիւն նորոյ աշխարհի, և դարձ արարեալ 'ի հայրենիս իւր՝ իբրև ամերիկացի ոք վարէր պարզ 'ի գնացս և ազատ 'ի խորհուրդս, որով և մեծապէս ձեռնտու գտաւ 'ի գումարումն ազգախումբ ժողովոյն, և վասն այնորիկ իբրև 'ի փոխարէնս տուաւ նմա զօրավարութիւն ազգային գնդին: Ազնուամիտ էր Լաֆայէթ, անտեղջիկ իւրումն, 'ի չափու կալեալ զանձն միշտ յաւագութիւնս. սիրելի զօրացն առանց ինչ յաղթանակաց, որ և 'ի խռովս ռամկին խաղաղութեամբ յառաջ վարէր զտեսչութիւն մեծաւ լրջմտութեամբ: Այլ անմարթ էր նմա հանդերձ ամենայն աչալրջութեամբն զդէմ ունել ժողովրդեան որ միշտ 'ի յուզմունս էր. որ և մերթ մինչև յերկինս ամբառնայր զնա գովութեամբ, և մերթ 'ի խորս անարգութեան իջուցանէր նախասանօք:

ԳԼՈՒԽ Է.

Ի պատճառս սովոյն պայրանալ խռովութեան ռամկին, և պարծանել ընդ ամենայն Գաղղիա:

ՅԱՑՆՄ ժամանակի երթայր և սաստկանայր սովն, և նեղեալ ծփայր մայրաքաղաքն իբրև զծով աւեկոծ: Կալաւ ժողովուրդն զՓուլոն և զՊերթիէ, զնոսա համարելով

պատՀառս առաջիկայ աղէտիցն, մանաւանդ զի Ֆուլոնի նախատեալ էր զնոսա ասելով արկանել խոտ 'ի բուա ժողովրդեանն: Մուծին զնա անարգանօք 'ի փարիզ, կապեալ փուշ և տատասկ 'ի ձեռս և 'ի պարանոցն, և զթիկամբք նորա խուրձ խոտոյ, և արկին զնա 'ի բանտ, սահմանեալ զօր մահու նորա: Ապապարեաց Լաֆայէթ և խաղաղացոյց զժողովուրդն, հաւանեցուցեալ զնոսա չգործել ինչ առանց վՀռոյ օրինաց. և 'ի հրաժարել ամենեցուն յերկիւղէ ժողովրդեան՝ դատաւոր կալ նմին, Պայլի և Լաֆայէթ ընտրեցան 'ի դատաւոր: Ողբեալ իսկ էր Լաֆայէթայ զմոլեգնութիւն ամբոխին, եթէ Ֆուլոնի համարձակութեամբն չէր գրգռեալ զխուժանն՝ որ յանկարծ դիմեալ 'ի վերայ նորա հանին 'ի կախաղան, և հատեալ զգլուխ նորա շուրջ ածին ընդ փարիզ. անհնար եղև Լաֆայէթայ սանձել զմոլեգնութիւն նոցա: Ածեալ ապա զՊերթիէ, ցուցին նմա զգլուխ Ֆուլոնի, և անտի տարան զնա 'ի ժողովարան քաղաքին: Ընդ Պերթիէ քաջութեամբ զայրագինս խօսեցաւ ընդ ամբոխին, և զէն 'ի ձեռին պաշտպանեաց զանձն առ վայր մի ընդդէմ մոլեգնեալ խուժանին. այլ ապա ուրեմն անկաւ ընչաստաւռ:

Զչարեալ Լաֆայէթայ ընդ իրսն՝ իբրև կամէր հրաժարել 'ի զօրավարութենէ ազգային զօրաց, ժողովուրդն և զօրք զնչուցին ղցաւումն նորա՝ խոստացեալ յայնմ հետէ հպատակել նմա յամենայնի:

Լուր աղմկի մայրաքաղաքին սփռեցաւ ընդ ամենայն գաւառս աշխարհին խառն ընդ սուտ համբաւոյ՝ եթէ հրամայէ Թագաւորն հրդեհել զամենայն բերդորայս, բաց յիւրմէն չկամելով այլ։ Յաճախեցին և երթևեկք սուրհանդակաց, գուժաբեր լինելով թէ գունդք աւազակաց հնձեն զցորեանն մինչև ատոքացեալ, աւար առնուն հրդեհեն և գերեալ գերփեն զամենայն։ Ընդ այս շուինդն ազատակի հնչէին զանգակք 'ի գիւղս՝ ժողովել զչինականս ընդդէմ ապրստամբաց. և ահա անդէն ոտնաձայն պատերազմի և շառաչիւն զինուց լսելի լինէր 'ի քաղաքաց քաղաքաց։ Եւ 'ի սակաւ ինչ աւուրս զինէր Գաղղիա ողջոյն 'ի կոտորել՝ ոչ զկարծեցեալ զաւազակն, այլ զորդիս իւր իբրև զոխերիմ թշնամիս։

ԳԼՈՒԽ Ը.

Յաթլպանել աղգային ժողովոյ պէրաւոնս օրէնս պալոյ աղգին։

Ի յաղմուկս անդ շփոթութեան աշխարհին, կոչունս յարդարեալ մեծաշուք 'ի մայրաքաղաքին գիշերային 'ի չորրորդ աւուր ամսեանն օգոստոսի, առանց դատաստանի և արժանաւոր քննութեան, միահամուռ զըմբեալք և զգլխեալք գինուով, հանին վէճիս

անիրաւս 'ի վերայ իշխանաց և ժառանգաւորաց աշարհի կալուածոց, և 'ի վերայ դաւառաց՝ որք առանձին 'ի շնորհս աղատութեան վայելէին։ Ի մերժել արքայի զվճիռսն, ժողովն ազգային հրատարակեաց զնոսին իբրև հիմունս նորոյ օրինադրութեան, անկարօտ համարեալ արքունի հաստատութենէ։

Յայնմ հետէ յերկուս ճեղքէր ժողովն յայտնապէս. ձախակողմեանք սիրողք նորոյ օրինադրութեան, և աջակողմեանք ըղձեալ երթալով վաղեմի տեսչութեան. էին և ոմանք՝ որ զմիջինն ունելով ճանապարհ, ջանային միաբանել զերկաքանչիւր կողմն. և անդ բանայր ասպարէզ լայն և ընդարձակ երևելի ճարտարախօսաց որոց փայլէին ըստքանչելապէս հանճարք. յորս անուանիքն էին յայնժամ նուիրակքն Սիեյէս, Տիւփոյ, Պառնաւ և Լամէթ. այլ առաւել քան զնոսա Միրապոյ՝ որ զժողովն ողջոյն ըստ կամաց իւրոց ածէր 'ի քարշ։ Ծնեալ էր սա 'ի Պրովենկիա յազնուական տոհմէ, և 'ի պատանեկութենէ անտի իւրմէ ծանօթ էր ամենեցուն անառակ կենօքն, կռուասէր հակառակութեամբք, և բուռն պերճախօսութեամբն։ Ճանապարհորդութիւնք նորա, կարևոր տեսութիւնք, և անբաւ ընթերցանութիւնք ուսուցին նմա բազում ինչ, զորս առհասարակ ունէր նա 'ի մտի։ Յորժամ ոչ 'ի կրից ածեալ խօսէր, անհեթեթ էր ոճ նորա և չափազանց. իսկ ուր 'ի կրից վառեալ՝ ամենևին այլ ոք զանձն ցուցանէր։ Ի լուր հակառակորդաց իւրոց յատենի՝ վա-

ռէր ոգի նորա. զառաջինն բանք նորա ա-
ղօտք էին և ընդհատք, և մարմինն դողայր.
այլ տակաւ լուսաւորագոյնս բացատրէր զի-
մաստս, և 'ի վայրկենի անդ միտք նորա զբա-
ղում ամաց զարգասիս խորհրդոց ծնա-
նէին: Զոմանս քաղցրութեամբ յինքն յան-
կուցեալ, զայլս խիստ երգիծանութեամբն
ահաբեկեալ, զամենեսեան առեալ ձգէր
յիւր կամս: Ունէր իւր կուսակիցս և 'ի ժո-
ղովրդեան և 'ի ժողովին և յարքունիս: Ն-
զեալ 'ի կարօտութենէ, և անգոհ ընդ բաղ-
դին առաջիկայ, մղէր զանձն յանծանօթ
ապառնին. ամենայն իրաց նորա առաջնորդ
էին հանճար, փառասիրութիւն, կիրքն
բռնութեան և չքաւորութիւն: — Այսպէս
'ի միում ժամու հիմն 'ի վեր կործանեալ
ազգային ժողովոյ զժառանգական իշխա-
նութիւն, հրատարակեաց 'ի ձեռն Լա-
ֆայէթայ զԻրաւունս մարդոյ՝ զոր ուսաւն
յԱմերիկա՝ և հիմն եդեալ զայս նորոյ օրի-
նադրութեանս՝ կորզեաց 'ի թագաւորէն
զիշխանութիւն օրէնադրի ցարդ 'ի ձեռս
նորա ամփոփեալ, և զկնի բազում հակա-
ռակութեանց՝ հաղիւ եթող նմա տարտամ
ինչ իշխանութի արգելլոյ զանպատեհ և զվը-
նասակար օրէնս, և այն բանիւ չափ միայն. և
յամենայն տէրութէ կապտեալ, որպէս առա-
ջին հրամանակատար ազգին ծանեան զնա:

Զայսու ժամանակաւ սկիզբն եղև բաղ-
մութեան Գաղղիացւոց, որոց ոչ էր հաւա-
նեալ ընդ նոր օրինադրութիւնն և ընդ ա-
նուն ազատութեան, վասն որանդի տարագիր

լինել 'ի հայրենեաց առաջնորդութեամբ կոմսին Արդուայ եղբօր արքայի և իշխանաց տանն Քոնաեայ, և երթալ խնդրել բնակութիւն յօտար երկրի. կէսք առ յապահովն ունել զկեանս իւրեանց և զստացուածս յերեսաց խռովասէր մարդկանն, և այլք ապաժոյժք՝ ցանկային յարուցանել զդրացի ազինս 'ի զօրավիգն իւրեանց, և զինու զօրութեամբ հանդարտեցուցանել զԴաղլիա: Իսկ ապստամբքն և խռովիչք միշտ համբաւ հանէին զնոցանէ՝ որպէս թէ ոգւով վրէժխնդրութեան վառեալք իցեն 'ի խնդրել զարիւն քաղաքացւոյ: Եւ գաղթեալքն հակառակ ընդդէմ պնդէին եթէ այն էր ջան և վաստակ իւրեանց, զի ազատ կացցէ Թագաւորն և նախկինն հաստատեսցի տեսչութիւն աշխարհին: Առաջնորդք վտարանդելոցն սերունդք էին Հենրիկոսի Դ, որոց բարք վատահս առնէին զհանճարեղս ընդ անխարդախ անբծութիւն խորհրդոց նոցա: Եւ երթայր և բազմանայր գունդ նոցա յոյն կոյս Հռենոսի:

ԳԼՈՒԽ Թ.

Յարձակումն խառնիճաղանճ ամբոխին 'ի Վէրսայլ և դարձուցանել զԼուգովրն 'ի Փարիզ:

ԲԱՑՑ դարանակալաց գահուն ևս քան զևս բորբոքեալ զհուր ապստամբութեանն, ձեռն 'ի գործ արկին 'ի յանդուգն և յանվրէպ դաւս քան զառաջինս: Քանզի ա-

ռաջնորդ խառուչացն դուքսն Աբրեղիոնի գանձուք իւրովք զբռամբ ածեալ զամենայն ցորեան աշխարհին՝ փակէր զհամբարանոցս մայրաքաղաքին, և 'ի ձեռն արբանեկաց իւրոց հանէր համբաւ չար՝ թէ երդուեալ է թագուհին սովամահ առնել զԳաղղիա ողջոյն։ Եւ այսպիսի ինն դէպք ձեռնտու ստուգեանն լինէին. քանզի յաւուր երկրորդի հոկտեմբերի ամսոյ տուաւ ճաշ ըստայնց զօրուն 'ի Վերսայլ։ Իբրև ընդ գինիս մտին և շուրջ գալ թուէր նոցա աշխարհ, մուծին 'ի նեղքս զզօրականն և սկսան ըմպել 'ի կենդանութիւն ընտանեաց թագաւորին. և 'ի ձայն թմբկի և երգոց խոստանալ գնել զանձինս 'ի վերայ կենաց արքայի։ Բռնադատեալ ածին անդր զթագաւորն և զդըշխոյն, և երկրպագեալ նոցա հանդիսիւ՝ տարան ապա զնոսա 'ի տեղիս իւրեանց։

Ի հռչակել համբաւոյ ուրախութեանս՝ դղրդեցաւ սովալլուկ խուժան ռամկին 'ի Փարիզ. և յաւուրն երկրորդի խմբեցան և կանայք, և ոչ գտեալ հաց դիմեցին 'ի ժողովարանն հասարակաց առ գլխաւորս ռամկին։ Եւ 'ի ժողովել անդր և արանց յոգնութիւն, սոքա մերժեցին զարս իբրև զանպիտանս առ ամենայն գործ. և ինքեանք առնացի վառեալ քարամբ զպահապանսն տագնապեցուցանէին և դիմէին 'ի նեղքս սպառնալով հրոյ տալ ճարակ զտեղին։ Եվ նոցա ընդ առաջ Մայլաւ ոմն՝ որ երևելի հանդիսացեալ էր քաջութեամբ յառուն Պաստիլեայ, և հաւանեցուցեալ զնոսա աղաչաւորս

երթալ 'ի Վերսայլ, առաջնորդեաց նոցա անդր։ Եւ այսպէս ուրթ հազար կատաղիք 'ի վատանշանից կանանց ընթացան 'ի Վերսայլ առ թագաւորն յանդուգն լրբութիւն, զնա կարծելով պատճառս աղէտից։ Ելին առաջի արքայի, և զաղաղակ բարձեալ՝ խընդրէին հաց։ Ի բազմավտանգ աղմկի անդ Լուդովիկոս արհամարհեալ զերկիւղ մահու թագաւորավայել քաջութեամբ արժանի ցուցաւ գահուն։ Հուպ մատեաւ անվեհեր առ ջատուկ կանանին և խօսեցաւ ընդ նոսա լի իմաստութեամբ և քաղցրութեամբ. որով անդէն խեղճամտեալ նոցա իրացն ճշմարտութեան՝ անկան յոտս նորա, և զանգիտութիւն խոստովանեցան։ Այն օր հինգերորդ էր ամսեանն հոկտեմբերի։

Բայց յետ սակաւ ժամուց եհաս և ջոկ աղմկարար մարդկան. շուինդն ահաւոր հընչէր 'ի Վերսայլ և ահ սպառնալեաց ընթանայր կենաց դշխոյին և ընտանեաց թագաւորին։ Խորհուրդ էր դաւաճանացն երկեղուկս արկանել արքայի, և բռնադատել զնա 'ի փախուստ, զի պարապ լինցի դքսին Աւրելիանի եկանել 'ի գահն զոր անդէն ընդ ձեռամբ համարէր ունել։ Այլ իբրև ոչ կամեցաւ թագաւորն թողուլ բնաւ զտէրութիւն իւր և 'ի փախուստ մտաբերել, յայնժամ ապա դուքսն և կուսակիցք նորա սկսան խորհուրդ 'ի մէջ առնուլ սպանութեան նորա, և հաստատէին կատարել զդաւն ահաւոր յեկեղեցւոջ սրբոյն Լուդովիկոսի։ Զգիշերն 'ի բուն զհետ եղեն կաշառաւ

հրապուրելոյ զպահակապանս մայրաքաղաքին. և 'ի սադրիչս ապստամբութեանն էին և ոմանք 'ի գլխաւորաց յազգային ժողովոյն:

Ի վաղիւ անդր յառաւօտուն 'ի տալ նշանին երեք բիւր սիկարեանք զմրեալք արքեցութեբ և անառակութեամբ՝ անկան յամրոց Թագաւորին՝ ձայն բարձեալ. "Կեցցէ Թագաւոր մեր դուքան Աբրեզիոնի", և բռնի 'ի նեբքս յարձակեալ կոտորեցին զանձնապահ գունդն արքունի և միջամուխ եղեն մինչև ցաեռնեակ դշխոյին: Որ յաղաղակէ անկելոց Թիկնապահ զօրացն, և 'ի գրնդիւն կացնահար խորտակման գրանցն զարթուցեալ՝ խոյս ետընդ ծածուկ սանդուխսն: Արիւնարբուքն գազանացեալ ընդ փախուստ Թագուհւոյն՝ զոր առ ետեղ փողոտեալ խլընդրէին, 'ի հարուածս սուսերաց յօշ յօշ պատառեցին զմահիճս նորա, և գիմեցին անտի 'ի սենեակ արքային: Ի տագնապ ժամանակին ոմանք 'ի քաջ զօրականէն ապաշաւեալ ընդ եղեռնն՝ յոր բերան ընդդէմ օծելոյ տեառն և Թագաւորի իւրեանց, անդէն առ 'ի սրբել յանձանց զկեղտ անուան միացան ընդ Թիկնապահ զօրս արքունի, և անկեալ 'ի վերայ անագորոյն և տիրադրուժ մարդկանն արտաքս վանեցին զնոսա: Եկեալ Թագաւորն 'ի պատուհան սենեկին, հանդարտեցոյց բանիւք զմրրիկն, և փոխեաց զանիծակուռ հայհոյանս նոցա 'ի ձայն ծափահար խնդութեան. "Կեցցէ արքայ". մինչև յուսահատեալ դաւաճանաց ընդ ելս խորհրդոցն, յուզեցին զամբոխն՝ խնդրել

մեծաձայն զդարձ արքայի 'ի Փարիզ։ Հարկ 'ի վերայ կայր արքայի կամ խոյս տալ և փախչել՝ կամ հաւանել կամաց ժողովրդեան. և նա հակառակ խորհրդոց արքունեացն ընտրեաց զերկրորդն, և յուզի անկաւ գնալ 'ի մայրաքաղաքն իբրև կալանաւոր քան թագաւոր ոք, շուրջ պատեալ յառաջոյ և զկնի 'ի գազանաբարոյ յարիւնաշաղախ ամբոխէն՝ որք ամբարձեալ 'ի ծայր նիզակաց ըզգլուխս թիկնապահ զօրականին իբրև յաղթանակաւ ածէին զնա։ Քանզի կամք էին ապստամբաց արհամարհ ցուցանել զթագաւորական մեծվայելչութիւն՝ խնդրելով պարապ բնաջինջ բառնալոյ զայն։ Սակայն առ ժամն 'ի հաճել զցասումն լաւաց մարդկան՝ ժողովն ազգային 'ի հարցաւփորձ քննութեան դաւաճանացն մատչէր, և նուիրակք գային աղաչել զդշխոյն՝ ցուցանել զթշնամիս կենաց իւրոց։ Այլ ոչ տուեալ տեղի առաքինի տիկնոջն ոգւոյ վրէժխնդրութեան, զհակիրճ զայս բան արար պատասխանի. "Լուայ, տեսի, մոռացայ զամենայն"։ Այն ինչ սկիզբն լեալ քննութեան, և 'ի վեր երևէին յանցաւորքն, անդէն ածեալ ի ժողովոյն պատրուակեաց ծածկեաց զամենայն. միայն դուքսն Աւրեղիոնի ոչ ծածկեցաւ, և ըստ խրատու Լաֆայէթայ առ ժամն ինքնակամ տարագիր ջոգաւ յԱնգղիա։ Որ թէպէտ պատճառ էր ապրստամբութեան բաղմաց, այլ ոչ հանճար էր նորա, ոչ զօրութիւն և ոչ հաստատուն կամք 'ի գլուխ հանելոյ զգործ մեծի դաւա-

ՀանուԹեանն։ Յանուն նորա ամենայն աղ-
մուկք յուզէին, այլ յեղյեղուկ էր փառա-
սիրուԹիւն նորա, և անխորհուրդ գնացք։
Մինչդեռ բաժանէր տէրուԹիւնն 'ի բա-
զում երկպառակ ժողովս, կէսք ընդ վտա-
ռանդիս, կէսք ընդ Թագուհւոյն, ոմանք
ընդ Թագաւորին, այլք ընդ դքսին Աւրե-
ղիոնի, դարձեալ և բազումք ՀեղքեալՀիւ-
րեանս առաջնորդս իւրեանց ունէին զԼա-
ֆայէԹ, զՄիրապոյ, զՊառնաւ և զԼամէԹ.
և մինչդեռ ժողովն ազգային փոխեալ 'ի փա-
րիզ պեղէր զհիմն ԹագաւորուԹեան, և ոգի
խռովասէր ազատուԹեան երԹայր և տա-
ռաՀանէր ընդ աշխարհն, և յաՀախէին
պատերազմունք ընդ ռամիկն և ընդ ազ-
նուականս, 'ի վեր երևեցաւ Ֆրանք-Մա-
սոն աղանդաւորաց ընկերուԹիւն ատելի
մարդկան՝ վոհմակ ԺաքոպէՀնաց. որք յա-
նուն վանացն սրբոյն Յակոբայ տեղւոյ ժո-
ղովոյն իւրեանց՝ առնուին զկոչումն Ժաքո-
պէն։ Եւ այս աղանդ քան զԺանտ ախտ
տարափոխիկ ՀարակեալՀ ընդ ամենայն գա-
ւառս աշխարհին, յապականուԹիւն եդ
զքաղաքս և յաւեր զՀէնս։

ԳԼՈՒԽ Ի.

Նորանոր ամբարիշտ օրինադրուԹիւնք Ազգային ժողովոյ։

Յանուն վայրի ժողովն ազգային ոչ գա-
դարէր 'ի խանգարիչ սահմանադրուԹեանց

իւրոց, որովք փոխեցին զվաղեմի բաժանումն գաւառաց, և նորոգ բաժանմամբ յուԹսուն և երեք մարզս զատուցին, բարձեալ յիւրաքանչիւր գաւառաց զվաղեմի շնորհս՝ յոր վայելէին, և 'ի նեղբս մուծեալ օտար իմն վարչութիւն 'ի ձեռն հազարապետաց և ժողովոց՝ որ անծանօԹն էին ցայնժամ։ Եւ հազարապետաց երրեակ ազգ էին. դատողական, քաղաքական և խաղաղարար. որով բարձաւ 'ի միջոյ և իշխանութիւն խորհրդարանին։ Այսպէս որ պատճառքն եղեն ժողովոյս և սկիզբն հակառակութեան ընդդէմ Թագաւորական իշխանութեան՝ 'ի վարձ փութաջան նախանձուն 'ի միում աւուր բարձան 'ի միջոյ։ Եւ ոչ շատացեալ ժողովոյն փոփոխութեամբ քաղաքական կարգաց, եհան օրէնս և վասն ուխտի եկեղեցւոյն Գաղղիոյ, գրաւեալ զստացուածս նոցա յարքունիս իբրև զհասարակաց ինչս. քանզի ըստ խորհրդոյ Թալէյռանայ կարգաՀոդ եպիսկոպոսի, իբրև զմատակարարս վարկան զնոսա ընչից հաւատացելոց, և 'ի կարևոր պէտս զայնուսիկ անդրէն առ նոսա դարձուցանել. վասն որոյ 'ի կարօտութեան ժամանակին ընուլ նոքօք զպէտս աշխարհին արդարութիւն համարէին։ Այսպէս նոքա խորհեցան կործանել զգաղղիական եկեղեցի, և հասին ըղձից իւրեանց։

Ի սկզբան անդ մերժեաց Լուդովիկոս զվճիռն իբրև հակառակ կրօնից։ Այլ իբրև կէսք յաճախութեամբ բարդէին առաջի նորա զաղէտսն՝ զոր մերժումն սպառնայր

պետութեանն, և կէսք ակնկալութիւնս բարեաց մեծամեծս առաջի դնէին նմա, մանաւանդ ծածկելով 'ի նմանէ զդժկամակութիւն քահանայապետին ընդ նոր սահմանադրութիւնն, թուլացաւ և էտ զկնիք հաւանութեան, ընդ որ զղջացաւ ապա յոյժ մինչև ցմահ իւր։

Յետ այսորիկ 'ի սկզբան նորոյ ամին խրախուսեալ ժողովն ազգային հեզութեամբ թագաւորին, եհան և օրէնս ամբարիշտս՝ բռնադատել զուխտ եկեղեցւոյն յերդումն պահպանութեան քաղաքական օրէնսդրութեանց ազգային ժողովոյն, որ և յիրս կրօնից խառնեալ՝ ոչ ևս այլ առնէր խոիր ընդ ուղղափառս և ընդ հերձեալս. և ձեռքեալ զեկեղեցին Գաղղիոյ 'ի սրբազան աթոռոյն Հռովմայ, քրիստոսական և եթանուամբ ընդունէր կրօնս խառն յամենայն հերձուածոց և աղանդոց։ Բառնայր յաշխարհէն և զմիաբանութիւնս կրօնաւորաց. միայն թողեալ զայնոսիկ՝ որք 'ի սպասաւորութի հիւանդաց կարգեալ էին։ Ընդ այս խիստ և բռնաւորական գործ գժգոհեալ եկեղեցականաց Գաղղիոյ, բաց 'ի սակաւուց սկսան առաջի ամենեցուն հրապարակաւ խոստովան լինել զհաւատս իւրեանց, և արհամարհել զսպառնալիս մահուն՝ որ շուրջ զդահլճաւն որոտայր. և ոչ ոք յեպիսկոպոսաց որ անդ գտան՝ հաւանեցաւ տալ զերդումն հաւատարմութեան, վասն որոյ և պատուհասեալ մերժեցան յաթոռոց։ Զնոյն հալածանս կրեցին և քահանայք, որք ըստ

օրինակի առաջնորդացն իւրեանց նախամեծար ընտրեցին զմտացն խիղճ քան զթելադրութիւն երկիւղի և փառաց։ Եւ 'ի տեղի նոցա յաջորդեցին քահանայք երդուեալք 'ի հաւատարմութի սահմանադրութեանց ժողովոյն. որով և ընդ բանիւ եղեն 'ի Հռովմայ գահէն, ոչ ինքեանք միայն, այլ և խորհրդակիցք նոցա։ Այսպէս բաժանեցաւ ուխտ եկեղեցւոյն յերկուս, կէսք հակառակ նորոյ սահմանադրութեանն, այլք հերձեալք 'ի սուրբ եկեղեցւոյ. կէսք առաքինիք և հաւատացեալք, այլք դայթակղեցուցիչք և ամբարիշտք։ Բայց երկոքին խակ առիթք լինէին հրդեհի քաղաքական պատերազմաց՝ առաջինքն անողոքելի պնդութիւն՝ ըստ արդար օրինաց, և երկրորդքն՝ կեղծ վարուքն և վարդապետութեամբ ապականելով զարբութիւն կրօնից։ Անկրօնութիւն այնուհետև 'ի տեղի կրօնից փոխանակէր, և ապստամբութիւն նախամեծար լինէր քան զկրօնս, և ընդ քահանայս հակառակորդս ապստամբութեան մերժէին կրօնք նոցին իբր խափանարարք ազատութեան։ Յերկուս ձեռքեցաւ ժողովուրդն, և 'ի կրօնական ձեռն էարկ 'ի պատերազմ։ Եւ արք անօրէնք 'ի Փարիզ ածեալ զպատկեր քահանայապետին Հռովմայ 'ի հրապարակ, այրէին զայն հանդիսիւ։ Եւ իբրև վերբ 'ի վայր խառնէր աշխարհն 'ի պատճառս հալածանաց քահանայիցն, և թագաւորին և ատենակալացն ընդդիմութիւն 'ի գերև ելանէր, յաւել ժողովն ազգային բառնալ յաշ-

խարհէն և զանուանս աղնուականութեան և իշխանութեան և զկնիքս և զնշանս նոցա, որով ազատանին մերժեալ 'ի պաշտամանց պետութեան, և տեսեալ զի ոչ գոյր դարման չարեացն՝, ընդդէմ զինեցան ապըստամբութեանն, և հնարէին գտանել օգնականս 'ի ժողովի անդ և յարքունիս, 'ի գաւառս տէրութեան, 'ի զօրս և յօտար ազինս: Այլ նոքին իսկ աղնուականք անմիաբանք յիւրեանս, խրոխտք և անխորհուրդք և ևս յուզեալ գրգռեցին զապըստամբութիւնն, և մեծամեծաց ևս աղէտից եղեն պատճառք: Առաջին մենքենայք խորհրդոց նոցա խայտառակեցան. քանզի ըստանեալ զՊայլն, իբրև կամէին յափշտակել 'ի միջոյ զթագաւորն և ածել 'ի Բիւմոնթ, և անտի զօրօք մուծանել 'ի Գաղղիա, առաջնորդ գործոյն մառքէզն Ֆաւրայ 'ի մահ մատնեցաւ: Ի դերև եալ և խորհուրդ ապըստամբեցուցանելոյ զհարաւային գաւառս օգնականութեամբ վտարանդի աղնուականաց. զնոյն օրինակ և խորհուրդ ապստամբութեան արքունի զօրուն՝ 'ի կոտորած եւրից հազարաց 'ի նոցանէ և յարձակուրդ սպայիցն առնոյր վախճան:

Եւ իբրև 'ի միտ առին աղնուականք՝ թէ անմարթ էր նոցա իւրեանց ևեթ զօրութեամբ կալ հակառակ ապստամբացն, դարձուցին զյոյս իւրեանց առ օտարս՝ շարժեալ զպետութիւնս Եւրոպայ ընդդէմ Գաղղիոյ: Իսկ թագաւորն Լուդովիկոս 'ի Փարիզ յաղգային ժողովի անդ հաւատարմացոյց թէ չէր

ընդ խորհուրդս վտարանդի փախստէիցն. և հաճ և հաւան ցուցեալ զանձն ընդ նորոգ սահմանադրութիւնս՝ յորդորեաց զամենեսին 'ի մի միաբանութիւն յօգուտ ազգին, 'ի հաստատութիւն օրինադրեալ կարգաց, 'ի սէր խաղաղութեան և յերջանկութիւն Գաղղիոյ։ Անդ ժողովականք խնդութեամբ մեծաւ ընկալեալ զպարզ և զգեղեցիկ խոստմունս Թագաւորին, երդուան՝ հաւատարիմ լինել ազգին, օրինաց և Թագաւորին, և յամենայն զօրութենէ իւրեանց պահել զօրէնս վճռեալս յազգային ժողովոյ, և վաւերացեալս հաւանութեամբ Թագաւորին։ Ընդ նովին երդմամբ եմուտ մտադիր և քաղաքն ողջոյն Փարիզ վախճան խռովութեանցն համարելով առնել. և զօրն զայն զէորեքտասաներորդ ամսեանն յուլիսի 'ի տօնս ուրախութեան կարգէին, ուր Թագաւորն և ժողովն ազգային և առաւել քան պիսուն բիւր մարդկան և Գաղղիա գոգցես առհասարակ զնոյն կրկնէր երդումն հաւատարմութեան (1789)։

Ատանօր արժան համարիմ տալ սակաւուք զտեսութիւն մեծի հանդիսիս, որ զբոլոր Գաղղիա վեր 'ի վայր դղրդեաց։ Ի մերձենալ սահմանեալ աւուրն երկոտասան հազար մարդիկ աշխատէին յԱրիսեան դաշտի յօրինելշուրջ տեսանելեաց տեղիս 'ի դիւրութեան ժողովրդեան. և զի մի գուցէ թերի մնասցէ գործն, խառն ժողովուրդն և քահանայք և կրօնաւորք և զօրականք և կանայք անգամ մեծուհիք գային յօժար 'ի գործ

աշխատութեանն։ Իբրև 'ի գլուխ եկ գործն, 'ի Հրեքատասանեերորդում աւուր յուլիսի գային ժողովքին դաշնակիցք, նուիրակք դաւառաց, գունդագունդ վաշտք զօրուց և զօրավարք. և հասեալ յարքունի պարտէզն Թիւյլերի՝ առնուին անտի ընդ իւրեանս ըղ-պաշտօնեայս քաղաքին և զԺողովն ազգային։ Յառաջոյ Ժողովականաց երիթայր խումբ մանկանց զինեալոց, և զհետ նոցա դասակ ծերոց ըստ նախնի Սպարտացւոցն օրինի։ Հասեալ 'ի դաշտն, նստան յաթոռս զարդարեալս 'ի զարդ ոսկեձոյլ շուշանաց Թագաւորն և նախագահ ազգային Ժողովոյն. և 'ի Թիկանց Թագաւորին հովանոց ամբարձեալ՝ յորում Թագուհին և արքունականքն էին. երկուստեք Թագաւորին՝ պաշտօնեայք նորա, ապա և նուիրակք Ժողովոյն։ Զորեք հարիւր հազար հանդիսատեսք շուրջանակի 'ի դիտարանսն նստեալ և վաթսուն հազար դաշնակիցք զինեալք 'ի դաշտին, և 'ի միջի անդ ամբառնայր խարիսխ քսան և հինգ ոտնաչափ 'ի վեր, և 'ի վերայ նորա սեղան հայրենեաց փառաւոր։ Երեք հարիւր քահանայք սպիտակազգեացք յուրարս եռագոյնս՝ տողեալք կային յատուկ անդղոց 'ի սպասաւորութիւն սրբոյ պատարագին։ Գալուստ դաշնակցացն տեսեաց ժամն երիս. պատեալ էին երկինք տխուր ամպովք, և անձրև յորդ տեղայր. սկիզբն եղև հանդիսին, և պարզեցան երկինք 'ի լուսաւորութիւն մեծի խորհրդոյն։ Եպիսկոպոսն Ոթէօնայ սկսաւ զպատարագն, հնչէին երգք

դասուց զոյգ ընդ քահանայապետին. և Թնդանօթիցն որոտումն ահաւոր զհանդէսն կացուցանէր։ Կատարեցաւ խորհուրդն, էջ Լաֆայէթ յերիվարէն, եւ ընդ աստի-ճանս գահոյիցն և մերձեցաւ առ Թագաւորն առնուլ 'ի նմանէ զձև երդման. և տա-ւաւ զայն 'ի սեղանն անցեալ ընդ մէջ դրօշուց ծածանելոց յօդս և վաղակաւո-ւրաց շողացելոց։ Եւ աղաղակեցին առ հա-սարակ զօրավարն, զօրն, նախագահն և նուիրակքն "Երդնում՝,,։ Իսկ Թագաւորն յոտին կացեալ, և զաջ 'ի սեղանն ձգեալ, ասէր, "Ես Թագաւոր Գաղղիացւոց երդ-նում՝ վարել զիշխանութիւնս աւանդեալ ինձ 'ի նորոգ սահմանադրութենէս, վրձ-ռեալ յազգային ժողովոյ և յինէն հաստա-տեալ,,։ Կատարեցաւ ոճն և մեծ էր խըն-դութիւն ժողովրդեանն. հանդէս եղև ա-պա դաշնակից զօրու վաթսուն հազար զի-նեալոց. սեսիլ չքնաղ զինուորական և ազ-գային։ Եղեն 'ի գիշերին և հանդէսք ուրա-խութեան 'ի Փարիզ. և յայնմ ևեթ գիշերի վայելեցին Գաղղիացիք եղբայրօրէն 'ի հա-ւասար ազատութեան, բայց ընդ գիշերոյն ընդ այնմիկ էանց ամենայն. և յաւուրն եր-կրորդի նոքին վերսին խուռվարար անա-դորոյն մարդիկ 'ի վեր երևեցան. և զօրա-կանն և խուժանն դարձեալ ալէկոծէր։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Սիրջանալ Թագաւորին ընդ Երդումն։ Մահ Միրապոյի։

Յետ այսորիկ եհար զԼուդովիկոս սիրա իւր վասն միաբանելոյ իւրոյ ընդ անօրէն ապստամբսն 'ի մեսս հայրենի ժառանգութեան նախնեացն, մանաւանդ յորժամ սիպեցաւ 'ի նոցունց փոխել զպաշտօնեայս իւր՝ յոյժ 'ի խոր խոցեցաւ. և սկսաւ ձեռն 'ի գործ առնել ընդդէմ ապստամբութեանն, և բանագնաց լինել ընդ պետութիւնս Եւրոպիոյ 'ի հաստատութիւն գահուն։ Խոստացաւ Լաֆայէթ առաջնորդ նորոյ սահմանադրութեանն ձեռն տալ 'ի հաստատութիւն թագաւորութեանն. ցուցանէր զի առանց միաբանելոյ գահուն ընդ նորոյ սահմանադրութեանն՝ անմարթ էր նմա կալ յոկաստանի. սակայն ատելութեամբ դըշխոյին մերժեցաւ նա իբրև խռովասէր, և որպէս եղէգն ջախջախ 'ի նեցուկ պետութեան։ Յայնժամ արքունիք դիմեցին առ այլ ոք առաջնորդ ժողովրդեան դիւրամատոյց 'ի կաշառս, առ Միրապոյ ասեմ, համարեալ նուաճել 'ի ձեռն նորա զոգի ապստամբութեան։ Ճարտարախօսն երևելի տեսեալ զանուղղայ գնացս և զթիւր սահմանս օրինաց ազգային ժողովոյն, չհաճէր ընդ այն, և դուն գործէր հաշտեցուցանել զժողովուրդն ընդ թագաւորին և զարքունիս ընդ նորոգ սահ-

մանագրութիւնս։ Մինչդեռ այսպիսիք էին գնացք նորա, աղերսաւոր նմին լինէր թագուհին՝ փրկել զթագաւորութիւնն Գաղղիոյ 'ի ձեռաց ապստամբաց. և զի գիտէր նա զՄիրապոյ վատնիչ հայրենի ժառանգութեանցն, խառնակեցիկ ոք ծանրացեալ ընդ պարտուք, մեծամեծ պարգևս առաջի դնէր նմա։ Ընկալաւ Միրապոյ զենդիրն, այլ ոչ և զկաշառսն. և հաւատարիմ 'ի խոստմունս իւր, 'ի վերայ հիմանն զոր եդ՝ նկըրտէր ամրացուցանել զգահն. եցոյց զանձն 'ի կարևոր ինչ իրս կողմնակից արքայի, և կասկածաւոր եղև իբրև զմատնիչ յաչս ժաքոպէնաց։ Եւ տեսեալ Միրապոյ զվստահութիւն արքունեաց յինքն, խորհուրդ կարևոր մատուցանէր արքայի՝ խոյս տալ 'ի Լուգդոն, և անտի միջնորդ խաղաղութեան կալ ընդ վտարանդիս և ընդ ժողովն ազգային, և նոր օրէնս տուեալ Գաղղիոյ իշխանաբար՝ հանդարտել զաշխարհն։ Եւ վստահացուցանէր զնա կամակից իւր ունել 'ի խորհուրդն յայն զկէս յազգային ժողովոյն, զատենաբանս ժողովրդեան, և զտեսուչս առաւել քան զերեսուն և ութ նահանգաց։ Այլ թագաւորն երկուցեալ 'ի յուզելոյ մարտ քաղաքական՝ տարակուսեալ դանդաղէր. մինչև Միրապոյ մաշեալ 'ի զեղծ կենացն և յաշխատութենէ, անկեալ 'ի խօթութիւն մեռանէր։ Ի քաջ խելամտութիւն բարուց առնն մեծի՝ առցուք 'ի մէջ զբանս երևելւոյն Թիերի, զվերջին ատենաբանութենէ նորա և զմահուանէն։

“Ի վերջին ժողովն անդ Միրապոյ ընդա-
բոյս յանդուգն եռանդեամբն ածեալ՝ ձգէր
զամենեսեան յիւր խորհուրդ, և թերևս
երբէք չէր նորա զայս օրինակ 'ի կամս իւր
նուաճեալ զժողովն: Այլ սակայն դայր և
մերձենայր վախճան նորա, և այս լինէր
յետին յաղթանակ նորա: Հարեալ 'ի գա-
լուկն և աչք գոգացեալ, այլադէմ կերպա-
լանօք երևէր յատենի ժողովոյն, և ատէպ
ատէպ նուաղէր: Յախուռն բերումն նորա
'ի հեշտութիւնս և 'ի վաստակս, և յոյզք
խռովութեանց ատենի ժողովականացն 'ի
սակաւ ժամանակի վատեալ էին զկար զօրու-
թեան նորա: Ի վերջնումն նուագի ատենա-
բանութեանն հնգիցս դարձաւ 'ի նոյն բան,
և էլ յատենէն նուաղեալ, և ոչ ևս այլ
երևեցաւ: Անկողինք մահու ընկալան զնա,
և աւանդեցին Փանթէոնի: Ժամեաց թա-
խանձանօք 'ի բարեկամէն իւրմէ Քապա-
նեայ՝ չկոչէլ բժիշկս, այլ ոչ լուաւ նմա
այրն: Եկեալ բժշկաց գտին զնա յելս կե-
նաց, մինչ վաղ իսկ զոտից նորա կալեալ մա-
հուն, թէպէտ ուշ մտաց նորա առ նմա էր
գլխովին: Ամբոխ բազմութեան մարդկան
ժողովեալ կուտեալ զբնակութեամբ նորա,
մեծաւ լռութեամբ պաշարեալ պահէին
զամենայն անցս ճանապարհին: Հրամայեաց
Միրապոյ բանալ զպատուհանս սենեկին,
և ասէ ցՔապանիս “Հասցէ ինձ այսօր,
բարեկամ, վախճան կենացս. և չմնայ ինձ
այլ բայց խնկօք պատել, ծաղկամբք պսա-
կել, և շուրջ պատեալ յերաժշտականացն

գասուց մտանել խաղաղութեամբ 'ի քուն յաւիտենական ,, : Եւ խիթք գառնակը-կիթք ընդհատէին ելբէք ելբէք զաղնուա-կան և զհանգարտ բանս նորա : Ի զուր խոս-տանայիք ասէ , դարման ցաւոցս գտանել . և զայս ասացեալ խնդրէր ափիոն . և 'ի չտալն զայն , բնաւորականաւն իւրով սասակու-թեամբ ստիպէր զնոսա . մինչև առ 'ի հա-ճել զկամն նորա պատրանօք մատուցին այլ ինչ ըմպելի , զոր առեալ նորա քամեաց ըզ-բաժակն կարծելով զայն մահացու , և յետ սակաւուց փչեաց զոգին ,, :

Ելաց զմահ նորա Գաղղիա , և գղջեցաւ մայրաքաղաքն ողջոյն յուղարկաւոր նմին , և արձանագիր եդին 'ի վերայ տապանին “ Առնն մեծի շնորհապարտ հայրենիք ,, : Իցիւ թէ և վարուց ամբծութիւն զոյգ ա-նուանն արձանանայր նմա :

ԳԼՈՒԽ ԺԲ.

Փախուստ Լոփուորին և անկանել նորա 'ի յեռ-խոովայ , և շարժել վարանդելոյն Գաղղիացոց զդարձ պեպոլիոնա ընդդէմ աշխարհին Իւրէանց :

Յետ մահուան Միրապոյի 'ի խորհուրդս փախստեան հաւանեալ զինչեալ էին արքունիքն , մինչ ոչ ևս պատահ Լուսոյն դիւրութեն առաջի կայր . փորձ փորձեաց Թագաւորն միանգամ պատճառեալ անցուցանել զաւուրս սուրբ շաբաթուն 'ի Սէն-Քլու վանս՝ այլ արդեալ 'ի Ժողովրդենէ , վասն որոյ ա-

ռաւել ևս հաստատեցաւ խոյս տալ ոչ առ
'ի թողուլ զթագաւորութիւնն՝ այլ ամրա-
ցեալ յամրոցն Մոնմէտի միջնորդ խաղաղու-
թեան կալ ընդ ապստամբ ժողովուրդ իւր և
ընդ մերձաւոր թագաւորութիւնս, որք զի-
նու զօրութեամբ խաղային 'ի վերայ Գաղ-
ղիոյ. և միանգամայն իսկ ասել անդ զգու-
շանալ անձին։

Եվ նա յապարանիցն Թիւյլերի 'ի 21 ամ-
սեանն յունիսի գիշերային ընդ իւր առեալ
զդշխոյն, զտիկինն Եղիսաբէթ զքոյր իւր,
և զերկուս որդեակս։ Ի նմին ժամանակի
կոմն Արդուայ եղբայր արքային մեկնեալ
'ի Լուքսեմպուրկայ ընդ այլ ճանապարհ
եկանէր 'ի Գաղղիոյ։ Այլ ոչ նոյնպէս յա-
ջողէր և փախուստ թագաւորին. քանզի
նախ հաստատեալ զչու փախստեանն 'ի
քսաներորդ օր ամսոյն, միով աւուրբ յա-
ռաջմամբն կորոյս զամենայն։ Հատուած մի
հեծելոց կարգեալ անդր քան զՇալոն մնալ
գալստեան թագաւորին, իբրև ոչ ետես
զնա ըստ ժամադրին՝ մեկնեցան անտի. իսկ
երկրորդ գունդն որ կայր 'ի Սէնդմընը-
հուլ, ոչինչ ընկալեալ ազդումն յառաջնոյ
գնդէն ըստ յառաջագոյն սահմանելոյ, ան-
փոյթ եկաց չխլրտեալ 'ի տեղւոջէն. իսկ
թագաւորին հարկ լեալ առնուլ երիվարս
վան ճանապարհին, ծանուցաւ առ գրաս-
տապանն. և ահա անդէն տարածեցաւ ահ
երկիւղին 'ի Վարէն քաղաք։ Եւ 'ի մուտս
իսկ 'ի քաղաքն պարտ էր թագաւորին հան-
դիպել այլոց զօրաց. այլ ոչ ոք երևեցաւ 'ի

միջի։ Եւ մինչ յառաջ վարէր նա զՃանա-
պարհ իւր անպատապար 'ի զօրաց՝ ահա յան-
կարծ ոչինչ հեռի 'ի քաղաքէն գունդ ապ-
երասան մարդկան եղեալ 'ի դարանացն խու-
ժեցին 'ի վերայ կառաց նորա վաղակաւոր
և հրազէն 'ի ձեռին՝ և խնդրէին զհրամա-
նագիր Ճանապարհին. և առեալ զթուղթն
և զնա հանդերձ իւրովքն ածին առ գլխաւոր
իւրեանց։ Սա կէղծաւորեալ 'ի սկզբանն,
ասաց նոցա սպասել սակաւիկ մի. այլ իբրև
ըստ բաւականին գումարեցան ազգային
զօրքն, ծանոյց թագաւորին՝ թէ պարտ է
նոցա դառնալ 'ի Փարիզ. ալաչէին զնա
յոյժ թագաւորն և թագուհին խնայել 'ի
նոսա, և մի մատնել զնոսա 'ի ձեռս թշնա-
մեաց իւրեանց, այլ 'ի զուր։ Եւ իբրև դառ-
նային նոքա՝ էհաս և վՃիռ ազգային ժողո-
վոյն յեռս դարձուցանել զարքայ։ Յետ
ժամու միոյ և կիսոյ եղանելոյ նոցա, էկն է-
հաս շտապաւ Պուլէ զօրօք իւրովք յօգնու-
թիւն արքային. այլ անագան, զի եգիտ
զՎարէն պատնիշափակ արարեալ և զանցս
գետոյն արգելեալ. և ստիպէր նախ պա-
տերազմ տալ ընդ նոսա, և ապա աՃապա-
րել զկնի արքային՝ որ վաղիսկ անկեալ էր 'ի
Ճանապարհ. և վշտագին մեկնեցաւ անտի։
Իսկ 'ի Փարիզ իբրև լու եղև փախուստ ար-
քային, խառնաղանՃ ամբոխ ժաքոպէնաց
աղաղակ բարձեալ գոչէին խնդութեամբ.
"Զերծաք յանպիտան թագաւորէն և յան-
գութ վատշուէր դշխոյէն"։ Եւ անօրէնն
Մարաթ գոչէր "Առցուք զգլուխս զմատ-

նիչ և զանօրէն մարդկան զԼաֆայէթայ, զՊայլէայ զիշխանաց քաղաքին և ազգային ժողովոյն ,, : Իսկ ժողովն ազգային իշխանաբար անխառով բաշխէր զգունդս ազգային զօրաց 'ի սահմանագլուխս, և Ջոկատ մի առաքէր զկնի արքայի դարձուցանել զնա, սըւեալ իշխանութիւն լիուլի 'ի ձեռն երից ոմանց 'ի պաշտօնէից իւրոց, որք էին Լաթուր-Մոպուրկ, Փէթիոն և Պառնաւ : Այսպէս ահա մատնեալ Լուդովիկոս 'ի ձեռս գաղանաբարոյ մարդկան, իբրև գերի մի ածաւ 'ի Փարիզ. ծանոյց յառաջագոյն ժողովն ազգային զի թէ ոք 'ի գալուստ արքայի ձայն ցնծութեան բարձցէ՝ հարցի. իսկ որ բանս հայհոյութեան ձգիցէ 'ի նա կախեսցի : Եւ էջ խաղաղութեամբ Թագաւորն ընտանեօքն 'ի կառաց, և եդաւ 'ի դիպահոջ կարգեալ 'ի վերայ զգուշութիւն պահպանութեան : Եւ առ ժամն արգելին զԹագաւորական իշխանութիւն նորա. իսկ դուքսն Աւրեղիոնի Փիլիպոս այնուհետև ժամ պատեհ վարկուցեալ հրաամարակելոյ զանկումն Թագաւորին՝ ընդոյր խնդութեամբ, Թէպէտ ոչ ևս իբրև զառաջինն հզօրք էին կուսակիցք նորա : Քանզի և ֆաքոպէնք՝ յետ այնորիկ յայանապէս ցուցանէին զնզձս իւրեանց՝ զի ոչ ևս կամէին լինել ընդ Թագաւորաւ : Իսկ վասարանդիքն իբրև տեղակալ Թագաւորութեան եդեալ զդուքսն Արդուայ զեղբայր Լուդովիկոսի, 'ի ժամանակի գերութեան նորա պատրաստէին 'ի պատերազմ ընդդէմ՝ աղմկեալ հայրենեացն.

մանաւանդ իբրև խաղաղութիւն արար դըշ-
խոյն Կատարինէ ընդ Օսմանեանս, այնու-
հետև զամենայն Եւրոպա պատրաստ 'ի թի-
կունս իւրեանց համարէին. իսկ զզօրութիւն
Գաղղիոյ լուծեալ 'ի խռովս, և զամուրս՝
անդէնս, որով և թեթև և անաշխատ գործ
մի զմուտ իւրեանց յաշխարհն։ Մեծամեծս
թուէր խոստանալ տէրութեանց. այլ Փիլի-
առաջին պաշտօնեայ Անգղիոյ, մնայր ելից ի-
րաց խռովութեան. կայսրն Լէոբոլտոս տաղտ-
կացեալ 'ի պատերազմաց և ոչ ինչ հաճ
ընդ վտարանդիսն՝ խաղաղութեան ցանկայր.
թագաւորն Բրուսացի բազում խոստանայր,
այլ ոչինչ յուսալի էր 'ի նմանէ. Կուստաւոս
արքայն Շուեդացի ըղձայր առաջնորդ կալ
մարտին ընդդէմ Գաղղիոյ. Կատարինէ թէ-
պէտ կամէր ձեռն մխել 'ի մարտ, այլ դեռ
ևս զհետ էր յընկճելոյ Լեհս։ Միացան դաշ-
նակցութեամբ 'ի Փիլնիցս Լէոբոլտոս և թագ-
աւորն Բրուսացի ընդդէմ Գաղղիոյ 'ի պաշտ-
պանութիւն աթոռոյ թագաւորութեան։
Անդէն և ժողովն ազգային առաքեաց ըզ-
պաշտօնեայս իւր 'ի սահմանագլուխս աշ-
խարհին 'ի պատրաստութիւն մարտի և հրա-
ման եհան գումարել ազգային զօրաց և զօ-
րավարաց։ Եւ այսպէս հոգացեալ զարտա-
քոյ ապահովութիւն աշխարհին, խորհուրդ
'ի մէջ առնոյր ժողովն ազգային վասն իրաց
թագաւորին. Պառնաւ, Լամէթ և Մալուէ
յաջորդէին զՄիրապոյ 'ի կողմն արքունեաց.
իսկ Փէթիոն, Ռոպէսպիէռ, Պիւզոյ, և
այլք հասարակապետութեան ցանկային։

Այլ խոհեմագոյնքն 'ի նոցանէ զմտաւ ածեալ՝ զի ոչ թեթև ինչ գործ է զթագաւորութիւն 'ի հասարակապետութիւն փոխել, վտանգաւոր զիրսն համարէին. դարձեալ զԼուդովիկոս արկանել 'ի թագաւորութենէ և ամբառնալ զդուքսն Աւրեղիոնի՝ անմտութեան էր և անօրէնութեան. իսկ կրկին հաստատելով զթագաւորն 'ի սահմանեալ յիւրում իշխանութեան, փակէին զդրունս քաղաքական պատերազմաց: Յաղթէր 'ի խորհրդի անդ այս բան վերջին. և զինուք ահաբեկեալ զհակառակորդսն վճռով ծանոյց ժողովն ազգային՝ թէ չէր յանցաւոր թագաւորն փախստեամբն 'ի Մոնմէտի. 'ի դերև եհան զյոյս դքսին և զհասարակապետականացն, և արդարացոյց 'ի մասինս յայսմիկ զթագաւորն: Երևեցաւ թագաւորն 'ի ժողովի 'ի ծափահար ցնծութիւն ժողովականացն, և Լաֆայէթ մուրհակ անյիշաչարութեան արարեալ, 'ի ձայն խնդութեան բացան դրունք բանտից: Եւ յառաջնում աւուր ամսեան հոկտեմբերի լցեալ ժամանակ ազգային ժողովոյ, յաջորդեաց նմին ժողովն Օրինադիր:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Սկիզբն օրինադիր ժողովոյ և պատրաստութիւնք նորա 'ի մարտ ընդ Ռշնամին ապստամբութեանս Գաղղիոյ։

ԽՍՆԴԱՑ Գաղղիա ողջոյն ընդ հոլոնելնորոյ ժողովոյս, համարելով կարապետ բարեգուշակ կարգաց, աղատութեան և բարօրութեան Գաղղիոյ. և միաբան 'ի նոյն թուէին յօրինագրութիւն և թագաւորն և դշխոյն, ակնկալութեամբ բարեացն նորին հանդերձելոց, զի չև ևս 'ի սպառ կործանեալ էր թագաւորականն իշխանութիւն։

Այս կարգ տեսչութեան խառն իմն բերէր կերպարանս զսահմանաւոր թագաւորութեան և զհասարակապետութեան։ Առեան օրինադիր ժողովոյն կազմէր յեօթն հարիւրոց և 'ի քառասուն և 'ի հնգից նուիրակաց. գրեթէ առ հասարակ ընտրեալք 'ի միջակային դասուց ռամկին, և բազմագոյնք կրթեալք զհետ ապստամբութեան։ Ազակողմեանքն Ֆէյլանք կոչէին և ձախակողմեանքն մեծաւ մասամբք ժիրոնտեանք յանուն գաւառին։ Առաջնոցն ջանք և խորհուրդք 'ի հաստատութիւն նորոց օրինադրութեանց նկրտէին միշտ, թէպէտ և էին և 'ի նոսա զանազանութիւնք ինչ խորհրդոց. և 'ի սոսա երևելիք Մաամէտու-

Թովմաս, Ժիրարաէն, Լէմոնդէ, Ռամոն, Փասթորէ և այլք։ Իսկ Երկրորդի դասուն խորհուրդք էին 'ի հասարակապետութիւն փոխել զԹագաւորականն իշխանութիւն, Թէպէտ Երկպառակք և սոքա յիւրեանս, և Երևելիքն 'ի սոսա Վէրնիոյ, Կասէ, Ժանսոնէ և Պրիսոյ, Քոնտորսէ և Իշնար Ճարտասանք մեծահամբաւք. 'ի ձախակողմեանցն էին և Լեառնականք օգնականք Ժիրոնտեանց. և 'ի սոսա առաջնորդք Ժողովրդեան Պազիր, Քամպոն, Մէուլէն որ Թիոնվիլ։ Արտաքոյ Ժողովոյս հզօրք էին զօրութեամբ և խումբք ռամկավարաց. Ռոպէսպիէռ՝ այր խիստ և անաչառ իշխան կայր Ժաքոպէնաց. իսկ Տանթոն՝ ձեռներէց և յանդուգն առաջնորդ էր Քորտիլիէր անուանելոյ. և Սանթէռ ըստ կամի ածեալ շարժէր զևատառնաղանձ ամբոխ ռամկին՝ որ շուրջ զքաղաքաւն բնակեալ։ Դարձեալ նոյնպէս հզօրք էին 'ի Ժողովրդեան և Լաֆայէթ և Փէթիոն գողացեալ զսիրտս նոցա, սակայն զօրացաւ քան զընկեր իւր Փէթիոն, և կալաւ զքաղաքապետութեան իշխանութիւն և ձեռն նորա ընդ ապստամբսն էր միշտ 'ի կործանումն նորոյ օրինադրութեանն և գահուն։

Իսկ կողմնակիցք Թագաւորին յամենայն ձեռնարկս իւրեանց զնոյն անխոհականութիւն ցուցանէին. էր զի լրագրոց, և էր զի Ժողովրդեան խնդէին կաշառս, Ջանային որսալ զոմանս յառաջնորդաց նոցա։ Եւ իբրև այս ամենայն ընդ հակառակն 'ի վնաս իւ-

լեանց վճարէր, ձեռն արկանէին այնուհետև 'ի պատճառս կրօնից յարուցանել զժողովուրդ գիւղօրէից և քաղաքաց՝ հալածել զքահանայս երդուեալս 'ի պահպանութիւն նորոյ քաղաքական օրինադրութեան։ Նոյնպէս արտաքուստ և վտարանդի թագաւորականքն, թէպէտ ձեռնթափ յօգնականութէ օտարաց՝ իրրոխտ սպառնալեօքն և պատրաստութեամբք առաւել ևս գրգռէին 'ի գործ եղեռնութեան զապստամբան։ Վասն որոյ թագաւորն 'ի կարճել զայս ամենայն չարիս և 'ի հաստատել զթիկունս իւր, հրաման դարձի առաքէր առ նոսա՝ որք 'ի Քոպլէնց գումարեալք հնգետասան հազարք մնային յուսով ձեռնտուութէ թագաւորին Բրուսիոյ։ Այլ նոքա ոչ անսացին կոչոյ թագաւորին. քանզի յապստամբացն սադրեալ զնա համարէին որպէս և յայլ ամենայն գործս. վասն որոյ պատասխանի այսօրինակ արարին նմա. "Եթէ յարանցդ յայդցանէ (յապստամբաց) ելցէ հրամանդ, տէր արքայ, չանսամք քեզ. ապա եթէ 'ի քէն, լսեմք մեսադիւր. և ընդ ճանապարհ՝ զոր ընտրեցաք, փութամք 'ի դարձ"։ Յայնժամ ժողովն Օրինադիր դատակնիք մահու էհան 'ի վերայ ամենայն վտարանդեաց՝ որք յառաջ քան զլրումն տարեւոյն ոչ բաժանեացին 'ի միաբանութենէն՝ որ 'ի Քոպլէնց, և դարձցին 'ի հայրենիս. և վճիռ մշանջենաւոր սքսորանաց քահանայից՝ որ չառնուցուն յանձն երդնուլ երդումն հաւատարմութեան սահմանեալ օրինաց տէրութեան։

Եւ այս էր յայտնի հալածումն կրօնից, քանզի և յայտնաբարբառ խսկ քարոզէին Ժիրոնատեանք. “ Զիք մեր այլ աստուած բաց յօրինաց ,, : Թագաւորն առ զայրոյթ սրտին զօրացեալ յայնժամ ըստ իրաւանց սահմանադրեալ օրինացն՝ չկամեցաւ տալ զկնիք հաւանութեան վճռոցս. “ Լաւ է ինձ, ասէ, տալ զկեանս իմ, քան հաստատել զայդպիսի անօրէն վճիռ ,, :

Յայնմ հետէ 'ի վերայ հասեալ օտար պետութեանց գժտութեանն՝ որ ընդ Լուդովիկոս և ընդ Ժողովն Օրինադիր, կամ գըրգռեալ 'ի Թախանձանաց արքունեաց Գաղղիոյ, սկսան յայտնել զկամս թշնամութեան իւրեանց, ամենայն ուրեք նեղելով զդեսպանս Գաղղիոյ և զՃանապարհորդս նոցա՝ զսերմանիչս ապականութեան մերժելով յաշխարհաց իւրեանց : Ի զօրաժողով պատրաստութեան էին Աւստրիա, Բրուսիա և Բիէմոնթ, և սպառնային 'ի հեռուստ Սպանիա և Ռուսիա. խսկ Թագաւորն Շուետացց փառաւորեալ յաղթանակաւն 'ի վերայ ազատախումբ ապստամբաց ազգին իւրոյ՝ խորհէր ածել զյաղթող զէնս իւր 'ի վերայ Գաղղիոյ, զօրավար կացեալ պետութեանց Եւրոպայ : Անկաւ երկիւղ մեծ յապըստամբս, և սկսան 'ի միտս կասկածոտս լինել զգործադիր իշխանութէ Թագաւորին: Նորա ջանացեալ հանդարտել զնոսա, աճապարեաց ազդ առնել կայսրընտրաց Տրեւայ և Մոգունտիոյ՝ զի եթէ ոչ հալածեսցեն 'ի գաւառէ իւրեանց զգունդս վտա-

բանդեացն, թշնամիս Գաղղիոյ ծանիցեն զանձինս այնուհետև։ Նոցա անլուր լեալ բանիցն, պատրաստեցան 'ի մարտ՝ զօրավիգն իւրեանց ունելով զկայսրն Աւստրիոյ։

Զօրաժողով եղեն և Գաղղիացիք 'ի պատերազմ բազմութեամբ արանց հարիւր յիսուն հազարաց. և յերիս բաժանեալ գունդս, զմին տային 'ի ձեռս Լիւքնէրայ, զերկրորդն՝ Լաֆայէթայ, և զերրորդն՝ Ռոշամպոյ. քանզի սոքա միայն մնացեալ էին 'ի զօրավարաց, և այլքն ամենեքեան ընդ վտարանդիս էին։ Բաց 'ի սոցանէ և Մօնթէսքիէօ կազմ կայր զօրօք, ունել զանցս Ալպեանց։

Այլ այս ամենայն բազմութիւն զօրաց անհրահանգ և անկիրթ խուժան մարդկան, և զօրագլուխք 'ի նոսա անպիտանք էին. քաղաքք անզէնք, և զինարանք և նաւակառոյցք դատարկացեալք։ Մեծաւ լրջմտութեամբ արագ արագ կազմեցան պատրաստեցան 'ի մարտ, քանզի ժողովրդեան այնուհետև անկ էր և հոգ պատերազմին։ Շարժիչք և գրգիռ պատերազմին Ֆէոյլանք էին և Ժիրոնտեանք և 'ի նոսա գլխաւորքն Պրիսսոյ և Լուվէ, որով մեծացաւ անուն նոցա 'ի տեսչութեան աշխարհին։ Իսկ լեռնականքն, Ժաքոպէնք և Քորտիլիէրք և 'ի նոսա մանաւանդ Ռոպէսպիէռ և Քամիլ Տէմուլէն, մեծապէս դժկամակ էին ընդ պատերազմն, յորում չէր նոցա ձեռն։

Օր քան զօր վառէր հուր թշնամութեան. և քանզի պատճառք մարտիս թագաւորն

կարծէր Լուդովիկոս, զի 'ի հաստատութիւն աթոռոյ նորա շարժէին օտարք, ատելի էր նա միշտ և խէթ յաչս տպստամբաց, որք և զխոնարհէլն նորա 'ի կամս իւրեանց խաբէութիւն համարէին, զի չէր իսկ նոցա մոռացեալ՝ թէ որպէս մերժեաց նա զյետին վՀիւս ժողովոյն։ Դարձեալ զի կասկած էր նոցա և զպաշտօնէից արքայի, ամբաստան լեալ զնոցանէ իբրև զմատնչաց՝ արկին զնոսա 'ի պաշտամանցն. և քանզի կանխաւ իսկ արկեալ էր Թագաւորին ըզնարսոն, երկուցեալ 'ի տարապայման փառասիրութենէ պատանւոյն և 'ի ռամկավար բնաւորութենէ, Թափուր 'ի պաշտօնէից գտանէր. վասն որոյ աՀաստարեալ ընտրեաց իւր 'ի ժիրոնտեանց անտի պաշտօնեայս. զՏիւմուրիէ, զԼուվէ, զՏիւրանթոն, զՔլաւիէ և զՌոլան։

Տիւմուրիէ՝ այր քաղաքավար և հմուտ 'ի գործ պատերազմի, մեծահանՀար և փառասէր յոյժ, էր զի ձեռն տայր արքունեաց, և էր զի օրէնադիր ժողովոյն, և չէր նմա փոյթ խտիր առնել ընդ սա և ընդ նա, միայն զի առաստարեզ բացցի ինքեան 'ի հանդէս զարմանալի հանՀարոյն և գործասէր բնաւորութեանն։ Այս օրինակ սիրելի նա զանՀն ընծայէր և ժիրոնտեանց և ժաքոպէնաց, և նմին ինքեան Լուդովիկեայ արքայի. քանզի կեղծաւորել նմա Թագաւորն համարէր 'ի կողմն ռամկին, զի մարթասցի 'ի հաստատութիւն գահուն շրջել զամենայն։ Այլ Տիւմուրեայ՝ որՀոխն էր

հանճարով, և քաջութեամբ և ճարտարութիւն զարմանալի, և որ 'ի ծառայութիւն էր ծնեալ քան 'ի տէրութիւն, ոչ մեծութիւն էր 'ի յաղթահարել, ոչ գոռոզութիւն ինքնսրէն հրամանս տալոյ: Զի եթէ ընդ հանճարոյն կցորդէր 'ի նմա և ոգի Միրապոյի կամ Քրոմվելլայ, կամ իղձ Ռոպէսպիէռայ գլուխ ամբառնալոյ՝ անշուշտ արդեօք նուաճեալ էր զապստամբութիւնն և զԳաղղիա: Արդ եկաց Տիւմուրիէ 'ի վերայ արտաքին գործոց տէրութեան. և իշխանակիցք նորա՝ Լուվէ 'ի վերայ իրաւանց, Տիւրանթոն և Քլաւիէ գանձապետք, և Ռոլան 'ի վերայ ներքին գործոց պետութեան: Եւ զի սոքա ամենեքեան էին արք հանճարեղք, սիրողք արդարութեան և իմաստուն հասարակապետական տեսչութեան, խնդայր զառաջինն Թագաւորն ընդ ընտրութիւն նոցա, և մանաւանդ ընդ Տիւմուրեայ անկեղծ հաւատարմութիւնն 'ի հաստատութիւն գահուն և նորոգ սահմանադրութեանն. որ և յայտ է 'ի զբուցատրութեանց նորա ընդ դշխոյին, զորոյ գողացաւ իսկ զսիրտ վստահել յինքն յամենայնի: Այլ այսու ատելի լինէր Տիւմուրիէ և կասկածաւոր Ժիրոնտեանցն, Ժաքոպէնաց և Ֆէոյլէանց:

ԳԼՈՒԽ ԺԴ.

Խորտակել Գաղղիացւոց առաջի Ռշնամեաց իւրեանց, և յաճախել մոլեգնութեան խառնվլաց։

Ի ԺԱՄԱՆԱԿԻՆ յայնմիկ մեռաւ խաղաղասէր կայսրն Լէոբոլտոս և պայազատեաց որդի նորա Փրանկիսկոս երիտասարդ աշխոյժ, որ և անդէն պատերազմ սպառնայր Գաղղիոյ եթէ ոչ 'ի նոյն յառաջին օրէնս դարձցի։ Անհրաժարելի էր յայնմ հետէ պատերազմն. և Աւստրիացիք յերկուս բաժանեալ, կէսք 'ի ստորին գաւառս խաղային, և կէսք 'ի սահմանս Հռենոսի։ Ընդ այս խրոխտումն թշնամւոյն վառեցան Գաղղիացիք, ջեռան իբրև զհուր, և անդէն հաւանութեամբ թագաւորին 'ի պատերազմ խրախուսեցին։ Թէպէտ մեծ էին սպառնալիք թագաւորաց Եւրոպայ, այլ դեռ ևս Աւստրիա միայն շարժէր 'ի զէն. յայլոց անտի կէսք 'ի պատրաստութեան էին, և կէսք անխլիրտ 'ի հեռուստ տեսողք. իսկ ալբքայն Շուեդաց դիւցազն առաքինի, վառեալ յեռանդն քաջութեան, ընդ սուսերբ ապստամբաց ժողովրդեան իւրոյ ողորմ անկանէր։

Զարմացաւ Եւրոպա ընդ յանդուգն համարձակութիւն Գաղղիոյ՝ որ նախամարտիկ խրախուսէր 'ի վերայ հզօր թշնամեաց իւրոց. և Տիւմուրիէ ձեռն էարկ յայնժամ 'ի խորհուրդ աշխարհակալելոյ զԲելգիա

որ խլրտէրն միշտ ընդ ձեռամբ Աւտորիոյ։ Հրաման եւ, և անդէն բանակն Ռոշամպոյ յերիս առաջս զատուցեալ խաղաց յերկիր թշնամեաց։ Գունդն զօրավարեալ'ի Տիլլոնայ 'ի տեսանելն զթշնամին՝ զաղաղակ եբարձ. "Դաւ է, դաւ է,,. և ոպանեալ զզօրավարն, զէնրինկէց թիկնադարձոյց փախուստեայ անկաւ 'ի քաղաքն Լիլ։ Նոյնպէս և երկրորդն՝ 'ի բաղխեալ անդ ընդ թշնամւոյն 'ի կարծիս մատնութեան զոտս արձակեալ փախչէր. իսկ գունդն երրորդ ընդ լուր փախստեան նոցա զտեղի էառ։

Մեծ էր խնդութիւն վտարանդեացն Գաղղիոյ՝ իբր այն թէ յաջողեցան խորհուրդք նոցա։ Այլ վրիպեցան յոյժ Աւստրիացիք, զի ոչ աճապարեցին հեռամուտ լինել թշնամեաց յաշխարհ նոցա. և մինչ նոքա զկայ առեալ մնային զօրացն Բրուսաց, Գաղղիացւոց պարապ գտեալ ժողովեցան վերասին 'ի ձեռն Լաֆայէթայ և Լիւքնէրայ, նախկին փորձիւքն առաւելեալ 'ի հրահանգս և 'ի զօրութիւն։

Ընդ լուր կոտորածի և փախստեան զօրացն զարհուրեցան Գաղղիացիք, և յաւելաւ ցասումն և կասկած ռամկին։ Տեսեալ Ժաքոպէնաց թէ արդարացան իմն խէթք սրտից իւրեանց, առաւել ևս ջերան 'ի զայրոյթս մոլեգնութեան, և Մարա որ յերից ամաց հետէ ոչ դադարէր 'ի խնդրելոյ զվերացարիւր գագաթունս 'ի հաստատութիւն բարօրութեան Գաղղիոյ, 'ի խորոց անտի ստորերկրեայ կաղաղիցն՝ ուր խուսափեալն

էր յերեսաց զօրութեան ռամկին, խլրտէր դարձեալ համարձակել 'ի նոյն անագորոյն խորհուրդս 'ի մակագրեալ օրագրին իւրում Բարեկամ ժողովրդեան, յորում ոչ թագաւորական տոհմին խնայէր և ոչ յարանց աւագացակն ածէր. "Առաջին և կարևորագոյն է, ասէր, զօրաց ընդ սուր հանել զզօրավարս իւրեանց,,: Եւ այս խժական բանք նորա հաճոյ թուէին բազմաց, զի զամենեցուն ըստիրտս կալեալ էր երկիւղ մատնութեան, և ամենուստ պաշարեալ զանձինս կարծէին 'ի դաւաճանացն. վասն որոյ ռամիկն խառնիճաղանճլի ահիւ և ցասմամբ ձեռն արկանէր 'ի յանձանձանս իրաց աշխարհին, զի մի պատրեսցի յարքունեաց կամ 'ի ժողովոց կամ յազգային զօրաց: Եւ զինէին զսոսա Ֆաքոպէնք 'ի տէգ և 'ի նիզակ. իսկ Փէթիոն քաղաքապետ Փարիզու փոյթ կալաւ յօրինել կարգել զայս դաս զօրականի, որոց կարմիր ասուեայ գլխարկ նշանակ լինէր ապա ազատութեան, և ապստամբացն խումբք առ հասարակ տանէին 'ի գլուխս իւրեանց: Եւ յետոյ ուրեմն պարծէին սոքա ըստ արժանաւոր իւրեանց կոչումն Սան-քիւլոդ՝ (1) որ 'ի սկզբանն իբրև նախատանաց լինչ անուն տուաւ նոցա 'ի թագաւորականաց անտի: Իբրև այսու խառնամբոխ զօրք ամբոխեցին զձեռս իւրեանց Ֆաքոպէնք, յայնժամ ժողովն Օրինադիր առաջի արար արքայի զվերձիռս իւր, այս է. "Մշանջենաւոր տարա-

(1) Մերկաոտրոանգ կամ Անվարտիք:

գրութիւն աներդումն քահանայից. Արձակուրդ թիկնապահ զօրաց արքունի. Զօրաժողով քսան հազար դաշնակցաց՝ի պահ մայրաքաղաքին,,. և այս վերջին առաջարկութիւն՝ Ժիրոնտեանցն էր խորհուրդ, առ՝ի հաստատել նոքօք զթիկունս իւրեանց ընդդէմ թագաւորին և ազգային զօրաց։ Ի մերժել թագաւորին զվճիռսն, Ժիրոնտեանք՝ի ձեռն Ռոլանայ խստագոյնս և արհամարհանօք ծանուցին նմա զվճռակ Գաղղիոյ սպառնալեօք հանդերձ։ Ի խոր խոցեալ Լուդովիկոսի արձակեաց զԺիրոնտեան պաշտօնեայս իւր ըստ խորհրդոյ Տիւմուրեայ, այլ՝ի պնդել թագաւորին ընդդէմ վճռոյ ժողովոյն և Տիւմուրիէ ինքնին հրաժեշտ ետ՝ի պաշտամանէն։ Յայնժամ եղկելի թագաւորն առ յուսահատութեանն գոգցես յափշութիւն մտաց անկանէր, մինչև արտասուօք իւրովք և աղաչանօք զգաստացոյց զնա դշխոյն։

Յայնժամ յարեան՝ի հաստատութիւն գահուն Ֆէոյլեանք՝ յորոց ընտրեալ էր թագաւորն իւր պաշտօնեայս փոխանակ Ժիրոնտեանցն։ Միաբանեցան ընդ սոսա, Լալի, Մալուէ, Տիւփոր, Լամէթ, Պառնաւ, Լաֆայէթ, այլ և ոչ՝ի մի ոք՝ի սոցանէ կարէին վստահ լինել հաւատալ արքունիքն։ Ազգային զօրքն խոնջք և անհրահանգք, ժողովն բռնակալեալ՝ի Ժիրոնտեանց, անցեալ թուէր ժամանակ ջանիցն. քանզի և Լաֆայէթ գլուխ և առաջնորդ նորոյ սահմանադրութեանս հզօր բանակաւն իւրով ահաւոր էր և ատելի ապստամբաց իբրև զբռնաւոր, և իբրև զհաս-

տասիչ աթոռոյ թագաւորութեան։ Եւ ինքն Լաֆայէթ թէպէտ այր քաջ էր, հաւատարիմ 'ի բանս և լաւաբարոյ, այլ անգէտ 'ի խոհական տեսչութիւն և փառասէր յոյժ, վասահացաւ 'ի զօրութիւն բանակի իւրոյ և յայտնի յայտնեաւ հակառակ ժաքոպէնաց։ Գրեաց բազում ամբաստանութիւս զնոցանէ առ ժողովն օրինագիր, և խրատ էտ ընջել զնոսա 'ի Գաղղիոյ. այսու խորհրդով ատելի եղև նա յաչս ժողովրդեան իբրև թշնամի ազատութեան։ Այնուհետև անզօր էին և ջանք հնարից Ֆէոյլէանց. քանզի վտարանդի գունդք Գաղղիացւոց ընդ ժաքոպէնս համարեալ զնոսա, զգուշանային, և ժողովուրդն համախոհս ընդ օտար թշնամիս զնոսա վարկուցեալ, ատէր. և որ մեծն է՝ և արքունիքն իսկ խորշէին 'ի նոցանէ. այսպէս արհամարհ նկուն եղեալ նոքա նուաճէին ապա ընդ հզօրագունիւն, մնանեալ 'ի ցասումն ժաքոպէնաց։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Ի Բոռան առնուլ ժաքոպէնաց զպարանոս արքունի։

ԳՐԳՈՒԵԱՆ ժաքոպէնաց 'ի թղթոյ Լաֆայէթայ միաբանեցին ընդ կուսակիցս գլխին Աբրեզիոնի՝ ընդ խառնիճաղանճ ամբոխին, և հաստատեցին 'ի քաղաքս Բորդաւ ամենայն յունիսի խառվութեամբ ածել ինչ 'ի ձեռս։ Ի նմին առաւօտու երեսուն

հաղար արք սիկարեանք գումարեցան 'ի մի, զինեալք 'ի նիզակ 'ի սուսեր 'ի գերանդի 'ի տապար և յերեքժանի, պարզեալ յառաջոյ 'ի գլուխ՝ զվարսիս պատառուտեալս, առաջնորդս ունելով Իւրեանց արս անպիտանս, մսագործս և կրպակաւորս, որպիսիք ոմանք էին, Սանդէռ, Աղեքսանդր, Լըժանար մսագործ, Ռոսինեօլ, Ֆուռնիէ, Փանիս, Սէրժան և այլն։ Աղաղակէին կոչեալ յերգ և 'ի կաքաւ "Կեցցէ՛ ազգն, կեցցեն Սան-Քիւլոդք. անկցին կղերքն, բարձցի խոչընդոտն իշխանութիւն Թագաւորի"։ Ծափաձայն գովութիւն նուիրակաց, աղաղակ ժողովրդեան, երգ քաղաքացոց, շառաչիւն խառնամբոխ, և բազմավոանդ լըռութիւն օրինադիր ժողովոյն, ահաւոր իմն և ողորմ տեսարան գործէին 'ի քաղաքին։ Մինեցաւ ամբոխն խառնիճաղանճ բռնութեամբ յապարանս Թիւյլերի՝ ուր էին յայնժամ արքունիքն և արքայն Լուդովիկոս։ Խորհուրդ էր առաջնորդացն ապանանել զԹագաւորն, այլ և յայս նուազ զերծաւ նա արութեամբ իւրով։ Եկ միայնակ ընդ առաջ կատաղելոյ ամբոխին, եբաց ինքնին զդրունս. անդ էր տեսանել Թէ քանի հզօր է առաքինութիւն և 'ի վերայ վայրագագունից մուաց, մինչև ոչ ումեք համարձակեալ 'ի կաշառակուրծ և 'ի զինեալ անօրինաց ձեռն մխել 'ի նա։ Քանզի եկեալ Թագաւորն ընդ առաջ անօրինաց "Ահաւասիկ է՝,, , ասէ. և սպասաւորքն շուրջ պահ ունէին անձին նորա, զի մի ոտնակոխ

լեցի 'ի խառնախուժ բազմութենէն. և 'ի բարձրաւանդակ ուրեք հանեալ թիկնապահս յազգային զօրացն, զնովաւ կացուցանէին: Իսկ ամբոխն կացեալ աղաղակէր. "Բարձցի խոչընդոտն իշխանութեան թագաւորին, դարձցին 'ի նոյն պաշտօնեայքն, տարրագիր լեցին քահանայիցն դասք և հաստատեսցի պահակապան զօրաց գունդ 'ի քաղաքին,,: Անդ մեագործն Լըժանոր, այր լպիրշ, լռեցուցեալ զժողովուրդն՝ բարբառէր առ թագաւորն ժպրհութեամբ արհամարհանօք և սպառնալեօք, պահանջելով 'ի նմանէ զկնիք հաւանութեան վճռոց ժողովոյն ընդդէմ աներդումն քահանայից. այլ վայրապար ճիգն. քանզի Լուդովիկոս յանդիման ահաւոր սպառնալեաց սպառազէն ամբոխին կացեալ անվեհեր արար պատասխանի. "Յամն խնդրելոյ և շնորհելոյ, արարիցս պարապով, զոր ինձ նոր օրինադրութիւնս կարգեսցէ,,: Իսկ դշխոյն Անդոնիէդա ծածկեալ կայր 'ի խորս ապարանից հանդերձ երկոքումբք որդւովք իւրովք, քանզի առաւել ընդ նա զայրագնեալ զնա խնդրէին: Եւ զի տիկնին Եղիսաբեթ քոյր թագաւորին կայր առ եղբօր իւրում 'ի բազմավտանգ պահուն, ոմն յապստամբաց անտի զաչս 'ի նա արձակեալ, գոչէ "Ահա Աւստրիացին,,. և գազանաբար ուղղէ զնիզակն իւր ճօճելով առ 'ի հարկանել զնա. այլ ոչք մերձն կային աղաղակ բարձին թէ, "Տիկինն Եղիսաբեթ է,,, և արգելին զոճիրն մեծ: Յայնժամ՝ ասէ տիկինն ազնուական.

“ Թողէք զնա 'ի պատրանս իւր , զի թերևս մահուամբ իմով 'ի չարագոյն ևս եղերանց յեռս կասեսցին դոքա ,, : Եւ ահա մատուցին արքայի գլխարկ մի կարմիր . և նորա առեալ եդ զայն 'ի գլուխ իւր . և առեալ զբաժակ գինւոյ էարբ յաղատութիւն ազգին : Ողորմ էր պայման թագաւորի անզօր ամենեին . քրիստոնէական միայն առաքինութեամբ կարէր յաղթել նոցա :

Դշխոյն հանդերձորդուվքն փախուցեալ 'ի սրահն խորհրդոց 'ի վերին դատիկոնի՝ խնդրէր երթալ առ թագաւորն , և վտանգաց նորա հաղորդ լինել : Արդեւլուին զնա իւրքն , և կայր նա 'ի հեռուստ թիկնապահ զօրօքն՝ սիրան լի ահիւ , աչք յարտասուս , իսկ դուստրն լայր ահաբեկ . և մանուկ արքայորդին զառաջինն երկուցեալ ճիչ բառնայր , և ապա հանդարտեալ յանմեղ տգիտութեան իւրում ժպտէր : Մատուցին և դշխոյին գտակ կարմիր վասն արքայորդւոյն՝ և եդ զայն 'ի գլուխ նորա : Անդ Սանդէռ կացեալ 'ի մի կողմն , ազդ առնէր ժողովրդեան մեծարել զդշխոյն , և քաջալերէր զնա , և ասէպ յեղյեղէր . “ Խաբեն զքեզ սիկին , խաբեն զքեզ ,, : Ապա տեսեալ զարքայորդին նեղեալ ընդ կարմիր գտակաւն . “ Հեղձնու , ասէ , մանուկն . 'ի բաց առէք զծաղրական գտակդ ,, :

Իբրև ժամն հինգ ձգէր դժպհի և բազմավտանգ ալմուկն , ահա եկն երևեցաւ 'ի դահլճին Լուդովիկեայ Փէթիոն քաղաքապետ առաջնորդ դաւադրացն , ձայն եա .

“ Մի երկնչիր, տէր արքայ, չիք քեզ երկիւղ ինասու ,, : Թագաւորն հայեցեալ 'ի Փէթիոն “ Եւ ընդէր երկնչիցիմ ես, ասէ. վարակելոյն խղճիւ անօրէնութեանց անկ է միայն երկիւղ ,, : Ապա կալեալ զբազկէ ուրուսն 'ի զօրականէն, ասէ. “ Կաց զօրական, դիր զձեռն քո 'ի վերայ լանջաց իմոց, և վկայեա թէ բաբախիցէ սիրտ իմ ,, : Յայնժամ Փէթիոնի զամօթի հարեալ մեկնեցաւ 'ի բաց, ձգեալ զհետիւր զնաառնիճաղանճն : Հասին անդէն նուիրակք յօրինադիր ժողովոյն, և թագուհին ածեալ զնոսա 'ի դըզեակն ցուցանէր զդրունս խորանակեալս և զկահս ապականեալս և եղծեալս : Ընդ նուիրական էր և Մէրլէն Տը Թիոն–Վիլ, նախանձաւոր 'ի սէր հասարակապետութեան քան զամենայն ոք : Սա ընդ աղէաս թշուառացն 'ի գութ շարժեալ, ցօղէր արտասուս : Զայն տեսեալ դշխոյին, ասէ. “ Այսչափ արդեօք ընդ անգթութիւն ժողովրդեանդ առ թագաւոր իւր և առ ընտանիս նորա, որ միշտ զբարիութիւնէ նորա խորհեցան ,, : “ Այո, ասէ Մէրլէն, լամ զաղէաս շնորհագեղ և խմաստուն տիկնոջ և մօր ընտանեաց. այլ ոչ զթագաւոր և զդըշխոյ. քանզի ատելի են ինձ թագաւորք և դշխոյք առ հասարակ ,, :

Ընդ այս ժպրհութիւն տղատամբաց ամբարձին գժկամակութեամբ զձայնս իւրեանց ամենայն թագաւորականք յօրինադիր ժողովին և սիրտք նորոյ սահմանադրութեան. և զկնի զուր ջանից 'ի քննու-

թիւն եղեալոցն, կոչեցին և զԼաֆայէթ 'ի Փարիզ։ Որոյ վատահացեալ 'ի զօրութիւն ազգային զօրաց՝ որ ընդ իւրև, եկն եմուտ 'ի ժողովն օրինադիր և խնդրեաց զի քննեսցին պատճառք խռովութեանն 'ի 20 յունիսի. ընկալեալ զաղանդն ժաքոպէնաց՝ որ բրռնանայր 'ի վերայ ազգին անօրէնութիւն, հաստատեալ մեծարանս իշխանութեան, և պահպանութիւն նորոյ սահմանադրութեան։ Առ որ նախագահ ժողովոյն "Տեսցուք" ասէ, հրաւիրեալով զնա 'ի բազմել։ Անդ կատէ յարեաւ եկաց ամբաստան լինելզԼաֆայէթայ, թէ առանց ինչ վճարելոյ 'ի պատերազմին՝ յոր կարգեցաւ, թողեալ զայն եկն անհրաման 'ի Փարիզ. և խնդրէր ընկենուլ զնա յիշխանութենէն։ Այլ Ռամոն ջատագով կացեալ զօրավարին, և զվաստակս նորա յազատութիւն հայրենեաց 'ի մէջ ածեալ, զամենայն զժողովականս յիւր միտս շրջէր։ Յայնժամ մեծաւ փառաւք եղեալ Լաֆայէթայ 'ի ժողովոյն՝ չոգաւ 'ի Թիւյլերի առ Թագաւորն և առ դշխոյն։ Այլ իբրև ետես զի խուսէին մերժէին յինքենէ 'ի բաց, տրտմեցաւ յոյժ. ոչ վասն անձին ինչ, այլ վասն ընտանեաց Թագաւորին։ Եկ անտի, և 'ի ձայն ծափահար գովութեան՝ զի գոչէին "Կեցցէ Լաֆայէթ", չոգաւ 'ի տուն իւր։ Յետոյ խորհեցաւ նա հալածել զժողով ժաքոպէնաց, և որմել զդրունսն. իսկ նոցա զգացեալ զայն, դիմեցին առ Տիւմուրիէ՝ որ դեռևս 'ի Փարիզ էր, զօրավար ինքեանց կալ ընդդէմ Լաֆայէթայ. այլ նա

չէառ յանձն։ Եւ Լաֆայէթ առանց ինչ գործելոյ եկ գնաց 'ի քաղաքէն այլուամ թերևս մնալով պատեհ ժամանակի (1792)։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Վերոյին զօրանաւ խառնվլաց և խնդրելի առանաւ զանուն Ռագաւորութեան։

Անդէն ընդ հեռանալ Լաֆայէթայ կըրկին համարձակեալ ապստամբաց, զինէին վերստին ընդդէմ թագաւորական իշխանութեան. և լուր չուռոյ ութսուն հազար Բրուսաց այրըտիր հինաւուրց զօրուն ընդ զօրավարութեամբ դքսին Պրունզվիքայ և Նիզակակցաց նոցա Բիէմոնթեցւոց, 'ի մուռացօնս արկեալ զդաւաճանացն վրէժխնդրութիւն՝ զօրացոյց վերստին զկողմն ժաքոպէնաց, և իբրև խորհուրդ 'ի մէջ առնուին յայտ առնել զհայրենեացն վտանգ, և ոմն զայս ինչ առաջի առնէր և ոմն զայն, անդ խրախուսեալ Վէրնիոյ 'ի գլխաւորաց անտի ժիրոնտեանց, պատառեաց համարձակ զառագաստեալն ցայն վայր զպատրուակ սրտից, և եցոյց թէ վան անուան և իշխանութեան թագաւորի շարժին ալքունիքն Եւրոպայ. և այս ամենայն չարեաց պատճառք՝ անուն միայն թագաւորի. և յետ երկար բանից, մանաւանդ իսկ ցուցանէր զնա հայրենեաց և դաւադիրնորոյ սահմանադրութեան։ Լուաւ յօժար չարախօսութեանց նորա ժողովն Օրլինադիր, թէպէտ խօսեցաւ Թովմաս 'ի

պաշտպանութիւն թագաւորին, այլ՝ի զուր։

Իսկ Լամուրէդ եպիսկոպոսն Լուգդունի՝ որ հաւանեալ էր յոյժ ընդ նոր սահմանադրութիւն ազատութեան իբր ընդ լաւագունի կենաց առիթ, տեսեալ զնուիրակս ժողովոյն զիշխանակիցս իւր ՀԷՂՔԵԱԼՍ՝ի միմեանց հակառակութեամբ՝ վշտանայր յոյժ, և եռայր ոգւով՝ի համբոյր սիրոյ ածել զնոսա. վասն որոյ խնդրեաց խօսիլ, և եցոյց պատճառս ամենայն չարեացն զհակառակութիւնս նոցա, և թէ նա միայն լինի ՀՇՄԱՐՏԱՊԷՍ յաղթող Աւստրիականաց՝ որ զնոսա՝ի մի միաբանութիւն սիրոյ ածցէ. "Ի ձեռս ձեր է, ասէր, փրկութիւն աշխարհիս, և զի՞ յապաղէք։ Թողէք զգժտութիւնդ, թողէք զհերձուածսդ ընդ թագաւորական և ընդ հասարակապետական իշխանութիւն, երդուարո՛ւք զհղբայրութիւն յաւերժական, և գիտասցէ թշնամին թէ զոր կամիմքն՝ ամենեքեան կամիմք, և փրկեալ էն ապա հայրենիք"։ Ի կատարել բանից նորա, ծափահար ցնծութեամբ գովեցին զնա ժողովականք. և անդէն գիրկընդխառն սիրով՝ի համբոյր հաշտութեան գային։ Եւ անդ էր տեսանել՝ զի ոչք աւուրք յառաջ զարիւն միմեանց ըմպել ջանային, գիրկս իրերաց տային։ Ազդ եղև թագաւորին, և եկն երևեցաւ՝ի ժողովն անդ։ Այլ մանկական գոգցես խաղք թուէին այս ամենայն. չեռեռս երբէք աշխարհ ժողովուրդ յեղյեղուկ իբրև զգաղղիացիս, մանաւանդ՝ի խռովութեանն ժամանակի. քանզի ան-

դէն առ վալիս մուսացան զամենայն, և զվը-
տանգէ հայրենեաց տագնապեալ խորհէին։
Ի ժողով դարձեալ 'ի 11 յուլիսի գումա-
րեցան, և նկարեաց առաջի ժողովոյն Պրի-
սոյ զվտանգս Գաղղիոյ ամենուստ։ Եւ 'ի
լռել ամենեցուն 'ի լռութիւն խոր, ծանոյց
նախագահն այսպէս. "Ո՞ Քաղաքացիք, 'ի
վտանգի կան հայրենիք"։ Եւ յայնմ հետէ
չլուծաւ երբէք ժողովն, և մերձ ընդ մերձ
ձայնք հրաղինուց կարապետէին ահաւոր
խռովութեն. քաղաքաց և գաւառաց խոր-
հրդականք'ի խորհուրդ ժողովէին՝ խորհել
զելս չարեաց դատանել։ Իսկ ազգային զո-
րացն խումբ իբրև զծով յուզեր անդուլ, և 'ի
հրապարակս կանգնեալ ատեան զինուորա-
կան՝ զսրաժողով լինէին, և յաւուր միում
ինքնակամ գրելոցն թիւ եհաս մինչև ցհնգե-
տասան հազար. քանզի մօտալուտ վտանգ
հայրենեաց տարուբերեալ յուզեր զսիրտս
ամենեցուն, և ազգն ողջոյն գղրդեալ 'ի զէն
դիմեր, և օգուտ աշխարհին և հոգ տեսչու-
թեան 'ի բերանս ամենեցուն ընթանայր, և
թէ 'ի դատ կոչեսցի Լաֆայէթ, և անկցի
Լուդովիկոս պատճառք աղէտից յաթոռոյ։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Տարեդարձ հանդէս յիշատակի դաշնակցութեան։

Ս՝ԵՐԶԵՑԱՒ օր յիշատակի դաշնակցու-
թեան, զոր կրկին ամօք յառաջ մեծաշուք
կատարեալ էր նոցա յԱրիսեան դաշտին,

և յամին երկրորդի շփոթք առմանն Վէր-
տէօնայ խափան լեալ էին տարեդարձ տօ-
նին : Կատարէր դարձեալ հանդէսն , այլ
քանի՞ կերպարանափոխ 'ի ժամանակս եր-
կուց ամաց : Զի ոչ ևս սեղան փառաւոր
պաշտէր յերեք հարիւրոց քահանայից , և
ոչ բանակ վաթսուն հազարաց 'ի հանդերձս
շքեղս և 'ի կարգս զարմանալիս . ոչ բազմու-
թիւն հանդիսատեսից շուրջ յաստիճանսն
արբեալք ուրախութեամբ , ոչ պատշգամ
ամբարձեալ վասն թագաւորին և ընտանեաց
նորա և պաշտօնէից և ազգային ժողովոյն :
Ամենայն ինչ յետս ընդդէմ. հերձուածք
հակառակք զկնի վայրապար հաշտութեն .
ամենեքին ոխային ատելութեամբ ընդ մի-
մեանս , ամենայն ինչ կարապետ էր պատե-
րազմի և խռովութեան : Ութսուն և երեք
վրանք կանգնեալ 'ի նշանակ գաւառաց Դաղ-
ղնոյ , ըստ նոր բաժանման . և իւրաքանչիւ-
րոց վրանացն մօտ կաղամախք տնկեալ , յո-
րոց 'ի ծայրս դրօշք եռագոյնք ծածանէին :
Վրան մեծ հարեալ էր վասն օրինադիր ժո-
ղովոյն և թագաւորին , և միւս այլ վասն
պաշտօնէից տէրութեան . իսկ փոխանակ
հայրենեաց սեղանոյ , սիւն ծայրատեալ՝ որ
յառաջին հանդիսէ անտի մնացեալ էր : Ի
մի կողմն շիրիմ վասն անկելոցն 'ի պատե-
րազմի ընդդէմ թշնամեաց : Ի միւսումն ծառ
ինչ մեծ , անուանեալ ծառ ժառանգական
իշխանութեան : Եւ 'ի միջի փայտակոյտ
կանգնեալ բարձրագէզ , և 'ի վերայ փայտա-
կուտին եդեալ թագս , ժապաւէնս կա-

պոյաս, խոյրս եռապսակս, գտակս կարդի-
նալականս, բանալիս սրբոյն Պետրոսի, մուշ-
տակս աքիսեենիս, աթոռս վարդապետա-
կանս, զանուանս ազնուականութեան, զնը-
շանս և զկնիքս նոցա. զայս ամենայն հան-
դերձեալ պատրաստէին՝ հրաւիրեալ զթա-
գաւորն, Հուր տալ փայտակուփին։

Զմիջաւուրբ սահմանեցաւ տալ զերդումն. չոգաւ թագաւորն 'ի զինուորական դպրոցն, մնալ Ժողովոյ ազգին։ Վեհ էր հանդարտութիւն թագաւորին, և մեծ էր փոյթ դշխոյին 'ի ծածկել զաղէտս սրտին, ընդ նմա էին և քոյր արքայի և որդիք։ Անդ ընդ ողորմելի նոցա այն տեսիլ բազումք զարտասուս յաչաց հեղուին։ Յանկարծ սկսաւ անցանել Ժողովուրդն խառն 'ի խուռն, կանայք, մանկունք և արք արբեալք աղաղակաւ. "Կեցցէ Փէթիոն. Փէթիոն կամ մահ"». և զնոյն բան ունէին գրեալ 'ի վերայ խուրձից իւրեանց, այսպէս գրաւեալ էր նորա զսիրտ ռամկին։ Յետոյ ապա գային անցանէին դաշնակիցք ձեռն 'ի ձեռն արեալ՝ ունելովընդ իւրեանս և մամուլ, յորում էրբէք էրբէք զկայ առեալ տպէին զերդս խառվասէր մարդկան և սփռէին 'ի Ժողովուրդն։ Զկնի գայր ազգային զօրն և գունդագունդ զօրականք. ապա պաշտօնեայք և Օրինադիր Ժողովն. էջ և թագաւորն, և շուրջ պատեալ 'ի զօրաց մերձեցաւ 'ի սեղանն հայրենեաց, և Ժողովուրդք խրոնէին շուրջ բազմութեամբ։ Իբրև կատարեաց զերդումն, դիմեաց խառնիճաղանճն

այրել զծառն ժառանգական իշխանութեան. 'ի նոյն և զթագաւորն ձգել կամէին, այլ հրաժարեցաւ նա. "Զիք այլ ևս, ասէ, ժառանգական իշխանութիւն" : Եւ դարձաւ Լուդովիկոս անվնաս 'ի հանդիսէն 'ի գոչիւն զօրաց և խառնիճաղանձին "կեցցէ արքայ" :

ԳԼՈՒԽ ԺԸ.

Յաղագս ծողովոյ Խոռվարարացն :

Յետ այնորիկ 'ի տարածել վճռոյ ժողովոյն՝ եթէ 'ի վտանգի էին հայրենիք, դղրդէր Գաղղիա ողջոյն և ամենայն առաջնորդք հերձուածոց ռամկին խոնջեալ յընդունայն ճարտարախօսութենէ, խնդրէին կարգ ինչ տեսչութեան հաստատուն, և մի անպատուղ առնել զզօրութիւն և զեռանդն ժողովրդեան: Ժաքոպէնք հաստատէին անդէն յիւրեանս Քաղաքայոյզ ժողով. հինգ ևեթ էին 'ի սկզբան՝ անձինք ժողովոյն. Վոժուա, Տէպէոս, Տը լա-Տրոմ, Կիյլոմ և Կալիոյ տը Լանկրէ. ընդ հուպ յաւելան 'ի նոսա և Վէսթերման, Սանդէռ, Աղէքսանդր, Քամիլ Տէմուլէն, Տանթոն և այլք: Մնային սոքա ըղձիւք գալատեան Մարսիլիացի զօրուն՝ զոր շարժեալ ածէր հասարակապետութեան սիրով վառեալ պատանին Պարպարու: Ընկալան և խոստմունս 'ի Փէթիոնէ՝ որ կրկին հաստատեալ էր յիշխանութեան իւրում, չգնել ինչ խափան խռռ-

վութեան իւրեանց. որոց խորհուրդ էր դիմել յամրոց Թագաւորին և արկանել զնա 'ի Թագաւորութենէ: Այլ զի պարտ էր նոցա կանխել աղմկել զԺողովուրդն, Կանժէնէօվ և Շապոյ որ երբեմն միանձն էր վեղարաւոր խորհեցան վասն հայրենեաց ազատութեան զոհել զանձինս, և սպանեալ զինքեանս առ ամրոցաւ Թագաւորին պատճառս խռովութեան տալ ժողովրդեան: Յո՞ր զարմանս ոչ ածեն զմեզ այսպիսի անմտութիւնք 'ի բարգաւաճեալ ազգի. սակայն օրինակ մեծ եղեն նոքա աշխարհի՝ թէ յո՞ր ողորմ կուրութիւն զառածանի մարդ լքեալ 'ի ձեռանէ Տեառն: Ժամադիր եղեն սոքա յիւրեանս, և Կանժէնէօվ 'ի կարգի եգեալ զամենայն զառանին իրս՝ ըստ ժամադրին գայր սպասէր ընկերին. իբրև շատ ակն կալեալ և ոչ տեսանէր 'ի միջի զՇապոյ, փոխեալ անդէն զմիաս գառնայր 'ի տուն իւր: Եւ այնուհետև յայլ հնարս ձեռն արկանէին, և ասպարէզ նոր ընդարձակ առաջի լինէր ժողովոց և հերձուածոց ռամկին և ապստամբեցուցիչ օրագրոց: Երևելի էին 'ի նոսա քան զամենեսին Քամիլ Տէմուլէն, Մարա, Ռոպէսպիէռ և Տանթոն: Զորոց արժան համարիմ տալ սատանօր համառօտիւ զնկարագիր:

Քամիլ Տէմուլէն երևելի էր յաշխոյժ, և յեռանդն խորհրդոց, 'ի շնական լրբութենէ, և 'ի յանդուգն համարձակութեան. պատրաստ միշտ ընդհարկանիլ ընդ ամենեսին, որք սահման և չափ խռովութեանն գնել

ջանային։ Թէպէտ քաջածանօթ էր և 'ի համարի յաչս ռամկին, այլ ոչ սիրտ էր նորա յատենաբանել, և ոչ քաջութիւն յառաջնորդութիւն իւրոցն։

Երկրորդն՝ Մարտ մարդախոշոշ անուանիւր վասն անգութ խորհրդոցն, ուր ինքն կոչէր զանձն բարեկամ ժողովրդեան. և ատելի էր ամենայն մտացի մարդկան։ Ծընեալ էր 'ի Նէօշատէլ, արուեստիւ բժիշկ, և 'ի խառվութեանդ թողեալ զամենայն՝ միեցաւ յայն, և մեծացաւ յոյժ 'ի հերձուածս խառնիճաղանճին։ Միջակ էր հասակաւ, մեծագլուխ, դէմք նշանաւոր, երեսք գեղնագոյն, աչք եռանգուն։ Հրէշ իմն անհեթեթ թուէր ամենեցուն, այլ յանկարծ սկսան անգութ և անճոռնի խորհուրդք և իմաստք ժայթքել 'ի դուրս 'ի հրէշաւոր մարմնոյ անտի։ Գոչէր նա յայտնաբարբառ, թէ "Պարտ է առնուլ զկառափունս բազմաց, ընչել զաղնուապետականս, զի հաստատեսցի ազատութիւն ժողովրդեան"։ Եւ 'ի հարցանելն թէ ո՞յք իցեն ազնուապետականք, ասէր, "Ոչ ինչ է գժուարին ճանաչել զնոսա. որոց կառք իցեն և ծառայք, և մետաքսեայ հանդերձք, և որք ելանիցեն 'ի տեսարանաց, ազնուապետականք են, սուր 'ի վերայ նոցա"։ Զամենայն զքաղաքական և զկրօնից վայելչութիւն հակառակ վարկանէր նա հաւասարութեան հասարակաց, և գարման իրին զհարուածս և զկոտորածս ցուցանէր, և կամէր իսկ իշխանապետս զոք կարգել առ այս գործ անագորոյն։ Զամե-

նեսին ընդ որս խօսէր, գիւթեալ ինն հանէր 'ի մտաց, և 'ի մոլեգնութիւն ապստամբութեան ածէր. "Տուք ինձ, ասէր, երկերիւր դահիճս և դաշոյն 'ի ձեռս, անցեալ ընդ ամենայն Գաղղիա յապստամբութիւն դղրդեցից զաշխարհն,,:

Իսկ երրորդն Ռոպէսպիէռ՝ որ փաստաբանն էր Առայ քաղաքի, և առաքեցաւ 'ի քաղաքացւոցն նուիրակ յազգային ժողովն անդ. միաբանեալ ընդ Փէթիոնի և ընդ Պիւզոյ 'ի Թիկունս կարծեաց նոցա, զառաջինն արհամարհեցաւ վասն պարտուցն ծանունց, և զի ոչ յոյժ հզօր էր 'ի պերճախօսութեան. այլ ապա հաստատուն պնդութիւն 'ի կարծիս՝ արար իւր անուն: Իբրև ցրուեցաւ ժողովն Ազգային, գիմեաց ինքն 'ի ժողով ժաքոպէնաց, և անդ հանապազորդէր զիւր վարդապետական խրոխտ ատենաբանութիւն: Եւ յետոյ ուրեմն ամբաստան ընտրեալ դաւաճանաց հայրենեացն, իբրև չէառ զայն յանձն՝ առաւել ևս մեծացաւ անուն նորա որպէս ճշմարիտ հայրենասէր այր արդարակորով, և նոր ոմն Արիստիդէս. և կուսակիցք նորա օր քան զօր բազմացեալ, իշխանապետ զնա կարգել նկրտէին: Այլ Ռոպէսպիէռայ ըստ փառասիրութեանն ոչ հանձար էր և ոչ ճարտարութիւն:

Եւ չորրորդն Տանթոն՝ առաւել յաջողակ էր յայս առաջնորդութիւն իշխանապետութեան խառնվելոյ ազգին: Սա չքաւոր ոք և բուռն յամենայն եռանդն կրից՝ էարկ զանձն 'ի քաղաքական խառնվուութիւն յու-

սով բաղդի։ Տգէտ էր, այլ հանճարեղ և խորհրդական, հսկայաձև 'ի հասակ, դէմք այրեացաւեր իբրև զԱփրիկէացւոյ, ձայն ահեղ, և անճառնի կերպարանք. շարժէր ածէր զժողովն Քորտիլիէրաց և զայլ հերձուածս ռամկին։ Ի դէմս նորա նկարէր երբեմն անասնաբարոյ մոլեգնութիւն, երբեմն ախորժ ի մեն զուարթութիւն և մարդասիրութիւն։ Ոչ զոք սատէր, և ոչ ընդ ումեք մախայր, այլ տարապայման էր յանդգնութիւն նորա, և մերթ մոլեգնութիւն, մինչև 'ի գլուխ հանել զամենայն խորհուրդս Մարաթայ։ Այնպէս զի միանգամայն բուռն էր և յեղյեղուկ, անգութ և մարդասէր։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Խորհուրդ արքունէաց 'ի քաղաքս և սպառնալիք խռովչաց կալանաւորէլ զԲաղաքն։

Զեր ևս էին տարածեալ նուիրակք Քաղաքայոյզ ժողովոյն յամենայն տեղիս, իմացեալ արքունեաց զխորհուրդ նոցա՝ խորհեցան զառաջս առնուլ չարեացն, և հաստատեցին ժողով յարուեստաւորաց և 'ի զինուորաց ազգայնոց որք 'ի ժողովատեղւոջ իւրեանց պահէին զէնս, 'ի խնդրել հարկին՝ դիմել յօգնութիւն արքունեաց։ Էր և այլ գունդ զինեալ 'ի պաշտպանութիւն արքային, և խումբ հաւատարիմ ծառայից՝ որք կոչէին Ասպետք 'ի դաշոյն կամ 'ի սլաք։ Ի նմին ժամանակի ոչ դադարէին ոմանք 'ի

խորհուրդ տալոյ Թագաւորին հրաժարել յիշխանութենէն, յամենայն կողմանց խոստանալով նմա ձեռնտուութիւնս. նոյնպէս և Ժիրոնտեանք, Թէպէտ և տոքա նախամեծար ընտրէին զսահմանաւոր Թագաւորութիւն. այլ զհրաժարելն Թագաւորն չէտուն յանձն: Առաջի արարին նմա Լաֆայէթ, Լալլի, Մալուէ, Քլէրմոն և Լիանքուր ըզխորհուրդ փոխստեան, կազմ ունելով զամենայն անցուցանել զտուն Թագաւորին առաջնորդութիւն Հելուեթիացի գնդին 'ի Ռուան, զի 'ի պահանջել հարկին անխափան լինի նմա ճանապարհ յԱնգղիա: Իբրև ուր ուրեմն զարթուցեալ Թագաւորն 'ի Թմբրութենէն՝ առնոյր յանձն, յայնժամ ընդդէմ կայր դշխոյն. "Լաւ է, ասէ, ասա կորնչել քան տալ զանձինս 'ի ձեռս Թշնամեաց մերոց. և զի ըստ խոստման իւրում ընդ հուպ հասեալ դքսին Պրունզվիքայ առ պարսպօքս՝ զերծուսցէ զմեզ,,:

Սահմանեալ էր ժողովն քաղաքայոյզ 'ի 26 յուլիսի խաղալ 'ի վերայ ամրոցին, ունելով յառաջոյ դրօշ կարմիր գրեալ 'ի վերայ "Որ հակառակ ոք ելցէ գնդի ժողովրդեան, սպանցի,,: Եւ խորհուրդ նոցա էր ձերբակալեալ կալանաւորել զԹագաւորն. այլ զի յայտնեցաւ խորհուրդ նոցա արքունեաց, և պատրաստ էին ամրականքն 'ի պահպանութիւն Թագաւորին, հանդարտեցոյց Փէթիոն զնոսա ի ժողովրդեան՝ մինչև ցգալուստ Մարսիլիացւոց: Եկին մտին տոքա 'ի Փարիզ, և էին արք արիւնարբուշք

և ահեղք, հռչակաւորք 'ի քաղաքական իւրեանց յերդ՝ Մարսիլիականն անուանեալ, զոր յափանց անսի Հռենոսի 'ի զօրացն առեալ ածէին։ Կանխեալ իսկ մտեալ էին 'ի Փարիզ գունդ մի խռովչաց ընդդէմ արքունի հրամանին. ամենեքեան սոքա խրոխտք և խիզախք՝ յաչս եդեալ զմահ՝ յայտ առնէին Օրինադիր ժողովոյն չելանել 'ի մայրաքաղաքէն մինչ չև ահաբեկ ընկճեալ զառանին թշնամիս աշխարհին. և առաջնորդ կայր խմբիս Տանթոն։

Եւ մինչդեռ այսպէս բռնակալեալ ունէին ժաքոպէնք զժողովն Օրինադիր, զմայրաքաղաքն և զողջոյն իսկ զԳաղղիա, պատգամիխատ և սպառնալից հասանէր 'ի գլուխն Պրունզվիքայ, որ յայտնապէս պաշտպան կացեալ թագաւորութեան և կրօնից Գաղղիոյ՝ ահագինս որոտայր 'ի վերայ ապստամբաց։ Ի լուր շանթաձիգ սպառնալեացն 'ի զայրոյթ և 'ի կատաղութիւն բորբոքէր ժողովուրդն։ Մի կամք ամենեցուն և մի աղաղակ 'ի պատերազմ ծայր 'ի ծայր ընդոյր զԳաղղիա, եթէ "Որ ոչն առնու զէն՝ մեղապարտ և մեանակար ազատութեան հայրենեաց դատեսցի"։

Թէպէտ աճապարեաց Լուդովիկոս ջրել զբանս կեղծեալ պատգամացն, այլ ոչ ոք հաւատաց նմա։ Յայնժամ և անօրէնն Փէթիոն՝ որ վասն յարձակմանն ընդ ապստամբսն յապարանս արքունի ամբաստանեալ, և վերատին հաստատեալ էր յիւրումն իշխանութեան, խրախուսեալ ամբոխատան եղև

զարքայէ իբրև զմատնչէ, և խնդրեաց յանուն քառասուն և ութ հերձուածոց Փարիզ քաղաքին արկանել զԹագաւորն յաթոռոյ և Ժողովել 'ի դաշնակցութիւն ազգային. այլ այս խնդիր Թողաւ 'ի յիններորդ օր օգոստոսի ամսոյն։ Յետ այսորիկ ապա պատրաստէին խառվարարք՝ զի եԹէ մինչև ցիններորդ օր օգոստոսի Ժողովն Օրինադիր ոչ վՃռեսցէ զանկումն Թագաւորին, եԹէ ոչ դարձուսցէ զիշխանութիւն 'ի ռամիկն, հնչեցուսցեն զզանգակս, հարցեն զփողս, և Ժողովուրդն միահամուռ դիմեսցէ 'ի զէն։ Իսկ ԺաքոպէՆք ստիպէին զԺողով Օրինադիր ընդդէմ ԼաֆայէԹայ. և 'ի ջյաջողելն աղաղակէին. "Չէ մեզ մնալ այլ ևս վՃռոյ Ժողովոյն, այսուհետև հարկ է ռամկին յեցեալ 'ի զէնս իւր և 'ի ԹնդանօԹս՝ օրէնս տալ Գաղղիոյ"։

ԳԼՈՒԽ Ի.

Յարձակիլ խառվարքար մարդկան յապարանս արքունի 'ի Թիւլլրի, և Բառնալ զԹագաւորական վարչութիւն 'ի Գաղղիոյ։

Ի ՎԱՂԻՒ անդր յերեկոյին խառնիՃաղանՃն Փարիզու՝ առաջնորդ իւրեանց ունելով զԱղեքսանդր, զՓուռնէր, զԱնդէռ և զՎէսԹերման, ընդ նոսա և Մարսիլիացիք և Քորտիլիէրք, դղրդեցան ելին յապըստամբութիւն. և զհասարակ գիշերաւ նշան ետ ՏանԹոն 'ի ձայն հրաղինուց, և 'ի

հնչիւն զանդակաց և թմբկաց, և 'ի գոչիւն աղաղակին, Ի զէն 'ի զէն։ Անդէն երկիւղիւ և դեղեալ մտաք գուժարեցան զօրքն ազգային, և ապատամբացն բանակ արձակ արձակ խաղային՝ ունելով զառաջեաւ գրոշ առանձին. և գային պաշարել զամրոցն Թիւյլրոի։ Գիշեր ահաւոր, գիշեր խռովութեան և արեան. արթուն կային արքունիքն, յահի և յերկիւղի ամենեքեան, ոչ ինչ աւելի ունելովընդ իւր Թագաւորն զօրս քան զինն հարիւր հելուետիացիս և երկու հազար չորեք հարիւր յազգային զօրաց, քանզի կանխեալ արձակեալ էր նորա զարքունի գունդս։

Կարգեաց Լուդովիկոս զսակաւաձեռն զօրս իւր յանցս ամրոցին, և անձամբ այց եղեալ պահպանութեան վայրացն խրախուսէր զքաջն։ Այլ և Թշնամիք ոչ ինչ Թուլացեալ՝ առաքէին նուիրակս առ գունդն ազգային զօրաց ահ արկանել 'ի նոսա, կարծեօք մատնութեան պղտորեալ զմիտս՝ իբր Թէ պատուէր էր հելուետիացւոց ընդ սուր հանել զնոսա։ Եւ այսու սադրիչ նենգութեամբ շփոթս արկեալ լքուցին զսիրտ և ըզձեռս նոցա. մինչև բազումք 'ի Թշնամիս անդր հատուածեցան, և այլք պարապոյ մնային փախստեան։ Թագաւորն պահ անձին կալեալ 'ի նեղքս յամրոցի անդ, իբրև լսէր որ ինչ անցք արտաքոյ անցանէին՝ տարակուսեալ տագնապէր։ Կէսք ընդ դշխոյին խորհրդակից նմին լինէին գիմագրաւել քաջութեամբ 'ի վտանգս անդ, և 'ի մեռանել

փառաւոր զէն 'ի ձեռին : Իսկ այլք պնդէին թէ անօգուտ է դիմակալութիւն՝ ուր ամբարականք իսկ ձեռնտու էին թշնամեաց, և զի այսու ելք իրացն 'ի կոտորած հաւատարիմ ծառայից թագաւորին և ընտանեաց նորա յանկէին, և զի անհնար էր թափել նմա զանձն և զիւրսն 'ի ձեռաց ապստամբաց, եթէ ոչ աճապարեալ անկանէր 'ի գիրկս Օրինադիր ժողովոյն : Լուդովիկոս սովորեալ 'ի բազմաց հեաւէ առաջի աչաց ունել զմահ, բնաւ իսկ չերկնչէր վասն կենաց իւրոց, խուռվէր ևեթ սիրտ նորա 'ի տեսանել զարիւնն հեղեալ վասն իւր : Վասն որոյ զի-ջեալ 'ի խորհուրդս նոցա, ապաւինեցաւ հանդերձ ընտանեօքն 'ի ժողովն Օրինադիր՝ ուր նիւթեալ էր սկիզբն դաւաճանութեան : Այլ որ փախստեամբ իւրով խափանել զարեանհեղութիւնս խորհէր, նովին իսկ գործով բաղում կոտորածի եղև պատճառ :

Քանզի իբրև այն ինչ մեկնեցաւ թագաւորն յամրոցէն, յանդգնագոյնքն 'ի պաշարողաց հուսալ սատուցեալ 'ի գունդ հելուետիացւոց, որք պահ ունէին մեծի սանդղոցն՝ ձայն ետուն գալ միանալ ընդ նոսա և աղաղակել " Կեցցէ աղգն ,, : Եւ 'ի չառնուլ նոցա յանձն, սոքա ձգեալ զձանկաձև նիզակս իւրեանց՝ քարշեցին 'ի գուրս արս հինգ 'ի նոցանէ, և առ ետեղ խողխողեցին : Ընդ այս անագորոյն գործ ժանտութեան նոցա զայրացեալ հելուետիացւոց, հուր 'ի նոսա թօթափեցին, և տապաստս յերկիր արկեալ սատակեցին զբազումս :

Անդէն ահաբեկ զարհուրեալ ապատամբաց՝ 'ի փախուստ խուճապեցին, թողեալ 'ի Ճանապարհի զհրացանս, զնիզակս և զկարմիր գդակս իւրեանց զնշանակս ազատութեան, և Հելուետիացիք առ ժամն տիրեցին բանակին։ Այլ մինչդեռ այս անցք անցանէին, ըստ դիպաց իմն արձակեալ միոյ 'ի հրազենուցն ընդդէմ ամրոցին՝ կերպարանափոխ զերան առնէր. քանզի անդէն ազգային զօրաց զոտս արձակեալ ընդ փախստեայս խուճապէին. և զի Հելուետիացիք վասն նուազութեան դադարեցին 'ի հետամտելոյ, յայնժամ պարապ գտեալ փախստէից՝ 'ի մի վայր եկին ժողովեցան, և ընդ կրունկն դարձեալ ընդ նեղ անցս Լուվրայ մտին 'ի նեբքս յամրոցն Թիւյլերի, և հեղեղեցին լցին զամենայն իսկ զընդարձակութիւն ապարանիցն։ Պաշարեալ 'ի նոցանէ Հելուետիացւոց և ընկճեալ 'ի բազմութենէն՝ գոգցես ամենեքին տասպատ անկան 'ի տեղւոջն. խողխողեցան և ոչք միանգամ գտան անդ յամրոցին 'ի պաշտօնէից արքունի 'ի մեծամեծաց մինչև ցփոքունս մինչև ցսպասաւոր խոհակերոցին, բայց միայն 'ի կանայս խնայեցին անագորոյնքն։ Սակաւուց ոմանց եղև 'ի քաջացն փրծանեալ զանձինս 'ի մահուանէ՝ ՃեղքեալՃեղքեալ զնաւնիՃաղանՃն, և Ճանապարհ արարեալ իւրեանց ընդ մէջ հրազենուց, նիզակաց և սլաքաց. և ոմանք ընդ գողուղի անցս ղերծան։

Մինչդեռ 'ի տարակուսի էին իրացն եղք, դաւաՃանքն բռնացեալք 'ի ժողովի՝ դեռ

ևս ակնածէին յարքայէ և մեծարանս դնէին ընտանեաց Թագաւորին. այլ իբրև անշուշտ տեսին զյաղթութիւնն 'ի ձեռս, Թողեալ զամենայն ամօթ և զպատկառանս՝ եդին առաջի հիգացեալ արքայի զվճիռ անկման նորա 'ի Թագաւորութենէն, զոր և ոչ յապաղեցին հրատարակել անդէն։

Այսպէս անկաւ 'ի Թագաւորութենէն Լուդովիկոս ԺԶ 'ի տասներորդ աւուր օգոստոսի և յետ երից աւուրց փակեցաւ յաշտարակ ապարանիցն որ Տաճարն կոչիւր (1), ընդ դշխոյի ամուսնոյ իւրում, և Եղիսաբեթի քեռ իւրոյ, հանդերձ երկոքումբք զաւակօքն, եօթնամեայ արքայորդւովն և երեքտասանամեայ դստերբ (1792)։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Անիշխանութիւն 'ի Գաղղիա, և արշաւանք օտարոց 'ի վերայ խառնվլոց աշխարհին։

Խռովութիւնս այս մեծ եբարձ զտեսչութիւն և զվարչութիւն Գաղղիոյ, ոչ օրէնք քաղաքական, և ոչ ժողով օրինաւոր. աշխարհն մատնեալ 'ի ձեռս գազանաբարոյ և արիւնահեղ ամբոխին, արտաքուստ արշա-

(1) Temple. Տաճար էր բնակութիւն Տաճարական սուղեպոց. յետ մահուան Լուդովիկոսի ԺԶ թագաւորաց 'ի բանտ, և ապա փակեալ յայլ պէսս կարգեցաւ։

ւանք օտարաց և սպառնալիք վրէժխնդրութեան վտարանդեաց, 'ի նեղբուստ աղմուկք և կոտորածք զաւուրս քառասուն մինչև ցգումարել ազգային դաշնակցութեան։

Առաջին գործ եղև ռամկին պատգամաւորս առաքել առ զօրս իւր և 'ի դաւառս աշխարհին, տալ ընդունել զնոր կարգ տեսչութեան և փոխել զքաղաքական և զզինուորական իշխանութիւնս։ Այլ ըստ կամի կարգեաց վարիչս աշխարհին. 'ի Ծովակալ՝ զՄոնժ, 'ի վերայ արտաքին գործոց՝ զԼըպրէօն, 'ի վերայ դատաստանի զՏանթոն. նոյնպէս և պաշտօնեայս տէրութեան զՌոլան, զՔլաւիէր, զՍէրվան զմերժեալս 'ի թագաւորէն վերսին հաստատեաց։

Եւ զկնի փակելոյ զթագաւորն յաշտարակ տաճարին՝ հրաման եհան կործանել զանդրիս և զիշատակարանս թագաւորաց, զյուշարարս հարստահարեալ ստրկութեան ժողովրդեան յերբեմն ժամանակի։ Եւ եռապետութիւն իմն կազմեր 'ի Գաղղիա 'ի ձեռն երից բռնաւորացն Տանթոնի, Ռոպէսպիէռայ և Մարաթայ, որք ըստ կամի շարժէին ածէին զժողովուրդն, որպէս զի նկուն լեալ այնուհետև ժողովն Օրինադիր՝ ոչ ևս կարէր խլրտել 'ի հրամանատուութենէ։

Կարգեցին խռովարարք և ժողով ինչ 'ի զգուշութիւն աներկեանութեան հասարակաց, և իշխանք ժողովոյն ամենեքեան արք արեանարբուք և վայրենագոյնք, որոց նախ-իշխան կայր Մարաթ՝ ընուչ Ջանային ըզբանաս առաքինի որերով. դարձեալ և այլ

սատեան Ժողովոյ 'ի քննել զընդդիմակացս խառվուԹեանն որ 'ի տան օգոստոսի :

Յետ կործանելոյ ԹագաւորուԹեան և բանտարգել լինելոյ Թագաւորին իբրև մեկնէին 'ի Գաղղիոյ դեսպանք սաստ պետուԹեանց, և Եւրոպա գրեԹէ առ հաստատակ խլրտէր 'ի պատրաստուԹիւն պատերազմի, յառաջամարտիկ լինէր Թագաւորն Բրուսացց Փրեդերիկոս Գուլիէլմոս, և խաղայր վեշտասան բիւրուք զօրաց ընդ Բրուս ընդ Աւստրիացի և ընդ Բիէմոնդեցի, միջամուխ լինել 'ի գաւառն Կամպանիոյ : Ի բազմավտանգ տարակուսին ԼաֆայէԹ սպարապետ զօրաց Գաղղիոյ՝ սիրողն և վրէժխնդիր սահմանադրեալ ԹագաւորուԹեան՝ ընդդէմ կացեալ ապստամբուԹեան ռամկին և անիշխանուԹեան ժամանակին, երդմնի արար զզօրս իւր 'ի հաստատուԹիւն նորոյ սահմանադրուԹեանն, և խորհէր խաղալ անդէն 'ի Փարիզ· այլ յանկարծ լքեալ յամենեցունց, հանդերձ բարեկամաքն փախչեաց առ Թշնամին անկաւ, և զամս հինգ իբրև գերեալ 'ի պատերազմի՝ 'ի բանտի տառապանաց անցոյց զկեանս. որով երկիւղ վրէժխնդրուԹեան վտարանդեաց հաւաստեցաւ 'ի միտս խառվարար մարդկան :

Յայնժամ Տիւմուրիէ ընկալեալ զիշխանուԹիւն ռամկապետուԹեան, յաջորդեաց զԼաֆայէԹ 'ի վարչուԹի հիւսիսային բանակին, և Քէլլէրման արևմտեան բանակին : Տիւմուրիէ խորհէր արշաւել յաշխարհն Բելգիացւոց, և անդր փոխել զար-

շաւանս Թշնամւոյն։ Այլ նոցա առեալ զամուր ամուր քաղաքս, գային պաշարել և զքաղաքն Վէրտէօն, քանզի անտի և անդր մինչև ցՓարիզ չկայր այլ քաղաք ամուր խափան արշաւանացն։

Ընդ գոյժ արշաւանաց և յառաջխաղացութեան Թշնամեաց զայրագնեալ կատաղեցան խռովարարքն, մանաւանդ իբրև տեսին զապստամբութիւն Լաֆայէթայ և զշըփոթ Վանդէացւոց, զմատնութիւն և զառումն ամուր ամուր քաղաքաց, զլքումն անհրահանգ և անկազմ զօրացն և զբարձրադլուխ խրոխտալ կողմնակցաց Թագաւորին։ Եւ անդէն վՃիռ մահու հատանէին որոց յանդգնեացին անձնատուր 'ի Թշնամին լինել, և հրաման տային ձուլել զզանգակս 'ի Թնդանօթս, և զամենայն երկաթ 'ի սուր և 'ի նիզակ, և զարծաթի և ոսկեղէն սպասս եկեղեցեաց հրամայէին Թոշակ զօրականին. և խիլ 'ի տունս արկեալ՝ զորոց էր նոցա կասկած մատնութեան և կուսակցութեան Թագաւորի՝ ածեալ ընուին 'ի բանտս, մանաւանդ զբիւրաւորս յազնուականաց և յանէրդումն քահանայից։ Իբրև ընուին բանտք և չէր այլ տեղի 'ի պահ զդուշութեան եղկելեացն, խորհուրդ կոտորածի 'ի բերան ապստամբաց ընթանայր։

Իսկ Ժողովուրդն յուզեալ դուլ առնէր ամենայն քաղաքական վաստակոց, և ոչ ևս երևէր անդանօր հասարակաց մարդկան կեանք։ Տեսարան ահաւոր առաջի լինէր 'ի Փարիզ. խուռն դիմէին երիտասարդք 'ի զի-

նուորութիւն, և արուեստաւորք խումբ առ խումբ գային 'ի բանակս զօրաց 'ի վաստակս, և կանայք գումարեալ յեկեղեցիս զՀանդերձանս պատերազմի պատրաստէին. յամենայն հրապարակս ատեանք զօրաժողովոյ, պատնէշք ամենայն ուրեք ամբարձեալ, և հրազէնք տողեալ. այր գաղղիացի վառեալ 'ի զէն, և խումբք խառվարար մարդկան բարձրագլուխ ճախր առեալ, և յամենայն անկիւնս հրապարակաց գրուածք սպառնալեաց:

Յաւուր կիւրակէի, որ օր երկրորդ էր սեպտեմբերի ամսոյ, ձայն հնչեաց 'ի քաղաքին և գոյժ դառնուէ՝ թէ անձնատուր եղև քաղաքն Վերտէօն, և խառվեալ ծփէր փարիզ և սպառնալիք մահու ընդդէմ դաւաճանացն լսելի լինէին 'ի բերանս ամենեցուն: Գոչեաց Տանթոն. "Ամապարեսցեն կէսք ժողովրդեան 'ի սահմանագլուխս, այլք 'ի պեղել խրամն զքաղաքաւ, և ոմանք պընդեալք զմէջս, վառեալք 'ի զէն՝ կացցեն 'ի պահ քաղաքին. հնչեսցին զանգակք յահարկուութիւն թշնամեաց. և 'ի յաղթութիւն մեզ չիք այլ կարևոր քան զյանդգնութիւն. դարձեալ կրկին յանդգնութի, միշտ յանդգնութի և փրկեսցի Գաղղիա,,: Եւ յամենայն որմունս մուծուցեալ տեսանէր գիր խրախուսանաց. "Ի զէն քաղաքացիք, 'ի զէն, թշնամիք առ դուրս հասեալ կան,,:

Առաջնորդք ռամկին հրաման արարին զի փակեսցին պատնէշքն և դիմեսցեն քաղաքացիքն ամենայն 'ի դաշտն Արիսեան, խաղալ

անոր ընդդէմ թշնամեաց. ձերբակալ լիցին՝ զորոց գաւաճանութեան առցէ ոք կասկած: Եւ անդէն սկսան 'ի նշան մօտալուտ վտանգին արձակել զթնդանօթս, հարկանել զթմբուկս, և հնչեցուցանել զշանգակս. և քաղաքն ողջոյն յուզէր որպէս զծով մի մեծ:

ԳԼՈՒԽ ԻԲ.

Կոչորած անմէջ Բաղմուլէան փաղաքացոց և փահանայից 'ի մարդաթողութեան խուժանէն:

Եւ յանկարծակի ահա շչուկ հարին ժաքոպէնք խառնեալ ընդ ամբոխին՝ եթէ բազմավտանգ թշնամիք մեր ոչ 'ի Կամպանիա են, այլ ասա 'ի մայրաքաղաքիս կուսակիցք թագաւորին՝ որք դիմեալ նախ յազատութիւն բանտարկելոց, 'ի մեզ ապա զզէնս դարձուսցեն. թողցո՞ւք ապա զկանայս մեր և զորդիս 'ի ձեռս անօրինացն. կանխել արժան է մինչ չև մխեալ մեր 'ի պատերազմ Բրուսայ՝ ընկճել զընտանի թշնամիս՝ "Հապա 'ի բանտս, դիմեսցուք 'ի բանտս, խողխողեսցուք զկապեալսն,,: Եւ այս գոչիւն ահաւոր "Դիմեսցուք 'ի բանտս,,, ընթացեալ բերան 'ի բերանոյ, հնչէր 'ի փողոցս, 'ի հրապարակս, 'ի խումբս մարդկան և 'ի ժողովն Օրինադիր: Եւ զինեալ գաղանութեամբ ամբոխն վայրագ սկիզբն արար

կոտորածին որ տեւեաց զաւուրս չորս, կոտորեալ ուԹ հազար Գաղղիացիս՝ որոց յանցանքն էին չխոտորել զհետ անօրէնուԹեան քաղաքացեաց իւրեանց։

Եւ անդ էր տեսանել տեսարան ողորմ և քստմնելի, մարդախոշոշ գազանացն ցուցս 'ի բերան առեալ կաքաւէին զեղկելեօքն՝ որք զահի հարեալ դողային. իսկ խուժքն փեռեկեալ զփորոտիս ողորմելեացն, ծծէին զարիւն նոցա. և խորովեալ զմիսս 'ի հրապարակի, զօրէն մարդակերաց յագենային նոքօք։

Պատմեն և զայս զի Պիսլոյ-Վարէն յառաջնորդաց անտի ժողովրդեան ընԹանալով 'ի վերայ դիականց կոտորելոց՝ աղաղակէր առ դահիճսն. "Հապա առաքինի քաղաքացիք, զօրացին ձեռք ձեր 'ի կոտրած, զի ձեօք փրկեսցի աշխարհս". և բաշխէր նոցա գինի, խոստացեալ և դրամս 'ի վարձ վաստակոցն։

Դիմեցին և 'ի կոտորած քահանայից՝ պաշարեալ զնոսա յեկեղեցւոջ ուրեք. գիշերացաւ օրն և արիւնարբու գազանքն ոչ խոնջեցան 'ի կոտորածէն։ Ընծէին և զմեծարոյ ծերունին Սոմպրէօլ 'ի մահ՝ զտեսուչն հիւանդանոցաց. և իմացեալ դատեր նորա՝ էարկ զանձն 'ի մէջ նիզակախուռն ամբոխին, պինդ կալաւ զհայրն 'ի գիրկս իւր, և մեծակական արտասուօք աղերսէր զդահիճս՝ ողորմել ծերունւոյն։ Նոքա 'ի գուԹ շարժեալ ընդ ազնուական առաքինուԹիւն աղջկանն, մատուցին նմա բաժակս յարենէ

սպանէլոյն. ո՞վ գուլթ՝ անագորոյն. “Արք, ասէն, զարիւն ազնուապետականաց”. և նորա քամեալ զբաժակն, զերծոյց զհայրն։ Ի՝ջանէին արտասուք յաչաց մոլեգնեալ խուժանին, սակայն անյագ՝ի խնդիր էին սպանութեանց։

Բանտարկեալ էր և տիկինն Լամպայլ, երևելի յոյժ յարքունիս գեղովն և մտերիմ սիրով ընդ թագուհւոյն։ Հարցին ցնա դահիճքն, “Ո՞ ես դու”. պատասխանի ետ նա արիաբար. “Լուիզա Սավոյացի, իշխանուհին Լամպայլ”։ — “Զի՞նչ դարանք էին քո յարքունիս, ճանաչեցե՞ս զդաւաճանս ազգին յամրոցի”։ — “Ոչ զոք”։ — “Երդուի՞ր սիրել զազատութիւն և զհաւասարութիւն, երդուի՞ր ատել զարքայն, զդըշխոյն և զթագաւորութիւն”. — “Վասն առաջնոյն երդուայց, ասէ նա, սակայն վասն վերջնոյն անմարթ է ինձ զայն առնել”։ Հարին զնա միանգամ և երկիցս՝ի գլուխն, և յօշ յօշ պատառեցին զմարմինն. և զգլուխ և զսիրտ, և զայլ մասունս անդամոցն հարեալ՝ի նիզակ՝ շուրջ ածին ընդ քաղաքն, և տարան աղաղակաւ առաջի Տաճարին՝ ուր փակեալ կայր հիգացեալ թագաւորն։ Ընդ լուր աղէտալի մահու սիրելւոյն թալկացաւ անկաւ գշխոյն։ Եւ տեսէր ձգէր կոտորածն զերիս և զչորս աւուրս մինչև դատարկացան բանտք։

Անդէն գրեցան և թուղթք ընդ ամենայն դաւառս Գաղղիոյ, ցուցեալ արդարացի և գովելի զանողորմ հարուածն և պատճառք

փրկութեան հայրենեաց, 'ի նոյն և զամենեսին յորդորելով։ Եւ սորապրեցաւ նամակս յանուն գլխաւորաց 'ի ժողովոյ ատենի աներկեանութեան հայրենեաց։

Տարածեցաւ այս կոտորած և 'ի Մոյ և 'ի Հռէմն և 'ի Լուգդոն և 'ի Վէրսայլ, այլ դեռ ևս ոչ ընդ ամենայն Գաղղիա, քանզի տակաւին պակաւէր ժաքոպէնաց դահճաց բազմութիւն։ Եւ յետ այնորիկ ազատաբար յամենայն եղերունս և ապստամբութիւնս ձեռն արկեալ, կողոպտեցին զինչս ազնուականաց և քահանայից վտարանդեաց ևս և սպանելոց. յափշտակեցին զգանձս հասարակաց, աւար հարին զարքունիս և զեկեղեցիս։ Ձէր ոք այնուհետև տէր կենաց իւրոց և ընչից, քանզի զորս և կամէր խառնաղանձն՝ ածեալ արկանէր 'ի բանտ, և ընդ փողոցս յարձակեալ 'ի կանայս՝ մերկացուցանէր զնոսա 'ի զարդուցն, 'ի նուէր հայրենեաց ասելով։ Ոչ ևս հանդուրժեալ 'ի ժիրոնտեանց անտի Ռոլան և Վէրնիոյ, բողոք բարձին ընդդէմ անողորմ կոտորածին և բռնակալութեան ռամկին. խրախուսեցին և զընկճեալ ժողովն Օրինադիր՝ խափանել զչարիս, այլ այսու առաւել իսկ յաճախեաց անիշխանութեանն աղմուկ և ատելութիւն ընդդէմ ժողովոյն և բռնակալութիւն ռամկին մինչև ցԴաշնակցութիւն ազգային։ Այլ մեք դարձցուք անդրէն 'ի պատերազմ դաշնակցացն և Բրուսացոյ։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Անպտեղ Տիմոթիէայ զգաղղիա յարշաւանաց ինչնամոյն։

Իբրեւ առաւ Վէրոէօն, և քաղաքապետ նորա առ զայրոյթ սրտին անձնասպան եղև, դուքսն Պրունզվիքայ իւրով բնաւորեալ դանդաղութեամբ փոխանակ յառաջ վարելոյ զյաջող արշաւանն գեգերէր անդէն զաւուրս ութ յափունս Մէօզ գետոյ. և զարատ տայր Տիմոթիէայ, թողեալ զխորհուրդ աշխարհակալութեան Բեղգիոյ՝ ա-ճապարել'ի պահ հայրենի աշխարհին։

Եկն եդիտ Տիմոթիէ 'ի Սէտան զբանակն Լաֆայէթայ 'ի շփոթս և յողբս 'ի վերայ զօրավարին իւրեանց, ատելով զյաջորդ նորա։ Ի խորհուրդ գումարեաց անդէն զսպայս զօրացն. և ոչ հաւանեալ բանից նոցա, հասատատեաց խաղալ յԱրկոն 'ի տեղի անտառախիտ, աղմուտ և լի գետովք՝ ուր հնգետակ կիրճք էին միայն յանցս, համարեալ զտեղին զայն իբրև Թերմոպիլէ Գաղղիոյ։ Եւ զի թշնամիք հանդէպ կրճիցն կային, Տիմոթիէ արիացեալ համարձակեցաւ էանց յառաջոյ նոցա, և կալաւ զանցսն որ 'ի Հռէմս և 'ի Շալոն առնէին ճանապարհ։ Ծանեան Բլուսք զվրիպակ յապաղումն իւրեանց և բռնութեամբ զինուց սիրեալ կրճին որ 'ի Շալոն հայէր, անցին ընդ այն. և փոխանակ խաղալոյ 'ի վերայ քա-

ղաքին, կազմեցան 'ի պատերազմ ընդդէմ Գաղղիացւոց, յուսալով որպէս զառաջինն զինաթափ զնոսա առնել. և յերիս բաժանեալ գունդս խաղացին 'ի վերայ նոցա։ Քէլլէրման զօրավար Գաղղիացւոց՝ կարգեալ զիւրսն, շեշտակի ունելով զալաքս հրազինուցն յառաջոյ, նախամարտիկ յարձակեցաւ 'ի պատերազմ 'ի գոչիւն աղաղակի, "Կեցցէ ազգն"։ և գունդն ամենայն խուժեցին զկնի նորա, զնոյն կրկնեալ աղաղակ. մինչև ահաբեկեալ Բրուսացք, զտեղն առին։ Ապատամբութիւնն որ ցայն վայր ըստ բանից վտարանդեաց Գաղղիացւոց իբրև զնուժան իմն հնակարկատ անարդ մարդկան թուէր և անիշխան խառնակութիւն, տեսաւ անդ յաշխոյժ և 'ի կորով երիտասարդաց վառելոց քաջութեամբ, ոչ ևս աղմուկ ծաղրական և թեթև 'ի նուաճել, այլ ահագին իմն և բուռն ազգութիւն կրից՝ անմարթ զօրութեան համօրէն Եւրոպայ 'ի շինջուցանել։

Ընդ այս յաջողութիւն զեղան խնդութեամբ Գաղղիացիք. և մեծապէս քաջալերս զգեցեալ՝ խրախոյս միմեանց տային, և պաշարապինդ լցեալք ծաղր առնէին զանհարթութեամբ օդոյն։ Իսկ Բրուսացն զօրք լի տրտմութեամբ 'ի տղմուտս անդ պակասեալ 'ի համբարոց, տեսանէին տխուր ըզդիակունս անկեալսն արանց քսան հազարաց յախտէ մահու ճարակեալսց 'ի նոսա՝ և 'ի սրոյ թշնամւոյն։ Ապա շարժեցաւ դուքսն Պրունզվիքայ ելանել 'ի Գաղղիոյ, քանզի և

թագաւորն Բրուսայ 'ի պատճառս խռովութեան Լեհաց դարձ առնէր յաշխարհ իւր։ Տիւմուրիէ փոխանակ հետամուտ լինելոյ թշնամւոյն 'ի սպառսպուռ ջախջախանս նորա, 'ի Քէլլէրման թողեալ զհոգ իրացն՝ դարձ առնէր յաշխարհակալութիւնս իւր 'ի Բելգիա։ Համարեցան ոմանք 'ի խռովարարացն Գաղղիոյ եթէ կաշառակուրծ լեալ 'ի թշնամեաց մեկնեցաւնա, և այլք թէ աղաչանօք Լուդովիկեայ արքայի՝ զի մի և 'ի մահ իւր գրգռեսցին այնու ոխերիմք թագաւորութեանն։ Այլ և ոչ մի յայսցանէ հաւատի թուին։

Անցին թշնամիք ընդ Հռենոս, թողեալ 'ի Գաղղիացիս զՎերտէօն և զԼոնկուի։ Եւ զօրավարն Գաղղիացի Քիւսդին յառաջ խաղացեալ առնոյր անարգել զՎորմս, զԸսփիր, զՄոգունտիա և զՖրանքֆորդ և խաղայր անտի 'ի Գերմանիա՝ սերմանելանդ աղմուկս խռովութեան։ Իսկ Մոնթէսքիէօ քսան հազար զօրօք անցեալ ընդ կիրճս Ալպեանց՝ տիրէր Սաւոյեայ, որոյ բնակիչք համաշուրթն ընդ Գաղղիացիս և համաբարոյ, խնդութեամբ ընդունէին զնա։ Եւ զօրավարն Անսելմ փոքու գնդաւ և նաւուք ինչ մտեալ ունէր զգաւառ կոմսութեան Նիցցայ. և անտի խաղացեալ 'ի բաց հանէր 'ի Գինեւրայ զպահակապանս Պեռնացիս։

Այսպէս ցուցեալ զոյժ զօրութեան իւրոյ ռամկապետութիւնն Գաղղիոյ, ժողովէր ապա 'ի Դաշնակցութիւն ազգային։

ԳԱՀՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

Գոնարուն Դաշնակից ժողովոյ, և գծագրութիւնք 'ի նմա :

ԿԱՐԳԵԱԼ ուղղեցաւ ժողովն Ազգային դաշնակցութեան յեօթնհարիւր և 'ի վաթսուն արանց, յորում ժիրոնտեանք զաջակողմն ունէին, զօրացեալ յոյժ թուով և հանճարով և արդարակորով գնացիւք. 'ի նոցա ձեռս էին իշխանութիւնք պետութեան, և հոգք գաւառաց, և թուղթք լրոց. և ակնկալութիւն մեծ էր նոցա յիւրեանց միտս հաւանեցուցանելոյ զողջոյն իսկ զժողովն, հաստատելով օրինաւք հասարակապետութիւն իմն բարեկարգ : Երևելիք 'ի ոսսա էին Վէրնիոյ Ճարտարախօս, Ժանսոնէ, Ռոլան, Պրիսոյ, Քոնտորսէ, Փէթիոն, Պիւզոյ, Պարպարու, Լուվէ, Լանժիւինէ, Կատէ, Վալազէ, Իգնար, և այլք :

Լեռնականացն խումբ կալեալ զձախակողմն ժողովոյն դաշնակցութեան, առին զիւրեանց յորջորջումն 'ի բարձր ատաձանացն՝ յորս նստէին. սոքա ըստ մեծի մա-

սին 'ի Ժաքոպէնաց անտի էին և 'ի Քորտիլիէրացն գասուց, արք ոգէոք, յամառք և յանդգունք, վառեալք զհետ ապստամբութեան, արիւնարբուք և աւազակաբարոյք, թշնամիք ամենայն կարգաց տէրութեան. խրոխտային վստահացեալք 'ի բազմութիւն իւրեանց, բառնալ զամենայն ազգ վարչութեան 'ի Գաղղիոյ. և օրէնս տալ հաւասարութեան, կողոպտելով զինչս մեծատանց: Եւ 'ի սոսա գլխաւորք էին Ռոպէսպիէռ և եղբայր նորա, Տանթոն, Մարա, Քուրթոն, Սէն-Ժիւստ, Պառիէր, Քոլոյ-Տէրպուա, Թալիէն, Պիյլոյ-Վարէն, Լըժանտր, Փանի, Սէրժան, Քամիլ-Տէմուլէն, Քամպոն, Քառնոյ, Ֆուշէ, Ամար, Շապոյ երբեմն վեղարաւորն. ընդ սոսա էր և վատշուէր իշխանն դուքս Աւրեղիոնի, Էգալիթէ հաւասարութիւն կոչեցեալ:

Զմիջին երկոցունց կողմանցն ունէին Դաշտականքն անուանեալ արք արդարամիտք և զգօնք, այլ հանգարտաբարոյք յոյժ և երկչոտք, մերթ 'ի Ժիրոնտեանցն և մերթ 'ի Լեռնականացն լինելով կողմն առ 'ի կշիռ զօրութեանց: Յորս երևելիքն էին մեծանուն գիտնականն Մոնժ, Շէնիէ քերթող անուանի, Սիէյէս կրէկուար, Տիւլօր, Տուլսէ, Ֆէրոյ, Պառա և այլք:

Ի հոլոնեալ զառաջինն դաշնակցութեան ժողովոյն, հասարակաց հաւանութեամբ եալ վճիռ բնաջինջ բառնալոյ 'ի Գաղղիոյ զիշխանութիւն թագաւորական, և հաստատելոյ հասարակապետութիւն: Եւ զի

օրէնք պահեալք ցայնժամ պահեսցին և յայնմ հետէ. վերատին ընտրեսցին ատենակալք, պաշտօնատեարք և հոգաբարձուք գաւառաց. վասրանդիքն Գաղղիոյ տարագիր լիցին 'ի հայրենեաց յաքսոր մշանջենաւոր, և որ ոք դարձցի անդրէն, կամ արտաքոյ գերի անկցի զէն 'ի ձեռին, զպատուհաս մահու ընկալցի։

Ի զանազան տեսանս բաժանեցաւ դաշնակցութիւնն, 'ի հոգս պատերազմի, յօրէնադրութեան հասարակաց, 'ի վերայ գանձուց, 'ի խնամս օգտի պետութեան, և այլն. և գոգցես ամենեքեան սոքա 'ի ժիրոնտեանց անտի էին, որք առ 'ի խափանել զտարաձու�ն իշխանութեն ընդ Գաղղիա, առանց նախահոգ զգուշութեան յանդուգն վստահացեալք յարդարութեան գործոցն իւրեանց՝ սկսան հակառակ կքրել ժաքոպէնաց իբր խռովարար բռնակալաց, և զՏանթոն և զՌոպէսպիէռ և զՄարա եռապետս կոչէին. և թէ ընդէր բռնանայ Փարիզ 'ի վերայ գաւառաց Գաղղիոյ. չիցէ՞ն և նոցա նոյն իրաւունք ազատութեան։ Սակայն համարձակագոյն յարեաւ ընդդէմ սոցա Տանթոն, ամբաստանեալ զնոսա Ճեղքիչս պետութեն 'ի բազում հասարակապետութիւնս, և կործանիչս իշխանութեան մայրաքաղաքին։ Ուր Ռոպէսպիէռ բնիկ ծանրութեամբն չխօսէր ինչ ընդդէմ ամբաստանութեանցն, այլ զառաքինութիւնս իւր միայն և զգործս ծառայութեան օգտի հասարակաց յուշ ածէր նոցա։ Եկն երևեցաւ և Մարա յա-

տեան դատաստանի, այլ 'ի տես դառնամաղձ և արիւնարբուշտ առնն՝ ատեանն ողջոյն զաղաղակ բարձեալ նոցկայր 'ի նմանէ։ Նա յանդուգն խիզախեաց ընդդէմ աղաղակի նոցա, և փոխանակ նախատանացն ժպիտս արհամարհութեան արձակեալ, համարձակագոյնս զարիւնարբու խորհուրդս՝ զորս երկնէրն 'ի մոխ՝ յայտ առնէր, մինչև ժողովոյն խելացնորեալ զնա համարել։

Զկնի երկար ամբաստանութեանց և ջատագովութեանց՝ վճռեաց ատեան ժողովոյն, թէ Մի է հասարակապետութիւն Գաղղիոյ և անբաժանելի։ Յետ այսորիկ փոխանակ ամբաստանութեանցն ժիրոնտեանց մեծանայր և ևս անուն և փառք Ռոպէսպիէռայ, և 'ի տեղի Փէթիոնի կարգեալ լինէր քաղաքապետ Փարիզու Քամպոն այր վատանշան, և 'ի ձեռանէ նորա Շոմէդ և Հէպէր արք անզգամք։ Եւ Մարա դարձեալ ոչ դադարէր 'ի խնդրելոյ քսան և եօթն բիւր գլուխս մարդկան 'ի խաղաղութիւն հասարակաց։

ԳԼՈՒԽ Բ.

Դորյ Տիմուրիէայ 'ի Փարիզս արդարացուցանելոյ զանձն, և յաճախելութեանց ընդ Ժիրոնդիանս և ընդ Լիոնական։

Զանցնու ժամանակաւ կերպարանափոխ լեալ էր զօրութիւն զինուց Գաղղիոյ. Կամ-

պանիա ազատեալ յարշաւանաց թշնամւոյն, և խաղաղին անտի զորք յօգնութիւն Լիլլայ 'ի Բելգիա, զոր պաշարեալ թշնամեաց հրոյ տային ճարակ, այլ ընդ քաջութի պնդութեան քաղաքացւոց և ընդ լուր գալըստեան Գաղղիացւոց ձեռնթափ եղեն 'ի գործոյն: Քէլլէրման թողեալ 'ի Տիւմուրիեայ ընդդէմ Բրուսայց, ձմերէր 'ի Լոռենա. Քիւսդին յետ փոքու երկրակալութեանն 'ի Բալտին, ձգէր զահ իւր և զերկիւղ 'ի վերայ Գերմանիոյ. Պիրոն զօրավար՝ ունէր զօրքն զափունս Հռենոսի. Մոնթէսքիէօ տիրեալ Սաւոյեայ՝ զհետ լինէր քննել թէ յո՞ր միտս կայցեն Հելուետիացիք՝ 'ի խաղաղութիւն եթէ 'ի մարտ: Իսկ Տիւմուրիէ աճապարէր գալ 'ի Փարիզ՝ խօսել վասն առաջիկայ երկրակալութեան Բելգիացւոց աշխարհին ընդ պաշտօնեայս տէրութեան. այլ թշնամիք նորա համբաւ հանին թէ վասն ինոտի փառասիրութեան և գովութեան ժողովրդեան գայր նա:

Եկն եմուտ զօրավարն փառաւք 'ի մայրաքաղաքն, և պատուեցաւ մեծապէս 'ի դաշնակից ժողովոյն. այլ ինքն ոչ 'ի ժաքոպէնս հակամիտէր, և ոչ 'ի ժիրոնատեանս: Անդ 'ի ժողովն խօսեցաւ Քոլլոյ Տէրպուա. "Գիտեա, ասէ, Տիւմուրիէ, զի 'ի քաղաքացեաց քոց կաս զօրավար, և ոչ 'ի թագաւորէն. և յուշ լիցին քեզ թէ միտոկղեայ դէպքն զի յետ ազատելոյ զՅունաստան 'ի Սաղամինա, ամբաստանեալ 'ի թշնամեաց իւրոց՝ բռնադատեցաւ անկանիլ առ բռնաւորն: Են

և քեզ թշնամիք, ամբաստանեսցի՛ս, յիշեա՛ զթեմիստոկղ,,: Իսկ Մարա որ հանապազ զինեալ կայր երդիծանօք ընդդէմ երևելի մարդկան, յորս էին Միրապոյ, Պայլի, Լաֆայէթ, Փէթիոն, այնպէս զբաղեալ յայսոսիկ՝ մինչև ըստ իւրոյմն իսկ բանի՝ 'ի քան և չորս ժամս աւուրն զերկուս 'ի քուն անցուցանէր, զմին 'ի սեղան և յպառնին գործս, և զայլս 'ի լսել բողոքոյ ժողովրդեան 'ի գրել և յընթեռնուլ զթուղթս. և թէ 'ի չորից ամաց հետէ և ոչ քառորդ մի ժամու պարապ տուեալ էր անձին 'ի զբօսանս. արդ սա և աստանօր ընդդէմ զինէր Տիւմուրիեայ, համարելով զնա ազնուապետական զեղծ: Մանաւանդ իբրև լուաւ զխստութիւն նորա ընդդէմ երկուց գնդից՝ որք զհատուածեալ գաղթականս սպանեալ էին, չոգաւ վաղվաղակի առ ժաքոպէնս խնդրել նուիրակս երկուս առ 'ի պահանջել 'ի Տիւմուրիեայ զհամար գործոցն: Եւ քանզի զօրավարն 'ի տուն տիկնոջ ուրուոյմն երևելւոյ կայր 'ի զնին հանդիսի խաղարկութեան, չոգաւ անդր. և անցեալ ընդ գունդս ազգային զօրաց՝ որ 'ի պահ զգուշութեան դրանցն կային՝ ցասմամբ էլ 'ի վեր: Ընդ շշուկ անուան Մարաթայ խուսափեցին ամենեքեան. հուպ մատեաւ նա առ Տիւմուրիէ, և ասիպաւ համարս 'ի նմանէ պահանջէր վասն երկուց գնդիցն: Հայեցաւ 'ի նա զօրավարն, և արհամարհանօք ինն ի հարց, ''Է՛հ, գո՞ւ իցես Մարա,,: Եւ դարձեալ ակնկառոյց լեալ 'ի նա յոտից

մինչև ցգլուխ, դարձոյց նմա թիկունս, ա-
ռանց ինչ ասելոյ: Խօսեցաւ քաղցրութիւն
ընդ Յակոբոսէնան, և խաղաղութեամբ հա-
ճեալ արձակեաց զնոսա: Եւ Մարաթայ
ցասուցեալ, կշտամբեաց զԱնթէռ զզօրա-
գլուխ ազգային զօրուն. և ամենեցուն ըս-
պառնացեալ, եկ անտի և գնաց 'ի գրեկըզ-
տեսարանս զայս յօրագրին:

Յետ մեկնելոյ Տիւմուրիեայ 'ի մայրաքա-
ղաքէն՝ կրկին բորբոքեցաւ խազմ ամբաստա-
նութեանց 'ի մէջ Յիրոնտեանց և Յակո-
պէնաց. Լուվէ 'ի Յիրոնտեանց անտի հա-
մարձակագոյնս զինեցաւ ընդդէմ Ռոպէս-
փիէռայ և քաջութեամբ եցոյց զևորհուրդս
նորա թէ 'ի բռնակալութիւն յանկէին:
Պապանձեցաւ Ռոպէսփիէռ և խնդրեաց օր
'ի ջատագովութիւն անձին. իբրև մերձե-
նայր օրն սահմանեալ, յառաջին երեկոյին
շրջէին մուներիկք ընդ փողոցս Փարիզու,
կէսք աղաղակելով "Ի Մահ Ռոպէսփիէռ,
Տանթոն, Մարա", և այլք "Ի Մահ Ռո-
լան, Լասուրս, Կատէ": Եւ յերեկոյին երևե-
ցաւ կրասերն Ռոպէսփիէռ յարդարացու-
ցանել զեղբայր իւր, և 'ի գրգռել զՅակո-
պէնս ընդդէմ Յիրոնտեանց իբրև հակառա-
կաց խռովութեան, և պատրաստել զվիս
նոցա 'ի լուր առ վաղիւ ջատագովութիւն եղ-
բօր իւրոյ Մաքսիմիլիանու Ռոպէսփիէռայ:

Յաւուրն երկրորդի իբրև հոլանեցաւ ժո-
ղովն, Ռոպէսփիէռ երկարաձիգ ճառիւք
ջատագով եղև անձին ընդդէմ ամբաստա-
նութեանց Լուվէի և յաղթահարեալ զը-

սոխն փառաւորեցաւ իբրև նոր ոմն Արիս-
տիդէս։ Եւ յետ այնորիկ ոմն 'ի Նուիրա-
կաց Ժան-տը-Պրի անուն բանս 'ի մէջ արկա-
նէր 'ի դատաստան մահու ածել զՄարա
զծախիչն մարդկութեան իբրև զբռնաւոր,
և զԼուդովիկոս զչարեաց ամենայնի պատ-
ճառ, զի հանդարտեսցի հասարակաց խա-
ղաղութիւն։ Ժպրհութիւն լրբենի, որ ըզ-
Լուդովիկոս ընդ Մարաթայ հաւասարէր.
անխաղաղասէր և ազատասէր մատց մոլե-
գնութեն յայս ցնորս զառածեցուցին զազգ
քաղաքականութեամբ պանծացեալ։

ԳԼՈՒԽ Գ.

Յաջողութիւն զինուոց Գաղղիոյ 'ի վերայ Ռընա-
ղեայ իւրեանց, և աշխարհակալութիւն նոցա 'ի
Բելգիա։

ՅԱՑՆՄ ժամանակի Եւրոպա ողջոյն դէտ
ակն կալեալ յառէր 'ի Գաղղիա. քանզի
արհամարհեալ նախ զաղմուկս խռովու-
թեանց նորա իբրև գործ անմտութեան 'ի
կործանումն աշխարհին, և ապա զարմաց-
մամբ դիտէր զնորայն զերկրակալութիւնս և
զյանդուգն խիզախել ընդդէմ ամենայն
թագաւորաց։ Տիւմուրիէ դարձ արարեալ
'ի Փարիզէ ամենուստ գործէր զյարձա-
կումն իւր 'ի Բելգիա. զօրավարք նորա 'ի
չորից կողմանց մխէին յաշխարհն, և ինքն
դէպ ուղիղ խաղայր 'ի մէջերկրայս։ Եւ ցան-

կայր նա բախել պատերազմաւ ընդ զօրս Աւստրիացւոց. եկն եգիտ զՔԼԷՐՓԷ և զՊՈ-ԼԻՈՅ բանակ ածեալ 'ի Ժամմապ։ Հարաւ անդ ընդ թշնամիս և յետ երկար և բազմա-վտանգ կռուոյն, զարմանալի քաջութեամբ տարաւ յաղթութիւն մեծ։ Եւ զի խոնջ զօրականն հանգիստ խնդրէր, չկարաց զհետ պնդել թշնամեաց և անկան նոքա 'ի Պրուք-սէլ մայրաքաղաք Բելգիոյ։ Ի պատերազմի անդ չորեք հազար հինգ հարիւր այր անկան յԱւստրիացւոց, և հազար հինգ հարիւր գերեցան, նոյնչափ ևս և 'ի Գաղղիացւոց։ Յաղթութիւնս այս Ժամմապայ ելից զԳաղ-ղիա խնդութեամբ, և զԵւրոպիա նոր զար-մացմամբ։

Ժիրոնտեանք հայրենասէր արդարու-թեամբ ծափահար գովէին զյաջողութիւն զօրավարին. իսկ Ժաքոպէնք թէպէտ 'ի սրտէ ոխային ընդ զօրավարն, այլ արտաքուստ 'ի ցուցանել զյաջողութիւն ապստամբութեան ծափաձայն մեծացուցանէին։ Սարա միայն ժպիրհ յանդգնութեամբ ամբաստան կայր զզօրավարէն՝ իբր թէ ծածկէր նա զանկե-լոցն զթիւ, և թէ առ 'ի կորուսանել զզօրս՝ 'ի դիմաց բաղխէր ընդ թշնամւոյն, և թէ չէր ինչ այն յաղթութիւն մեծ՝ այլ նա-հանջ թշնամւոյն։

Թէպէտ յաղթութեամբն բացաւ առա-ջի Տիւմուրիէայ աշխարհակալութիւն Բել-գիոյ, այլ կրկին դժուարութեանց առաջի կայր նմա յաղթել. մի՝ զի ոգի ռամկավա-րութեան մտեալ էր 'ի զօրս և 'ի վարչութի

նոցս, և գործ էր ունել զնոսա ընդ հնա-
զանդութեամբ զօրավարի. միւս ևս՝ նոյն
խռովայոյզ ոգի Գաղղիոյ ածէր շարժէր և
զդրացի ազգինս նմանել նոցա: Եւ 'ի Բեղգիա
ազգն ողջոյն ազնուականք, քահանայք, ա-
տենակալք և ռամիկն, գուն գործէին թա-
թափել զլուծ օտար և յազատութիւն հա-
նել զանձինս: Սակայն 'ի կրկին բաժանէին
հերձուածս. քահանայք և ազնուականք
կամէին պահել զառաջին սահմանս օրինաց
իւրեանց, զպատիւ իշխանութեան և զդա-
ւառացն և զամենայն, բաց 'ի լծոյ կայսեր:
Ընդ սոսա էին և Ճշմարիտ հայրենասէր և
երկիւղած ժողովուրդն. այլ ժաքոպէնք
Բեղգիոյ ամենևին նմանել կամելով Գաղ-
ղիացւոց՝ զռամկապետութիւն հաստատել
ըղձային: Ցիւմուրիէ խորագէտ մտօք ջանայր
չհակառակել կամաց ազգին, և սիրով զնո-
սա միաբանել ընդ Գաղղիոյ, որք և յօժա-
րութեամբ հատուցեալ զծախս պատերազ-
մին՝ խոստանային տալ և կերակուրս մերկ
և անպատասպար զօրականին: Սէրվան տե-
սուչ պատերազմի՝ թողեալ էր զպաշտօն
իւր 'ի Փաշ ոմն, որ թէպէտ այր քաղցրաբա-
րոյ էր և արդար և խոհական, այլ կամելով
զամենեցունց հաճել զմիտս՝ պակասէր 'ի
խնամոց զօրուն:

Գրեաց Ցիւմուրիէ, եցոյց զողորմ պայ-
ման զօրականին, ապառնացեալ հրաժեշտ
տալ յիշխանութենէն՝ եթէ ոչ քաջ խնամ
տարցի նոցա պետութիւնն: Ընդ այս
խիստ պատասխանի ոչ հաճեցան ոչ ժիրոն-

տեանք և ոչ ժաքոպէնք և ոչ դաշնակցու-
թիւնն առ հասարակ ազգային. և ասի
եմուտ գժտութիւն մեծ ընդ զօրավարն և
ընդ ռամկավարս, մանաւանդ յորժամ զո-
րագլուխն Լապորտոնէ արկեալ յիշխանու-
թենէ վասն անհոգ դանդաղանացն, դար-
ձաւ 'ի Գաղղիա գրգռել զժաքոպէնս ընդ-
դէմ նորա։

Իսկ Տիւմուրիէ առեալ զՊրուսէլ՝ տակաւ
յառաջ խաղայր, և 'ի ձեռն զօրավարացն
տիրէր Բելգիոյ ողջոյն մինչև ցՄէօզ գետ։
Թէպէտ առաջի կայր նմա ձգել զերկրակա-
լութիւն իւր մինչև ցՀռենոս, այլ գժուա-
րութիւնք մեծամեծք խոչընդոտն լինէին։
Ի Գաղղիոյ չէր ինչ օգնականութեան ակն-
կալութիւն 'ի պէտս զօրականին. 'ի Բել-
գիացւոց հազիւ զկերակուրս զօրաց գտա-
նէր, և պակասէին հանդերձք, արծաթ,
մեքենայք 'ի տեղափոխել զթնդանօթս, և
կերակուր ձիոց, յորոց բազումք մեռա-
նէին. և որ չար ևս էր՝ օր ըստ օրէ յաճախէր
թիւ դասալիք զօրականին։ Քանզի 'ի սկզ-
բանն վառեալ 'ի թափել զաշխարհն 'ի ձե-
ռաց թշնամեաց՝ ինքնակամ գրեալ 'ի զի-
նուորութիւն, 'ի ցրտանալ եռանդանն և
'ի տեսանել զտագնապ չքաւորութեան՝
խմբովին հատուածեալ 'ի բաց գնային. և
միայն 'ի գնդէ Տիւմուրիեայ տասն հազարք
'ի բաց մեկնեցան։ Այս պայման էին զօրաց
Բելգիոյ, յորժամ 'ի գիտել զնոցանէ նուի-
րակք յազգային դաշնակցութենէ առա-
քէին Տանթոն, և ընկերք նորա։

Իսկ Քիւսդին զօրավար 'ի Գերմանիա գե-
գերելով 'ի սահմանս Ֆրանքֆորթայ՝ ոչ
դադարէր 'ի բողոքելոյ զդանդաղութենէ
Տիւմուրիեայ և Քէլլերմանայ, իբր զի ոչ
շարժէին միաբան ընդ իւր գործել զար-
ձակումն 'ի Գերմանիա. վասն որոյ 'ի տեղի
Քէլլերմանայ երթայր 'ի զօրավարութիւն
Պէօրնոնվիլ: Եւ յԱլպեան բանակին ամ-
բաստանեալ 'ի ռամկավարաց Գաղղիոյ Մոն-
թէսքիէօ՝ վտարանդի փախստեայ գնայր,
այլ զօրագլուխք նորա հաստատուն ունէին
զաշխարհակալութիւնն:

Այս ամենայն յաջողութիւնք յաղթու-
թեանց՝ զամենեցուն վառեալ զմիտս, այ-
նուհետև ամենայն ոք բանս արկեալ խօսէր
զկործանելոյ զաթոռս բռնակալաց. և դաշ-
նակցութիւնն ազգային վճռովն խոստացաւ
ձեռն օգնականութեան և նիզակակցութե-
ամենայն ժողովրդոց, որոց միանգամ կամ
լեցի թափել զազատութիւն իւրեանց. և
այս էր գոգսես ձայն պատերազմի առ ամե-
նայն Եւրոպա: Եւ 'ի լսուն այսր հրամա-
նին պատուէր առաւ, զի ուր և կոխեսցեն
ոտք Գաղղիացւոց՝ անդէն հռչակեսցի ռամ-
կապետութիւն, ջնջեսցի ժառանգական
իշխանութիւն և հարկք և ամենայն բռնու-
թիւն իշխանութեան, գրաւեսցին ինչք
քահանայից և աղնուականաց՝ 'ի ծախս պա-
տերազմի:

ԳԼՈՒԽ Դ.

Յաղագս Թագաւորին և ընդանէաց նորա բան-
դէլոց 'ի Տաճարին։

Ի ՁՈՐԻՑ ամսոց հետէ հեծէր յողորմ գերութեան Թագաւորն Լուդովիկոս 'ի Տաճարին ընդ դշխոյին հանդերձ առաքինի քերբն և երկոքեանքն արքայորդւովք։ Առանձին ունէր իւր բնակութեան Թագաւորն. առանձին և դշխոյն հանդերձ զաւակօքն. սակայն Թոյլ տուեալ էր նոցա 'ի տունջեան դալ 'ի միասին։ Թողաւ և միւսմ ումեք 'ի ծառայից նոցա՝ որ էր հաւատարիմն Քլէրսի, սպասս տանել նոցին։

Այս էր օրինակ կենաց նոցա. յառաւօտուն յիններորդ ժամու աւուրն 'ի նախաճաշ մատչէին նոքա 'ի սենեակ արքայի, և 'ի տասներորդ ժամու ժողովէին 'ի սենեակ դշխոյին, և Թագաւորն պարապէր յայնժամ 'ի հրահանգ որդւոյն, բացատրելով նմա զտողս ինչ Ռասինի և Քորնէյլի և ուսուցանելով զակզբունս աշխարհագրութեան։ Նոյնպէս և դշխոյն միտ դնէր կրթութեան դստերն և զմնացեալ ժամանակն ընդ տալն իւրում պարապէր 'ի հինուցեալ օթոցս։ Եթէ պայծառ հանդիպէր օրն, իբր ժամ մի ՁեմԷին 'ի պարտիզին, և ընդ նոսա ազգային զօրաց պահապանք. էր զի մարդասէր և բարեբարոյ դէմս ցուցանելով նոցա, և էր զի խիստ անգութ

և արհամարհող, ըստ դիպաց և ըստ կրից իւրեանց։ Յետ դառնալոյ 'ի պարտիզէն 'ի ճաշ երթային, և զկնի ճաշուն մինչ հանդ-էր փոքր մի թագաւորն՝ դշխոյն, և քոյր նորա և դուստր լուիկ 'ի ձեռագործս կային, և Քլէրսի զարքայորդին 'ի խաղս պատշաճս հասակին մարզէր։ Անսի ժողովեալ 'ի լուր ընթերցուածոյ, ապա ընթրէին. և զկնի մեկնէր իւրաքանչիւր յիւր սենեակ։ Իսկ թագաւորն պարապէր տակաւին յընթեր-ցումն գրոց, և ասէն իսկ զնմանէ՝ 'ի ժա-մանակի անդ գերուեթեան իւրոյ երկերիւր և յիսուն հատորս գրոց ընթերցեալ։

Այս տարազ էր կենաց թագաւորին, ան-պաճոյճ խաղաղ և անմեղ, մինչև թշնամեաց անգամ զարմանալեօք 'ի գութ շարժել։ Այլ խիստ էր զգուշութիւն 'ի վերայ նոցա. զոր ամենայն յայց ելանէր նոցին Սանդէռ. և զկնի ոչ բազմաց 'ի բաց առնուին 'ի նոցա-նէ զթանաք, զթուղթ, զգրիչ, և դարձեալ զամենայն ազգ սրոյ զկտրոցս, զածելիս և զմկրատս անգամ. մինչև ոչ կարել այլ ևս տիկնանց դարման տանել զգեստուց իւ-րեանց՝ արդելեալք և 'ի ձեռագործէ։ Որ ինչ պէտք էին կարևորք, ածէին նոցա սպայք կարգեալք 'ի պահպանութիւն նո-ցին։ Իսկ առ իմանալ զդէպս անցից արտա-քոյ, վարձեաց Քլէրսի մուսնեաիկ զոք՝ որ 'ի պատճառս վաճառելոյ զօրագիրս գայր ա-ռաջի Տաճարին, և քարոզէր բարձրագոչ որ ինչ անցք անցեալ էին։

Բայց լեռնականք ոխային միշտ ընդ ժի-

ընտեանս, և պարապոյ մնային 'ի սպառ
ընկենլոյ զնոսին, և ըղձիւք նորանոր խառ-
վուԹեց այսպիսի իմն խնդիր 'ի մէջ արկա-
նէին՝ ԹԷ մարԹիցի արդեօք 'ի դատ կոչել
զԼուդովիկոս, և ո՞ նատցի նմին դատաւոր.
և զայս 'ի բաղում լեզուս Թարգմանեալ
սփռեցին ընդ ամենայն Եւրոպա: Արդա-
րամիտքն 'ի նոսա ցուցանէին օրինաւք ազգին,
ԹԷ սրբազան է անձն Թագաւորի. իսկ եԹԷ
պակասեալ զնա 'ի պարտուցն համարէին,
ահա արկին զնա յանԹոռոյ, և չգոյր յայնմ
հետէ երկիւղ կասկածանաց ազգին յերե-
սաց նորա, կամ այլոց ամբաստանուԹեանց
տեղի: Իսկ ոսոխքն պնդէին, զի և յայտնի
մատնիչ էր նա ժողովրդեան համախոհու-
ԹեամբՆ ընդ օտարս, վասն որոյ պարտ էր
'ի դատ զնա կոչել ըստ արդարուԹեան:
Եւ ահա ոմն 'ի լեռնականաց անտի ժաքո-
պէնաց Սէն ժիւստ, այր վայրագ և դժնէա-
միտ՝ սկսաւ բնիկ յանդգնուԹեամբն իւրով
և անգԹուԹեամբ յայտնաբարբառ խօսել,
ԹԷ արժանի է մահու Լուդովիկոս, մեռցի
նա այնու իրաւամբք՝ զոր ունէր Բրուտոս 'ի
սպանուԹեան Կեսարու. և ԹԷ Թշնամիք
են հասարակապետուԹեան՝ որք փրկու-
ԹեանՆ նորա ցանկանայցեն, նուիրական
զանձն նորա համարելով, և այնոքիկ իսկ՝
որ օրինաւոր ատենիւ զդատաստան նորա
խնդրեցեն: Քանզի 'ի դատել զդատ առն
ոխերիմ դահճի ժողովրդեան և ըմբռնելոյ
'ի հաւատոյ յանցանս, դատաստան նորա
այնուհետև վճիռ լինի օրինաց և արդարու-

թեան։ Եւ երկարագոյնս խօսեցեալ ցու-
ցանէր զնա արժանի մահու առանց ատենի
դատաւորաց։ Հակառակ եկաց նմին Ֆուշէ,
խօսեցաւ եցոյց քաջ թէ առաւել մեծանձ-
նութեան և իմաստութեան հասարակապե-
տութեանն նշանակ էր՝ արհամարհել զեղ-
կելի թագաւորն, և թողուլ զնա որպէս և
էրն։ Այլ երկարեցան այս երկպառակ կար-
ծիք և գժտութիւնք 'ի նոսա յ13 օրէ ամ-
սոյն նոյեմբերի մինչ ց30։ Եւ Ռոպէսպիէռ
ոչ դադարէր 'ի գրգռելոյ զատեանն 'ի վճիռ
մահու արքային։

ԳԼՈՒԽ Ե.

Դաշն արքային Լուդովիկեայ։

ԺԻՐՈՆՏԵԱՆՑ ակարայեալ ընդդէմ անո-
ղոքելի թշնամեացն՝ տարակուսեալ երկպա-
ռակէին յիւրեանս, և կամ զի երկնչէին
թէ գուցէ ամբաստանեսցին զկողմն ունել
թագաւորին, այլով ինն օրինակաւ ջանա-
ցին փրկել զնա, և յաղթական լինել 'ի վե-
րայ լեռնականաց, խնդրեցին վճռաւ սահ-
մանելոյ զդատաստան Լուդովիկոսի, և այն
յատենի Ազգային դաշնակցութեան։

Եւ էլպատուէր հրամանի ամենայն հեր-
ձուածոց խմբից գումարել 'ի խորհուրդ, և
զինել ամենայն քաղաքացւոց 'ի 11 դեկտեմ-
բերի։ Անդէն պատեցին զօրք զՏաճարն,
եմուտ քաղաքապետն 'ի ներքս և ծանոյց
զվճիռ Ազգային դաշնակցութեան։ Եմուտ

Թագաւորն 'ի կառս քաղաքապետին, և պատեալ 'ի վեցհարիւր ընտիր զօրաց, և 'ի հեծելոց յառաջոյ և զկնի, ածաւ 'ի ժողովն։ Երևեցաւ Լուդովիկոս յատեան գաշնակցաց, ասսի և անսի ունելով զՔամպոն, զԱնդէռ և զՎիթթէնկոֆ. և լռութիւն խոր տիրէր յատենին։ Մեծվայելչութիւն անձին արքայի, խաղաղութիւն դիմացն՝ զամենեցուն շարժէր զսիրտս։ Յուզեցան Ֆէոյլանք 'ի գութ, խանդաղատեցան ժիրոնատեանքն, Թուլացան 'ի մոլեգնութենէ և անագորոյն Ժաքոպէնք։

Նախագահ ժողովոյն Պառիէր, խօսեցաւ ընդ Լուդովիկեայ և ասէ. "Լուր հանդարտութեամբ, և բան առ բան խնդրոյս ապատացես պատասխանի"։ Եւ նստաւ Թագաւորն 'ի լսել. առաջի արարան նմա երեսուն և չորս գլուխք ամբաստանութեանց։

Թէպէտ յանպատրաստից ըմբռնեցաւ Թագաւորն յայս դատ, այլ ընդ արիութիւն և ընդ իրաւունս միալուծ յանձին բերելով զհամեստ հեզութիւն և զանպաճոյճ պարզութիւն, ելոյծ զամենայն մի առ մի և խայտառակեաց զթշնամիս անձին իւրոյ։ Ի յանցանս յանդիմանութեան գրէին և զգործս ողորմութեան նորա և զբարերարութեանցն շնորհս՝ իբրև հնարս իմն նենգութեան 'ի մոլորեցուցանել զժողովուրդն. այլ անմիտ ամբաստանութեանն զայս և եթ արար նա պատասխանի. "Ձիք ինձ արդարև բերկրութիւն մեծ քան զայս, զի ձեռն օգնականութեան կարկառեցի կարօտելոց"։ Ա՛յս

բանք նորա յուշարար յիշատակի կենաց նորա՝ ուժգին ճմլեցոյց զսիրտս ժողովակա-նաց, յորս տակաւին կատաղութիւնն վայրագ թողեալ էր տեղի գթութեան։ Որ ուրեմն ժպրհեցաւ նախագահ ժողովոյն և յայս հարցուցն խժական և լի զզպարտու-թիւ. „Յիշեցէս զնախճիրս արեանց համ-ազգեաց հեղեալ 'ի քէն 'ի 11 օգոստոսի. և զմի պատասխանատուութիւն առ այդ ունիցիս „։ Պատասխանի ետ թագաւորն մե-ծաբարբառ և ազգու բանիւք. „Ոչ, իշխանդ, ոչ ես էի պատճառք կոտորածի աւուրն „։ Եւ ընդ այս պատասխանի զամբիի հարկա-նէին բազումք յանօրինաց անտի, գիտելով՝ զի զիւրեանց զանօրէնութեան ոճիրս զնո-վաւ շիտէին։

Յետ այսր ամենայնի իբրև յանցաւորընդ-ունէր Լուդովիկոս հրաման 'ի ժողովոյն՝ ընտրելիւր Ջատագովս զՄալէրպ յառաջին պաշտօնէից իւրոց և զԹրոնշէ և զՏը Սէզ զմեծահռչակ Ճարտարախօսս ժամանակին, և շնորհէին նմա աւուրս հնգետասան 'ի պատրաստութիւն պատասխանւոյ դատին։ Բայց յետ այնորիկ արգելին նմա չերևել այլ ևս ընտանեացն, և 'ի խնդրել նորա թա-խանձանօք տեսանել զորդեական՝ հրաման եղև այսու պայմանաւ, զի մինչ ցկատարումն դատաստանին մի՛ դարձցին անդրէն առ մայրն իւրեանց։ Գիտելով թագաւորին թէ անհնարին վիշտ լիցի դշխոյին չտեսանել զորդեական, ոչ ևս կամեցաւ։

Եւ մինչդեռ պատրաստէր Լուդովիկոս 'ի

ջատագովութիւն անձին, Ժիրոնտեանք ա-
մենայն փութով զինէին ընդդէմ Ժաքոպէ-
նաց, և Կատէ զամենայն ջան 'ի գործ դնէր
մերժել զնոսա յազգային դաշնակցութենէ.
և 'ի գաւառաց գաւառաց գային դաշնակից
զօրք 'ի Փարիզ, և տրտունջ ժողովրդեան
լսելի լինէր ընդդէմ արիւնարբուշ խռովչաց,
և սպառնալիք հակառակ Մարաթայ և Ռո-
պէսպիէռայ։ Ամենապարեցին Ժաքոպէնք
գրել 'ի գաւառս գաւառս 'ի գովութիւն
ուղղութեան իւրեանց և հայրենասէր մտաց
և յամբաստանութիւն Ժիրոնտեանց, մա-
նաւանդ ոգւով չափ հալածէին զՌոլան,
զՊրիսոյ, զԼուվէ, զԿատէ, զՎէրնիոյ՝ զարս
Ճարտարս և հանճարեղս յԱզգային դաշ-
նակցութեան։ Եւ մինչդեռ յայսոսիկ կռիւս
էին, Պիւզոյ 'ի Ժիրոնտեանց անսի առաջի
արար ժողովոյն տարագիր առնել զտուն
դքսին Աւրեղիոնի, և ամբաստան լինէր զԺա-
քոպէնաց՝ զի խորհուրդ նոցա էր սպանա-
նել զԼուդովիկոս և 'ի թագաւորութիւն
զդուքսն ամբառնալ. "Զի թէպէտ թա-
գաւորութիւնն անկաւ, սակայն յոտին
կայր դեռ ևս 'ի սովորութիւնս և 'ի յիշա-
տակս առաջին պաշտօնէից իւրոց։ Կամանեաց
ցուք Հռովմայեցւոց, ասէր, որք հալածե-
ցին զՏարկուինիոս և զտոհմ նորա. իբրև
զնոսա հալածեսցուք զտունն Պուրպոնեան։
Կէսք 'ի բանսի են, այլ է որ որչափ սիրելի
ժողովրդեան՝ նոյնչափ և ահաւորագոյն,
այնինքն է տոհմն Աւրեղիոնի։ Անդրի դքսին
շրջեցաւ ընդ Փարիզ, որդիք նորա քաջու-

թեամբ վառեալ՝ անուն մեծ ունին 'ի զօրս, վաստակք իսկ տոհմիս վտանգաւոր են ազատութեանն ,, : Եւ Լուվէ յետ Պիւզոյի խօսելով. յորդորէր զդուքսն՝ ինքնակամ տարտագիր երթալ 'ի հայրենեաց. այլ վճիռ ժողովոյն ելթող զտարագրութիւն դքսին յետ դատին Լուդովիկեայ : Իսկ նա 'ի Փարիզ ջանալով ծածկել զանուն իւր և զբաղդ հաւասարութեան (էկալիթէ) անուամբ մի էր 'ի դաշնակցաց ազգային ժողովոյն : Թէպէտ չէր այն իւր դէպ տեղն 'ի միջի մոլեգին ռամկավարաց, սակայն ոչ կարէր փախչել, քանզի ընդ ամենայն Եւրոպա վտարանդի ազնուականքն Գազլիոյ և տոհմն արքունի մնային նմա ցաստամբ :

Ի քսան և երկու նորին ամսեան դեկտեմբերի երևեցաւ վերսային թագաւորն յատեան : Տը Սէզ առաջնորդ բանին խօսեցաւ ի իմաստուն պերճաբանութեամբ, որով քաջ արդարացոյց զթագաւոր իւր, և պարզ բանիւք դատապարտեաց զոխերիմ թշնամիս զծարաւիս արեան նորա, մինչև լցան անօրէնքն յիմարութեամբ և ամօթով : Եւ 'ի վախճանել ճարտարախօսին զբանս իւր և 'ի շուրջ զաչսն յածել հանդարտութեամբ 'ի վերայ ժողովոյն, գոչելով 'ի ձայն. “Դատաւորս խնդրեմք 'ի ձէնջ և ահա ամենեքին դուք դատախազք էք ,, , դրդեցաւ ատեանն, և փոքր միւս ևս՝ 'ի միմեանց սառակէին անդէն. և հնչէր ժողովն բանիւք նախատանաց՝ զոր ծիրանատեանք և Լեռնականք դէմ ընդդէմ ժայթքէին 'ի վերայ միմեանց : Ուր ու-

ընեն ապա 'ի կախ թողեալ զվէճիս դատաստանին, սահմանեցին չարկանել բնաւ ձեռն 'ի գործ ինչ մինչ չև տուեալ զվճիռն։ Այլ Լեռնականք և ևս գրգռեալք՝ խնդրէին առանց հարցափորձի զմահ Լուդովիկեայ, և Ժիրոնտեանք գուն գործէին ապրեցուցանել զարքայն, զի մի նախատինս ածցեն 'ի վերայ ապստամբուեն անօգուտ անգթութեն. այլ զի երկիւղ էր 'ի Լեռնականացն կատաղութենէ, խորհեցան 'ի կամս ժողովրդեան թողուլ զդատն, որոյ վախճան 'ի քաղաքական մարտ յանկէր. այլ ընդ այս առաւել իսկ ցասուցեալ Լեռնականք և իշխան նոցա Ռոպէսպիէռ, խրոխտագոյնս յարեան ընդդէմ կամաց ոսոխացն իւրեանց՝ ցուցեալ զայն անհեթեթ, և թէ միաք նոցա և խորհուրդ միաբան էին ընդ բռնաւորին՝ կեղծեօք գթութեան պատրուակեալ արտաքուստ, և թէ համախոհք էին ընդ օտարս և թշնամիք հայրենեաց, միտ եդեալ կործանման ուշխարհին։

Յարեաւ Վերնիոյ և արդարացոյց զիւրան, և զարմանալի Ճարտարախօսութեամբն իբրև գուշակ լինելով ապագայիցն, եցոյց զամենայն չարիս բռնակալութեան Ժաքոպէնաց յետ մահու արքային Լուդովիկեայ, Ճշգրիտ նկարագրեալ զաղէտս հայրենեացն. "Մի՛թէ ո՞չ, ասէ, 'ի շքեղ յաղթանակս իւր նմանեսցի Գաղղիա Հրաշակառոյց բրգանցն Եգիպտացւոց՝ ոլոր յաղթեցին բազմածախ ժամանակին։ Անցանէ առ նոքօք պանդուխտն, և զարմանայ ընդ մեծութիւն հոյա-

կապ. այլ եթէ 'ի նեղքս կամիցի մնանել, զինչ 'ի նմա գտանիցէ. աճիւնս անկեն-դանս մոխրոց, և լռութիւն դամբանաց ,, :
Նկարէր գարձեալ առաջի զաղէտալի և զա-հաւոր պատկեր թշուառութեան Փարիզու 'ի ձեռս սիկարեանցն Ժաքոպէնաց "Յո՞ր սար-սափումն թշուառութեան ոչ անկցի Փա-րիզ, ո՞ բնակեսցէ 'ի քաղաքին, ուր երկիւղ տիրէ ահաւոր և մահ դժնդակ. ո՞ր ձեռք սրբեսցեն զարտասուս ձեր, և կար-կառեսցին 'ի նպաստս ընտանեաց անյուսից : Գնայցէք արդեօք առ սուա բարեկամն, առ նենգաւոր շնթողն, որ յայս վիհ զձեզ արկին : Ո՜հ, խոյս տուք մանաւանդ 'ի նոցանէ, զի մի լուիցէք զպատասխանին. եթէ խնդրէք հաց, երթիջիք յասպարէզն, լա-փել զկոտորս զարիւնաշաղախ սպանելոցն 'ի ձէնջ. կամ եթէ արիւն խնդրիցէք, ահա ձեզ արիւն և դիակունք, զի չունիմք ձեզ այլ կերակուր : Զարհուրեսցին անձինք ձեր ո՞ քաղաքացիք : Ո՜ հայրենիդ իմ աշխարհ, զամենայն ճիգն եդից առ 'ի թափել զքեզ յանլուր չարեացս յայսցանէ ,, : Այսոքիկ էին բանք ճարտարախօսին :

ԳԼՈՒԽ Զ.

Դոպոնի Լուդովիկեայ և ողորմ մահ նորա :

Ի տեսեալ այս շփոթ խռովութեան զա-ւուրս երկոտասան, յորում Ժամանակի զա-տուցեալ Լուդովիկոս և փակեալ 'ի Տաճա-

ին, պատրաստէր զանձն 'ի մահ, մինչդեռ թշնամիք նորա ծարաւեալք արեան նորա ոչինչ թողուին 'ի սպառնալեաց և 'ի մոլորեցուցիչ թելադրութեանց՝ առ 'ի յոլովել զքուեայս դատակնքոյն։ Ուր ուրեմն ապա դատեալ զթագաւորն իբրև մատնիչ հասարակաց ազատութեան, հանին զվճիռ մահու նորա հնգօք ևեթ աւելի քուէիւք, հակառակ օրինաց ժամանակին՝ որ 'ի դատապարտութիւն ամբաստանելոյն կրկին պահանջէր առաւելուլ քուէից։

Լուաւ թագաւորն 'ի քսաներորդ աւուր յունուարի զկնի մտից արևու զվճիռ մահուն խաղաղ սրտիւ և սուրբ խնդութեամբ։ Երկու ինչ խնդրեաց և ընկալաւ. մի տեսանել զընտանիս իւր, քանզի եօթնեակք վեց 'ի վերայ անցեալ էին՝ յորմէ հետէ զատուցեալ էր 'ի նոցանէ. երկրորդ՝ կոչել քահանայ զոք ուղղափառ կալ առ նմա 'ի յետին ժամու անդ կենաց։

Յութերորդ ժամու գիշերոյն ծիրանածին կալանաւորքն ածան 'ի տեսութի միմեանց. ծանոյց անդ ինքնին թագաւորն ընտանեաց իւրոց զանդառնալի վճիռ մահուն, և զի յետ այնորիկ և ոչ միօրեայ կենաց ակնկալութիւն էր նմա 'ի վերայ երկրի։ Կենակից նորա դշխոյն Մարիա-Անդոնիէդդա և քոյր նորին տիկինն Եղիսաբէթ, թէպէտ դառն արտասուս հեղուին, այլ առնացի բերելով սիրտ՝ երանի նմա տային, զի ընդ մահուն վախճան լինէր աղէտից թշուառութեանց նորա, և զի հասանէր նմա ժամ՝

առնուլ զպատկն անմահութեան ընդ վաղանցուկ թագին՝ զուր յանիրաւի յափշտակելոյ 'ի նմանէ : Յետ երկար զրուցացս յարեաւ Լուդովիկոս տալ զվերջին ողջոյն հրաժարական և զյեսին համբոյր սիրելեաց իւրոց : Յայնմ դժնդակ պահու անկաւ հեղձամղձուկ արտասուօք և հառաչանօք դուստրը թագաւորին նուաղեալ յոտս հօրն . և մինչ քոյր նորին տիկնին Եղիսաբէթ 'ի վերայ բազկացն ունէր զարքայազն օրիորդն , մանուկ արքայորդին կախեալ զձեռաց հօրն՝ ճիչ բարձեալ լայր , և թագուհին յեցեալ յամուսին իւր թանայր զնա արտասուօք : Քեցեալ զանձն բռնի մեկնեցաւ Լուդովիկոս յողորմ տեսարանէն և անդէն զամենայն զցանկալիս իւր յաշխարհի նուիրեալ Տեառն , պատրաստէր զանձն 'ի զոհ 'ի վերայ ազգին :

Եւ ըստ ընտրութեան արքայի՝ յօժարութեամբ ընկալաւ քահանայն Ֆիլիմոն զազնուական և զբազմավատանգ գործ պաշտամանն մերձ կալոյ առ նմա 'ի ժամ մահուն , և եկն եմուտ յաշտարակ Տաճարին : Առանձնացաւ ընդ նմա Լուդովիկոս 'ի սենեակ մի նեղքին , և եկաց անդ ժամս երիս ջերմ բարեպաշտութեամբ 'ի խորհուրդ խոստովանութեան և 'ի լուր բանին Աստուծոյ : Յետ այնորիկ 'ի ծանրանալ քնոյն , ննջեաց յանկողնի 'ի քուն խոր ժամս հինգ :

Մինչդեռ քաղցր 'ի քուն լինէր արբութեամբ խղճին , քաղաքն անօրէն յուզեալ ծփայր , և խռովիչք զայրագին բորբոքէին :

Անդէն և ոմն զօրական Փարիզ անուն վառեալ 'ի վրէժ արեան Թագաւորին՝ իբրև լուաւ եԹէ և ԼըփէլլէԹիէ-Սէն-Փարժոյ այր ազնուական և ճոխ արկեալ էր քուէ 'ի մահ Թագաւորին որպէս զայլս բազումս յազնուականաց, երկուցեալ 'ի ժաքոպէնացն էկն յանկարծ տառատոկ մեծ արկեալ զիւրեաւ, և մինչ նա մատչէր 'ի սեղան ասէ. "Դո՞ւ լցես անօրէնն ԼըփէլլէԹիէ՝ որ արկեր քուէ 'ի մահ Թագաւորին": ԼըփէլլէԹիէ ասէ. "Այո, այլ չեմ անօրէն, զի ըստ մտացս խղճի զայս գործեցի": Եւ Փարիզ ասէ. "Առ ապա, ընկալ զվարձադ" և մխեալ զվաղակաւորն 'ի կողս նորա խոյս էառ 'ի միջոյ: Ի լուր եղելոյն առաւել ևս զայրագնեցան ժաքոպէնք:

ԶարԹեաւ Թագաւորն, և եհարց ցծառայն զժամն. զգեցաւ հանդարտուԹեամբ: Աճապարեաց Քէլէրսի, և ուղղեաց սեղան. եկ քահանայն 'ի պատարագ, և էր վեցերորդ ժամ առաւօտուն: Եառեալ Թագաւորն զսուրբ պատարագն, և հաղորդեցաւ 'ի կենդանարար խորհրդոյն Ջերմեռանդն սրտիւ: ԲարեպաշտուԹեն այն ոգի՝ որ պահեաց զնա երբեմն 'ի հրապուրանաց մարդկեղէն փառաց, նոյն և այժմ քաղցրացուցանէր նմին զմահ և ազդէր արիուԹիւն արժանի առն դիւցազնի, մինչև չկարել դահճաց ծածկել զզարմանս իւրեանց:

Յայնմ ժամանակի զօրավար ազգային դնդին Սանդէռ վառէր զինէր արս հարիւր հազար. քանզի բան ընԹանայր 'ի քաղաքին

թէ որք հինգարիւր անձնամատոյցք յաչս
եդեալ զմահ՝ խնդրէին զերծուցանել զար-
քայ. և յիններորդ ժամու աւուրն գայր
հասանէր ազդ առնել Լուդովիկեայ զժա-
մադիրն։ Յայնժամ ասէ Թագաւորն քա-
ջութեամբ իբրև 'ի գահոյից, "Ելցուք,,.
և էլ 'ի կառս իւր ընդ քահանայի իւրում։

Ապշութիւն խոր պատեալ էր զքաղա-
քաւն, ընկճեալ թմբրեալ ժողովուրդն
ընդ բռնակալութեամբ արիւնարբու մարդ-
կան։ Փող հարկանէր, և ամենեքեան որոց
չէին պէտք յանդիման լինելոյ ահաւոր
պահուն՝ ճեպեալ թաքչէին 'ի տունս իւ-
րեանց։ Ամրացան դրունք տանց և պա-
տուհանք, և մնային ամենեքեան 'ի կատա-
ղումն անօրէն գործոյն։ Եւ Թագաւորն
'ի Ցաճարէն, և յառաջ խաղայր լռիկ 'ի
կառս 'ի միջոյ հեծելազօրուն՝ որք ատի
և անատ տողեալ կային 'ի զգուշութիւն, զի
'ի խլրտեալ ուրուք 'ի շնորհս կենաց արքայի՝
անդէն ատապատ յերկիր արկանիցեն։ Այլ
անօգուտ էր խժամիտն այն հոգ զգուշու-
թեան, քանզի այնպէս իմն կալեալ էր ապ-
շութիւն զսիրտս ամենեցուն և զմիտս, մին-
չև 'ի բիւրաւորաց անտի զարհուրելոց յա-
նօրէն ապանութենէն՝ ոչ ոք իշխէր գիմա-
գրաւեալ 'ի վերայ Թագաւորին, և ոչ իսկ
կուսակից նորա երևեալ։ Անդ 'ի միջի բազմա-
խուռն կրիք յուզեալ ամբոխին՝ Լուդովի-
կոս միայն հանդարտ երթայր և աղօթէր, և
չէր ինչ որ խռովեցուցանէր զխաղաղութիւն
հոգւոյն՝ որ վաղ իսկ խորհրդովք յեր-

կինս էր։ Հասեալ 'ի տեղի կառափման 'ի հրապարակ Լուդովիկոսի ԺԵ. ուր պատրաստեալ էր բարձրաւանդակն յանդրեաց անտի արքայի հաւուն իւրոյ, էջ Լուդովիկոս 'ի կառացն, մերկացաւ ինքնին զհանդերձսն, եթող հատանել զհերս գլխոյն. այլ խբրև կալան բռնութեամբ զբազուկսն առ 'ի կապել, շարժէր թօթափէր 'ի նոցանէ։ Բայց Ֆիլիմոն յորդորեալ զնա, ասէ, "Համբեր և այդմ անարգանաց, Տէր արքայ. այդ քո խոնարհութիւն նմանող զքեզ արասցէ մարդացելոյն Աստուծոյ որոյ է տալ զվարձս քո"։ Մասոյց յայնժամ թագաւորն զձեռսն 'ի կապանս. և ծանրաքայլ մերձեցաւ 'ի գործի մահուն, և յանկարծ քայլ մի յառաջ ընթացեալ շուրջ յածէր զաչս զբազմութեամբ ժողովոյն, և ամբարձեալ զձայն իւր ասէր. "Գաղղիացիք, մեռանիմ ես անպարտ 'ի յանցանաց՝ զոր արկին զինև թշնամիք իմ, այլ ներեմ նոցա. և երանի՛ թէ մահուամբ իմով հեռասցի 'ի ձէնջ"... Յայս բան խօսեց գրնդիւն թմբկաց հրամանաւ Սանդէռայ խափանեաց զձայն թագաւորին և արգել զնա 'ի խօսելոյ. զի "Ի մահ և ոչ յաստենաբանել եկիր", ասէ։ Եւ 'ի պարգև դահճին որ գլխատելոցն էր զնա՝ ընծայեալ տուփ մի մեծագին, խոնարհեցոյց զպարանոց իւր, յանձն արարեալ զհոգին Աստուծոյ, և ընկալաւ զհարուած մահուն։ Իսկ քահանայն կացեալ գոչէր սիրտ 'ի բերան. "Զաւակդ սրբոյն

Լուդովիկեայ, սլացիր յերկինս ,, (1793)։ Այն ինչ հեղաւ արիւնն, մոլեգին ամբոխ մարդկան, թացեալ զնիզակս իւրեանց և զթաշկինակս ընթացան ընդ քաղաքն 'ի գոչիւն աղաղակի. ,, Կեցցէ Հասարակապետութիւն, կեցցէ Ազգն ,,. երթային սոքա մինչև ցդրուսն Տաճարին՝ 'ի նշաւակել զժպիրս և զանմիտ խնդութիւն իւրեանց։

ԳԼՈՒԽ Ը.

ՆԿԱՐԱԳԻՐ ԲԱՐՈՅ ԼՈՒԴՈՎԻԿԵԱՅ, ԵՒ ՀԱՄԱՌՕՏ ՊԷՏՈՒԹԻՆ ՂԵՄԱՐԼՈՒԹԵՆԷ ՆՈՐԱ։

ԹԷՊԷՏ ցայս վայր յընթացս խառվալից պատմութեան թագաւորութեան արքայիս շատ իսկ ծանեաք զնա՝ թէ որպիսի ոք էր իբրև քրիստոնեայ և իբրև թագաւոր, սակայն ոչ անդէպ համարիմ ՀԱՌԵԼ ասա զբուսոյ բարուց նորա, և ապա զՀասարակաց օգտից զոր 'ի խառվայոյզ ժամանակի թագաւորութեանն մարթացաւ առնել։

Շատ իսկ հաւատեն զառաքինութիւնս նորա իմաստք յետին կտակի նորա ինքնագիր, յորում է տեսանել զանյիշաչարութիւն նորա 'ի պարզ և 'ի մեղմական բանսն և զկենդանի աստուածպաշտութիւնն փայլեալ յամենայն տողս, զոյցս երախտագէտ սիրոյ և գորովանաց առ այնոսիկ՝ որք աղէտից վչտաց նորա բաժանորդք գտան. և վկայ կացցէ մնասցէ այս սրբութեան արդարոյն,

և անմոռաց յիշատակ ապիրատութեան դահճաց նորա 'ի դարս ապագայս։

Լուդովիկոս բերէր յինքեան բովանդակ զամենայն լուսն առաքինութեան լաւաբարոյ առն. հայր էր բարեպաշտ և գորովական, ամուսին սիրելի և հաւատարիմ, տանուտէր բարեխնամ, իշխան ներողամիտ և արդար, տէր անարգամեծար ծառայից իւրոց և հեզահամբոյր միշտ։ Ի կերակուրս սակաւապէտ, ոչ խնդրէր համադամս և խորտիկս, այլ անպաճոյճ պիտոյիւքն շատանայր. և ըմպելի նորա էր ջուր ընդ գինեակ խառնեալ։ Պատկառ կայր կրօնական պարտուց բարեպաշտութեան, առաջի աչաց միշտ ունէր զի քրիստոնեայ է։ Այսպէս յանհաւան և 'ի զեղծեալ դարուն հլու գտաւ նա միշտ օրինաց եկեղեցւոյ. անպաճոյճ յախորժակս իւր, սիրէր զաշխատութիւն և զճշմարիտ բերկրանս զուարճութեանց։ Եւ 'ի պարապել 'ի հոգոց պետութեան, զուարճանայր յորսս և 'ի վարժս ինչ ձեռական արուեստից՝ յորս ճարտար էր։ Եւ զի սիրող էր անկեղծ համարձակութեան, վայելչութեան, արդարութեան և կրօնից բարեպաշտութեան, վասն որոյ անմարթ էր նմա թագուցանել զարհամարհանս իւր ընդդէմ շողոմարար մարդկան, սատց և զեղծաբարոյից, և յայտնի ամբարշտաց՝ զորս երբէք երբէք և յայտնագոյնս անգոսնեալ արհամարհէր խբրև զանարգս և զանպիտանս, որով վառեալ զինեաց ըղձաստումն նոցա և զատելութիւն ընդդէմ ան-

ձին իւրոյ՝ մինչև մահուամբն յագեալ նոցա։ Ապաքէն յայտնի է ամենեցուն, զի առաջին պատճառ անկման և դատապարտութեան Լուդովիկեայ անիսխատելի հաւատք նորա էին ճշմարիտ ուղղափառ կրօնից և անվեհեր պնդութիւն հաստատութեան նորա 'ի մերժել զանօրէն վճիռս հալածանաց բարեկրօն քահանայից։ Քանզի այս իսկ եղև փոյթ դատախազից նորա 'ի քննութեան դատին, ցուցանել զայսոսիկ իբրև գլխաւոր պատճառս պարտաւորութեան նորա, որպէս զի մի առ յապա եկեալ ազգք սխալեսցին 'ի սմին։

Զիրք բնութեանն 'ի Լուդովիկոս զարգացեալ գիտութեամբք և բազմագիմի տեղեկութեամբք, վասն ամբաւնային զմոտաց նորա հանճար։ Հանդերձ հմտութեամբն 'ի հայրենի բնիկ բարբառ, իսկէր անսայթաք զլատինն, զիտալկանն և զանգլիացին։ որպէս և տեսանեմք 'ի գրուածս նորա զորս եթող, զոճ բնական և պարզ, միանգամայն և ազդու։ Քաջալարժ էր նա յուսումն պատմութեանէ, յաշխարհագրութեանէ, և 'ի ջրաբաշխութեան։ Նաւահանգիստ Շէրբուրկայ և հռչակաւոր ծովագնացութիւն Փէյրուզայ զերկրագնաւոն՝ գործ հանճարոյ նորա էն։ Ոչ ոք 'ի պաշտօնէից նորա գիտէր իբրև զնա զջրութիւն, զբերս արգասեաց և զելեզմուտ պետութեանն։ Չէր ոք քաջահմուտ իբրև զնա յարուեստս քաղաքական անտեսութեան։ Համառօտ ասել, այր՝ եթէ ոչ մեծանուն՝ այլ գտաւ նա ի-

մասուն, խոհական և հանճարեղ 'ի խորհուրդս։

Եւ եթէ այսքանեօք հանդերձ բարեմասնութեամբք, թերացաւ նա 'ի վարչութիւն մեծի պետութեանն, ոչ առ տկարութեան զառածանէր նա գիտութեամբ 'ի չարիսն, կամ թոյլ տայր նոցին վատութեամբ՝ անզօր ընդդէմ կալոյ նոցին. զի զարմանալի իսկ էր արիութիւն նորա 'ի խարել զգործս արդարութեան և կրօնից։ Այլ այս իսկ էին պատճառք թերութեան նորա, կեղակարծ միտք, տարապայման երկիւղ զանձնէ, որով միշտ երկմտէր զխորհրդոց իւրոց։ Եւ արք անօրէնք շնորհս գտեալ յաչս նորա զեղծանէին, գործի առեալ զերկմտութիւն խորհրդոց նորա, և խարդաւանեցին զնա 'ի վրիպակս չարաչարս, զորս անմարթ է՝ պատրուակել, մինչև ապստամբութեամբ ժողովրդեան կորոյս զթագաւորութիւն իւր և զկեանս։

Այլ թողցուք նմա ինքնին գործովք տալ զիւր նկարագիր, և մեք համառօտեսցուք որ ինչ 'ի նմանէ կարդեալ յօգուտ հասարակաց և ժողովրդեան իւրոյ։ Անդստին 'ի սկզբան թագաւորութեան իւրոյ ազատ կացոյց զժողովուրդն 'ի տրոց՝ զորս պարտէր նոցա հարկել նորատպակ արքային իբրև 'ի խնդակցութիւն և 'ի բարեգուշակ մուտս յիշխանութիւն թագաւորութեան։ Ազատութիւն արար վաճառաց ցորենոյ՝ որ առ ծերութեն հաւուն իւրոյ Լուդովիկեայ ԺԵ էր 'ի ձեռս իշխանաց ոմանց։ Խափանեաց

արգել զպատուհաս մահու դասալիք զօրականին՝ որ յառաջ քան զնա վճիռ էր անդարձ։ Եբարձ զկտտանս յանցաւորաց առ 'ի խոստովանութիւն։ Մինչև յաւուրս նորա էին բանտք հասարակաց ստորերկրեայ վայրք և նկուղք խոնաւք, ապականարարք 'ի խորս երկրի՝ ուր յանցաւորք և զորոց կասկածն էր յանցանաց խառն ընդ մարդասպանս և ընդ հայրասպան եղեռնագործս հեծէին. զատոյց զսոսա Լուդովիկոս՝ կարգեալ բանտս գլխապարտութեան և քաղաքական թեթև յանցուածոց, երկոցունց իսկ տեղիս ճահաւորս և առողջս. քանզի զօգուան խորհէր հասարակաց և ոչ ահաբեկ առնել զնոսա խստութեամբ։ Եբարձ դարձեալ զսակս և զգլխահարկս. բնաջինջ արար 'ի կալուածոց արքունի զանուն և զստուերս անգամ ստրկութեան, և զվարելոյ զոք տարապարհակ 'ի գործ արքունի։

Եւ ընդ տարածանելն զնանամս իւր 'ի վերայ Ժողովրդեան, կարգէր և օրէնս հազարապետաց տան իւրոյ, և ծախուց դշխոյին խնայօրէն տնտեսել զառտնին զպէտս. զնոյն կարգ սահմանէր և 'ի վերայ զինուորաց, մինչև ասել ոմանց թէ նորութեամբս այսուիկ լքեալ 'ի նոցունց՝ մատնեցաւ 'ի ձեռս թշնամեաց իւրոց։ Այսպէս թագաւորն առաքինի անփոյթ զանձնէն՝ զայլոց հոգայր հանապազ. քանզի բազում դիւրութիւնս արար և հիւանդանոցաց մայրաքաղաքին. կարգեաց և առանձին գումար ինչ դրամոց 'ի նպաստ կարօտելոց, զի մի հեծեսցեն ընդ

անյաղ ագահութեամբ վաշխառուաց։ Կանգնեաց 'ի Փարիզ և 'ի գաւառս գաւառս գործարանս մանելոյ 'ի նպաստ ձեռնտուութեան աղքատաց՝ որք առ թշուառութեան չգտանեն ձեռագործս 'ի հայթայթել նոքօք զկեանս։ Եւ ո՞ կարիցէ պատմել մի առ մի զգործս սիրոյ ողորմութեան նորա, որ էր զի 'ի ձեռն սպասաւորացն բաշխէր, և բազումայն էր զի անձամբ, որպէս զի մի՛ ինչ վրիպեսցի 'ի հրամանաց իւրոց։ Եւ այս հայրապետութիւն սէր խնամոց նորա առ ժողովուրդն, անդատին 'ի մանկութենէն փայլէր 'ի նմա. քանզի յաճախ որսոց և զբօսանաց աղաղաւ երթայր ծպտեալ՝ 'ի նպաստ և 'ի միխիթար եղկելեացն և կարօտելոց, միակ զուարճութիւն իւր զայն վարկուցեալ։

Այս է նկարագիր բարուց Լուդովիկեայ ԺԶ, և այս օրինակ վարուց նորա, զոր խռովիչք և սատարք ապստամբութեն, ազատութե անուամբ պարծեցեալք, 'ի մահ պարտաւորեցին իբրև զբռնաւոր և զթշնամի ազատութեան ժողովրդեան։

Այսպէս ահա վախճան էառ յայնժամ 'ի Լուդովիկոս ԺԶ հոյակապ կարգ նախնոյ և մեծի թագաւորութեանն Գաղղիոյ՝ որ փայլեցաւ պայծառ դարս երեքտասան, քան զամենայն թագաւորութիւնս Եւրոպայ։ Պորպոնեանց ընդ բազում դարս քաջութեամբ զդէմ կալեալ ահարկու թշնամեաց Գաղղիոյ, և 'ի պատերազմունս յարուցեալս 'ի վերայ նորա՝ նախանձու

դրացեալն՝ քաջութիւն վանեալ, և ընդարձակեալ էր զսահմանս աշխարհին։ Մինչդեռ անսասանելի թուէր թագաւորութիւնս այս և մշանջենաւոր, ոչ կարաց տեսել մնալ ընդդէմ սերմանց ամբարշտութեան. մանաւանդ զի ոչ արիացաւ Լուդովիկոս ԺԵ հեղձուցանել զսերմն անօրէնութեան յերկունս անդ չարութեան, և եթող գալ 'ի ծնունդ և յաճումն՝ որ զամս յիսուն փիլիսոփայութեան անուամբ ճարակեալ ընդ հանուրս, թիւրեալ խանգարեաց զմիտս հասարակաց, և զազգին զգեղեցիկ գեղեցիկ յառաջամանութիւնս. և յետ խորարմատ հիմնելոյ 'ի սիրտս ամենեցուն զարհամարհանս ընդդէմ ամենայն իշխանութեանց, 'ի բաց էառ զպատրուակն, և 'ի մի հարուած տապալեաց զգահ Կլովիսայ և զպաշտօն Աստուծոյ նորա։

ԳԼՈՒԽ Ը.

Միքէանէլ պէպուէանց Եւրոպայ ընդդէմ Գաղղիոյ։

ԵՐԵՔԱՆ մահ տարաբաղդ արքային Լուդովիկեայ ԺԶ ահաբեկ արար զԳաղղիա, և սոսկմամբ հանդերձ ծանրացաւսումն շարժեաց զԵւրոպա։ Ի միտ առին խռովարարքն թէ պատերազմ անհրաժեշտ 'ի վերայ կայր և ոխերիմ թշնամութիւն ընդ թագաւորս Եւրոպայ, և ձեռն 'ի գործ առնէին 'ի պատրաստութիւն։ Ռոլան մարտիշ-

խան հրաժարեցաւ ինքնին յիշխանութենէն, և փաշ տեղակալ նորա իբրև անբաւական ոք լուծաւ 'ի պաշտամանէն, և ամբարձաւ 'ի տեղի նոցա Պէօրնոնվիլ՝ Էաս անուանեալ Գաղղիոյ, 'ի տեսչութիւն իրաց պատերազմի։

Քանզի զարթեաւ յայնժամ Անգղիա 'ի թմբրութենէն, և մեծանուն Փիթ՝ որոյ 'ի ձեռս էր երասանակ պետութեանն՝ դըրդեալ շարժեաց գոգցեաւ զԵւրոպա ողջոյն՝ ընդդէմ Գաղղիոյ վնասակար թշնամւոյ խաղաղութեան հասարակաց։ Ոչ ինչ զարհուրեալ երկեան Գաղղիացիք տեսանելով ըզբազմութիւն թշնամեաց իւրեանց. քանզի փքացեալ գոռոզացեալ առաջին յաղթութեամբքն և մեծութեամբ զօրութեան իւրեանց՝ խորհէին պատրաստել երեք հարիւր հազար զօրականս և գանձ բազումժողովեալ յընչից վտարանդեաց և կոտորելոց, և զժողովուրդն ողջոյն իբրև զմի այր զինեալ ունչս առնելով սպառնալեացն։ Թողին խառվիչք զգժտութիւն երկպառակութեան յիւրեանս, և զամենայն ուշ մտաց իւրեանց 'ի պատերազմն առաջիկայ դարձուցին։ Գունդ մի յիսուն հազար զօրաց առաքեցաւ մօտ 'ի Պիրենեանս, և այլ գունդ քառասուն հազար մարդկան 'ի վերայ Ալպեանց. և քսան հազարք յեզերս Մօզէլայ, և բանակ մի ստուար ութսուն հազարաց արանց՝ պահել զափունս Հռենոսի, նոյնչափ և 'ի Պոյէր և 'ի Բեղգիա։ Այս վերջին բանակ զօրաց մերկ, բոկոտն, անպաշար և անթոշակ, աս-

պատակելով յերկիր Թշնամեաց՝ գտանէին
իւրեանց կերակուր : Բեղգիացիք՝ որ 'ի
սկզբան իբրև զաղատիչս ընկալան զԳաղղիա-
ցիս, տեսեալ զնոսա տպա Թշնամիս կրօնից
իւրեանց, ապականիչս տաճարաց և աւե-
րիչս, և ապականութեան սերմանիչ, ա-
տէին գարշէին 'ի նոցունց :

Գումարեցան յայնժամ դաշնակից պե-
տութիւնքն, Սպանիացիք և Բիէմոնդեցիք
'ի վերայ Պիրենեանց և Ալպեանց, Բրուսք
խաղացին 'ի վերայ Մոգունտիոյ, և Աս-
տրիացիք գային ազատել զքաղաքն Մայէս-
Թրիխ 'ի պաշարմանէ. իսկ Անգղիացիք ե-
կին 'ի պաշտպանութիւն Հոլանտիոյ :

Տիւմուրիէ որ յետ բազումս հակառա-
կելոյ ընդ փոխահիւպատիցն առաքելոց 'ի
խռովչաց անտի 'ի Բեղգիա, ոչ ինչ կարե-
լով առնել նոցա՝ առաքեալ էր զօրք 'ի Հո-
լանտա, ոչինչ երկուցեալ կասեցաւ 'ի բազ-
մութենէ Թշնամեացն. այլ էառ Ճարտա-
րութեամբ քաղաքս քանի մի, սակայն և
ընդ հուպ կորոյս զամենայն. քանզի իշխանն
Քոպուրկ աւատրիական զօրք անցեալ ընդ
Պոյէր գետ՝ հալածեաց զԳաղղիացիս յԱ-
կուիսկրանայ, կոտորեալ 'ի նոցանէ վեց
հազար այր. անտի յառաջ խաղացեալ 'ի
Մայէսթրիխ հալածական տսրաւ և զբա-
նակն՝ որ 'ի Վալանսիէն, յորոց և տասն
հազար դասալիք 'ի Թշնամիս անդր հատուա-
ծեցան : Ի նմին ժամանակի խլեսէր և Բեղ-
գիա յապստամբութիւն :

Տիւմուրիեայ տեսեալ զձախողել խոր-

հրրդոցն, մեծաւ ցասմամբ ձեռն էարկ 'ի գործ ադիր պաշտօնեայս խառվչացն. Գաղղիոյ, արգել զժողովուամկին, յորդորեաց զրեղիացիս բողոքել ընդդէմ աւարառուաց իւրեանց, և ինքն գրեաց թուղթ լի սպառնալեօք առ ազգային դաշնակցութիւնն ընդդէմ Ժաքոպէնաց: Յետ այսորիկ գումարեալ արս քառասուն և հինգ հազար, պատրաստէր մարտիւ պատերազմաւ զառաջն առնուլ արշաւանաց թշնամեաց. և զաջ թև բանակին տուեալ 'ի Վալանս և զահեակն 'ի Միրանտա, խաղաց 'ի վերայ Նէրվէնտ և Օպէրվէնտ գիւղից՝ յորս նստէին թշնամիք: Երիցս հարեալ զնոսա կալան զՆէրվէնտ, և երիցս հարեալ 'ի նոցունց յետս կասեցան: Եւ իբրև հանդարտէին Գաղղիացիք մնալով վաղուեան աւուրն, յարձակեցան Աւստրիականք յահեակ թև բանակին՝ յորում զօրավարէրն Միրանտա, և խուճապեցուցին զնոսա: Տեսեալ Տիւմուրիեայ զվերահաս վտանգն, և երկուցեալ թէ գուցէ փակեսցին զօրքն 'ի թշնամեաց՝ զտեղի էառ, և խառնեալ ընդ գնդին Միրանտայ էհար զնահանջ, և դարձ արար 'ի Պրուքսէլ:

Եւ յետ այնորիկ ձեռն 'ի գործ արար 'ի գլուխ տանել զլոորհուրդն՝ զոր 'ի բաղմաց հետէ երկնէր 'ի մտի. քանզի կուսակից գոլով 'ի ծածուկ դքսին Աւրեղեանի, նկըրտէր մեծայոյս խորհրդով ամբառնալ զնա 'ի գահ Լուդովիկեայ, վասն որոյ և յաշխարհէ անտի Բեղգիոյ մեծամեծս սպառնայր Ժաքոպէնաց գալ պաշարել զՓարիզ: Մարթ

էր թերևս Տիմուրիեայ յաղթութիւն պերճացեալ՝ 'ի գլուխ տանել զսպառնալիս իւր, և ահընկէց լինել 'ի խռովիչս. այլ յետ պարտելոյն արհամարհեցաւ զօրութիւն նորա, և բազումք 'ի զօրացն թօթափեցան 'ի նմանէ, և այնուհետև յանդգնութեան էր գործն և յանհնարից։ Այլ նա ոչինչ անյոյս լեալ, բանագնաց եղև գաղտաբար առ Քոպուրկ զօրավար կայսերի՝ թողուլ նմա զԲեղգիա. և ինքն ժողովեալ զիւրսն 'ի Հոլանտայ՝ եթող զՊրուքսէլ, և չու արար խաղաց 'ի տահմանագլուխս Գաղղիոյ. և 'ի դաշտի ուրեք զակիշ ածեալ մնայր, յուսացեալ յօգնականութիւն Ժիրոնտեանց, որով և զնոսա իսկ էարկ յիւր խորխորատ անձողպրելի։

ԳԼՈՒԽ Թ.

Սոսկանալ Նէրֆին խռովութեան Գաղղիոյ ընդ Ժոֆրոյէնս և ընդ Ժիրոնտէանս։

Մինչդեռ արտաքուստ աշխարհակալել թուէր Գաղղիա, Նէրֆին գժտութիւն երթայր և զօրանայր. ատելութիւն հակառակութեան ընդ Ժիրոնտեանս և ընդ Լեռնականսն բորբոքէր և բողոք նոցա բարձրանայր ընդդէմ միմեանց իբրև զմատնչաց աղատութեան ազգին, ուշ եդեալ իւրաքանչիւր 'ի կործանումն հակառակորդին մինչև վառել զինուք 'ի գիշերի միում 'ի կոտորել այր զընկեր։ Լեռնականք ամբաստան լի-

նէին զԺիրոնտեանց իբրև զմատնչաց հասա-
րակապետութեան և իբր թէ կամէին աշ-
խարհաբաժին առնել զԳաղղիա 'ի մէջ օտար
պետութեանց։ Իսկ Ժիրոնտեանքը բողոք
բարձեալ ընդդէմ Լեռնականաց՝ զայս և եթ
ասէալ յեղյեղէին, թէ ծարաւիք էին նոքա
արեան իւրեանց, և խորհէին զՄարա ըզ-
Տանթոն և զՌոպէսպիէռ եռապետս բըռ-
նակալս կարգել, և տալ նոցա բաժանել
յիւրեանս զԳաղղիա լցեալ արեամբ և աւե-
րակօք, և ապա Ճարտարագունին 'ի նոցանէ
Տանթոնի արկեալ և զնոսա ընդ սուսերբ՝
բռնակալել միահեծան զպետութիւն։ Այս-
պէս մահու չափ կռուէին նոքա ընդ Տան-
թոնի՝ որ թերևս խոհականագոյն գոլով
քան զամենեսին միջնորդ հաշտութեան
կայր 'ի մէջ կողմանցն երկպառակելոց, և
հակամիտագոյնս թուէր 'ի Ժիրոնտեանս,
զի մի ռամիկն զօրասցի. այլ սակայն բուռն
խստութեամբ Ժիրոնտեանց յաղթանակէին
միշտ Լեռնականք։ Եւ յետ գուժի պար-
տութեանն յԱկուիսկրանս խրախուսեաց
վերստին Գաղղիա, և վառեցան ամենեցուն
ոգիք ձայն տալով միմեանց 'ի զէն, զի պա-
տերազմս որ առաջի կայ՝ կշռեսցէ զբաղդ
աշխարհիս։ Եւ 'ի գաւառաց գաւառաց
եկին ժողովեցան 'ի մի, դադարեցին տեսա-
րանք խաղուց, սաւառնէր սեաւ դրօշն,
և խնդրէին մինչչև չու արարեալ ընդդէմ
թշնամեաց, ընկճել զնոսա ի թշնամին,
հարկս կարգեալ ծանուցեալ 'ի վերայ Ճոխոց,
և ատեան նոր 'ի դատ քննութեան մատնը-

չաց։ Հանաւ այս խնդիր նոցա 'ի Ժողովն. Ժիրոնտեանք ոգւով չափ հակառակ զինեցան. ցասեաւ ընդ այս Ցանթոն, և խոչընդոտն օգտից պետութեան և թշնամիս հրատարակեաց զնոսա։ Եւ Ազգային դաշնակցութիւն վճռեաց կանգնել զԱտեանն խռովչաց (1), և կարգել հարկս ըստ իւրաքանչիւր պայմանի, մինչև հազիւ Ժիրոնտեանց ապրել 'ի մոլեգնութենէ Լեռնականացն և Ժաքոպէնաց։

Յետ աւուրց ինչ եհաս լուր պարտութեանն Նէրվէնտեայ և կորստեան Բելգիոյ, և այլ նամականի 'ի Տիւմուրիեայ լի սպառնալեօք ընդդէմ Ազգային դաշնակցութեան, ուր հռչակէր զանձն Նոր Լաֆայէթ ընդդէմ հասարակապետութեան Գաղղիոյ։ Դղրդեցան խռովարարքն ընդ այս լուր, և հաստատէին կասկածք զԺիրոնտեանց. վճռեցին Լեռնականք 'ի ձայն քարոզի հանել 'ի վաճառ զինչս թշնամեաց հասարակապետութեան. և վճիռ մահու ետուն քահանայից տարագրելոց՝ որք դեռ ևս դեգերէին յաշխարհին, լրտեսել զտուն և ըղթիւ բնակչաց իւրաքանչիւր գրել 'ի վերայ գրանց, և այլս այսպիսիս։ Դարձեալ առաջի արարին Ազգային դաշնակցաց կարգել ատեան դատաւորաց 'ի փրկութիւն աշխարհին, որում տացի իշխանութիւն անարգել, որպէս երբեմն իշխանապետաց Հռովմայ։ Իբրև եկին նուիրակք Ազգային դաշնակցու-

(1) Tribunal révolutionnaire.

թեան 'ի բանակն Տիւմուրիեայ ձերբակալ առնել զնա, Տիւմուրիէ ցրտութեամբ ունկն եդեալ բանից նոցա՝ իշխանաբար հրամայեաց կալանաւորել զարան։ Եւ յասել ուրուսն 'ի նոցանէ խրոխտալով. "Ձանա-չեցէք ապա զատեան դաշնակցութեան", "Եւ զի՞նդ ոչ, ասէ Տիւմուրիէ, գիտեմ զի ալիք արեանց են նոքա"։ Այլ դք յուշ էած նմա զհռովմէական զօրաց զհլութիւն 'ի հրամանս հասարակապետութեան. իսկ նա ասէ. "Զի՞նչ խօսիք դուք ինձ զհռովմայ. օրինակաւ առաքինութեանց նոցա պատրուակեմք մեք զեղերուն մեր. Հռովմ ոչ սպան զԹագաւոր իւր զՏարկուինիոս. Հռովմ հասարակապետութիւն էր բարեկարգ. չէին 'ի նոսա ոչ ժաքոպէնաց վոհմակ, և ոչ ատեան խռովչաց։ Ցանիշխան խռովութեան եմք, և վագերք մարդախանձք խնդրեն զգլուխ իմ, այլ ոչ տաց նոցա"։ Եւ անդէն ձերբակալեալ զարան, մատնեաց 'ի ձեռս Քոպուրկայ։ Այլ և ինքն զօրավարն Տիւմուրիէ ոչ յետ բազմաց մատնեալ 'ի սպայից, և Թողեալ 'ի զօրաց իւրոց, փախստեայ անկաւ առ Գերմանացիս հեծելովք ոմամբք։ Եւ այսպէս ազատարարն Գաղղիոյ տարագիր 'ի հայրենեաց, զկնի քսանամեայ վշտագին վարանդի կենացն մեռաւ թշուառութեամբ։

Այլ իբրև ազդ եղև Ազգային դաշնակցութեանն գերութիւն նուիրակայ իւրոյ, գին եհատ գլխոյ Տիւմուրիեայ, և զօրաժողով եղև արանց քառասուն հազարաց ընդ

առաջնորդութեամբ Տամիլիէրայ՝ առաքեալ զնոսա 'ի Բեղգիա։ Ժաքոպէնք բոլոր բարձեալ ամբաստան լինէին զԺիրոնտեանց և զդքսէն Աբրեղիոնի իբրև զկուսակցաց Տիմուրիեայ։ Նմին հակառակ և Ժիրոնտեանք ցասմամբ մեծաւ զամբաստանութիւն ընդդէմ նոցին Լեռնականացն դարձուցանէին, և քան զամենեսեան ընդդէմ Տանթոնի, որ սակաւ մի յառաջ առաքեալ 'ի Բեղգիա՝ բաժանակից էր ալափեալոյ աշխարհին և խորհրդակից իսկ Տիմուրիեայ։ Ի մոլեգնութիւն բարկութեան բրդեալ Տանթոնի, եցոյց զԺիրոնտեանս 'ի սկզբանէ անտի ձեռնտուս լեալ թշնամեաց. և երդուաւ անհաշտ ատելութիւն ընդ նոսա մինչև ցմահ։

ԳԼՈՒԽ Ժ.

Զինել գաւառաց Գաղղիոյ ընդդէմ խռովեալոյ աշխարհին։

ԶՆԵՐԲԱԿԱԼԵՆՔ յայնժամ գուքսն Աբրեղիոնի ընտանեօք իւրովք և արկաւ 'ի բանտ 'ի Մարսիլիա։ Կարգեցաւ և Ատեան Փըրկութեան աշխարհին՝ քննել զամբաստանեալսն։ Եկաց ատեանս յինն գաւառաց՝ ոչք ամսոյ ամսոյ փոփոխէին. մեծ էր խշխանութիւն նոցա և անսահման։ Առաջինք կացին Պառէր, Տէլմաս, Պրէար, Քամպոն, Ժանտէպրի, Տանթոն, Կիթոն Մորվէօ, Թրէյլաս, Լաքրուա։ Ոչինչ ձեռնամուխ եղեն յայս Ժիրոնտեանք, և մերժեցան իսկ

յամենայն պաշտամանց տէրութեան և իշխանութեան զօրուն. այլ էին դեռ ևս 'ի Թիւս դաշնակցաց Ազգային Ժողովոյն, ուր հանճարոտն իւրեանց և բազմութեամբ հզօր էին ընդդէմ հակառակորդաց իւրեանց. և Ճարտարախօսքն 'ի նոսա Վէրնիոյ և Կասէ իմաստուն պերճախօսութեամբն 'ի դերև հանէին զմոլեգնութիւն Մարաթայ և զնենգապատիր խարդախանս Ռոպէսպիէռայ։ Մարա վասն դրդռելոյ զԺողովուրդն ընդդէմ Դաշնակցաց 'ի դատ կոչեցաւ. Սանքիւլոթք վառեալ 'ի նիզակ և 'ի տէգ, և կանայք վատանշանք յաղթանակաւ պսակեալ տանէին զնա բարձեալ 'ի վեր, 'ի Ժողովն դաշնակցաց. "Ածաք, ասէն, զքաջն Մարա, զբարեկամ Ժողովրդեան, որպէս և Ժողովուրդն բարեկամ է նորա. եթէ ըզգլուխ Մարաթայ խնդրիցէք, նախ զմերն հատջիք,,։ Անդ փառաւորեալ Մարաթայ 'ի Լեռնականաց՝ որոտայր ընդդէմ Ժիրոնտեանց։ Սակայն մեծ մասն Գաղղիոյ 'ի Ժիրոնտեանս յանկէին, յիմաստուն վարչութիւն հասարակապետական. որպէս և հարաւային գաւառք Գաղղիոյ կուսակիցք Ժիրոնտեանց խլրտէին 'ի մարտ, Լուգդոն, Մարսիլիա և Պորտոյ, սպառնացեալ խաղալ 'ի վերայ Փարիզու առ 'ի փրկել զնուիրակս իւրեանց. իսկ Նորմանտիա և գլխաւոր քաղաքն Ռուան, կուսակիցք նորոյ սահմանադրեալ թագաւորութեանն էին։ Եւ արևմտեան գաւառքն Փոքրն Բրետոնիա, Փուաթու և Անժու, կուսակիցք նախնի թա-

գաւորութեան, համարձակագոյնս ամբառ-
նային զդրօշն հին՝ խրախուսեալք 'ի հաս-
տատութիւն պետութեան ազնուականաց
և կղերց։ Սոյնպէս և Վանդէա գաւառին
բնակիչք. այլ արժան է զարիական քաջու-
թեանց սոցա 'ի սէր կրօնից ճշմարտութեան,
և զտիրասէր խորհրդոց 'ի հաստատութիւն
գահուն, ինքնուրոյն կարգել բանս։

Գումարեցան 'ի Փարիզ պատանիք ինք-
նակամ, որոց զօրավար եկաց Սանթէռ,
ընդդէմ Վանդէացւոց։ Երթային և յաճա-
խէին վտանգք հասարակապետութեան,
չորեք հազար 'ի զօրաց նորա սպանան և
գերի անկան 'ի ձեռս Վանդէացւոց, և քա-
ղաքն Ֆոնթենէյ առաւ 'ի նոցանէ, նոյնպէս
և Մաշքալ՝ ուր հինգ հարիւր քառասուն
ոգիք անկան տապաստ։ Եւ օտար թշնամիք
ոտն առ ոտն յառաջ խաղային 'ի սահմանս
Գաղղիոյ։ Ընդ այս գոյժ դառնութեան,
գրգռեցան վերատին հակառակք միմեանց
Ժիրոնտեանքն և Լեռնականք, զմիմեամբք
արկանելով զպատճառս աղէտից Գաղղիոյ։
Ամենայն ուշմտաց Լեռնականացն 'ի բռնու-
թիւնս և 'ի խռովութիս էին հաստատեալ.
և Ժիրոնտեանք նոցին հակառակք՝ ոգւով
չափ ջանային զառաջս առնուլ նոցունց.
որով Ժողովն նոցա զնմանութիւն բերէր կըր-
կիսի սուսերամարտկաց, կամ մանաւանդ
զկաղալոց վայրագ գազանաց ծարաւելոց
յարիւն իրարաց։ Եւ ահա 'ի Ժողովոյ անտի
կարգելոյ 'ի Փրկութիւն աշխարհին ըստ
խորհրդոյ Պառէրայ առն, Ճարտարի և ի-

մասանոյ, և ըստ առաջարկութեան Կատէի, կարգեցան Գործակալք երկոտասան 'ի քրնութիւն իրաց հասարակաց և 'ի խնդիր դաւադրաց աղատութեան ազգին։ Երկոտասան գործակալքս 'ի ժիրոնտեանց անտի էին՝ ամենեքին զօրավարք, որ 'ի սկզբան անդ ծանուցեալ զկամս ընդդիմութեան՝ լուծանէին զժողովն խռովչաց, սպառնալով և ռամկին թէ ընդ հուպ ընկճեսցեն և զԱտեանն որ 'ի Փրկութիւն հասարակաց։ Անխոհական էին գնացք նոցա, քանզի զօրաւոր էր յոյժ յայնժամ ռամիկն, և անմարթ ընկճել զնա։ Վասն որոյ գումարեալ և նոցա կարգեցին յիւրեանց անտի գործակալս, կանգնել յոտին զժողովն խռովչաց 'ի գրգիռ նորոց խռովութեանց։ Ազդ եղև ժողովոյ երկոտասան գործակալաց, և առաքեցին անդէն ձերբակալել զգլխաւորս 'ի նոցանէ, և զՀէպէր զվայրենամիտ և զանաստուած Ժաքոպէնն՝ որ յօրագիրս իւր գովէր զնորհուրդ ժողովոյն ապստամբաց, առ երագել զկոտորած երեքարիւրոց նուիրակաց։ Եւ Իշնար 'ի ժիրոնտեանց անտի յայտնի սպառնայր ժողովրդեան, և ասէր. "Երդնում 'ի դիմաց Գաղղիոյ ողջոյն, զի եթէ գլուխս ամբարձցէ ռամիկն ընդդէմ Ազգային դաշնակցութեան՝ ոչ ևս իցէ Փարիզ, և լուծցէ ազգն զվերէժ իւր. խնդրեսցի Փարիզ թէ առ որովք ափամբք Սենայ կառուցեալ էր, և ոչ գոցի"։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յառնել ռամկին և Ժաքոպէնաց ընդդէմ Ժիրոնեանց։

Ընդ այս սպառնալիս Ժիրոնեանց՝ ռամիկն ողջոյն և Ժաքոպէնք զէն առեալ, եկին պաշարեցին զԺողովն դաշնակցաց։ Երկուցեալ Ժողովոյն ազատ արար զՀէպէրն և զկուսակիցս նորա, խոստացեալ բառնալ և զատեան երկոտասան գործակալաց։ Այլ իբրև նոքա ցրեցան, յաւուրն երկրորդի բանիւք Լանժուինեայ յեռս դարձոյց զվճիռն՝ զոր էր յերեկն։ Որով առաւել ևս զայրացեալ ռամկին և Ժաքոպէնացն՝ յանկարծ 'ի միում դիշերի հնչեցուցանէին զզանգակս և զթմբուկս 'ի մարտ, փակէին զպատանէշս, յարուցանէին զԺողովուրդն, կացուցեալ իւրեանց զօրավար զՀանրիոյ զառաջնորդ Սանքիւլոթացն գնդի՝ զայր թանձրամիտ և արբշիռ, որ ուռճկօք Ժողովեալ զաղքատս Ժողովրդեան՝ զինեաց զամենեսին, և եկն պաշարեաց զԺողովն դաշնակցաց։ Դարձեալ ահաբեկ լեալ Դաշնակցացն, ըստ խորհրդոյ Տանթոնի բարձին և զԺողով երկոտասան գործակալաց. պնդէր Ռոպէսպիէռ սալ 'ի Ժիրոնեանց անտի և զարս երեսուն՝ զոր խնդրէին ապստամբք, այլ հակառակ կացին անգութ խորհրդոյս կուսակիցք Տանթոնի։ Իսկ ռամիկն յաղթութեամբս

ոչ շատացեալ, պատրաստեցաւ վերստին յայլ նոր խռովութիւն. և եկեալ պաշարեաց զատեան Ժողովոյն, խնդրելով զարս գլխաւորս 'ի Ժիրոնտեանց: Խռովեցան Դաշնակիցք և յատեան գումարեցան. բազումք 'ի Ժիրոնտեանց թագեան 'ի տունս բարեկամաց իւրեանց, և ոմանք եդին 'ի մոի մեռանել անդէն 'ի Ժողովի. և արիասիրտն Լանժուինէ անվեհեր քաջութեամբ 'ի խռովութեան անդ կալեալ պնդապէս զբեմն՝ յորմէ քարշէին զնա հակառակորդքն, յանդիմանեաց զվատութիւն Ժողովոյն՝ որ մատնտու իւրումն իշխանութեան եթող զայն 'ի խառնիճաղանճն, և խնդրեաց բառնալ 'ի Փարիզէ զնշխանութիւն խուժանին: Հասին յայնժամ նուիրակք ռամկին, ծանուցանել զկամս Ժողովրդեան ընդդէմ Ժիրոնտեանց՝ զոր թշնամիս ասէին հասարակապետութեան և մատնիչս, սպառնացեալ զի թէ ոչ մարթասցին Դաշնակիցք փրկել զԺողովուրդն, գիտասցեն նոքա փրկել անձամբ զանձինս: Լեռնականք գովեցին ծափահար զնդիրն. և Դաշտականացն երկուցեալ 'ի դէպ վարկան տեղի տալ կամաց նոցա. և ոչ ոք էր որ անասայր բանից Ժիրոնտեանց: Աղմկեցաւ ատեանն ողջոյն, և ձայն աղաղակի ամբառնայր 'ի բազմաց ձերբակալել զԺիրոնտեանս: Կատէ 'ի Ժիրոնտեանց անտի եբաց զբերան իւր և իրաւունս խնդրէր. իսկ Լըժանտր Ժաքոպէն 'ի Լեռնականաց անտի կալաւ զվիրոլից նորա, և չտայր ձիկ հանել: Յայնժամ Լանժուինէ

եալ 'ի բեմն յատենախօսեալ. և իբրև ձգեաց Լրժանտը զձեռն իւր և 'ի վայր կործանեաց զայրն, այս բռնութիւն վառեաց զոգի ժողովականացն. գոչեցին ամենեքեան միաբերան, "Ելցուք 'ի տեղւոջէս, ընկճեսցեն զմեզ աստ, խորտակեսցուք զսպառնալիս զէնս թշնամեաց մերոց ,, : Ելին անդէն 'ի միջոյ Լեռնականաց՝ որք յերկուս տողեալ աստի և անտի անշուշտք 'ի յաղթութիւն ծաղր առնէին զնոքօք : Եւ 'ի մուտս անդ արքունի գաւթին արգելին զանցս նոցա գունդք ռամկին՝ որոց առաջնորդ էր Հանրիոյ : Նախագահ ժողովոյն Հերոլ դողդոջուն ձայնիւ հրամայեաց նոցա տեղի տալ՝ թողեալ յազատութեան զժողովն դաշնակցացս : "Դարձիր, ասէ Հանրիոյ, 'ի տեղի քո. խլխիցես հրամայել ժողովրդեան աղմկելոյ. ժողովրդեան կամք այս են, տալ 'ի ձեռն նոցա զդաւաճանն, տուր զնոսա 'ի բաց. ապա թէ ոչ, դարձիր 'ի տեղի քո ,, : Զայս ասացեալ խրախուսեաց զիւրսն. "Ի զէն, զօրականք, 'ի զէն ,,. և անդէն 'ի զէն դիմեալ ուղղեցին զհրացանս և զթնդանօթս ընդդէմ նուիրակաց ժողովոյն : Նոքա խռովութեամբ լցեալ խոյս ետուն 'ի պարտէզն, այլ և անդ գտին զդրունսն կալեալ 'ի գնդէ Սանքիւլոթացս առաջնորդութեամբ Մարթայ. որոյ ձայն տուեալ առ փախստականսն ասէր. "Այս է հրաման ժողովրդեան առ ձեզ, դառնալ 'ի տեղիս ձեր՝ զոր թողէք վատութեամբ ,, : Մտին նոքա խուճապաւ 'ի նեղքս, և սճապարեցին ըստ

խնդրոյ Ժողովրդեան տալ զվճիռ ընդդէմ երեսուն և մի նուիրակացն Ժիրոնտեանց և երկուց պաշտօնէից պետութեան։ Իսկ Մարա առ խնդին գիրկ ընդ խառն լեալ սիրով ընդ Հանրիոյ, Ազատարար հայրենեաց կոչէր զնա։ Ոմանք 'ի պարտաւորելոց ասի Ժիրոնտեանց խոյս եւուն 'ի միջոյ, և այլք կապանօք եդան 'ի բանտ, մեալով մահուան իւրեանց։

Այսու յաղթութիւն բռնակալեցին Լեռնականք 'ի վերայ Ժողովոյ Դաշնակցաց, և զբազմաժամանակեայ զիղձս մտաց յարդիւնս ածեալ՝ հաստատեցին զանիշխանութիւն 'ի Գաղղիա, բաժանակից առեալ զխառնիճաղանճն 'ի յանձանձանս պետութեան։ Այլ այս զօրութիւն նոցա և իշխանութիւն ընդ հուպ բաժանեցաւ յերիս հերձուածս. առաջինն Հեպերեանցն, սաստպայման վառելոց 'ի սէր խռովութեան անասաստուած մտօք. երկրորդ Տանթոնեանց՝ որոց չափ և սահման էր յամենայնի. երրորդ Ռոպէսպիէռեանցն՝ որ ժամանակեայ ինչ կամէին գնել իշխանութիւն անհաստատ։ Անկան սոքա մի ըստ միոջէ՝ լցեալ զաշխարհ անլուր եղերամբք. անկան 'ի սրոյ իրերաց՝ թողեալ յիշատակ չար 'ի վերայ երկրի և օրինակ ահաւոր բարկութեանն Աստուծոյ, որ 'ի սաստիկ ցասման իւրում թողու զամբարիշտն 'ի կամս անօրէնութեանն ազատ համարձակ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Վասն փաղաքական կառուցի ընդ ժողովրդեան սամ-
կավարս և ընդ ժիրոնդիանս, և մահ Մարատայ։

ԺԻՐՈՆՏԵԱՆՔ խոյս տուեալ 'ի ձեռաց խաւնիճաղանճ խռովչաց, և անցեալ 'ի գաւառս պետութեանն, յուզեալ յարուցանէին զնոսա ընդդէմ անիշխանութեան։ Ի Մարսիլիա և 'ի Լուգդոն կանգնեցին ատեան 'ի դատ քննութեամբ խռովասէր մարդկան, ձերբակալ արարին զգործակալս Ազգային դաշնակցութեան, և գաւառս առաւել քան զյիսուն ապստամբեցուցեալ՝ դլուխ ամբարձին, և պատրաստէին խաղալ ընդդէմ Ազգային դաշնակցութեան, զօրավար իւրեանց ունելով զՓելիքս Վիմֆէն։ Ի նմին ժամանակի երեսուն հազար շինականաց 'ի Սէվէն ամբարձեալ ընդդէմ խռովչաց Փարիզու զսպիտակ դրօշ թագաւորական՝ առին զՄանտ և զՄարվըժոլ, և խորհէին անցեալ միանալ ընդ Վանդէացիս, որ թագաւոր իւրեանց ծանուցեալ զԼուդովիկոս ԺԷ, վաթսուն հազարաւ առաջնորդ իւրեանց ունելով զՇաթըլինոյ, հարին ըզհասարակապետականս 'ի Սոմուր, և անտի խորհէին խաղալ 'ի Փարիզ։ Նոյնպէս և վտարանդի ազնուականք Գաղղիոյ ամենուստ դրօհ տային 'ի Գաղղիա. նոյնպէս և զօրք

դաշնակցեալ պետութեանց Եւրոպայ տի-
րելով գաւառացն մնէին յաշխարհն։

Յայսպիսի յուսահատ բաղդ ցայնվայր
չէր անկեալ խռովարարացն Գաղղիոյ. հրն-
գետասան միայն գաւառ 'ի ձեռս նոցա
մնայր, Գաղղիա ձեղքեալ 'ի պատերազմ
քաղաքական ընդ ծով և ընդ ցամաք, և խոն-
ջեալ ոգեսպառ 'ի պակասութենէ հացի.
զօրականն լքեալ, մերկ, սովալլուկ, անզօ-
րավար. կարգ տեսչութեան և ոչ մի. ար-
տաքին թշնամիք լարաբաժին առնել զաշ-
խարհն խորհէին, և իւրքն վտարանդիք՝
խռովութիւն և քաղաքական պատերազմաւ
ածել զնա յանձողոպրելի կործանումն։
Զարմանք իսկ են տեսանել, զի Եւրոպա
ողջոյն ձեռնտու և դաշնակից իւր ունե-
լով զջորրորդ մասն աշխարհին Գաղղիացւոց,
պարտեալ խոնարհէր առաջի ապստամբու-
թեանն. քանզի ապստամբացն ոգի վա-
ռեալ 'ի վտանգ անձողոպրելի կորստեան՝
որ առաջի կայր նոցա եթէ ընկճէին, ոչ
խնայէին այնուհետև յարիւն իւրեանց. իսկ
թշնամիք երկպառակեալք 'ի խնդիրս շա-
հու, ոչ զթագաւորութենէ ինչ Գաղղիոյ
փոյթ լինէին և ոչ զաշխարհէն, այլ թէ ի՞ւ
զձեղքեալն և զկործանեալն պետութիւն
աւարեացեն յիւրեանս. վասն որոյ և նե-
ղէին յոյժ զվտարանդիս Գաղղիացւոց՝ չթո-
ղեալ նոցա մուտ յաշխարհս նոցին, և մա-
հու եդեալ պատուհաս՝ որ ոք կամեսցի 'ի
Վանդէացիս անդր անցանել։

Մինչդեռ դանդաղէին թշնամիք խռովա-

բարք, սահմանեցին զնեբքին կարգ տեսչութեան աշխարհին խառն ընդ ռամկապետութեան, և զօրացեալ յոյժ ժաքոպէնք, հանին զօրս ընդդէմ մեծի մասին Գաղղիոյ 'ի գաւառաց յինանից համախոհից ժիրոնտեանց։

Յայնժամ տապարէզ ընդարձակ բացաւ արիւնրռուշտ մարդկան. և մինչդեռ օր ըստ օրէ իբրև զգազան մարդախանձ յաւելոյր 'ի կատաղութիւն իւր Մարա, 'ի ձեռն աղջկան միոյ բարձաւ 'ի կենաց։ Օրիորդս այս այրասիրտ Շարլոթ Քորտէյ անուն, ծնեալ 'ի Նորմանտիա, սիրող հասարակապետութեան, և կուսակից ժիրոնտեանց, եդ 'ի մտի ազատել զաշխարհ իւր 'ի ձեռաց բռնաւորին և թողուլ իւր անուն անմոռութեան իբրև զնախնեաց քաջուհեաց։ Եկն 'ի Փարիզ, և խնդրեաց տեսանել զՄարա, որ հիւծեալ խառնագնաց կենաքն և բորոտեալ, 'ի բաղանիս կայր յայնժամ։ Եմուտ առ նա Շարլոթ, և խօսեցաւ առ նա վասն ժիրոնտեանցն փախուցելոց 'ի Նորմանտիա. և Մարա փութացեալ հարցանէր ստիպաւ զնոցանէ, և սպառնայր թէ ընդ հուպ լուծցեն նոքա զարժանաւոր պատուհաս։ Պատասխանի ետ քաջուհին՝ աղջիկն, "Մօտագոյն ևս է քոյդ պատուհաս", և մխեաց զսուրն 'ի սիրտ նորա։ Գոչեաց վիրագն 'ի ձայն մեծ և փչեաց զհոգին (1793)։ Ընդառնեցաւ ածաւ Շարլոթ 'ի բանտ, և անտի յատեան դատաւորաց. այլ անվեհեր ամենևին և զուարթերես՝ մինչև հարցեալ

տայր պատասխանի, “Ես սպանի զՄարա”։ – “Զինչ զքեզ շարժեաց առ այդ”. – “Անօրէնութիւնք նորա”։ – “Եւ որ անօրէնութիւնքն իցեն”. – “Աղէտք հայրենեաց 'ի սկզբանէ անտի խառնուեալ յաճախեալք”։ – “Ո՞քեզ յորդոր յայդ գործս”. – “Ես միայն. քանզի կամեցայ ազատել զհայրենիս 'ի բռնաւորէն, և տալ երկրի զխաղաղութիւն”։ – “Եւ կարծիցես կորուսեալ այդուիկ զամենայն Մարաթեանս”. – “Ոչ”, ասէ քաջասիրտ աղջիկն տրամութեամբ, և զուարթութեամբ ընկալեալ զվճիռ մահուն, զոր դիմաք մեռանէր։

Այլ ոչ շինչն ընդ Մարաթայ արիւնահեղ խորհուրդք նորա. բազմավտանգ պայման պետութեան վառեաց զարիւնբռուշտ միտս ամբոխին. լացին զնա կականաւ իբրև զբարեկամ ժողովրդեան, և զմարմին նորա մեծափառ յաղթանակաւ ածին թաղեցին 'ի պարտիզի ժողովատեղւոյն Քորսիլիերաց, և զանդրիս նորա կանգնեցին 'ի հասարակաց տեղիս առ անդրեաք Լըփէլէթիէ Սէն–Ֆարժոյ արքայասպան անօրինին։ Եւ առաւել ևս բորբոքեցաւ կատաղութիւն ժաքոպէնաց, մանաւանդ յետ վատթարելոյ ժիրոնտեանցն 'ի Վէրնոն, և խոնարհելոյ արևմտեան գաւառացն 'ի հնազանդութիւն նորոյ կարգի տեսչութեանն։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Հանդէս պարէզարշ յիշատակի անկման Ռագաւորին 'ի Գահոյէն։

ԱՌՀՄԱՆԵՑԻՆ խռովարարքն ասն յիշատակի 'ի տաճարորդ աւուր օգոստոսի, յորում արկեալ էին զԹագաւորն յիշխանութենէն և բանտեալ։ Ի չորրորդ ժամու առաւօտուն ժողովեցան հանդիսականքն 'ի հրապարակ Պասդիլլեայ. ժողովն Դաշնակցաց, նուիրակք գլխաւորք ժողովոց, և ութսուն և վեց գահերէցք գաւառաց. և ժողովուրդն ողջոյն զինեալ կայր զմեծաւ աղբերբն՝ Վերածնութիւն կոչեցեալ։ Աղբիւրս այս էր արձան բնութեան մեծ, յորոյ 'ի սահանցն հոսէին ջուրք յաւազան ընդարձակ։ Ի ծագել արևու սկսաւ հանդէսն երգօք, և նախագահ Դաշնակից ժողովոյն առեալ բաժակաւ 'ի ջրոցն եհեղ յերկիր. և ապա արբեալ անսի էա ըմպել և միւսմ միւսմ 'ի գահերիցանց գաւառաց։ Զկնի ծաղրական արարողութեանս՝ խաղացին 'ի մարակոցս կոյս, շարժեցաւ և ժողովուրդն յառաջոյ, տանելով դրօշ ինչ՝ նկարեալ 'ի վերայ աչս նախախնամութեան։ Իւրաքանչիւր 'ի նուիրակաց Դաշնակցութենէ կրէր փունջ հասկաց 'ի ձեռին, և 'ի միջի նուիրակաց ոգիք ութ բարձեալ տանէին զտապանակ մի՝ բերելով 'ի վերայ զՄա-

տեան նորոյ սահմանադրութեանն և զիրա-
ւունս մարդոյ :

Իսկ զժողովով Դաշնակցաց պար առեալ
երթային գահերէցք գաւառաց, տողեալք
և միացեալք եռագոյն պարանաւ. իւրա-
քանչիւր 'ի ձեռն առեալ ոստ ձիթենւոյ 'ի
նշան հաշտութեան գաւառացն, և նեաս՝
որոց բազմութիւն զմիաբանութեան նոցա
զզօրութիւն նշանակէր : Զկնի նոցա գայր
խառնիճաղանճն բարձեալ զանօթս զանա-
զան արուեստից, և սայլ մի ունելով 'ի վե-
րայ զծերունի ոք ընդ պառաւ ամուսնոյն՝
զոր ձգէին որդիքն : Զկնի սայլին կառք պա-
տերազմիկ՝ ունելով 'ի վերայ սափոր մոխրոյ
անկելոց զօրաց 'ի մարտի : Եկաց չուն ա-
ռաջի սայլից բարձելոց զարքունի գաւա-
զանս, զթագս, զնշանս և զկնիքս ազնուա-
կանաց և զգորգս զարդարեալս շուշան ծաղ-
կօք : Ղուրջ եկին հանդիսականքն 'ի վերայ
մարտկոցացն, յորս գիւցազնուհիք, այսինքն
ջատուկ և լիրբ կանայք՝ նստէին 'ի վերայ
թնդանօթից. եա նոցա նախագահ դաշնակ-
ցութեան ճիւղ մի ձիթենւոյ : Հասեալ
ապա 'ի հրապարակ խառվից՝ զկայ առին ա-
ռաջի սայլին, յորս էին նշանք թագաւո-
րութեան և ազատանւոյ, և հուր հարին 'ի
նոսա : Պատառեցին ապա զքօղն ձգեալ 'ի
վերայ արձանի միոյ, և 'ի վեր երևեցաւ
դրօշեալն Ազատութեան : Անդ արձակումն
հրացանից նշան տայր խնդակցութեան, և
թռանէին յանկարծ յօդս բազմութիւնք
թռչնոց ունելով փոքրիկ դրօշս՝ 'ի ցոյց ա-
զատութեան երկրի :

Անտի չոգան 'ի դաշտն Արիսեան, և անցեալ յառաջոյ վիթխարի դրօշելոյն՝ որ առաջի առնէր զազգն և ընդ ոտիւք զդաշնակցութիւն հասարակապետութեան, մերձեցան 'ի Սեղան հայրենեաց։ Տողեալ կարգեցան առ սեղանո

ԳԼՈՒԽ ԺԴ.

Զօրանալ ռամիավարացն 'ի փէուլոնէան աշխարհին, կոտորած խաղաղասէր մարդկան, և ընկճել փաղափացն ապստամբելոց Լոգդունի և Թուլոնի:

Յետ այսորիկ բողոք բարձեալ խնդրէին ժաքոպէնք զմահ այնոցիկ՝ զորոց կասկածէին ընդդէմ ազատութեան հայրենեաց, և զժողովուրդն առ հասարակ զինել 'ի մարտ: Հանին յայնժամ զմեծ մատեանն Օրինաց հասարակապետութեան, յորում ծանուցանք 'ի վերայ Ճոխից կարգեցան հարկք և բաշխոյք ռամկին, և սահմանեցան ամենայն կարգք նորոյ հասարակապետութեն: Հանաւ և վճիռ սատակման Վանդէացւոց, և յաղարտ վարելոյ զերկիր նոցա առ հասարակ: Տուաւ և վճիռ կորստեան ամենայն Պորպոնեանց տոհմին, և Թագաւորականաց և Թշնամեաց ռամկապետութե, և ամենեցուն՝ զորոց լինիցին կարծիք ատելութեան ընդդէմ նորոյ տեսչութեանն: Նորոգեցին զարիւնարբու ատեանն Փրկութեան աշխարհին, և ընտրեցին փոխանակ առաջնոցն արս գաղանաբարոյս և մարդախանձս, զՌոպէսպիէռ, զՔուԹոն, զՍէն-ժիւստ, զՔոլլոյ-Տ'էրպուա, զՊիյլոյ-Վարէն, և զՎարրիէ. որք լցին արեամբ զԳաղղիա, ածին կուտեցին զբազմութիւն անմեղ մարդկան 'ի բանտս: Եւ զի պակասէին դա-

հիմք 'ի կոտորել զնոսա, հանին գունդս արիւնախանձ մարդկան և սփռեցին զնոսա 'ի դաւառս աշխարհին՝ ժողովել կուտել զնաղաղարարս 'ի մարդկանէ և զթշնամիս ապստամբութեան, և ոչ գոյր թիւ և համար կոտորելոցն։ Եւ չև ևս ինչ կարացեալ ստանալ քաջութեան Վանդէացւոց յետ երկար պատերազմաց, հանին զՀիւռ ապականել կործանել զդաւառն 'ի հուր և 'ի սուր։ Յետ այսորիկ սպանին զՔիւսդին զօրավար սուտ ամբաստանութեամբ առ 'ի ցուցանել զիբրեանց իշխանութիւն անսահման 'ի վերայ զօրավարացն. և Պառէր յատենին եհան հրաման այսպիսի. "Պատանիք, ասէ, երիտասարդք 'ի զէն և 'ի մարտ դիմեսցեն, արք կանամբիք կազմեսցեն զէնս և հանդերձեսցեն զպէտս պատերազմի. կանայք 'ի յօրինուած զգեստուց զօրաց և 'ի պատել զվիրաւորս պարապեսցին. մանկունք 'ի գզել զբամբակ և զբուրդ. ծերունիք 'ի հրապարակս խրախուսեսցեն զձեռս նոցա յարութիւն և զմիտս նոցա յատելութիւն բռնաւորաց և 'ի հաստատութիւն հասարակապետութեան։ Տունք հասարակաց փոխեսցին 'ի զինուորանոցս, և հրապարակք 'ի տեղի աշխատաւորաց։ Ամենուստ պաշարեալ է հասարակապետութիւնս, և Դաղլիա ասպարէզ մարտի"։ Անդէն 'ի գլուխ հանէին զՀիւռն, և Փարիզ լինէր գործատուն հասարակաց. գումարէին պատանիք յութ և տասանամենից մինչև ցքսան և հինգամեանս 'ի զէն, և կազ-

մէին հարիւր և քսան բիւր զօրականք 'ի չորեքտասան բանակս :

Թէպէտ և ընդ հուպ ընկճեցան բազումք 'ի գաւառաց յարուցելոց ընդդէմ խռովչացն, այլ ոչ իբրև զարևմտեանս դիւրաւ խոնարհեցան և հարաւայինք. յորս քաջութեամբ մեծահամբաւ հռչակեցան երկոքին քաղաքքն Լուգդոն և Թուլոն :

Լուգդոն քաղաք հզօր յետ Փարիզու՝ հալածեալ զԼեռնականն և զԺաքոպէնս, կարգեաց իւր հասարակապետութեան օրինաւոր. վասն որոյ զայրացեալ Ազգային դաշնակցաց առաքեցին զՏիւպուա զօրօք ընդդէմ քաղաքին. բնակիչքն լքեալ և անօգնական, պնդեցին զանձինս դիմակալել 'ի սպառ ընդդէմ թշնամեաց. կանգնեցին շուրջ պատնէշս 'ի պատուարս ամուրս, և վանեցին զպաշարիչս : Սոքա 'ի հեռուստ սկսան ռմբաձիգ լինել 'ի քաղաքն, այլ ոչինչ կարացեալ ստանալ քաջութեան պնդութեան բնակչաց քաղաքին՝ պնդեցին զպաշարումն : Տիրեաց 'ի քաղաքին սով՝ հարուած ահաւոր քան զսուր և քան զհուր, և էած զնոսա յողորմ պայման : Եւ տեսեալ քաղաքացւոց՝ թէ չէր այլ ևս հնար ժուժել մնալ 'ի նեղութս և անշուշտ կորուստ առաջի կայր յանձնատուր լինել 'ի թշնամին անողոք, արիագոյնքն 'ի նոցանէ ճեղքեալ զբանակն թշնամեաց՝ անցին ճողոպրել զանձինս 'ի Հելուետիա. այլ սակաւուց յոյժ եղև ապրել : Կէսք 'ի ձեռս անկեալ հեծելազունդին հասարակապետականաց, կորեան

չարաչար մահուամբ. և այլք ցրուեալ 'ի մերձակայ գիւղս, գանակոծ տանջեցան 'ի գիւղականացն։

Մին 'ի Լուգդոն հասարակապետա-կանքն, և առաջնորդք նոցա, Քուլթոն՝ որ ամբաստանեալ զդանդաղութէ Տիւղուայ յաջորդեալ էր զնա, և Քոլլոյ Տ'Էրպուա. առաջինն այր արիւնախանձ՝ ելից արեամբ զքաղաքն. և երկրորդն՝ կատակերգակ երբեմն արուեստիւ՝ յուշ լեալ նմա թէ զիարդ երբեմն արհամարհեցին զնա բնա-կիչք Լուգդոնի՝ ժամ պատեհ եգիտ վրէժ-խնդրութեան, հեղեղս արեանց խաղա-ցուցանելով 'ի քաղաքին։ Վճիռ եհան դաշ-նակցութիւնն ազգային 'ի սպառ ջնջել զապստամբ բնակիչս, յատակել զքաղաքն՝ թողլով միայն զտունս աղքատաց, զգործա-րանս և զհասարակաց շէնս, և անուն դնել մնացելոյ քաղաքին Աւան ազատեալ, և 'ի վերայ աւերակացն գրել զայս բան. Մարտ եղ Լուգդոն ընդ ազատութեան. Լուգդոն չկք 'ի միջի։

Եւ քանզի չև ևս էին հնարեալ զգործին զայն զահաւոր հատանելոյ զգլուխս բազ-մաց միանգամայն, ժողովէին զեղկելիսն 'ի մի վայր, և արձակմամբ թնդանօթի սատա-կէին միանգամայն. և ահեաց կոտորած նոցա զամիսս հինգ, մինչև յագեցան արիւն-արբու պաշտօնեայք Դաշնակցութեան։ Քանզի իբրև դարձաւ Քոլլոյ Տ'Էրպուա 'ի Փարիզ, ընկեր նորա Ռոնսին ծանոյց հրա-պարակաւ զի 'ի հարիւր քառասուն հազար

Լուգդունացւոց հնդեւտասան հազար միայն դտաւ հեռի յապստամբութենէ. և յառաջ քան զկատարումն ամսոյս, ասէր, դիակունք ապստամբացն հասցեն ընդ Հռոն գետ մինչ 'ի Թուլոն քաղաք:

Իսկ քաղաքն Թուլոն ոչ իբրև զմիաբանեալսն 'ի Լուգդոն՝ Ժաքոպէնաց միայն ընդդէմ կայր, այլ և համօրէն հակառակորդացն Թագաւորութեան. վասն որոյ համարձակագոյնս 'ի կողմն լեալ Թագաւորութէ, ընկալաւ իւր 'ի Թագաւոր զԼուդովիկոս ԺԷ, և կոչեաց 'ի Թիկունս զԱպանիացիս և զԱնգղիացիս: Զայրագնեցան յոյժ խռովիչքն ընդ այս պետութիւն դաշնակցացն, և զօրքն որ նուաճեցին զԼուդոն խաղացին անտի 'ի վերայ Թուլոնի և նստան զքաղաքաւն: Ամենուստ հրձիգ եղեն 'ի նա Թնդանօթովք, և զօրագլուխ Թնդանօթաձիգ զօրուն Պոնափարդէ, զայս առաջին նուագ կացեալ 'ի գործ պաշտաման տէրութեան՝ յանդուգն քաջութեամբն և ժրութեամբ սիրելի եղև յոյժ Ժաքոպէնաց:

Ընդ հուպ 'ի յետին տառապանս անկեալ քաղաքն Թուլոն յուսահատ եղև զփրկութենէն, և օգնական անգղիացի և սպանիացի զօրքն դիմեցին 'ի նաւս իւրեանց, առին 'ի նոսա 'ի բնակչաց անտի Թուլոնի որչափ և կարացին՝ որք խուռն խուճապաւ աճապարէին 'ի մակոյկս. և 'ի շփոթի անդ ոմանք 'ի ծով անկեալ հեղձամղձուկ լինէին: Անդ էր տեսանել զթշուառութիւն եղկելեաց, զի մարք զդստերս, հարք զորդիս,

և հարսունք խնդրէին զամուսինս իւրեանց։

Եւ 'ի քան և եօթանց նաւուց Գաղղիացւոց որ 'ի Նաւահանգստին, երեք և եթ ապրեցան, այլք կամ խորասոյզ կորեան կամ հրդեհեցան 'ի նաւահանգստին։ Յայնժամ և շտեմարանք վառօդից բորբոքեալ 'ի հուր դառնային զքաղաքն. ահաւոր էր տեսիլ թշուառացեալ քաղաքին. և յաւելոյր զահ երկիւղին աղջամուղջ գիշերոյն, հուր թընդանօթից, արձակումն ռմբաց, աղաղակ փախուցելոցն 'ի քաղաքէն, ողբ մնացելոցն և խառն 'ի խուռն խուճապ եղկելեացն 'ի բոցոյ և 'ի սրոյ թշնամւոյն։ Յառաւօտուն մտին 'ի ներքս հասարակապետականքն, և գտին զամենայն համախոհս իւրեանց շըղթայակապս. լուծին զնոսա, և յարձակեալ միահամուռ ընդ նոսին անգութ քան զհրդեհ քաղաքին անխնայ կոտորէին զկուսակիցս թագաւորին. և զոր ամենայն հարիւրաւորս 'ի նոցանէ հրացանաւ և թնդանօթիւ չարաչար սպանանէին։

Դէպ եղև յաւուր միում տեսանել անգութ դահճացն զոմանս ապրեալ 'ի հրոյ թնդանօթից. ձայն ետուն թէ Որ ոք զերծաւ 'ի մահուանէ՝ կանգնեսցի՛ 'ի վերս, ներէ նոցա հասարակապետութիւնն. ելին 'ի վերս եղկելքն, և անդէն սակերբ ընկալան զմահ։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Մահ դշխոյին Անդոնիէդայ, և խոտորած ժիրոնպէանց։

Մինչդեռ արքուն Թագաւորականաց հեղեղօրէն հոսէր 'ի հարաւայինն Գաղղիա, հեղոյր 'ի Փարիզ և անմեղ արքուն դշխոյին ամուսնոյ Լուդովիկոսի ԺԶ։ Վեհաշնչս այս դշխոյ չլուծեալ բնաւ 'ի տրտունջ ընդդէմ դառն դահճաց սպանողաց առն իւրոյ՝ զայս միայն իւր խնդրեաց մխիթարութիւն, 'ի Թուխս համակիչ, և զզգեստ սգոյն մինչև ցմահ չթողուլ յանձնէն. այլ չեղև նա յերկարակեաց առաւել քան զամիսս ինչ յետ մահու առն իւրոյ. քանզի 'ի չորս յուլիսի 'ի բաց առին 'ի նմանէ զորդին. գիտաց նա զմիտս անօրինացն, այլ չէր մարթ դարման ինչ գտանել։ Ապա գիշերային զկնի ամսոյ միոյ հանեալ զնա 'ի Տաճարէն՝ ածին 'ի Քոնսիէրժերի, և անտի կացուցին զնա յատեան իւրեանց իբր զվատնիչ ալքունի գանձուն, և թէ խորեալ ելցէ 'ի գանձուցն և առ եղբայր իւր առ կայսրն Գերմանիոյ անցուցեալ, և թէ դաշնակից է թշնամեաց պետութեան և պատճառք նեղութեան խռովութեանց։ Ժայրհեցաւ ժանան հէպէր չարախօս լինել զնմանէ, իբր թէ զեղծուցեալ

էր նորա զբարս արքայորդւոյն, սովորե-
ցուցեալ 'ի մոլութիւնս :

Պատասխանի արար դշխոյն ամենայն ամ-
բաստանութեանցն զանձնէն սուղ և ազդու
բանիւք : Ազնուական եղանակ խօսից վե-
հափառ դշխոյին շարժեաց զսիրտս ունկըն-
դրաց 'ի գթութիւն, որ 'ի լրութենէ անտի
մարդկային փառաց խոնարհեալ ելեալ էր
'ի խորս թշուառութեան : Այլ ատեանն,
դատաւորք միանգամայն և դատախազք նո-
ցին, անմասն յամօթոյ և 'ի գթութենէ՝
ժպիրհ դիմօք ետուն զդատակնիք մահուն :
Լուաւ դշխոյն Մարիա Անդոնիեդդա զվը-
ճիռն՝ անխռով և անվեհեր : Պնդութիւն
հաստատութեան սրտին արդարև արդիւնք
էին կրօնից բարեպաշտութեան, յորում
միայն գտանէր զիւր սփոփանս 'ի թշուա-
ռութեան անդ :

Անհնարին թուէր 'ի դառն բանտարգե-
լութեան անդ գտանել հնարս ընդունե-
լոյ զվերջին նպաստս կրօնից քրիստոնէու-
թեան. այլ ատուածախնամ տեսչութի՝ որ
հակէր 'ի վերայ նորա, յաջողեաց նմա
զամենայն 'ի վեր քան զակնկալութիւն :
Քանզի աւուրբք յառաջ քան զդատ նորա
տիկինն Ֆուշէ արիասիրտ, ծանր ծախիւք
ետ ական հատանել ընդ երկրաւ մինչև
ցտեղի բանտին, և եմոյծ անդր զՄանիէ
աւագերէց սրբոյն Գերմանոսի, զայր սըր-
բակրօն. որոյ մատուցեալ անդ զսուրբ պա-
տարագն, հաղորդեաց զդշխոյն և զերկո-
սին պահապանս նորա : Յաւուրն երկրորդի

'ի մատչել առ նա ուրուն 'ի հերձելոց քահանայից, մերժեաց զնա 'ի բաց դշխոյն. և կացեալ յաղօթս, մնայր ժամուն՝ որ զոյգ ընդ կենացն հանդերձեալ էր վախճան առնել և տառապանաց։ Անդ կայսերածին դուստրն մեծափառ՝ անարդ սայլիս բերիւր 'ի պատուհաս մահու, անցեալ ընդ մէջ հայհոյանաց խառնամբոխ խուժանին կաշառելոյ 'ի գործն անարժանութեան։ Իբրև հասանէր նա 'ի հրապարակն Լուդովիկեայ ԺԵ, դարձոյց զհայեցուածսն յապարանս Թիւյլերի, և հայեցեալ ընդ նա երկար, ել ապա 'ի տեղի պատուհասին, եդ ծունր, ամբարձ զաչս յերկինս "Տէր, աղաղակեաց, լուսաւորեա՛, տէր, և շարժեա՛ զմիտս դահճաց իմոց։ Ողջոյն ընդ ձեզ հրաժարական, որդեակք իմ, երթամ ես առ հայրն ձեր,, (1793)։ Այսպէս սպանաւ դշխոյն մեծ յերեսուն և ութ ամաց հասակին, վատահամբաւեալ 'ի թշնամեաց յանիրաւի։ Թէպէտ և 'ի ծաղկի հասակին, 'ի շքեղափառ արքունիս՝ ուր ամենայն ինչ հրապոյրք էին, թէպէտ և շռայլեալ 'ի ծախս հաճոյից անոտեաց, սակայն ոչ մոռացաւ երբէք զպարտս թագուհւոյ, ամուսնոյ և մօր. անյեղլի էր սէր նորա, քաղցր բնաւորութիւն, և աղնուամիտ առատաձեռնութիւն։ Եւ 'ի մրրիկս անդ խռովութեան հանդիսացաւ արութեամբ դիւցազնական ոգւոյն՝ արքայական օծութեամբ կրօնից բարեպաշտութեան, և յայտնի եցոյց թէ դուստր էր մեծի կայսրուհւոյն Մարիայ Թերեզայի։

Զկնի մեծի եղեռնաւոր սպանութեանն յիշեցին ժաքոպէնք զԺիրոնտեանս՝ որք 'ի բազումաւուրց հետէ հեծէին 'ի բանտս. խորհեցան բառնալ զնոսա 'ի միջոյ՝ յետ ընկճելոյ զգաւառս ապստամբեալս։ Իբրև ազգ եղև նոցա վճիռ դատակնքոյն, ոմանք 'ի նոցանէ զՄարսիլիականն առեալ երդ 'ի բերան՝ ընթացան քաջութեամբ 'ի մահ "Կեցցէ, գոչելով, կեցցէ՛ հասարակապետութիւն"։ Այլք 'ի կատաղութիւն բերեալ մոլեգնէին. կէսք դրամս ճապաղելով 'ի խառնիճաղանճն՝ յապստամբութիւն զնոսա գրգռէին. գտաւ 'ի նոսա և ոմն որ սուր 'ի կողս իւր եդեալ չոգաւ զիւրովին։ Ի գիշերի անդ դատակնքոյն բազումք զըմրեալ գինւովք անզգայ անկանէին. իսկ նոքա որ փախուցեալ զերծան 'ի մահուանէ, թափառեալ աստանդական կորեան չարաչար. այլ ահագին եղեն դէպք մահուն Փէթիոնի. քանզի գտեալ զնա յանտառի գայլք սպառեցին, կերան և զկէս մարմնոյն։ Ածաւ 'ի մահ և մեծահռչակ տիկինն Ռոլանայ, որ անվեհեր քաջութեամբ անվրդով արիացաւ. իսկ այր նորա որ փախուցեալ էր 'ի Ռուան լուեալ զմահ կնոջն երթայր զիւրովին։ Պայլն, որ առ ազգային ժողովոյն քաղաքապետ էր Փարիզու, բազումք նախատանօք քարշեալ ընդ տիղմս բրածեծ, գանակոծ, թքալից չարատանջ սպանաւ։ Սպանան և Հուշար և Պրիւնէ զօրավարքն։ Այսպէս դահիճք կացին ժաքոպէնք ժիրոնտեանցն՝ որք սահմանս և օրէնս կամէին

գնել անօրէնութեան նոցա. յայտնի ցուցաւ 'ի նոսա և արդարութեան Աստուծոյ արժանահաս պատուհաս, փլուզեալ 'ի վերայ գլխոց նոցա զաւերակս թագաւորութեան, որոյ կործանմանն առաջին պատճառք կացին:

Յետ նոցա պարտաւորեցաւ և դուքսն Աւրեղիոնի փիլիպպոս իբրև թեկնածու արքայութեան, և արեամբ իւրով ելոյծ զվերէժ եղերանց սպանութեան թագաւորին իւրոյ և ազգակցին: Այլ մեք դարձցուք անդրէն 'ի պատերազմունս դաշնակցեալ պետութեանց Եւրոպայ՝ զոր յետ փախստեան Տիւմուրիեայ թողաք անյիշատակ:

ԳԼՈՒԽ ԺԶ.

Դէպք պատերազմացն Գաղղիացւոց ընդդէմ դաշնակցեալ պետութեանց Եւրոպայ:

Մարթ էր դաշնակից պետութեց Եւրոպայ թշնամեաց Գաղղիոյ՝ զկնի փախստեան Տիւմուրիեայ սպառասպուռ ջախջախել ըստ վարատեալ և զՀեղքեալ գունդս Գաղղիացւոց. այլ նոքա անդէն առ ձեռն համարեալ զյաղթութիւն, զամենայն ուշ իւրեանց եդին 'ի բաժանել զաւարն յիւրեանս. և վիճէին վասն տուգանացն՝ զոր պահանջէին 'ի Գաղղիոյ, և իւրաքանչիւր 'ի նոցանէ քաղաքս ինչ հատանել յաշխարհէն խորհէր:

Քոպուրկ զօրավար կայսեր ստուարա-

ցուցեալ և ևս զբանակ իւր Երեսուն և հինգ հազար անգղիացւովք և հոլանտացւովք, տարածեաց զտան բիւր զօրս իւր ընդ երկայնութիւն 'ի Մէօզ գետոյ մինչև ցծովն, և սպառնայր 'ի բուռն առնուլ զամենայն գաւառն։ Եւ յետ բազում նախաշաւիղ մարտից, էարկ 'ի պաշարումն զՔոնտէ քաղաք։

Տանփիէռ զօրավար Գաղղիացւոց քառասուն հազարաւ մղեաց բազում պատերազմունս քաջութեամբ 'ի սահմանագլուխս աշխարհին, և անկաւ զէն 'ի ձեռին։ Մեկնեցան զօրք նորա՝ տեղի տուեալ թշնամեաց, ոչք տակաւ մնէին 'ի նեղքս։ Եւ յեղերս Հռենոսի ջան 'ի գործ արկին թշնամիք առնուլ զՄոգունտիա. և թագաւորն Բրուսացոյ յիսուն հազարաւ յառաջ խաղայր, և Վիւրմսէր զօրավար քսան հազարաւ մօտ էր 'ի Սփիր։ Քիւսդին զօրավար Գաղղիացւոց կարէր արդեօք արգելուլ զյառաջխաղացութիւն Բրուսացոյ, այլ երկուցեալ նահանջեցաւ 'ի Լանտոյ և 'ի Վայզէմպուրկ, և զաղխս բանակին փոխեաց 'ի Սթրազպուրկ։ Թագաւորն Բրուսացոյ եկն և պաշարեաց զՄոգունտիա քաղաք. և վրիպեցաւ աստ զօրավարն Քիւսդին. քանզի վաթսուն հազար զօրս ունելով ընդ ձեռամբ՝ փոխանակ խաղալոյ ընդդէմ Երեսուն հազարացն ցրելոց ընդ երկայնութիւն Լավրէնպուրկ և Սարէլուի քաղաքաց, տողեաց զիւրան հանդէպ զօրացն Բրուսացոյ, և պարտեալ 'ի թշնամւոյն՝ հրաժեշտ ետ յիշխանութենէն, և փոխեցաւ 'ի զօրավա-

րուԹիւն հիւսիսային բանակի. և անդ 'ի բաղում ինչ իրս վրիպեալ, ընկալաւ սրով զվախճան մահու. և յաջորդեաց զնա 'ի զօրավարուԹեան Պոհառնէ։ Խորտակէին Գաղղիացիք առաջի Թշնամեաց իւրեանց և 'ի Սաւոյա, 'ի Նիցցա և 'ի ստորոտս Պիրենեանց 'ի Սպանիացւոց։ Այլ իբրև գաշնակիցք փոխեալ զիսորհուրդս իւրեանց՝ սկսան յանուն կայսեր աշխարհակալել 'ի Գաղղիա, ձեռնԹափ եղեն 'ի նոցանէ Գաղղիացիք կուտակիցք ԹագաւորուԹեամբ. քանզի տեսին զնոսա Թշնամիս աշխարհին իւրեանց, և զի զշահ անձանց խնդրէին պատճառանօք Թագաւորական իշխանուԹեան։ Սկսան այնուհետև հասարակապետականք յաղԹանակել 'ի վերայ Թշնամեաց իւրեանց 'ի սահմանագլուխս աշխարհին. 'ի հիւսիսոյ նստէին Անգղիացիք պաշարեալ զքաղաքն Տիւնքէրք. և իշխանն Օրանժ իւրովքն կայր առ Մնէնաւ. և ստուարախումբ բանակն դաշնակցաց, որոց զօրավար կայր Քոպուրկ, պաշարէր զՄոպուրկ։ Հուշար զօրավար հասարակապետուԹեան խաղաց 'ի վերայ զօրաց Թշնամեաց՝ որք ունէին զերկայնուԹիւն Իւզէր գետոյն, վանեաց զնոսա անտի, և զհետ պնդեալ եհար խորտակեաց և զերծոյց զքաղաքն Տիւնքէրք 'ի Թշնամեաց։ Յետ այսորիկ առին Աւստրիացիք զՔեղնոյ քաղաք, և զօրքն Հուշարայ ահաբեկեալ ցրուեցան։ Իսկ Բիէմոնդեցիք ազատեալ զՍաւոյա, խաղացին յօգնուԹիւն Լուդգոնի՝ որ պաշարեալ էր. այլ

Քէլլէրման վանեաց և զնոսա և զՀռիքարտոս զօրավար Սպանիացւոց։ Իսկ Իշխանն Քոպուրկ պանծացեալ ընդ բազմութիւն իւրոցն, և մեծայոյս ընդ յաղթութիւն, իբրև ետես զԳուռատան՝ որ փոխանակ Հուշարայ զօրավար կացեալ դայր 'ի վերայ նորա անհրահանգ այլ սպառազէն զօրօք, ծաղրարար զնոքօք. "Եթէ Գաղղիացիք, հաստարակապետականք, ահաւորք իցեն, ասէ, թող վանեսցեն զիս աստի, եղէց և ես 'ի նոցանէ ,,։ Ազդ եղեն բանք զօրավարիս յականջս զօրացն Գաղղիացւոց. երդմնի աբարեալ զանձինս դիմեցին արութեամբ, և վանեցին զնա անտի զերծուցեալ զՊոպուրկ։ Ի նմին ժամանակի և Քէլլէրման հալածէր զԲիլեմոնդէցիս անդր քան զԱպեանս. այլ մօտ 'ի Պիրինեանս խորտակեցան Գաղղիացիք, և ամօթով յետս ընկրկեցան 'ի Փէրփինեան զօրավարէն. խորտակեցան և 'ի Վայղէմպուրկ 'ի Բրուսացւոց և յԱստրիացւոց՝ որոց զօրավարք կային Պրունզվիք և Վիւրմսէր։ Այլ անվեհեր պատանին Հոշ և քաջն Փիշկռիւ ոչք 'ի սոսկական զինուորութէ 'ի զօրավարութի ամբարձեալք էին՝ քաջութեամբ իւրեանց երևելիք եղեն։ Առաջինն վառեալ յաշխոյժ մարտի, երկրորդն խորագէտ և մեծախորհուրդ հնարեաց նոր հնարս պատերազմի՝ միահամուռ տալ զյարձակումն, որով զօրացաւ յոյժ 'ի վերայ թշնամեաց։ Եւ անտի նոքա 'ի մուտս ձմերայնոյ գրոհ ետուն յԱլսակիա, վանեալ զդաշնակիս պետութիւնս անդր քան

զՀռենոս։ Այսպէս Թափեցին Գաղղիացիք 'ի ձեռաց Թշնամեաց իւրեանց զամենայն քաղաքս կորուսեալս, բաց 'ի քաղաքացն Քոնտէ, Վալանսիէն, և 'ի բերդորէից ինչ։ Եւ այնուհետև 'ի դերև ելեալ ակնկալուԹեան և ջանից դաշնակցաց, միմեանց մեղադիր լինէին։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Ամբարդարութիւն խառվլոց Գաղղիոյ 'ի ընչել զամենայն կրօնս յաղխարհէն, և անաստուածութիւն նոցա։

ԴԱՐՁԱՒ բաղդ զինուց առ Գաղղիացիս, այլ ոչ ամոքեցաւ անգութ խստութիւն խռովչաց և արիւնահեղ ատելին, յորում իշխէր Ռոպէսպիէռ, Թեւակիցս իւր ունելով զարս ոչ ինչ պակաս 'ի չարութեան քան զինքն, զՔուԹոն, զՔոլոյ Տ'Էրպուա, զԱՆԺիւստ և զՎիյլոյ Վարէն։ Այլ կրկին խուսք մարդկան խափան լինէին տիրապետութեանն նորա. առաջինքն Քորտիլիէրք՝ որոց առաջնորդ էր Տանթոն. և երկրորդքն խառնիճաղանճն Փարիզու՝ որոց առաջնորդք կային Հէբէր և Շոմէթ։ Ռոպէսպիէռ խորամանկագոյն գտեալ քան զնոսա, ելեալ ազատ զնոսին յեղերուանս անհնարինս՝ առ 'ի պատճառս առնուլ նոքօք անկման նոցին։ Հէբէր և Շոմէթ խորհուրդ 'ի մտի էգին բառնալ 'ի Գաղղիոյ ընդ ճշմարիտ կրօնից և զամենայն աղգ աղանդոց, և յանաստուա-

ծուԹիւն փոխել զազգն համօրէն. և առեալ ՇոմէԹի ընդ իւր զանմիտ ուխտադրուժ զեպիսկոպոսն Փարիզու զԿոպէլ, զՄորմորոյ, զՓաշ և զԼուիյլէ, չոգաւ առ դաշնակցուԹիւն ազգային առնուլ զվՃիռ բնաջինջ բառնալոյ զկրօնս։ Հրաման եառուն ժողովրդեան՝ աւար հարկանել զեկեղեցիս, և կարգեցին զարս քառասուն և չորս հազար 'ի նոյն գործ ամբարշտուԹեան։ Թիւ գանձուց եկեղեցեաց Գալղիոյ ըստ Ճշգրիտհաշուին՝ էր ուԹ հարիւր միլիոն ֆրանք ոսկեղէն և արծաԹեղէն սպասուց և ծանրագին զարդուց. երկու հարիւր միլիոն միայն ածաւ 'ի գանձ հասարակաց, և այլն ամենայն 'ի յափշտակուԹիւն մատնեցաւ աւարառուաց։ Այս գործ սեղանակապուտ ժպրհուԹեան 'ի մայրաքաղաքէն սկսեալ տարածեցաւ ընդ գաւառս։

Դէպ լինէր յաւուր միում, և ոչ զայս առաջին նուագ, զի 'ի ժողովէն դաշնակից վարչաց եկեալ մտանէին զօրականք՝ զգեցեալ հանդերձս քահանայապետականս, դասակարգեալ զհետ նոցա 'ի խառնիճաղանճ մարդկանէ 'ի կարգս կրկին նախորոտաւորք և շուրջառաւորք, և այլովք քահանայական սպասիւք ծածկեալք. և ապա այլք բարձեալ յուս իւրեանց սկիհս և մատնատուփս, և այլ ևս սպասս սրբազանս յոսկւոյ և 'ի ծիրանւոյ։ Լուծանէր հանդէսն յերգ և 'ի կաքաւ ազատուԹեան, և հանդիսաւորքն վախՃան առնէին հանդիսին երգմամբ՝ ուրանալ զամենայն պաշտօն՝ բաց յազատուԹենէ։

Յաւել յայս անօրէնութիւն Ժողովն դաշնակցաց, և հրամայեաց դրոշմել զպատկեր հանդիսիս, և հռչակել յամենայն գաւառս Գաղղիոյ։ Եւ ՃԳՆԷԻՆ ամենեքեան նմանողք լինել ամպարշտութեանց Փարիզացւոց. յամենայն փողոցս փայտակոյտ և հուր առ 'ի հրձիգ առնել զսուրբ գիրս և զմատեանս եկեղեցւոյ, զբեմբս, զխոստովանարանս, զզարդս սրբութեան, զնշխարս սրբոց. և շուրջ զխարուկաւն պար առեալ ժողովուրդն արբեալ անօրէնութեամբ, հայհոյէր զԱստուած հարցն իւրոց։ Ծայրատէին և զանդրիս սրբոց, խորտակէին զխաչս, հալէին զզանգակս, կործանէին և զզանգակատունս իբր զի բարձրութիւն նոցա հակառակ էր հասարակապետական հաւասարութեան։ Ոչ ակն ածին և 'ի գերեզմանաց անգամ, բրեցին զդամբանս թագաւորաց, և հանին անարգանօք զոսկերս նոցա, զԼուդովիկեայ ԺԲ, զՀենրիկոսի Դ, զԼուդովիկեայ ԺԴ, որոց անուանք մեծաշուք փառք էին Գաղղիոյ։ Ոչ խնայեցին ամբարիշտքն և 'ի սուրբ պաշտպան մայրաքաղաքին՝ որոյ բազում անգամ զերծուցեալ էր զնոսա յահաւոր արկածից և 'ի սովէ։ Յափշտակեցին և զտապանակ սրբուհւոյն Ժընվիէւայ, և 'ի հրապարակս այրեցին զնշխարս՝ զոր նորա համարէին (1)։ Յետ մերժելոյ զԱստուած հարցն իւրեանց 'ի տա-

(1) Զի զՀամարիպ նշխարս սրբուհւոյն ասէն զերծուցեալ արանց Բարբարոսին։

Ճարտաց նորա, մնայր նոցա կարգել լուրեանց աստուած արժանի վատթարելոց մտաց։ Ընտրեցաւ առ այս բանն, կարգեցան դրօշեալք նորա նմանութիւնք կենդանեաց, կանայք խառնագնացք, և բոզք անպատկառք ելին 'ի վերայ սեղանոց առնուլ զպաշտօն յանասնամիտ ժողովրդենէն։ Առաջին հանդէս տօնի նորոյ աստուածոյն հռչակեցաւ յանդիման Դաշնակցայ ժողովոյն. ընկալաւ և ժողովն զայս պաշտօն, և երկիր եպագ անօրէն պաշտամանն։ Ի նմին ժամանակի սկիզբն եղև և թուականութեան հասարակապետութեան Գաղղիոյ, սկսեալ յամաց 1792, 'ի սեպտեմբերի 22. փոխեցին (1) և զեօթնեակն 'ի տասնեակս աւուրց, և զամիսն յերեսուն օր, և զօրն տասներորդ 'ի հանգիստ կարգեցին, և փոխան տօնիցս սրբութեան կրօնից՝ հանդէս անառակութեանց, և փոխան անուանց սրբոց զանուանս անասնոց և տնկոց, այլովքն հանդերձ։ Յետ այսորիկ կործանեցին և զբազումս յեկեղեցեաց. զոմանս փակեցին, և զյոլովս պղծեցին՝ կարգեալ 'ի շտեմարանս,

(1) Անուանք ամսոց հասարակապետութեան Գաղղիոյ. Այգեկուտ, Բրումէր, Ցրումէր, Ձիւնալիր, Անյրնալիր, Հողմաւոր, Բողբոջային, Ծաղկաւէտ, Մարգաւէտ, Ոսկեհունչ, Ոսկեջերմ, Ոսկեպտուղ։ Իւրաքանչիւր ամիս էր երեսնօրեայ, բացի անէալ յերրեակ պասն, որ առնէին աւուրս 360, և զմնացեալ հինգն կոչէին Աւելեաց աւուրս Սան-քիւլոտեաց։

յախոռս, 'ի Հանդիսատեղիս, 'ի Ժողովարանս Ժաքոպէնաց, և 'ի տաճարս Բանին։ Եւ պատուհաս մահու սպառնացան՝ որոց սրբիցեն զկիւրակէս և ոչ առնիցեն 'ի տաներբորդումն աւուր զՀանդիստ, և կամ ոչ Հանդիսատեսս լինիցին տօնից հասարակապետութեան։

Ապաքէն չէր իսկ 'ի դէպ յահաւոր և յանլուր վէպս անցեալ խռովութեանս Գաղղիոյ յաւելուլ ծաղրականս. այլ զի ցուցցուք թէ ոչ մեր մղեալ զառաջանէ զմարդ խռովութեանցն մոլեգնութիւն, յաւելցուք յիշել և զայն. զի և կանայք ռամկապետականք՝ վիճէին դժկամակեալք եթէ ընդէր արանց ևեթ սահմանեցան իրաւունք տեսչութիւն. և խորհուրդ արարեալ յիւրեանս, ձեռն արկին միջամուխ լինել 'ի յանձանձանս պետութեան, և խմբեցան 'ի մի։ Ի ժամանակի խաղաղութեան այսպիսի ինչ գործ արդարև ծաղու էր արժանի և կատականաց. այլ յաղմուկս խռովութեանց բազմավտանգ յոյժ։ Ժաքոպէնաց ոչ կամեցեալ տեղի տալ նոցա, և բաժանորդս առնուլ իշխանութեան իւրեանց ճգնէին լռեցուցանել զնոսա՝ ըստ պատուհաս մահու։ Այլ անդէն դէպք 'ի բարի յաջողեալ ինքնին ունայնացոյց զնորհուրդս կանանցն. քանզի համարձակեալ սոցա եդին զկարմիր գոտակս Ժաքոպէնաց 'ի գլուխս. և յաւուր միում ժողովեցան ստիպել և զայլս 'ի կանանց 'ի նոյն իւրեանց նմանութիւն։ Սփռեցան և 'ի վաճառատեղիս և 'ի փողոցս, և յաղա-

տուրթիւն կոչեալ զամենայն քաղաքացի կանայս՝ բռնադատելով զնոյն առնուլ ձև։ Նոցա մերժեալ զՋատուկն բողոք բարձին թէ օրէնք միայն հրամայէին նոցա։ Եւ իբրև սաստկացաւ 'ի նոսա կռիւն և սկսան մարտընչել ընդ միմեանս, եհաս լուր կռուոյ նոցա յականջս ժաքոպէնաց, որք աճապարեալ եւթուն վազիւ, յայնմ հետէ 'ի տնական հոգս ևեթ պարապել կանանց, և զստամբական անյապաղ 'ի մահ վարեցին։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Գիգոռնիոն էրիպոռակոռնէան 'ի ռամկավարս և կոգորած Տանռոնէանց։

Ռոգէսփիէր որ գալանի հաճուրթեամբ հանդիսատես կայր ամբարշտուրթեանց Հէպէրայ և Ղոմէթայ արբելոցն 'ի յաջողուածս անօրէնուրթեցն իւրեանց և խրոխտացելոցն ինքնիշխան հրամանատու կալ ազգին, 'ի ձեռն Ատենի փրկուրթեան հասարակաց յայտնի սպառնացաւ նոցա, որոց կուսակիցք էին Ռոնսին, Վէնսան, Մորմորոյ և այլք։ Իսկ անմիտքն Հէպէր և Ղոմէթ և ընկերք նոցա՝ ընդ մօտալուտ սպառնալիսն սասանեալ և խելագարեալ, փոխանակ խիզախելոյ ընդդէմ հակառակորդաց իւրեանց՝ թողեալ զխումբս ժաքոպէնաց 'ի Քորտիլիէրս եղեն ապաստան։

Բազումք 'ի նուիրակաց ազգային դաշնակցուրթե դժկամակեալ քրթմնջէին ընդ

ողորմ մահ ժիրոնտեանցն, և քաջ զօրավարաց. և յոլովք պարսաւէին զբռնութիւն ընդդէմ կրօնից ազատութեան: Ցանթոն որ առ ժամն մեկուսացեալ էր վասն խոթութեանն'ի գիւղ իւր՝ դարձ արար 'ի Փարիզ: Սա թէպէտ ոչ յայտնեաց զկարծիս իւր զեղեալոցն իրաց, այլ յայտնի հակառակ էր անգութ սպանութեանցն և բռնութեան 'ի վերայ կրօնից. և միտք իւր էին արդար և իրաւացի օրինօք հաստատեալ ժողովրդեան տեսչութիւն հասարակաց, և հանդիստ առնել ընկճելոց հայրենեացն: Յայնժամ հէպէր սկսաւ ամբաստան լինել զՑանթոնեանցն, այլ Ռոպէսպիէռ արդարացոյց զնոսա. և բողոք կալաւ զբռնութենէ հէպէրեանցն ընդդէմ կրօնից ազատութեան, և եցոյց յայտնի թէ անմարթ է ժողովրդեան լինել անկրօն. "Զի եթէ և Աստուած ոչ գոյր, պարտ էր, ասէ, հնարել,,:

Իսկ Աստեանն փրկութեան հասարակաց 'ի ժամանակին յայնմիկ ոչ 'ի թագաւորականս միայն և յազնուապետականս և 'ի չափաւոր հասարակապետականս ձեռն արկանէր առ 'ի բանտ և 'ի մահ, այլ և 'ի մոլեգին ռամկավարս, որ ոչ յագէին բնաւ արեամբ: Այսպէս ընդհանուր էր կոտորածն և անմեղաց և անօրինաց: Յարեաւ յայնժամ բարեկամ Ցանթոնի Քամիլ Տէմուլէն, և ողբալով զհայրենեացն ողորմ աղէտս, խնդրէր և Աստեան ինչ գթութեան 'ի քննել զբանտարկեալս, և զարդարսն թողուլ յազատութիւն: Մոլեգինն հէպէր բողոք ե-

բարձ և խնդրէր 'ի մահ տալ զՏէմուլէն և զընկերս նորա : Եւ իբրև 'ի քննութիւն էր զնոցանէ Ատեանն փրկութեան հասարակաց, Տէմուլէն ոչ դադարէր 'ի գրելոյ ջատագովութիւնս անձին և ամբաստանութիւն զՀէպէրայ. և բարձրագոյնս ամբաստնայր զձայն իւր ընդդէմ անգթութեան մարդախոշոշ բռնաւորաց աշխարհին, արհամարհեալ զմահ գլխովին : Ազատեալ յայնժամ 'ի բանտէ Ռոնսին և Վէնսան երիտասարդք մոլեգնեալք յարիւն և 'ի կոտորած, գրգռէին զնմանիս իւրեանց՝ արկանել զպատճառս սովոյն որ 'ի Փարիզ զկուսակցօք Տանթոնի, որ խաղաղութիւն խընդրէին և աներկևանութիւն կենաց : Սակայն ոչ ինչ օգտեալ 'ի նոցանէ մատնեցան 'ի մահ :

Յետ պատուհասի արիւնրռուշտ խռովչացն ըստ վճռոյ Սէն-Ժիւստայ՝ պարտ էր 'ի քննութիւն կոչել զայնոսիկ, որք խոհական իմն հասարակապետութիւն կամելով ամբաստանեալք լինէին իբրև լքուցիչք զօրութեան մտաց ժողովրդեան և կուսակիցք ազնուականաց : Թէպէտ վճիռն չասէր ինչ յայտնի զումեքէ, այլ ոչ ոք անգիտանայր եթէ զՏանթոնեանց էր բանն : Քանզի ինքնին իսկ Տանթոն և կուսակիցք նորին Քամիլ Տէմուլէն, Ֆիլիպ, Լաքրուա, Ֆաուր Տ'էկլանթէն և Հէրոլ-Սէշէլ, անհաւանք լեալ ընդ խստութիւն Ատենին փրկութեան հասարակաց՝ ջանային խափանել զնա, արձակել զբանտեալս կասկածանօք մատնութեաւ,

և հաստատել կարգս օրինաւորս։ Այլ մեծ
ևս պատճառք մախանացն այն էր, զի Ռո-
պէսփիէռ խիթայր 'ի քաջայարմար և յան-
դուգն բարուց Տանթոնի և ակն ածէր ազ-
գու պերճախօսութեան նորա որում չհա-
ւասարէր ոք, և մանաւանդ զի 'ի սիրելի
լինել նորա յաչս ժողովրդեան՝ մարթ էր
յաւուր միում գլել իսկ զնովաւ։ Այսոքիկ
ահա բաւական պատճառք էին Ռոպէսփիէ-
ռայ նիւթելոյ զկորուստ իւրոյ նախանձոր-
դին։ Բարեկամք Տանթոնի՝ յորդորէին զնա
զառաջս առնուլ վտանգին. այլ նա վստա-
հացեալ 'ի զօրութիւն իւր կայր յանհոգս։
Եւ յանկարծ 'ի գիշերի միում հանդերձ ըն-
կերօք իւրովք ձերբակալ եղև նա և բա-
զումք 'ի կուսակցաց նորա արկան 'ի բանտ
իբրև զմատնիչս պետութեան։ Ի վաղիւ
անդր 'ի ժողովի ազգային դաշնակցութեան
ջանացաւ Լըժանտր խրախուսել զժողովն
ընդդէմ բռնութեանց՝ որ անդադար ընկ-
ճէր զնոսա։ Իբրև յօժարամիտ ունկն դնէին
նմա ժողովականքն, ահա դատաւորք Ատե-
նին փրկութեան հասարակաց և իշխան նոցա
Ռոպէսփիէռ, մտին 'ի ժողովն յամբարքայլք,
սիգաձեմք, խոժոռահայեացք, զորս տե-
սեալ ատենախօսին խռովեալ լռեաց։ "Խօ-
սեաց, ասէ Ռոպէսփիէռ ընդ հենգն, խօ-
սեաց, բարուոք է, զի ծանիցեն դատաւորք
զկուսակիցս դաւաճանիցն և նենգաւորաց,
առ 'ի բառնալ զնոսա 'ի միջոյ,,։ Եւ չդտաւ
ոք 'ի ժողովն ապաւէն Լըժանտրեայ, և
Տանթոն թողեալ լքաւ յազգային դաշնա-

կցու�թենէն. և Ռոպէսպիէռ և Սէն-Ժիւստ ամենևիմբ ցուցին զնա մասնիչ հասարակապետութեան և էղծիչ կարգի տեսչութեան և կարդացին զնոսա գալ յատեան։ Լուեալ Տանթոնի. “Ես իսկ ասէ 'ի սոյն աւուրս, հաստատեցի զայս ատեան 'ի խռովչաց, ընդ որ զիրՀ է ինձ առաջի Ստուծոյ և մարդկան. և թէ լաւ էր ինձ աղքատ գոլ ձկնորս քան առաջնորդ մարդկան,,։ Եւ ելեալ առաջի, համարձակագոյնս արար պատասխանի ամենայն չարախօսութեանցն. այլ ոչ ինչ օգտեալ, ընկալաւ զվճիռ մահու հանդերձ ընկերօքն, ընդ որս և Վէսթէրման դահիճ Վանդէացւոց, Շապոյ, Պազիր և այլք (1794)։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Մահ Տիկնոջ Եղիսաբէթի թէռ արքային Լուդովիկեայ Ի Բիւրաւորաց անմեղ մարդկան։

ՄԻՆՉԴԵՌ ձախողակի խորհրդով բռնաւորք Գաղղիոյ զմիմեանս պատառէին և 'ի միմեանց սատակէին, ոչ դադարէին և զանմեղացն հոսել զարիւն։ Գտին արիւնախանձք և այլ զոհ կատաղութեան իւրեանց 'ի Տաճարին փակեալ. զՏիկինն Եղիսաբէթ՝ զքոյր արքային Լուդովիկեայ ԺԶ, որ 'ի մեծութեան անդ փառաց հեռի ամենևին 'ի վայելից աշխարհի և 'ի զբաղմանց արքունեաց, հոտ անոյշ բուրէր սրբութեամբ հրեշտակական վարուք իւրովք, և 'ի Տաճարի անդ 'ի դիպահոլ՝ օրինակ համբերութեամբ

և սքանչելի աստուածպաշտութեան։ Թէ սկսաւ չեղև իւիք բաժանորդ խռովութեան աշխարհին, բայց արտասուօքն և ժուժկալութեամբ տանելով թշուառութեան արքունի տոհմին, սակայն և այնպէս յանցաւոր ցուցաւ նա յաչս արանց անօրինաց։ Յամենեանն Մայիսի հանեալ զնա 'ի բանտէ, ածին յատեան։ Իբրև հարցին ըստ օրինաց զանուն նորա և զտոհմն "Անուն իմ Եղիսաբէթ է, ասէ, հօրաքոյր թագաւորին ձերոյ"։ Այս արիական նորա պատասխանի 'ի ժամուն՝ յորում մատնեալ էր անօգնական 'ի ձեռս արիւնարբու դատաւորաց, զարմացոյց զամենեսեան և ափ 'ի բերան արար։ Ընկալաւ նա զվճիռ մահուն նմանօրինակ քաջութեամբ զոր օրինակ Լուդովիկոս և դշխոյն Անդոնիեդդա, առանց ինչ բանս գանգատանաց հանելոյ 'ի բերանոյն։ Եւ էր նա ամաց ոչինչ աւելի քան երեսնից։

Իսկ պնյագքն 'ի հեղուլ զարիւն թագաւորական տոհմին, ոչ խնայէին բնաւ և այնոցիկ՝ որոց կրօնից և իշխանութեան թագաւորն հաւատարիմ կացեալ էր, և զբաղմութիւն քաղաքացւոց զոր ջորիւք ամօք յառաջ խառն 'ի խուռն լցեալ էր 'ի բանտս, ոչինչ խտրեալ ոչ զհասակ և ոչ զտկարութիւն կանայի, այլ զկէս իբրև զատեցողս խռովութեան, զոմանս իբրև զսիրողս կրօնից բարեպաշտութեան, զայլս իբրև օգնականս և ձեռնտուս աքսորելոցն, և զբազումս անպատճառ ամենևին՝ մեծութեան նոցա ակն եդեալ, առ հասարակ 'ի մահ վարէին։

Զքառասուն և հինգ անձինս 'ի խորհրդա-
կանաց Թագաւորին միանգամայն կոտո-
րէին, և զերեսուն և երիս յաւագացն Տոլով-
սայ յայլումաւուր, և 'ի միւսում՝ զժողովն
միանձնուհեաց կարգուսականաց. դար-
ձեալ և յայլումաւուր երեսուն Ճոխ տեարս
դիւղից, յորս էր և հռչակաւորն Լավուա-
զիէ տարրաբաշխ: Խնդրեաց նա յապաղել
աւուրս ինչ զդատակնիք մահուն առ 'ի յանկ
հանել զկարևոր ինչ փոյձ կենցաղոցս
դիւսի իրիք. ոչ Թողին նմա բռնաւորքն
կամ առ նախանձու ընդդէմ մեծի հանճա-
րոյ առնն, կամ առ անյագուԹե 'ի ժողովել
զաւար ապանեալոցն. քանզի զինչս նոցա 'ի
դանձս հասարակաց ժողովէին: Մինչ զի 'ի
կարևոր պէտս արծաԹոյ՝ զբազումս անդէն
'ի մահ ածէին, և սովորական ոՀ խօսիցս
այս էր Ռոպէսպիէռայ և իւրոցն, դրամս
հատանել ասէին փոխանակ անգուԹ կո-
տորածոց:

Եւ այս ահաւոր տեսարան ապանուԹեցն
ոչ 'ի Փարիզ միայն լինէր, այլ և յամենայն
երկրի քաղաքս 'ի Նանթ, յԱռա և յՕ-
ռանժ, 'ի ձեռն փոխահիւպատոսին Քռեայ,
Յովսեփայ և ՄէյնէԹայ. նոյնպէս և 'ի
Մարսիլիա, յԱվինիոն, յԱրլեզիոն, ամե-
նայն մեծամեծք 'ի քաղաքացւոց խողխողե-
ցան: Ի Վերսէոն եօԹն և տասն օրիորդք
յաւուր միում 'ի մահ ածան. զի 'ի հան-
դիպի խաղուց զոր եռուն Բրուսք՝ մտեալ
էին 'ի կաքաւս. և միշտ նոր խրախուսանօք
վարէին զմիմեանս 'ի կոտորած: Վասն որոյ

և իրաւամբք Արհաւրաց կոչեն զժամանակս զայս Գաղղիացիք։ Յոգիս ապաստան լինէր ազգն ընկճեալ ընդ բռնաւորաքն. յարեաւ Լատմիրալ ոմն բառնալ 'ի միջոյ զգլխաւորն 'ի բռնաւորաց զՌոպէսպիէռ. այլ ոչ կարացեալ մուտ առ նա գտանել, զհետ եղև սպանանել զերկրորդ նորա զՔոլլոյ Տ'Էրպուա, այլ երիցս արձակեալ 'ի վերայ նորա հրացանս, վրիպեցաւ. և ինքն ըմբռնեալ, 'ի մահ դատապարտեցաւ։ Ի վեր երևեցաւ և օրիորդ ոք Կեկիլիա անուն դարանակալ կենաց Ռոպէսպիէռայ, այլ չգտեալ և նորա մուտ առ նա և ըմբռնեալ, անվեհեր եցոյց քաջութեամբ՝ թէ էր կուսակից Թագաւորականաց. "Քանզի լաւ է, ասէր, մի Թագաւոր քան զյիսուն հազարս"։ Իբրև 'ի հարցափորձ քննութեան գային, ստիպէր զնոսա չյապաղել զմահ իւր. և մեծանձն արութեամբ մեռանէր։

Յետ այսորիկ համբաւ ընթանայր՝ թէ գունդ մի մարդկան սպասեն մահու Ռոպէսպիէռայ և Քոլլոյ Տ'Էրպուայ, և զի պէսք են թիկնապահս տալ նոցին. այլ ընդդէմ եկաց այնմ Քութոն՝ իբր զի հակառակ էր ազատութեան հասարակապետութեանն. և Ռոպէսպիէռ ծափահար ցնծութեամբ ընկալեալ 'ի ժողովրդենէն, և քան զնշխանապետ փառաւորեալ, մինչև հրամանք յանուն նորա ընթանային, երկնչէր վատութեամբ չտալ նշան ինչ բռնակալութեան։

Յաւուրսն յայնոսիկ 'ի վեր երևէր աղանդ

ինչ ծաղրական. կին մի պառաւ Կատարինէ Թէոյ անուն բախած գոլով, հռչակէր զանձն Մայր Աստուծոյ, և քարոզէր զմօտաւոր գալուստ նորոյ Մեսիայի՝ որ հանդերձեալ էր երևել 'ի շփոթս անդ խռովութեանց, և զի յետ այնորիկ սկսցին անվախճան կեանք ընտրելոց, և զի այս հաւատք Ճշմարիտ Աստուծոյ տարածեսցին ընդ ամենայն աշխարհ, և ջնջեսցին հակառակորդք Ճշմարտութեանս: Եւ մարգարէք նորա էին Կարդուսեան ոմն քահանայ Կէրլ անուն հետևող նորա, և Ռոպէսփիէռ: Այս աղանդ տարածեցաւ յոյժ, և պաշտամունք էին նոցա և հրահանգք, և աշակերտեալքն ժողովէին առ Կատարինէ: Ի ձեռն աղանդոյս և ևս զօրանայր խշխանութիւն Ռոպէսփիէռայ, համարեալ զնա մարգարէ ոմն:

ԳԼՈՒԽ Ի.

Պաղպօն և հանդէս փօնի գերագոյն Էին:

ՌՈՊԷՍՓԻԷՌ որ տիրապետէրն արիւնհեղութեամբ՝ ծանեաւ քաջ եթէ խարխուլ է հիմն քաղաքական ընկերութեան՝ որոյ չիցէ հաստատեալ 'ի վերայ կրօնից. և 'ի ձեռն Ազգային դաշնակցութեան եհան վճիռ հաւատալ ժողովրդեան Գաղղիոյ՝ եթէ գոյ Աստուած և ընդունել զանմահութիւն հոգւոյ. ապա կարգեաց և տօնս գերագոյն Էին, Ճշմարտութեան, Արդարութեան, Պարկեշտութեան, Բարեկամութեան, Ազատու-

րութեան, Հաւատարմութեան և Թշնա-
ռութեան, և այլն և այլն։ Իսկ ինքն Ռոպէս-
փիէռ առաջի ցնորամիտ ամբոխին զարմա-
նալի լեալ իբրև նոր ոմն հիմնադիր գեղեցիկ
վարուց և քահանայապետ՝ զօրացաւ յոյժ
յոյժ իշխանութեամբն։

Տօն գերագոյն Էին 'ի քսանեւորդ աւուր
Մարգաւէտ ամսեանն, այն է 8 յունիսի,
փառաւորեցաւ յոյժ (1794)։ Նախիշ-
խան Ազգային դաշնակցութեան ընթանայր
յառաջոյ հանդիսաւորացն՝ զքահանայա-
պետական արկեալ զիւրև զհանդերձս. և
աչք ամենեցուն 'ի նա պշուցեալ հայէին.
սիգաձեմ յառաջէր նա ամբարտաւան հը-
ճուանօք ուրախութեան կալեալ 'ի ձեռին
ծաղկունս և հասկս։ Ամփիթէատր ամբար-
ձեալ էր 'ի մէջ պարտիզին Թիւյլերի. զոր
Ազգայինն դաշնակցութիւն գրաւեալ ու-
նէր, և յաջ և յահեակ գունդագունդ ման-
կունք պսակեալ մանիշակօք, պատանիք
մրտենեօք, արք կաղնեօք, ծերունիք որ-
թովք և ձիթենեօք. կանայք կալեալ զձե-
ռանէ աղջկանցն բարձեալ ծաղկունս կողո-
վով։ Մատեաւ 'ի սեղանն Ռոպէսփիէռ. խո-
սեցաւ առ ժողովուրդն իբրև քահանայա-
պետ գերագոյն, և որպէս նորոց բարու-
թեանց աւետաւոր՝ հուր մատոյց անդրեացն
որ առաջի առնէին զանաստուածութիւն,
զխռովս և զամբարտաւանութիւն, և 'ի վեր
երևեցաւ իմաստութեան գրոշն։ Անտի ջո-
գան յԱրիսեան դաշտն, ուր փոխանակ
հայրենեաց սեղանոյ՝ լիառն, և 'ի ծայր

լերին ծաւ կանգնէր, ընդ որով նատաւ Ժողովն Դաշնակցաց. անդ խուռմբ մանկանց, ծերոց և կանանց սկսան երգել. ապա 'ի տալ նշանին երգուան պատանիք յազատութիւն զգուշութեամբ հայրենեաց, կանայք զողոյսն 'ի վեր ամբարձեալ և ամենեքեան զձեռս յերկինս՝ երգուան. և կատարեցաւ հանդէսն յայս բան խրախուսանաց Ռոպէսփիէռայ. "Քաղաքացիք քաջք, հրճուեալք այսօր ասնիս խնդութեամբ, ձեռն արկցուք առ վաղիւ 'ի կոտորել ընչել 'ի միջոյ զմոլութիւնս և զբռնաւորս":

Եւ 'ի վաղիւ անդր սկսաւ գործն դառնութեան. եհան Ռոպէսփիէռ նոր օրէնս առանց ջատագովութեան դատելոյ զամբաստանեալսն, հաւատալով միայն վկայութեան երդման դատախազից. ապա այնուհետև դատախազ և դատաւորք ինքնին արիւնարբուքն կային. և ո՞ կարիցէ բերել 'ի թիւ զկոտորելոցն զհամար: Քանզի յետ անկման Ռոպէսփիէռայ ամենայն ինչ պատրաստ սեսաւ 'ի մայրաքաղաքին, զոր ամենայն հարիւր և յիսուն անձինս քարշել 'ի մահ. և խորհէին հնարել գործի ինչ՝ հատանել միանգամայն 'ի մի հարուածս զերեսուն գլուխս, և սեղեալ էին անցս ջուրց մերձ 'ի գուռն Սէնթ-Անդուան, ածել ընդ այն զարիւն խոշնոջելոցն 'ի Սենա գետ: Յաւուր միում եհարց զՌոպէսփիէռ ոմն 'ի մտերմաց նորա, թէ "Չինչ լցեն պայմանք դատապարտելոցն, և ո՞ր նոցա վախճան". պատասխանի արար նա ցրտութեամբ ինն.

“Ազգ մարդկան՝ որ ետես զնախնի վարչութիւնն՝ ցաւեսցի միշտ ընդ այն • վասն որոյ ամենայն մարդ 'ի քսանամենից և 'ի վեր՝ կորիցէ „ :

ԳԼՈՒԽ ԻԱ •

Անկումն Ռոպէսփիէռայ և մահ նորա :

ԸՆԿՆԵԱԼ գրեթէ համօրէն Գաղղիոյ յանողորմ բռնակալութենէ՝ զայս միայն ունէր ակնկալութիւն, զի նոքին իսկ բռնաւորք յաւուր միում կործանելոց էին զոր հաստատեցինն • քանզի և արդարութեան Աստուծոյ դատաւորք երևէին նոքա 'ի պատուհասակոծ առնել զանօրէնութիւնս իւրեարց : Եհաս այսպէս վրէժխնդրութեան Աստուծոյ սահման 'ի վերայ Ռոպէսփիէռայ, որով յիմարեցոյց զնա փորել ինքնին իւր խորխորատ • քանզի նախ ամբարտաւանութիւնքն 'ի հանդիսի տօնին ատելի եղև բազմաց • և 'ի ջրել դաշնակցութեան զաղանդն նորահնար, և 'ի կոչել զգլխաւորս աղանդոյն յատեան, Ռոպէսփիէռ ցասուցեալ մեկնեցաւ առանձինն : Ապա մախացեալ նորա ընդ մեծութիւն Քոլլոյ Տ'Էրպուայ առաջի ժողովրդեան, մերժեաց զնա 'ի խմբէ ժաքոպէնաց, այլ նա եգիտ 'ի Տանպէտոս իւր թիկունս : Ի նմին ժամանակի խէթիւ հայէր Ռոպէսփիէռ և 'ի Պիյլոյ Վարէն՝ յայր փառասէր և եղեռնութեանց նորա գործակից, և խորհէր կործանել և զնա :

թէպէտ ոչ ևս էր նախիշխան Տասնապե-
տացն սակայն կուսակիցս իւր ունելով զՍ-
Սէն-Ժիւստ և զՔուլթոն՝ եռապետութիւն
իմն ահաւոր ցուցանէր, քանզի դեռ ևս 'ի
կողմն նորա էին Ատեանն խառուվչաց, ռա-
միկն, Հանրիոյ առաջնորդ խառնիճաղանճ
Ժողովրդեան Փարիզու. որպէս զի եթէ
ընդ անօրէնութիւնն խառնէր և զյանդգ-
գնութիւն՝ տիրապետէր անշուշտ: Հանրիոյ
Թեղադիր եղև նմին ընդ սուր հանել զամե-
նայն հակառակորդս 'ի Ժողովի ուրեք դաշ-
նակցութեան. այլ Ռոպէսփիէռ յապա-
ղեաց զայն, դիպող ժամու մնալով. և ոչ
կարաց քաջ պատրաստել զնորհուրդ իւր.
վասն որոյ անդէն միաբանեցան ալիք չարա-
բարոյք իբրև զինքն, Թալլիէն, Պուրսոն ալ
Լուազ, Պիյլոյ Վարէն, Քոլլոյ Տ'Էրպուա,
Վատիէ, Վուլան և Ամար, և այլք. որք զօ-
րացեալ յինքեանս ձգեցին և զԺիրոնտեանս
ապրեալս 'ի կոտորածէն, և սկսան նոքօք
հանդերձ գլուխ ամբառնալ ընդդէմ բռնա-
ւորութեան Ռոպէսփիէռայ և յայտնի իսկ
առաջնոցա և 'ի Ժողովի Ազգային դաշնա-
կցութեանն: Քանզի ցրտութեամբ իմն ունկն
եդեալ երկարաձիգ ճառից նորա, ապա հա-
մարձակեցան իսկ հակառակ դառնալ նո-
ցին և բողոքել ընդդէմ ինքնիշխանութեանն:
Ընդ որ ահաբեկ տարակուսեալ Ռոպէս-
փիէռ չոգաւ առ Ժաքոպէնս, ընդ նմա և
Քուլթոն: Ծափահար ցնծութեամբ ընկա-
լաւ զնա խառնիճաղանճն վայրագ, և խն-
դրեաց երկրորդել զճառս յունկն նոցա.

և յօժար խնդութեամբ յակՃիւռս կացեալ, և կայթիւք ընդհատէին ստէպ զբանն՝ որ տեսեաց ժամն երկուս։ Ի վերջ բանիցն ցաւօք իմն աւանդեաց նոցա զվերջին զիւր կտակ. “Զի այնչափ հզօր տեսի, ասէ, այսօր զթշնամեաց իմոց զժողով, մինչ զի անմարթ է ինձ այլ ևս ակն ունել կենաց։ Անկանիմ ես անտրտունջ, և թողում ձեզ զիմ յիշատակ, և ջատագովնմին զձեզ միայն”։ Գոչեաց անդէն մոլեգնեալ ժողովուրդն. “Ջէ ժամանակս երկիւղի և անյուսութեան, խնդրեսցի վրէժ հօր հայրենեաց յամենայն չարագործ մարդկանէ”։ Եւ անդէն գլխաւորքն 'ի նոցանէ պատեալ զնովաւ, գոչեցին խաղալ 'ի վերայ թշնամեաց անձին նորա, և հալածեցին զՔՌՈՂԼՈՅ և զայլս 'ի նուիրակացն. և ՌՈՍԷՍՓԻԷՌ վազուեան աւուր թողոյր զգործն։

Եւ յաւուրն երկրորդի մինչդեռ ժողովէին դաւադիրքն պատեհի մեալով 'ի կործանել զնա, նորա ոչինչ գիտելով՝ եկն երևեցաւ 'ի ժողովն ընկճել զնոսա կամ ահացուցանել։ Եւ ՍԷՆ-ԺՎԻՍՍ յատենախօսել, և ցուցին ցասմամբ զբանս նորա թալեին և ՊԷՅԼՈՅ, և սկսաւ կագ 'ի նոսա. Եւ 'ի վերջ ՌՈՍԷՍՓԻԷՌ առնել նոցա պատասխանի. այլ անդէն աղաղակեաց ժողովն, “Անկցի՛ բռնաւորն”։ Գոչեաց ՌՈՍԷՍՓԻԷՌ խօսել միանգամ ևս, այլ ջէր ոք որ լսել նմին. կատաղեալ շուրջ գայր, և յամենեցունց մերժեալ անկաւ խոնջ և փրփրեալ։ Եւ անդէն վՃռեաց ժողովն ձերբակալել

զնա և զՔուլթոն և զՍէն-Ժիւսա և զՀան-
րիոյ և զԸնկերան նորա , այլ յօգնութիւն
հասեալ խմբի միոյ ժաքոպէնաց զերծուցին
զնոսա , և փախուցեալ ապաւինեցան 'ի Ժո-
ղովարան քաղաքին իբրև յամուր ապաս-
տանի : Եւ 'ի հուչակել համբաւոյն՝ եկին
ժողովեցան բազմութիւնք անօրէն մարդ-
կան երդուեալք 'ի խնդրել զվրէժ անիրա-
ւութեանն : Գիշեր էր ժամն և հնչէին զան-
գակք 'ի կուտել զնատնիճաղանձն 'ի զօրա-
վիգն Ռոպէսպիէռայ . և այլուստ հարկա-
նէր թմբուկ 'ի ժողովել զքաղաքացիս ընդ-
դէմ բռնաւորին :

Ահաբեկեալ Փարիզ ոչ գիտէր ո՛ւմ մնայր
նմին ծառայել . այլ ոչ երկարեաց յերկ-
բայս : Մինչդեռ գային ժողովէին արբա-
նեակք բռնաւորին առ նա , քաղաքացիք
ամենայն եկին միացան ընդ Ազգային գաշ-
նակցութեան , կազմեցին անդէն գունդս ,
և խաղացին 'ի վերայ բռնաւորին : Ծաղ-
կեաց գիշերն զնուազութիւն սակաւաձեռն
խմբին , և Հանրիոյ արբեալ գոլով՝ ոչ կարաց
կարգել զիւրան 'ի մարտ . որք անդէն զէնն-
կեցք անձնատուր եղեն , մատնեալ զբռնա-
ւորն : Հանրիոյ առ շտապ տագնապի ջան-
կանելոյ 'ի ձեռս , էարկ զանձն ընդ պա-
տուհանն 'ի վայր , և խորտակեցաւ զիստ
նորա , և գետնաքարշ սողոսկեալ թաքեաւ
'ի լուալիս , այլ ածաւ անտի բռնութեամբ
'ի դուրս : Իսկ Քուլթոն կծկեալ կայր ընդ
ոտանամն տուր 'ի ձեռին , ոչ համարձակեալ
անձին առնել , և ջախջախեցին անդէն ըզ-

կողմ նորա 'ի բուն հրացանի։ Ռոպէսպիէռ դողդոջոտ ձեռամբ արձակեալ զհրացանն, ջախջախեաց զծամելիս իւր. և եղբայր նորա կրտսերն Ռոպէսպիէռ արկեալ զանձն յերրորդ դատիկոնէն՝ ապրէր. և Լբպա զիւրովին գնայր։ Ածան նոքա յատեան խառնեցաց, և Սէն-ժիւստ գայր զկնի լալով իբրև զտղայ, և զհետ նորա կուսակիցք բռնաւորին։ Ամբոխ ժողովրդեան շուրջ պատեալ զսայլիւն՝ ուր բռնաւորն և կուսակիցք նորա ածէին 'ի մահ, գիրկս զմիմեամբք արկանէին և երջանիկ աւուրս այնուհետև իրերաց մաղթէին, և դարձեալ անէծս դառնագինս բռնաւորին կարդային. և իբրև դահիճն էառ զգլուխ նորա, անդէն արձակեցան հրացանք խնդութեան։ Ոգի էառ Գաղղիա, դադարեցաւ բռնակալութիւնն, և վախճան եղև արհաւրացն և նորոյ խառնութեանս՝ յամսեանն Ոսկեհունձ, այն է 27 յուլիսի։

Ժամ է արդ դառնալ 'ի պատերազմունս որ 'ի սահմանագլուխս աշխարհին։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Յաջողութիւնք զինուոց Գաղղիոյ 'ի վերայ Ռուսաց թագաւորի Իւրեանց առ բռնակալութեամբ Ռոպէսպիէռոյ։

ՋԱՄԵՌՆ ողջոյն պատրաստէին 'ի մարտ և Գաղղիացիք և դաշնակից պետութիւնք Եւրոպայ. և քան զամենեսին վառեալ էր Փիթ նախագահ իշխան և վարիչ տերու-

թեան Անգղիացւոց։ Սա ամենայն ճգամբ զսպեալ, զնեռքին շփոթս աշխարհին՝ որ 'ի գրգռութենէ Ֆաքոպէնաց հզօր նաւատորմղաւ կալաւ զբովանդակ ծովն, պաշարեաց զԿորսիկա կղզի, և պարապոյ մնայր զօրս թափել 'ի Վանդէա։ Իսկ յԱմերիկա շուրջ գայր Անգղիացւոց տորմիղ զԱնդիլեան կղզեաց, պատեհի մնալով ընդ բռամբ ածելոյ զայնոսիկ 'ի կռիւս անդ գերեաց և ազատաց։ Նոյնպէս և 'ի սուրբն Դոմինիկոս, ուր սեաւքն յապստամբութիւն գրգեալ էին յազատութենէ իւրեանց, ոանկռիւ գտին Անգղիացիք, և Մարթինիկեան կղզիք անկան 'ի ձեռս նոցա անդարձք։ Դարձեալ և 'ի Հընդիկս բռնացեալ ընդ ծով, առին զՓոնթիշէրի։ Քառասուն հազար զօրս ունէին 'ի Ստորին գաւառս. վճարեալ և զծախս մարտին ընդ Հոլանտացիս, դաշինս կռէր Փիթ և ընդ Բրուսս՝ վաթսուն և երկու հազար զօրս յարուցանել 'ի մարտ։ Իսկ Աւստրիացիք ինքնին խլրտէին 'ի պատերազմ 'ի վրէժ արեան Թագուհւոյն՝ քեռ կայսերս իւրեանց։ Այլ Սուեդք և Դանիք ոչ յայս կողմն և ոչ յայն եռուն ձեռս. նոյնպէս Ամերիկացիք և Հելուետիացիք և Վենետակեցիք։ Բիէմոնդեցիք պատերազմէին 'ի թափել զՍաւոյա և զՆիցցա. նոյնպէս և Սպանիացիք։ Յիսուն հազարք էին 'ի նիզակակցաց 'ի Բելգիա ընդ Գերմանացի ընդ Հոլանդացի և ընդ Անգղիացի. քսան և հինգ հազար Գերմանացիք 'ի Լուքսեմպուրկ, և յիսուն հազարք խաւն ընդ վատ-

րանգիս յափունս Հռենոսի, և բանակն Բիէմոնդեցւոց ընդ նիզակակից Աւստրիացիս քառասուն հազարք, և վեթսուն հազար Սպանիացիք 'ի Պիրենեանս։

Կաղմէին յայնժամ և Գաղղիացիք հեծելազօրս ամենայն փութով ընդուռեամբ, և կանգնէին երիտասարդանոցս 'ի հրահանգս զինուորութեան։ Եւ ձեռն 'ի գործ արարեալ զօրացուցանէին զծովային զոյժ իւրեանց՝ որ յետ առման Թուլոնի տկարացեալ էր։ Ի վերայ երեսուն նաւացն ծովակալ եկաց Վիլլարէ-Ժուայեօզ, և ըստ սովորութեան ժամանակին Ժան-Պոն-Սէնդ Անտրէ 'ի Դաշնակցաց ժողովոյն ընդ նմա։ Բախեցան սոքա ընդ տորմիղս թշնամեաց միանգամ և երկիցս, և քաջութեամբ մարտուցեալ, թէպէտ և յաղթեցան՝ այլ ժամ ետուն վաճառաբարձ նաւուց Ամերիկոյ մտանել անվնաս 'ի Գաղղիա։

Սկսաւ նախ պատերազմն ընդ Սպանիացիս, և զօրացաւ Տիւկոմիէ 'ի վերայ նոցա։ Իսկ 'ի Բիէմոնդ Տիւպէրպէոն և Պոնափաւթէ վանեալ զԳերմանացիս առին զՕնէյլ և մտին յՕրմէա։ Ոչ կարացեալ Բիէմոնդեցւոց և Աւստրիացւոց զդէմ ունել Գաղղիացւոց, թողին 'ի նոսա և մեկնեցան 'ի Լիմոն. և բանակն Ալպեանց առնոյր զսուրբն Բեռնարդոս և զվեառն Սընի։

Այլ մեծ էր մարտն 'ի Հիւսիսային սահմանադլուխս Գաղղիոյ, վասն քաղաքաց ոմանց, զորս ունէին 'ի ձեռին թշնամիք։ Ժուռատն թողեալ զզօրս իւր 'ի Փիշկուիս

ինքն գնացեալ էր 'ի զօրավարութիւն բանակին՝ որ յափունս Մօզէլայ։

Իշխանն Քոպուրկ սպարապետ միաբանելոց տէրութեանց Եւրոպայ՝ հարիւր հազարաւ էկն և նստաւ ՁԼանտրէսի քաղաքաւ, նիզակակից իւր ունելով զդուքսն Եօրքայեւ զաւստրիացի զօրավարն զՔլէրֆէ։ Զօրավարքն Գաղղիոյ Սուհամ և Մորոյ չուարարին 'ի Լիլ քաղաքէ, հասին արագ 'ի Մուքրոէն 'ի վերայ աջոյ թեւի թշնամեաց, և կանգնեցին անդ զառաջին յաղթութիւն 'ի վերայ զօրավարին Քլէրֆեայ։ Պատուէր առեալ և Ժուռատանայ քառասուն և հինգ հազար զօրօք չու արար յափանց անտի Մօզէլայ գալ անկանել 'ի վերայ ձախոյ թեւի թշնամեաց։ Սոքա աճապարեցին արգելուլ զանցս Գաղղիացւոց. այլ զօրավարն Սուհամ արիագոյն գտեալ՝ ելհար 'ի ոպառ և խորտակեաց զթշնամիս, որոյ զօրավար կայր դուքսն Եօրքայ։ Նոքա որ ուրոյն առանձին խորտակեցան, խմբեալ 'ի մի՝ զօրացան ընդդէմ յաղթականաց, առին և զԼանտրէսի. սակայն ելհաս և Ժուռատան բանակաւն իւրով և յաւելաւ 'ի Փիշկուիս, և ստուարացեալ՝ նորոց յաղթութեանց ակընկալիս առաջի առնէր։

Ապա դարձեալ հատուածեալ Փիշկուիս, չոգաւ և պաշարեաց զԻուփրէս քաղաք, և խորհէր ձգել այնու զՔլէրֆէ յօգնութիւն քաղաքին. և հասեալ ըղձիցն, ելհար խորտակեաց զնա 'ի Հուկլէտ, և էառ զքաղաքն, մինչդեռ Ժուռատան յարձակէր, 'ի վերայ

Շարլրուայ քաղաքի։ Հասին յօգնութիւն քաղաքին իշխանն Օրանժ և Գոսլուրկ, բազում անգամ վանեալ 'ի նոցանէ Ժուռտան, զօրացաւ կալաւ զափունս Սամպրեայ, և տիրեալ բարձանցն որ մերձ 'ի դաշտս Ֆլէօրուսայ՝ բախեցաւ անդ ընդ Թշնամիս։ Հաւասար էին գոգցեալ երկոքին կողմանքն, ութսուն հազար ասի և ութսուն հազար անտի. զօրացան Գաղղիացիք և առին զՇարլրուա։

Ոչ գիտելով Թշնամեաց զառումն քաղաքին՝ անկան 'ի վերայ Ժուռտանայ. զբագլուին Գլէպէր այն որ քաջութեամբ 'ի պատերազմունս Վանդէացւոց երևելի էր, բախեցաւ ուժգին ընդ Թշնամիս և յետս ընկրկեաց զաջ թև բանակի թշնամեաց, և Ժուռտան վանեաց զբուն բանակին և զձախ թևն։ Հզօր էր յոյժ հեծելազօր Թշնամւոյն, այլ հզօրագոյն պատրաստութիւնք Թնդանօթից Գաղղիացւոց. եղև անդ պատերազմ խիստ, և տևեաց կոտրածն ժամս երկոտասան։ Յաւուր յայնմիկ եցոյց Ժուռտան նոր արուեստս 'ի պատերազմի. քանզի 'ի ձեռն օգտակարիկ գնտոյ յայտ արար զչարժմունս Թշնամեաց և զնահանջ նոցա։ Եւ յետ այսորիկ սկսան հասարակապետականք հնչել զերգս յաղթութեան. քանզի խմացեալ այնուհետև Թշնամեաց զառումն Շարլրուայ՝ որում յօգնութիւն գային, և տեսեալ զպարտութիւն իւրեանց, յուսահատ նահանջեցան, և Գոսլուրկ հրամայեաց դարձ առնել զօրաց 'ի

Պրուքսէլ առ 'ի պահել գոնեա զայն 'ի ձեռաց Թշնամւոյն. այլ սակայն չէտ նմա պարապ Փիշկռիւ և աճապարեալ կալաւ զքաղաքն զօրօք իւրովք։ Յայնժամ Թշնամիք վարատեալ ընդ կրունկն դարձ արարին դէպ ուղիղ 'ի Մէօզ և 'ի Հռենոս։ Թափեաց Գաղղիա 'ի ձեռաց Թշնամեաց զամենայն զքաղաքս կորուսեալս մինչև ցՊրուքսէլ, և ձեռն էարկ 'ի նորանոր աշխարհակալութիւնս 'ի Փլանդրիա։ Զէր երբէք անդ այսպէս զօրացեալ Գաղղիացւոց և բազմութեամբ և քաջութեամբ. քանզի եօթանասուն հազարք էին ընդ ձեռամբ Փիշկռիւ զօրավարին և հարիւր վեշտասան հազարք ընդ զօրավարութեամբ Ժուռատանայ։ Թէպէտ սպառեալ էին գանձք հասարակաց 'ի Թոշակ 'ի պէտս զօրականին, այլ նոքա կարևորագունիցն անգամ պիտոյից ժուժկալեալ՝ 'ի յաղթութիւն ևեթ փութային. այնուհետև ոչ ընդ վրանօք բանակէին, այլ բացօթեայք ընդ ծառովք. և զօրագլուխք անուռճիկ իբրև զսովորական զինուորս կէին՝ զնոյն հաց ուտելով, և իբրև զնոսա հետիոտս ընթանալով քուրձ 'ի թիկունս. աշխոյժ միայն և երանդն յոտին ունէր զբանակս քաջացն։

Այսպէս Ժուռատան և Փիշկռիւ յառաջ խաղացին, հալածական տանելով զթշնամիս առաջի իւրեանց, տիրեցին քաղաքացն մինչև յափունս Հռենոսի։ Նոյնպէս և զօրավարն Տիւկոմիէ և Մոնսէյ վանեալ զՍպանիացիս 'ի Գաղղիոյ՝ մտին յաշխարհն նոցա։ Ի յաղթանակել առատ Գաղղիոյ, բարձաւ բռնամահ անգութն Ռոպէսփիէռ։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Պայման Գաղղիացւոց յԵպ անկանելոյ Բոնակալու-
թեան Ռոպէսպիէռայ։

Եւ թէպէտ կորեաւ Ռոպէսպիէռ և կու-
սակիցք նորա ընդ նմա, և բազումք 'ի կա-
լանաւորելոցն զերծան 'ի բանտից, և ջնջե-
ցան օրէնք բռնակալին, այլ 'ի կրկին խուսաբ
բաժանեալ գոլով գարձեալ խռովարարաց
Գաղղիոյ՝ կէսք զԺաքոպէնս ունէին իւ-
րեանց թիկունս հանապազորդեալ ցանկա-
ցեալ զկոտորածս. այլք 'ի կողմն Դաշնակցաց
և սիրող հասարակապետութեան հակառակ
արիւնարբուշտ Ժաքոպէնաց՝ խաղաղել զաշ-
խարհն խորհէին։ Եւ առժամն խաղաղարար
մարդկան առաւելեալ 'ի զօրութիւն, դա-
դարեցուցին զկոտորածն, զԱռեանն որ
'ի փրկութիւն հասարակաց՝ կրկին հաս-
տատեալ. և փոխանակ սպանելոցն կարգե-
ցին զայլս՝ ամփոփեալ զինքնիշխան ազգա-
տեսչութիւն նորա։ Նոյնպէս նորոգեցին
և զԺողովն որ յաներկեանութիւն հաստ-
տակաց. գարձեալ և վասն ամենայն յան-
ձանձանաց պետութեան կարգեցին այլ ևս
չորեքտասան ատեանս։

Ողորմ էր յայնժամ պայման պետութեան
ամենայն երևելի քաղաքաց շաղախեալ յա-
րիւն ազնուական մարդկան, և ամենայն

հոյակապ շինութիւնք 'ի նոսա կործան անկեալ յաւերս : Դադարեալ էին և ձեռնական արուեստք, ճարտարութիւն քաղաքացւոց, և վաճառականութիւն անկեալ. քանզի կալեալ ունէին Անգղիացիք զամենայն անցս ծովուց. գանձք հասարակաց 'ի մեծի չքաւորութեան, և երկիրն իսկ անբերր առ կարօտութեան մշակաց, որք գոգցեալ ամենեքեան 'ի զինուորս գրեցան, կամ զինեալ ռոճկօք 'ի խռովութիւնս միշտ մնային : Նա մանաւանդ և ընդարձակ գաւառացն Վանդէացւոց յաղարտ վարեալ՝ որ կերակրէին զԳաղղիա, տային 'ի միտ առնուլ խռովչացն թէ ինքեանք ինքեանց ձեռամբ յայն աղէտս արկին զաշխարհն :

Յետ այսորիկ վերսին գժտութիւն անկանէր 'ի ժողովն Դաշնակցաց, և կամէին քննութիւն առնել կուսակցաց Ռոպէսպիէռայ 'ի դատաւորս յԱռենի փրկութեան հասարակաց. վասն որոյ արկան յիշխանութենէն Պիյլոյ Վարէն և Քոլլոյ Տ'Էրպուա, և ինքնին հրաժեշտ եառն յիշխանութենէ Պառէր և Թալիէն. և զտեղի նոցա կալան Տելմա, Մէրլէն, Քոշոն և Ֆուրքրուա. նոյն փոփոխութիւն գործեցաւ և 'ի ժողովն աներկեւանութեան հասարակաց : Մինչդեռ այս ելք ընէին, դէպ եղև զի բորբոքեալ վառօդեաղն 'ի Կրէնելլ հիմն 'ի վերս կործանէր զտեղին : Ընդ անակնկալ դէպսն ահաբեկ եղև մայրաքաղաքն, և նորոյ դաւաճանութեան համարեալ զայն գործ՝ կէսք 'ի վերայ ազնուականաց արկա-

նէին զվնասն, և այլք 'ի վերայ Յակոբոպէնայց։ Եւ մինչ յայս շփոթս էին՝ յաւել զխռովն և դէպք արկածից Թալիէնայ. քանզի մտեալ ոմն 'ի գիշերի 'ի տուն նորա, "Քեզ մնայի, ասէ, ցարդ. ոչ ևս զերծցիս 'ի ձեռաց իմոց,,. և արձակեալ զհրացան, ջախջախէ զուս նորա։ Դարձեալ զՅակոբոպէնայց եղեն կասկածք վասն գործոյն. այլ դեռ ևս զօրաւորք էին նոքա, և անմարթ էր յայտնի կռուել ընդ նոսա. վասն որոյ և ըստ կամայ նոցա մերժեալ զոսկերս Միրապոյ 'ի Փանթէոնէ, եդին զՄարաթայ մարմինն։

Ազգային դաշնակցութիւն յետ հաստատելոյ կարգս և ամփոփելոյ զիշխանութիւն մոլեգնութեան արիւնարբու մարդկան, առաքեաց և 'ի գաւառս գաւառս զնուիրակս իւր՝ զնոյն հաստատել խաղաղութիւն, դադարեցուցեալ զանգութ կոտորածս, ձերբակալեալ զմոլեգին խռովիչսն՝ զկուսակիցս Ռոպէսփիէռայ, և փոխեալ զքաղաքաց վարիչս։ Իսկ 'ի մեծամեծ քաղաքս, զոր օրինակ 'ի Տիժոն, 'ի Լուգդոն, 'ի Մարսիլիա, 'ի Տոլովսա՝ ուր խլրտէին Յակոբոպէնք ընկճեցան անդէն։ Եւ հզօրագոյն ժողովն Յակոբոպէնաց 'ի Փարիզ տեսեալ թէ համարէն ազգն գարշի 'ի նոցանէ իբրև 'ի մարդակերաց և 'ի կուսակցաց արիւնրուշտ բռնաւորին Ռոպէսփիէռայ, բողոք բառնային ընդդէմ ամբաստանութեանն՝ ջանալով ջատագով լինել անձանց։ Սակայն օրքան զօր յաւելոյր խումբ թշնամեաց նոցա պատանեաց՝ որոց հարք 'ի մահ մատնեալ

էին 'ի կատաղի ռամկավարացն յայնցանէ, և որոց ազատեալ էին 'ի մահուանէ և 'ի բանտից: Խումբս այս երիտասարդաց հնարեցին իւրեանց առանձին տարազ զգեստուց, և կոչեցան Ոսկեզարդ մանկութիւն: Զօրացաւ և ևս Դաշնակցութիւնն, և տակաւ եբարձ զամենայն օրէնս արիւնրռուշտ խռովչացն. փոխեաց և զզօրավարս՝ որք յապականութիւն դնէին զՎանդէա և զԲրետոնիա, և 'ի տեղի նոցա առաքեաց զՎիմոյ և զՀՀոշ, եթէ հնար լիցի խօսել ընդ նոսա 'ի հաշտութիւն խաղաղութեան:

ԳԼՈՒԽ ԻԴ.

Բարբառն Ժողովոյ խաղմարար Ժաքոպէնաց:

ԴԱՀՆԱԿՑՈՒԹԵԱՆ ազգայնոյ, որ պատեհի մնայր ցրուել զԺողովն Ժաքոպէնաց, այսպիսի ինն դէպք պատճառս եղուն վարատելոյ զընկերութիւն ամբարշտացն՝ որ այնչափ աղէտս ածին Գաղղիոյ և ողջոյն իսկ Եւրոպիոյ:

Ի վախճան ամին 1794, պատանեակք ոմանք հակառակորդք նոցա խմբեալ յիսնիւ չափ 'ի մի առ 'ի զբօսանս, խորհեցան յիւրեանս երթալ պաշարել զԺողովեղ Ժաքոպէնաց ընդ խաղ, և վառեալ իբրև զինու գաւազանօք իւրեանց՝ անկան յուղի, աղաղակ բարձեալ. "Կեցցէ հասարակապետութիւն. անկցին Ժաքոպէնք". դատարկաշրջիկ մարդկան խումբք

եկին ժողովեցան օգնական նոցին։ Ընդ լուր յարձակման նոցա, նախագահ ժողովոյն Ժաքոպէնաց եդ զկարմիր գտակն 'ի գլուխ իւր, ծանուցեալ թէ 'ի վանդի կային հայրենիք։ Իսկ արտաքուստ տեղային զքարինս իրրև զամպս կարկտաբերս, և ածէին գործիս բանալ զդրունս։ Եւ յորժամ մերձ եղեն 'ի խորտակել, պաշարեալքն յարձակեցան 'ի դուրս, և սկսան կռուել. և յարձակել հրացանից երկուստեք՝ բաժանեցան նոքա յիրերաց հաւասար յաղթութեամբ, և 'ի զէնս նոցա հաստատեալ էր բազդ Գաղղիոյ՝ կամ վերսին 'ի կոտորած և յարիւնհեղութիւն, կամ յանկումն ամբարշտացն Ժաքոպէնաց։ Եհաս յայնժամ պահապան գունդ զօրաց, ցրուեաց զբազմութիւնն մարդկան Ժաքոպէնաց, և զժողովն որք տեղի տուեալ մեկնեցան յարուարձանս սրբոյն Անտոնի 'ի սովորական իւրեանց տեղի ապաւինի։ Օգուտք կարևորք զհետ եկին յաղթութեանս. զի հրամանաւ պետութեան արգելաւ ժողովն Ժաքոպէնաց և փակեցաւ ատեանն ահագին և արիւնահեղ, յորմէ այնչափ կոտորածիւ եղանէին վճիռք, յետոյ ուրեմն և հիմնայատակ կործանեցաւ։ Ընկալան զվճիռ մահու անագորոյն Ֆուքիէ Թէնվիլ՝ որ կարգեալ էր ամբաստան և գատախազ հասարակաց, Յովսէփ Լքպոն և Քաւիէռ՝ որք լցին արեամբ զԱռա և զնանթ։

Յետ այսորիկ դարձոյց Դաշնակցութիւնն ազգային զնուիրակս Ժիրոնտեանց՝ արա

եօթանասուն և երեք տարագիրս 'ի հայրենեաց. յետոյ նահանջեաց զվճիռ հալածանաց քահանայից և ազնուականաց, հաստատեաց վերոսին զկրօնս, ջնջեաց և զբռնի հարկս։

Ի սմին ժամանակի խուժք պատանեկաց խորհելով կարեվէր խոցել զմիտս ժաքոպէնաց, զանդրիս Մարաթայ, որ յամենայն հասարակաց տեղիս կանգնեալ էր՝ ձգեցին 'ի դուրս նախ 'ի հասարակաց թատերէն, և փշրեցին 'ի ծափահար ցնծութիւն ժողովրդեան և 'ի գոչիւն "Անկցի Մարա, անկցի արիւնարբու հրէշն՝ որ երեք հարիւր հազար գլուխս խնդրէր"։ Եւ յաւուրն երկրորդի ձգեալ զանդրիս նորա և յամենայն հասարակաց տեղեաց և արեամբ զանգեալ զայնս, արկին 'ի տիղմ և անտի 'ի լուալիս։

Զայրագնեալ ժաքոպէնաց ժողովեցան յարուարձան սրբոյն Անտոնի, և երդուան խնդրել զվրէժ Մարաթայ. և առեալ զանդրիս նորա հանդիսիւ ածին ընդ փողոցս իւրեանց. և ինքեանք սպառազինեալ՝ ըստ պատուոյին որոց յանդգնեացին խառվել ըզհանդէսն։ Քաջալերէին զմիմեանս և պատանիքն բախել ընդ նոսա մարտիւ, այլ կանխեալ ատենակալաց զառաջս առին կռուոյն, և ցրուեցին զամենեսին 'ի տեղիս իւրեանց։ Անտի ապա վճռով ժողովոյն հանին մերժեցին զանդրիս Մարաթայ և Լբփէլէթիայ 'ի դահլէէ ժողովոյն. ընդ որ Լեռնականք և խառվիչ կանայք՝ որ Կատաղիք

Երինեայք սպանութեանց կոչէին, առ զայրոյթ սրտից սկսան մռնչել։ Յետ այսորիկ մերթ արք և մերթ կանայք խռովս յաւուցեալ վասն պակասութեան հացի, դիմէին առ ժողովն Դաշնակցաց. այլ նորա յայնժամ հզօր գոլով զօրութեամբ՝ ահիւ զինուց ցրուէր զնոսա։ Սակայն ոչ խռովութեանց և ոչ սովոյն դարմանք ինչ էին այսոքիկ։

ԳԼՈՒԽ ԻԵ.

Յաջողութիւն զինուց Գաղղիացւոց. արշաւանք նոցա 'ի Հոլանդա, 'ի Գերմանիա և 'ի Բիէմոնդ։

ՄԻՆՉԴԵՌ ցրուեալ ժաքոպէնք զայրագինս մռնչէին, զօրավարք Գաղղիացւոց ածէին զահ զինուց իւրեանց մինչև ցհեռաւորս. ժուռատան հալածական տանէր զՔոպուրկ և զՔլէրֆէ տեղակալ նորա մինչև ցսահմանս Գերմանիոյ, ընդ բռամբ ածեալ զամենայն գաւառս որ 'ի ձախակողմն Հռենոսի՝ առնոյր և զԿողոնիա. և զօրավարն Քլէպէր որ ըստ ձեռանէ նորա՝ պաշարէր զՄայէսթրիխ քաղաք։ Իսկ Մորոյ փախստական տանէր զդուքսն Եօրքայ առաջի իւր անդր քան զՎահալ գետ և առնոյր ըզՎանլու։ Եւ Փիշկռիւ յառաջ խաղացեալ առնոյր զամենայն բերդորայս՝ որ 'ի սահմանագլուխս Հոլանտիոյ։ Ի Պուալըտիւք որ անձնատուր եղև նմա՝ դտան արք վեցհարիւր ՅԱՆԳԼԻԱՑՒՈՑ անտի, զորս ըստ

անգութ օրինաց հասարակապետութեան պարտ էր ընդ սուր հանել. այլ Փիշկռիւ խոհեմացեալ քան զօրէնս՝ բանս եդ ընդ իշխանի քաղաքին, և ըստ իրաւանց դաշնադրութեան ելթող զերծուցանել զԱնգղիացիս գաղտնի 'ի սայլս ծածկեալս։ Այսու մարդասիրութեամբ յինքն ձգեաց Փիշկռիւ զսիրտս բազմաց 'ի Հոլանտացւոց։

Տակաւ սաստկանայր ցուրտն, և զօրն Գաղղիացւոց բանակեալ էր ընդ մէջ Մէօզ և Վահալ գետոց. ոչ վրանք էին նոցա, ոչ ծառատունկք, և ոչ համբարք. և երկիւղ էր հեղեղն 'ի լուծանել սառամանեաց ծածկելոյ զնոսա. այլ զօրականքն և 'ի բազմավտանգ ժամանակին՝ մերկ գոգցեա ամենևին, երգք 'ի բերան կային հրճուանօք։ Սաստկացաւ և ևս ցուրտն յանկարծ, և սառոյց միապաղաղ կալաւ զերեսս ամենայն ջուրց գետոց և խորշից ծովուց։ Եւ համարձակեալ զօրացն անցին ընդ այնս իբրև ընդ ցամաք հանդերձ ամենայն պատրաստութիւնք իւրեանց, և մխեցան 'ի միջերկրեայս Հոլանտիոյ. ծածկեցին զերկիրն առ հասարակ։ Անդ էր տեսանել զաճապարել աստի վտարանդի Գաղղիացւոց 'ի սաստկասառոյց ձմերայնի անդ, քուրձ զանձամբ արկեալ հանդերձ կանամբք և որդւովք իւրեանց անցանել ընդ սառոյցս, ընդ հոսանս ձեան և ընդ սառուցեալ ծովն Զուիտերզէ. և զփութալ անսի հեծելազօրուն Գաղղիացւոց ընդ ծով առ 'ի հասանել ունել զտորմիղս նաւաց Հոլանտացւոց։ Այս-

պէս կալան Գաղղիացիք զՀոլանտա ողջոյն. փախեաւ Սթամթհոլտէր այսինքն է իշխանապետ նոցա յԱնգղիա, և կարգեցաւ աշխարհն հասարակապետութիւն նիզակակից Գաղղիոյ: Եւ այնուհետև ոգի առեալ զօրացն գտանէին անդ զամենայն պիտոյս 'ի լիութիւն բաւականին, և վայելէին յարգասիս քաջայաղթ արութեանցն:

Ոչինչ նուազ քան զմեծափայլ յաղթութիւն աշխարհակալութեան Հոլանտիոյ, երևելի հանդիսացաւ արութիւն Գաղղիացւոց 'ի Սպանիա: Տիւկոմիէ յառաջ խաղացեալ անդր քան զՊիրենեանս 'ի Քաթալոնիա և վանեալ զԹշնամին, անկանէր 'ի մարտի. երևելի լինէր անդ յաղթութիւն և Օժրուոյ: Յաջորդեաց զՏիւկոմիէ՝ Բէրինեօն և հալածական տարեալ զՍպանիացիս, էարկ ահ երկիւղի 'ի նոսա: Իսկ յարևմտեան Պիրենեանս Գաղղիացիք առաջնորդեալք 'ի Մոնսէյայ խաղացին մինչև 'ի Փամփլոնա քաղաք, ապա տեղի տուեալ խոհականութեամբ կային մնային բանալոյ դրանց գարնայնոյն առ 'ի յարձակել 'ի Կաստիլիա:

Նոր աշխարհակալութիւնք Գաղղիացւոց 'ի զարմացումն և յերկիւղ ածին զդաշնակից պետութիւնս, և Բրուսիա աճապարեաց խնդրել զհաշտութիւն. և այլ պետութիւնք Գերմանիոյ և կայսրն իսկ յօժարեալ 'ի նոյն երևէին, եթէ չէր նոցա վըտանգ կորուսանելոյ զԲելգիա: Իսկ Սպանիա առ ամօթոյ պարտութեանցն դանդա-

ղէր : Տկարացեալ էր յոյժ յայնժամ և Վանդէա , և առաջնորդք նորին զօրավարք մնացեալք 'ի քաջացն անկեալոց՝ Սթոֆլէ և Շարէթ , երկպառակք էին յինքեանս : Թէպէտ 'ի Բրետոնիա զօրաւորք երևէին այլ մինչդեռ Փիւզէյ իշխան նոցա չէր անդ , հօշ զօրավար հասարակապետութեան՝ զօրացաւ խոհական արդարութեամբն և արիական գնացիւք . մանաւանդ 'ի հրատարակել զկամս հասարակապետութեան , մուրհակ մոռացութեան առնելով չարեաց ամենայնի , և ազատութիւն կրօնից , որով տակաւ չինջոյց զատելութիւն ժողովրդեան , և յինքն զնոսա ձգեաց : Ուր ուրեմն ապա խոնարհեցաւ և Շարէթ 'ի հաշտութիւն հնազանդութեան օրինաց հասարակապետութեան . ընդ հուպ և Սթոֆլէ զինջաւ 'ի հաշտութիւն նովին դաշամբք . 'ի նոյն խաղաղութիւն եկն և դաւառն Բրետոնիա և Փիւզէյ իշխան նոցա : Յետ այսորիկ ամենայն զօրութեամբ իւրեանց դիմեցին Գաղղիացիք 'ի Գերմանիա . և եթող Փիշկռիւ զզօրավարութիւն հիւսիսային բանակին , և եկն 'ի բանակն՝ որ յեզերս Հռենոսի . և 'ի ձախակողմեան ափանց գետոյն՝ սկըսեալ 'ի Մոգունտիոյ կալեալ ունէր մինչև 'ի Սթրազպուրկ քաղաք . իսկ Ժուռտան զակիշ ածեալ նստէր մօտ 'ի Կոլոնիա : Անցին Գաղղիացիք ընդ Հռենոս և խաղացին 'ի վերայ Գերմանացւոց :

Վիւրմսէր և Քլէրֆէ զօրավարք կայսեր՝ առ սակաւութեան զօրաց իւրեանց տեղի

եւ տուն Գաղղիացւոց՝ մնալով պատեհի յո-
գուտ իւրեանց վարել զյանդուգն համար-
ձակութիւն նոցա։ Եւ յաջողեաց նոցա. քանզի
Ժուռանայ թողեալ զբանակն Փիշկռիւ զո-
ւրավարի՝ սպառնայր առնուլ զՓրանքֆորթ
քաղաք, և Քլէրֆէ հասեալ 'ի վերայ՝ բռնա-
դատեաց զնա տեղի տալ և անցանել ընդ Հռե-
նոս։ Եւ այլ երկրորդ գունդ Գաղղիացւոց
յանկարծօրէն ըմբռնեալ առաջի Մոգուն-
տիոյ՝ այնպէս շփոթեցաւ, մինչև բաւական
լինել յիսուն հեծելոց Աւստրիացւոց ջախ-
ջախել զնոսա 'ի սպառ։ Նոյնպէս և Փիշկռիւ
տեսեալ զիւրոցն զնորտակումն, ամ՛ապա-
ռեալէանց ընդ Հռենոս, և արար դուլ զինուց
ընդ Քլէրֆեայ։ Եւ որպէս ասացաք 'ի վեր
անդր Փիշկռիւ տաղտկացեալ 'ի մոլեգնուէ
և յանօրէնութենէ խռովչացն, բանագնաց
լինէր առ Պուրպոնեանս ուշ եդեալ կան-
գնել վերատին զթագաւորական իշխանու-
թիւն. կասկած առեալ զնրացն յեաս կո-
չեաց զնա դաշնակցութիւնն ազգային, և
էարկ զնա յիշխանութենէ զօրաց։

Ի մռռացօնս արկին Գաղղիացիք զնորտա-
կումն իւրեանց 'ի Գերմանիա՝ յաջողու-
թեամբ զինուցն 'ի Բիեմոնդ։ Քանզի յետ
դաշանց խաղաղութեան ընդ Սպանիացիս,
և միանալոյ բանակացն Պիրենեանց ընդ Ալ-
պեանս, յաջորդեաց զՔէլլերման 'ի զօրա-
վարութեան Շէրէր՝ որ եդեալ զբանակ
իւր ընդ մէջ Ծովուն և Ալպենեանց, յան-
դիման զօրաց Բիէմոնդեցւոց և Աւստրիա-
ցւոց նստաւ։ Եւ զի էր այրն հանճարեղ և

քաջայանդուգն, յերիս բաժանեաց զիւրսն. զառաջին գունդն եդ 'ի ձեռն Մասենայ՝ ունել զգագաթն Ապենեանց և արգելուլ զկցորդութիւն բանակացն Թշնամեաց. զերկրորդն 'ի ձեռն Սեռիւրիէ զօրավարի՝ և արձակեաց ընդդէմ Բիեմոնդեցւոց՝ պատրել զնոսա կեղծ յարձակմամբ. իսկ զերրորդ գունդն ընդ առաջնորդութեամբ Օժըրոյ զօրավարին ընդդէմ Աւըստրիացւոց, որ անկեալ 'ի վերայ նոցա զօրութեամբ՝ ե հար խորտակեաց զնոսա: Այսպէս 'ի սպառ ջախջախեցան Թշնամիք, և հալածական փախստեայ անկանէին 'ի ձիւնաբեր և 'ի մրրկայոյզ ժամանակին, քսան թնդանօթս և անբաւ պատրաստութիւնս վառօդոյ թողեալ 'ի ձեռս Գաղղիացւոց, և որ մեծն է՝ բացեալ առաջի նոցա Ճանապարհ համարձակ յԻտալիա (1795):

ԳԼՈՒԽ Ի.Զ.

Մահ արքայորդւոյն Լուդովիկեայ ԺԷ. և հօրեղբօր նորա Լուդովիկեայ ԺԸ առնուլ զանուն Ռագուորի:

Ի ՍՄԻՆ ժամանակի մեռաւ արքայորդին Լուդովիկոս ԺԷ մանուկ հանճարեղ, զգօն և սիրելի, որ իրաւամբք պայազատ գոլով թագաւորութեան հօրն, կոչեցաւ Լուդովիկոս ԺԷ. այլ այս իրաւունք պատճառք թշուառութեան նորա եղեն և մա-

հուն։ Քանզի քեցեալ զնա 'ի մօրէն, որ-
պէս 'ի կարգի պատմութեանս ասացաք,
յանձն արարին 'ի պահ զգուշութեան և 'ի
խնամակալութիւն Սիմոնի ուրումն անա-
գորոյն Յակոբոպէնի, որ փոյթ կալաւ ապա-
կանել զբարս նորա և խանգարել զբնական
կար մտացն և մարմնոյն։ Զկնի եռամեայ
տառապանաց և հիւծելոյ 'ի կապանս չա-
ղատանչ մեռաւ վերալից։ Եւ յետ մահու
նորին կոմն Պրովենկիոյ հօրեղբայր նորա
կալաւ զանուն Թագաւորի Լուդովիկոս ԺԸ։

Ի թշուառ տոհմէն Լուդովիկոսի ԺԶ,
մնաց միայն Մարիա Թերեզա Շարլոթ
դուստր նորա, վերջին շառաւիղ տոհմին։
Ապստամբք խնայեալ 'ի կեանս նորա, պա-
հեցին զնա 'ի Տաճարին՝ զի 'ի պատեհ ժա-
մանակի իբրև պատանդ վարեսցեն զնա.
վասն որոյ յետ մահու եղբօր նորա արքայ-
որդւոյն, փոխանակեցին զնա ընդ հնգե-
սին Նուիրակս Ազգային դաշնակցութեան
մատնեալս 'ի ձեռս Աւստրիացւոց առ Տիւ-
մուրեաւ։ Յետ չորից ամաց եթող օրիորդն
արքայազուն զարքունիս Վեննայ, և չո-
գաւ 'ի Ռուսաստան 'ի կնութիւն դքսին
Անկուլեմայ, անդրանիկ որդւոյ կոմսին Ար-
թուայ. և յետ այնորիկ միշտ ընդ Լուդո-
վիկոսի ԺԸ շրջէր վտարանդի, լեալ նմա
իբրև 'ի դուստր, մինչև 'ի 1803 ամին գտին
հիւրընկալութիւն մեծ յԱնգղիա։

Զայսու ժամանակաւ յամին 1795 ամ-
նայն ինչ կարապետ լինէր խաղաղութեան.
Բրուսք տաղտկացեալ յանօգուտ պատե-

բազմաց, դաշինս հաշտութեան կռեցին ընդ Գաղղիոյ. Սպանիացիք անզօր 'ի խնդրել զվերջ մահու Լուդովիկոսի՝ թողին զգէնս. Հոլանտա նուաճեցաւ, և դուլ զինուց ընդ Աւստրիոյ պահէր ճիշտ. և Վանդէա յետ բազում կոտորածոց խոնարհէր 'ի հնազանդութիւն. և Անգղիա իսկ թողեալ յամենեցունց, յօժարամիտ թուէր ըստ օրինակի այլոց գալ 'ի հաշտութիւն. և ահա յանկարծ վառեցաւ հուր մարտին ամենուստ, և յաղթանակք և աղէտք յաջորդեցին: Այլ մինչև մոռեալ մեր 'ի վէպս պատերազմաց, ասասցուք սակաւուք և զվերջին վաստակոց, մանաւանդ զնենգապատիր դաւաճանութեանց Ազգային դաշնակցութեան:

ԳԼՈՒԽ ԻԷ.

Ընկճել 'ի սպառ ամենայն խռովչաց և ժողովրդեանց:

Անկմամբ Ռոպէսպիէռայ ոչ յաջողեաց իսկ և իսկ հաստատել զօրէնս, զկարգ, զարդարութիւն և զխաղաղութիւն: Յաղթողք բռնաւորին՝ բռնաւորք ոչ ինչ ընդհատ անագորոյնք, առ հանգամանաց ժամանակին սակաւ մի խորշէին յարենէ: Եւ պառակտեալք յիւրեանս, ընդ հուպ 'ի միմեանց պատառեցան: Պիյլոյ Վարէն, Քոլլոյ-Տ'Էրպուա, Պառէր և այլք ոմանք բռնակալել կամէին արեամբ և մահու, և կէսք ահ արկանելով միայն և յափշտակութեամբ.

և սոքա յետինքս յաղթող լեալ՝ տարագրե-
ցին զՀակառակորդս իւրեանց նախ 'ի Համ-
ամրոցն, և անտի ապա յանապատս Կուի-
նէայ, ուր մեռաւ Քոլլոյ առ զայրոյթ մո-
լեգնութեան և անյուսութեան։

Երթայր և բարձրանայր յայնժամ ձայն
խռովչացն, ազատութիւն գոչէին հայրե-
նասէր մարդկան և մահ վտարանդեացն։ Եւ
զօրաւորք էին յոյժ սոքա 'ի հարաւային
գաւառսն յԱւենիոն, 'ի Մարսիլիա 'ի Թու-
լոն։ Խլրտէին և Թագաւորականք դարձ ա-
ռարեալ 'ի Գաղղիա, և համարձակ յօրա-
գիրս բանք ընդդէմ հասարակապետական
վարչութեան ընթանային 'ի գովութիւն
Թագաւորական իշխանութեան. և մանաւանդ
'ի Լուգդոն զօրացեալ յոյժ Թագաւորա-
կանք, հաստատեցին յիւրեանս ընկերու-
թիւն ինչ կոչեցեալ Արեգական կամ Յի-
սուսի։ Ժողովեցան միաբան խռովիչք հայ-
րենասէրք անուանեալք, և ընտրեցին իւ-
րեանց զՔամպոն, զՄարիպոն, զԹիւրիոյ,
և հաստատեցին երիս գունդս. կիսոցն յար-
ձակել 'ի բանտս յաղատութիւն ընկերաց
իւրեանց խռովչաց, կիսոց 'ի վերայ պաշտ-
նակալաց, և այլոց բռնանալով 'ի վերայ
Դաշնակից ժողովոց ըստ կամի տալ վՃիռս
ազատութեան Քոլլոյ Տ'Էրպուայ, Պիլլոյ Վա-
ռենայ և Պառէրայ, և վերսին հաստատել
զռամկավարութիւն։ Այլ նշաւակեցաւ դաւն
և ըմբռնեցան առաջնորդք ապստամբու-
թեանն։ Ի հռչակել դաւոյս՝ ժողովականք
ընկերութեան Արեգական 'ի Լուգդոն յար-

ձակեալ 'ի բանտ, կոտորեցին զԽուռվա-
ղարան և ամացին զնոսա 'ի Հռոն գետ։
Ընդ այս յանդգնութիւն զայրացեալ հա-
սարակապետականացն, դաշնակցութիւնն
Ազգային նորոգեաց զվճիռս իւր ընդդէմ
վտարանդեացն և քահանայից, և ամփո-
փեաց զազատութիւն կրօնից։ Այլ ոչ հան-
դարտեցաւ այսու խառնիճաղանճ ամբոխ
ռամկին, մանաւանդ զի սասականայր օր
քան զօր և սովոյն տագնապ. դղրդեցան
Եղին յարուարձանաց Փարիզու, և գլխա-
ւորք 'ի նոսա ժաքոպէնք հնչեցուցին զան-
գակս և զթմբուկ մարտի, և վառեալ զինու
խաղացին 'ի քաղաքն. ընդ նոսա և կանայք
կատաղիք 'ի գոչիւն աղաղակի 'ի խնդիր հացի
և ռամկավար իշխանութեան։ Ի տասն ժա-
մու աւուրն հասին յապարանս Թիւյլերի, և
պաշարեցին զժողովն Դաշնակցաց. 'ի նեղքս
դիմեցին 'ի գոչիւն աղաղակի լրբենի դիմաք
"Հաց, ասելով, հաց խնդրեմք"։ Խրա-
նեցաւ զհետ նոցա և խառնիճաղանճն ըս-
պառնալեօք ընդդէմ նախագահի ժողովոյն։
Ընդ երիտասարդ ոմն քաջ, Ֆերոյ անուն,
կամեցեալ հակառակ կալ խռովչացն և
պաշտպան նախագահին՝ սպանաւ 'ի նոցա-
նէ. վասնզ 'ի վերայ կայր և համօրէն ժողո-
վոյն 'ի գիշերի անդ սրախողխող յամբոխէ
ռամկին լինելոյ. քանզի և անմարթ իսկ էր
'ի դժոխային խռովութեան խօսել ընդ նոսա
և հանդարտել։ Իբրև 'ի բազում աղաղա-
կացն պարտասեալ տակաւ ցրուէին, բա-
զումք ևս արբեալք գոլով, 'ի վերայ հասին

ժողովուրդք Փարիզու զինեալ, և հալա-
ծեալ զխռովարար խառնիճաղանճն աղա-
տեցին զԴաշնակցութեանն ժողով: Վե-
րըստին յարեան ժաքոպէնք և խառնիճա-
ղանճն, այլ զօրավարն Մընու ընկճեաց
զնոսա, և պաշարեալ ամենուսա յարուար-
ձանսն, սպառնայր հրձիգ լինել 'ի նոսա.
վասն որոյ ահաբեկ զինաթափ անձնա-
տուր եղեն, և մատնեցին զառաջնորդս
իւրեանց 'ի ձեռս յաղթականաց: Եւ վե-
ցեքին դաւադիրք՝ 'ի գլխաւոր նուիրակաց
դատաստանաւ ընկալեալ զվճիռ մահու,
առաջի դատաւորաց իւրովի ընդ սուր իւ-
րեանց եկին: Յոր եղեռն չկցեն բաւական
անօրէնք՝ որ այսպէս արհամարհեն զմահ:
Եւ այսպէս երկպառակեալ նոցա, 'ի մի-
մեանց սատակէին. թէպէտ ոչ միօրինակ
արիւնարբուք և անգութք, այլ նովին վա-
ռեալ ոգւով խռովութեան, գաւաղանք
բարկութեան 'ի ձեռին Աստուծոյ՝ հարկա-
նել նոքօք զժողովուրդս և զիշխանս ստամ-
բակեալս յիւրմէ:

Ի սպառ ջնջեցաւ Լեռնականացն հեր-
ձուած, և խռովիչքն հայրենասէրք 'ի Թուլոն
և 'ի Մարսիլիա յաղթահարեալ մերկացան
'ի զինուց: Ազատութիւն եղև ուղղափառ
կրօնից, և եկեղեցիք դարձան 'ի նոսա: Ա-
'ի խաղաղութիւն հասարակաց կարգեցան
վերստին Ազգային զօրաց խումբք, և օր
քան զօր յաճախէր թիւ սպանելոցն խռո-
վարար մարդկան:

ԳԼՈՒԽ ԻԸ.

Թէ որպէս Ազգային դաշնակցութիւն քոխէցաս-
յոսոփիանացն վարչութիւն :

Յետ եռամեայ անիրաւ իշխանութեանն վարելոյ՝ հարկ եղև Ազգային դաշնակցութեան տեղի տալ այլում նոր ժողովոյ. և մինչ չև լուծեալ առաջի արար ժողովրդեան նոր կարգ վարչութեան, յորում ատեանն Օրինադիր բաժանէր 'ի կրկին ժողովս, 'ի ժողով հինգ հարիւրոց՝ որոց իշխանութիւն էր օրէնս տալ, և 'ի ժողով ծերակուտին երկերիւր յիսնից՝ 'ի հաստատել կամ 'ի մերժել զօրէնս առաջարկեալս յառաջնոցն, և գործադիր իշխանութիւն 'ի ձեռս ժողովոյն ոստիկանաց որ 'ի հնգից կազմէր իշխանաց : Առանց ինչ ընդդիմութիւն ընդունելի եղև սահմանադրութիւնս այս. այլ ոչ և երկրորդ վէճս դաշնակցացն որ զմեծ մասն Օրինադիր ժողովոյն յիւրեանց անտի կամէին հաստատել : Դղրդեցաւ Գաղղիա ընդդէմ խընդրոյս, և ժողովն ատելի վերատին գոգցեաց յոտին կանգնէր. և այս հակառակութիւն ատելութեան առաւել էր 'ի Փարիզ, և 'ի քառասուն և յութ խմբից ժողովրդեան քառասուն և վեց միացան հակառակ կալ բրոնակալութեանս :

Եւ մինչդեռ սոքա պատրաստէին հրատարակել զկամս իւրեանց և զբողոք, դաշ-

նակցութիւնն Ազգային ամրանայր զինուք, և պատճառս հզօրս նիւթէր յիւր նպաստ. քանզի օգուտ և վտանգ հասարակաց միաբանեալ էր զամենեսեան 'ի մի միաբանութիւն: Նոյնպէս և 'ի խումբս ժողովրդեան սահմանաւոր հասարակապետականք, թագաւորականք կամ նորոյ սահմանադրութեան սիրողք, միացան միով ատելութեամբ ընդդէմ բռնակալութեան Ազգային դաշնակցութեան: Թէպէտ 'ի մի միաբանեալ էին սոքա, այլ 'ի քառասուն և վեց խումբս բաժանէին յայլակարծիս, մինչդեռ Դաշնակցութիւնն միախումբ միախորհուրդ զօրանայր: Եւ ևս առաւելաւ համարձակութիւն Դաշնակցաց ժողովոյն՝ յորժամ գիտացին թէ ընկալան զօրքն զվճիռս իւրեանց. իսկ փարիզացւոց զայրոյթ՝ 'ի մոլեգնութիւն փոխէր, տեսեալ զի նենգաւոր ժողովն հակառակ իրացն ճշմարտութեան հրատարակէր թէ ընդունելի եղեն վճիռք իւր ընդ ամենայն Գաղղիա. վասն որոյ անդէն 'ի զէն ընթացեալ ծանուցանեն ձեռամբ եկեալ պաշարեցին զգրունս գահլճի ժողովոյն: Ոչ ինչ խռովեցան Դաշնակիցք, յառաջագոյն զհոգ խնամոց մարտին յանձն արարեալ 'ի ձեռս Պառայ. և նորա ամրացեալ շուրջ մեծաւ պատրաստութեամբ հրազինուց, մնայր յարձակման ժողովրդեան: Զօրն ողջոյն հանդէպ միմեանց ճակատեալ կացին, և 'ի հինգերորդ ժամու երեկոյին տաղտկացեալ բաղումք 'ի ժողովելոցն՝ սկսան արձակել յիւրաքանչիւր 'ի տունս, և անդէն

արձակմամբ հրաղինուց ձայն եառուն մարտի Դաշնակցացն խումբք։ Խառնեցաւ մարտն ամենուստ 'ի փողոց սրբոյն Ոնորիոսի. խորտակեցան Փարիզացիք 'ի սպառ յահաւոր պատրաստութեանց հրաղինուցն, և Թողին զասպարէզ մարտին լցեալ դիակամբք իւրեանց, և յաղթանակ կանգնեաց 'ի գիշերի դաշնակցութիւնն Ազգային. և լինէր յաջողութիւն գործոյն 'ի ձեռն Նափոլէոնի Պոնափարթեայ զօրավարի Թնդանօթաձիգ զօրուն, որ յետ հեղլոյ զարիւն բնակչացն Թուլոնի, երևեցաւ այս երկրորդ անգամ 'ի հանդիպի կոտորածի ժողովրդեան Փարիզու։

Զէնընկէց եղև ժողովուրդն, և գլխաւորք նոցա որք չկարացին փախստեամբ ապրիլ, 'ի մահ մատնեցան։ Եւ զի զօրացեալ յոյժ Թագաւորականք խլրտէին ընդդէմ հասարակապետական վարչութեան, յետ բաղում քննութեց վճիռս 'ի դուրս ետ Դաշնակցութեանն ժողով՝ մի մատնել վտարանդի քաղաքացւոց և ազգականաց նոցա 'ի գործ պաշտաման հասարակաց պետութեան մինչև ցհաստատել խաղաղութեան։ Երկրորդ՝ որ ոչն կամիցի հնազանդել հասարակապետական վարչութե, ելցէ յաշխարհէն ամենայն ընչիւք իւրովք։ Եւ երրորդ, դատակնիք մահու ընչեացի 'ի հասարակապետութենէ Գաղղիոյ։ Այսոքիկ եղեն վերջին վճիռք Դաշնակցութեանն, և լուծաւ նա, և վաղվաղակի հաստատեցաւ ոստիկանացն վարչութիւն. հոլոնեցան կրկին

ժողովք և դաշնակցութիւնն Ազգային յաղ-
թանակեալ կատարեաց զվճիռ կամաց իւ-
րոց։ Այլ աստէն փոքր մի դուլ առցէ պատ-
մութես ընթացք, և զոր խոստացաքն վասն
Վանդէացւոցն պատերազմաց, աստ 'ի մի-
ջոցի առցուք 'ի պատմել։

ԳԼՈՒԽ ԻԹ.

Հանուրամ կալ Վանդէացւոց զինուորս ընդդէմ
խառվլայն Գաղղիոյ։

ՅԵՐԻՑ ամաց հետէ գոգցեաս երկփեղկեալ
խումբք խառվլաց 'ի միմեանց սատակէին
'ի մայրաքաղաքին, և տեսանէր 'ի գաւառս
արևմտից հանդէս ոչինչ նուազ եղերական,
այլ արժանաւոր յաւեժական յիշատակի
զկնի եկելոցն։ Քանզի կողմնակիցք թագա-
ւորութեան, մարտ եղեալ կռուէին ընդ
անիշխանութիւն հասարակապետականաց,
պահելով մինչև ցմահ զազատութիւն և զկրօնս
ընդդէմ հարստահարողաց հայրենի աշխար-
հին, և անընկճելի քաջութեամբ առնուին
զվրէժ անգթութեան խառվասէր մարդկան։
Նախկին ասպարէզ զարմանալի կռուոյս եղև
ստորինն Փուաթու բաժանեալ յայնժամ
յերկուս մարզս 'ի Վանդէա և 'ի Տէօ Սէվր։
Երկիրս այս ուրեք արգաւանդահող է և
յուռթի, և ուրեք առապար անտառախիտ
և ճախճախուտ։ Բնակիչք նորա հեռի 'ի
կենակցութենէ դրացի ժողովրդոց՝ պա-
հէին անարատ զբարս. և էին արք կորովիք,

անխոնջք 'ի վաստակս, սիրողք պարզուԹեան, հաւատարիմք 'ի խոստմունս, նախանձոտք սովորուԹեանց նախնեաց, և վարուց և կրօնից ուղղուԹեան։ Այսպէս նոքա աղատք 'ի զեղծմանէ բարուց Գաղղիոյ՝ յոյժ 'ի խոր խոցէին ընդ գործն խռովուԹեան, տեսանելով ոտնակոխ զկրօնս հարցն, զսովորոյԹս և զանդորր խաղաղուԹիւն ցանկալի։ Ի սոսա ժառանգական իշխանուԹիւն զնահապետացն բերէր զնմանուԹիւն, սիրելի և բարեմոյն. մեծամեծք աշխարհին ընչիւք չափաւորք, անպաճոյճք, առաքինիք, իբրև զհարս և իբրև զբարեկամս գնային ընդ հպատակս իւրեանց. քահանայք ԹէպԷտ և նուաղք 'ի գիտուԹեան, այլ անտգտանելիք 'ի բարեպաշտուԹեան։ Եւ բնակիչք տեղւոյն գիւղականք գոգցեա ամենեքին, ոչինչ միտ եդեալ խռովուԹեան՝ զոր անօգուտ աշխարհին և կրօնից համարէին, ոչ դադարեցան 'ի հարկելոյ և 'ի տասանորդելոյ իշխանաց իւրեանց. և ձեռն մխեալ 'ի քահանայս յապստամբս յեկեղեցւոյ՝ չարչարէին զնոսա, և ինքեանք ժողովէին 'ի խորս անտառաց՝ առաջի կալ պատարագի ուխտապահ քահանայից. սակայն դեռևս հանդարտեալ կային։ Այլ 'ի լուր սպանուԹեան արքային և զօրաժողովոյն՝ երեք հարիւր հազար մարդկան 'ի յայտնի ապստամբուԹի եկեալ, 'ի սահմանեալ աւուր զօրաժողովոյն հնչեցուցին անդէն բնակիչք ինն հարիւր գիւղօրէից միանգամայն զզանգական և դղրդեցան դիմեցին 'ի զէն։ Ի գեղջն

Սան-Ֆլորան Տ'Անժու զէնրնկէց արարին զհեծելագունդն հասարակապետականաց, ընտրեցին իւրեանց առաջնորդ զգրաստապան ոք առաքինակրօն Քաթըլինոյ անուն, տիրեցին Շեմիլէ ամրոցի, և միացեալ ընդ այլում գնդի գիւղականաց՝ որոց զօրավարէր Սթոֆլէ պահապան որսատեղւոյ, և հարին վանեցին գունդ մի հինգհարիւրոց հասարակապետականաց։

Ի նմին ժամանակի և յայլ կողմանս գիւղականք հարեալ զհասարակապետականս կալան զամրոցն, և յետ ոչ բազում ինչ աւուրց ամենայն գաւառք՝ որ ընդ մէջ Լուառայ և Ծովուն՝ նշկահեցին զդաշնակցութիւնն Ազգային, և հարիւր հազար գիւղականք զէն առեալ բռնագատեցին զիշխանս Փուաթուի զօրավար կալ իւրեանց. էին և այլ զօրավարք երևելիք 'ի նոսա Շարէթ իշխան ծովային զօրաց, Տ'Էլպէ, Լէքիւռ, Թալմոն, Լարոշըժաքլէն, աղնուականք երևելիք քաջութեամբ, և Պոնշան այր մեծանուն։ Այսպէս բաժանեցան նոքա յերիս բանակս ընդ ձեռամբ զօրավարացս, և կարգեցին իւրեանց Ատեան գերագոյն 'ի յանձնանձանս իրաց հասարակաց։ Թէպէտ անբաւականք 'ի մարզս զինուորութեան, այլ քաջալարժք էին գիւղականքն 'ի ձգել զհրացանս, և 'ի բնէ ուսեալ զարուեստս մարտի, ահաւորագոյնք էին առաջի անհրահանգ Ազգային զօրաց։ Քաջադէպ էր և ժամանակն յապստամբութիւն, մինչդեռ Տիւմուրիէ գլուխ ամբառնայր ընդ-

դէմ Ազգային դաշնակցութեան, և զորք Գաղղիոյ հալածականք 'ի Բեղգիոյ զահ և զերկիւղ ածէին ընդ Իւրեանս, և սպառնալիք արշաւանաց 'ի վերայ կային յերեսաց օտարաց։ Զայս յօգուտ առեալ Վանդէացւոց բազում ուրեք յաջողութեամբ և միշտ փառօք գուսպարեցան ընդդէմ հակառակամարտ մեծի զօրութեան, և յետոյ ուրեմն խոնարհեալ ընկճեցան, քանզի սակաւք յոյժ 'ի Գաղղիացւոց խրախուսեցին ձեռն տալ նոցա։

ԳԼՈՒԽ Լ.

Յաջողութիւնք պինոց Վանդէացւոց։

Ի ՀՌԶԱԿԵԼ ապստամբութեանն կերպարանափոխ եղև Վանդէա, հիւղք փոխեցան յարուեստանոցս, սուինք, մանգաղք և խոփք կռէին 'ի նիզակս և 'ի սուսերս։ Եւ բազմաց ևս զէնք էին գաւազանք երկաթեայ, երեքժանի, սակր և հրացան որսոյ. իսկ հեծելագնդին՝ որք անթամբ և անսանձ յերիվարս աշտանակէին, զէնք գերանդիք էին սրեալք. սակայն ընդ հուսկ յաղթութեամբք պատրաստեցին Իւրեանց և այլ զէնս։ Ի սկզբան անդ մարտին՝ յորում էած զգիւղականս իւր 'ի կռիւ Լարոշըժաքլէն խօսեցաւ առ նոսա և ասէ. "Եթէ յառաջ խաղացից 'ի կռիւ, զհետ իմ խուժեցէք. Եթէ թիկնադարձոյց եղէց, սուր ձեր 'ի կողս իմ. իսկ եթէ մեռայց՝ խնդրեսջիք ըզ-

վրէժ իմ,, : Այս հակիրճ բանք խրախուսանաց վառեցին զմիտս ամենեցուն, և մի մի նահատակս արարին զնոսա : Ի սկզբան անդ ոմանք 'ի Վանդէացւոց անողորմն կոտորած ածին հասարակապետականաց 'ի քէն վրիժու անգթութեան նոցա ընդդէմ եղբարց իւրեանց, այլ առաջնորդք նոցա 'ի չափու կալան զեռանդն նոցին : Եւ 'ի սակաւ աւուրս առին զՇոլէ, զՄաշըքուլ, զՊօփրէօ և զայլ տեղիս, և պատրաստութեամբք և հանդերձանօք պատերազմի սպառազինեցան :

Եւ յետ յաղթութեանն առաջնորդք Վանդէացւոց համարս էառուն Գաղղիոյ զգործոց իւրեանց և զխորհրդոց այսպիսեաւ ինն յայտարարութիւն. “Նշկահեալ զձեզ զինեցաք մեք 'ի մարտնչել ընդդէմ ինսասակար իմաստից ձերոց՝ որով կործանեցիք զգահ թագաւորութեան և զսեղան կրօնից աստուածպաշտութեան : . . . Եթէ օրէնք սրբազանք առ ձեզ 'ի ձեռս ժողովրդեան էառուն զամենայն իշխանութիւն, մասն եմք և մեք ժողովրդեան Գաղղիոյ, և օրէնս խընդրեմք զօրաւորս, և կրօնս սրբութիւն արդոյս : Զինեցաք ընդդէմ բռնակալութեան, նիզակակից ունելով մեզ և զայլ գաւառս : Մի՛ բռնադատէք զմեզ հեղուլ զարիւն եղբարց մերոց, և ներեցէք մեզ զինսաս արեանց՝ զոր ոմանք 'ի մէնջ 'ի զայրոյթս անդ վրէժխնդրութեան գործեցին : Բացէք զաչս ձեր և տեսէք, Գաղղիա որ երբեմն ծաղկեալ յամենայնի, այժմ 'ի չփոթս խառնակու-

թեան և յողորմ աւերակս անկեալ կայ, և առաքինութիւնք ընդ անլուր եղերունս աղմկեալ, զգուշացարուք յաղիտից՝ որ մնան ձեզ, և լերուք մեզ բարեկամք ,, :

Յետ յայտարարութեան յառաջ մղեցին զյաղթութիւնս իւրեանց, առին զԹուարս 'ի ձեռաց վեց հազար ամրականաց, և անտի խաղացին 'ի Ֆոնդընէյ. զառաջինն 'ի դերև ելին ջանք նոցա, այլ յետ աւուրց ինչ Տ'Էլ-պէ, Լարոշըժաքլէն, Պոնշան և Լէքիւռ զօրացան 'ի վերայ թշնամեաց. քանզի զօրականք նոցա անպատրաստք և թափուրք 'ի հրազէն անօթոց, անժոյժք պատերազմ խնդրէին. և հարեալ անդէն զփողս պատերազմի, յարձակեցաւ Լէքիւռ. խուժեցին զկնի նորա և գունդք քաջացն սուր 'ի ձեռին ընդդէմ մարտկոցաց թշնամեաց, և 'ի բուռն առեալ զայնոսիկ՝ դիմէին 'ի վերայ հասարակապետականաց : Նոյնպէս և Լարոշըժաքլէն և Պոնշան խաղացին քաջութեամբ, մինչև չհանդուրժեալ թշնամեաց տոկալ ընդդէմ բուռն յարձակման անվեհեր նահատակացն՝ որք յաչս եդեալ զմահ ընդդէմ հրազինուցն և սլաքաց դիմէին, քակտեալ վարատեցան. և յաղթականք մտին 'ի Ֆոնդընէյ, գտին Ճոխութիւն անբաւ և բազմութիւն սպասուց եկեղեցեաց, զաւարս սեղանակապուտ ամպարշտացն : Եւ այսպէս 'ի միջոց ժամանակի երից ամսոց տիրեցին թագաւորականք բոլորովիմբ երկուց գաւառացն Լանդեայ և Տէօ-Սէվրայ, և հաստատեցին զՇոլէ, զՄորթաներ, և զՄոն-

թէկիւ 'ի խորհրդարան և 'ի ժողով իշխանաց իւրեանց, օրինադրեալ և կարգս վարչութեան:

ԳԼՈՒԽ ԼԱ.

Օրէնք պապերապետի Վանդէացւոց, և քաջութիւնք նոցա:

ՈՉ հրահանգեալ գունդք էին Վանդէացւոց, և ոչ լեգէոնք զօրաց. ժողովրդապետութիւն իւրաքանչիւր ընտրէր իւր զօրավար, որոյ երթեալ խառնէր 'ի բանակս սպարապետաց. սոքա էր զի առանձինն և էր զի միախորհուրդ հաւանութեամբ ըստ պահանջել ժամանակին ուղղէին զիրս պատերազմաց: Իբրև հասեալ զօրանայր ուրեք թշնամին, անդէն գլխաւորք գիւղորէից հնչեցուցանէին զզանգակս. և այր վանդէացի թողեալ զգործի իւր որ 'ի ձեռին, առնոյր զհրացանն և դիմէր 'ի բանակն. և կանայք և մանկունք վառեալ զինուք արիական քաջութեամբ ելանէին 'ի ճակատամարտս:

Տարազ մարտից Վանդէացւոց նոր էր ամենևին և անտեսեալ օրինաց պատերազմի. 'ի տեսանել զթշնամին՝ բանակն աղջոյն գղորդեալ ցիր սփռէր, և ըստ օրինակի վայրենեաց աղաղակ բարձեալ՝ ձգէին տարածէին զթևս առ 'ի փակել զնա. և իւրաքանչիւր ոք գրոհ տայր հանդէպ երեսացն ընդդէմ թշնամեաց, որոց բուռն յարձակմանն դուն ուրեք կարէին դիմակալել հակառակորդքն: Յաճախ

տասն կամ երկոտասան քաջք 'ի Վանդէացւոց խրախուսեալ 'ի բուռն ածել զանօթս հրազինուց, դէպ ուղիղ դիմէին 'ի վերայ. և 'ի թօթափել նոցունց զհուր բերանսեալ արկանէին զանձինս յերկիր, ապա վերստին կանգնեալ արիագոյնս ընթանային, և զնոյն գործ կրկնէին և երեքկէին, մինչև հասեալ 'ի վերայ և փախստական տարեալ զթնդանօթաձիգ զօրականն ունէին զանօթս հրազինուցն: Եթէ հարուածէին 'ի թշնամեաց վերստին գումարեալ գրոհ 'ի յաղթականս տային. և 'ի զօրանալն վանէին զնոսա անդուլ: Եւ յոլով ուրեք փախուստ կեղծելով և կամ դարանեալք, թողուին զթշնամիս միջամուխ լինել յաշխարհ իւրեանց ընդ անհարթ և ընդ տղմուտ տեղիս, և յանկարծ 'ի ձայն զանգակաց եկանէին յանտառացն կամ 'ի խուռոչից լերանց, և ամենուստ փակեալ զնոսա՝ հարուածս 'ի վերայ հասուցանէին, և յայս գործ ահաւոր՝ երևելի էր յաջողութեամբ զօրավարն Պոնչան:

Միօրինակ էին հանդերձք զինուորութեան Վանդէացւոց. զգենուին բաճկոն սպիտակ 'ի վերայ վարտեացն և խորշագոյն լայն զգեստուցն, խաչ սեաւ ունելով 'ի վերայ կրծիցն, յորմէ կախէին զնշխարս սրբոց կամ զոսկերս արանց կոտորելոց առ սէր Թագաւորին, և 'ի պարանոցս զբարեպաշտութեան բերելով նշանակս:

Իսկ չու նոցա յամրաքայլ, բացաւ գլխով, աչք 'ի խոնարհ, և հրազէն ընդ անթով,

և վարդապան 'ի ձեռին : Ձկարացին երբէք աղմկել զՔերմեռանդն և զլռիկ չունոցա հասարակապետականք հրաղինուք իւրեանց, և ոչ դադարեցուցանել զաղօթս նոցա • Սակայն մերձ ընդ մերձ փոխէր տեսարանն, իւրաքանչիւր առեալ 'ի ձեռին զհրաղէնս՝ հնչէին 'ի գոչիւն աղաղակի. "Կեցցէ՛ արքայ, կոտորեսցին հասարակապետականք,,. ևանդէն խառնէին 'ի մարտ սուր 'ի վեր առեալ, հարուածս մեծամեծս հասուցանէին նոցա : Քահանայք նոցա ընթանային ընդ կարգս բանակին, զինեալք տէրունական բանիւք, մատակարարելով զխորհուրդս սրբութեան անկելոցն, մխիթարելով և պատելով զվիրաւորս, քարոզելով ամենեցուն արհամարհել զվաղանցուկ կեանս, զորոյ զվարձս փոխարինի մնայր նոցա գտանել յերկինս 'ի յաւիտենական վայելս : Անդուլք 'ի պատերազմաց յաղթութեամբ խաղացին 'ի Սոմիւր, որում պահ ունէր Սանթէռ բիւր մի զօրականօք հասարակապետութեան և քաջութեամբ 'ի բուռն առին զքաղաքն, զամրոցն և զամենայն պատրաստութիւնս թշնամեաց, որով կալան և զափունս Լուառայ և բացին իւրեանց ճանապարհ 'ի դաւառն Բրետոնիա՝ ուր բազում էին կուսակիցք իւրեանց, և վաղ իսկ գլուխ ամբարձեալ ընդդէմ հասարակապետականաց : Մինչ էև անցեալ ընդ գետն յայնկոյս՝ խորհուրդ առին յիւրեանս զօրավարքն կարգել զոք իւրեանց 'ի սպարապետ . և վիճակեցաւ ընտրութիւնն 'ի Քաթելինոյ : Սա զառա-

ջինն սասուեգործ, ապա գրաստապան և վաճառաբեր, ընդ նուաստ արուեստիւն թագուցեալ ունէր ոգի վսեմ, սիրտ անվեհեր, պերճախօսութի բնատուր և ազդու. և որ մեծն է առաքինութիւն ամբիծ, չափաւորութիւն, բարեպաշտութիւն աքանչելի, որ և Սուրբ Փուանթուի կոչեցաւ: Նախկին եկաց սա առաջնորդ Վանդէացւոց, և զառաջինն վանեաց զհասարակապետականս: Այսպէս ամենայն առաւելութիւնք 'ի նմա՝ ծածկեցին զնուաստութիւն տոհմին, և յորդորեցին զազատորեար Փուանթու գաւառին նախամեծար զնա ընտրել. քան զայլս ամենայն, և ցուցին հաւաստեաւ ամենայն աշխարհի՝ թէ չէր ամենևին ոչ իշխանութեան սէր, ոչ սէր շահու անձին՝ որ ածէր զնոսա 'ի մարտ ընդդէմ թշնամեաց Գաղղիոյ:

Յետ յաղթութեան 'ի Սոմիւր՝ խաղացին յԱնժէր և 'ի Նանթ, և առանց ինչ աշխատութեան կալան զԱնժէր. քանզի փախստեայ գնացեալ էին և զօրականք և ատենակալք. մտին անարգել 'ի նեբքս 'ի քաղաքն, բացին զբանտս, որպէս և ամենայն ուրեք առնէին, զլցեալսն կալանաւորօք քահանայիւք, աղնուականօք և յամենայն դասէ մարդկան: Եւ որ զարմանալին էր, չմիսեցին զձեռս իւրեանց 'ի հասարակապետականս և ոչ յինչս նոցա ինչասակար եղեն. այսու խոհական չափաւորութեամբ յաճախեցին իւրեանց կուսակիցս յաջողութեամբ գործոցն: Ահաբեկ լեալ Ազգային դաշնա-

կցուլթէն և կատաղեալ՝ մերձ զկործանումն իւր համարէր. և վախճան լինէր թերևս չփոթիլ Գաղղիոյ, եթէ պատերազմն Նանթեայ չէր խորտակեալ զզօրութիւն Թագաւորականացն՝ ուր անկաւ և սպարապետն Քաթըլինոյ կորուստ անդարմանելի. և յաջորդեաց զնա Տ'Էլպէ 'ի սպարապետութեան:

Անակնկալ պարտութեամբս զանգիտեալ Վանդէացւոց, աճապարեցին անցանել ընդ Լուառ յերկիր իւրեանց, ուր միջամուխ էր ահաւոր թշնամի վայրագն Վէսթէրման: Կալաւ սա նախ զՇաթիյլոն, այլ յեղակարծում ըմբռնեալ 'ի գիշերի՝ կորոյս զմեծ մասն զօրացն, և հազիւ ճողոպրեաց զանձն: Համարձակեալ մասին յաշխարհն և Սանթէռ, և Պիրոն զօրօք իւրեանց, այլ խորտակեալ 'ի սպառ Սանթէռայ՝ վազեալ ըզտասն ոտնաչափ բարձրութիւն որմոյն՝ զերծանէր 'ի մահուանէ: Թէպէտ և Պիրոն ճողոպրեաց զանձն 'ի սրոյ Վանդէացւոց, այլ անարգագոյն հանդիպեցաւ մահու այրն անուանի նախնեօք և հանճարովն, այլ բռնաւորաց Գաղղիոյ լեալ սպառահարկու, ամբաստանեցաւ իբրև մատնիչ յատենի խռովարարաց. և ելոյծ արեամբ զպատուհաս մատնութեան: Յեղանեն 'ի տեղի կառափման ասաց. "Ուխտադրուժ Աստուծոյ իմոյ և թագաւորիս, մեռանիմ՝ի հաւատով և զղջմամբ սրտիւ,,:

ԳԼՈՒԽ ԼԲ.

Զօրաժողով Ա արշաւանք հասարակապետականաց ընդդէմ Վանդէացւոց, անգութ կոտորած նոցին և աւեր աշխարհին։

ԶԱՐՄԱՑԵԱԼ Ազգային դաշնակցութեան ընդ հաստատութիւն և ընդ յաջողութիւն Վանդէացւոց՝ զօրաժողով եղև ընդդէմ նոցա արանց երեսուն բիւրուց, առաքեաց ընդ նոսա և եօթն բիւր հինաւուրց զօրականս։ Տասն բիւր Վանդէացիք 'ի զէն գիմեցին 'ի պահ զգուշութեան անձանց ընդդէմ ահաւոր մրրկին յարուցելոյ շուրջ 'ի վերայ։ Հասարակապետականք որ յուեթ առաջս բաժանեալ գրոհ տային յաշխարհն՝ ընդ հուպ չարաչար խորտակեցան, և զերծեալքն աճապարեցին 'ի փախուստ։ Այլ անդէն ահաւորագոյն պատրաստութեամբ եկին մերձեցան 'ի Վանդէա հրամանաւ յաւեր և յապականութիւն դնելոյ զգաւառն։

Ի նմին ժամանակի լրումն եղև աղէտից Վանդէացւոց երկպառակութի իւրեանց. զի 'ի ստորինն Վանդէա իշխէր միայնակ Շարէթ, և 'ի բարձրն Վանդէա պառակտեալ իշխանք զօրացուցին զձեռս թշնամեաց ընկճել զնոսա, թէպէտ բազում ճապաղիս արեան և 'ի թշնամիս գործեալ։

Լէքիւռ՝ հալածեալն 'ի Շաթիյլոնէ յերեսաց Վէսթէրմանայ, 'ի վաղիւ անդր օգ-

նուիրեամբ Պոնշանայ մտեալ էր վերատին 'ի քաղաքն խորտակելով զթշնամին. այլ զօրականն՝ առ խնդին արբեալ յաւարէ թշնամւոյն օղի յոյժ՝ զմրեցան և ոչ ևս լսէին ձայնի զօրավարին իւրեանց։ Յայն ժամ Վէսթէրման՝ որ յետ կոտորածի զօրացն առանձին միայնակ հեռանայր յուսաբեկ, պատահեցաւ Ջոկատի մեոյ փախըստականաց իւրոց և ասէ սրտառուչ. "Լքայ յամենեցունց, չկամիմ այլ ևս առաջնորդ կալ արանց վատաց"։ Շուրջ առին զնա զօրքն և երդուան մի ևս թողուլ զզօրավարն իւրեանց. "Ապա ուրեմն եկայք, ասէ Վէսթէրման, եթէ ելցէ 'ի ձեզ արուեստիւն քաջութեան, միւսանգամ առնուլ զՇաթիյլոն կամ մեռանել անդէն"։ Դիմեցին ամենեքին զկնի նորա գիշերայն, մտին գաղտաբար 'ի քաղաքն, և զՎանդէացիս ըմբռնեալ 'ի քուն՝ ընդ սուր հանին. հազիւ պարապ դտեալ զօրավարացն, հեծեալ յերիվարս ճողոպրեցին զանձինս։ Յաւար մատնեաց զքաղաքն Վէսթէրման, և յաճիւն դատեցաւ զնա. անտի խաղաց 'ի Մորթանեը, և զնոյն անցս և ընդ նա անցոյց։ Ի դերև ելին ամենայն ջանք և քաջութիւն զօրավարացն Վանդէացւոց, առ 'ի զառաջս առնուլ թշնամւոյն։ Լէքիւռ զօրավար քաջամարտիկ անկաւ վիրաւոր 'ի խառնուրդս մարտին, և Վանդէացիք ոչ ևս զօրեցին կալ առաջի թշնամւոյն։ Սակայն վերատին ժողովեալ յարձակեցան 'ի վերայ յաղթականացն Տ'Էլպէ և Պոնշան, և միջամուխ 'ի բուն բանակն

վանեցին զնոսա. իսկ Լարոշըժաքլէն և Սթոֆլէ դիմեալ յաջ թև թշնամւոյն, կոտորածս անհնարինս հասուցանէին: Եւ այն ինչ թշնամիք 'ի փախուստ ածապարէին, ահա եհաս նոցա գունդ մի զօրաց յօգնականութիւն, որով զօրացեալ վերստին դարձան 'ի կռիւ: Սաստկացաւ մարտն արիւնարուշա, խառնէին բաղխէին զմիմեանս, և սուր 'ի վեր առեալ՝ կոտորէին զկրեար. այնուհետև ասպարէզ մարտին կրկէս թուէր վայրագ գազանաբարոյ սուսերամարտկաց. որոց խոնջեալ յընդ երկար կռուելոյ, զմահ այնուհետև խնդրէին: Ուր ուրեմն ապա զաչացու կատաղութիւն Վանդէացւոց տեղի ետ յամառ պնդութեան հասարակապետականաց, և բազումք վարատեալ ցրուեցան անդէն: Յայնժամ Տ'Էլպէ, Պոնշան և Լարոշըժաքլէն հաստատեալ 'ի մոի կորնչել ընդ աւերակաւ հայրենեաց իւրեանց, գումարեցին զոմանս 'ի քաջաց, և յարձակեցան 'ի գոչիւն աղաղակի, "Կոտորեացուք զհասարակապետականս": Սաստկացաւ կոտորածն, այլ ոչ փոխեցաւ բաղդ մարտին: Պոնշան և Տ'Էլպէ առեալ մահացու վէրս՝ անկան յերկիր. և անդէն ոմն 'ի սպայից նոր գնդաւ եհաս 'ի վերայ, և քաջութեամբ յարձակեալ ընդ մէջ նոցա և թշնամեաց զերծոյց զնոսա: Այլ այս անագան օգնութիւն ոչ ինչ զօրեաց արգելուլ զփախուստ Վանդէացւոց, բիւր մի զօրականաց թողեալ նոցա 'ի տեղւոջն դիտապատ:

Բանակն յաղթական եմուտ սուր 'ի ձե-

ռին 'ի Ղոլլէ քաղաք, և մինչ դեռ թաթա-
ւէր յարիւն քաղաքացւոց, պարտաւ գտեալ
Վանդէացւոց չու արարին խաղացին՝ անցա-
նել ընդ Լուառ, թողեալ զերկիր հայրե-
նեաց իւրեանց՝ զոր այլ ևս անմարթ էր նոցա
պաշտպանել։ Յաղմուկս անդ և 'ի շփոթս
անցից դառնացեալ ոմանց թշուառութիւնքն,
խնդրեցին աղաղակաւ զմահ հինգ հազար
զօրաց հասարակապետութեան փակելոց
յարգելանս յեկեղեցւոջ 'ի Սան-Ֆլորան.
“Լուծցուք, ասեն, զվրէժ աղիտից ան-
ձանց մերոց, ժամ է այս պատեհ։ Տեսէք
զբոց հրոյն՝ որ Ճարակէ զքաղաքս մեր և
զգիւղս. անգութ թշնամիք չխնայեն և ոչ
միոյ ումեք 'ի մէջ, հատուսցուք նոցա ըստ
անգթութեան նոցին։ Ընդէր թողուցումք
զկնի մեր հինգ հազարս թշնամեաց, բարձ-
ցուք զնոսա 'ի կենաց, կոտորեսցուք զհա-
սարակապետականս,,։ Եւ իբրև 'ի մի բե-
րան գոչելով կարդէին զանօթս հրաղինուց՝
կոտորել զկալանաւորս, Պոնշան շարժեալ
'ի գութ ընդ աղաղակ եղկելեացն՝ զօրացաւ
'ի տկարութեան իւրում, գուն գործեաց
փրկել զչուառականս. և զի 'ի զայրագնելոյ
ամբոխին անմարթ էր ձայնիւ ազդ առնել
'ի ձայն թմբկաց կոչեաց զնոսա 'ի լուր
հրամանաց իւրոց. և դիմեցին ամենեքեան
յօժար։ Հրաման էր Պոնշանայ հասելոյ 'ի
դրունս մահու, խնայել 'ի կեանս կալանա-
ւորաց. և անդէն զայրագին կատաղութիւն
նոցա 'ի գթութիւն փոխեցաւ, և աղաղակ
բարձեալ գոչէին, “Ազատութի, ազատու-

թիւն, զերծուացուք զկալանաւորս. Պոն-
շան զայս կամի. հրաման է Պոնշանայ,,: Այս
եղև վերջին դիւցազնական գործ առաքինի
զօրավարին, և մեռաւ նա յայնկոյս գետոյն
Լուառայ: Էր նա քաջակորով և անվեհեր,
ճարտար և խոհական, որ զհանճար իւր մեծ
թագուցանէր ընդ խոնարհ համեստութիւն,
չցանկայր մեծի իշխանութեան՝ որում արժանաւոր էր քան զՏ'Էլպէ: Եւ զօրականք նորա նախանձորդք առաքինութեանց զօրավարին՝ ընտիր գտանէին, քաջք, չափաւորք, բարեպաշտք քան զամենայն Վանդէացիս: Զկնի մահու մեծի զօրավարիս մեռաւ և Լէքիւռ, արժանաւոր նախանձորդ հանճարոյ և առաքինութեանց նորա. որք գրեթէ միաբան անցին սոքա 'ի կենաց փառաւք, նուիրեալ զանձինս 'ի սէր կրօնից իւրեանց և թագաւորին:

ԳԼՈՒԽ ԼԳ.

Դարձ Վանդէացւոց յաշխարհն իւրեանց, Վերջին դիւցազնական արուեստն նոցա և 'ի ապառ 'ի ապառ կոտորած:

Եւ քանզի յօրէ անտի մարտին որ 'ի Մորթանեբ՝ առաջնորդք Վանդէացւոց խորհէին պատրաստել իւրեանց ճանապարհ, թողուլ հեռանալ 'ի հայրենի գաւառէն, վասն որոյ Տոթիշան երկերիւր զօրականաց էանց ընդ գետն Լուառ, և վանեաց զուրթհարիւր հաւարակապետականս, որք ու-

նէին զաջակողմեան ափն գետոյն, և ան-
արգել ճանապարհ գործեաց Վանդէաց-
ւոց ուրթսուն հազար արանց և կանանց և
մանկտւոյ. որք թէպէտ և փախստականք
յերեսաց թշնամւոյն՝ այլ դեռ ևս ահաւորք
էին, և 'ի մօտոյ ցուցին զփորձ:

Լարոշրժաքլէն սպարապետ նոցա կար-
գեալ յայնժամ, օգնականութեամբ Թալ-
մոնայ և Սթոֆլէայ, ուղղեաց զնոսա 'ի
Լավալ, և պատահեցաւ անդ զօրաց հասա-
րակապետութեան. և յերեսուն հազարաց
նոցա եհար վատնեաց արս հնգետասան
հազար: Լուր աղէտալի կոտորածին ահա-
բեկ արար զՓարիզ, ուր աւուրքք յառաջ
առ տարապայման խնդութեան կաքաւէին
'ի հրապարակս, և 'ի բերանս ամենեցուն
այս բան լսելի լինէր, "Զիք այլ 'ի միջի
Վանդէա". յանկարծ էլ 'ի մոխրոց ահա-
ւորագոյն քան զառաջինն, որ և պատրաս-
տէր անցանել 'ի Բրետոնիա, ձեռն տալ նո-
ցա՝ որք Շուանն կոչէին: Եւ մինչդեռ հա-
սարակապետականք խռովեալ շփոթէին,
խորհեցան Վանդէացիք՝ թէ գուցէ այսպէս
յաւուր միում խորտակեալ ընկճէին ընդ
բազմութեամբ թշնամեաց իւրեանց, և ա-
ճապարեցին առնուլ զմի 'ի ծովեզերեայ
քաղաքացն առ 'ի դիւրութիւն օգնականու-
թեան, զոր խոստանային նոցա Անգղիացիք:
Կալան զճանապարհն՝ որ ընդ Ֆուժէր, և
'ի ճանապարհի խորտակեալ գունդ մի հա-
սարակապետականաց՝ խաղացին անտի 'ի
Կրանվիլ, և նստան զնովաւ. այլ առ ան-

սաստու�թեան իւրեանց՝ ոչ ինչ յաջողեցան. քանզի բազումք 'ի նոցանէ դարձ առնել կամէին յերկիր հարց իւրեանց և մերձ էին 'ի պառակտումն։ Յայնժամ քաջն Լարոշըժաքլէն արկեալ զանձն 'ի մէջ խռովելոյ ամբոխին՝ խօսեցաւ ընդ նոսա ազգու բանիւք, և վախճան արար խօսիցն՝ սպառնացեալ թողուլ զնոսա 'ի կամս անձանց։ Հաստատութի պնդութեան քաջամարտիկ երիտասարդին, և ազգոյ ճարտարախօսութիւն նորա յարտասուս զղջութեան ածին զզօրականս, և ամենեքեան հպատակեցան։ Այլ զի յապաղէր օգնութիւնն խոստացեալ յԱնգղիացւոց, հարկ եղև հեռանալ 'ի ծովափանց անտի, զի մի փակեսցին 'ի թշնամեաց՝ որք գային և մերձենային։ Բախեցան ընդ նոսա 'ի Տոլ, և եղև պատերազմ սաստիկ՝ որ տևեաց ժամս քսան և երկուս, և յաղթող հանդիսացան Վանդէացիք։ Յետ յաղթութեանս Լարոշըժաքլէն կամեցաւ վերստին ածել զնոսա 'ի ծովեզերս, ուր օր 'ի յօր ակնկալութիւն էր օգնականութեան. այլ խորհուրդ և իղձ դարձ առնելոյ 'ի գաւառ իւրեանց 'ի սպառ կործանեաց զնոսա։

Բանակն Վանդէացւոց խորտակեալ առ Անժէր քաղաքաւ՝ չու արար դէպ ուղիղ 'ի Փլէշ, տագնապեալ միշտ յերեսաց Վէսթէրմանայ՝ որ պնդեալ զկնի նոցա կոտորէր զյետամնացսն. և անտի շարժեցաւ 'ի Մանս, յուսով մտանելոյ ընդ Տուրոնէ 'ի Վանդէա. այլ 'ի տառապանս 'ի յետին թշուառութեան, աշխատութիւն, ցուրտ

և սովոր քան զոր անհնարին հարուածս հասուցեալ նոցա՝ յուսաբեկ արար զնոսա։ Եւ հասեալ առաջի Մանս քաղաքի՝ որ ամրացեալ էր հզօր պահակապանօք, խրամօք, և մեծաւ պատրաստութեամբ հրազինուց, ՀԻԳՆ եդեալ կալան զքաղաքն։ Եւ այս եղև վախճան յաջողութեանց Վանդէացւոց. քանզի 'ի վաղիւ անդր յեղակարծուց պաշարեցան 'ի քաղաքին, մինչն ընդ դուռն մի 'ի նեղքս հասարակապետականքն, և անդէն իսկ 'ի մեծի հրապարակին խառնեցան 'ի մարտ. և յերկարէր պատերազմն մինչև ցկէս գիշեր. 'ի ծագել առաւօտուն զօրացեալ թշնամեաց նոր օգնականութեամբ զօրաց, տարածեցին զթևս՝ փակել զքաղաքն ողջոյն։ Ահաբեկեալ Վանդէացւոց տեղի տուեալ փախեան, թողեալ 'ի թշնամիս զաղխս բանակին, զկանայս, զմանկունս և զվիրաւորս. որք անդէն 'ի սուր և 'ի հուր կոտորեցան չարաչար, և հեղեղէր արիւն նոցա 'ի հրապարակս հասարակաց 'ի փողոցս և 'ի տունս։

Լարոշըժաքլէն և Սթոֆլէ զկնի մեծամեծ արութեանցն՝ ընդ փախստականս եկին 'ի Լավալ, և անտի աճապարեցին անցանել վերատին ընդ Լուառ. և բազումք խոնջեալ յաշխատութենէ և 'ի սովոյ, մնացին 'ի վերայ ճանապարհաց՝ զորս կալեալ ունէին վայրագ գիւղականք և գունդք Վէսթերմանայ։ Ոչինչ լաւագունի հանդիպէին բաղդի հասեալք յափունս Լուառայ. քանզի ոչ գտեալ նոցա նաւակս կառուցին լաս-

տափայտս դիւրաբեկս՝ և Լարոշրժաքլէն և Սթոֆլէ արիագոյնքն 'ի նոցանէ՝ գնդաւ հարիւրոց ինչ զօրականաց դիմագրաւեալանցին մեծաւ վտանգաւ ընդ ջուրսն ամբարձեալս յորդութեամբ անձրևաց. իսկ այլք ընդ լուր գալստեան Վէոմէրմանայ զերծան յեղերս Սաւենայ, ուր և կոտորեցան առ հասարակ: Ի բիւրաւորաց անտի Վանդէացւոց անցեալոց ընդ Լուառ 'ի Բրետոնիա, երեք կամ չորք հազարք միայն վերադարձան 'ի հայրենիս. սակայն թողին նոքա յիշատակս քաջութեան, քանզի մինչ չև ընկճեալ ընդ հզօր զինուք հակառակորդացն, կալեալ ունէին զինու զօրութեամբ զբազում գաւառս նոցա, և քաղաքս երկոտասան, և եօթնիցս 'ի հարուածս սաստիկս խորտակեալ զթշնամիս. և զայս ամենայն արութիւնս գործեալ 'ի խիստ ձմերայնի, առանց պատրաստութեանց մարտի, անպաշար և մերկ, և ընդ իւրեանս ունելով զբազմութիւն երեսուն հազարաց ծերոց, կանանց և տղայոց, տանջեալք յերեսաց հիւանդութեանց և տագնապեալք 'ի հետամտից ոխերիմ թշնամեաց: Եւ ուր ուրեմն ապա չարաչար հարուածովքն որ 'ի Ման և 'ի Սաւենա 'ի սպառ բնաջինջ եղեն (1793):

ԳԼՈՒԽ ԼԴ.

Մահ զօրավարացն Վանդէացւոց, և սուէր էր-
ելրի նոցա. և հաղորդութիւն խաղաղութեան ընդ
հասարակապետականս:

Իսկ Շարէթ ամենոփեալ զզօրութիւն
իւր 'ի ստորին Վանդէա՝ դեռ ևս յոտին
ունէր զկուսակիցս Թագաւորին. և կալեալ
զնուարմութիւնէր կղզի, անդ հաստատեաց
զկայս իւր, և մերձ ընդ մերձ Թեթև մարտիւք
աշխատ առնէր զհասարակապետականս,
էր զի յեղակարծուց 'ի վերայ հասեալ
նոցա, և էր զի յաջողութեամբ խոյս տուեալ
'ի նոցանէ: Այլ օգնութիւն հասեալ հասա-
րակապետականաց՝ առին զկղզին զայն 'ի ձե-
ռաց երկուց Թագաւորական զօրավարաց՝
որք վատութեամբ անձնատուր եղեն, Թէ-
պէտ և ոչ այնպէս ապրեցան 'ի սրոյ անգութ
մարդկանն. անդ և քաջն Տ'Էլպէ որ վի-
րաւոր կայր հիւանդագին ընկալաւ զմահ,
արժանի իւրումն փառաց անվեհեր արու-
Թեամբ և ուրախութեամբ, տրտմեալ
միայն ընդ վատութիւն իւրոցն: Նոյնպէս
և մեծանուն իշխանն Թալմոնի անկաւ 'ի
ձեռս Թշնամեաց. և իբրև ածեալ յատենի
հարցաւ զանուանէն՝ ասէ. "Իշխան եմ ես
Թալմոնի. վաՀատն և ուԹ պատերազմունս
մղեալ է իմ ընդդէմ հասարակապետութեանն
և ոչ երբէք վերջոտնեալ. քանզի պարս

անձին համարեցայ ծառայել ընիկ թագաւորի. և արդ 'ի մահուանս իմում ցուցից՝ զի արժանի իսկ էի նեցուկ կալոյ հաստատութեան գահուն ,, : Աստուա նա 'ի Լավալ, և առաջի դրան իւրոյ ամրոցին սրով ընկալաւ զմահ :

Ընդ առաքինի զօրավարաց թագաւորակողմանն կորեաւ և ոխերիմն նոցա Վէսթէրման, այն որ բազում անգամ մոլեալ յարիւն պարտելոցն Վանդէացւոց, թողոյր զթիկնոցն, և զթեզանիս շապկին հանդերձեալ՝ վաղակաւոր 'ի ձեռին դիմէր 'ի խառնուրդս մարտին, և յաջ և յահեակ անխնայ ածեալ զկոտորածն՝ արժանաւոր ինքեան ժառանգէր անուն Դահիճ Վանդէացւոց կոչէլ. չգիտեմ որպէս գժգմնեալ նորա ընդ արքանեակս Ռոպէսպիէռայ՝ կոչեցաւ 'ի Փարիզ, և ընկալաւ զմահ 'ի վարձ փոխարինի հայրենասէր արուեստին (1794):

Յայնմ վայրի քաջն Լարոշըժաքլէն գրեթէ միայնակ մնեալ 'ի Վանդէա՝ ժողովէր զիւրև զկաց մնաց զօրացն, և բազում անգամ հարկանէր զթշնամիս. թէպէտ և գիտէր թէ ոչ է մարթ 'ի սպառ բաւել ընդդէմ անսպառ զօրութեան հասարակապետականաց, սակայն լաւ համարեցաւ նահատակել 'ի վերայ արդարութեան, քան խառնել զանուն վատութեան ընդ քաջութեան փառաց. վասն որոյ և յաղթութիւն մեծ տարեալ ընդդէմ թշնամեաց, դիմագրաւեալ յանդգնագոյնս, անկաւ նենգութեամբ միոյ ուրուք 'ի զօրականէն : Բայց

ելթող իւր անմահ յիշատակ արուեստեանն 'ի դեռահասակ պատանեկութեանն, քանզի դեռ զքսանեարկամենիւք ուրեմն էր: Փոխանորդեաց զնա յիշխանութեանն Սթոֆլէ, և իշխան եկաց 'ի Բարձրն Վանդէա՝ որպէս և Շարէթ առաջնորդ կայր 'ի Սորինն: Սոքա քաջութեամբ պնդութեան իւրեանց յոգիս ապատան արարին զզօրս հասարակապետութեան, որք հուր և սուր 'ի ձեռին մխեալ 'ի գաւառն, յապականութիւն դնէին զամենայն: Սակայն և այնպէս ուրբիւրք զօրաց ոչ կարէին ընկճել և խոնարհեցուցանել զնոսա, և գիւղականքն անընուաճելիք՝ ինքնիշխանք կային 'ի գաւառն թաթաւեալ ճապաղեօք արեան և յաւերդարձեալ: Այլ ոչ տեւեաց ընդ երկար մարտն անագորոյն. քանզի 'ի վախճան 1794 ամին մահուամբ Ռոպէսփիէռայ դուլ եղև զինուց: Եւ յետ անկման բռնաւորին ձանձրացեալ Ազգային դաշնակցութեանն 'ի կոտորածոց անմեղ քաղաքացեաց, պայման հաշտութեան առաջի եդ Վանդէացւոց. և զի գիտէր զգժտութիւնն՝ որ վասն իշխանութեան ընդ Շարէթ և ընդ Սթոֆլէ, նախ պատգամաւոր առաքեաց առ Շարէթ. և զկնի երկար բանից կռեցան դաշինք հաշտութեան, պայմանս 'ի միջի եդեալ՝ ազատութեամբ պաշտել Վանդէացւոց զուղղադաւան կրօնս, հատուցանել երկու միլիոն ֆրանքս 'ի ծախս պատերազմին, թողութիւն յանցանաց և ազատութիւն ամենայն հարկաց, դարձեալ և իշխանութիւն ազատ

վարչութեան՝ պայմանաւ ընդունելոյ զՀաստատակապետութիւն (1795)։

ԳԼՈՒԽ ԼԵ.

Պապերազմ Շուանաց 'ի Բրետոնիա, ընկճելնոցա ընդ հաստատակապետութեամբ։

Այլ տակաւին սաստկանայր պատերազմն 'ի Բրետոնիա, որ յանուն ջորիոյ եղբարց առաջնորդաց մարտին՝ Շուան կոչեցաւ. և նշանաւոր եղև պատերազմն գաղտնութեամբն և նոր օրինակ տարաշուն. քանզի ոչ որպէս զԱնդէացիս համարձակ ընդ գունդագունդ բանակաց 'ի դիմի հարկանէին, այլ յանտառս ամրացեալք իբրև մեկնակազէնս գրոհ տուեալ 'ի գունդս գունդս թշնամեաց՝ կոտորէին ցրուէին զնոսա. և 'ի խմբել նոցա դարձեալ և զօրանալ, խոյս տուեալ մխէին յանտառս իւրեանց։ Կոմն Փիւիզէյ իշխան նոցին՝ միաբանեաց ճարտարութեամբ այլ և այլ խումբս ընդ Շուանաց, և ինքն չոգաւ 'ի Լոնտոն ածել հաւանեցուցանել զԱնգղիացիս յօգնականութիւն իւրեանց. այլ մինչ չև նորա դարձ արարեալ անդրէն 'ի հայրենիս, ետեղակալք նորա կռեցին դաշինս հաշտութեան ընդ հաստատակապետականս ըստ պայմանացն որ եդան ընդ Շարէթայ։ Յետ աւուրց եմուտ 'ի նոյն պայման հաշտութիւն և Սլոֆլէ, և այնուհետև թուէր երկիրն խաղաղութիւն առնուլ. այլ ոչ յաջողեաց առ

ժամայն։ Քանզի արք սինլքորք՝ անարժանք անուան Վանդէացւոց՝ սկսան ձեռն մխել 'ի հասարակապետականս, և տակաւ սուսարացեալ 'ի խումբս աւազակէին 'ի ճանապարհս, մինչև յանդգնեալ յարձակեալ և աւար առնուլ զհամբարս կերակրոց Նանթ քաղաքի։ Յորմէ պատճառս առին և հասարակապետականք հաստատեալ գունդ զօրաց 'ի Վանդէա, հակառակ պայմանացն եդեալոց։ Ի բողոքեալ Շարէթայ ընդ անիրաւութիւնն, 'ի վերս երևեցան նշանակք թշնամութեան. զնոյն անցս կրեալ և Շուանայ 'ի Բրետոնիա, դարձեալ ձայն ետուն 'ի զէն ընթացան միաբան ամենայն կուսակիցք թագաւորի և պատրաստեցան 'ի մարտս։ Բայց ոչ ևս կռիւ էր ընդ աննշան զօրավարս, այլ ընդ քաջակիրթ առն որպիսի էր Հոշ. որ ընդ պատերազմական հմտութեան և խոհականութեան ունէր և զերիտասարդական աշխոյժ քաջութեան (1795)։

Մեծահռչակ և ազնուաւոր դէպք նորոյ պատերազմիս՝ եղեն արշաւանքն 'ի Քիպըրոն։ Անգղիացիք զնչեալ 'ի թախանձանս Փիւիզէյայ՝ հանին տարմիղ հղօր, և խորտակեալ զնաւահանդէս Գաղղիացւոց՝ 'ի վաղիւ անդր մերձեցան 'ի կղզին Քիպըրոն, և ելին 'ի ցամաք բիւր մի վտարանդի Գաղղիացիք և Շուանք։ Զահի հարան հասարակապետականք ընդ անակնկալ արշաւանս սոցա, և տարածեցաւ ընդ Գաղղիա համբաւն։ Թագաւորականք խնդագին, և հասարակապետականք ահաբեկ, կարծէին անդէն

առ դուրս հասեալ զնոսա 'ի Փարիզ։ Այլ
Հօշ անխռով ամենևին հանդարտեցոյց և
զիւրան, և զամենայն կարևոր պատրաստու-
թիւն տեսեալ խաղացոյց զզօրն 'ի վերայ
Թշնամեաց, որք տիրեալ Քիպրոսի՝ Թո-
ղեալ էին զամրոցն 'ի ձեռս նոցին իսկ պա-
հապանացն անձնատուր եղելոց. և փոխա-
նակ աճապարելոյ մխել 'ի Բրեստոնիա՝ ուր
ակնկալութեամբ մնային նոցա Շուանք, ղա-
կիշ ածեալ նստան 'ի կղզւոջն։ Իսկ զօրա-
վարն Հօշ այր յաջողակ և յանդուգն՝ յօ-
գուտ իւր առեալ զնոցայն վրիպանս՝ եկն
պաշարեաց զնոսա. Ջանացան և նոքա զինու
բռնութեամբ առնել իւրեանց ճանապարհ,
այլ խորտակեալ 'ի նոյն դարձան կորակոր։
Յայնժամ և ոմանք 'ի պահապանաց Քիպը-
րոնի բանագնաց եղեն առ Թշնամիս մատ-
նել զամրոցն. եկն եհաս Հօշ զօրօքն ընդ-
դէմ ամրոցին 'ի փոթորկեալ հողմալից ժա-
մու 'ի գիշերանալ աւուրն։ Բախեցաւ ընդ
ամրոցին 'ի դիմաց, որպէս զի անդր զթշնա-
միս ձգեսցէ, և հատուածեալ գունդ մի 'ի
բանակէն խաղացոյց զեզերքք ջուրցն հա-
տանել ունել զամրոցն, ուր մատնիչքն մնայ-
ին նոցա։ Եւ այսպէս առաւ ամրոցն, կէսք
'ի պահապանացն սրակոտոր կորեան և կէսք
զէնընկէցք անձնատուր եղեն։ Խրախու-
սեալ Հօշայ յաջողութեամբս խաղաց 'ի
վերայ բանակի Թագաւորականաց. Փիւիզէյ
'ի տեսանել անդ զթշնամիսն, ահաբեկեալ
ելիք զիւրսն և փախստական եղև վատու-
Թեամբ։ Եկաց 'ի տեղի նորա քաջ պատա-

նին Սմիւրնոյ պատրաստեալ զանձն 'ի վերայ կենաց Ժողովրդեան իւրոյ. քանզի ոչ ևս էր յոյս յաղթութեան պաշարելոցն 'ի յաղթական զինուց թշնամեաց: Մանաւանդ զի բազումք 'ի զօրականէն դասալիք փախստեայ գնային, և աղաղակ ողբոց և ճիչ ծերոց, կանանց և տղայոց՝ զձեռս պատերազմողացն թուլացուցանէր: Յայնմանճողոպրելի վտանգի Սմիւրնոյ եօթն հարիւր աղատախումբ քաջորերով եկաց իբրև պատուար ամուր ընդդէմ զինուց թշնամեաց, և ժամ ետ Ժողովրդեանն փախստեամբ զերծանել 'ի նաւս Անգղիացւոց: Անդ էր տեսանել զողորմատեսիլ հիւսացն այնոցիկ. քանզի բազումք 'ի խռնել կուտել անդ 'ի մակոյկսն խորասոյզ լինէին, և բազումք ծովամագք հեղձնուին, և Անգղիացիք կացեալ 'ի վերայ հարուածովք գանից հեռացուցանէին և զատուցանէին զնաւաժանն: Մինչդեռ սոքա ասա 'ի փախուստ ածապարէին, ազատակոյսն քաջարի զոգի 'ի բռին կալեալ կռուէր, և տորմիղ նաւացն Անգղիացւոց անընդհատ ռումբս թօթափէր 'ի վերայ թշնամեաց: Զայն տեսեալ Հօշայ և քաջ խելամուտ լեալ զի բազում արեան ճապաղեօք մնայ նմա յաղթութիւն, առաջի արար պաշարելոցն պայմանս հաշտութեան աղատութեամբ կենաց՝ որոց զէնընկէց անձնատուր լնցին: Բռնադատեալ Սմիւրնոյլայ յաղակէ մարդկանն՝ որ ոչ կարացին ճողոպրել զանձինս 'ի նաւս Անգղիացւոց, առ ամօթոյ և ցաւոց արտասուօք կնքեաց զդաշինսն.

այլ ոչ կամելով խոնարհել առաջի մարդ-
կանն՝ զորս եղեռնագործս Ճանաչէր, 'ի
բաց եհան զանձն 'ի դաշանցն։

Եւ ցուցին 'ի մատոյ դէպք զքաջախոհ
մեծանձնութիւն նորա. քանզի դաշնա-
կցութիւնն Ազգային առ ոտն կոխեալ ըզ-
պայմանս ուխտին՝ հրամայեաց ընդ սուր
հանել զամենեսին որք անդ անձնատուր
եղեն, և ոչ կարաց Հոշ ընդդէմ կալ հրամա-
նին՝ որ ատուերածս ածէր փառաց յաղ-
թութեանն։ Սոմկրոյլ և ընկերք իւր կոտո-
րեցան անվեհեր արութեամբ, բարօրու-
թիւնս և երջանիկ յաջողութիւնս մաղթե-
լով ապաշնորհ հայրենեաց իւրեանց. բազ-
մաց յորդորեալ բանս ինչ ատութեան խօ-
սել և զերծանել 'ի մահուանէ՝ չառին յանձն
զանարժան գործն. և իբրև դիւցազունք
և նահատակք առաքինիք եղին յաշխարհէ
(1795)։

Յարեաւ Շարէթ խնդրել զվրէժ արեան
նոցա, այլ 'ի զուր. քանզի 'ի բազում հա-
ղուածոցն տկարացեալ էին Վանդէացիք,
և ակն ունէին ներողամտութեամբ Հոշայ
զօրավարի՝ հասանել կենաց և խաղաղու-
թեան. բայց Շարէթ յամառեալ պնդեալ
կայր մինչև խապառ տեսեալ տոկալ ընդդէմ
զօրութեանն հասարակապետութեան։ Զնոյն
և Սթոֆլէ խորհեցաւ, խրախուսեաց 'ի զէն
յուսով օգնականութեան Անդղիացւոց և
գալատեան իշխանին Արդուայ. այլ 'ի դերև
եղին ակնկալութիւնքն, և ընդ հուպ մատ-
նութեամբ ձերբակալ լեալ սպանաւ. և

որ հանճարո

Նափոլէոնի 'ի բուռն առեալ զգերագոյն իշխանութիւն և զոմանս խոստմամբ, զայլս բրունութեամբ և նենգանօք ընկճեալ։

Այսչափ ինչ վասն Վանդէացւոցն պատերազմաց համառօտիւ ասացեալ, դարձցուք անգրէն 'ի կարգ պատմութեանս։



ՈՍՏԻԿԱՆՔ

ԳԼՈՒԽ Ա.

ԶԱզգայինն դաշնակցութիւն յաջորդէ ոստիկանացն վարչութիւն. Ի զինել հաստատակամութիւն ընդդէմ Ռշնամեաց օգտարաց։

ՅԱՂԹԱՆԱԿԵԱԼ Ազգային դաշնակցութեան 'ի վերայ ժողովրդեան մայրաքաղաքին՝ կարգեաց զվարչութիւն ոստիկանաց (1795), յերիս բաժանեալ ժողովս. առաջինն ժողով հինգհարիւրոց՝ գումարեալ 'ի քսան և հնգամեայ երիտասարդաց, որոց գործ էր օրէնս առաջի առնել. երկրորդն՝ ժողով ծերակուտի երկերիւր և յիսնից՝ ընտրեալ յարանց կատարելոց 'ի քսան և հնգամենից և 'ի վեր, որոց պաշտօն էր ընդունել կամ մերժել զօրէնս առաջարկեալս 'ի հինգհարիւրոցն. և երեամեայ սահմանեցաւ ժամանակ իշխանութեան սոցա։ Կացին և հինգ իշխանք գործադիրք օրինացն սահմանելոց՝ որոց տարեւոր էր պաշտօն, և՝ ընտրեցան նախ՝ Լարէվեյլէր Լըփոյ, Լը Թուրնէօր, Ռէվպէլ, Պառա և Քառնոյ։

Ի ժամանակին յայնմիկ ոչ կարդք էին 'ի հասարակապետութեան, ոչ օրէնք և ոչ վարչութիւն անտեսութեան, այլ ամենայն ինչ խառնիխուռն. ընդ անիշխանութեանն և սոքին երկարեալ տագնապեցուցան էր զաշխարհն: Ամենայն գանձք ծախեալ էին 'ի ռոճիկ զօրականին, և վաճառեալ բազում կալուածք վտարանդի աղնուականաց և ստացուածք սպանելոցն՝ առ 'ի պահել յոտին զբազմութիւն զօրականին որ մերկք, սովալլուկք, անզէնք և աներիվարք էին: Արհամարհեալ էր և թղթեայ դրամն անբաւ յաճախութեամբն և դատարկեալ գանձն հասարակաց. և յայն հասեալ էր ջքաւորութիւն, զի իբրև եմուտ ժողովն ոստիկանաց յապարանս տուեալ նմա 'ի բնակութիւն, մերկ յամենայն կարևորաց գտեալ զայն՝ յանօթ էառ 'ի դռնապանէն աթոռակս յարդեայս և տրապիզ անհարթ:

Այս պայման էր ահա Գաղղիոյ յորժամ ոստիկանք ձեռն արկին 'ի վարչութիւն. և առաջին փոյթ նոցա եղև՝ ցուցանել զզօրութիւն իշխանութեան իւրեանց, և յաջողեցան: Ի սուղ ժամանակի նորոգեցան կարգք քաղաքականութեան, ճարտարութիւն ձեռակերտից, երթևեկ առի և տրոյ, փոյթ երկրագործութեան, և ամէն ազգի ազգի գիտութեանց 'ի վարժարանս: Եւ մի ոմն 'ի հնգից հրամանակատար ոստիկանաց Լարէվեյլէր Լըփոյ՝ ունելով զհոգ տեսչութեան բարոյականին, զհետ եղև հաստատել զԱստուածամարդասիրացն աղանդ. այլ ծանակ

կացեալ ամենեցուն՝ չկարաց ինչ 'ի գլուխ հանել։ Քանզի զեղծումն և ապականութիւն բարուց զօրացեալ էր յոյժ, և Պառա իշխան 'ի հնգից անտի առաւել ևս տաժիչ եղև ապականութեան, բացեալ զապարանս իւր ամենայն խտռնակեցիկ մարդկան։

Զայսու ժամանակաւ իբրև 'ի սպառ գոգցեաս ընկճէին Վանդէացիք ընդ իշխանութեամբ հասարակապետութեան, և կարծէր խաղաղութիւն առնուլ աշխարհն յերեսաց առանին պատերազմաց, յարեան կրկին դաւադիր ապստամբութիւնք ռամկավարաց և կուսակցաց Թագաւորի ընդդէմ վարչութեան ոստիկանաց։ Առաջնոյն գլուխ կացեալ էր Գրակկոս ոմն Պապէօֆ, տրիբուն ժողովրդեան զանձն կարգալով՝ գուն գործէր ապստամբեցուցանել զժողովուրդն խնդրելով զագարակային օրէնս ըստ նախնի հռովմայեցւոց և զռամկավարութիւն. և զամենայն ազատութիւն խոստացեալ ժողովրդեան և զօրացն, ջանահնար լինէր ստուարացուցանել զիւր կողմն։ Օր սահմանեալ դաւոյն կոտորելոյ զՀինդ հրամանակատարս և զոմանս 'ի հինգհարիւրոցն և զսպարապետ ազգային զօրաց, յայտնեցաւ դաւն՝ ձերբակալ եղև առաջնորդ ապստամբութեանն Պապէօֆ, և առ ժամն ցածեաւ խռովութիւնն. սակայն զկնի սակաւուց կրկին խլրտեցան կուսակիցք նորա, և յորդորեալ յիւրեանս ձգեցին զզօրս քաղաքին, և բանագնաց եղեն ընդ բանակին՝ որ 'ի Կրը-

նէլ. և սոքօք խրախուսեալ դիմեցին 'ի վերայ ժողովոյ ոստիկանաց. այլ խորտակեալ տեղի ետուն, և ընկճեցաւ ապստամբութիւն զօրացն: Նոյնպէս և առաջնորդք կուսակցաց թագաւորին Պրոթիէ և Լավեյլ Հէօրնուա, որք պատրաստէին դարանս ընդդէմ հասարակապետականաց, 'ի յայտ եկեալ պատուհասեցան (1796 և 1797):

Ի սմին ժամանակի և արտաքուստ քաջայաղթ արութեամբ զօրաց իւրոց փառաւորէր վարչութիւն ոստիկանաց: Եւ Քառնոյ խորհուրդ այսպիսի առաջի եդ իշխանակցաց իւրոց, միացուցանել զերեսին բանակս Հռենոսի, Սամպրեայ և Իտալիոյ, և խաղալ 'ի Վիեննա: Առաջնոց երկոցունց բանակացն զօրավարք կային անուանեալք՝ Մորոյ և Ժուռատան, և երրորդին զօրավար կարգեցաւ յաղթականն Թուլոնի, նեցուկ զօրութեան Ազգային դաշնակցութեանն Նափոլէոն Պոնափառթէ: Եւ զի աշխարհաքարող զօրավարիս քաջութեանց առք, ոչ զԳաղղիա միայն, այլ և զԵւրոպա ողջոյն կերպարանափոխ արարին, և պատմութիւնք գործոց նորա յեռեալ եղեն 'ի տարեգրութիւնս ազգաց, պահանջիմք փոքր մի դադար տալ կարդի պատմութեանս, և Ճառել սուղ բանիւք զսկզբան կենաց նորա և զպատանեկութեան քաղաքավարութիւնս:

ԳԼՈՒԽ Բ.

Ծնունդ և կեանք Նափոլէոնի մինչև ցղջրավարել նորա Իտալիան բանակին։

ԱՍՏՈՒԱԾԱԽՆԱՄ տեսչութիւն՝ որ աներ-բևոյթ ձեռամբն ածէ զամենայն 'ի լրումն անյեղլի վճռոց իւրոց, որով և զպետութիւս փոփոխէ, ամբառնայ և խոնարհեցուցանէ զազգս, տայ աշխարհի տիեզերական հզօրս, նոյն յաննշան կղզւոջ ուրեք Միջերկրական-նին ծովու յարոյց իւր պաշտօնեայ առ 'ի պատուհասել զառյապայ խռովութիւնս Գաղղիոյ և զզեղծմունս Եւրոպայ, և 'ի կերպարանափոխ առնել զաշխարհ, զայրն՝ զորմէ առաջի կայ մեզ խօսել։

Ծնաւ Նափոլէոն Պոնափարթէ յԱյաչիո 'ի կղզւոջ Կորսիկայ յամին 1769, 'ի հընդեռասանեերորդի աւուր ամսեանն օգոստոսի։ Հայր նորա Կարոլոս Պոնափարթէ էր յազնուատոհմ տանէ Փլորենտիոյ. քանզի նախնիք նորա հալածեալք 'ի Կուելֆեանց եկեալ բնակէին 'ի Կորսիկա, և ազգախառնեալ ընդ հոյակապ ցեղս Գենուացւոց՝ երևելագոյնք ազնուականութեամբ լինէին 'ի կղզւոջն։ Իսկ մայր նորա Լէդիցիա Ռամոլինեայ կին բարեպաշտօն էր և ժրագլուխ, որ և 'ի յղութեան անդ որդւոյն բազում անգամ առնպցի քաջութեամբ 'ի պատերազմունս մտեալ էր ընդ առնն 'ի

փրկութիւն հայրենեաց. և յաւուր ոսնի Վերափոխման այն ինչ դարձ արարեալ յեկեղեցւոյ 'ի տուն՝ շտապեալ երկամբք 'ի լոյս էած զմանուկն 'ի վերայ գորգոյ իրիք, յորում առեն նկարակերտեալ էին դիւցազունք հոմերականք։

Անդատին 'ի մատաղ հասակէն երևէր 'ի մանուկն բնաւորութիւն յամառ, հետաքնին և յանդուգն, զոր խոհականութիւն մօրն ստնձահարէր, սիրելի և ահաւոր և յարգելի զանձն ընծայեցուցեալ նմին. և կրթէր զնա 'ի հլութիւն, և 'ի հոգողութիւն առտնին գործոց։ Ի նոյնս վարժէր զնա և բաղմահմուտ և փորձ հօրեղբայր նորա սարկաւագապետն Լուկիանու՝ որ իբր երկրորդ հայր էր տանն. և խորագոյց խելամուտ լեալ բարեմասնութեանց մանկանն՝ զապագայ մեծութիւնս նորա մարգարէական իմն ոգւով 'ի մահիճս անդ մահուն գուշակէր ասելով. "Վայրապար է խորհել զբաղդէ Նափոլէոնի, քանզի ինքնին գոցէ նա զիւր բաղդ. Յովսէփ անդրանիկ է տոհմիս, այլ Նափոլէոն առաջնորդ և իշխան լեցի"։

Մանուկն Նափոլէոն իբր 'ի տասնամեայ հասակին տուաւ 'ի վարժոց զինուորական 'ի Պրիէն։ Մեծ էր փոյթ նորա 'ի լրումն պարտուց իւրոց և 'ի սէր պահպանութեան կարգաց. վասն այսորիկ հեռանայր 'ի խաղուց և 'ի անոսի պարապմանց, և ստանձէր զբուռն բնաւորութիւնս իւր. առաւել միտ դնէր պատմութեան և աշխարհագրութեան

ուման. և 'ի մանկական խաղն՝ եթէ խա-
ղայր երբէք, ցուցանէր զախորժակս իւր
զինուորական վարժից։ Օրինակի աղագաւ,
'ի ձմերայնի կառուցանէր ամրոցս և պատ-
նէշս ձիւնեղէնս, և բաժանեալ աշակերտա-
կցացն զիւրաքանչիւր սպաս, ինքն առաջ-
նորդ կայր և ուղղէր զգործն, և տայր հրա-
ման կիսոցն մարտանչել ընդ ամրոցին և այ-
լոց զգուշանալ, և զերկոցունց իսկ կողմանց
ուղղէր զչարժմունս, մերթ ընդ պաշարիչս
և մերթ ընդ պաշարեալսն ձիգն եդեալ 'ի
մարտ պատերազմի. և զարմանալի լինէր
առաջի ընկերաց իւրոց և օտարաց յաճա-
խութեամբ գիւտիցն և ճարտարութեամբն
'ի գործ։ Տեսեալ 'ի նմա վարժապետացն
զառյապայ մեծութեան զնշոյլս, փոխեցին
զնա 'ի զինուորական դպրոց Փարիզու,
թէպէտ չև էր լցեալ զամս հասակին, զի էր
դեռ ևս ամաց վեշտասանից։ Տեսեալ Նա-
փոլէոնի զթոյլ և զմեղկ տարազ հրահան-
գաց պատանեացն՝ որ 'ի զէն և 'ի խիստ
կեանս սահմանէին, վշտագնէր յանձն իւր։
Ցետ իբր երկուց ամաց ելեալ 'ի մարզեցն՝
կարգեցաւ երկրորդ տեղակալ թնդանօթա-
ձիգ գնդին Լաֆէրայ՝ որ 'ի պահպանու-
թիւն կայր յայնժամ Կրենոպլ քաղաքի։

Եւ մինչդեռ հանապազորդէր նա յու-
սումն գիտութեան իւրոյ 'ի զինուորական
և 'ի քաղաքական մասին, յարեաւ աղմուկ
խռովութեան 'ի Գաղղիա. և զի էր նա պատա-
նի աշխոյժ և փառասէր՝ ակնկալութեամբ
բախտի զկողմն կալաւ ռամկին, թէպէտ և

կամք իւր չէին միտել յանիշխան խռովութիւն։ Այսու հոգւով դարձ արար 'ի Հայրենի կղզի իւր 'ի Կորսիկա, և տեսեալ զայն 'ի ձեռն Փաուլեայ՝ որ օգնութեամբ Անգղիացւոց մարտնչէր ընդ Գաղղիացիս, զէն էառ և ինքն՝ և առաջնորդ կացեալ գնդի միոյ ազգային զօրաց՝ մարտնչէր ընդ Ծերունւոյն Փաուլեայ, զոր ցայնժամ յարգանօք սիրոյ մեծարէր, և 'ի նմանէ պատուեալ համբաւէր։ Ի զօրանալ կուսակցաց Անգղիոյ և հրաձիգ առնել զԱյաչչիո, հրդեհեցաւ և տուն Նափոլէոնի, և փախուցեալ յայնժամ ազգատոհմաւ բնակէին 'ի Մարսիլիա։

Իսկ Նափոլէոն 'ի խնդիր բախտի չոգաւ 'ի Փարիզ, որ իբրև զծով ալեկոծէր 'ի նորանոր աղմուկս խռովութեանց։ Յաւուրսն յայնոսիկ հարաւային գաւառք Գաղղիոյ նշկահեալ զիշխանութիւն խռովչաց՝ զկողմն ունէին զթագաւորին. և Թուլոն քաղաք բանայր զդրունս իւր առաջի Անգղիացւոց։ Զօրավարն Քարթոյ առաքեցաւ յԱզգային դաշնակցութենէ ընդդէմ քաղաքին ապրատամբելոյ. պաշարեցին հասարակապետականք զԹուլոն, և Նափոլէոն զօրագլուխ թնդանօթաձիգ գնդին, 'ի սկզբան անդ քաջութեամբ իւրով համբաւեալ 'ի հասարակապետութեան, ապա խորամանկ ճարտարութեամբ զամենայն զպատեհ դէպս 'ի մեծութիւն իւր 'ի կիր արկեալ, երթայր և մեծանայր։ Եւ յետ այնորիկ ընդ Տիւմերպիոնի զօրավարի Իտալական բանակին անց յԻտալիա և քաջութեամբն իւրով և հան-

ՀԱՐՈՎ 'Ի մարտս ՍարՃիոյ, Օնէյլայ և Թանանոյ՝ պայծառագոյն արար իւր ա-նուն։ Այլ իբրև անկաւ Ռոպէսփիէռ և ամենայն կուսակիցք նորա կոտորեցան, ածաւ և ինքն Նափոլէոն յատեան դատաս-տանի իբր կասկածաւոր, զի և բարեկամ իսկ էր կրտսերոյն Ռոպէսփիէռայ. և հա-զիւ Ճողոպրեալ 'Ի մահուանէ, արկաւ յին-խանութենէ։ Այլ նա իբրև առիւծ 'Ի գա-ռագղի կայր 'Ի Փարիզ, բողոք բարձեալ ընդդէմ հասարակապետութեան, զի զրկե-ցին 'Ի գործոց հասարակաց զայր հաւատա-րիմ 'Ի սկզբանէ հետէ օրինաց ազատու-թեան, և հակառակորդ ոխերիմ նեղքին և արտաքին թշնամեաց նորա։ Յուշ ածէր և զքաջութիւնս իւր 'Ի Թուլոն, 'Ի ՍարՃիոյ, յՕնէյլ և 'Ի Թանարոյ։ Տեսուչք պետութեանն ետուն նմա գունդ մի զօրաց՝ խազալ ընդդէմ Վանդէացւոց. այլ նա և ևս համարձակեալ բողոքէր, և չառնոյր յանձն զգնդապետութեան ևեթ պաշտօն։ Մինչև դէպք 'Ի բարի յաջողեցին նմա, և 'Ի վերայ եհաս խռովութիւն Ազգային դաշնակցու-թեանն ընդ ռամիկն. և Պառա զօրավար գնդին դաշնակցաց, այր անփորձ զինուց, կացոյց զնա զօրավար։ Ի գլուխ հանեալ նորա զմեծն և զկարևոր յաղթութիւն, զոր 'Ի կարգի պատմութեանս յիշեցաք, ամ-բարձաւ 'Ի ժողովոյ դաշնակցաց 'Ի սպարա-պետութի նեղքին զօրաց և քաղցրութեամբ իւրով սիրելի զանձն ընծայեցոյց ռամկին 'Ի դէպս ինչ. որպէս երբեմն նեղեալ 'Ի սովոյ

ժողովուրդ մայրաքաղաքին բողոք բառնայր յայտնապէս. և յանցանել Նափոլէոնի ընդ փողոցս 'ի զգուշութիւն խաղաղութեան հասարակաց, խումբ արանց և կանանց դիմեցին 'ի վերայ նորա հաց խնդրելով. և 'ի խառան անդ աղմկելոյ ռամկին՝ վտանգ էր կենաց Նափոլէոնի: Անդ կին ոմն յոյր և գէր սկսաւ յանդուգն տատանմամբ ձեռացն գոչել. "Սպայքս այսոքիկ զանձամբ արկեալ զկարգ պատուոյ՝ յոխորտաբար ծաղր առնեն զմեզ, յօրացեալ գիրացեալ 'ի համագամն, և չէ ինչ նոցա փոյթ զի մեռանիմք մեք 'ի սովոյ,,: Յայնժամ Նափոլէոն անխռով քաղցրութեամբ ասէ. "Տէս, քոյր, ո՛ 'ի մէնջ գիրագոյն լցէ. մորթ և ոսկր, և ոչ աւելի ինչ է յիս,,. քանզի նիհարացեալ իսկ էր յայնժամ Նափոլէոն: Քրքիջ եբարձ ժողովուրդն, և հանդարտեալ ցրուեցաւ:

Յետ այսորիկ համախոհութեամբ ատենի իշխանաց՝ զէնընկէց արար Նափոլէոն զռամիկն. և մինչդեռ 'ի կարևոր յայսոսիկ գործս պարապէր, եկն 'ի մէջ Եւգինէոս Պոհարնէ պատանի իբր երկոտասանամեայ, և խնդրէր զսուր հօր իւրոյ որ 'ի պատերազմունս անկեալ էր: Լուաւ նմա Նափոլէոն քաղցրութեամբ, և խոստացաւ խնամ ունել 'ի վերայ մօր նորա. զոր և սիրեաց 'ի տեսանելն, և էառ զնա իւր 'ի կնութիւն. և անուն կնոջն էր Յուսեփինա: Պատուեն վէկն ուրուք Արաբացւոյ գուշակեալ այրոյս՝ զի առաջի կայր նմա յաւուր միում ամբառնալ 'ի գշխոյութիւն:

Յետ այսորիկ եկաց Նափոլէոն զօրավար Իտալական բանակին. և իշխանութիւնս այս եղև կարապետ ապագայ մեծութեան նորին յոր մեծաքայլ դիմեալ՝ ամբարձաւ մինչև յաթոռ ինքնակալութեան։

Ի քսան և եօթն ամսեանն մարտի եհաս'ի բանակն իւր'ի Նիցցա, և եգիտ զայն ջքաւոր 'ի կարևորացն յամենայնէ, այլ լի ոգւով քաջութեան, փորձ և կիրթ 'ի պատերազմունս Ալպեանց և Պիրենեանց. և զօրագլուխք նորին էին Մասսենա, Օժերոյ, Լա Հարպի, Սէռիւրիէ, Միւրատ և Ժուպէր։ Եռեսս զսոսա Նափոլէոն և զուարճացեալ յանձն իւր՝ խօսեցաւ առ նոսա բանս խրախուսանաց, վառեաց զոգի զօրականին՝ որ իբրև զնոր ոմն Կեսար տեսեալ զնա առաջնորդ բանակին, վստահք 'ի յաղթութիւն՝ խաղային խնդութեամբ 'ի մարտ։

ԳԼՈՒԽ Գ.

Զօրավարել Նափոլէոնի Իտալական բանակին, և յաղթութիւնք նորա 'ի վերայ Աւստրիացւոց և Բիէմոնդէցւոց։

ՊԱՏՈՒԷՐ առեալ Պոնափարթեայ առաջնորդելոյ Իտալական բանակին, չուեաց խաղաց գնաց երեսուն և վեց հազար զօրք և եկն 'ի Սաւոնա. և գիտելով զառաւելութիւն զօրութեան թշնամեաց, խորհուրդ կալաւ բաժանել զԲիէմոնդեցիս

յԱւստրիացւոց, և ուրոյն հասեալ 'ի վերայ նոցա խորտակել գիւրեաւ։ Վասն որոյ անդէն հատուածեալ գունդ մի 'ի բուն բանակէն՝ արձակեաց առաջնորդութեամբ Լա Հարփայ զծովափամբն. և մինչդեռ ձախ թև բանակի զօրացն Աւստրիացւոց խաղայր ընդդէմ գնդիս հատուածելոյ, և բուն բանակի նոցա շարժէր ընդդէմ Գաղղիացւոց ընդ Մոնթէնոթթոյ բլուր, Ռամփոն զօրագլուխ Գաղղիացի որ ունէր զանցս Ճանապարհին, գիտացեալ զի վտանգ մեծ է անցանել թշնամեացն ընդ այն, ամրացաւ ընտիր գնդաւն յամրոց ուրեք վաղեմի, երդմնեցուցեալ զիւրսն մեռանել անդէն զէն 'ի ձեռին՝ քան անձնատուր լինել 'ի թշնամիս։ Երիցս արիասիրտ գնդաւն վանեաց զյարձակումն թշնամեաց, և ժամ ետ գնդիս Գաղղիացւոց աճապարել միանալ ընդ բուն բանակին. իսկ սպարապետն Պոնափառթէ Ճարտարութեամբ անցուցեալ զմասն ինչ 'ի զօրացն 'ի թիկանց Գերմանացւոց, եհար զնոսա և խռովեալ 'ի փախուստ դարձոյց։ Եւ 'ի վաղիւ անդր 'ի ձեռն զօրագլխաց իւրոց կրկին խորտակեաց զնոսա և 'ի Տէկոյ, և կալաւ զկիրճն Միլլէզիմոյ։ Գերմանացիք՝ որոց զօրավարէր քաջն Պոլիոյ՝ խոյս ետուն ընդ Ճանապարհ Մեդիոլանու, և Բիէմոնդեցիք առաջնորդութեամբ Քոլլեայ մեկնեցան 'ի Մոնտովի։ Պոնափառթէ յերիս աւուրս կանգնեալ անդ երիս յաղթանակս, մեծարոյ և զարմանալի եղև յաչս զօրականին։ Եւ ինքն լցեալ յաշխոյժ և յե-

ռանդն ակնկալութեամբ նորանոր յաղ-
թութեանց, 'ի բարձանց անտի Ապենեանց
դարձուցանէր զաչս իւր 'ի վերայ գեղեցիկ
և արգասաբեր դաշտացն Բիէմոնդեայ և
Իտալիոյ, և սիրտ 'ի բերան ցուցանէր զնո-
սին զօրականացն՝ իբրև խոստացեալ նոցա
երկիր աւետեաց, և ձայն բարձեալ աղա-
ղակէր. "Աննիբաղ էանց ընդ Ալպեանս և
մեք շուրջ պատեցաք զնոքօք"։

Յետ այնորիկ էած Պոնափարթէ զյաղ-
թական զօրս իւր 'ի թիկանց Բիէմոնդեցւոց
'ի Մոնտովի, և եհար խորտակեաց զնոսա
անդ։ Խաղաց անտի 'ի Քիվանոյ 'ի խառ-
նուրդս գետոցն Թանարոյի և Սթուրայ, և
սպառնայր գիմել 'ի Դուռին։ Զահի հա-
րեալ թագաւորն Վիկտոր Ամէտէոս վասն
մայրաքաղաքին իւրոյ և գահուն, խոնար-
հեցաւ 'ի պայմանս հաշտութեան, եթող 'ի
յաղթականն զՔունի, զԴորդոնա և զԱղեք-
սանդրիա քաղաքս լցեալս պատրաստու-
թեամբ զինուց և հանդերձանաց, և գոգ-
ցեա նուաճեցաւ ընդ ձեռամբ Գաղղիացւոց
(1796)։

Յետ ընկճելոյ զԲիէմոնդ՝ ասպարէզ ա-
ւուրթեանց առաջի կայր Նափոլէոնի Իտա-
լիա, որ ընդ լուր յաղթութեանց Գաղ-
ղիացւոց խռովեալ տագնապէր։ Այլ մինչ
չև միսեալ 'ի վէպս պատերազմացն Իտա-
լիոյ՝ տացուք ասատանօր հայմառօտ տեղե-
կութիւն զաշխարհէն և զուրոյն իշխանու-
թեանց, ըստ բաժանման այնր ժամանակի։

ԳԼՈՒԽ Դ.

Համառօտագիր պէտուրիւն պէրուրէանց Իպա-
ւէոյ 'ի ժամանակի արշաւանաց Գաղղիացւոց :

Ի ԳԱՂՂԻՈՑ անջրպետեն զԻտալիա Ա-
պենեան լերինք, և առաջին առ նոքօք տէ-
րութիւն էր Բիէմոնդ զոր յիշեցաքս. և
առ նովաւ Գենուացւոց վաղեմի հասարա-
կապետութիւն, վերականգնեալն 'ի Տո-
րիայ, և հզօր 'ի ժամանակին քան զամենայն
պետութիւնս Իտալիոյ, որ և խորագէտ
խորհրդով ոչ մնեցաւ 'ի պատերազմունս
Գաղղիոյ, և 'ի խաղաղութեան զհետ լինէր
շահուց առի և տրոյ :

Ի Գենուայ և անդր յաջակողմն Թերա-
կղզւոյն վիճակեալ է գեղեցիկն Տոսկանա,
տարածեալ երկուստեք յափունս Առնոյ
գետոյ. 'ի սմա էր և փոքրիկ հասարակա-
պետութիւնն Լուքքայ : Աւագ դքսութիւնն
էր յայնժամ 'ի ձեռս Փէրտինանտոսի մե-
ծի դքսի, և բարգաւաճեալ էր քան զամե-
նայն գաւառս Իտալիոյ խմաստուն օրինօք :

Իսկ Հռոմ կամ Եկեղեցականն վիճակ՝
ակար 'ի զինուորութեան, 'ի ձեռագէտս և
յամենայն ճարտարութիւնս, ունէր վարիչ
զարբապան քահանայապետն Պիոս Զ, որոյ
երկուցեալ յանկրօն խռովարարաց Գաղ-
ղիոյ՝ նզովս 'ի վերայ կարգայր նոցա և խրա-
խուսէր զԵւրոպա ընդդէմ ամբարշտելոյ
ազգին :

Ի ծայր թերակղզւոյն էր Սիկիլիա և թագաւորութիւն Նէապօլսոյ, որ թէպէտ հզօր էր քան զամենայն պետութիւնս Իտալիոյ, սակայն պակասէր 'ի նմա յայնժամ կարգ վարչութեան և իմաստուն տեսչութիւն։ Թագաւորէր անդ Իշխան ոք քաղցրաբարոյ և ապիկար 'ի Պուրպոնեանց զարմէ. և երասանակ տէրութեանն էր 'ի ձեռս դշխոյին, քեռ Մարիայ Անդոնիէդդայ, որ 'ի վրէժ քինու քեռն իւրոյ սպանելոյ շարժէր զազգն ողջոյն ոխերիմ ատելութեամբ ընդդէմ խռովարարաց Գաղղիացւոց։

Այսոքիկ ահա գլխաւոր տէրութիւնք էին Իտալիոյ ընդդէմ աջոյ թևին Նափոլէոնի. իսկ հանդէպ բուն բանակին էին դքսութիւն Փառմայ, Փիաչենցայ և Կուասդալլայ՝ որ 'ի ձեռս էր յայնժամ Սպանիացի Իշխանի. և 'ի ստորոտ Ապենեանց յաջակողմն կայր դքսութիւն Մոտենայ, Ռէճճիոյ և Միրանտոլայ, և Իշխող գաւառին մեծանուն տոհմն Էսդայ։

Իսկ անդր քան զՊադոս գետ սահմանք Լոմպարտիոյ՝ և երկիրն ընդ լծով կայսեր Աւստրիոյ։ Գեղեցիկ էր գաւառս այս և յուռթի, և 'ի մէջ Ալպեանց և Ադրիական ծովուն զՃոխութիւնս Ովկիանու յինքն ժողովէր։ Բնակիչք գաւառիս դժկամակ էին ընդ տէրութիւն Աւստրիացւոցն և մայրաքաղաք նոցա Մեդիոլան ցանկայր նորոյ սահմանադրութեան։

Վերջին տէրութիւն 'ի բարձրն Իտալիա՝ էր հինաւուրց հասարակապետութիւն Վե-

նետակեցւոց, որ անկեալ 'ի նախնի մեծու-
թենէն և ամփոփեալ զձեռնն ծովակալ՝ կայր
'ի Թմբիրս մահաբերս, և երկուցեալ իսկ
չգրգռել ընդդէմ իւր զԳաղղիա, եհան 'ի
սահմանաց իւրոց զԼուդովիկոս ԺԸ։

Մինչդեռ իշխանք և ժողովուրդք Իտա-
լիոյ ահաբեկք ընդ լուր արշաւանացն Գաղ-
ղիացւոց, զառաջնոցն գոգցեաս զխժիլ ըզ-
հոնացն և զԼանդալաց ճնային տեսանել
զաւերս և զկոտորած՝ յերեսաց անկրօն
խուժանին, և արեամբ քաղաքացեաց յա-
գելոյ զօրուն, Նափոլէոն կացեալ առ դուրս
աշխարհին խրախուսէր զիւրան յառաջիկայ
արշաւանս, այլ պատուէրս սաստիկս 'ի վե-
րայ դնէր մեծարել զժողովուրդ երկրին և
ամփոփել զձեռս իւրեանց 'ի յափշտակու-
թենէ, մահ սպառնացեալ անհնազանդից
աւարառուաց։ Եւ դարձեալ առ ժողո-
վուրդ երկրին, հրաւէր կարդայր նոցա 'ի
խաբեպատիրն ազատութեն. "Ժողովուրդք
Իտալիոյ, գան առ ձեզ Գաղղիացիք 'ի խոր-
տակել զշղթայսդ, բարեկամք են դոքա ա-
մենայն ժողովրդոց. ելէք ընդ առաջ մեր,
ինչք ձեր, կրօնք, օրէնք և սովորութիւն մե-
ծարեսցին 'ի մէնջ. պատերազմ մեր ընդ
զօրավարս է, և ատելութիւն ընդ բռնա-
կալս"։ Այսպէս Նափոլէոն խոր ամանկ
ճարտարութեամբն պատերազմ դժնդակա-
գոյն յարուցանէր ընդդէմ թագաւորաց։

ԳԼՈՒԽ Ե.

Աշխարհակալութիւնք Նափոլէոնի 'ի Լոմպարդիա, և խոնարհեցուցանելն որ զամենայն իշխանս Իտալիոյ 'ի ծանր ծանր պայմանս հաշտութեան։

ՁՈՒԵԱԼ Նափոլէոնի 'ի Բիէմոնդեայ՝ էանց ընդ Պադոս գետ, ընդ հարկաւ արկ զդուքսն Փառմայ՝ առեալ 'ի նմանէ երկոտասան միլիոն ֆրանքս, քսան նկարս զմեծահամբաւ Ճարտարացն ՔռռէՃՃեայ և Պոնարոդդեայ, և համբարս ցորենոյ բազումս և երիվարս։ Անտի խաղաց 'ի վերայ Պոլիոյ զօրագլխի զօրաց կայսերս, էառ զԼոմի քաղաք որ 'ի վերայ Ատտա գետոյն, և սափրեաց զթշնամիս տեղի տալ յաղթական զինուցն։ Իսկ նոցա աՃապարեալ անցին յայնկոյս՝ երկոտասան հազար հետևակաց և չորեք հազար հեծելոց, ահաւոր պատրաստութեամբ հրազինուց, և հասեալ կալան զկամուրջն։ Թէպէտ անմարթ թուէր վանել զնոսա անտի, սակայն ոչինչ երկմտեալ Նափոլէոնի խրախուսեաց զընտիր ընտիրսն 'ի ռմբաձիգ զօրականէն արս վեց հազար, և տողեալ զնոսա իբրև փոքրանգ ամուր՝ խաղացոյց 'ի վերայ կամրջին ընդդէմ գնտակացն և ռմբաց՝ որ տեղային 'ի նոսա իբրև զտարափս, մինչդեռ հեծելագնդին անցեալ ընդ հուն մի գետոյն՝ անկանէր 'ի կողից 'ի վերայ բանակի թշնամեաց։ Խու-

ճապեալ Գերմանացւոց փախստեայ գնա-
յին, և եթող Պոլիոյ 'ի թշնամիս զԲրեմո-
նա, զՄեդիոլան, զՓաւիա, զԿումա և զ-
Քասսանոյ։ Եմուտ Նափոլէոն յաղթանա-
կաւ 'ի Մեդիոլան՝ և արքայօրէն պերճու-
թեամբ գումարեալ զիւրսն, խօսեցաւ առ
նոսա խրոխտս այսպէս. "Զօրականք քաջք,
հեղեղօրէն հոսեալ ձեր 'ի բարձանց անտի
Ապենեանց՝ յեռս ընդ կրունկն թողէք զա-
մենայն զնոչ և զնուութ։ Բիէմոնդէ 'ի դա-
շինս բարեկամութեան կապեցաւ ընդ Գաղ-
ղիոյ՝ Մեդիոլան 'ի ձեռս ձեր է. դրօշք
հասարակապետականացս ծածանին ընդ
ամենայն Լոմպարդիա. իշխանք Փառմայ և
Մոդենայ՝ 'ի ձեր առատաձիր պարգևաց
գիտեն զիւրեանց հաստատութիւն։ Բա-
նակքն որք խրոխտագոյնս սպառնային,
չունին այժմ ընդ որովք ամրանալ պատնի-
շք. առաջի քաջութեան ձերոյ՝ ոչ Պադոս,
ոչ Դիչին և ոչ Ատտա արգելուին ինչ զձեր
արշաւանս. պատուարքս այսոքիկ Իտալիոյ՝
բարձր 'ի գլուխ պանծացեալք, չեղեն բա-
ւական զդէմ ունել ձեզ։ Այս ամենայն
յաջողութեանց աւետիք հնչեն յաշխարհին
մերում, կարգեցան տօնք ցնծութեան 'ի
հուշակ արութեանց ձերոց. և անդ հարք
ձեր և մարք, ամուսինք, քորք և սիրելիք
խնդութեամբ 'ի ձեզ պարծին։ Այո, քաջք,
բազում ինչ գործեցիք, այլ տակաւին ոչ
հասէք յամբոկ գործոյն։ Կան մնան մեզ
արդարև պատերազմունք, արշաւանք, յաղ-
թութիւնք, պսակք փառաց և վրէժխնդ-

դրութի նախատանաց առելեաց մերոց։... Մինչև ժողովուրդ Գաղղիոյ մեծարեալ յամենեցունց ազատութեամբն և փառաք՝ շնորհեսցէ զխաղաղութիւն Եւրոպայ, պահանջելով զոյժ տուգանաց վեցից ամաց։ Իսկ դուք հանդիջիք յայնժամ առ ընտանիս ձեր, մատնանիշ վկայեալ 'ի քաղաքացւոց՝ թէ և սոքա 'ի զօրաց անտի Իտալական գնդին են,,։ Իբրև վախճան եւ բանիցն Նապոլէոն, գովեցին զնա մեծաձայն զօրականք և ազգայք, որով գողացեալ նորա զսիրտ նոցա զօրանայր յիշխանութեան իւրում, առաջնորդ և օրէնադիր կացեալ զօրուն։

Աւուրս ութ դադարեալ 'ի Մեդիոլան եւ անտի երթալ 'ի Լոտի, և անցանել ընդ Ատիճէ գետ. այլ յանկարծ աղմուկ խռովութեան յուզեալ 'ի Մեդիոլան և 'ի փաւիա՝ փութացաւ դառնալ յետս, և անդէն հասեալ 'ի վերայ դոյզն ջոկատիւ ընկճեաց զապստամբեալսն։ Ընդ մերձենալ Գաղղիացւոց յերկիր հասարակապետութեան Վենեակոյ, յուզէր, ծփայր ծերակոյտ քաղաքին ոչ գիտելով՝ յո՞ր խորհուրդս ձեռն արկանել։ Բազումք 'ի ծերունեացն ընդ Գերմանացւոց առաւելնիզակակցութիւն ախորժէին, թէպէտ էր նոցա և անտի խէթ կասկածանաց. առաքինիք յերիտասարդաց և յանդգնութիւնք զօրաժողով լինել խորհէին 'ի պահ զգուշութեան յերեսաց երկուց ահաւոր թշնամեացն, այլ մի յառաջամարտիկ լինել և գրգռել զնոսա։ Էին ևս որ դաշնակից Գաղղիացւոց լինել բարւոք համարէին, և

ՀԱՍԱՍԱԿԱՐ ԶԶՄԻՏԵԼՆ ՅԱՅՍ ԿԱՄ ՅԱՅՆ ԿՈՂՄԻՆ։ ԱՅԼ ՅԱՂԹԵԱՑ ԽՈՐՀՈՒՐԴՆ ՊԱՀԵԼՈՅ ՁԿԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՀՍԱԼՈՎ ՁԵՌՆ ՈՉ ՍՈՅԱ ԵՎ ՈՉ ՆՈՅԱ։ ԻՍԿ ՆԱՓՈԼԷՈՆ ԶՀԵՏ ՊՆԴԵԱԼ ԳԵՐՄԱՆԱՑՈՅ՝ ԵԿՆ ԵՄՈՒՏ 'Ի ՍԱՀՄԱՆՍ ՏԷՐՈՒԹԵԱՆ ՆՈՅԱ ԻԲՐԵ ԲԱՐԵԿԱՄ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԵԱՆ, ՀԱԼԱԾԵԱՑ ԶՊՈԼԻՈՅ 'Ի ՓԷՔԻԷՐԱՅ, ԵՎ ԿԱԼԱՒ ԶՔԱՂԱՔՆ։ ԲՈՂՈՔ ԲԱՐՁԻՆ ՎԷՆԵՏԿԵՑԻՔ ԸՆԴ ԱՆԻՐԱՒՈՒԹԻՒՆՆ, ԵՎ ՆԱՓՈԼԷՈՆ ԾԱՆՐԱՑԱՍՈՒՄՆ ԼԵԱԼ ԱՄԲԱՍՏԱՆ ԵՂԵՎ ԶԾԵՐԱԿՈՒՏԷՆ ՈՐՊԷՍ ԶԼՍԱՐԴԱԽՈՂԱՑ ՊԱՅՄԱՆԱՑՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ։ ՋԱՀԻ ՀԱՐԱՒ ԾԵՐԱԿՈՅՍՆ, ԵԹՈՂ 'Ի ԳԱՂԼԻԱՑԻՍ ԵՎ ԶՎԷՐՈՆԱ ԵՎ ԶՎԷՆԵԱԿՈՅ ԵՎ ԶԷՐԻՑՑՈՅ ԵՎ ԶՊԱԹԱԼԻԱ, ԵՎ ԱՐՁԱԿԵԱՑ ԴԵՍՊԱՆՍ ԻՄԱՆԱԼ ԶՄԻՏՍ ԽՈՐՀՐԴՈՅ ՆԱՓՈԼԷՈՆԻ։ ՏԵՍԵԱԼ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱՑՆ ԶՄԵԾՈՒԹԻՆ ՀԱՆՁԱՐՈՅ, ԶԱՐՈՒԵՍՏ ԵՎ ԶԳԻՍՈՒԹԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԾԱՅՐԵԱԼ 'Ի ԶՕՐԱՎԱՐՆ, ԶԱՐՄԱՑԵԱԼ ԳՐԷԻՆ ԱՌ ԾԵՐԱԿՈՅՍ ԻԲՐԵԱՆՑ՝ ԹԷ "ՄԵԾ ՈՄՆ ԼԻՑԻ ՍԱ 'Ի ԳԱՂԼԻԱ"։

ՅԵՏ ԱՅՆՈՐԻԿ ՃԳԵԱԼ ԶՁԵՌՆ ԻՒՐ ՆԱՓՈԼԷՈՆ ՄԻՆՉԵՒ ՅԱՍԻՃԷ, ԽՈՐՀԷՐ ԱՌՆՈՒՂ ԵՎ ԶԱՄՈՒՐ ՔԱՂԱՔՆ ՄԱՆԴՈՒԱ, ԱՅԼ ԿԱՍԵՑՈՅՑ ՁՆԱ ԱՌԺԱՄՆ 'Ի ԽՈՐՀՐԴՈՅՆ ՀՐԱՄԱՆ ՈՍՏԻԿԱՆԱՑ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԵՆ, ՈՐ ՍՏԻՊԷՐ ՁՆԱ ԱԾԵԼ ԶՁԷՆՆ ԻՒՐ ԸՆԴԴԷՄ ԳԵՆՈՒԱՑՈՅ 'Ի ՎԵՀԺ ՔԻՆՈՒ ԱՐԵԱՆ ԳԱՂԼԻԱՑՈՅ ՈՒՐՈՒՄՆ ՍԱՆԵԼՈՅ 'Ի ՆՈՅԱՆԷ, ԵՎ 'Ի ԽՈՆԱՐՀԵՑՈՒՑԱՆԵԼ ԶԵՆԷԱՊՕԼԻՍ ԵՎ ԶՀՌՈՎՄ, ՈՐՔ 'Ի ԶՕՐՈՒԹԻՒՆ ԱՆԳԼԻԱՑՈՅ ՅՈՒՍԱՑԵԱԼ՝ ԽԼԵՐՏԷԻՆ 'Ի ՊԱՏԵՐԱԶՄ։ ԱՌԱՆՑ ԶԻՆՈՒ 'Ի ԴԼՈՒԽ

եհան Նափոլէոն զպատուէր հրամանին, քանզի հզօր քան զզէնս նենգուպատիր յոյս ազատութեան առաջի արկեալ ժողովրդոց՝ մեծամեծս գործէր։ Այսու խրախուսեալ զժողովուրդ Մոռենայ ընդդէմ իշխանի իւրեանց՝ կարդեաց զնոսա յազատ վարչութիւն. այսու և զՊոլոնիա հանեալ 'ի քահանայապետէն հանդերձ Ֆէրրարաւ՝ կացոյց 'ի ռամկապետութիւն. սասանեցոյց և զամենայն իշխանութիւնս Իտալիոյ ծանր ծանր տուգանօք խնդրել զերեսս յաղթականին 'ի հաշտութիւն։ Այսպէս Հռովմ, Գենուա, Տոսկանա և Թագաւորութիւն Նէապոլսոյ խոնարհէին առաջի նորա։ Այլ զայս ամենայն մեծամեծ յաջողութիւնս Նափոլէոնի և զփառս՝ ապականէին դաւաճան նենգութիւնք ապստամբեցուցանելոյ զժողովուրդս ընդդէմ տերանց իւրեանց, և պատուհասքն զոր յանիրաւի աձէր 'ի վերայ սիրողաց նախնոյ վարչութեան իւրեանց. և զԹագաւորս և զիշխանս հարստահարէր՝ ծանր ծանր հարկաց տուգանօք վասն սակաւաժամանակեայ խաբէպատիր հաշտութեան։ Քանզի 'ի Թագաւորէն Նէապոլսոյ՝ որ Պորպոնեան զարմիւն ատելի էր հասարակապետականաց, ութ միլիոն Ֆրանքս հանէր 'ի տուգանս. 'ի քահանայապետէն Հռովմայ՝ որ առաքելական հաստատութեամբն ընդդէմ եկաց նորոյ սահմանադրութեանն Գաղղիոյ 'ի վերայ եկեղեցականաց, և խորհէր զինել զԹագաւորս Եւրոպայ ընդդէմ անիրաւացն, ոմանք իսկ դա-

ւառս հաստանէր 'ի նմանէ, և հարկս քսան և մի միլիոն ֆրանկաց և հարիւր ճարտարագործ նկարս և անդրիս 'ի թանգարանէ հնութեան, և ցորեան և ռոճիկ զօրաց։

ԳԼՈՒԽ Զ.

Խորհրդակիցք զօրացն Ժուռոպանայ 'ի դէսէն Կարոլոսէ, և հուլիսաւոր նահանջն Մորոյի։

ՄԻՆՉԴԵՌ Նափոլէոն վերը 'ի վայր առնէր զԻտալիա, գլուխս ամբառնային Գերմանացիք զօրաժողով լեալ հարիւր յիսուն հազար արանց պատերազմողաց. և արշաւեցուքան Կարոլոս՝ եղբայր ինքնակալին Ֆրանկիսկոսի Եօթանասուն հազարաւ խաղայր 'ի Հռենոս։ Էր նա իշխան մանկահասակ և վատառողջ, այլ քաջութեամբ ոգւոյն և հմտութեամբ յարուեստ պատերազմի գերազանցեալ հաւասարէր երևելի զօրավարաց ժամանակին։ Խլրտեցան և Գաղղիացիք ընդդէմ նորա. զօրավարքն Մորոյ և Ժուռան անցին ընդ Հռենոս և գուն գործէին փակել զթշնամին 'ի միջի։ Խորտակեցաւ Ժուռան առաջի Կարոլոսի. բայց Մորոյի 'ի վերայ հասեալ բախեցաւ ընդ նմա պատերազմաւ 'ի Ռաշդատ. և յետ բազում անցից արութեանց յերկոցունց կողմանց՝ յաղթական լինէր Գաղղիացին. քաջ սպայիւքն, և Կարոլոս աճապարեալ անցանէր ընդ Դանուբ 'ի պահ զգուշութեան Աւստրիոյ, և ժնալ պատեհի վանելոյ զահա-

ւոր թշնամին։ Եւ ոչ էլ 'ի դերև ակն-
կալութիւն նորա. քանզի եռեալ զԺուռատան
հեռացեալ յոյժ 'ի բանակէն Մորոյի, խրա-
խուսեաց և յարձակեալ 'ի վերայ՝ վանեաց
զվերջապահ գունդն, և 'ի սպառ խորտա-
կեալ զնա 'ի Վուրցպուրկ, փախստական
տարաւ մինչև 'ի Հռենոս։ Սաստիկ էր կո-
տորածն և անխնայ. քանզի գրգռեալ ոգիք
գիւղականաց 'ի վրէժ քինու անգթութեան
թշնամեացն, 'ի վերայ աւերակաց հիւղից
իւրեանց և արտորէիցն ապականելոց անո-
ղորմ կոտորէին զնոսա։

Յետ մեծի յաղթութեանն փութացաւ
Կարոլոս ամենայն զօրութեամբ իւրով ան-
կանել 'ի վերայ Մորոյի՝ որ յաղթական
գնդաւն մերձեալ էր մինչև 'ի Մոնաքոյ մայ-
րաքաղաք Պաւիերայ։ Եւ տեսեալ նորա զվը-
տանգն ահաւոր յերեսաց հզօր բանակի
մեծի դքսին, խորհեցաւ յետս նահանջել.
այլ հարիւր փարսախաւ հեռի 'ի սահմանաց
Գաղղիոյ 'ի միջի սիեռիմ թշնամեաց կայր։
Ընդ եցոյց նա հանճար զարմանալի զմե-
ծի զօրավարի. յաղթեաց ամենայն խոչից
խափանարարաց, ոչ կիրճք լերանց և ոչ
հոսանք ջուրց կարացին արգելուլ զնահանջ
նորա. վանեաց զամենայն յարձակմունս
թշնամեաց, 'ի դերև եհան զամենայն խոր-
հուրդս նոցա և ողջանդամ հասոյց զբանակ
իւր 'ի Հիւնինկ։ Այսու թէպէտ և զաշխար-
հակալութիւնն եռամսեայ՝ 'ի հնգետասան
աւուրս կորուսին Գաղղիացիք, սակայն մեծ
եղեն փառք Մորոյի։

ԳԼՈՒԽ Է.

Պաշարումն Մանդուայ քաղաքի և պապերազին որ 'ի պապճառս նորին։

ԻՍԿ Պոնապարթէ ձեռն արկանէր 'ի պաշարումն Մանդուայ 'ի Լոմբարտիա։ Քաղաքս այս ամրացեալ 'ի մօրուաս 'ի դիպան տեղւոջ, պատուար էր Իտալիոյ. և տիրապետութիւն քաղաքին սահմանէր ըզբաղդ աշխարհին։ Վասն որոյ և Գերմանացիք զամենայն ճիգն իւրեանց թափեցին առ 'ի փրկել զայն. քանզի թէպէտ և տագնապ 'ի վերայ կայր նոցա յայնժամ յերեսաց Մորոյի և Ժուռատանայ, սակայն և այնպէս աճապարեալ հասուցին բանակ հզօր, արանց իբրև վաթսուն հազարաց ընդ զօրավարութեամբ Ծերունւոյն Վուրմսէրայ։

Ինչանութիւնք Իտալիոյ ահաբեկեալք 'ի զինուց Նափոլէոնի, ընդ հասանել Վուրմսէրայ Յիտալիա՝ ձայն խնդութեան բարձեալ զէն առին անդէն. քահանայապետն Հռովմայ և թագաւորն Նէապօլսոյ զօրս 'ի թիկունս հասուցանէին, և հասարակապետութիւնք Գենուայ և Վենետկոյ 'ի մարտ պատրաստէին, յուսով անվրէպ յաղթութեան։ Ընդդէմ այնչափ բազմութեամբ թշնամեաց քառասուն և հինգ հազար զօրք էին Նափոլէոնի, զորոց առաւել քան զկէս 'ի պահանորդս քաղաքաց էր կարգեալ և 'ի պաշարումն Մանդուայ։

Վուրմսէր 'ի կրկին բանակս զատոյց զզօրս իւր. արս քսան հազար տուեալ 'ի ձեռս Քոզնատովիչ զօրագլխի, արձակեաց ընդ Ճանապարհ Տրիտենդեայ 'ի Թիկանց լճին Կարտայ. և քառասուն հազարացն ինքնին գլուխ կացեալ՝ էջ ընդ Ատիճէ, գրոհ տալանտի 'ի վերայ Գաղղիացւոց։ Մինչ Քոզնատովիչ 'ի բուռն առնոյր զՊրեշիա և զԱալոյ, և Վուրմսէր վանեալ զՄասսենա 'ի Ռիվոլեայ՝ խաղայր 'ի վերայ Մանդուայ, խրախուսեաց Նափոլէոն հակառակ խորհրդոց զօրագլխաց իւրոց, յարձակել 'ի վերայ Թշնամեաց և խորտակել զնոսա մի զմիոյ կնի։ Եթող նա զՎերոնա և զԼէնեակոյ, եբարձ զպաշարումն Մանդուայ, և թողեալ զամենայն աղխս բանակին՝ խաղաց նախ 'ի վերայ Քոզնատովիչայ. 'ի բաց թափեաց զԱալոյ և զՊրեշիա, և վանեալ զթշնամիս 'ի Լոնատոյ. եթող անդ զՄասսենա և ինքն դարձ արար 'ի վերայ Վուրմսէրայ՝ որ մտեալ էր 'ի Մանդուա։ Եհար Մասսենա զՔոզնատովիչ, որ խլրտէր 'ի տեղւոջէն՝ գալ միանալ ընդ Վուրմսէրայ, և զօրավարն Օժերոյ խորտակեաց զհատուած գնդի զօրաց թշնամեաց 'ի Քատոլլոն։

Մինչդեռ 'Նափոլէոն վանեալ զթշնամին՝ հազար արամբ դայր լրտեսել զբանակ նոցա, պաշարեցաւ 'ի չորից հազարաց Գերմանացւոց. սակայն յանդգնութեամբ և խորագիտութիւնք թափեաց զանձն 'ի վտանգէն՝ յոր անխոհականութեամբն անկեալ էր։ Քանզի 'ի գալ պատգամաբերին և աղդ

առնել նմա անձնատուր լինել, նա խրոխ-
տաբար կոչեալ զնա առ ինքն, եհան 'ի ծո-
ցոյ իւրմէ զժամացոյցն և դարձեալ առ պատ-
գամաւորն ասէ. “Զուարակա՞նք, չգի-
տիցէք եթէ ասա է ամենայն զօրօք իւրովք
սպարապետն Գաղղիացւոց. երթ ասա առ-
որ առաքեացն զքեզ, թէ ոչ այժմ իսկ աս-
տէն լինիցի նա զինաթափ և անձնատուր,
ամենայն գնդիւն հանդերձ տաց զնա սրոյ
ճարակ,,: Յապուշ կրթեալ և խռովեալ
զօրագլխին գերմանացւոյ ընդ յոխորտ ըս-
պառնալիս թշնամւոյն, և կարծելով զինքն
մատնեալ 'ի մէջ բազմագունդ զօրաց Գաղ-
ղիացւոց, զէնընկէց եղև անդէն: Այլ իբրև
եռես չորիւք հազարովքն իւրովք գերի վա-
րեալ 'ի ջոկատէ միոյ թշնամւոյ, զամօթի
մեծի հարաւ այրն:

Յետ այսորիկ եհաս Նափոլէոն 'ի վերայ
Վուրմսերայ, որոյ ժողովեալ զկաց մնաց
զօրականին՝ քսան և հինգ հազարաւ նստէր
'ի Քաստիլիոն. եհար զնա չարաչար և հա-
լածական տարաւ անտի: Եւ զօրավարն
Մասսենա ընդ առաջ ելեալ փախստէիցն
վտանգեցոյց զաջ թև նոցա, և արգել զՃա-
նապարհն որ 'ի Թիրոլ. վասն որոյ և Վուրմ-
սերայ անցեալ ընդ Ատիճէ մեկնեցաւ 'ի
Ռովերետոյ, և Գաղղիացիք դարձ արարին
'ի պաշարումն Մանդուայ:

Զկնի փառաւոր յաղթութեանցն հան-
դիպեաց եւ Նափոլէոն զօրաց իւրոց աւուրս
քսան, և յետ այնորիկ ընկալեալ յօգնա-
կանութիւն գունդ մի վեց հազար զօրաց,

չու արար ինքնին հետամուտ լինել թշնամ-
ւոյն։ Վուրմսէր որ 'ի յալևոյթս անդ հա-
սակի բերէր զաշխոյժս երիտասարդական,
վերստին գումարեալ զօրս մինչև հինգ բիւր,
զքսան հազարն տայր 'ի ձեռս Տաւիտովիչ
զօրավարի՝ զգուշանալ ափանց Ատիճեայ. և
ինքն երեսուն հազարաւն խաղայր 'ի վերայ
Մանդուայ՝ առ 'ի փակելոյ զԳաղլիացիս 'ի
միջի։ Պոնափառթէ ութ հազար միայն
զօրս թողեալ զքաղաքաւն, և ութ հազարս
ընդդէմ Տաւիտովիչայ, ինքն քսան և ութ
հազարօք հաս 'ի վերայ Վուրմսէրայ 'ի
Ռովերետոյ, եհար զնա և կալաւ զՏրիտեն-
դոն։ Եւ 'ի կամել թշնամւոյն անկանել
ընդ մէջ զօրացն որ 'ի Թիրոլ և որ առ սպարս-
պաւն Մանդուայ, գիտացեալ զնորհուրդս
նոցա, և բիւր մի 'ի զօրաց եդեալ 'ի պահ
անցիցն Թիրոլայ, ինքն բանակաւն եհաս
յանկարծուստ 'ի վերայ թշնամւոյն 'ի Պաս-
սանոյ, և միւսանգամ յաղթութիւն տա-
րեալ, արգել նմա զմուտս Գերմանիոյ՝ և
բռնադատեալ Վուրմսէր հնգետասան հա-
զարաւն անց քաջութեամբ ընդ մէջ թշնա-
մեաց և եկն եմուտ 'ի Մանդուա։ Թէպէտ
զօրացաւ քաղաքն ընդդէմ զինուց թշնա-
մեաց, այլ չկարաց ամրանալ յերեսաց մե-
տալուստ սովոյն. յարձակեցաւ Վուրմսէր
միանգամ ևս քաջութեամբ 'ի դուրս, այլ
վանեալ դարձ արար 'ի ներքս։

ԳԼՈՒԽ Ը.

Տաճնապէլ Նափոլէոնի յերէսաց Ռընամեաց իւրոց, և Մեծահռչակ յաղթութիւն նորա առ Արքոլէաս։

Ի ՄԵԾԱՄԵԾ յաղթութիւնս յայսոսիկ եթոյց զԳաղղիացիս լուր կոտորածի յուռ-տանայ և նահանջ բանակին Մորոյի, և խրախոյս ակնկալութեամբ թշնամեաց։ Քանզի հասարակապետութիւնն Վենետիկեցւոց, Հռովմ և Նէապոլիս 'ի յայտնի պատերազմ խլրտէին, և կայսրն վերսային զօրս առաքէր Յիտալիա. աճապարեաց Պոնափարթէ խնդրել զօրս յատենէ ոստիկանաց։ Այլ նոքա ոչինչ կարացեալ ձեռն օգնականութեան մատուցանել նմա, խորհեցան խմաստութեամբ խաղաղութիւն առնել ընդ Բիէմոնդեցիս, ընդ Գենուացիս և ընդ Նէապոլսեցիս. սպառնալեօք և խոստմամբք արգելին զզէնս հասարակապետութեանն Վենետիկեցւոց և զՀռովմայ. զդքսութիւնն Մոդենայ, որոյ չէր կացեալ յուխտին խաղաղութեան՝ փոխեցին 'ի հասարակապետութիւն. և Մեդիոլանեցւոց՝ խոստացան կարգել հասարակապետութիւն Լոմպարտական. և արարին դաշնակցութիւն նիզակակցութեան ընդ Լոմպարտացիս։

Մինչդեռ զայս նոքա գործէին՝ զօրավարն Տաւիտովիչ գումարէր զօրս քսան հազար 'ի Թիրոլ. և Ալվինցի քառասուն

հազարաւ խաղայր ընդ Ֆրիուլ, գալ միա-
նալ ընդ գերմանացի զօրավարին որ 'ի Վե-
րոնա, ընկճել զՊոնափառԹէ և զերծու-
ցանել զՎուրմսէր։ Եկն եմուտ Տաւիսովիչ
'ի Տրիտենդոն, վանեաց զզօրավարն Վո-
սրուա 'ի Քալիանոյ և 'ի Ռիւոլի, զՄասսե-
նա 'ի Վերոնա, և հասեալ զտեղի էառ 'ի
Քալիէրոյ։ Տագնապէր յոյժ Պոնափառ-
Թէ յերեսաց հզօր Թշնամեացն. երեսուն և
վեց հազար զօրք էին նորա, և այնք ցրուեալք
ասա և անդ խոնջ և ոգեսպառ յաշխատու-
Թենէ ծանր ծանր պատերազմաց։ Գրէր
առ ատեանն ոսոիկանաց այսպէս. "Անյոյս
եմ ես ամենևին, և քաջքն որ առ իս զմահ ա-
ռաջի աչաց իւրեանց նկարեալ տեսանեն"։
Սակայն փորձել զբաղդ իւրոյ ամեցեալ, եր-
կու ևեթ բիւրուք բախեցաւ ընդդէմ չորից
բիւրուց 'ի Քալտիէրոյ, և հարուածեալ
չարաչար մեկնեցաւ 'ի Վերոնա։ Անդ սկսան
'ի տրտունջ լուծանել զօրքն՝ զինչ օգուտ 'ի
յաղԹուԹեանց ասի ասէին, և ընդէր
բնաւ անցաք մեք ընդ Ալպեանս։ Պոնա-
փառԹէ վշտակից լեալ նոցին, գրէր առ
ոսոիկանս. "Ընտիր ընտիր սպայք զօրուն
և զօրագլուխք անկան 'ի մարտի. պակասե-
ցին զօրք, և բանակն Իտալիոյ փոխեցաւ 'ի
Ջոկատ մի փոքրիկ։ Նահատակքն արիա-
ցեալք 'ի Միլլէզիմոյ, 'ի Լոտի, 'ի Քասսա-
լիոն, 'ի Պասսանոյ, անկան վասն հայրե-
նեաց, կամ 'ի հիւանդանոցս մնչեն յոգիս
ապաստան"։ Եւ այլ ևս երկար Թախան-
ձանօք խնդրէր վերստին ձեռն օգնականու-

թեան : Եւ մինչ յուսահատեալ 'ի բաղ-
դէն կայր վարանեալ, յանկարծ զարթեաւ
հանճար մտաց նորա՝ ձեռն արկանել 'ի
գործ, յորոյ 'ի յաջողութիւն հաստատեալ
կայր բաղդ իւր : Զուրջ զքաղաքաւն Վե-
րոնայ էին ամբարտակք կրկին 'ի մօրուտն՝
որ տարածանէր մինչև ցբանակետղ թշնա-
մեաց. եթէ յաջողէր նմա ելանել միանգամ
յամբարտակս անդր, մարթ էր այնուհետև
և փոքու ջոկատիւ արուեստիւն և յան-
գուգն համարձակութեամբն յաղթանակ
կանգնել 'ի վերայ բազմամբոխ զօրաց :

Եւ Նափոլէոն 'ի Վերոնայ, էանց ընդ
Ատիճէ, միտեցան զօրքն 'ի մօրուտան, ոչ
գիտելով ոչ զտարածութիւն նորա և ոչ
զխորութիւն. և ճիգն անհնարին եղեալ
ջանային անցանել յայնկոյս. այլ իմացեալ
թշնամեոյն՝ եհաս անդէն 'ի վերայ. կալաւ
զհանդիպակայ ափունս. իսկ Ալվինցի կան-
խաւ կալեալ ունէր զկամուրջն Արքոլայ :
Անդ 'ի սպայեցն Նափոլէոնի քաջն Օժերոյ
բարձեալ զդրօշն գիմեաց 'ի վերայ կամրջին
և ընտիրք 'ի քաջաց զկնի խուժեցին. այլ
հրաձգութիւք թնդանօթից թշնամեաց զբա-
զումն առ ետեղ տապաստ արկեալ, զայլն
յետս վանէին : Եռեսս Նափոլէոն զմահ արի
նահատակաց իւրոց, յարձակեցաւ վարա-
զաբար, բուռն հար զդրօշուն, խրախու-
սեաց զիւրան գիմել զկնի, և գրոհ ետ 'ի
վերայ կամրջին ընդդէմ հրացան գնտակացն,
և իբրև այն ինչ 'ի բուռն առնոյր զկամուրջն,
տապալեցին զայն թշնամիք. և Գաղղիացիք

խառն 'ի խուռն յետս նահանջեցան բար-
ձեալ 'ի վերայ բազկաց զսպարապետն իւ-
րեանց զՆափոլէոն՝ որ անկեալ էր 'ի գե-
տին։ Եւ գիշերոյն 'ի վերայ հասեալ բաժա-
նեաց զկոնջեալ թշնամիսն յիրերաց։ Այլ
գունդ մի զօրաց 'ի բանակէն Նափոլէոնի
գիշերախառն անցեալ ընդ հուն գետոյն
յայնկոյս, և 'ի ձայն փողոյ և թմբկաց յար-
ձակեալ 'ի վերայ՝ խռովեաց զբանակն Գեր-
մանացւոց. բայց իբրև ետես զի ոչ խլրտէին
իւրքն յօգնութիւն՝ տեղի ետ վերստին, և
զերծան թշնամիք 'ի վանդէն։ Ի վաղիւ
անդր բախեցան միւսանգամ, և յետ բազում
հարուածոց երկուստեք՝ մնայր դարձեալ
յաղթութիւնն յերկբայս։ Իսկ յաւուրն
երկրորդի Օժրրոյ և Մասսենա անցեալ զо-
րօք իւրեանց ընդ գետն, և յաջմէ և յահեկէ
կամրջին Արքոլայ հարեալ զթշնամիս, վանե-
ցին զնոսա անտի 'ի բաց։ Զհետ ընդեցաւ
նոցա Նափոլէոն և եկն եմուտ յաղթանա-
կաւ 'ի Վերոնա, անտի խաղաց 'ի վերայ
Քոզնատովիչայ և հարեալ խորտակեաց զնա
'ի կիրճս Թիրոլեայ։

Յապուշ կրթեցաւ դարձեալ Գաղղիա և
Իտալիա ընդ հիանալի քաջութիւն մեծի զо-
րավարին և զօրաց նորա. և գովեաց Ժողովն
ոսիկանաց զբանակն Իտալիոյ, և արժանի
վարձս Նափոլէոնի և Օժրրոյ ետ զդրօշն
տարեալս 'ի նոցանէ 'ի կամուրջն Արքոլայ,
յաւերժական յիշատակ 'ի տոհմն նոցա
(1796)։

ԳԼՈՒԽ Թ.

Արշաւանք Գաղղիոյ ի Իսպանիա, և առումն Մանդոսայ ի Իսպանիա։

Ի ԺԱՄԱՆԱԿԻՆ յայնմիկ դուռ զինուց էր ընդ հասարակապետութիւնն Գաղղիոյ և ընդ Անգղիա, և իշխանն Մոլմէսպրի գայր 'ի Փարիզ պատգամաւոր հաշտութեան։ Տեսեալ ոստիկանաց ժողովոյն զի զօրացաւ Կարոլոս 'ի Գերմանիա 'ի վերայ զօրացն իւրեանց և պնդէ զպաշարումն Քէհլ ամրոցի, խորհեցան դուռ առնել զինուց և ընդ Գերմանացիս։ Հակառակ եկաց Նափոլէոն խորհրդոյն, ցուցեալ զվնասս որ անտի, այլ ոչ զօրէին բանք նորա, քանզի հրաման էր ոստիկանաց և հարկ էր 'ի գլուխ ելանել։ Այլ դէպք 'ի բարի յաջողեցին խորախորհուրդ զօրավարիս, զի մերժեաց կայսրն զպայմանս հաշտութեանն, նոյնպէս 'ի դերև ելին և պատգամաւորութիւնք խաղաղութեան ընդ Անգղիացիս։ Քանզի պատգամաւոր նոցա Իշխանն Մոլմէսպրի առաւել 'ի լրտեսել կայր 'ի Փարիզ զնեերքին հանգամանս պետութեանն, և ժամավաճառարարեալ զատեան ոստիկանացն ծաղր առնել թուէր զնոքօք ծանր ծանր պայմանովքն եդելովք առաջի 'ի հաշտութիւն խաղաղութե։ Վասն որոյ արտմոեալ նոցա պատուէր խիստ եւոուն յերկուս աւուրս մեկնել նմա

'ի մայրաքաղաքէն։ Եւ այս եղև նշան մարտի. և անդէն մեծանուէնն Հոշ՝ այն որ երևելի հռչակեցաւ 'ի պատերազմունս ընդդէմ Վանդէացւոց, կացուցաւ զօրավար պատերազմին ընդդէմ Անգղիացւոց։ Եւ քանզի Իռլանտացիք տաղտկացեալք 'ի լծոյ բռնակալութեանց Անգղիացւոց՝ կազմք էին յապստամբութիւն, և կանխեալք հրեշտակութեամբ յորդորէին զԳաղղիացիս հասանել իւրեանց 'ի Թիկունս, Հոշ 'ի չուանկաւ բազում պատրաստութեամբ թափել զզօրս իւր յԻռլանտա։ Այլ ձախողեցան եալք արշաւանացն, զի մինչ չև հասեալ նոցա 'ի ցամաք՝ խորտակեցան նաւքն յերեսաց ծովուն Անգղիացւոց, և կորակոր ձեռնթափք եղեն 'ի գործոյն։ Եւ փոխեցաւ Հոշ 'ի զօրավարութիւն բանակին Սամպրայ և Մէօզայ 'ի տեղի Պէօռնոնվիլայ զօրավարի։ Քանզի 'ի Գերմանիա յետ եռամեայ պաշարմանն առաւ Քէհլ. և այնուհետև դարձուցին Գերմանացիք զամենայն ուշ իւրեանց յԻտալիա։ Եւ խրախուսեցին 'ի Վիեննա պատանիք չորեք հազար ազատորդիք աշխարհին ինքնակամ գրել զանձինս 'ի զինուորութիւն, որք տանելով առաջի իւրեանց զդրօշ ասղնեգործ զձեռակերտ կայսրուհւոյն, խնդութեամբ գիմէին յԻտալիա։ Նոյնպէս և յՈՒնգարացւոց և յընտիր ընտիր զօրաց Հռենոսի գայլն ժողովէին ընդդրօշու Ալվինցի զօրավարի։ Դարձեալ առաքեցաւ Քոլլի և սպայք ոմանք, առաջնորդել զօրաց քահանայապետին Հռովմայ.

աղդ եղև և Վուրմսէրայ, թէ հասեալ գայ նմա գունդ հզօր յօգնականութիւն՝ մինչ-դեռ մեծաւ պնդութեամբ պահէր նա զՄանդուա, մնով ձիոց և հացիւ եգիպ-տացորենոյ կերակրելով զպահակապանն առ կարիս սովոյն։

Ի լուր մեծամեծ պատրաստութեանց թշնամւոյն՝ մնայր Նափոլէոն վերջին մար-տի՝ որ սահմանելոց էր զբաղդ Իտալիոյ. և ինքն խօթ անձամբ և վտտեալ մարմնով հա-զիւ կարէր աշտանակել յերիվար, թէպէտ աշխոյժք ոգւոյն և եռանդն անշէջ էր 'ի նմա։ Յետ յաղթութեանն Արքոլէայ եհաս նմա օգնականութիւն նոր 'ի Գաղղիոյ. և ապաքինեալ վիրաւորացն և խօթից հասա-նէր թիւ ամենայն զօրաց նորա 'ի քառասուն և հինգ հազար. յորոց բիւր մի ընդ առաջ-նորդութեամբ Սէուիրիէրայ նստէր զՄան-դուա քաղաքաւ. երեք բիւրք 'ի պահ Ա-տիճէ գետոյ, և բազումք 'ի քաջ զօրա-գլխաց զօրահատոյցք յայլևայլ տեղիս։

Վէց բիւրուք աւելի կամ պակաս խաղա-ցին Աւստրիացիք յօգնութիւն Մանդուայ. զօրավարն Ալվինցի քառասուն և հինգ հա-զարաւ 'ի նեղ արկանէր զԺուպէր 'ի Ռիվո-լի, և զօրավարն Պրովէրա յառաջէր քսան հազարաւ խառնիլ ընդ զօրս քահանայա-պետին։ Ազատարեաց Պոնափարթէ 'ի Պո-լոնիոյ և եհաս 'ի վերայ թշնամեաց 'ի Ռի-վոլի, եհար զնոսա չարաչար և փախստա-կան տարաւ 'ի լեռնամէջս. յարձակեալ անտի և 'ի վերայ այլոց գնդից, վանեաց և

զնոսա։ Եւ իբրև փայլակն անցեալ յաղթական զինուքն՝ խոյացաւ և 'ի վերայ Պրովերայ՝ որ քսան հազարաւն մերձենայր 'ի սահմանս քաղաքին Մանդուայ, և պաշարեաց զնա։ Զայս տեսեալ Վուրմսերայ՝ յարձակեցաւ 'ի դուրս 'ի վերայ պաշարողաց. այլ 'ի քաջութենէ Գաղղիացւոց ընկրկեալ փակեցաւ դարձեալ 'ի քաղաքին. և Պրովերայ յուսահատեալ անձնատուր եղև զօրքք իւրովք, յորս էին և ազատախումբ պատանեակք մայրաքաղաքին։ Յետ աւուրց ինչ և Մանդուա նեղեալն 'ի սովոյ քան 'ի զինուց թշնամեաց՝ եբաց զդրունս իւր առաջի յաղթականին. զօրավարն Վուրմսեր եղեալ 'ի բաց մեկնեցաւ ազատ։ Տիրապետութեամբ քաղաքին իշխան եղեն Գաղղիացիք բովանդակ հիւսիսային Իտալիոյ։

ԳԼՈՒԽ Ժ.

Ասպնին կայսր հասարակապետութեանն Գաղղիոյ, և դատիր մենէնայսր Լագուորկանաց և ռամկավարաց։

ՅԱՂԹՈՒԹԵԱՄԲ Նափոլէոնի 'ի Ռիվոլի և առմամբ Մանդուայ՝ զօրացաւ յոյժ գաղղիականն հասարակապետութիւն և արկանէր այնուհետև զահ իւր 'ի վերայ թագաւորաց Եւրոպայ. և առանին ամրապնդէր իշխանութիւն վարչութեան ռասիկանաց, յեցեալ 'ի հանճար և 'ի քաջութիւն մեծա-

նուն զօրավարաց քան յիւրեանց հնարագիտութիւն։

Քանզի երևելին 'ի հինգ ոստիկանս Քառնոյ, Թէպէտ և այր խորախորհուրդ, արդարակորով, քաջասիրտ և ժրաջան, սակայն յամառ և ամբարտաւան էր, պնդեալ 'ի կամս և 'ի վճիռսանս իւր, և վրիժասէր և ոխերիմ Թշնամի Պառայ։

Իսկ Պառա գեղապատշաճ կերպարանօքն նշանաւոր, այլ ըստ հանճարոյ և ըստ բաղդի ոչ ինչ ունելով արժանի այնմ աւագութեան, յանդուգն էր և վատ, ցոփ և անառակ 'ի վարս, բուռն և նենգաժոտ և խաբեբայ. ժողովէր առ ինքն զզակատեալսն 'ի ռամկավարութիւն և 'ի թագաւորութիւն, երկոցունց ևս կողմանց գեղեցիկ ակնկալութիւնս դնելով առաջի։

Երրորդն Ռէվպէլ ներհուն 'ի վարչութեան և այր խորագէտ, և հաստատուն 'ի գործս. այլ խիստ էր 'ի խօսս և երդիծանող, և ոխերիմ Թշնամի Քառնոյի և Պառայ։ Այսպէս սոքա երեքին գործադիրք ատելիք իրերաց, միայն յօգուտ հասարակաց միաբանէին։ Իսկ յերկոցուն իշխանակցաց նոցա Լը Թուռնէօր այր փառասէր մեերիմ էր Քառնոյի. Լարէվէյլէր Լըփոյ քան զամենեսեան առաւելեալ 'ի ցոյցս առաքինութեան իբրև արդարամիտ և խորաշնին, և պատուեալ յամենայն իշխանակցացն, մինչնորդ խաղաղութեան կայր ընդ մէջ երեցունց գործադրացն, և որպէս վրէժինդիր կրօնից՝ ջանայր հաստատել

զաստուածեանն աղանդ։ Այլ յորժամ 'ի վերս երևեցաւ աստուածամարդասիրացն՝ 'ի նոյն հակամիտեալ թուէր և ինքն. սակայն խիթալով ատելի լինել ժողովրդեան իբրև զՌոպէսպիէռ նորոգ կրօնից աղանդապետ գոլ, ծածկէր զկարծիսն։

Զայսու ժամանակաւ յետ պարտութեանն և ձերբակալ լինելոյ Պապէօֆայ և ընկճելոյ զօրաց Կրընէլայ, հանդարտել թուէին ռամկավարք. իսկ թագաւորականք բազում անգամ պարտեալք, նորանոր ակնկալութեամբ վերստին գլուխս ամբառնային։ Քանզի և յետ մահուան Լա Մէդրեայ որ գեղեցիկ մոլութեամբ զհետ կրթէր թագաւորական կողման, և յետ 'ի սպառ ընկճելոյ Վանդէացւոցն, և զրկելոյ յիշխանութենէ Փիշկռիս զօրավարի, տակաւին ոչ դադարէին թագաւորականք։ Լուդովիկոս ԺԸ. ելեալ 'ի Վերոնայ երթայր 'ի բանակն Քոնտեայ յափունս Հռենոսի, և սքանչելեաք ինն տպրեալ 'ի մահուանէ՝ մեկնէր 'ի Սկովտիա. և 'ի ձեռն նուիրակաց իւրոց գրգռէր զառաջնորդս թագաւորականաց, որք և յաճախելով զթիւ կուսակցաց իւրեանց, ընդհանուր աղմկել զազգն և ըզհասարակապետութեանն անդրէն 'ի թագաւորութեան փոխել խորհէին։ Փիւիզէյ 'ի Բրետոնիա և իշխանն Ֆրոթէ 'ի Նորմանտիա՝ փորձեցին գրգռել զժողովուրդն 'ի զէն. Փրէսի յուզէր խռովութիւնս 'ի Լուդոն և 'ի հարաւային գաւառս. և Քոնտէ յափունս Հռենոսի ջանահնար լինէր որսալ

զաւագ որեար հասարակապետութեանն, և հրեշտակագնաց լինէր ընդ Փիշկուիս։ Այլ ամենեքեան սոքա անմիաբանք յիւրեանս զանձանց միայն խնդրէին, և ոչ զհասարակացն կամ զթագաւորութեան։ Հզօր էր յոյժ և գաղտնի ընկերութիւնն Հաւասարիմն կոչեցելոց, որոց 'ի ծածուկ պահելով զգաղտնիս դաւակցութեան, և վառեալք զինու 'ի կշիռ ունելով զհակառակ հերձուածն՝ հաստատուն պահէին զխաղաղութիւն։ Ղասն որոյ և պաշտպանք էին վարանդեաց քաղաքացւոց և քահանայից, և հակառակ՝ խռովչացն և յանիշտակողաց։ Մինչդեռ խլրտէին թագաւորականք 'ի մայրաքաղաքին, դէպք 'ի բարի յաջողեցին Քոշոնայ պաշտօնէի նեղքին վարչութեան՝ 'ի վերայ հասանել դաւաճանութեան նոցա։ Քանզի առաջնորդք դաւոյն առ 'ի հաստատունել զթիկունս իւրեանց, խորհեցան որսալ զվաշտ վիշապագունդ հեծելոցն, և զօրավարք գնդին պատրաստել զնոսա որսացան 'ի բերանոյ նոցա զամենայն խորհուրդս և զանկալութիւնս, և 'ի վեր հանին Քոշոնայ զնրան։ Որոյ աճապարեալ ձերբակալարար զգլխաւորս դաւադրացն, և վասն անկեղծ խոստովանութեան նոցա փոխանակ մահու գատապարտեաց 'ի բանտ։ Ոչ ինչ այսպէս գթութեամբ գնացին ընդ ռամկավարսն, այլ զառաջնորդս նոցա զՊապէօֆ և զՏարթէ եռուն 'ի մահ։ Բանտարկելութիւն թագաւորականացն 'ի Փարիզ, ոչ ինչ թուլացոյց զհամախոհս նոցա 'ի Բրե-

տոնիա, 'ի Նորմանտիա, 'ի Լիոն և յափունս Հռենոսի, որք ակնկալեալ մնային նորոգ ընտրութեան ոստիկանաց, ջանալով ըզկուսակիցս թագաւորութեան ամբառնալ յայն:

Ի ժամանակին յայնմիկ դաշնակից եղեալ Սպանիոյ ընդ հասարակապետութեն՝ թըշնամացաւ ընդ Անգղիացւոց և կորոյս զԵրրորդութեան կղզիս. այլ ապագայ յուսով մնայր, զի 'ի զօրանալ Գաղղիացւոց 'ի վերայ Անգղիոյ և Փորթոգալաց ընդարձակեսցէ և ինքն զտէրութիւն իւր:

Իսկ Հոլանտայ 'ի հասարակապետութիւն փոխեալ՝ դաշնակից էր Գաղղիոյ. և յերիս երկպառակեալ խումբս, կէսք 'ի կողմն լինէին Սթաթոլտէր իշխանապետի, այլք հասարակապետութեան, և բազումք իսկ ռամկավարութեամբ, և հակառակութեամբն ընդ իրեարս խափան լինէին հաստատութեան նորոյ սահմանադրութեան. հանապազ յերկիւղի գոլով յերեսաց արշաւանաց Բրուսացոյ, զորս յաջողութիւն Գաղղիոյ միայն սանձէր:

Իսկ Բրուսք և մեծ մասն դաշնակցութեան Գերմանիոյ, Դանիք, Սուեդք և Հելուետիացիք խաղաղութեամբ էին ընդ Գաղղիացիս: Խլբտէր և հասարակապետութիւն Միացեալ նահանգաց յԱմերիկա 'ի պատերազմ, միաբանեալ ընդ Անգղիացիս և ընդ դաշնակիցս նոցա ընդ Աւստրիացիս և ընդ Ռուսս ընդդէմ Գաղղիոյ: Այլ Ռուսք 'ի մեռանել Կատարինեայ և 'ի թագաւորել

Պօղոսի ոչ ևս կացին 'ի դաշինսն, թողեալ միայնակ զԱնգղիա և զԱստրիա ընդդէմ հասարակապետութեանն Գաղղիոյ։ Յորոց առաջինն անկեալ գոգցեա 'ի վաճառականութենէ երթայր և նուազէր. և երկրորդն թէպէտ յաղթող յափունս Հռենոսի առմամբ Քէհլ և Հիւնէնկ ամրոցաց, այլ վատթարեալ յոյժ յԻտալիա, խորհէր անդր ածել զզօրութիւնս իւր, և փոխել զԿարոլոս 'ի Թիրոլ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղթութիւն Նափոլէոնի 'ի վերայ Հռովմայ, խորտակէլնորա զԿարոլոս 'ի Թիրոլ. և Բարյոնն Վէնէպիէան հասարակապետութեան։

Եւ քանզի յետ առմանն Մանդուայ և յաղթութեանն Ռիվոլեայ, կորոյս կայսրն գոգցեա զամենայն գաւառս իւր Յիտալիա, այնուհետև խրոխտագոյնս վարէր Նափոլէոն ընդ իշխանս աշխարհին, և զծաղուեկեալ զզօրութեամբ քահանայապետին Հռովմայ՝ որ 'ի կայսր վստահացեալ խրախուսէր 'ի մարտ, եհան ընդդէմ նորա այսպիսի յայտարարութիւն. "Հանդերձի բանակն գաղղիական մտանել յերկիր իշխանութեան քահանայապետին, այլ նա հաստատուն 'ի խորհուրդս իւր պաշտպան է կրօնից և ժողովրդեան։ Ածեալ բերէ յաջ իւր զսուսեր 'ի յաղթութիւն, և 'ի ձախումն ոստ ձիթենւոյ 'ի նշան խաղաղու-

թեան և առ հաւատչեայ երջանկութեան։ Վայ նոցա, որ պատրեալ յարտանց անմտաց ածցեն 'ի վերայ իւրեանց զվրէժխնդրութիւն զօրաց իմոց . . . . ,,։

Եմուտ Նափոլէոն 'ի վիճակ տէրութեան քահանայապետին, և զնառնիճաղանճ ամբոխ ռամկին որպէս զփոշի ցրուեալ առաջի իւր, ներբեաց նոցա, և ոչ եթող իւրոցն ինչս հասուցանել ումեք. որով շահեցաւ զսիրտ ժողովրդեան երկրին, մինչև բազում քաղաքք յօժարութեամբ բացին զդրունս առաջի Գաղղիացւոց իբրև իւրեանց ազատարարաց։ Զօրավարն Վիկտոր հալածական տարեալ առաջի իւր զԲոլէի յոր յուսացեալ էին Հռովմայեցիք, 'ի սպառ ընկճեաց զնոսա, և շնորհեալ քահանայապետին զնաղաղութիւն՝ պայմանօք դաշանց Տոլենդինոյ, եհատ գաւառս ինչ 'ի տէրութենէ նորա։ Եւ Պոնափարթէ աւար առեալ զգանձս տան Տիրամօրն որ 'ի Լորետոն հարկս ծանուցեալ արկ 'ի վերայ քահանայապետին Պիոսի։ Ապա կարգեաց զԼոմպարտիա 'ի հռոմարակապետութիւն Ճիզալպեան կոչելով, այսինքն է յայնկոյս Ալպեայց, և զՄեդիոլան 'ի մայրաքաղաք նմին։

Եւ յետ ամսօրեայ ժամանակի հանգիստ տալոյ զօրացն, նորանոր օգնականութեամբ ստուարացուցեալ զբանակ իւր՝ յերիս առաջս բաժանեաց, և մխեցաւ 'ի Թիրոլ ընդդէմ մեծի դքսին Կարոլոսի։ Ոչ կարացին Գերմանացիք զդէմ ունել բուռն յարձակման Գաղղիացւոց, և խորտակեալ թողին

նոցա զանցս Թաղիամենդոյ գեաոյ։ Զօրաց-
ցաւ և Մասսենա 'ի վերայ Թշնամեացն 'ի
Թարվիա՝ մինչդեռ Նափոլէոն առեալ ըզ-
փալմա Նովա քաղաք՝ ուր համբարեալ էր
Կարոլոսի զվառօգ և զպատրաստութիւն
հրազենուց, խաղայր անտի 'ի Կրատիսքա։
Իսկ Ժոպէր կանգնեաց յաղթութիւն մեծ
'ի Թիրոլ 'ի վերայ զօրավարացն Լաւառնի և
Քէրվիէնի, և 'ի ապառ հալածեաց զնոսա
'ի գաւառէն։ Որով գերեալ Նափոլէոնի
քսան հազարս 'ի Թշնամեաց և զբաղումս
սրոյ տուեալ ճարակ, փախստական տանէր
զԿարոլոս առաջի իւր. և սորա ոչ ևս կա-
րացեալ ճարտարութեամբն իւրով արգե-
լուլ զաշխարհակալութի քաջի զօրավարին
և զպատերազմափորձ և զբազմայաղթ զօ-
րաց, հանդոյց 'ի հանգուցէ վախուցեալ
տեղն տայր Թշնամւոյն. որ և առեալ զԿա-
ռինթիա, զՍթիրիա և զՓրիուլ, քսան և
հինգ փարատեալ մերձենայր 'ի Վենետիկ, և
գայր մտանէր 'ի Լիսոպէն։ Զարհուրեալ
մայրաքաղաքին՝ ուստի ապարէր կայսրն առա-
քել պատգամաւորս, դուլ առնել զինուց։
Իսկ Պոնափարթէ վաղ իսկ յօժարեալ յայն
և անգէտ գոլով յաղթութեանց զօրավա-
րացն Հոշայ և Մորոյի 'ի Գերմանիա, հաւա-
նեցաւ ընդ այն. և ազգ արար կատեցոյց զար-
շաւանս նոցա։ Այլ յետ այնորիկ լուեալ
թէ զօրք իւր խորտակեցան 'ի Թիրոլ, և
բնակիչք տեղւոյն զէն առին 'ի թիկանց
նորա 'ի պատերազմ, առաւել ևս փութա-
ցաւ 'ի հաշտութիւն խաղաղութեան։ Խոր-

հեցաւ տալ յԱՒստրիացիս զՄանդուա և զման Վենետկեան Լոմպարտիոյ, 'ի փոխանակութիւն գաւառացն՝ որ յափունս Հռենոսի և յաշխարհին Բեղգիոյ, այլ ոչ հաճեցաւ ընդ այս ուղղիչ Ժողովն, և Նապոլէոն փոխան Մանդուայ խոստացաւ տալ զՎենետիկ. և այսպէս վճռեցաւ բաղդ հասարակապետութեանն այնորիկ, յորմէ վաղ իսկ Ժողովուրդք և քաղաքք ոմանք որպէս Պերկամոյ, Պրեշիա, Քրեմոնա, և այլք՝ խլրտէին 'ի կողմն Գաղղիացւոց, և Ծերակոյտն զինէր 'ի Ծածուկ զԺողովուրդն 'ի պատերազմ ձերբակալեալ զխռովիչսն:

Պատգամաւոր յղեաց Նապոլէոն առ Ծերակոյտն Վենետկոյ, ստիպելով զնոսա մի յերկուս հետս կաղալ, այլ 'ի խաղաղութիւն գալ կամ 'ի պատերազմ. և առաքեաց զԺիւնոյ զտեղակալիւր: Ընդ լուր սպառնալեաց մեծի սպարապետին Գաղղիոյ խռովեալ Ծերակուտին, մինչ տարակուսէր յինչ ձեռն արկանել, դէպ եղև խռովութիւն ապստամբութեան Ժողովրդեան Վերոնայ և կոտորած պահակապանաց Գաղղիացւոց:

Իբրև ե հաս գոյժ կոտորածին յականջս զօրավարին Քիլմէնայ, ծանրացաւումն լեալ առաքեաց առ զօրավարն Քապրան և առ այլ զօրագլուխս խաղալ 'ի վերայ Վենետկեցւոց: Զորոց Քապրան խորտակեալ զզօրս՝ էառ զՎերոնա քաղաք, և կոտորեաց զդլխաւորս դաւաճանութեանն, և յաւար մատնեաց զաւանդս ողորմութեանց, ուր

էին մեթերք գանձուց աղքատաց, և արկ
'ի վերայ քաղաքին տուգանս ծանուցեալ։ Եւ
ապա սուր 'ի վերայ եդեալ հալածական
տարաւ անտի զգիւղականս զինեալս. և խա-
ղաղացուցեալ զերկիրն, առաքեաց առ Նա-
փոլէոն զոյց տալ զերացն։ Դէպ եղև 'ի նոյն
աւուրս և նաւու միոյ գաղղիացւոյ հալա-
ծեալ յԱւստրիացւոց ընդ Ադրիական ծով
մտանել յանկարծ 'ի ծոց Վենետկոյ. ազգ
արարին պահապանքն հեռանալ 'ի բաց, և 'ի
յամենն ուղղեալ 'ի վերայ թնդանօթս՝ խոր-
տակեցին զնաւն, և 'ի վերայ յարձակեալ
ընդ սուր անցուցին զնաւաստիս։ Զայս
գործ իբրև անգութ խժդժութիւն ընդդէմ
օրինաց ազգաց պատմեն Գաղղիացիք. և
Վենետկեցիք ջանան ցուցանել զբռնու-
թիւն նոցա, հակառակ ամենայն օրինաց
գործեալ ընդդէմ պետութեան իւրեանց,
մինչ 'ի ներքս 'ի տէրութիւն օտար, արհա-
մարհեալ զզգուշութեամբ պահպանաց։
Թէպէտ և աճապարեաց ծերակոյտն յղել
դեսպանս առ Նափոլէոն, արդարացուցա-
նել զեղեալս, այլ նա անողոք կացեալ մեր-
ժեաց զդեսպանսն, սպառնացեալ գալ
փոխել զհասարակապետութիւն նոցա։ Եւ
խաղացոյց անդէն զգունդս զօրաց իւրոց
յերկիր տէրութեան Վենետկեցւոց, և ան-
խափան արկ 'ի բուռն զամենայն երկիր
հասարակապետութեան նոցա 'ի ցամաքի։
Այլ մայրաքաղաք պետութեն նոցա Վենե-
տիկ, կանգնեալ 'ի մէջ ծովու և պաշարա-
պինդ, և ամրացեալ իտալացի և դաղմատացի

զորոք, անմատչելի էր գոգցես և անառիկ։ Աւա՜ղ, չի Ծերակոյան այն՝ որ խորախոր հուրդ վարչութեամբն արհամարհէր երբեմն զզօրութիւնս Եւրոպայ առ հասարակ, անմիաբան ճեղքեալ յինքեան 'ի զուր ահաբեկէր զԺողովուրդն. և ուճապարեալ խնդրէր ողոքել զՆափոլէոն, զամենայն պայմանս նորա յանձն առեալ, փոխել և զտարազ վարչութեանն։ Ցեսեալ Նափոլէոնի զվատութիւն Ծերակուտին և զլքումն արտի Ժողովրդեան, առաւել ևս վստահացաւ 'ի յաղթութիւն, և խնդրէր զդլուխս երից գլխաւոր իշխանաց Քննչաց հասարակապետութեան, և զգլուխ զօրագլխի պահապանաց կրճին Վենետկոյ, սպառնալով 'ի հնգետասան աւուրս 'ի բուռն առնուլ զքաղաքն։ Առաւել ևս զարհուրեալ քաղաքին՝ վեր 'ի վայր յուզէր. դիմեաց խաժամուժն յաւար առնուլ զտունս ազնուականաց ոմանց, զորս պատճառս չարեացն համարէին։ Ապա խորհրդով դեսպանին Գաղղիոյ արձակեցին զդաղմատացի զօրականն, փոխեցին և զհին վարչութիւն հասարակապետութեան, բացին և զդրօշ ազատութեան 'ի պատուհանէ ապարանից դքսին, ընդ որ յոյժ զայրագնեալ ժողովրդեան՝ կրճտէին զատամունս։ Այլ անդէն նոր վարչաց պետութեանն առաքեցին նաև՝ ածել 'ի մայրաքաղաքն գունդ մի չորից հազարաց Գաղղիացւոց։ Այսպէս ինքեանց ձեռաք մատնեցին Վենետկեցիք զպանծալի ազատութիւն իւրեանց։

Ազատարեաց Նափոլէոն զբռամբ առնուլ և զկղզիս նոցա որ 'ի Յունաստան, մինչև անդր միսեալ Անգղիացւոց, զՔորֆու, զԿեֆալոնիա, զՍանթա Մաւրա և զՀերիկոյ։

Յետ այսորիկ խառվս արկեալ Գաղղիացւոց և 'ի Ժողովուրդն Գենուայ, փոխեցին և զնոցայն վարչութիւն՝ արկեալ ընդ ձեռամբ իւրեանց։ Եւ Պոնապարթէ Ճոխացեալ փառաք՝ հրամանատու լինէր պետութեանց, վեհագոյն քան զամենայն թագաւորս Եւրոպայ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Ներքին ողորմ վիճակ հասարակապետութեան Գաղղիոյ յերկպառակ հերձուածս, և ընկճել 'ի սպառնագաւորականաց։

Գաղղիա թէպէտ և արտաքոյ յաղթութեամբքն փառաւորեալ, 'ի ներքոյ տառապէր յառաջին աղէտսն. հասարակապետականք անմիաբանք յիւրեանս վասն իշխանութեան կռուէին. 'ի թագաւորականաց խէթ և կասկած 'ի վերայ կայր, զի զօրացեալ նոցա ոչ դէպային 'ի ջանից կրկին կանգնելոյ զկործանեալ գահ Պորպոնեանց. և երկիւղ 'ի խառվարար ռամկավարաց, որք թէպէտ ընկճեցան, այլ դեռ ևս ուրեք ուրեք խլրտէին։ Յետ քաղում հակառակութեանց, փոխեցաւ Ժողով Ծերակուտին և երիտասարդաց, և 'ի տեղի առաջնոցն այլք յաջորդեցին։ Իսկ յոսոփիկանաց անկաւ Լը

թուռնէօր յիշխանութենէ, և ամբարձաւ յայն Պարթէլըմի՝ որ դեսպանութեամբ գնացեալ էր 'ի Հելուետիա։

Սկսան յայնժամ վտարանդիք և քահանայք դարձ առնել 'ի Գաղղիա 'ի ծածուկ. քանզի դադարեալ յայնժամ հալածումն, ազատութիւն էր ուղղափառաց պաշտել առանձին զիւրեանց կրօնս, այլ ոչ քաղաքական հանդիսիւ։ Տեսեալ գործադիր ոստիկանացն՝ զի յաճախեցին 'ի ժողովն օրինադիր և 'ի ծերակոյտն և 'ի տեսչութի պաշտամանց տէրութե՝ թագաւորականք, և փիշկուիւ և ընկերք նորա և ևս զօրանային, և մոտալուտ թերևս կործանումն հասարակապետութե 'ի վերայ կայր, զարթեան 'ի նուաճել զամենեսին և զժողովն օրինադիր և զժողով ծերակուտին։ Եւ քանզի բանակ զօրացն՝ որ 'ի ձեռս Նափոլէոնի, Մորոյի և Հոշայ, զպարգևս և զդովութիւնս 'ի գործադիր ոստիկանացն միշտ ընկալեալ, զնոսա միայն գիտէին ուղղիչս հասարակապետութե և 'ի հրամանս նոցա մնային, վասն որոյ ազդ ա. ռարին գործադիրք զկամս իւրեանց յընկճել զթագաւորականս, և կոչեցին նախ զՀոշ. և 'ի դանդաղել նորա՝ բանագնաց եղեն առ Նափոլէոն՝ առաքել գունդ մի յիւրոց անտի քաջաց։ Նափոլէոն 'ի Մեդիոլան էր յայնժամ. և յետ մեծի հանդիսի վասն անկելոցն 'ի պատերազմի, և խրախուսելոյ զիւրսն նմանող լինել արութեան քաջացն, ծանոյց նոցա զողորմ վիճակ հասարակաց պետութեան, և վառեաց զմիտս

ամենեցուն 'ի սէր վրէժխնդրութեան հա-
սարակապետութեան ընդդէմ այլազգն
խորհողաց ։ Եւ արձակեաց զզօրավարն
Օժրրոյ , զայր յանդուգն և աղմկասէր ,
ծնեալ յարուարձանս սրբոյն Անտոնի 'ի
մէջ ժաքոպէնաց . այլ չհաճեցան ընդ նա
Լարէվէյլէր և Ռէվպէլ , և հազիւ մարթա-
ցան մեղմել զխռովասէր զեռանդն նորա ։
Յաւելան 'ի զօրս Օժրրոյ և այլ գունդք զօ-
րաց քաղաքին , և սպայք եկեալք 'ի բանա-
կաց Մորոյի և Հոշայ . քանզի և Հոշ իսկ
ուր ուրեմն մերձ կայր բանակաւն ։ Մինչ-
դեռ այս ամենայն գաղտնի պատրաստու-
թիւնք լինէին , և ահ և կասկած ունէր ըզ-
ժողովն օրինադիր և զծերակոյտն և զժողո-
վուրդն առ հասարակ , չգիտելով զվախճան
գործոյն , այլ ևս խռովք վասն պայմանաց
հաշտութեան ընդ կայսեր և ընդ Անգ-
ղլիոյ երկպառակեալ շփոթէին զամենե-
սեան , և յոստիկանսն յաւելոյր հին գրժ-
տութիւնն . Քառնոյ և Պարթէլմի խաղա-
ղութեանն ցանկային , և ընդունելոյ զպայմանս
առաջարկեալս . իսկ երեք իշխանակիցք
նոցա ոչ ինչ իւիք զինջանել կամէին ։ Ի լուր
խռովութեանցն դանդաղէր և կայսրն 'ի
հաստատութիւն դաշանց , ձախող ինչ էլից
Գաղղիոյ մնալով 'ի նորոց խռովութեանց ։

Բողոք կալան ժողովն օրինադիր և ծերա-
կոյտն ընդդէմ գալատեան զօրացն 'ի մայրա-
քաղաքն . այլ ոստիկանքն համարձակագոյնս
արարին պատասխանի , եթէ 'ի զգուշու-
թիւն հասարակաց պետութեան ընդդէմ

թագաւորականացն ածաք զնոսին։ Հնարեցին յայնժամ թագաւորականք յորս էին և Փիշկոիւ և Վիլլոյ և խումբ Քլիշի անուանելոց՝ և Քառնոյ և Պարթէլոմի ընդ նոսա, առաջի առնել զինդիր գումարելոյ ազգային զօրաց։ Բազումն Ջանացեալ ոստիկանացն համոզիլ զինել Քառնոյի և Պարթէլոմեայ 'ի բաց կալ 'ի խորհրդոյ անտի և ոչ յաջողեալ, համարեցան զնոսա ընդ թշնամիս։ Եւ այնուհետև համբաւ ընթանայր 'ի քաղաքին, եթէ պատրաստին գործադիրքն ընդ սուր հանել զՔառնոյ, զՊարթէլոմի և զերկերիւրեան 'ի ժողովականաց. և այնչափ զօրանայր ձայն ժողովրդեան, մինչև փոքր միւս ևս և տարակուսեալ ոստիկանաց զմիմեանց գլխովին ձեռնթափ լինէին 'ի գործոյն. այլ խրախուսեաց Պառա զերկուս իշխանակիցս իւր երագել 'ի գործն։ Թագաւորականք և Քլիշեանք պատգամաւոր եղեն առ Փիշկոիւ յարձակել 'ի վերայ ոստիկանացն և ձերբակալել զնոսա, այլ նա վեհերեալ ծիծաղեցաւ ընդ քանն։

Եւ ահա յանկարծ 'ի չորրորդումաւուր ամսեանն սեպտեմբերի՝ գիշերախառն եմուտ զօրավարն Օժլրոյ երկոտասան հազար զօրաք 'ի Փարիզ, և եկն 'պաշարեաց զապարանս Թիւյլերի. և յառաւօտուն 'ի նշան արձակելոյ Թնդանօթի ձայն եռուն մարտի, եկին և միացան ընդ նոսա և պահապան զօրք օրինագիր ժողովոյն։ Անդէն ձերբակալեաց Օժլրոյ զՓիշկոիւ, զՎիլլոյ և զՌամել զօրավարս, և զբազումն 'ի ժո-

ղովականաց . իսկ ոստիկանաց ժողովեալ այլուր , հանին թուղթ իբրև թէ առաքեալ 'ի Մորոյէ 'ի յայտնութիւն դաւաճանութեանց Փիշկռիւի , և ծանուցեալ զնրաւունս գործոց իւրեանց օրինաք , զարս քառասուն և երկու 'ի ժողովոյ հինգհարիւրոցն , և մեռասան 'ի ծերոց , և զերկուս զՔառնոյ և զՊարթէլըմի զգործադիր իշխանս՝ դատապարտեցին յաքսոր 'ի Կիան յԱմերիկա , յօտարութիւն ողորմելի յանապատս հեռաւորս ինաստակար օդովք :

Խստացան նոքա և ընդդէմ երեսուն և հնգից լուագրոց , մատնեալ զնոսա 'ի վրէժ բարկութեան իւրեանց . յետս դարձուցին և զօրէնս ազատութեան վարանդեաց և քահանայից ուղղափառաց՝ որ գունդագունդ գտառնային 'ի Գաղղիա : Այսպէս այլ նոր հարուած յաւելին 'ի վերայ կուսակցաց թագաւորութեան , որ տակաւ գլուխ 'ի վեր ամբառնային , և զօրացուցին դարձեալ զկողմն հասարակապետականաց : Զքառնոյ և զՊարթէլըմի յաջորդեցին Մէրլէն Տը Տուէլ և Փրանկիսկոս Տը Նէօֆշատէօ . և Մորոյ յետս կոչեալ իբրև կասկածաւոր՝ արկաւ յիշխանութէ , և փոխանակեաց զնա Հոշ 'ի ոստարապետութեան : Իր սա Երիտասարդ աշխոյժ , սիրող հասարակապետութեան և նախանձորդ Նափոլէոնի . այլ յետ մեծի իշխանութեանն տակաւակեաց լեալ՝ մեռաւ , մինչև կասկած իսկ եղև զնմանէ դեղամահ լինելոյ : Մեծ եղև հանդէս թաղման քաջին , և ամենայն հա-

սարակապետականք լացին զնա դառնապէս. և յաջորդեաց 'ի տեղի նորա Օժբրոյ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Հայոցն Ռիմֆոքրոմոյ. Երբ Նափոլէոնի 'ի գոմար ծողովոյ պէպուռնէանց 'ի Ռաղդադ և դարձն նորա 'ի Փարիզ։

Ի ԺԱՄԱՆԱԿԻՆ յայնմիկ դուլ էր զինուց ընդ Աւստրիացիս և ընդ Գաղղիացիս. սակայն երկոքին ևս կողմանք զէն 'ի ձեռին դէտ ակն ունէին խլրտելոյ միմեանց. Նափոլէոն կամել կամէր զխաղաղութիւն, այլ ըստ պայմանացն՝ զոր առաջի դնէր։ Եւ 'ի միում աւուր 'ի խօսել ընդ Քոպէնցէլայ կոմսի զհաշտութենէն, 'ի սաստկանալ բանից վազեաց յանթոռոյն գոչելով. "Արդ բաւ է, ոչ ևս ապա դուլ զինուց, այս ձայն է պատերազմի. այլ դու զայս քաջ 'ի միտ առ, զի յառաջ քան զաւարտ աշնայնոյն խորտակեցից զթագաւորութիւն ձեր, զոր օրինակ խորտակեմ զանօթս զայս յախճապակեայ,,։ Ասաց, և զգետնի հարեալ խորտակեաց զանօթն, զոր Կատարինէ Բ դշխոյն Ռուսաց տուեալ էր կոմսին, և ելեալ գնաց 'ի Պասերիանոյ։ Եւ յելանելն 'ի կառս՝ առաքեաց զոմն 'ի սպայից առ արշիդուքսն Կարոլոս, կանխել ծանուցանել նմա զի պատրաստեսցի առ վաղիւ 'ի պատերազմ. այլ Քոպէնցէլ աճապարեալ զիջոյց զնա ան-

դրէն 'ի հաշտութիւն ընկալեալ զպայմանն առաջարկեալս, ճանաչելով հասարակապետութեանն Գաղղիոյ սահմանս զՀռենոս, զԱլպեանս, զՊիւրենեանս և զՈվկիանոս. ընդունելով և զՀիզալպեան հասարակապետութիւնն և թողլով զերկիր իշխանութեան Պրիզկրաւայ և Պատէնի: Այսպէս ճարտարութեամբ և խիզախ յանդգնութեամբ Նափոլէոնի կռեցան դաշինքն հաշտութեան 'ի Քամփոֆորմիոյ. զոր և հակառակ կամաց ոստիկանացն 'ի գլուխ հանեալ նորա՝ աճապարեաց երթալ 'ի գումար ժողովոյ դեսպանաց պետութեանց Եւրոպայ 'ի Ռաշդադ տուեալ զօրաց իւրոց զողջոյն հրաժեշտի, և գովեալ զքաջութիւնս նոցա հանդերձ ակնկալութեամբ նորանոր յաղթանակաց:

Յանցանել Նափոլէոնի ընդ երկիր Վոտուայ, օրիորդք գաւառին զգեցեալ եռագոյն հանդերձս՝ ցնծութեամբ ելին ընդ առաջ ազատարարին իւրեանց պսակս նուիրելով. քանզի ապստամբեալ նոցա յիշխանութենէ Պեռնայ Հելվետիոյ՝ յաւելեալ էին 'ի հասարակապետութիւնն Հիզալպեան. զոր 'ի մեկնել իւրում յԻտալիոյ յորդորէր Նափոլէոն արիանալ 'ի պահպանութիւն ազատութեանն գտելոյ, և պինդ ունել զկրօնս նախնեաց իւրեանց զուղիղս:

Ոչինչ յապաղեալ Նափոլէոնի 'ի Ռաշդադ, զայլ ոք 'ի տեղի իւր կարգեաց, և ինքն զերեսս հաստատեաց դարձ առնել 'ի Փարիզ: Թէպէտ և դժկամակէին ոստիկանք

ընդ ինքնիշխան գնացս զօրավարին, այլ զի ժողովուրդն ծափահար ցնծութեամբ բարձրացուցանէր զյաղթանակս նորա, երկեան հակառակելնմա, և պատրաստեցաւ մայրաքաղաքն փառաւոր յաղթանակաւ ընդունելզնա, որպիսի ոչ ումեք 'ի զօրավարաց ա. բարեալ էր։

Կարգեցաւ հանդէսն շքեղ յապարանս Լիւքսեմպուրկայ առաջի գեսպանացն Եւրոպայ. ուրանօր գործադիր ոստիկանքն արկեալ զանձամբք զհանդերձս պատուոյ 'ի տարազ հռովմէական՝ բազմէին 'ի տախտակամած բեմի առ ոտս սեղանոյն հայրենեաց։ Քանզի 'ի միջոցին կանգնեալ էր սեղան անդրեաց Ազատութեան, Հաւասարութեան և Խաղաղութեան. և շուրջ զնոքօք պաշտօնեայք, գեսպանք, ատենակալք երկուց ժողովոց, և իշխանք տեսչութեան աշխարհին, և 'ի վերայ գլխոց նոցա ամբառնային դրօշք յաւարէ թշնամեաց։ Եւ մինչդեռ դէտ ակն կալեալ մնային ամենեքեան, ահա 'ի ձայն պատերազմական նուագաց և 'ի թնդիւն հրանօթից և 'ի գոչիւն ամբոխին՝ էկն եմուտ յաղթականն Պոնապարթէ ընդ Թուլէյռանայ պաշտօնէի արտաքին տեսչութեան պետութեանն։ Վախտ և նկուն հասակ երիտասարդ զօրավարին զարմացուցեալ զամենեսին՝ յիշատակաւ մեծամեծ արութեանց արշաւանաց նորա. այլ աչք նորա եռանդունք և դէմքն տժգոյնք հռովմայեցի կերպարանաց զուգատիպք՝ քաջիսկ ցուցանէին զարութիւն մտաց նորա և զհանձա-

բոյն. և յափշտակեալ ի՝ մի՝ոք ժողովա-
կանացն՝ գոչէին միաձայն. “Կեցցէ հասա-
բակապետութիւն, կեցցէ Պոնապարթէ,,:
Հակիրճ բանիւք գովեաց Թալէյրան զպար-
կեշտ ջափաւորութիւն յաղթականին, և
զփառս յաղթութեանն Էհան 'ի խռովու-
թիւն Գաղղիոյ, 'ի զօրն և 'ի մեծութիւն
ազգին: Խօսեցաւ ապա և Պոնապարթէ՝
եցոյց զիղձս սրտին յազատութիւն, յեր-
ջանկութիւն և 'ի փառս հասարակապետու-
թեան. և զի յորժամ յօրէնս հաստատուն
հիմնեսցի երջանկութիւն Գաղղիոյ, ապա
և ամենայն Եւրոպա առցէ զազատութեան
օրէնս: Եւ ամենեքին ծափահար գովեցին
զբանս նորա. խօսեցաւ և Պառա և խրա-
խուսեաց զդիւցազնն Գաղղիոյ ընդդէմ
Անգղիացւոց. ապա երգեցին երաժշտական
նուագօք և 'ի բոմբիւն թնդանօթից զխրա-
խուսական քերթուածս Շէնիէ բանաս-
տեղծի: Ածին 'ի հանդէս և զդրօշն պար-
գևեալ 'ի հասարակապետութենէ առ զօրս
Խաղիոյ՝ յորում գրոշմեալ էին ոսկետա-
ռիւք ամենայն արշաւանք արութեանց նո-
ցա, և նշանակեալ հարիւր յիսուն հա-
զարքն գերեալք 'ի նոցանէ, վաթսուն և վեց
դրօշք, հազար և հարիւր թնդանօթք գե-
րեալք 'ի թշնամեաց, դաշնադրութիւնք
ընդ իշխանս Խաղիոյ և տուգանք հարկաց
եգելոց 'ի վերայ նոցա, և երևելի գործք
ճարտարաց առեալք 'ի նոցանէ երեք հա-
րիւրիւ չափ, վաթսուն և եօթն յաղթու-
թիւնք և ութեւտասն ճակատամարտք:

Ցորչափ եկաց Նափոլէոն 'ի Փարիզ, առանձնակի վարէր կեանս, փախչէր 'ի փառաց, ընդ իմաստունս միայն խօսէր և ընդ քաջ զօրավարս, և օր քան զօր յաճախէր համբաւ մեծի հանճարոյ նորա։ Էր ուրեք զի և յոստիկանացն կոչեցեալ 'ի խորհուրդ, հիացուցանէր զամենեսին զարմանալի խորհրդականութեամբն 'ի վարչութիւն, մինչև ամենեցուն ցանկալ ամբառնալ զնա 'ի բարձ վարչութեան. այլ զի դեռ երիտասարդ էր երեսնամեայ, չկամեցան հակառակ գործել օրինաց հասարակապետութեան՝ որ զքառասնամեայ հասակ միայն սահմանէր յայն իշխանութիւն։ Այլ ինքն Նափոլէոն 'ի միտս կասկածոտս էր զնոցանէ յետ մահուան Հոշայ, և զգուշանայր 'ի սեղանոց նոցա։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Գնայ հասարակապետութեան Գաղղիոյ ընդ դաշնակից պետութիւնս Եւրոպայ, և բողոքն նորա զնմանէ։

ԹԷՊԷՏ և յետ դաշանցն խաղաղութեան ընդ կայսեր, և վերջին առտնին խռովութեան, մեծացաւ իշխանութիւն ոստիկանաց, սակայն զօրութիւն նորա յեցեալ էր 'ի զէնս, և հարկ էր նմա յոտին ունել միշտ բազմութիւն զօրաց՝ հանապազորդեալ 'ի պատերազմ։ Վասն որոյ իբրև լուծան խորհուրդք դաշնադրութեան ընդ Անգղիոյ,

կազմէին ոստիկանք բանակս զօրաց ընդդէմ հզօր աղգին, զօրավար կարգեալ արշաւանին զնոյն ինքն զՆափոլէոն։ Եւ մինչդեռ ամենայն զօրավարք և սպայք վառէին 'ի նոյն խորհուրդ ընկճելոյ զոսոխն գոռոզ, Նափոլէոն օտարանայր 'ի խորհրդոց անտի. զի թէպէտ և ոչինչ դժուարին համարէր ոտնակոխ առնել զաշխարհ նոցա, այլ գործ անօգուտ գրգռել զթշնամին և անարգանք Գաղղիոյ՝ խժական արշաւանքն։ Եւ ինքն երկնէր 'ի մտի այլ խորհուրդ մեծ՝ խաղալ յԵգիպտոս, ունել զաշխարհն՝ որ ընդ մէջ Եւրոպայ և Ասիոյ, և ընդ ձեռամբ գրաւեալ զտուրևառ վաճառաշահութեան զԱրևելից և զՀնդկաց՝ հատանել զոտս Անգղիացւոց 'ի Հնդկաստանէ. սակայն ոչ համարձակեալ անլսող երևել կամաց ոստիկանացն, յառաջ վարէր զգործ պատրաստութեան արշաւանացն յԱնգղիա։

Այլ նա մինչդեռ 'ի պատրաստութեանն էր, տեղակալք նորա Պոնիէ և Թրէյլառ ջանային 'ի Ժոլովին 'ի Ռաշտադ արդարացուցանել զգործս հասարակապետութեան և ամրապնդել զհաշտութիւն, մինչդեռ Եւրոպա ողջոյն բողոք բառնայր զԳաղղիացւոց. զի զՀոլանտա, զԳենուա և զՊիզալպեան հասարակապետութիւն՝ դաշնակցութեան անուամբ նուաճեցին ընդ լծով իւրեանց։

Եւ ընդ այլոց տէրութեանց Իտալիոյ, ընդ Բիէմոնդեայ, ընդ Նէապոլսոյ, ընդ Տոսկանայ և ընդ Հռովմայ բարեկամու-

թիւն կեղծեալ, 'ի ծածուկ սերմանէին 'ի նոսա զիւրեանց ապականիչ սերմանս ազատութեան, և խռովէին զռամիկն ընդդէմ իշխանաց նոցա և տերանց. և խռովչաց կալանաւորելոց իբրև ողորմելով ինն թիկունք լինէին, ստեցուցանել զթիւ խռովարար մարդկան, և յանդգնագոյնս ևս գործել. և առաւել գործիւր այս 'ի վերնակին Հռովմայ: Քանզի զակատեալք 'ի ստանուն ազատութիւն, անկախ և յիշխանութենէ կրօնից կամէին լինել, և նախ զքահանայապետն սուրբ արկանել յաթոռոյն և արհամարհցուցանել յաչս ժողովրդեան, որով ոտնակոխ առնել և զկրօնս արքութեան: Այլ տես ինձ զկեղծուպատիր խաբկանս մարդկան. գրգռեալ նախ զռամիկն 'ի խռովս, դիմէին ապա 'ի հանդարտել զնոսա: Սպանաւ 'ի խռովութեան ուրեք 'ի Հռովմ Տիւփոյ զօրագլուխ գաղղիացի, և Յովսէփ Պոնափարթէ դեսպան հասարակապետութեան ցասուցեալ էլ 'ի քաղաքէն: Եւ Պէրթիէ հրամանաբ ոստիկանաց խաղաց զօրքն 'ի Հռովմ, և անարգել տիրեաց քաղաքին. և զի ոչ հրաժարեցաւ քահանայապետն Պիոս Զ 'ի թագաւորութենէ, հանեալ զնա 'ի գիշերի ետ տանել 'ի Տոսկանա, և անտի հալածեալ տագնապաւ վարեցին զնա 'ի Գաղղիա. այլ ծերունին սուրբ ոչ ժամանեալ 'ի տեղի աքսորանացն՝ փոխեաց զվերջանալից կեանս իւր 'ի յաւէժականն և յերջանկաւէտս, 'ի Վալենսիոն քաղաքի այն է Վալանս Գաղղիոյ: Իսկ Մասսենայ յաջոր-

դեալ զՊէրթիէ զօրավար՝ յաւար մատնեաց զքաղաքն Հռովմ, և կարգեաց զնոր հասարակապետութիւն Հռովմէական։ Ընդ այս գործ հակառակ իրաւանց և կրօնից՝ լռեաց երկիւղիւ Սպանիա, միայն կայսրն և Թագաւորն Նէապօլսոյ դժկամակ եղեն. վասն որոյ առաքեցաւ Պէռնատոդ դեսպանութեամբ 'ի Վիեննա ցուցանել զպատճառս գործոյս, և Կարա՝ 'ի Նէապօլիս։

Երագ ընթանայր բոց խռովութեան ընդ ամենայն Եւրոպա. Հելուետիա՝ ուր ըստոյգն ազատութիւն և պարզունակ կենցաղավարութիւն տիրէր, յառանձին երեքտասան մարզս կամ 'ի գաւառս բաժանեալ՝ զերծ կարծիւր 'ի մոլութենէ Գաղղիական ազատութեան. սակայն և 'ի նմա ճարակեցաւ նոյն սխալ յիմարեցուցիչ, զոր օրինակ տեսաք 'ի վերս անդր զբնակիչս Վոտուայ. և խաղաց անդր զօրօք իւրովք Մէնար զօրավար հասարակապետութեան։ Յարեան ատենակալք Պեռնայ, որ հզօրագոյն յայնժամ էր քան զամենայն գաւառս, և արարին ժողով ընդհանուր յԱռաւ քաղաք, յայտ առնել Հելուետիացւոց զվերահաս վտանգ ազատութեան և կրօնից յերեսաց Գաղղիացւոց, և գրգռեցին զԼեռնականն՝ արս բիրտս, այլ կրօնասէրս և քաջս, և զինեցին քսան հազար այր 'ի նոցանէ։ Բայց 'ի ժամանակի անդ ժողովոյն՝ բնակիչք Առաւայ ամբոխ արարեալ, կանգնեցին զծառն ազատութեան Գաղղիական ոգւոյ, և թէպէտ 'ի վերայ հասեալ Պեռ-

նացւոց՝ ընկձեցին զնոսա, սակայն 'ի յա-
ճախել անցանել գաւառաց 'ի կողմն Գաղ-
ղիացւոց, և 'ի հակել Պեռնացւոց 'ի զգու-
շութիւն հայրենեաց՝ ջանալով չտալ պատ-
ճառս պատերազմի, յանկարծ 'ի շփոթս
ուրեք սպանեալ եղև նուիրակ ոմն գաղ-
ղիացի, և աստի գրգռեցաւ պատերազմն։
Խուժեցին 'ի նեղքս զօրք թշնամեաց, և խոր-
տակեալ զքաջ հայրենասէր գունդ մարդ-
կան՝ առին զՊեռնա քաղաք, և յափշտա-
կեցին զգանձս զոր գտին անդ։ Նուաճե-
ցան և այլ քաղաքք Հելուետիոյ, և զօրա-
վարն Պրիւն կանգնեաց հասարակապե-
տութիւն Հռոդանեան կամ Հելուետիա-
կան անուանեալ։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Արշաւանք Նափոլէոնի յԵգիպտոս, և համառօ-
տագիծ նկարագիր Բնակչաց աշխարհին։

Իսկ Նափոլէոն 'ի պատրաստութիւնս
արշաւանացն պարապէր ոչ 'ի վերայ Անգ-
լիոյ՝ այլ Եգիպտոսի, մինչև հաւանեցոյց 'ի
նոյն և զոստիկանսն։ Քառասուն հազար
զօրականք էին Նափոլէոնի յարշաւանսն,
բիւր մի նաւասի, և վասն երկամեայ
ժամանակի պատրաստութիւնք համբարոց։
Խօսեցաւ Նափոլէոն ընդ զօրս իւր և վա-
ռեաց զմիտս ամենեցուն 'ի նահատակու-
թիւն, առանց յայտնելոյ թէ յո՞ դիմեալ
երթան։ Քանզի կէսք 'ի Սուէյզ համա-

րէին, այլք 'ի Հնդիկս 'ի Թիկուանս Թիպ-
պու Սահիպայ դաշնակից Թագաւորի, և
ոմանք յԵգիպտոս ասէին։ Այլ ոչ ծածկէր
բանն 'ի զօրագլխաց երթելոց ընդ նմա, որ-
պիսիք էին Պէրթիէ, Քլէպէր, Տըսէ, Լան,
Միւրատ, Պէյլեար, Մընու, Տիւմա, Վո-
պուա, Պրիւէյ և Վիլնէօվ, և եղբայր
սպարապետին Լուդովիկոս Պոնափարթէ
և որդեգրեալն իւր Եւգինէոս, և դապ-
մեծանուն գիտնոց աշխարհին, զորս ընդ
իւր տանէր 'ի քննութիւն հնութեանց և
բնութեան երկրին Եգիպտացւոց։

Եւ Նափոլէոն 'ի Թուլոնէ, և համահա-
ւաքեալ զտորմիղն 'ի Գենուայ և յԱյաչ-
չիոյ և 'ի Զիվիթավեքքիայ 'ի Թիւ չորեք
հարիւրոց նաւաց, խաղաց 'ի Մէլիտինէ
կղզի, որ վատութեամբ և մատնութեամբ
ոմանց՝ անձնատուր եղև առանց կռուոյ. և
փոխանակ նորին այլ ինչ իշխանութիւն
տուաւ 'ի Գերմանիա՝ Փերտինանտոսի Հոմ-
փէչայ՝ գլխաւորի ասպետացն որք իշխէին
կղզւոյն։ Կարգեալ անդ Նափոլէոնի 'ի տե-
սուչ զՎոպուա, ուղղեաց ինքն զչորս իւր յԵ-
գիպտոս. առանց մարտի Թափեաց զզօրս իւր
'ի ցամաք, և անդէն չորեք հազար արամբք
խաղաց յԱղեքսանդրիա, առ 'ի չտալ պա-
տրաստ պատերազմաց մարտի. և կալաւ
զքաղաքն անաշխատ կեղծ պայմանօք պա-
տրեալ զմարդիկն (1798)։ Այլ մինչև մը-
խեալ մեր 'ի վէպս պատերազմաց Եգիպ-
տոսի՝ կարևոր համարիմք կանխել տալ սուղ
բանիւք զնկարագիր և զպայման բնակչաց
աշխարհին։

Բնակիչք էին աշխարհին Ղփտիք քրիս-
տոնեայք, աղքատք և արհամարհք. Արա-
բացիք՝ ոչք 'ի չորս բաժանէին դասս, 'ի
Ճոխս ազնուականս յորոց և շեխք, 'ի տեարս
կալուածոց և արուեստաւորս, 'ի սինքոր
երկրագործ Ֆէլլահս, և 'ի Թափառական
Պէտէվիս։ Ամենեքին ընդ Օսմանեան տէ-
րութեամբ էին յայնժամ, և նատէր անդ
բդեաշխ առաքեալ 'ի դրանէ գնդիւ էնի-
չէրեաց իւրոց։ Կարգեալ էր սուլդան Սէ-
լիմայ գունդս զօրաց Մէմլիւքաց առ 'ի կշիռ
հաւասարութեան պահել զիշխանութիւն
բդեշխին, այլ ընդ հակառակն Մէմլիւքք
զօրացեալ նշխահեցին զտէրութիւն նորա։
Այս ազգ մարդկան Մէմլիւք կամ Մէմլուք
կամ Քէօլէմէնք անուանեալ՝ ստրուկք էին
ածեալք 'ի կովկասայնոց ազանց. յարա-
կիրթք 'ի զէնս՝ քաջալարժք էին 'ի մարտ,
և զօրականք ընտիրք։ Քսան և չորք պէկք էին
նոցա, յաջորդութեամբ որդի 'ի հօրէ ա-
ռեալ զիշխանութիւն, և իւրաքանչիւր ունէր
իւր հինգ կամ վեց հարիւր զօրականս։
Հարկս հարկանէին պէկքն 'ի հպատակացն,
և Թէպէտ հաւասարք էին յիշխանութեան՝
սակայն երբեմն բռնացեալ ոմանց տիրէին
'ի վերայ իշխանակցացն։ Ի ժամանակիս
երկու էին զօրաւորք 'ի նոսա, Իպրահիմ
պէյ՝ այր մեծահարուստ, խորագէտ և հզօր.
և Մուրատ պէյ զօրավար արիասիրտ, քա-
ջակորով և մեծախորհուրդ։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Զոր Նաֆուլէոնի 'ի Գահիրէ, և յաղթութիւն նորա 'ի վերայ Մէմլիւքաց 'ի Կէպրէի և 'ի պաքերաղին Բրգանց, և խորտակումն նաւաց նորա յԱպուքիր։

Յետ նուաճելոյ զԱղեքսանդրիա՝ 'ի խորհուրդս նենգութեան ձեռն արկեալ Պոնափարթէի գողանալ զսիրտ բդեշխին և զժողովրդեան երկրին, գրեաց նախ առ բդեշխն 'ի Գահիրէ ցուցեալ զինքն բարեկամ մեծի դրանն, և եկեալ առ 'ի թափել զաշխարհն 'ի Մէմլիւքաց անտի։ Գրեաց և առ ժողովուրդն աւետելով նոցա ազատութիւն 'ի խիստ լծոյ Մէմլիւքաց, և զի չեք ընդ նոսա խտիր կրօնից, կեղծաւորելով մահմետականութիւն։ Վասն որոյ և յորդոր լինէր իւրոցն յարգել զկրօնս և զսովորութիւն երկրին և քաղցրութեամբ գնալ ընդ բնակիչսն։ Յետ այսորիկ ուղղեալ զկրան յԱղեքսանդրիա, եթող դարձեալ զտեսչութիւն քաղաքին 'ի ձեռս Արաբացւոց, 'ի պահ զգուշութեան թողեալ անդ երեք հազար այր ընդ ձեռամբ Քլէպէրայ զօրավարի, և ինքն չու արար շտապ տագնապաւ 'ի Գահիրէ։

Տեսեալ զօրավարս յառաջապահ բանակին՝ խաղայր զօրօք իւրովք յանապատն, այլ ընդ հնդեւասան փարասխ ճանապարհ ընդ

անբեր և ընդ արևակէզ աւազուտս քաղէին ոգիք զօրականին 'ի Ծարաւոյ, և գրէր նա առ Նափոլէոն. "Եթէ ոչ իբրև զկայծակն անցցէ զօրս ընդ անապատն՝ կորիցեն 'ի սպառ,, ։ Եւ Նափոլէոն ընդ այլ Ճանապարհ ուղղեալ զընթացս 'ի նոյն տագնապ տարակուսի անկանէր ։ Ի լրումն աղէտից նոցա երևեցան սքանչելեաց երևոյթք՝ անծանօթք յաշխարհին իւրեանց. տեսին ծովակ մեծ, ուր իբրև 'ի հայելւոջ երևէին բլուրք աւազակոյտք և երեսք երկրի. հապճեպ տագնապաւ ընթանային հասանել յափն ջրոյն շինջուցանել զծարաւ իւրեանց. այլ 'ի ջերմանալ աւուրն անհրևոյթ եղև տեսիլն՝ պատրեալ զակնկալութիւն զօրականին ։ Ի տուէ տօթ և 'ի գիշերի ցուրտ տանջէր զնոսա, մինչև բոլոր բառնալ զօրացն. այլ իբրև եկն եհաս Նափոլէոն 'ի Տամանիստառ Տրսէ, մխիթարեցաւ զօրն ։ Եւ չուեալ անտի վանելով զդարանամուտս թշնամեաց, եհաս 'ի տեղին՝ ուր աստի Բրդունք, անաի մղկիթք Դահիրեայ և 'ի դիմաց բանակն Մէմլիւքաց երևէին յանդիման. քանզի ժողովեալ զիւրսն Մուրատ պէյ մնայր Գաղղիացւոց ։

Նորոյ հնարից պատերազմի պէտք էին Գաղղիացւոց ընդդէմ բազմագունդ հեծելազօրուն թշնամեաց 'ի դիւրի, զի Պոնապարթեայ չէին հեծեալք. զատոյց նա զհետևակազօրն 'ի հինգ խումբս քառակուսի տողեալ զնոսա և յօդեալ ընդ միմեանս 'ի կողմանէ. զաղխան էդ 'ի բուն բանակին, և

ղԹնդանօԹան յանկիւնս իւրաքանչիւր քա-
ռակուսեացն։ Շարժեցան Մէմլիւքք 'ի
պատերազմ, և ճախր առեալ երիվարքն
խոյանային 'ի վերայ քառակուսի փաղան-
գացն. այլ իբրև հուպ 'ի ԹնդանօԹան մեր-
ձենային, անդէն զատուցեալ անկեանցն՝
հուր 'ի նոսա ԹօԹափէին։ Մեծ եղև ճիգն
նոցա առ 'ի ճեղքել զհրաձիգ պարիսպս և
զնիզակախուռն ցանկս, այլ 'ի զուր արիու-
Թիւն նոցա. յաջողուԹիւն երիվարացն,
բազմուԹի և բուռն ԹափԹ կատաղուԹեան՝
ոչ կարացին ապրեցուցանել զնոսա 'ի ճար-
տարուԹենէ և 'ի զինուցն Գաղղիացւոց։
Խորտակեցան նախ 'ի Կէպրիս և ապա մերձ
'ի Բրգունս. ուր ամենայն զօրքն իւրովք և
ենիչէրեօք մարտեաւ քաջուԹեամբ Մու-
ռատ պէյ, այլ նկուն եղև 'ի բազմահմուտ
քաջուԹենէ Գաղղիացւոց։ Եբաց Գահիրէ
զդրունս իւր առաջի յաղԹականին, անձնա-
տուր եղեն քաղաքքն Տամիադ և Ռոզէդ։
Մուրատ մեկնեցաւ 'ի վերին Եգիպտոս,
զհետ պնդեցաւ նորա Տըսէ զօրավար՝ որ
մեծահռչակ համբաւեցաւ ապա հանճա-
ռոփն, արդարուԹեամբ և խոհական չափա-
ւորուԹեամբ։

Իսկ Նափոլէոն ջանացեալ քաղցրուԹիւ-
յինքն յանկուցանել և զբնակիչս մեծի քա-
ղաքին Գահիրեայ, կարգեաց նոցա զնոյն
տարազ վարչուԹեան՝ զոր յԱղեքսանդրիա.
և գեղեցիկ ակնկալուԹիւն առաջի դնէր
Արաբացւոց կանգնելոյ նոցա վերսին ըզ-
նախկին տէրուԹիւն իւրեանց։

Յետ ոչ բազմաց ինչ աւուրց խուռվեցաւ ցնծութեն աշխարհակալութեան Գաղղիացւոց արկածիւք նաւատորմին իւրեանց ԱՆ-պուքիր։ Քանզի ծովակալն Պրիւէյ խարբսխեալ զերեքտասան նաւս հեռի 'ի միմեանց ընդ ուղղագիծ երկայնութիւն ափանցն՝ ուներ զանցս Նեղոսի, բայց ծովակալն անգղիացի Նելսըն Ճարտարութեամբ անցուցեալ նաւս ինչ յիւրոցն ընդ Ճակատ տորմին թշնամեաց և ընդ ծովափն, յարձակեցաւ աստի և անտի 'ի նոսա։ Գաղղիացիք ըմբռնեալ երկուստեք 'ի հրոյ թշնամւոյն՝ մարտեան յուսահատութեամբ. նաւ ծովապետին հարիւր քսան թնդանօթովք ամբարձաւ յօդս, և այլ նաւ մի հարեալ ընդ ափունս խորտակեցաւ. երկուք ոմանք զերծան, և այլքն ամենայն անձնատուր եղեն։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Խորագիպոլիսն Նափոլէոնի 'ի գողանալ զսիրբ Բնակլաց երկրին, և կրգաւորութիւն վարչութեան աշխարհին։

ԿՈՐՈՒՍԵԱԼ Պոնափարթեայ զտորմիղ նաւուցն, իբրև փակեալ պաշարեցաւ զօրօքն ՅԵգիպտոս, խրախուսեաց զնուրսն ասելով. "Ստիպեն զմեզ թշնամիք մեծամեծս գործել գործս, քան զոր խորհիմքս"։ Եւ յիշատակաւ տօնի հասարակապետութեան վառեալ զմիտս նոցա, տարածեաց զաշխարհակալութիւն իւր, և տիրեաց գաւառին

ոլջոյն։ Եւ այնուհետեւ ձեռն արկանէր ճարտարութիւն, նուաճել և զսիրտս բնակչաց տեղւոյն, ոչ ինչ հակառակելով սովորութեանց, կարգաց և ինքնակամ կրօնից ժողովրդեան տեղւոյն, ածէր զնոսա 'ի սէր ազատութեան, ցուցանէր զշահս օգտից վաճառականութեան և արուեստից. մեծաւ երկիւղածութեամբ խօսէր զօրէնսդրէն Նոցա, և հակամէտ զանձն ցուցանէր 'ի Նոցին կրօնս։ Թուէր յայնժամ 'ի մտի եգեալ Նորա Թագաւորել Յեգիպտոս, և Նովին փառասիրութեամբ վառեալ՝ զամենայն Նենգանս 'ի ձեռն առնոյր։

Իբրև լուաւ զՀանդէս տօնի Նոցա՝ որ 'ի վաղեմի ժամանակաց աւանդեալ էր, յաւուր յորդութեան ջուրցն Նեղոսի՝ 'ի շնորհս բարեաց գետոյն մեծի, եմուտ և ինքն և խառնեցաւ 'ի Հանդէսն որպէս 'ի քաղաքական ինչ և կրօնական տօնս. և 'ի խորանի ուրեք կանգնելոյ Հանդիսատեսս լինէր ընդ բդեշխին Գահիրեայ։ Ի տալ նշանին արկին զանդրի հարսին Նեղոսի 'ի ջուրս, բացին զթումբս, և ծափահար ցնծութեամբ գոչեցին զՄահմէտ և զՆափոլէոն։ Եւ Նորա կացեալ կանգուն՝ ոսկի սփռէր ժողովրդեան, և երեսուն և ութ գլխաւոր սպայից խիլայս զգեցուցանէր պատուոյ, և այլոց երկուց իշխանաց մուշտակս։

Յետ այսորիկ և 'ի Հանդիսի աւուր ծնընդեան Մարգարէի Նոցա երևեալ անձամբ, ադոյց սամուրեանի Էլպէքիր շեխի Նոցա։ Ապա և ինքն կատարեալ զտօն յիշատակի հաս-

տատուԹԵ հասարակապետուԹԵ Գաղղիոյ՝ Ջանայր աղատուԹեան ոգւով վառել և զԵգիպտացիս. տայր կանգնել զեռագոյն դրօշս 'ի ծայրս բրգանց, և հրաւիրէր 'ի կոչունս աւելի քան զերկերիւր իշխանս. խառն գաղղիական և օսմանեան դրօշք ծածանէին շուրջ զսեղանովն, և օրէնք մարդկային իրաւանց ընդ Կուրանին գային 'ի համբոյր միաբանուԹԵ։ Ապա արշաւահանդէս և ձիրնԹացք վախճան առնէին հանդիսին լուսաւորուԹեամբ հանդերձ. ոչ պակասեցին և քերԹողք երգել զաղատուԹի Եգիպտոսի։

Աղատ կացուցանէր զքրիստոնեայս Ղբփոխս 'ի լծոյ գերուԹեան, կարդէր ուսումնարանս 'ի Գահիրէ. և կաՀառորդք ժողովոյն իմաստանոց էին Փուրիէ՝ որ ապա գրագիր եկաց Հեմարանին գիտուԹեանց, ՊէրԹոլլէ բնալոյծ, Մոնժ՝ հայր նկարագրական երկրաչափուԹեան, Տիւպուա վիրաբոյժ ազնուանի, Տէժէնա բժիշկ. և բանասէրքն Լուդովիկոս, Կոստաս, Քլամբի, ժիրար, Սիէյէս նախանՀորդ ՍմիԹայ, և նկարիչն ՈւլտուԹէ, և քերԹողն Փարսըվալ Կրանտմէզոն, և այլք։ Որոշեաց ՊոնափարԹէ չորս կարգս գիտնոց և գիտուԹեանց ուսումնականուԹեան, բնագիտուԹեան, քաղաքական տնտեսուԹեան, և գրականուԹեան ընդ գեղարուեստից։ Կանգնեցան անդէն մատենադարանք, Թանգարան բնագիտուԹեան գործեաց, գիտարան աստղաբաշխուԹեան, պարտէզ բժշկական բուսոց, գործարան տարրաբաշխուԹեան, Թանգա-

րան հնութեանց, և փակարան վայրի կենդանեաց։

Զհետ մեր ուսումնականքն քննելոյ զԵգիպտոս ըստ ամենայն մասանց գիտութեանց. որով առաւել քան զարշաւանացն զքաջարութիւն՝ զգեղեցիկ քննութեանցն հետազօտութիւն թողին յանմահ յիշատակ։ Եւ ըստ խրատու Նափոլէոնի՝ արարին ցանկ կշռոց Եգիպտացւոց և Գաղղիացւոց, բառագիր 'ի գաղղիացի և յարաբացի լեզուս, օրացոյց Եգիպտացւոց և Ղփտոց։ Ապա և կրկին օրագիրս Տաճնեակ և Սուրհանդակ Եգիպտացւոց կոչելով. յորոց առաջինն զուսումնական տնտեսութենէ, և երկրորդն զքաղաքական լրոց Ճառէր։ Կառուցան և այլ կարևոր գործարանք 'ի զարգացումն քաղաքականութեան. մինչև 'ի սակաւ ժամանակի կերպարանափոխ լինէր Գահիրէ, իբրև զմի յերևելի քաղաքաց Եւրոպայ երևեալ։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Խորհուրդ Նափոլէոնի զապստամբս Արաբացւոց, և խաղալ նորա յԱսորիս։

Այս ամենայն հեթեթանք Նափոլէոնի ոչ կարացին պատրել զՄէմլիւքս և զԵգիպտացիս սուտ յուսով ազատութեան. և տեսեալ զի չէ ինչ փոյթ Նափոլէոնի զբարօրութենէ նոցա, այլ և մատնեալ են 'ի հարստահարութիւն զօրականին, պատեհի ժամային թօթափելոյ զլուծ նոցա։ Եւ ահա

յարեաւ խռովութիւն մեծ 'ի Գահիրէ, գրգռութեամբ շեխին Երդուան ժողովուրդն 'ի Մարգարէն բնաջինջ կոտորել զԳաղղիացիս. և յայտարարութիւն արքային Օսմանեանց տարածեալ ընդ ամենայն Եգիպտոս, վառեաց զատելութիւն Եգիպտացւոց ընդդէմ նոցա. որպէս զի եթէ չէր աճապարեալ Նափոլէոնի առնուլ զառաջս մրրկին, վճարեալ էր վասն Գաղղիացւոց: Արդ փութացեալ եկն նա, հալածեաց զԱրաբացիս յանապատն կոյս, և մտեալ 'ի քաղաքն ընկճեաց և զապստամբսն, և խոստացաւ թողութիւն ապաւինելոցն 'ի մզկիթն մեծ: Այլ իբրև մերժեալ նոցա զպատգամն 'ի կռիւ դիմէին, յանկարծ լքուցին զնոսա դէպք գումարման ամպոց և շանթից յերկիր թօթափելոց, մինչև ահաբեկ խոնարհել և խնդրել նեղրումն հաշտութեան: Իսկ Նափոլէոն խստիւ ասր նոցա պատասխանի. "Էանց ժամանակ գթութեան, և զոր սկսայք դուք յանխորհուրդս, արդ ինձ անկ է վախճան առնել,,: Եւ անդէն խորտակեալ զդրունս մզկթին մխեցան 'ի նեղքս Գաղղիացիք, և սուր 'ի կողս եդեալ կոտորեցին զթշնամիս 'ի վրէժ արեան եղբարց իւրեանց սպանելոց 'ի նոցանէ: Ապա խնդիր արար Նափոլէոն առաջնորդաց ապստամբութեան, և զամենեսեան զնոսա 'ի մահ մատնեաց: Պատուհասեաց և զքաղաքն՝ եբարձ զատեան Արաբացւոց և կարգեաց վարչութիւն զինուորական, եդեալ 'ի վերայ նոցա հարկս ծանուցեալս:

Յետ այսորիկ հրաւիրեալ 'ի բնակչաց Լի-
բանանու 'ի քրիստոնէից և 'ի մահմետա-
կանաց, խաղաց յԱսորիս յուսով դիմելոյ
անտի 'ի Հնդիկս 'ի բուն զօրութեան և մե-
ծութեան Անգղիացւոց։ Իսկոյն բանակ նո-
րա ընդ վաթսուն փարսախ երկայնութիւն
անջրդի և ամայի անապատին։ Էառ զԳա-
զա, և խաղաց 'ի Յոպպէ և առաքեաց անդր
զոմն տաճիկ պատգամաւոր խաղաղութեան.
իսկ իշխան քաղաքին սպանեալ զպատգա-
մաւորն՝ յարձակեցաւ 'ի դուրս պատերազ-
մաւ, այլ կորակոր դարձաւ յետս։ Եւ
քրիստոնեայք քաղաքին խնդութիւն խաչ 'ի
ձեռին ելին 'ի դուրս առ Գաղղիացիս, և
ընդունելութիւն սիրոյ և եղբայրութեան
դային 'ի նոցանէ։ Ապա սաստկացաւ պա-
տերազմն և առաւ քաղաքն. մեծ էր յոյժ
կոտորածն, ամենայն ընդդիմակացք ան-
կան 'ի սուր յաղթականին, և գերեալքն
իսկ սրակոտորք եղեն, անկաւ և ախտ մա-
հու 'ի քաղաքին. եմուտ Նափոլէոն յան-
կեղանոցն, քաջալերեաց զզօրականն խո-
թացեալ, և աներկիւղ զննեալ զվէրս նոցա
իւրով ձեռամբ արդահատէր և մխիթարէր.
և 'ի քրիստոնեալ բարեկամացն՝ անայլայլակ
առնէր պատասխանի, թէ "Այս պարտք
են իմ, քանզի սպարապետ եմ զօրուս"։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Պաշարումն Աթէայ և յաղթութիւն Նափոլէոնի 'ի Թափոր և յԱպուտիր 'ի վերայ Օսմանեանց։

ԵԼԵԱԼ Նափոլէոնի 'ի Յոպպէայ խաղաց 'ի Նապղուս այն է Երիքով, այլ ոչ կարացեալ ստանել քաջութեան բնակչաց քաղաքին, եթող զայն և խաղաց 'ի վերայ Աքքեայ, որ է Պտղոմայիս՝ քաղաք վաղեմի կառուցեալ յոտս լերին Կարմեղայ. քանզի յառնուլ զքաղաքս զայս՝ զբուամբ ածէր և զողջոյն Աստրիս։ Այլ ճէզայիր փաշա սպարապետ Օսմանեանց անդ ամրացեալ էր ամենայն գանձուքն, վստահացեալ 'ի Սիտնէյ Սմիտհ անգլիացի և 'ի Փիլիպպոս ճարտարապետ գաղղիացի։ Ամենապարեաց Նափոլէոն մինչ չև հասեալ զօրաց Օսմանեանց 'ի Դամասկոսէ առնուլ զքաղաքն. այլ զի չէին նորա պատրաստութիւնք հրազենուց, եօթն և տասն անգամ յարձակեցաւ զայրագին 'ի վերայ քաղաքին, այլ 'ի դերև ելին ջանք նորա ընդդէմ երկուց մեծանուն ճարտարապետացն Փիլիպպոսի և Սիտնէյայ՝ ոչք քաջութեամբ պաշտպանէին քաղաքին։ Հասեալ Օսմանեանց 'ի Դամասկոսէ և 'ի Նապղուսայ՝ պաշարեցին զզօրս Գաղղիացւոց, բայց ժիւնոյ զօրավար եհար խորտակեաց զնոսա 'ի Նազարէթ. և Պոնափարթէ օգնութեամբ զօրավարացն Քլէպէրայ և Միւ-

բատայ տարաւ յաղթութիւն մեծ 'ի Թա-
փոր։

Եւ յետ ամենայն ճգանցն՝ տեսեալ Նա-
փոլէոնի թէ անմարթ է առնուլ զքաղաքն
Աքքէա, հառաջեալ տրտմութեամբ մե-
ծաւ գարձ առնէր, ասէպ կրկնելով թէ
Սմիտհ խոչընդոտն եղև բաղդի նորա։ Զա-
միսս երկուս նստաւ զքաղաքաւն, և առ
զայրոյթ սրտին ապականեալ զայն հրձգու-
թեամբ, եթող և մեկնեցաւ. և զճանապար-
հայն յաղարտ վարեալ զերկիրն, թողոյր
զահ իւր զկնի։ Եհաս յԵգիպտոս, և
ցրուեալ զապստամբս՝ սպան զառաջնորդ
նոցա զԷլմուհտի ոմն, որ հրեշտակ Աստու-
ծոյ ասէր զանձն և անխոցելի. և խաղաղա-
ցոյց զերկիրն վերստին։

Այլ զօրք Գաղղիացւոց ոչ ևս հանդար-
տէին յօտարութեան, զի յամէ հետէ հե-
ռացեալ էին 'ի հայրենեաց, և ամիսք վեց
անցեալ էին յորմէ հետէ չէր նոցա առեալ
լուր զանցից Եւրոպայ, և ինքն իսկ Նափո-
լէոն կասկածէր զխռովութեանց, սակայն
և ասա առաջի կայր նմա պատերազմ ընդ
Օսմանեանց, որք օգնութեամբ Անգղիա-
ցւոց պատրաստէին 'ի մարտ։ Բախեցաւ
ընդ նոսա յԱպուքիր. անդ ցուցին Գաղ-
ղիացիք արութիւն մեծ, և սպարապետն
զհանճար իւր զարմանալի. 'ի սպառ ջախ-
ջախեցաւ բանակն օսմանեան, և ապրեալքն
'ի սրոյ սակաւք ոմանք անձնատուր եղեն։
Մուստաֆա փաշա և որդի նորա ձերբակալ
լեալ անկան 'ի գերութիւն։ Քլէպէր յետ

յաղթութեանն հասեալ անդէն գիրկս ա-
ծէր Նափոլէոնի, և գոչէր ցնծութեամբ.
“ Մեծ ես արդարև, քաջդ, իբրև զաշ-
խարհ ,, : Զկնի յաղթութեանս անկաւ
Եգիպտոս ընդ իշխանութեամբ Գաղղիա-
ցւոց. և Նափոլէոնի յետ մեծամեծ յաղ-
թութեանցն և արշաւանաց՝ էին տակաւին
քսան և հինգ հազար զօրականք կիրթք և
քաջք. այլ զի անդէտ էր զերրաց Գաղղիոյ,
տագնապէր 'ի սրտին: Առաքեաց պատ-
գամաւոր 'ի տորմիղ նաւուց Օսմանեանց
գիտել ինչ զերրաց Եւրոպայ. 'ի վերայ հա-
սեալ Սմիտհայ իրացն՝ առաքեաց առ Նա-
փոլէոն 'ի ձեռն պատգամաւորի խուրձ մի
օրագրոց. զոր զգիշերն ողջոյն ընթերցեալ
նորա, հաստատեաց 'ի մտի այնուհետև ան-
յապաղ դարձ առնել 'ի Գաղղիա:

ԳԼՈՒԽ Ի.

Գաղղիացիք նուաճեալ զԻպալիա, պարարապին 'ի
մարթ ընդդէմ դաշնակից պէպուռեանց Եւրոպայ:

ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՄԲ Գաղղիացւոց 'ի Մե-
լիտինէ՝ յայտնի եղև խորհուրդ արշաւա-
նաց Նափոլէոնի յԵգիպտոս, աճապարե-
ցին Անգղիացիք զդէմ առնուլ յաղթական
զինուց նոցա. և խորտակմամբ նաւատորմի
նոցա յԵգիպտոս՝ խրախուսեցին 'ի զէն
զթշնամիս Գաղղիոյ, ընդ որս և զթագա-
ւորն Օսմանեանց և զկայսրն Ռուսաց: Եւ
Նէլսըն յաղթական փառաւք եկեալ 'ի Նէա-

պոլիս, շարժէր զԻտալիա ողջոյն և զկայսրն Աւստրիոյ ընդդէմ Գաղղիացւոց, հարկանել զնոսա ամենուստ. Բրուսք միայն և Սպանիացիք ոչ խլրտեցան։

Մինչդեռ դաշնակից պետութիւնք 'ի պատրաստութեան էին, և դեռ ևս երկարէին խորհուրդք ժողովոյ դեսպանացն զնաղալութենէ խորհելով, գիտացեալ ոստիկանաց հասարակապետութեանն զխորհուրդս թշնամեաց իւրեանց՝ կազմեցան և ինքեանք 'ի պատերազմ։ Առաքեցին զօրս յԻռլանտա 'ի Թիկուանս ապստամբաց, այլ խորտակեալ զօրացն՝ ձերբակալ եղև և զօրավար նոցա։

Իսկ յԻտալիա Թագաւորն Նէապոլսոյ բազմաձեռն գունդս զօրաց հանեալ՝ շարժէր 'ի պատերազմ և զԲիէմոնդէ և զՑոսկանա, և յերկմիտս լինել նոցա՝ խաղացոյց ինքն զզօրս իւր ընդդէմ Գաղղիացւոց։ Զօրավարն Շամպիոնէ խոհական խորհրդով տեղի ետ 'ի Հռովմայ, ուր էկն եմուտ Թագաւորն յաղթանակաւ. և ահա գումարեալ Շամպիոնեայ զզօրս իւր և զսպայս՝ եհաս զկնի մեծի բանակի Թագաւորին, եհար, Թափեաց գերի բազում, և բռնադատեաց զարքայն աճապարել դառնալ 'ի քաղաք իւր։ Խռովեցաւ անդէն խառնիճաղանճ Նէապոլսոյ, և դաւաճանութեան կարծելով զդարձն խուճապողական, կամէին ընդ սուր հանել զսպայս և զզօրավարս բանակին, և 'ի զէն դիմեալ ընուին զաշխարհն ապստամբաւ։ Յայնմ շփոթի եթող ալքայն Թագաւորն Փերտինանտոս զՆէա-

պոլիս և էանց գանձուք իւրովք 'ի Սիկիլիա։

Խոնարհեցաւ զօրավարն Մաք 'ի պայմանս դաշանց ընդ Շամիլիոնեայ՝ որ գայր և մերձենայր 'ի քաղաքն. այլ ժողովուրդն աղաղակէր թէ մատնիչ է զօրավարն, մինչև հազիւ Ճողոպրեալ նորա զանձն անկաւ առ Գաղղիացիս. երկուցեալ և քաղաքապետին թողոյր զՆէապոլիս յանիշխանութիւն 'ի ձեռս Լաճծարոնի սինլքոր ռամկին և խոյս տայր։ Եւ Մոլիթէռն իշխան և առաջնորդ Լաճծարոնաց հաւանութեամբ այլոց ոմանց 'ի գլխաւորաց՝ մատնեաց զքաղաքն 'ի Գաղղիացիս. եմուտ Շամիլիոնէ և զինաթափ արարեալ զԼաճծարոնս, փոխեաց զՆէապոլիս 'ի հասարակապետութիւն Պարթենոպեան մականուանեալ (1799)։

Ի նմին ժամանակի զօրավարն Ժիւպէր կալեալ զԴուռին, և բռնագատեալ զթագաւորն հրաժարել 'ի տէրութենէն, եթող 'ի նա զՍարդենիա կղզի միայն։ Այսպէս մինչև խլրտեալ դաշնակցաց, Իտալիա ողջոյն անկանէր ընդ զինուք Գաղղիացւոց։

Այլ որչափ ընդարձակէին հասարակապետութեան սահմանք, այնչափ աճէր վտանգ իշխանութեան ոստիկանացն. քանզի զօրաց պէտք էին բազմութեան և արծաթոյ։ Այրընտիր զօրականն և զօրավարք քաջք յԵգիպտոս էին, և բուն բանակին որ յԵւրոպայ, հիւանդութեամբ և դասալիք փախստեամբ զօրացնուաղեալ էր յոյժ։ Հակառակութիւն վասն իշխանութեան ընդ քաղաքական ոստիկանն և ընդ զինուորական՝

տկարացուցանէր զզօրութիւն հրամանաց, և յապաղէր զկատարումն. ըմբոստութիւն զինուորաց, զրկահարութիւն գործավարաց, զայրագին կատաղութիւն ռամկապետականաց սփռելոց 'ի հասարակապետութեան՝ որք սպառնային հրոյ ճարակ տալ զչէնս, երկիւղ մեծ արկանէր 'ի սիրտս ոստիկանացն թէ մի արդեօք 'ի ձախողել զինուց՝ խռովութիւն 'ի վերայ հասցէ։ Եւ թէպէտ դաշինք խաղաղութեանն կռեալք 'ի Ռաշտատ չև էին լուծեալ, այլ անշուշտ յայտնի երևէր պատրաստութիւն Ռուսաց և Աւստրիոյ. վասն որոյ աճապարեաց ժողովն ոստիկանաց ամրացուցանել զամենայն գաւառս տէրութեանն զօրօք. առաքեաց կացոյց զՊրիւն զօրավար բիւր մի զօրականաւ 'ի Հոլանտա, զՊէռնատոդ 'ի զօրավար բանակին Հռենոսի, զԺուռատան չորիւք բիւրուք յափունս Դանուբայ, զՄասսենա երեք բիւրուք 'ի Հելուետիա, զՇէրեր սպարապետ Իտալական բանակին յիսուն հազարաք, և զՄակտոնալտ 'ի Նէապոլիս երեսուն հազարաւ։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Պարպուռնին Գաղղիացւոց. ապանութիւն գենուպանաց նոցա, և Բուղոֆ ծողովրդեանն։

ԳԵՐՄԱՆԱՑԻՔ խրատեալ աղէտիւք անցեալոց պարտութեանցն, յարուցին զօր սաստիկ և քաջակիրթ երկերիւր քսան և հինգ

հազար այր, կարգեալ զօրավարս ընտիրս՝ զԿարոլոս իշխանն, զՀոց, զՊէլլէկարտ և զՔռայ. իսկ Ռուսք վաթսուն հազար արք քաջք, զօրավար ունէին իւրեանց զանուանին Սուվորով։

Յետ բազում պատրաստութեանց նախամարտիկ յարձակեցան Գաղղիացիք. և Մասսենա զյարձակեալն և զհարկանելն մի արարեալ, զբռամբ ածէր զերկիրն որ զափամբք Հռենոսի, և զօրավարն Լըքուրպ որ 'ի ձեռանէ նորա, յաղթանակէր 'ի վերայ Լաւտոնի զօրավարի կայսեր։ Ապա հրաման եղև և Ժուռտանայ և Շէրէրայ, առաջնոյն՝ անցանել ընդ Հռենոս և խաղալ մինչև ցԴանուբ. երկրորդին ընդ Ատիձէ անցեալ միջամուխ լինել ընդ կիրճս Թիրոլեայ. բայց Ժուռտան խափանեալ ընդ մէջ Դանուբայ և Կոստանցայ լճի՝ ստիպեցաւ բախիլ ընդ մեծի դքսին Կարոլոսի և վաթսուն հազար զօրաց նորա 'ի Սթոքահ. եղև պատերազմ ահագին 'ի տեղւոջն, զառաջինն զօրացան Գաղղիացիք, այլ իբրև Ժուռտան 'ի սպառ 'ի սպուռ ջախջախանս թշնամւոյն՝ հաստուածեալ գունդ մի 'ի բուն բանակէն առաքեաց 'ի Թիկանց պաշարել զնոսա, իրազգած եղև խոհական և քաջ իշխանն Կարոլոս, և խրախուսեալ զիւրսն անդրէն յարձակեցաւ քաջայանդուգն արութեամբ 'ի վերայ Գաղղիացւոց, և մինչև հասեալ գնդի նոցա 'ի Թիկանց՝ կորզեաց 'ի նոցանէ զյաղթութիւնն, և Ժուռտան կորակոր յեաս ընկրկէր յափշտակս Հռենոսի։ Իսկ յԻտալիա

զօրավարն Շէրէր էանց ընդ Ատիճէ, և խորտակեցաւ չարաչար 'ի Մանեանոյ 'ի մեծանուն զօրավարէն Գերմանացւոց Քռայայ, և աճապարեալ տեղի տայր թշնամւոյն. վասն որոյ ատելի լեալ զօրականին՝ եթող զզօրավարութիւնն 'ի Մորոյ, որ իբրև սոսկական զօրագլուխ զինուորէր ընդ ձեռամբ Շէրէրայ, և քաջութեամբ իւրով բազում անգամ ապրեցուցանէր զզօրս 'ի սպառ 'ի սպուռ կոտորածէ: Հայրենասիրութեան ոգւով ընկալաւ նա զզօրավարութիւն սակաւաձեռն գնդին, մինչդեռ թշնամիք զօրացեալ էին, և զօրավարն Ռուսաց Սուվորով՝ այր անուանի յաղթութեամբք 'ի վերայ Լեհաց և Օսմանեանց, վաթսուն հազարաւ գայր գումարէր ընդ Աւստրիացիս. և վեհանձնութեամբ և քաջութեամբ յետս նահանջեցաւ, և բազում զգուշութեամբ անցեալ ընդ Պադոս՝ զկայ էառ յոտս լերանց Գենուայ 'ի քաջադէպ վայրի: Իսկ Սուվորով յաղթանակաւ և 'ի ձայն ցնծութեան Իտալացւոց՝ իբրև ազատարար Իտալիոյ անցեալ ընդ քաղաքս՝ զհետ պնդէր նորա. և եթէ ոչ էր դանդաղեալ՝ կոտորած անճողոպրելի մնայր Գաղղիացւոց:

Յաւուր յորում յետս նահանջէր Մորոյ, սպանան դեսպանք Գաղղիացւոց 'ի Ռաշտատ. քանզի չև էր լուծեալ ժողովոյն գումարելոյ 'ի խորհուրդ և 'ի պայմանս խաղաղութեան, և թէպէտ Գաղղիա պատերազմէր ընդ կայսեր, այլ տէրութիւնք Գերմանական դաշնակցութեան պահէին

զհաշտութիւն. և իբրև բազումք 'ի նոցանէ միաբանեալ ընդ կայսեր՝ յետս զդեսպանս իւրեանց կոչեցին, յայնժամ և հասարակապետութիւնն Գաղղիոյ հրաման առաքեաց իւրոցն դառնալ յետս: Այն ինչ եղեն նոքա 'ի քաղաքէն, յարձակեալ զկնի նոցա հեծելոց Աւստրիացւոց՝ սպանին զնոսա, մինչ հազիւ միոյ ուրուք 'ի նոցանէ վիրալից մազապուր զերծանել:

Եւ ամբարձին անդէն թագաւորականք և ռամկավարք զձայնս իւրեանց 'ի Գաղղիա ընդդէմ ոստիկանացն. զի ոչ բարւոք խնամ կալան պատրաստութեանց պատերազմին, և զհինաւուրց զօրականն փոխանակ յարձակելոյ ընդդէմ թշնամեաց, պահեալ էին 'ի հասս առնել զթիկունս իւրեանց, և յոտին պահել զբռնակալութիւնն. զարս քաջս և զվաստակաւորս արկին յիշխանութենէ զՇամփիոնէ, զՄորոյ, զԺուպէր, զՕժերոյ, և ետուն զզօրավարութիւնն Իտալիոյ 'ի Շէրէր, իբր զի հայրենակից էր Ռէվպէլայ. և դարձեալ ձախողակ խորհրդով, կամ թէ թշնամութեամբ իսկ, զդիւցազունս նահատակս Իտալիոյ՝ զՆափոլէոն, զՔլէպէր, զՏրսէ և զքառասուն հազար սպայս և զօրս յանապատս Եգիպտոսի 'ի կորուստ յուղարկեցին. անիրաւ անխոհական խորհրդով մտեալ 'ի Հելուետիա, 'ի Հռովմ, 'ի Նեապոլիս, գրգռեցին զկայսրն 'ի պատերազմ. փառասէր խորհրդով արշաւանաց յԵգիպտոս՝ թշնամի յարուցին իւրեանց զՕսմանեանս, պարապ ետուն և Ռուսաց

յարձակել յԻտալիա, նա և դաւաճանութեան դեսպանացն 'ի Ռաշտադ զնոսին զոստիկանն վարկանէին պատճառս, զի սպանութեամբ այնպիսեաւ վառեսցեն զսիրտս ազգին 'ի պատերազմ: Եւ այս բոլոր հնչէր յայտնի յատեանս, յօրագիրս և 'ի ժողովս ռամկին: Գայր և ժուռատան 'ի փարիզ բոլորքեալ զոստիկանացն, որք բազմապատիկ հնարիւք ջանային արդարացուցանել զանձինս, և իբր 'ի հաճոյս ժողովրդեան փոխանակ Ռէվոլէլայ կարգեցին զՍիէյէս զայր մեծանուն, որ դեսպանութեամբ գնացեալ էր յայնժամ 'ի Պէռլին:

ԳԼՈՒԽ ԻԲ.

Դարձեալ խորհրդոցն Գաղղիացւոց յԻտալիա և 'ի Հոլանդա, և առանձին խոռվութիւնք քաղաքականք:

ՄԻՆՉԴԵՌ Մորոյ տեղի տուեալ զօրութեան թշնամեաց՝ մեկնէր 'ի Գենուա, և զօրավարն Մակառնալտ թողեալ զՆէապոլիս համագունդ զօրօք իւրովք գայր 'ի վերայ թշնամեաց, Սուվորով մտեալ էր 'ի Դուռին. Պէլլէկարտ ունէր զկիրճս Գենուայ ընդդէմ զօրաց Մորոյի, Քռայ պաշարէր զՄանդուա և զմիջնաբերդն Մեդիոլանու: Լուեալ Սուվորովայ զգալուստ Մաքտոնալայ՝ աճապարեաց ազդ արար և այլոց զօրավարաց՝ գալ ժողովել առ ինքն, եթող միայն զՊէլլէկարտ ընդդէմ Մորոյի: Իսկ

Մակտոնալտ զօրացեալ 'ի վերայ գնդի միոյ թշնամեաց, խրախուսեաց տալ պատերազմ ընդ Սուվորովայ և ընդ Նիզակակցաց նորա: Բախեցան ընդ միմեանս ոստիքն, և եղև պատերազմ մեծ և բազումք անկան երկուստեք, այլ տեղի ետուն Գաղղիացիք՝ կորուսեալ 'ի գիշերին զբազումս 'ի զօրաց: Ի վաղիւ անդր սաստկագոյն ևս հարան ընդ միմեանս, և յետ բազում Ճապաղեաց արեան վերստին խորտակեցան Գաղղիացիք: Դարձեալ և 'ի Թրեպիա բախեցաւ Մակտոնալտ ընդ Ռուսս, և զաւուրս երիս արիւնրռուշտ մղեալ պատերազմ, հարաւ չարաչար և վանեցաւ անդր քան զԱպենեանս. Եմուտ 'ի Գենուա, որ միայն մնացեալ էր Գաղղիացւոց 'ի մեծ աշխարհակալութենէ նոցա Իտալիա և 'ի Գերմանիա:

Ընդ լուր աղետից կոտորածոց և կորստեան Իտալիոյ, առաւել ևս համարձակութիւն առեալ հակառակորդացն 'ի Գաղղիա, և յայտնի սպառնային ոստիկանաց փոխել զայն ազգ վարչութեան անկարգ և բռնաւորական. և զօրաւիգն մեծ լինէին այնմ Սիէյէս և Պառա: Թէպէտ և հակառակորդք ոստիկանաց բաժանեալ էին յայլազան կարծիս՝ 'ի ռամկավարս 'ի միապետականս և 'ի սահմանաւոր թագաւորականս, այլ միաբանէին 'ի կործանել զոստիկանացն վարչութիւն: Շատ ջանաց Լարէվէյլէր ընդդէմ յարուցելոյ մրրկին, այլ անհնար էր դարման տանել իրացն. և փոխեցան անդէն Թրէյլառ, Մէրլէն և Լարէվէյլէր, և 'ի տեղի

նոցա ընտրեցան Կոթիէ, Ռոժէ-Տիւքոյ և Մուլէն. որք թէպէտ և ոչ էին արք անուանիք և ճարտարք 'ի վարչութիւն, այլ սիրողք հասարակապետութեան ճանաչէին: Փոխեցան յայնժամ և այլ պաշտօնեայք պետութեան. Պէռնատոդ Իշխան և պաշտօնեայ կացեալ պատերազմի, ընտրեաց զԺուպէր զօրավար բանակին Իտալիոյ, որ զկաց մնաց զօրուն և զփախստականսն ժողովեալ արս քառասուն հազար՝ եդ 'ի մոի յաղթել կամ մեռանել քաջութեամբ: Եւ այսու յանդուգն արութեամբ բախեցաւ ընդ թշնամիս 'ի Նովի, և անկաւ ինքն և չորք 'ի զօրավարաց և բազումք 'ի զօրաց. և մնացեալքն իբրև զփոշի առաջի հողմոյ, ըստ բանի ուրումն Գաղղիացւոյ ականատես սպայի, հոսեալ ցրուեցան:

Զախողեցին դէպք պատերազմաց Գաղղիացւոց և 'ի Հոլանտա. քանզի Անդղիացիք և Ռուսք թափեցին անդր բանակ հզօր երկրախումբ զօրաց. թէպէտ և աճապարեաց Պրիւն զօրավար Եօթնևատան հազարաւ, այլ վատթարեալ առաջի թշնամեաց, հալածական երթայր:

Ի լուր այսքանեաց աղէտից՝ յուզեալ վերսին ռամկավարացն Ժաքոպէնաց, գումարեցան 'ի Ժողովարան իւրեանց, ունելով առաջնորդս զՊուշէ, զՏրուէ, զՓելիքս և զԱրենա զկուսակիցս Պապէօֆայ, և համարձակեալ խնդրէին վրէժս ընդդէմ հարըստահարողաց ազգին, զինել զխառնիճաղանճն և մերժել զթագաւորական, 'ի

դատ կոչէլ և զՀին ոստիկանն։ Ողորմ էր յայնժամ տեսչութիւն Գաղղիոյ արտաքուստ, և ողորմագոյն 'ի ներքուստ. աճապարեաց Սիէյէս ցրուել զժողով Ժաքոբինաց, սակայն նոքա բարձրագոյն ևս գոչէին ընդդէմ նորա իբրև ընդդէմ մատնչի հայրենեաց։ Կամէր զօրավարն Ժուռատան ծանուցանել ժողովրդեան զվտանգ հայրենեաց. այլ խոհականագոյնք հակառակ կացին նմա, զի մի որպէս երբեմն յանիշխանութիւն գլեցի Գաղղիա։ Եւ 'ի տագնապս անդ յիշեցին ամենեքեան և դարձուցին զաչս իւրեանց 'ի Նափոլէոն։

Յետ մեծի կոտորածին Գաղղիացւոց Յիտալիա և անկման զօրավարին Ժուպէրայ 'ի Նովի, փութայր Սուվորով անցանել ընդ Ալպեանս՝ երթալ միանալ ընդ Աւստրիացիս 'ի Հելուետիա. այլ ասա վախճան էառ յաջողութիւն զինուց նորա. քանզի եհաս անկաւ Մասսենա 'ի վերայ գնդի միոյ զօրաց նորա մերձ 'ի Ցուրիկ, եհար և խորտակեաց. և Լըքուրպ հարուածեալ զՍուվորով հալածական տանէր։ Նորա արհամարհեալ զամենայն խոչընդոտն թշնամւոյն և անցեալ արութեամբ ընդ կիրճս և ընդ ժայռս, յաւուր միում զկնի երկար չուոյ եկ հանդէպ անմատոյց լերին ձեամբ ծածկելոյ. ընդ տեսիլ ահաւոր դժուարութեան անցիցն զօրականք նորա խոնջք զտեղի առին, ձայն բարձեալ՝ թէ ոչ ևս կարեն իսաղալ յառաջ։ Սուվորով ոչինչ եցոյց հակառակութիւն, այլ արարեալ փոս 'ի ձեան անդ յանդիման

զօրացն և ընկողմանեալ, ասէ. “Երթայք ցուցէք Եւրոպայ, զի աստ թաղեցէք զզօրավար ձեր,,: Բանն հակիրճ և ազգողական խրախուսեաց զարուեթիւն նոցա. Եղին ընդ լեառն, և Ճողոպրեցան 'ի ձեռաց Գաղղիացւոց. և այսպէս դարձ արար Սուվորով յաշխարհ իւր:

Բայց թէպէտ և յետին յաղթութեամբն ոգի առին Գաղղիացիք, այլ 'ի յարափոխ յեղմունս յաջողութեան և ձախողութեան տկարացեալ առանին և արտաքոյ, երթային և 'ի կործանումն դիմէին: Եւ յետ բազմադիմի անիշխանութեանն ռամկին, ազգի ազգի անօգուտ կարգաց տեսչութեանն, հանդերձէր խռովութիւնն Գաղղիական երթալ դադարել յինքնակալութիւն զինուորական, և անկանել 'ի ձեռս քաջագունին 'ի զօրավարս:

ՀԻՍՊԱՏՈՍՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա.

Դարձ Նափոլէոնի 'ի Փարիզ, և փոխել զվարչութիւն հասարակապետութեանն 'ի հիւպատոսութիւն:

Յետ յաղթութեանն յԱպուքիր՝ և 'ի սպառ վանելոյ զՕսմանեանս, իմացեալ Նափոլէոնի զաղէտս հասարակապետութեան, և զի կոչէին զնա բազումք 'ի Գաղղիա ընդդէմ կամաց ոստիկանացն, հատատեաց 'ի մտի փորձել զբաղդ իւր, և դարձ առնել 'ի Գաղղիա: Ծանոյց զիսորհուրդ իւր Քլէպէրայ, փախանակ իւր կարգեալ զնա յԵգիպտոս. և առեալ ընդ իւր զՊէրթիէ, զԼան, զՄիւրատ, զԱնտրէոսի, զՄարմոն, զՊէրթոլէ զքաջ զօրագլուխսն և զՄոնժ իմաստասէր՝ եկ 'ի նաւ. և անցեալ ընդ Միջերկրականն՝ Ճողոպրեաց զանձն անակնկալ բաղդիւ 'ի նաւուցն Անգղիացւոց, և մերձեցաւ յափունս Պրովինկիոյ 'ի Ֆրէժիւս: Ընդ առաջ ընթացան ժողովուրդքն փառ խնդութեամբ, և արհամարհեալ զօրէնս զգուշութեան՝ խառնեցան 'ի նաւս նորա, որով և

ազատութիւն լեալ զօրավարին չմոռանելոյ 'ի մաքրարանն, եմուտ 'ի կառս և դէպ ուղիղ Ճանապարհ արար 'ի Փարիզ։ Յամենայն քաղաքս խնդութեամբ ընդ առաջ ելանէին նմա ժողովուրդք, և գիւղականք հնչեցուցանէին զանգակս։

Հասեալ 'ի Փարիզ, յետ երկուց ժամուց չոգաւ առ Կոմիէ նախագահ ոստիկանացն. 'ի տեսանել զնա պահապան գնդին, սկսան գոչել "Կեցցէ Նափոլէոն"։ Ծանոյց անդէն Նափոլէոն ոստիկանացն զպայման Եգիպտոսի, և զպատճառս գալստեան իւրոյ. և նոքա թէպէտ և ահաբեկք 'ի սրտէ՝ առ երեսս խնդութեամբ ընկալան զնա։ Եւ ժողովէին առ Նափոլէոն ամենայն զօրավարք և պաշտօնեայք պետութեան. իսկ նա խոհական խորհրդով թագուցանէր զանձն 'ի բազմութենէ, և 'ի ծածուկ դիտէր զմիտս նոցա։ Կոմիէ և Մուլէն սիրողք հասարակապետութեան և հակառակողք զինուորական իշխանութեան և Նափոլէոնի, խորհեցան զօրավարութեան պայմանաւ արձակել զնա ուր և կամիցի։ Այլ նորա պատճառանս պատճառելով թէ խոնջ իցէ յաշխատութեց, ոչ հնազանդեցաւ կամաց նոցա։ Եւ յետ այսորիկ յինքն յանկոյց յոստիկանաց զՍիէյէս և զՌոժէ-Տիւքոյ. կամէր և Պառա 'ի նոցա կողմն անցանել, այլ Նափոլէոն ատեայր զմեղկ և զլոյծ կեանս նորա։ Եւ այսպէս կէսք վասն պայծառ յաղթութեանցն զարմացեալ ընդ նա, այլք դժկամակք ընդ իշխանութիւն ոստիկանաց,

և ոմանք ցանկութեամբ փառաց և ակնկալութեամբ փոփոխութեան բաղդի՝ միաբանեցան ընդ Նափոլէոնի։

Եւ իբրև զօրացոյց նա զթիկունս իւր, կարգեալ զամենայն կարևոր պատրաստութիւնս, չոքաւ առ ոտիկանն, բողոք եբարձ 'ի դիմաց ազգին և ասէ. "Այս այն Գաղղիա է զոր թողի ձեզ մեծափառ. 'ի խաղաղութեան թողի, և 'ի պատերազմունս դառնեմ. յաղթական թողի, և արդ պարտեալ և տագնապեալ դառնեմ յերեսաց թշնամեաց։ Ո՞ւր են տան բիւր զօրականքն, ընկերք փառաց իմոց. ամենեքեան 'ի կերակուր սրոյ թշնամեաց"։ Զայս ասացեալ, յուցանէր զանձն եկեալ 'ի դարման չարեացն. և անդէն երկուք յոստիկանացն Սիէյէս և Ռոժէ–Տիւքոյ՝ հրաժեշտ եառուն յիշխանութենէ իւրեանց. երեք իշխանակիցք նոցա կամեցան ընդդէմ կալ, այլ ոչ անսաց նոցա զօրականն. Պառա յուսահատեալ հրաժարեցաւ և ինքն յիշխանութենէ. Մուլէն և Կոթիէ 'ի դիպահոլ եդան։ Անտի չոքաւ Նափոլէոն 'ի ժողով ծերոց ազգառնել՝ թէ ժամ է արդ փոխել զկարգ հասարակապետութեան 'ի լաւագոյն պայման 'ի բարօրութիւն Գաղղիոյ։ Նոքա զառաջինն ընդդէմ կացին, և յետ երկար յուզելոյ՝ ապա հաւանեալ կուսակցաց Պոնապարթեայ հնազանդեցան։ Ի նոցանէ փոխեցաւ Պոնապարթէ 'ի ժողովն հինգհարիւրոց. և անդէն բազմաց 'ի վերայ հասեալ կամաց նորա, աղաղակեցին զայրագնեալք. "Անկցի

բռնաւորն, սպանցին ոստիկանքն ,, : Եւ ոմն 'ի նոցանէ յանդուգն՝ խիզախեաց ընդդէմ Նափոլէոնի վաղակաւոր 'ի ձեռին, յորմէ երկուցեալ աճապարեաց նա խոյս տալ 'ի Ժողովոյն. այլ խրախուսեալ 'ի բարեկամաց մի այնպէս վաղվաղակի թողուլ զառաձեռն յաղթութիւնն, հրաման ետ և 'ի նեղքս խուժեցին զօրականք : Ազդ արար զօրավարն նուիրակաց Ժողովոյն ցրուել անսի, և իբրև ընդդէմ դնէին, գոչեաց նա. “Յառաջ մատիք զօրականք ,, : Եւ ահա անդէն դղրդեցաւ Ժողովն. կէսք 'ի դրուն դիմեցին, այլք ընդ պատուհանս արկեալ զանձինս՝ խոյս ետուն ընդ պարտէզն, մերկացեալ յանձանց զզգեստս և զնշանս պատուոյն : Փութացաւ Նափոլէոն գումարել նոր Ժողով 'ի կուսակցաց իւրոց, որք յօրինեցին արագ արագ սահմանադրութիւն այլ. յերկուս զատուցեալ Ժողովս՝ յօրինադիրս և 'ի Ծերակոյտ. և փոխանակ ոստիկանացն կարգեցին երիս հիւպատոսս տասնամեայ իշխանութեամբ, տուեալ առաջնոյն իշխանութիւն գերագոյն քան զայլոցն, որ և եկաց Պոնափարթէ, և իշխանակիցք նորուն Սիէյէս և Ռոժէ-Տիւքոյ : Եւ այս եղև 'ի տասներորդում աւուր ամսեան նոյեմբերի յամին 1799 :

ԳԼՈՒԽ Բ.

Հոգ խնամոց Նափոլէոնի 'ի կարգել զոտոնին իր պէպոլէան, և կալ զարքեալ սպարապետ Իտալական բանակին:

ԲՆԱԿԻՉՔ Փարիզու սովորեալք 'ի խռովութիւնս, տեսողք միայն եղեն 'ի հեռուստ փոփոխութեան վարչութեանն. ազգն տառապեալ յայնքան խռովութենց և 'ի հերձուածոց, լքեալ, արհամարհեալ և մատնեալ յանիշխանութիւն, քաջ տեսանէր զինքս ռամկավար ազատութեան և զկարեւոր հարկ միապետական իշխանութեան: Եւ դարձեալ, ամենայն ոք յիւր կողմն համարէր զՊոնափարթէ. թագաւորականք հաստիչ գահուն և նորոգիչ թագաւորութեանն զնա վարկանէին. սահմանաւոր հասարակապետականք սիրէին զնա իբրև դիւցազն և ծնունդ խռովայոյզ ապատամբութեան, և ակն ունէին 'ի ձեռն նորա հաստատիմն ամրացուցանել զազատութիւն: Սակաւք էին յոյժ գուշակք հանդերձելոցն, այլ և սոքա քան 'ի միապետութենէ, յազատ անիշխանութենէ երկնչէին: Մուսացոնք եղեն նոցա, զի զայն որ զդիակունս եղբարց իւրեանց քաղաքակցաց ափռեաց 'ի փողոցս մայրաքաղաքին՝ կարգէին իւրեանց յիշխան. և անդիտացան ամենևին թէ քանի՞ արեանց և արտասուաց լեցի նա պատ-

ճառք երկար տիրապետութեամբն իւրով։ Այսպէս անգիտացեալ նոցա գործակից լինէին նախատեսս խորհրդոցն Աստուծոյ, կարգելով իւրեանց գլուխ զհանդերձեալ գաւազանն բարկութեան երկնից 'ի վերայ Եւրոպայ, և զկատարիչ արդարութեան նորա ընդդէմ ժողովրդեան, յորոց միջի բարձրագլուխ սիգային առաջնորդք և պատճառք չարեաց ապստամբութեան։

Առաջին փոյթ հիւպատոսացն եղև խնամ ունել ուղղելոյ զառտնին իրս. Նափոլէոն բաշխէր զբարձս աւագութեան կուսակցաց իւրոց, բառնայր եղծանէր զօրէնս պատանդից և զբռնաբար հարկաց՝ զոր 'ի մեծատանցն պահանջէին. հրաման ազատութեան հանէր քահանայից դառնալ 'ի հայրենիս իւրեանց 'ի Գաղղիա. և պատուհաս 'ի վերայ կապէր՝ որոց ընդդէմն կացցեն հիւպատոսական իշխանութեան։

Եւ յետ զառտնին իրս հոգալոյ աճապարեաց Նափոլէոն 'ի հաշտութիւն խաղաղութեան հրաւիրել զԱնգղիա. այլ նա մերժեաց և զպայմանսն և զհաշտութիւն. քանզի օգտակարագոյն համարէր զպատերազմ առ 'ի շահ տուրևառիկ վաճառականութեան իւրոյ, զոր բռնակալեալ ունէր։ Քանզի զօրացեալ 'ի վերայ Ովկիանու բազմութեամբ նաւուցն, առ ոտս կոխէր զօրէնս աղգաց, հասանէր ունէր զամենայն նաւս եկեալս 'ի նաւահանգստից թշնամեաց, ոչ առնելով խիլս ընդ թշնամի և ընդ խաղաղասէր։ Ընդ որ ցասուցեալ ինք-

նակալին Ռուսաց՝ որ դաշնակիցն էր Անգ-
ղիոյ բաժանեցաւ 'ի նմանէ. ապա շարժեալ
և յաղնուական մտաց Պոնափարթեայ՝ որ,
առանց փրկանաց յաղատութիւն ելթող
զգերեալս 'ի Ռուսաց, կապեցաւ ընդ նմա
հակառակ Անգղիացւոց. զչարեալ մանա-
ւանդ ընդ հուղկահարութիւն նոցա 'ի վե-
րայ ծովու, արարին դաշնակցութիւն ծո-
վային, յոր մտին ամենայն հիւսիսային տէ-
րութիւնք՝ Սուեդք, Դանիք և Բրուսք, և
եդին իւրեանց կէտ նպատակի՝ միաբանու-
թեամբ ընդ Գաղղիոյ և ընդ Միացեալ նա-
հանգաց Ամերիկոյ պաշտպանել զազատու-
թիւն վաճառականութեան, և խորտակել
զզօրութիւն բռնակալութեան Անգղիացւոց
(1800):

ԳԼՈՒԽ Գ.

Յաղթութիւն Նափոլէոնի 'ի Մարենգոյ:

Եւ զի հանապազորդեր Փրանկիսկոս
կայսր Աւստրիոյ 'ի պատերազմ ընդդէմ հա-
սարակապետութեան օգնականութիւն Անգ-
ղիացւոց, պատրաստեցաւ և Նափոլէոն
ամենայն զօրութեամբ հասարակապետու-
թեան ընդդէմ նոցա: Արդ 'ի բանակ դրանց
գարնայնոյն՝ խաղացոյց Նափոլէոն զզօրս իւր
ընդ Հռենոս և ընդ Ալպեանս. զօրացն Հռե-
նոսի զօրավար եկաց Մորոյ, և Իտալական
բանակին ինքնին առաջին հիւպատոսն: Խա-
ղաց դնաց նա զօրօք իւրովք 'ի Գենուա, և

անսի չու արար ունել զկիրճս Ալպեանց, ըմբռնել յեղակարծում 'ի Թիկանց զզօրաւարն Աւստրիացւոց զՄելաս, որ տարաձեալ էր զբազմութիւն զօրաց իւրոց 'ի Գենուայ մինչև ցեզերս Վար գետոյ։ Կազմեցաւ պատրաստեցաւ զօրն անցանել ընդ գագաթունս Ալպեանց հանդերձ ահաւոր պատրաստութեամբ հրազինուց, զոր բարձեալ 'ի Ջորիս հասին 'ի վանս սրբոյն Բեռնարդոսի. և անտի զատուցաւ Մոնսէյ զօրավար հնգետասան հազարաւ խաղալ 'ի Սուրբն Կոդդարտոս լեառն, և իջանել 'ի Պելլինցոնա, և այլ կրկին հատուածք զօրաց առաքեցան ընդ Սէմպլոն և ընդ լեառն Սընի։ Անդ էր տեսանել զարութիւն սնդութեան Գաղղիացւոց 'ի հատանել անցանել ընդ ժայռս, ընդ սառնամանիս և ընդ գիզադէզ կուտակութիւն ձեանց, ըստ նմանութեան քաջամարտկացն Աննիբաղայ, և պատերազմական երգոք խրախուսեալ զեռանդն ոգւոց, զամենայն զխոչ և զխութ արհամարհել. 'ի դժուարին ուրեք տեղւոջ՝ ընդ որ անմարթ թուէր անցանել, քաջն Պէրթիէ և Մարէսքոյ խելս իմացեալ՝ սատիճանս գործեցին 'ի ժայռսն, և ընդ այն անցուցին զզօրս և զերիվարս. և յետ բազում ճգանց և ծանր աշխատութեան հասին 'ի ծայրս Ալպեանց հետևակազօրն և հեծելագունդ, և ամենայն կազմութիւն պատրաստութեան նոցա։

Մինչդեռ յանհոգս կայր Մելաս եօթնեւտասն հազար զօրօք յափունս Պադոսի,

և զօրավարն Օթ քսան և հինգ հազարաւ սնդէր զպաշարումն Գենուայ ընդդէմ զօրավարին Մասսենայ, խաղացոյց Նափոլէոն զիւրան ընդ կողմն գետոյն, վանեաց զդունդս թշնամեաց, և անցեալ ընդ Ատտա գետ՝ էառ զՊերկամոյ և զՔրեմոնա։ Ազատարեաց Մելաս գումարել զզօրութիւնս իւր, հրամայեաց թողուլ և զպաշարումն Գենուայ՝ որ մերձ էր յանձնատուր լինել, և գալ ժողովել առ ինքն։ Այլ Պոնափարթեայ երագեալ քան զնոսա էանց ընդ Պադոս, եհար խորտակեաց զհատուածս զօրաց թշնամեաց 'ի Մոնթէ-Պելլոյ. մինչև հապճեպ տագնապաւ գումարեցան նոքա ընդ Մելասայ 'ի Մարենկոյ, որ մեծանուն հուչակեցաւ ապա յաղթութեամբն Գաղղիացւոց։

Ի վաղիւ անդր ճակատեցան երկոքին կողմանքն 'ի մարտ. Մելաս միագունդ ամրացուցեալ էր զզօրսն, իսկ հիւպատոսն տարածեաց զճակատ զօրաց իւրոց, 'ի մէջ փակել զթշնամիս։ Զոր իմացեալ զօրավարին գերմանացւոյ, դրոհ էտ քաջութեամբ քառասուն հազար այրընտիր հինաւուրց զօրոք 'ի բուն բանակն Գաղղիացւոց, որ քսան և երեք հազար արք միայն էին և նորավարժք, և յետս վանեալ զնոսա, յերկուս բաժանեաց զյաղթական զօրս, յարձակեցաւ յաջ և յահեակ 'ի թևս բանակին, և շփոթեաց զամենեսին։ Մինչդեռ սպառասպուռ ջախջախանք 'ի վերայ կային զօրացն Գաղղիացւոց, ահա տեսաւ 'ի հեռուստ մերիկ փոշւոյ՝ որ դայր մերձենայր, 'ի տեղի

մարտին. յայնժամ լքան յաղթականքն, և ոգի առ գունդն Պոնտափարթեայ։ Ժամանեաց զօրավարն Տրոէ, որոյ այն ինչ դարձ արարեալ յԵգիպտոսէ գնդովք իւրովք, աճապարեալ էր յասպարէզ մարտին. և միագունդ բախեալ ընդ ցիր և ցան վայրատեալ թշնամիս՝ եհար զնոսա չարաչար։ Անդէն այլ գունդ Աւստրիացւոց ամրակուռ փաղանգ կազմեալ խաղային յահեակ թև թշնամեաց. յարձակեցաւ 'ի վերայ նոցա Տրոէ, այլ հարեալ 'ի հրաձիգնուց անկաւ մեռեալ։ Ի վրէժ արեան քաջի զօրավարին խրախուսեալ Գաղղիացւոց՝ գիմեցին 'ի վերայ ահաւոր փաղանգին, և դղրդեալ շփոթեցին զռազմն նորա. եհաս 'ի վերայ հեծելազօրքն և քաջն Քէլէրման, և խրախոյս բարձեալ՝ տարան յաղթութիւն մեծ յաւուր յայնմիկ։

Աճապարեաց Մելաս երկիւղիւ խօսել 'ի հաշտութիւն. և ընդ հուպ դաշնակցութեամբն Աղեքսանդրիոյ կալան Գաղղիացիք վերստին զամենայն գաւառս Իտալիոյ, բաց 'ի Մանդուայ։ Այլ հաշտութիւնս այս դաշնակցութիւն իմն էր զինուորական. 'ի յաղթութիւն զօրացն Դանուբայ հաստատեալ կային պայմանքն և փառք Գաղղիոյ։

ԳԼՈՒԽ Դ.

Զօրանալ Գաղղիացւոց և խոնարհեցուցանել ըղկայսրն 'ի հաղարանին։ Թողուլնոցա պեպիպոս։

ՄԻՆՉԴԵՌ Նափոլէոն ընդ Իտալիա արշաւէր, Մորոյ միսեալ 'ի Գերմանիա զբռամբ առնոյր զկարևոր ամրոցն Սթոքաք. և բազումս ուրեք խորտակեալ զթշնամին՝ հասանէր յԱւսպուրկ քաղաք, և 'ի դաշտին Հոխշդէտայ կանգնէր յաղթութիւն մեծ՝ և անտի անցեալ 'ի Նէօպուրկ տարաւ այլ նոր յաղթութիւն։

Սասանեցաւ կայսրն ընդ լուր յաջողութեան զինուց հասարակապետութեան, և զօր սաստիկ յարոյց յաշխարհէն՝ պնդեալ զդաշինս նիզակակցութեան ընդ Անգղիոյ, որ հակառակ կայր միշտ խաղաղութեան։ Շարժեցան անդէն բանակք զօրաց. և մեծ դուքսն Յովհաննէս հարիւր քսան հազարաւ խաղաց ընդ առաջ յաղթական բանակին Գաղղիացւոց, և բազմութեամբ զօրաց խորհէր 'ի մէջ փակել զթշնամին 'ի լայնատարած դաշտս Անցինկայ։ Գիտաց Մորոյ զխորհուրդս նորա, և ճարտարութեամբ փակեաց զԳերմանացիս յանձուկս ընդ մէջ կրճիցն Թիրոլայ՝ ընդ գիւղն Հոհէնլինտէն և ընդ անտառն. պաշարեալ և 'ի թիկանց, ե հար երկուստեք և խուճապեցուցեալ զնոսա, տարաւ յաղթութիւն մեծ. Էառ և

զՍալսպուրկ քաղաք, և խաղացեալ անտի յաղթական զինուք 'ի Վենետիկ, սասանեցոյց զկայսրն 'ի մայրաքաղաքի իւրում։ Արդարև մեծ եղեն փառք Մորոյի քան զՊոնապարթեայ, որ 'ի քսան և հինգ աւուրս չորիցս խորտակեաց զթշնամիս, պակաս արար 'ի նոցանէ տասն բիւր մարդիկ, թափեաց թնդանօթս հարիւր, քսան և հինգ հազար գերիս, և ստիպեաց զկայսրն խօսել 'ի հաշտութիւն՝ թողեալ զդաշնակցութիւն Անգղիոյ։

Մինչդեռ յաղթական զինուքն զօրանայր ձեռն հասարակապետութեան 'ի Գերմանիա և Իտալիա, երթայր և անկանէր զսրութիւն նորա Եգիպտոս։ Քլէպէր և Տրսէ իբրև զտեարս ունէին զաշխարհն. յետ հեռանալոյ անտի Նափոլէոնի՝ Տրսէ համբաւեալն արդարութեամբ և քաջութեամբ, նուաճէր զԲարձրն Եգիպտոս, խորտակեալ զՄուրատ պէյ 'ի բազում ճակատամարտս. սակայն նուազէին զօրքն կոտորեալ յախտից, և չէր այլ ևս ակնկալութիւն օգնականութեան 'ի Գաղղիոյ։ Քլէպէր բազում անգամ բողոք եբարձ առ պետութիւնն, եցոյց զողորմելի ճակատ զօրաց իւրոց, և յետոյ ուրեմն ծանոյց զի այնուհետև թողուլ լքանել խորհի զԵգիպտոս։ Թուղթ նորա անկաւ 'ի ձեռս Անգղիացւոց, և յանհնարս մտին Գաղղիացիք. Սիտնէյ Սմիտհ միջնորդեկաց հաշտութեան ընդ Քլէպէր և ընդ փոխարքայն Օսմանեանց, և 'ի Գաղղիացւոց անտի գործադիր կարգեցաւ պայմանացն

Տըսէ մականուանեալն Արդար Սուլդան. սահմանեցաւ 'ի պայմանս դաշանցն՝ Թողուլ Գաղղիացւոց զԵգիպտոս, և զինուք և աղխիւք մեկնել անտի։ Թէպէտ դժկամակէին զօրքն ընդ այն, այլ Քլէպէր հաւատարիմ 'ի խոստմունսն, զբաղումս յամրոցաց իւրոց եթող 'ի Թէնամիս, և յայլոց եբարձ զզէնս ամրուԹե։ Եւ ահա անդէն լուաւ շուինդն համբաւոյ՝ եԹէ Անգղիացիք պաշարեն զծովափնեայ քաղաքս Եգիպտոսի, և գայր հասանէր ԹուղԹ 'ի ծովակալէն Անգղիացւոց առ Քլէպէր, Թէ չընդունի Անգղիա զպայմանս դաշանցն կռեալոց, եԹէ ոչ զինաԹափ անձնատուր լիցին Գաղղիացիք։

Ընդ այս լուր բորբոքեալ իբրև զբոց Քլէպէր, խրախուսեաց անդէն զզօրսն 'ի մարտ, և տասն հազարաւ խաղաց 'ի վերայ ուԹսուն հազարաց մեծի վզրկին Եուսուֆ փաշայի. պատահեցաւ նմա յաւերակս Հելիուպոլսոյ, խորտակեաց չարաչար զզօրս նորա, և հալածական տարաւ մինչև ցսահմանս անապատին։ Դարձեալ վերստին Գահիրէ, այլ 'ի վերայ հասեալ Քլէպէր, յետ մեծամեծ հարուածոց ընկճեաց և զնա, և տիրեալ տեղեացն զոր կորոյս, զօրացաւ վերստին։ Զարմացեալ Մուրատ պէյ ընդ քաջուԹիւն և ընդ հանճար յաղԹականին՝ դաշինս բարեկամուԹեան հաստատեաց ընդ նմա, և Քլէպէր խոհական վարչուԹեամբն և արդարուԹեամբ սիրելի եղև ամենեցուն, մինչև ակն ունել Գաղղիացւոց հաստատելոյ զաշխարհակալուԹիւն իւրեանց յԵ-

գիպտոս. այլ մահուամբ Քլէպէրայ վերը 'ի վայր եղծաւ ամենայն։ Քանզի սպանաւ նա 'ի սրոյ առն անօրինի, յաւուր յորում և նախանձորդ փառաց նորա Տրսէ դարձ արարեալ յԵւրոպա անկանէր 'ի Մարենկոյ։ Յաջորդեաց զնա 'ի զօրավարութեան Մընու, այր անբաւական 'ի վարչութիւն իրացն, և վրիպանս մեծամեծս գործեալ, յետ պատերազմին Կանոպայ՝ դաշնակցութիւն Աղեքսանդրիոյ եթող զԵգիպտոս և դարձաւ 'ի Գաղղիա։ Եւ որք գիտնականք որք ընդ Պոնափարթեայ գնացեալ էին յԵգիպտոս՝ փախուցեալ յԱնգղիացւոց, ածին անարատ զգրուածս իւրեանց և զմեծագանձ հաւաքածոյս։ Այսպէս արդասիք արշաւանացն Գաղղիացւոց յԵգիպտոս՝ օգտեցին մեծապէս 'ի զարգացումն գիտութեանց։

ԳԼՈՒԽ Ե.

Խաղաղութիւն Եւրոպայ դաշնադրութեամբ Ամիէնայ. առաջին խնամք հիւպատոսին, և դաշնադրութիւնք ընդդէմ կենաց նորա։

ՀԱՏՈՒԹԵԱՄԲՆ Լիւնէվիլայ՝ յամին 1801, յամսեան յունուարի, հաստատեցաւ խաղաղութիւն ընդ Գաղղիա և ընդ Աւստրիա. որով յաւելան 'ի հասարակապետութիւնն՝ Բելգիա և գաւառք Գերմանիոյ 'ի ձախակողմն Հռենոսի։ Նոյնպէս և առանձինն դաշինք խաղաղութեան հաստատեցան ընդ Հռոմ, ընդ Նէապոլիս, ընդ

Սարդենիա, ընդ Փորթոգալ և ընդ Պաւիերա. յորս յաւելան ապա և Ռուսք՝ որք յետ սպանութեան Պօղոսի Ա, կրկին դաշնակցեալ էին ընդ Անգղիոյ, լուծեալ զծովային միաբանութիւնն որ ընդդէմ նորա։ Տեսեալ ապա և Անգղիացւոց զի ամենայն պետութիւնք 'ի հաշտութիւն խաղաղութեան յօժարեցան, Թողին և ինքեանք զզէնս, և դաշնադրութեամբն յԱմիէն հանդարտեցաւ Եւրոպա։ Եւ այս պայմանք էին հաշտութեանն. դարձուցանել զԵգիպտոս 'ի ձեռս Օսմանեանց, հաստատել զեօթն Յոնական կղզիս 'ի հասարակապետութիւն, զամենայն նաւահանգիստս Ադրիականին և Միջերկրականի տալ թագաւորին Նէապոլսոյ և քահանայապետին Հռովմայ. Թողուլ զՄահոն քաղաք 'ի Սպանիացիս, զՄալդա 'ի կարգն ասպետաց, Թողուլ զԱէյլեան կղզի 'ի ձեռս Անգղիացւոց՝ այլ զգաղղիականն դարձուցանել 'ի դաշնակիցս, և ըզփորթոգալ պահել յիւր նախկին սահմանս։

Յետ այսորիկ պարապ առեալ Պոնափարթեայ յերեսաց թշնամեաց, խորհեցաւ նուաճել զկղզին Սրբոյն Դոմինիկեայ յԱմերիկա. քանզի յարուցեալ բնակչաց տեղւոյն ընդդէմ գաղղիականացն Գաղղիացւոց կոտորեալ էին զնոսա, և առաջնորդ եղեալ իւրեանց զԹուսէն–Լուվէրթիւր, ինքնատեարք կամէին լինել։ Զօրավարն Լեքլէր քառասուն հազարաւ խաղաց 'ի կղզին. այլ յետ բազում յաջող յաղթութեանցն, սրա-

ծուլթիւն տենդի ճարակեալ 'ի զօրականն կոտորեաց զբազումս, և մեռաւ Լըքլէր որով խրախուսեալ բնակչացն, մանաւանդ յորժամ ձեռնտու գտին զԱնգղլիացիս յետ լուծանելոյ նոցա զդաշինս խաղաղութեան, անմարթ եղև այնուհետև Գաղղիացւոց նուաճել զնոսա։

Իսկ Պոնափարթէ զառանին ուղղեալ զերս, զամենայն հնարս հնարէր առ 'ի շինջուցանել զերկպառակ խռովութեանցն հուր. եհան աղատութիւն դարձի վտարանդեաց 'ի Գաղղիա, և անդէն հարիւր յիսուն հազար անձինք միանգամայն դարձ արարին։ Յինքն յանկոյց նա և զբազումս 'ի գլխաւորաց թագաւորականացն, տուեալ նոցա բարձս աւագութեան. և զԱնդէացիս որք առ բրոնակալութեամբ ոստիկանացն վերստին նըշկահեալ էին զհասարակապետութիւն՝ կրկին խոնարհեցոյց 'ի հնազանդութիւն, որոց առաջնորդք կային յայնժամ Շաթիյլոն, Տ'օթիշան, Սուզանէ, Պէռնիէ, Պուրմոն, Գէորգ Քատուտալ և Ֆրոդէ՝ որ ձերբակալ լեալ սպանաւ։ Այսպէս խաղաղացաւ Գաղղիա 'ի ներքուստ։

Մարթ էր յայնժամ եթէ դիւցազնականի իմն փառաց նախանձաւոր լինէր Նափոլէոն՝ դարձուցանել զԼուդովիկոս ԺԸ'ի գահ իւր, զոր օրինակ երբեմն զօրավարն Մոնք Անգղլիացի՝ զԿարոլոս Բ, զարքայն Անգղլիոյ։ Էին ոմանք և յառաքինի ազնուական նաց որ 'ի նոյն յորդոր լինէին նմա, ցուցեալ զանեղծ և զանթառամ փառսն որ անտի՝

քան որ 'ի թագէ ինքնակալութեան՝ որում փառասիրութիւն ըղձայր : Էին էին և յաղ-
գականացն նորա խորհրդակիցք 'ի նոյն. քան-
զի արկեալ նորա երբեմն զանձամբ զհան-
դերձս փառաց հիւպատոսութեան , և
զուարճացեալ 'ի միտս՝ հարցանէր զքոյր իւր
որպիսի՞ ինչ թուիցի նմա. "Վայելուչ է
ամենայնին , ասէ խմաստուն տիկինն , այլ
պակասէ քեզ սուսեր գունդստապլի ,, :
Այլ 'ի Պոնափարթէ քան զաղնուախոհ ար-
դարութիւն՝ հզօր էր փառասիրութեան
ախտ , և նոյն վախճան խորհրդոց նորա , որ
հարթեալ առաջի զխոչ և զխուրթ՝ դիմէր առ
գերագոյն իշխանութիւն :

Եւ քանզի դեռ ևս գտանէին նմա բա-
զում հակառակորդք , դէպք յաջողէին նմա
'ի 24 աւուր ամսեան դեկտեմբերի ապրել
յահաւոր դաւադրութենէ նոցա , 'ի Դժո-
խային անուանեալ մեքենայէն. քանզի ար-
բեալ գոլով կառավարին՝ առաւել քան զսո-
վորութեանն մտրակելով զերիվարսն երա-
գէր անցանել ընդ կամուրջն ուր դարանեալ
կայր որոգայթն , և 'ի դերև ելանել ժամա-
դրութեան դաւաճանացն յետ անցանելոյ
կառացն , ամբարձաւ և կամուրջն 'ի վեր
բորբոքմամբ մեքենային , և զերծաւ Նա-
փոլէոն : Կասկած դաւաճանութեանն ան-
կաւ զթագաւորականաց և զռամկապետա-
կանաց . և հարիւր երեսուն ալք 'ի նոցանէ
տարագիր եղեն : Յայանեցան ապա բազումք
'ի ստոյգ յանցաւորաց , և կարգեցաւ վասն
նոցա առանձին ատեան զինուորական :

Յարեան ոմանք 'ի Ծերակուտէն և յատենակալաց ընդդէմ Ինքնիշխան հրամանատարութեան առաջին հիւպատոսին, այլ վաղ տեղի տուեալ հանգամանաց ժամանակին, զդիկտատորութիւն ևս թողին նմա զիշխանութիւն:

ԳԼՈՒԽ Զ.

Իմաստուն օրէնսդրութիւնք Նափոլէոնի, դաշնադրութիւն նորա ընդ փահանայապետին Պիոսի Է. և խոստանալ նորա ընդդէմ Ռագաւորականաց:

ԶԳԵՐԱԳՈՑՆ իշխանութիւն հրամանատարութեան զանձամբ առեալ Նափոլէոնի, իմաստուն վարչութեամբ իւրով արժանի եցոյց զանձն նմին: Քանզի փոխանակ անիշխանութեան հաստատեաց զկարգս օրինաց ամենայն ուրեք, և յամենայնի հզօր եցոյց նա զկամս իւր, և գործունեայ զբազմաբեղուն միտսն: Եղ օրէնս քաղաքականս և զինուորականս. և գիւրք օրինաց նորա զոր յայնժամ սկզբնաւորեաց, և օրինակ եկաց ապա օրինաց ազգաց Եւրոպայ, երաշխաւոր կայ մեծութեամբ հանճարոյ նորա: Դարձեալ հաստատեաց նա նոր դատաւորս, և ոստիկանս և ատենակալս և քաղաքապետս: Մեծապէս խնամ կալաւ կրթութեան մանկտուոյն, և բազմացոյց զուսումնարանս, զարգացոյց զվաճառականութիւն և զձեռակերտս ճարտարաց. յօրինեաց փողոցս և ճանապարհս, կանգնեաց կամուրջս և նաւակառոյց գործարանս, ձեռնտու ունելով յա-

ռաջատուութեան ուսմանց զՄօնժ և զՊէր-
թոլէ Ճարտարս. 'ի չորս ամսոցս բաժա-
նեաց զՓռիթանէ գպրոցն, զմին կալաւ 'ի
Փարիզ, և զայլս երիս փոխեաց 'ի Ֆոնդէ-
նըպլոյ, 'ի Սէն-ժէրմէն, և 'ի Վէրսայլ. և
յիւրաքանչիւր 'ի նոսա սահմանեաց ընդու-
նել ձրի հարիւր մանկաց յորդւոց արանց
երախտաւորացն հայրենեաց՝ զինուք կամ
քաղաքական պաշտամամբք: Եւ 'ի ձեռն
հանճարեղ և Ճարտար պաշտօնէի իւրոյ Կո-
տէնայ՝ ուղղեաց զյանձանձանս գանձուն
հասարակաց. հաստատեաց և առանձին
գանձանակ 'ի պէտս շինուածոց և յապա-
հովութիւն նոցին՝ յանձնեալ զայն 'ի զգօն
վարչութեան Մոլիէնայ, որով սիրելի և պատ-
կառելի եղև յաչս հասարակաց:

Եւ որ մեծն է քան զամենայն, մինչ Գաղ-
ղիա յանհաւատութիւն կործանէր, յան-
կարծ բարձր 'ի գլուխս տեսաւ 'ի նմա քրիս-
տոսական կրօնք, բացան դրունք եկեղեցեաց
և հնչեցին երգք գովութեան 'ի փառս Ա-
ստուծոյ: Քանզի քաջ խելամուտ լեալ Պո-
նապարթեայ, զի կարևոր օգնական են վար-
չութեան ժողովրդոց քահանայք, ջանաց
յինքն յանկուցանել զնոսա. արար դաշնա-
դրութիւն ընդ քահանայապետին Պիոսի
Է, և հաստատեաց 'ի Գաղղիա ինն արք-
եպիսկոպոսութիւնս, և քառասուն եպիս-
կոպոսութիւնս. հաստատեաց և զկարգ Լէ-
գէոնական պատուոյն, Լէժէօն Տ'օնէօր ա-
նուանեալ ասպետաց, որոց և առաջնորդ
եկաց ինքն. թէպէտ և հակառակ իմն Գաղ-

ղիական հաւատարութեան համարէին զայն Օրինադիր Ժողովն և ատենակալք, սակայն ընկալան և նոքա։ Հանդերձ մեծաջան փութովն յօգուտ ազգին՝ գուն գործէր Նափոլէոն և 'ի հաստատութիւն իշխանութեան իւրոյ. ոչ միայն ինքնիշխանաբար պատուհասեաց զդաւադիրսն, այլ և իշխեաց արգելուլ և զազատ տպագրութիւնս, և տալ ընտրել զանձն հաւանութեամբ Ժողովրդեան հիւպատոս ցկենդանութիւն (1802)։ Եւ անդէն խորհրդով ծերակուտին բարձաւ ամենայն իշխանութիւն 'ի ռամկէն և ամփոփեցաւ 'ի հիւպատոսն և 'ի ծերակոյտն։ Տեսեալ զայն ազատասէր մարդկան, թէպէտ և ոխային 'ի միտս ընդդէմ հիւպատոսին, այլ ձանձրացեալք յանիշխանութենէ, և ծանուցեալ զկարևոր պէտս կարգաց և ապահովութեան, հանդարտէին։ Եւ Ժողովուրդն միշտ 'ի ծայրայեղն հակամիտեալ՝ ձեռնտու լինէր փառասէր խորհրդոց Նափոլէոնի, թողեալ զսէր ազատութեան, զոր այնքան արեանց հեղմամբ 'ի ձեռս եբեր։

Բայց թէպէտ և նոքա այսպէս թմբրեալ խնդային ընդ կորուստ ազատութեան իւրեանց, սակայն գտան և ոմանք յաւադ մարդկանէ 'ի Շուանց և 'ի Թագաւորականաց, որոց միաբանեալ 'ի դաշնակցութիւն դաւաճանութեան ընդդէմ հիւպատին, առաջնորդ իւրեանց ունէին զՓիշկռիւ և զՔատուատալ, գիտակ գոլով և Մորոյի խորհրդոց նոցին։ Ի վերս եկ դաւն, և ձեր-

բակալ եղեն երեքեան ևս (1804). և մինչդեռ յուզէին զերացն միաք ժողովրդեան, յանկարծ հնչեաց գոյժ սպանութեան դքսին Էնկիէնայ, ալքայազարմ պորպոնեան իշխանի: Քանզի հիւպատոսին ունկն եդեալ ստութեան չարախօսաց՝ որք խորհրդակից դաւաճանացն ասէին զնա, և զի գունդ վտարանդեաց Գաղղիացւոց ժողովեալ կային յափունս Հռենոսի, աճապարեաց ահաբեկ առնել զթշնամիս իւր. արձակեաց հատուած մի զօրաց 'ի Գերմանիա, յերկիր օտար՝ ընդդէմ օրինաց ազգաց, և ձերբակալեալ եւ ածել զդուքսն 'ի Փարիզ. և 'ի Վէնսան դղեկին դասեալ 'ի դիշերի 'ի ձեռն զինուորական դատաւորաց՝ դատապարտեաց զնա 'ի մահ: Զկեղտ անիրաւ սպանութեանն զոր գործեաց Նափոլէոն՝ ոչ սրբեցին յաճախութիւնք փառաց նորա: Խեղդամահ եղև և փիշկուիւ 'ի բանտին, և համբաւ սուտ հանաւ թէ զիւրովին դնացեալ ելէ նորա: Իսկ Քատուտալ անվեհեր քաջութեամբ յանդիման լեալ դատաւորացն, համարձակագոյնս արար պատասխանի, և արութեամբ ոգւոյ ընկալաւ զմահ: Ի քառասուն և 'ի հինգ յանցաւորացն կալանաւորաց՝ ութ և տասունք միայն ընկալան զվճիռ մահու, և այլք յետ ինքնակալութեան Նափոլէոնի գտին շնորհս ազատութեան:

Այլ ամենեքեան դէտակն կալեալ մնային տեսանել զվախճան դատի մեծանուն զօրավարին Մորոյի՝ որ նախանձորդն էր փառաց

հիւպատոսին. և թէպէտ ուխտիւք ըղձանային ազատութեան առնն մեծի, զորմէ չէին ինչ հաւատալիք ամբաստանութեանց, այլ երկուցեալ 'ի փառասէր խորհրդոց Պոնափարթէայ՝ յեռ շաղելոյ ասէին զձեռս յարիւն անմեղապարտ դքսին Էնկիէնի, չկարնայեսցէ նա և յայրն երևելի 'ի Մորոյ՝ որոյ յաղթանակացն փառք ստուերածս ածեն զիւրովքն։ Խոստովանեցաւ Մորոյ եթէ գիտէր զդաւաճանութիւն դաւադրաց, այլ պատիւ անձին նորա արգել զնա քսուլ լինել և մատնիչ։ Իբրև վճռեցին դատաւորք երկամեայ բանտ 'ի պատուհաս յանցանացն, փոխեաց Պոնափարթէ զբանտն յաքսոր յԱմերիկա 'ի Միացեալ նահանգսն։

Յաւուրսն յայնոսիկ մղէին պատերազմունք ընդ Անգղիացիս և Գաղղիացիս՝ քանզի խաղաղութիւնն որ յԱմիէն՝ սակաւատև եղև յոյժ, և ոչ եբարձ զթշնամութեանն ատելութիւն։ Էառ Պոնափարթէ զՀանովէր, զԷլպա կղզի, զԲիէմոնդէ և զտէրութիւն Բառմայ. և Անգղիացիք ամենայն զօրութեամբ պահէին զՄալդա և զգլուխ Բարբէյուսոյ, և ամրացուցանէին զծովափունս. իսկ Գաղղիացիք ամրանային 'ի ցամաքի հզօր բանակօք իւրեանց։

ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա.

Ինքնակալէ Նափոլէոնի։

ՊԱՏԵՐԱԶՄՆ ընդ Անգղիոյ և դաւաճանութիւն Փիշկռիւ զօրավարի՝ մեծապէս ձեռընտու եղեն Պոնափարթեայ ամբառնալ զանձն 'ի հիւպատոսութենէ յինքնակալութիւն։ Եւ զի առաւել 'ի ժամանակին յայնմիկ խնամ տանէր քաղցրացուցանել զլուծ իւր առ ազատասէր ազգն, խրախուսէր 'ի զարգացումն ամենայն կարևոր և կենցաղօգուտ արուեստից և գիտութեանց, վարձատրէր զվաստակս ծառայութեան և զհանճար ընտիր մարդկան. և զամենայն ազգ վարչութեան զզինուորականն և զքաղաքական 'ի լաւագոյն վիճակ հանէր. գողացաւ զսիրտ ժողովրդեան՝ հայել 'ի նա իբրև յազատարար չարեաց և խռովութեանց, և մեծութեան և փառաց և երջանկութենէ Գաղղիոյ պատճառս։ Յաւել Պոնափարթէ և զիշխանութիւն ծերակուտին՝ զոր իբրև գործի կամաց իւր ունէր 'ի ձեռին, և խորհրդ-

դով հաւանութեան նոցա ամբարձաւ նա յինքնակալութիւն, կոչելով զանձն Նափոլէոն Պոնափարթէ ինքնակալ ժառանգաւոր։ Ազատասէրն Քառնոյ վայրապար հակառակ եկաց ծերակուտին իշխանակցաց իւրոց, և հաստատեցաւ ինքնակալութիւն Նափոլէոնի (1804)։

Ի փոխել տարազու պետութեանն փոփոխումն լինէր և 'ի սահմանադրութիւնս օրինաց. ապա ամբառնայր Նափոլէոն զեղբարս իւր 'ի բարձր աւագութիւնս. զՅովսէփ 'ի կայսրընտիր իշխանութիւն, զԼուդովիկոս 'ի սպարապետութիւն, կացուցանէր և զՔամպասերէ 'ի սենեկապետ, և զԼըպրէօն 'ի գանձապետ։ Դարձեալ ընտրէր ինքեան զօրավարս զՊէրթիէ, զՄիւրատ, զՄոնսէյ, զԺուռատան, զՄասենա, զՕժերոյ, զՊեռնատոդ, զՍուլ, զՊրիւն, զԼան, զՄորթիէ, զՆէյ, զՏավու, զՊէսիէր, զԳէլէրման և զայլս. և զօրավար իւրաքանչիւր պատրաստէր զօրք իւրով 'ի նոր արշաւանս ընդդէմ Անգղիոյ։

Եւ Նափոլէոն 'ի մայրաքաղաքէն շրջել ընդ գաւառս պետութեան իւրոյ. և ընկալեալ երդումն հաւատարմութեան 'ի զօրացս իւրոց՝ բաշխէր պարգևս քաջաց. և անտի աճապարէր 'ի Պուլոյն 'ի տեղի զօրաժողովոյն, ուր և մնայր Սուլ հարիւր հազար զօրք 'ի հանդէս ածնի ինքնակալին։ Անդ 'ի տափարակ դաշտի ուրեք հանդէպ ծովուն յաջակողմն նաւահանգստին կառուցաւ բարձրաւանդակ տեղի ըստ հռոմէական ստ-

վորութեան, և շուրջ զնովաւ դրօշք և նշանակք փողփողեալք, և 'ի միջի արծուի ոսկեղէն։ Ամբարձաւ գահ ինքնակալին հովանաւորել 'ի թիկանց կուսէ դրօշուք թշնամեաց՝ զոր թափեցին 'ի Լոսի, յԱրքոլ, 'ի Ռիվոլի, 'ի բրգունան յԵգիպտոս, յԱպուքիր և 'ի Մարենկոյ, ընդ որս և պսակ մի մեծ դափնիդեայ, և ձաղք պէկից Եգիպտացւոց։ Ցերևեալ ինքնակալին եղբարքն իւրովք և աւագանւոքն՝ հնչեցին փողք և թըմբուկք առ հասարակ. և 'ի լռեալ նոցին՝ կարգեաց Նափոլէոն զերդումն կարգի լեգէոնական պատուոյն, և զնոյն երդումն կըրկնեցին զօրքն, և բաշխեցան ապա նշանք պատուոյն, որք եդեալ էին 'ի սաղաւարտ քաջի ասպետին Գաղլիացւոց Տիւկէսքլէնայ։ Գոչեաց զօրն Կեցցէ ինքնակալ Նափոլէոն, և երդուան երդումն հաւատարմութեան։ Եղեն ապա պարգևք զօրաց, և երկարեաց հանդէսն 'ի գիշերին հանդերձ պարուք և երգօք զինուորականօք և սքանչելի լուսաւորութեամբ։ Մինչ չև մեկնեալ անտի ինքնակալին՝ խոստացաւ զօրականն կանգնել զանդրի նորա 'ի դաշտին, և հանգանակեալ իւրաքանչիւր 'ի թոշակաց իւրեանց տային 'ի կատարումն գործոյն. և 'ի պակասել պղնձոյն, առաջնորդ գեղեցիկ գործոյն զօրավարն Սուլ՝ եկն եկաց յանդիման ինքնակալին և ասէ. "Տուր մեզ պղինձ 'ի փոխ, և հատուցից յառաջին Ճակատամարտին"։ Եւ արդարև յետ ամսոց ինչ 'ի գեղջ ուրեք Մորաւիոյ հատուցանէր զպարտսն։

Իսկ Նափոլէոն շրջեալ ընդ գաւառս տէ-
րութեանն դարձ առնէր 'ի Փարիզ. քանզի
կամէր հաճութեամբ ժողովրդեանն Գաղ-
ղիոյ և եկեղեցական դասուն հաստատել
զինքնակալութիւն իւր: Խնդութեամբ հա-
ւանեցան մեծ մասն ժողովրդեան, և կղերք
ձայն գոհութեան հնչեցուցին յերկինս իբրև
'ի հաստատութիւն դահու նորոյ Կիւրո-
սիս, որ զայրեացաւեր զտաճարն Աստու-
ծոյ՝ զհալածեալ եկեղեցին վերականգնէր:
Իսկ քահանայապետն Պիոս Է, 'ի սէր հաս-
տատութեան ուղղափառ կրօնից յանձնա-
ռեալ չոգաւ 'ի Փարիզ պսակել զնա հան-
դիսիւ 'ի մայր եկեղեցւոջն յինքնակալ
Գաղղիոյ (1804): Այլ Նափոլէոնի ոչ մնա-
ցեալ ընդունել զթագն 'ի ձեռանէ քահա-
նայապետին, ինքնին իւրով ձեռամբ առեալ
'ի սեղանոյն եդ 'ի գլուխն, և ինքնին պսա-
կեալ զկին իւր 'ի կայսրուհի, արար զեր-
դումնս այս. "Երդնում պահել զլրութի
գաւառաց հասարակապետութեան, մեծա-
րել և մեծարելի ընծայել զօրէնս միաբա-
նութեան ընդ քահանայապետին, և զա-
զատութիւն կրօնից. յարգել զհաւասա-
րութիւն իրաւանց, զազատութիւն քաղա-
քական, ոչ ինչ արտաքոյ օրինաց հարկանել
հարկս, պահել զկարգն լեգէոնական պա-
տուոյն և վարել զիշխանութիւն տերու-
թեան յօգուտ, յերջանկութիւն և 'ի փառս
ազգին,,:

Յաւուրն երկրորդի բաշխեալ զօրականին
զդրօշս, ասէ. "Զօրականքդ, ահա դրօշքն,

արծուիքս նշանք ձեզ 'ի գումարումն. Թռիցեն նոքա ուր ինքնակալին ձերոյ պատշաճ դատեսցի 'ի պաշտպանութիւն գահուն և ժողովրդեան ,, :

Մինչդեռ Նափոլէոն երդմամբն համարէր անսասան հաստատել ինքեան զաթոռ թագաւորութեան, ընիկ ժառանգ գահուն յածեալ փախստեայ, լքեալ 'ի պետութեանց Եւրոպայ, և յիւրոց իսկ 'ի հաւատարիմ ծառայից, մեկնեալ յաննշան ուրեք քաղաք Սուեսայ, բողոք բառնայր առաջի երկնի և երկրի ընդդէմ անիրաւ վճռոյ բաղդին. ցուցանէր և երդնոյր չթողուլ բնաւ զկրաւունս իւր, վկայ առ այն կոչելով զԱստուած զվրէժինդիրն արդարութեան :

Այլ թագաւորավայել երդումն այն Լուդովիկոսի ԺԸ հաղիւ լսելի լինէր, և համբաւն տկար ածեալ 'ի Գաղղիա, ընկղմէր 'ի շքեղ հանդիսի ցնծութեան նորընտիր կայսերն և 'ի ծափահար գովութիւնս շողոմարար մարդկան :

ԳԼՈՒԽ Բ.

Պատկեր Նափոլէոնի 'ի Թագաւոր Իտալիոյ, և գրգռել ընդ նմա զպատերազմ Եւրոպայ :

Եթէ կամեցեալ էր Նափոլէոնի զկնի հաշտութեանն Ամիէնայ նախամեծար ընտրել զազատութիւն աշխարհին քան զիւրոյին փառասիրութիւն, թողոյր արդեօք Գաղղիոյ յետ երկոտասանամեայ խռովութեանց

և պատերազմաց՝ վայելել յարգասիս յաղ-
թութեանցն և ուղղիչ կալ Եւրոպայ. այլ
նորա ակն եդեալ աշխարհակալութեան,
յառեալ զաչս իւր 'ի բարձրագոյն օրինակ
Կարոլոսի մեծի, 'ի նոյն բաղդ և զանձն իւր
կոչեցեալ համարեցաւ։ Յանկացաւ նախ
յաւելուլ յանուն ինքնակալի Գաղղիոյ և
զանուն թագաւորի Իտալիոյ. վասն որոյ
գնաց 'ի Մեդիոլան, և եդ զթագն Երկա-
թեայ զթագաւորացն Լոնգոբարտացւոց.
"Աստուած ետ ինձ, ասէ, զթագս. վայ
որ հուպ լիցի 'ի սա"։ Եւ կարգեաց ապա
փոխարքայ աշխարհին զԵւգինէոս զորդե-
գրեալն իւր։

Կայսրն Աւստրիոյ գժկամակեալ ընդ ինք-
նակալութիւն Նափոլէոնի, ընդ հաստա-
տութիւն նորոյ թագաւորութեան Իտալիոյ,
և ընդ մարզ կալ Գենուայ և Բիէմոնդեայ՝
պետութեանն Գաղղիոյ, և գրգռեալ Յանգ-
ղլիացւոց՝ շարժեցաւ վերատին 'ի պատե-
րազմ։ Յաւելան 'ի նոսա և Ռուսք՝ որոց
թագաւորէր յայնժամ Աղեքսանդր որդի և
պայազատ Պօղոսի Ա, և թագաւորն Սուե-
տայ Կուստաւոս։ Նափոլէոն որ մեծաւ
կազմութեամբ պատրաստէր 'ի Պուլոյն՝ ար-
շաւել Յանգղիա, լուեալ զի Աւստրիացիք
երկերիւր քան հազար զօրք՝ յերիս առաջս
բաժանեալ ընդ զօրավարութեամբ իշխա-
նացն Փերդինանտոսի, Յովհաննու և Կա-
րոլոսի, խաղան 'ի Հռենոս և Յատիձէ և 'ի
Թիրոլ, և զօրք Ռուսաց 'ի կրկին գունդս
զատուցեալ գան միանալ ընդ նոսա և ընդ

Անգղիացիս. Նոյնպէս և Սուէտք ընդ առաջ-
նորդութեամբ արքային իւրեանց գան յա-
րիւ՝ ի դաշնակիցսն, Եթող անդէն զՊուլոյն՝
էանց ընդ Հռենոս հարիւր վաթսուն հազար
զօրք բաժանեալ յեօթն գունդս՝ տուեալ
զնոսա յերևելի զօրավարս իւր՝ ի Պեռնա-
տոդ, ՝ի Տավու, ՝ի Նէյ, ՝ի Սուլ, ՝ի Լան,
յՕժերոյ, ՝ի Մարմոն, և զՀեծելագունդն
՝ի Միւրատ, և մնեցաւ ՝ի Գերմանիա։
Մինչդեռ Մասենա արդելոյր զիշխանն Կա-
ռոլոս յԻտալիա յիսուն հազար զօրք, ան-
ցին Գաղղիացիք ընդ Դանուբ, կալան
զՊաւիերա. Նափոլէոն և զօրավարք նորա
յանդգնութեամբ և յաջողութեամբ գլե-
ցին զիրերօք. Միւրատ յաղթանակեաց ՝ի
վերայ Թշնամեաց ՝ի Վէրթէնկէն, Տիւփոն
՝ի Հասլաս, Նէյ յԷխինկէն. և զօրավարն
Աւստրիացւոց Մաք յապուշ կրթեալ յայն-
չափ պարտութեանցն մի զկնի միոյ ՝ի վերայ
եկեալոց՝ երեսուն հազարաւ իւրով անձնա-
տուր եղև յՈւլմ ՝ի Թշնամիս։ Յառաջեաց
Նափոլէոն և երկերիւր հազար զօրք եմուտ
՝ի Վիեննա, և անցեալ ընդ այն յաղթանա-
կաւ խաղաց ՝ի Մորաւիա՝ հետամուտ մնա-
ցեալոցն Աւստրիացւոց. քանզի չթողոյր պա-
տրաստ պարտեալոց ոգի առնուլ՝ մինչ չև ՝ի սպառ
ջախջախեալ զնոսա։ Նա և հարկ իսկ ՝ի վե-
րայ կայր աճապարեալոյ ՝ի նոյն, զի խաղային
Ռուսք յօգնութիւն Աւստրիացւոց. և թէ-
պէտ ոչ կարաց նա արդելուլ զմիանալ նոցա
ընդ Աւստրիացին, այլ անսովոր յիւրմէ խո-
հականութիւն կեղծեալ՝ իբր առ երկիւղ

յետս նահանջեցաւ տեղն 'ի տեղւոջէ մինչև յԱւստէրլից. և թշնամեաց փախուստ համարեալ զայն՝ աճապարեցին արդէլուզնա, և կորուսին զբարուք կարգ կազմութեան իւրեանց և զքաջադէպ վայր մարտին։

ԳԼՈՒԽ Գ.

Մեծ ճակատամարտն յԱւստերլից, և յաղթանակ Նափոլէոնի։

Ի ՄԵՐԶԵՆԱԼ գիշերոյն ծպտեալ Նափոլէոնի՝ այց ելս պահանորդաց բանակին. որոց ծանուցեալ զնա, ողջունեցին 'ի ձայն ցընծութեան. "Կեցցէ ինքնակալն մեր Նափոլէոն Պոնափարթէ". քանզի օրն այն առաջին էր դեկտեմբեր ամսոյ, և տարեդարձ ինքնակալութեան Պոնափարթեայ, և հրաչակէին զայն զօրքն հանդիսիւ իբրև գուշակ առաջիկայ յաղթութեան։ Եմուտ ապա Նափոլէոն 'ի վրան իւր, և հրաման եա վան վաղուեան մարտի. զՊեռնատոդ կարգեաց 'ի բուն բանակին, զՍուլ յաջում թևի, զԼան 'ի ձախում, և զՄիւրատ՝ զօրավար հեծելագնդին։

Եւ 'ի վաղիւն 'ի ծագել արևուն, ընթացեալ Նափոլէոն ընդ ռազմն գնդի գնդի՝ խրախուսէր զամենեսին, և յանկարծօրէն սլացեալ 'ի վերայ թշնամեաց՝ յերկուս ձեղքեաց զնոսա, և 'ի նեղ արկեալ կալաւ զԹնդանօթս և զպատրաստութիւն հրազինուցն։ Յարձակեցան թիկնապահ հեծե-

լագունդք ինքնակալին Ռուսաց, և զբաղումն անդէն 'ի քաջացն Գաղղիացւոց առ Եռեղ տապաստ արկեալ՝ զօրացան կալան զասպարէզ մարտին։

Տեսեալ Նափոլէոնի զվտանգ իւրոցն՝ խաղացոյց զքաջն Ռափ զիւր անձնապահպետն հեծելագնդովն հանդերձ. որոյ բախեալ ուժգնութեամբ ընդ Ռուսս, եհար զնոսա և խորտակեաց. և անդէն արիւնաշաղախ երիվարաւն, վաղակաւոր ծայրատեալ 'ի ձեռին աւետաւոր յաղթութեան ընթացաւ առ Նափոլէոն։ Իբրև յայտնեցաւ յաղթութիւնն՝ տեսին Գաղղիացիք զկնումբ մի Ռուսաց զի փախստեայ անցանէին ընդ լիճ սառուցեալ. և արձակմամբ հրաղինուց խորտակեալ զսառնամանիսն՝ ընկղմեցին զնոսա գրեթէ առ հասարակ։ Մեծ եղև յաղթութիւն Գաղղիացւոց, հնգետասան հազարք անկան 'ի ճակատու, քսան հազար գերի վարեցան, քառասուն դրօշք և երկերիւր թնդանօթք թշնամւոյն յաւարի առան։ Ի զօրավարաց Գաղղիացւոց անկաւ միայն քաջն Վալհիւպէր։ Այլ ինքնակալն գուռթ մեծ արար ընդ նահատակս Աւստերլիցայ. զորդիս անկելոցն գրեաց յիւր որդեգիրս՝ անուցեալ զնոսա 'ի գանձուց արքունի. յաւել ևս 'ի վերայ անուանց նոցա և զիւր անուն Նափոլէոն. կարգեաց ամի ամի վեց հազար ֆրանկս այրեաց զօրավարացն 'ի ռոճիկ, երկու հազար ջորեք հարիւր՝ տեղակալաց նոցա. և այսպէս մի ըստ միոջէ ըստ կարգի զինուո-

բական պատուոյն, մինչև սինլքոր զինուորի անկաւ երկերիւր Ֆրանք։

Եւ 'ի վաղիւ անդր աճապարեաց կայսրն Փրանկիսկոս գալ յոտս յաղթականին 'ի խնդիր հաշտութեան։ Եւ կռեցան դաշինք խաղաղութեան 'ի 26 դեկտեմբեր ամսոյ 'ի Փրեզպուրկ. և եթող կայսրն 'ի Գաղղիացիս զգաւառս Դաղմատիոյ և Ալպանիոյ և զՎենետկեան հասարակապետութիւն քաղաքս. և կայսրընտիրքն Պաւիերայ և Վիրթէմպէրկայ նիզակակից՝ Նափոլէոնի՝ թագ եդեալ հաստատեցան 'ի տէրութեան իւրեանց։

ԳԼՈՒԽ Դ.

Խորհրդոյ նաւապետին Գաղղիացւոյ, և շահաւէր աշխարհակալութիւնք Նափոլէոնի։

ՋՄԵԾԱՀՌՉԱԿ յաղթութիւնս երկրախութեամբ յաջորդեաց ծովամարտն՝ յորում 'ի սպառ վատթարացաւ ծովային զօրութիւն Գաղղիոյ։ Քանզի ծովակալն Վիլնէօվ, որ սպանիական և գաղղիական նաւատորմղաւն բաղկեալ 'ի գլուխն Ֆինիստէրրայ ընդ Անգղիացիս և հարեալ էր 'ի նոցանէ, խրախուսեաց եւ պատերազմ միւսանգամ և 'ի Թրաֆալկար երեսուն և երկու նաւուք ընդդէմ քսանեւութ նաւուց Նելսընի ծովակալին Անգղիացւոյ, և պարտեալ չարաչար, երեքտասան նաւուք հաղիւ ճողոպրեաց զանձն։ Մեծս այս յաղթութիւն կնքեալ արեամբ քաջին Նելսընի,

աներկիւղ տիրապետս արար զԱնգղիացիս 'ի ծովու, և ոչ ևս շարժեցաւ Նապոլէոն ընդ ծով ընդդէմ նոցա: Սակայն մխիթարեցան Գաղղիացիք յաղթանակքն որ յՈւլմ և յԱւստերլից 'ի վերայ կորստեան ծովային զինուց իւրեանց (1805):

Նապոլէոն յետ մեծի յաղթութեանն դարձ արար 'ի Փարիզ. և արքեալ բաղդիւն՝ ձեռն էարկ ջնջել 'ի սպառ զպիշատակս կարգաց ապստամբութեան Գաղղիոյ: Փոխեաց զտուման հասարակապետութեանն՝ հաստատեալ անդրէն զԳրիգորեանն, հրամայեաց հրովարտակաւ հռչակել զսուն սրբոյն Նապոլէոնի 'ի հնգետասան օգոստոսի, և այլ հրովարտակաւ կարգեաց զեկեղեցի սրբոյն Դիոնեսիոսի 'ի շիրիմն ինքնակալաց, և դարձոյց զՊանթէոն յուղղափառս:

Այլ անյագ սիրով աշխարհակալութեան ոչ դադարէր յանիրաւ տիրապետութենէ: Փոփոխեալ զՀոլանտա 'ի թագաւորութիւն, յանձն արար զայն 'ի Լուդովիկոս եղբայր իւր երէց. և տեսեալ զի առաւելագոյն փոյթ է նմա օգուտ հպատակացն քան ինքնակալին Գաղղիոյ, էառ 'ի նմանէ զթագաւորութիւնն և կարգեաց զաշխարհն 'ի մարզպետութեանն: Մերկացոյց և զթագաւորն Նէապոլսոյ 'ի տէրութենէն վասն դաշնակցելոյ նորա ընդ թշնամիս իւր, և ամբարձ 'ի գահ անդր զեղբայր իւր զՅովսէփ. և ըզփեսայ իւր զՄիւրատ կացոյց յաւագ դքսութիւն Պերկայ: Ի բազում հասարակապետութենանց անտի որ առ ոստիկանօք Գաղ-

ղեոյ՝ հասարակապետութիւնն Հելուետիոյ միայն մնաց հաստատուն։ Կամեցեալ Նափոլէոնի հաստատել և զքինուորական կարգս իշխանութեանցն որ առ ժառանգական վարչութեամբք, փոխեաց զբազում գաւառս և զիշխանութիւնս 'ի մարզս պետութեան, պարգևեալ 'ի վարձ մեծանուն զօրավարաց իւրոց երևելի պաշտօնէից։ Վասն որոյ կարգեաց 'ի դքսութիւնս զԴալմատիա, զԻսարիա, զՓրիուլ, զՔատոր, զՊելլուն, զՔոնիլիանոյ, զԹրեվիզ, զՓէլդր, զՊասսանոյ, զՎիչենցա, զՊատաւիոն, զՌովիկոյ, և յիշխանութիւնս զՆէոֆշաթէլ, զԲենեւենտա և զԿաստիլիա։ Յետ այսորիկ տուեալ և զվերջին հարուած հասարակապետական վարչութէ, սահմանեաց տոհմաշնուական ժառանգութեամբ։ Եւ դէպք 'ի բարի յաջողեալ նմա, մեռաւ Փիթ առաջին պաշտօնեայ Անգղիոյ ոխերիմ թշնամին Գաղղիոյ, և 'ի յաջորդել զնա Ֆոքսի յիշխանութեան, սկսաւ բանագնաց լինել ընդ նմա 'ի հաշտութիւն։

Բայց դարձեալ փառասէր խորհրդովքն արգելզպատրաստութիւն խաղաղութեան. քանզի յափշտակեալ 'ի Թագաւորէն Նէապոլսոյ զՍիկիլիա՝ յաւել յիշխանութիւն եղբօր իւրոյ. թէպէտ և ելթող Անգղիացւոց զՀաննովէր զոր յափշտակեալն էր 'ի Բրուսայ, զի մի հակառակութիւնս ինչ կրեսցէ նորոգ աշխարհակալութիւնն, այլ և նուազումն տուրեաւ շահուց Անգղիացւոց 'ի սակս բռնակալութեանց Նափոլէոնի կրճատեալ էր հաշտութեան (1806)։

ԳԼՈՒԽ Ե.

Նափոլէոն հասարակ պդաշնակցութիւնն Գերմանական. և պատերազմն ընդ Բրուսայ և ընդ Ռուսայ։

Յետ այսորիկ նովին աշխարհակալութեամբ խորհրդով վաղեալ Նափոլէոնի միաբանեաց զորեքտասան իշխանութիւնս 'ի Գերմանիոյ անուանեալ Դաշնակցութիւն Հռենոսեան, ինքնին պաշտպան կացեալ նոցա, և պայմանեալ նիզակակից լինելոյ նոցա պետութեանն Գաղղիոյ։ Այսու դաշնակցութեամբ տկարացաւ յոյժ զօրութիւն Բրուսիոյ և Աւստրիոյ, և բարձրացաւ ձեռն ինքնակալին Գաղղիոյ, որով և բռնադատեցաւ Փրանկիսկոս Բ, հրաժարել յինքնակալութենէ Գերմանիոյ և կոչել Փրանկիսկոս Ա, կայսր Աւստրիոյ։

Յաւուրսն յայնոսիկ արքայն Բրուսիոյ Փրեդերիկոս Գուլիելմոս իրաւացի ցասմամբ գրգռեալ ընդդէմ Նափոլէոնի, վասն յափշտակելոյ նորա 'ի նմանէ զՀանովէր, միաբանեաց ընդ իւր զտէրութիւնս հիւսիսոյ ընդդէմ Դաշնակցութեանն Հռենոսի, յոր և միացան Ռուսք, Շուեդք, և Անգղիացիք. քանզի մեռաւ Փոքս, և 'ի դերև եղին ամենայն ակնկալութիւնք հաշտութեան։ Առաքեաց նախ պատգամ առ ինքնակալն Գաղղիոյ՝ զի առ 'ի հաստատութիւն

խաղաղութեան, բարձցէ նա զղջութիւն 'ի տէրութեանց Գերմանիոյ. ընդ որ սրտմբոտեալ Նափոլէոնի, արդեալ զՀասսիա, զՍաքսոնիա և զքաղաքս հասարակապետական՝ ջխառնիլ 'ի դաշնակցութիւնն Հիւսիսոյ, և մերժեաց զպատգամս թագաւորին Բրուսիոյ։ Յարձակեցաւ անդէն Գուլիէլմոս 'ի Սաքսոնիա, և դշխոյն նորա՝ կին ջքնաղատես աշտանակեալ յերիվար 'ի հանդերձ զինուորական, վառէր զմիտս ժողովրդեան 'ի պատերազմ։

Նափոլէոն մեծայոյս ընդ յաղթութիւն՝ խաղաց 'ի մարտ, և 'ի կրկին ճակատամարտս սահմանեցաւ բաղդ Բրուսիոյ։ Անձամբ առաջնորդեալ ինքնակալին յաղթանակեաց յԵնա, և 'ի ձեռն Ցավու զօրավարի յաղթանակ կանգնեաց յԱւէրսդատ. էառ քաղաքն Լիւպէք և ամենայն բերդորայք աշխարհին անձնատուր եղեն 'ի նա. այսպէս 'ի սակաւ աւուրս ընկճեաց նա զթագաւորն Բրուսացոյ, և մերկեաց զնա գոգցես յամենայն տէրութենէ նորա։ Էարկ յիշխանութենէ և զկայսրընտիրն Հասսիոյ՝ որ պատեհի մնայր խառնել ընդ թշնամիս Գաղղիոյ. և զՍաքսոնիա որ 'ի յիսուն և առաւել ամաց հետէ միացեալ էր ընդ Բրուսս իբրև գաւառ թագաւորութեան, զատուցեալ յաւել 'ի դաշնակցութիւն Հռենոսի և կարգեաց 'ի թագաւորութիւն։

Այլ եղեալ Նափոլէոնի 'ի տեղի ճակատամարտին որ 'ի Ռոզպախ, կանգնէր անդ զկորնանս պարտութեան Գաղղիացւոց. ան-

տի երթեալ'ի Փոցտամ'ի տեսութիւն շիրմի մեծին Փրեդերիկոսի, զարմացեալ սիրա-նայր ընդ յիշատակ առնն քաջի, և առեալ զսուսերն նորա յաղթական՝ կապէր յազ-դեր։

Եւ չու առնէր անտի Նափոլէոն ընդ-դէմ Ռուսաց, որք 'ի կրկին բաժանեալ գունդս ընդ զօրավարութեամբ Պէնիկսէ-նայ և Պուսհոֆտէնայ զօրապետաց, թէ-պէտ և բազում ուրեք 'ի թեթև պատե-րազմունս հարեալ'ի Գաղղիացւոց՝ անդուլ խաղային յառաջ, մինչև հասին 'ի միասին 'ի մեծահռչակ դաշտս Էյլաւայ՝ Պէնիկսէն և Նափոլէոն զօրօք իւրեանց։ Անդ առա-ջի կայր Նափոլէոնի ընդ արիագունդ զօ-րուն Ռուսաց մարտ մղել, և յելս պատե-րազմին սահմանել զբաղդ աշխարհակա-լութեանցն և զազատութեան, և զկենաց իսկ։ Խռնեցաւ մարտն 'ի դաշտս անդ ծաղ-կեալս ձեամբք, և բազում արեանց ճապա-ղեալք խաղացին երկուստեք։ Զարմացեալ Նափոլէոնի ընդ սնդութիւն քաջութեան Ռուսաց, եկ յաշտարակ եկեղեցւոյն Էյ-լաւայ 'ի զնին ռազմից բանակի նոցա։ Ռուսք վանեցին քաջութեամբ զԳաղղիա-ցիս՝ ոչ ինչ գիտելով զինքնակալէն, և մերձ լինէին 'ի գերեզմանն որ զաշտարա-կաւն։ Ընդ վտանգ ինքնակալին իւրեանց խրախուսեցին Գաղղիացիք՝ գիմեցին խուռն 'ի վանել զՌուսս. այլ նոքա վերսին գրոհ տուեալ կալան զվայրն։ Եւ անդ էր տե-սանել զքաջս զի քաջաց հանդիպեալ՝

երկուստեք անյայտ յաղթութիւն դէզա-
դէզ դիակունս կուտէր առ տեղեաւն. և
մեծապէս քաջացան 'ի մարտին դիւցազ-
նական նահատակութեամբ զօրավարքն
Սուվ, Օժրոյ և Տավու ընդդէմ զօրավա-
րացն Ռուսաց: Եւ մինչդեռ Տավու խոր-
տակեալ զձախ թև բանակին թշնամեաց՝
խրախուսէր 'ի սպառ 'ի սպուռ ջախջախանս
նոցա, հասեալ զօրավարն Բրուսաց Լէսթոք
զերծոյց զնոսին, և արձակ համարձակ ճա-
նապարհ արար նոցա 'ի նահանջ:

Յետ պատերազմին Նափոլէոն դարձաւ
'ի ձմերոց իւր 'ի Լէհս: Իսկ սպարապետ
զօրացն Ռուսաց Պէնիկսէն՝ իբրև ետես զի
անձնատուր եղև քաղաքն Տանցքայ 'ի
Գաղղիացիս, ժողովեաց զամենայն զօրու-
թիւնս իւր, և հարիւր երեսուն հազարաւ
պատրաստեցաւ միւսանգամ 'ի մարտ:
Խաղաց Նափոլէոն ընդդէմ նորա, և յետ
յաղթութեանց զօրավարաց իւրոց 'ի բա-
զում ճակատամարտս՝ բաղխեցաւ ընդ նմա
'ի Ֆրիէդլանտ, ե հար զնա և խորտակեաց
'ի սպառ: Խոնարհեցաւ կայսրն Ռուսաց
Աղէքսանդր 'ի հաշտութիւն, և եդան պայ-
մանք խաղաղութեան 'ի Թիլսիդ քաղաք.
և յանձն էառ Աղէքսանդր զամենայն ըզ-
կամս Նափոլէոնի ակնկալութեամբ խոստ-
ման նորա միացուցանելոյ յաւուր միում
զգաւառս Ֆինլանտիոյ, Մոլտաւիոյ և Վա-
լաքիոյ ընդ տէրութեամբ Ռուսաց: Թող-
ուն արքային Բրուսիոյ կէսք 'ի գաւա-
ռաց տէրութեան նորա՝ հանդերձ ծանր

ծանր հարկօք. և ըստ կամաց Նափոլէոնի յանձն առին Աղեքսանդր և Փրեդերիկոս զի լեցին ինքնուրոյն Թագաւորութիւն Սաքսոնիա և Վէսդֆալիա, և մեծ դուքսն Վարսաւիոյ լեցի կայսրընտիր Թագաւորն Սաքսոնիոյ, և եղբարք ինքնակալին Յովսէփ, Լուդովիկոս և Հերոնիմոս 'ի Թագաւորս Նէապօլսոյ, Հոլանտիոյ և Վէսդֆալիոյ (1807):

ԳԼՈՒԽ Զ.

Գրգռել Նափոլէոնի զԱնգղիացիս և զպատերազմ:

Ի հնազանդել կայսերն Ռուսաց կամաց Նափոլէոնի առ 'ի արգելուլ զվաճառականութիւն Անգղիացւոց 'ի սահմանս տէրութեան իւրոյ, հրովարտակ արար Նափոլէոն 'ի Պեռլին և արգել զամենայն տուրևառ ընդ Անգղիացիս, հրամայեալ կողոպտել զվաճառականս Անգղիացիս և զվաճառս նոցա գտեալս 'ի սահմանս տէրութեան Գաղղիոյ և դաշնակցաց նորա. և որ ոք յաղգաց ոչ հնազանդեսցի հրովարտակիս, թշնամի գրեսցի Գաղղիոյ: Այլ վրիպեցաւ յոյժ Նափոլէոն 'ի խորհուրդս իւր. քանզի իրաւունս եմ այնու Անգղիացւոց 'ի վրէժ քինու՝ ունել զտարածութիւն ծովու ընդդէմ նաւաց ամենայն աղգաց, 'ի տառապանս նեղութեան արկանել զժողովուրդս հիւսիսոյ և զհարաւոյ,

որոց կերակրոցն համբարք 'ի տուրևառից Անգղեացւոցն էին. և որ չար ևս է՝ այսու ա-ՃԵցոյց զսերմն անուղղելի թշնամութեան։ Թէպէտ և մեծամեծ փնասս հասոյց Անգ-ղեացւոց, և ընդ ծանր ծանր պարտուք էարկ զնոսա, այլ ոչ խոնարհեցոյց բնաւ 'ի կամս իւր. և առաւել իսկ գրգռեալ էած 'ի հանապազորդ հնարս թշնամութեան և 'ի գործս մեծամեծս՝ որով երագեաց զիւր անկումն։

Դարձ արարեալ յաղթող բանակաւն 'ի Փարիզ, ուր պատուեցաւ յաղթական կամարաւ, եկին ընդ առաջ նորա ժողո-վուրդն և իշխանք մայրաքաղաքին. խօսե-ցաւ առ զօրսն ոստիկանն Սենայ և ասէ. «Նահատակք քաջք, արիացեալք Յենա, Յէյլաւ և 'ի Փրիէտլանտ, իշխանք խաղա-ղութեան, յաւերժական գոհութիւնք ձեզ 'ի մէնջ ընծային։ Արիացեալք 'ի վերայ հայրենեաց, անուն քաջութեան և յաղթա-նակաց ձերոց անմահացին 'ի ձեռն հայ-րենեաց՝ կնքելով անուանց ձերոց 'ի տախ-տակս պղնձիս և 'ի վէմս կոփեալս, յիշատակ որդւոց ձերոց և թոռանց՝ մինչև յազգս հե-ռաւորս։ Վէպք արշաւանաց արութեան ձերոյ վառեսցեն զքաջութիւն և զկորով սերնդոց ձերոց. օրինակաւդ պահեսջիք զսէրութիւնս ընդարձակ, զոր բազկաւ ձերով ամրացուցիք։ Զօրականք քաջք, կամարն յաղթական ամբառնայ 'ի վերայ գլխոց ձերոց 'ի նուէր մեծի բանակին. եկայք ընկալարուք զման պատակաց ձերոց

իւրաքանչիւր։ Հնչեսցեն տօնք հանդիսի յաղթական դարձիդ, և դափնիդեայ պսակք հիւսեալք յերախտագէտ ժողովրդենէ կախեսցին զարծուենչան դրօշուք ձերովք, որ փողփողին 'ի վերայ գլխոց ձերոց »։

Եւ կախեցին զպսական զդրօշուցն, և սկսաւ երգ դարձի յաղթական բանակին զոր երգեալ էր մեծանուն քերթողն Մէհուլ։ Ապա յետ երկուց աւուրց և ծերակոյտն հանդիսիւ շնորհս մատոյց զօրականին, և Նափոլէոն առանձին ատենաբանութեամբ զարշաւանացն և զմարտիցն ցուցեալ ըզվախճան, եցոյց զնշան սրտին 'ի բարօրութիւն Գաղղիոյ և 'ի խաղաղութիւն Եւրոպայ։

Յետ այսորիկ ձեռնթափ լեալ Անգղիացւոց և 'ի Ռուսաց, կամեցան դաշինս բարեկամութեան կռել ընդ Դանիս. և 'ի մերժել նոցա զայն, զայրագնեալ խաղացին նաւատորմաւ 'ի Քոփէնհակ, և ռումբս 'ի նա թօթափեալ՝ յաճիւն դատեցան երեք-հարիւր տունս, և յիսուն և երեք նաւս պատերազմիկս 'ի Դանեաց գերի վարեցին։ Ընդ որ յոյժ ցասուցեալ և Դանեաց, յաւելան ընդ դաշնակիցս Գաղղիոյ. Կուսդաւոս Դ, արքայն Սուեսաց միայն դաշնակից էր Անգղիոյ, որ հարեալ բաղում ուրեք 'ի Գաղղիացւոց և 'ի Ռուսաց՝ կորոյս ըզբազում գաւառս տէրութեան իւրոյ, և վատթարեալ արհամարհեցաւ 'ի հպատակաց իւրոց։ Մերժեցան Անգղիացիք և 'ի բարեկամութենէ Օսմանեանց, քանզի

յետ բազում բանից խոստմանց՝ երկեղուկս արկանէին նոցա զինուք, անցեալ ընդ նեղուցն Դարդանելեայ. այլ իրախուսանօք Սեբաստիանոսի դեսպանին Գաղղիոյ 'ի Կոստանդնուպօլիս զօրացեալ Օսմանեանց վանեցին զնոսա անտի։

ԳԼՈՒԽ Է.

Տիրանալ Նափոլէոնի 'ի Սպանիա։

Ի վախճան 1807 ամին թագաւորութիւնն Փորթոգալաց միայն 'ի ցամաքի անքակ պահեալ զդաշնակցութիւն ընդ Անգղիոյ, իշխէր վաճառաշահ լինել ընդ նոսա. և Նափոլէոն որ ըստ մտահաճ պայմանաց հրովարտակին իւրոյ իրաւունս տայր անձին կարգել զբաղդ ժողովրդոց, արար դաշնադրութիւն անիրաւ ընդ Սպանիոյ 'ի Ֆոնդէնբլլոյ, բաժանել զթագաւորութիւն Փորթոգալաց յերկուս, և գերադոյն հրամանատար կացուցանել նոցա զթագաւորն Սպանիոյ զԿարոլոս Դ։ Խաղաց ժիւնոյ զօրավար քսան և ութ հազարաւ 'ի Լիզպոնա 'ի մայրաքաղաք աշխարհին. այլ մինչ չև հասեալ նորա, ահաբեկեալ թագաւորն Փորթոգալաց եթող զմայրաքաղաք իւր և զտորմիլս նաւուցն, և էանց 'ի Պրազիլ։ Այս արշաւանք Գաղղիացւոց յաջողեալք ձեռնտուութեամբ թագաւորին Սպանիոյ Կարոլոսի Դ, որ դաշնակիցն էր Նափոլէոնի, մանաւանդ թէ հարկատու և

հպատակ, ծածկեալ ունէին խորհուրդս ընդարձակս, միանգամայն և անիրաւս. այս-ինքն է արշաւել ունել և զՍպանիա՝ որ 'ի բազում ամաց հետէ ոչ դադարէր 'ի հեղլոյ զգանձս իւր և զարիւն 'ի շնորհս բարեկամութեան Գաղղիոյ։ Ի յաջողութիւն եղեալ այսպիսւոյ գործոյ՝ Նափոլէոն խնդրեաց 'ի Կարոլոսէ գունդ մի հզօր յօգնականութիւն նիզակակցութեան, և անցոյց զնոսա 'ի Գերմանիա. և անդէն իբրու թէ 'ի զօրացուցանել զբանակ իւր որ 'ի Փորթոգալս, առաքեաց վաթսուն հազար յիւրոց Գաղղիացւոց ընդ առաջնորդութեամբ Միւրատայ փեսային իւրոյ մեծի դքսին Պէրկայ՝ մինչև ցսահմանս Մատրիտայ։ Տարածեցաւ լուր արշաւանացն Գաղղիացւոց 'ի Մատրիտ, և առուին քաղաքացն Պարչէլոնայ, Ֆիկիէրայ, Փամբեղոնայ և սրբոյն Սեբաստիանու. և զի առ ոսն հարեալ Նափոլէոնի զդաշինսն Ֆոնդէնբլլոյ՝ կամէր զգաւառս որ 'ի ձախակողմն Էպրոյ մարզ կալոգել իւրումն ինքնակալութեան։ Յապուշ կրթեալ ահաբեկ եղև թագաւորն Սպանիոյ Կարոլոս. և նենգաւոր իշխանն նորա Կոտո որում ամենևին վստահացեալ էր թագաւորն՝ խորհուրդ ետ նմա և դըշխոյին թողեալ զՍպանիա՝ անցանել յԱմերիկա ըստ օրինակի թագաւորին Փորթոգալաց։ Եւ 'ի հաւանել նոցա՝ արքայորդին Փերդինանտոս, ոխերիմ թշնամի նենգաւոր իշխանին, զինեաց զժողովուրդն յապստամբութիւն՝ ցուցեալ զմատնու-

թիւնն և զօրքն ձեռն ետուն նմա։ Կալաւ նա զմատնիչ իշխանն, եդ 'ի դիպահոջ և զհայրն իւր՝ բռնադատեալ հրաժարել 'ի գահէն, և յաղթանակաւ իբրև թագաւոր Սպանիոյ եկն եմուտ 'ի Մատրիտ։ Ի նմին պահու մինչդեռ Միւրատ իբրև ընդ օրինաւոր թագաւորի վարեալ ընդ Փերտինանտոսի՝ վստահ առնէր զնա 'ի բարեկամութիւն ինքնակալին, Նափոլէոն 'ի ծածուկ գրգռէր զԿարոլոս յետս կոչել զբռնադատեալ հրաժարումն իւր 'ի թագաւորութենէն. և այրն տկարամիտ պատրեալ 'ի նենգութենէ ինքնակալին, բողոք եբարձ ընդ անիրաւ բռնադատութիւն որդւոյն, և դաշնաւոր իրացն՝ կացուցեալ զՆափոլէոն չոգաւ անձամբ 'ի Պայոն, ուր աճապարեալ եկեալ էր ինքնակալն անժոյժ 'ի յափշտակել զաւարն։ Ոչ կարաց Փերտինանտոս մերժել զմիջնորդութիւն խաղաղութեան ինքնակալին, և վստահացեալ 'ի խոստմունս նենգութեան և ստիպեալ իսկ ակամայ՝ չոգաւ առ նա։ Նափոլէոն 'ի սկզբան անդ յորդորանօք կամէր համոզել զինեալ նմին, թողուլ 'ի ձեռս իւր զթագաւորութիւնն. այլ իբրև ետես զի ոչ ազդէին 'ի նա բանք յորդորանաց, թողեալ զնենգուպատիր խաբկանս՝ 'ի սպառնալիս ձեռն էարկ. «Գիտես, ասէ, 'ի դիպաց անտի անցելոց, զի ոչ ոք անպատուհաս իշխեսցէ հակառակ կալ կամաց իմոց»։ Յայնժամ պատասխանի ետ Փերտինանտոս անվեհեր քաջութեամբ. «Քաջ իսկ հասու

եմ խորհրդոց բանիցդ. յուշ առնես ինձ զարկածս ազգակցին իմոյ դքսին Էնկիէնայ. արդ եթէ կամիս յափշտակել յինէն զթագս, խողխողեա և զիս իբրև զնա,,: Ընդ որ զարմացեալ ինքնակալին և տարակուսեալ, մեկնեցաւ 'ի բաց. այլ իշխանք նորա Ճարտարութեամբ բանից զկնի վեցից եօթնեկաց հաւանեցուցին զարքայորդին հրաժարել 'ի թագաւորութենէ և թողուլ անդրէն 'ի հայրն, յորմէ ընկալաւ զայն Նափոլէոն. և եկաց Փերտինանտոս 'ի գերութեան 'ի Գաղղիա ընդ հօր իւրում:

Այսպէս խարդաւանօք 'ի գլուխս տարաւ Նափոլէոն զատելի գործ բռնակալութեան, այլ 'ի սպառսպուռ կործանումն իւր:

ԳԼՈՒԽ Ը.

Վարանջէլ Սպանիոյ 'ի Ներսոսպ յԵռին Գաղղիոյ-ոյ, և պատերազմաս ընդդէմ կալ:

ՋՐԿԵԱԼ Նափոլէոնի 'ի թագաւորութենէ զԿարոլոս և զՓերտինանտոս, կարգեաց 'ի թագաւոր Սպանիոյ զՅովսէփ զեղբայր իւր զերէց՝ խորհրդովաւագանւոյն Կատոլիոյ և օրինօք ատենի ժողովոյն Պայոնայ. և նորա թողեալ զթագաւորութիւն Նէապօլսոյ 'ի փեսայ իւր Յովակիմ Մուրատ, եկն 'ի Սպանիա (1808): Լուեալ Սպանիացւոց 'ի Մատրիտ զընտրութիւն Յովսէփայ 'ի թագաւոր՝ նորոգ սահմանա-

գրուելեամբ աստենի ժողովոյն Պայոնայ, 'ի զէն գիմեցին. այլ աճապարեալ Միւրատայ կալաւ զգլխաւոր տեղիս քաղաքին, և ընթացեալ ընդ փողոցս 'ի սուր և 'ի հուր կոտորեաց արս տասն հազար: Լուր անգութ կոտորածին և թագաւորութեան Յովսեփայ տարածեցաւ ընդ բոլոր Սպանիա. և անդէն զայրագինս զինեցաւ ազգն ողջոյն, և կղերք առաջնորդ կային ապստամբութեանն՝ վառեալ զժողովուրդն 'ի սէր օրինաւոր թագաւորին իւրեանց Փերտինանտոսի՝ և յատելութի Նափոլէոնի, Դերաքրիստոս զնա կարգալով. և զօրքն ողջոյն յաւելան 'ի նոսա, արարին աստեան ժողովոյ 'ի Սեւիլիա, և մերժեցին զօրէնս ժողովոյն Պայոնայ: Սպանիացիք ըմբռնեալ յանկարծօրէն, անառաջնորդք, անօգնականք, անյաջողակք, համբերող ժուժկալութեամբ ընդդէմ կացին զօրավարաց քաջաց և հրամտից, բազմաթիւ և քաջակիրթ զօրաց, և զօրութեան գաղղիոյ՝ յորմէ դողայր յայնժամ բովանդակ Եւրոպա. յանձն առին թաղել ընդ աւերակօք իւրեանց. քան ընդունել զլուծ նենգաւոր բռնաւորին:

Յաւուր ոծնի Ս. Փերտինանտոսի գիմեցին 'ի կոտորած գաղղիացւոց. կալան զնաւատորմ նոցա 'ի Քատիչէ, և ընդ սուր հանեալ զնաւատոտիս, յարձակեցան ապա 'ի բուռն առին զքաղաքս, և զգաղղիացիս և զկողմնակիցս նոցա առ հասարակ սրոյ ետուն ճարակ, և հռչակեցին պատերազմ մահու չափ ընդդէմ գաղղիացւոց. 'ի նոյն կատաղութի

վառեցան և Փորթոգալք։ Զօրավարն Պէ-
սիէր յաղթական գտեալ 'ի Մէտինա՝ եմոյծ
զարքայն Յովսէփ 'ի Մատրիտ 'ի 20 յուլիսի.
այլ անդէն յետ սակաւուց 'ի պարտութիւն
մատնեալ զօրավարին Տիւփոնի 'ի Պայլէն, և
անձնատուր լեալ քսան և վեց հազար զ-
ւրքն, խորտակեցաւ զօրութիւն Գաղղիոյ
'ի Սպանիա, և բնիկ ժողովուրդ երկրին և
ևս խրախուսեաց։ Բռնադատեցաւ Յովսէփ
թողուլ զՄատրիտ յուլթերորդում աւուր
մտից իւրոց 'ի քաղաքն հանդիսիւ։ Եհաս
յօգնութիւն ապստամբելոցն Փորթոգալաց
և գունդ մի Անգղիացւոց առաջնորդու-
թեամբ Վելինկդընի, և գումարեալ 'ի մի
զզօրս աշխարհին՝ խաղացին ընդդէմ սակա-
ւաձեռն գնդին Ժիւնոտայ. հարին զնա 'ի
Վիմէյրոյ, և հալածեցին յաշխարհէն։

Անտի փութացան Անգղիացիք յօգնու-
թիւն Սպանիացւոց՝ ընդ որս փոքր մի յա-
ռաջ թշնամիք էին ոխերիմք։ Լուեալ Նա-
փոլէոնի զարկածս բեկման զօրաց իւրոց 'ի
Սպանիա, զայրանայր ընդ այն առաջին ա-
մօթապարտ խորտակումն զինուց իւրոց, և
անդէն հրաման տայր ամենայն զօրավա-
րաց իւրոց և գնդից՝ որք 'ի Գերմանիա և
Իտալիա, անցանել ընդ Պիւրենեանս առ
'ի սրբել զնախատինս պարտութեանն, և
հեղձուցանել անդէն 'ի սկզբանն զապստամ-
բութիւնն զայն ահաւոր և յեղակարծ։ Կո-
չեաց զզօրս իւր, ժողովեաց զնոսա յափանց
անտի Նիեմէնայ, Սփրեայ, Էլպայ և Դա-
նուբայ, և խօսեցաւ ընդ նոսա վառեալ 'ի

իրախոյս և 'ի վրէժինդրութիւն. "Զօրականք քաջք, կարօտ եմ զօրութեան բազկի ձերոյ, տարցուք զարծուիս մեր յաղթականս անդր քան զարձանսն Հերակլեայ, և լուծցուք անդ զվրէժ նախատանաց մերոց: Գերազանցեցէք արութեամբ քաջուն զարդի զօրականաց, այլ ի՞նչ ձեր հասեալ փառաց հռոմէական զօրականին՝ որ 'ի միում զինուորութեան յաղթանակս կանգնեցին 'ի Հռենոս, յԵփրատ, 'ի Լիւրիկէ և 'ի Դակիա: Խաղաղութիւն երկար և բարօրութիւն յարատև՝ վարձք լիցին վաստակոց քաջութեան ձերոյ: Գաղղիացի քաջ ոչ կարէ և չէ իսկ նմա օրէն դլաւ դադարել, մինչև ոչ բացցի նմա ծով 'ի ճանապարհ համարձակ: Զօրականք, դրոշմեսցին յաւերժ 'ի սիրտ իմ ամենայն գործք վաստակոց ձերոց՝ որ 'ի բարօրութիւն Գաղղիոյ և 'ի փառս իմ»: Եւ զկնի հակիրճ և ազդու բանից արձակեաց զնոսա 'ի Սպանիա:

Հաստատեալ էր նորա 'ի մտի նուաճել 'ի սպառ զՍպանիացիս, վասն որոյ և ամրացոյց զդաշինս բարեկամութեան իւրոյ ընդ Աղեքսանդրի կայսեր Ռուսաց՝ հանդիպեցնմա երեսօք 'ի քաղաքն յԷրֆուրթ: Զօրք Աղեքսանդրի հատեալ կալեալ էին զԳինլանտիա 'ի Շուեդաց, և կոխեալ զգաւառս Օսմանեանց զՄոլտաւիա և զՎալաքիա. և բանակք զօրաց Գաղղիացւոց հորդան տուեալ 'ի Սպանիա: Կայսերքն երկոքին պայմանս եդին ձգել զձեռս իւրեանց համարձակ յանիրաւ աշխարհակալութիւն,

և 'ի խլրտել թշնամեաց 'ի վերայ իւրեանց՝ հասանել իրերաց թիկունս: Դաշանց հաստատելոց 'ի փառասիրութիւն ևեթ ոչ էր ակնկալութիւն տևողական լինելոյ 'ի փոփոխել օգտի շահուց, սակայն վստահացեալ Նափոլէոնի ընդ խաղաղական կամս կայսեր Ռուսաց՝ չու արար անձամբ 'ի Սպանիա: Սպանիացիք գումարեալ ութեւտասն բիւր զօրականս, ունէին 'ի ձեռն զօրավարաց քաջաց Փալաֆոսայ, Քասդանոսայ և Պլաքայ զամենայն երկիրն յափանցն Պիւքայայ մինչև 'ի Սարակոսսա քաղաք:

Խաղաց Նափոլէոն ընդդէմ նոցա, և 'ի սուղ ժամանակի 'ի ձեռն զօրավարացն և քաջակիրթ հինաւուրց զօրականին յաղթութիւնս 'ի գլուխ տանէր ամենուստ: Զօրավարն Սուլ եհար վանեաց զբուն բանակին թշնամեաց 'ի Պուրկոս. 'ի վաղիս անդր Վիկտոր ջաղխեաց զձախ թև բանակին յԷսպինոզա. և զօրավարն Լան հալածական տարաւ զայն թև թշնամւոյն 'ի Թուտելա: Միայն կիրճն Սոմմոյ–Սիերրայ լերանց 'ի ձեռս մնայր թշնամեացն և արգելոյր զճանապարհ Գաղղիացւոց 'ի Մատրիտ. թընդանօթք վեշտասան հրձիգ լինէին անտուստ, և անմատոյց թուէր տեղին: Շարժեաց խաղացոյց անդր Նափոլէոն զնիզակաւոր զօրն Լեհացիս, և կալեալ զտեղին՝ յաւուրն երրորդի գեկտեմբեր ամսոյ եմոյծ զԳաղղիացիս 'ի Մատրիտ: Նա մարաջախան Սուլ հետամուտ լեալ Անգղիացւոց և Փորթուգալաց՝ եհար զնոսա 'ի Քորոնեայ, սպան

զզօրավար նոցա զՓոն Մուր, և զզօրսն հա-
լածական տարաւ 'ի Սպանիոյ։

Սպանիա ընկճեալ թուէր 'ի սպառ՝
բաց 'ի քաղաքաց ոմանց, ուր բոյնքն էին
ապստամբութեան, և Յովսէփ եմուտ 'ի
թագաւորութիւն իւր. իսկ Նափոլէոն
ջանահնար լինէր բազում խոստմամբք ա-
զատութեանց՝ ամոքել զլուծ ծառայու-
թեան Սպանիացւոց. այլ նոքա վառեալք
'ի քահանայից իւրեանց՝ զայրագին ևս գըր-
գռէին 'ի մարտ և յապստամբութիւն։

Յայտնապէս ցուցաւ քաջութիւն Սպա-
նիացւոց և առեղծութիւն նոցա ընդդէմ
Գաղղիացւոց 'ի պաշարման Սարակոսայ
մայրաքաղաքին Արակոնայ, ուր յիսուն
հազար Արակոնացիք յաւելեալ 'ի բնակիչս
քաղաքին՝ վստահք 'ի քաջութիւն զօրա-
վարին իւրեանց Փալաֆոսայ, արութեամբ
պնդեցին զանձինս յանպարիսպ և յանպա-
տուար քաղաքի ընդդէմ հզօր թշնամւոյն։
Հասին Գաղղիացիք պատեցին զքաղաքաւն.
զայրագին էր մարտն, և յամենայն յարձակ-
մունս ոչ սակաւք 'ի քաջացն Գաղղիացւոց
տապաստ անկանէին. Փալաֆոս յարձակեալ
'ի դուրս՝ խնոյր զբերանս թնդանօթիցն նոցա,
ընոյր զնրամս, և զբազում գիշերաց
զվաստակս նոցա 'ի միում ժամու ապակա-
նեալ եղծանէր։ Սակայն և նոցա օր ըստ
օրէ զօրացեալ, անընդհատ զաւուրս քա-
ռասուն ռումբս 'ի քաղաքն տեղային. այլ
զի տունք քաղաքին կղմնտրեայք էին և
քարաշէնք՝ անծախեալք գոգցես 'ի հրոյ,

սակաւ ինչ վնասէին՝ և բազումք 'ի սարսեալ
կրեայ նկուղս ղօղէին։ Բայց յապականու-
թենէ օդոյն անկաւ 'ի նոսա ախտ սաստիկ
տենդի, որ և անդէն ճարակեալ յամրա-
կանս քաղաքին անհնարին կոտորածս հա-
սուցանէր. և իբրև այսպէս ամենուստ զան-
ձինս պաշարեալս տեսին 'ի մահուանէ,
բազմաց լաւ թուեցաւ առ տագնապ վըշ-
տին՝ անկանել ընդ սրով թշնամւոյն, քան 'ի
խորս գետնախշոյս շնչասպառ մեռանել։
Ապա եմուտ թշնամին 'ի քաղաքն, այլ ոչ
կարաց յառաջել մինչ 'ի նեղքս. հատեալ
էին ամենայն փողոցք պատնիշօք, և տունք
ամրացեալ պահապանօք իբրև մէն մի ամ-
րոցս, զորս ուրոյն ուրոյն պարտ էր յար-
ձակել և առնուլ։ Բազում անգամ հրձգու-
թեամբ և վառօդիւ հանեալ զամրականն 'ի
տանց, և ոչ կարէին զտեղն առնուլ անդ. զի
մերձակայ տանցն բնակիչք յարձակեալ 'ի վը-
նոցս, յաւերակս անդ տապաստ արկանէին
զնոսա։ Անթիւ պատմին գործք զարմանալի
արութեան պաշարելոցս քաջաց և անհնա-
րին 'ի պատմել, ուր և օրիորդք անգամ ա-
ռաքինացան. և ոչ խղճեմք ասել զի եթէ
ոչ հարուած ախտին խափան արկանէր պա-
տերազմին, տեսէին տակային նոքա 'ի սպառ։

Յերկուս ամիս՝ յիսուն և չորք
հազարք անկան 'ի հիւանդութենէ և 'ի սրոյ
պատերազմին. և ոչք մնացինն, 'ի նոյն
ըմբռնեցան ախտ սրածութեան. և 'ի լուսին
աղեռոյց նոցա՝ ըմբռնեցաւ յախտ մահուն
և զօրավարն Փալաֆոս, որոյ հանճարով և

արութեամբ վառէին բազուկք քաջացն պաշարելոց. և սոխպեցան պաշարեալքն անձնատուր 'ի Թշնամին լինել: Եկին ամրականք յաւերակաց և 'ի մոխրոց քաղաքին՝ Թողուլ զզէնս 'ի զօրավարն Գաղղիացւոց 'ի Լան, և մեկնել անտի ազատ. ածաւ և քաջն Փալաֆոս իբրև գերեալ 'ի պատերազմի, և վասն ընդ երկար պաշտպանութեան հայրենեաց՝ բազում վիշտս կրեաց 'ի գերութեանն:

ԳԼՈՒԽ Թ.

Մի-ասանգամ պապերազմն Աւստրիացւոց ընդ Նափոլէոնի:

Տեսեալ կայսեր Աւստրիոյ զի հեռացաւ Նափոլէոն ընտիր ընտիր զօրօքն 'ի նուաճել զՍպանիա, և զի բնակիչք Թիրոլայ խլրտին ընդդէմ Պաւարացւոց՝ ընդ որոց ձեռամբ արկեալ էր զնոսա Նափոլէոնի, համարձակեցաւ դարձեալ զէն առնուլ դաշնակցեալ այս հինգերորդ անգամ ընդ Անգլիոյ. զօրաժողով եղև արանց հինգհարիւր հազարաց, սպարապետս կացուցեալ զեղբայր իւր զմեծ դուքսն Կարոլոս: Յուլթ խումբս բաժանեցաւ բանակն. առաջինն 'ի ձեռս Փերտինանտոսի մեծի դքսի որ հանդերձեալ էր խաղալ 'ի Լեհաստան. երեք խումբք ընդ զօրավարութեամբ Յովհաննու արշիդքսի զերեսս հաստատէին յԻտալիա և 'ի Թիրոլ. և

այլք ջորք գումարեալ 'ի սահմանագլուխս Պաւիերայ պատրաստէին խաղալ ընդ Հռենոս, ապատամբեցուցանել զամենայն Գերմանիա, ուր բազումք խլրտման իրիք մնային առ 'ի զէն առնուլ յազատութիւն հայրենի գաւառաց իւրեանց։ Պահապան զորք Գալղիացւոց 'ի գաւառսն յայնոսիկ չէին յայնժամ աւելի քան զհարիւր և երեսուն հազարս սփռեալք 'ի Պալդիկ ծովէ մինչև ցԴանուբ. և զորավարքն նոցին Պեռնատոդ, Տավու և Ուտինոյ. իսկ զԻտալիա և զԲիկմոնդ պահէր Ջոկատիւ զորաց փոխարքայն Եւգինէոս։

Ի լուր համբաւոյ պատրաստութեանցն Աւստրիոյ և 'ի խլրտիւն զորաց նորա՝ Թողեալ Նափոլէոնի զՍպանիա աճապարեաց 'ի Փարիզ. և արձակեալ գունդս գունդս զորաց 'ի Գերմանիա և Յիտալիա, ապա եհաս և ինքն յափունս Դանուբայ, և տեսեալ զի հակառակ հրամանաց իւրոց զորքն 'ի բազում գունդս բաժանեալ են հեռի 'ի միմեանց, աճապարեաց յօգուտ առնուլ զյապաղումն թշնամւոյն, և հրամայեաց զորավարացն Տավուտայ և Մասենայ գալ միախմբիլ 'ի Նայշգատ։ Զարմացեալ Կարոլոսի ընդ արագութիւն և ընդ հնարագիտութիւն Նափոլէոնի, ոչ իշխեաց դիմագրաւել 'ի մարտ. այլ մերձեցեալ յաջակողմն Դանուբայ, յարձակեցաւ կալաւ զքաղաքն Ռագիզբոն։ Իսկ Նափոլէոնի, գումարեալ 'ի միվայր զզօրսն՝ շարժեցաւ 'ի պատերազմ, եհար զթշնամին հուպ ընդ հուպ յԱպենս-

պէրկ, 'ի Լանտահուդ, յԷքմիւլ և 'ի Ռա-
դիզբոն, ուր և էառ թեթև ինչ վէրս 'ի կոչ
ոտից իւրոց։

Մեկնեցաւ Կարոլոս 'ի սահմանագլուխս
Պաւիէրայ, և Տավու զհետ պնդեցաւ նո-
ին իրախուսեալ յինքնակալէն փութալ
հասանել ունել զՎեննա։ Ի չու անկաւ և
ինքն արագ արագ. և յանցանելն առ Տիրշ-
թէյմ ամրոցաւ՝ ուր Հռիքարտոս Առիւծա-
սիրան մականուանեալ թագաւորն Անգ-
ղլոյ փակեալ էր 'ի դարձին իւրում 'ի սրբոյ
երկրէն՝ ձերբակալեալ 'ի կայսերէն Գեր-
մանիոյ, հայեցեալ յերկար զարմացմամբ
ընդ աւերական, և յառաջեալ զընթացս իւր
ասէ. "Եւ սա իբրև զմեզ պատերազմունս
մղեաց 'ի Պաղեստին և յԱսորիս, և լաւա-
գունի հանդիպեցաւ բաղդի յԱքքեա քան
զիս, այլ չեղև արիագոյն քան զքեզ, քաջդ
Լան։ Եհարնա զքաջն Սալահատին զՍուլ-
դանն Եգիպտոսի. այլ իբրև եհաս 'ի սահ-
մանս Եւրոպայ, անկաւ 'ի ձեռս արանց
վատաց, և 'ի դքսէն Աւստրիոյ վաճառե-
ցաւ կայսեր Գերմանիոյ. յարքունիս նորա
Պլոնտել միայն հաւատարիմ գտաւ նմին"։
Եւ վերատին դարձուցեալ զաչս իւր 'ի վերայ
գոթաձև աշտարակաց ամրոցին, յաւել ա-
սել. "Եւ միթէ այժմեանս ժամանակի
աշխարհակալ զերծ գտանիցի յարկածից
անտի Հռիքարտոսի"։ Զայս ասաց և անկաւ
'ի տխրութիւն խոր և լռին. զմտաւ ածէր
թերևս զի յատելութենէ անտի թշնամեացն
նոյն դէպք որ անցին ընդ Հռիքարտոս՝

անցցեն և ընդ ինքն յաւուր միում և չգտցի ոք նմա Պլոնտէլ ազատիչ. այլ դեռ չև էր հասեալ ժամ նորա, և մնային նմա նորանոր յաղթանակք: Եմուտ յերեքտասաներորդ աւուր մայիսի 'ի Վեննա, այս երկրորդ անգամ. (1809). ուստի մեկնեալ էր կայսրն Փրանկիսկոս զօրօք իւրովք, և Կարոլոս գայր մերձենայր 'ի մայրաքաղաքն, և յանդիման նորա ղակիշ ածեալ նստէր 'ի Վակրամ: Հարկ 'ի վր կայր Նափոլէոնի առ 'ի վախճանտալ մարտին՝ խորտակել և զայն բանակ զօրաց. այլ կամուրջք Դանուբայ քայքայեալ էին, և գետն առատացեալ խաղայր ընդ մէջ երկուց բանակացն. և առ 'ի մօտ մատչել առ թշնամին՝ բազում աշխատութեանց պէտք էին և մեծամեծ վտանգաց:

Կղզիք բազումք են 'ի Դանուբ շուրջ ըզ մայրաքաղաքաւն. և մեծագոյն 'ի նոսա Լոպաւ գոգցես հանդէպ Վեննայ սակաւուք տարանջատ կայ 'ի նմանէ կրկին առաջովք Դանուբայ: Յանդիման կղզւոյն 'ի հանդիպոյ յափունան են գիւղքն Ասփէռն և Էսլինկ. անդ ընդ մէջ գիւղիցն և կղզւոյն չէ ինչ Դանուբայ աւելի քան զհարիւր չափ գաղղիական լայնութիւն: Ընդ այս կղզի կամեցաւ Նափոլէոն անցանել յայնկոյս. ետ հաստատել կամուրջս, և էառ զկղզին. և զօրացոյց զիւրան յաշխատութիւն կամրջացն անցանել 'ի ձախակողմն գետոյն: Անցին ընդ այն զօրավարքն Լան և Մասենա երեսուն հազարաւ ընդդէմ հարիւր հազարացն Աւստրիացւոց, և զաւուրս երկու գոռ պա-

սերազմաւ հնգիցս առին զգիւղն Էալինկ և Ապիէռն, և հնգիցս կորուսին։ Անցին և այլ գունդք Գաղղիացւոց յօգնութիւն քաջացն, և Նափոլէոն վառեալ զիւրսն՝ յարձակեցաւ 'ի վերայ Աւստրիացւոց՝ դղրդեցոյց շարժեաց զբանակ նոցա, և ձեռնտուութեամբ քաջին Լանայ հարուածեալ զնոսա, իբրև հետամուտ լինէր, գիտաց զխորտակել կամրջացն հնարագէտ հանճարով մեծի դքսին Կարոլոսի, որոյ մեծամեծ գերանս և գաւազանս կապեալ 'ի քարինս և արկեալ 'ի հոսանս ջուրց, բաղխեալով նոցին ընդ մոյթս կամրջացն խորտակեալ լուծանէր. և զի յայնմանէ արգելաւ մեծ մասն զօրացն յայնկոյս, զկայ էառ Նափոլէոն և եհար զնահանջ։ Յայնժամ ժողովեալ Աւստրիացւոց դիմեցին 'ի վերայ Գաղղիացւոց, և հարուածս մեծամեծս հասուցին նոցա, և անդ ընդ այլս 'ի քաջաց անկան և զօրավարքն Սէնդ Իլէր, և Լան բարեկամ նորա դուքսն Մոնթէպէլլոյ։ Սպառ սպուռ ջախջախանք 'ի վերայ կային Գաղղիացւոց և ձերբակալ անկանել նորին ինքեան Նափոլէոնի եթէ ոչ էր քաջին Մասենայ իբրև ժայռ մի հաստատուն արձանացեալ զդէմ կալեալ Կարոլոսի. որով պարապ առին նոքա մեկնել և ամրանալ 'ի կղզին Լոպաւ, թողեալ յահաւոր ճակատամարտին առաւել քան զքառասուն հազար դիականց։

Լուեալ զդէպս իրացն փոխարքային Իտալիոյ Եւգինէոս հանդերձ երևելի զօրավա-

ըօք իւրովք, յետ յաղթութեանց իւրոց 'ի Փիաւէ, 'ի Ս. Դանիէլ, 'ի Թարվից և 'ի Կորից, և յետ վանելոյ առաջի իւր զուլթսուն հազար զօրս Յովհաննու մեծի դքսի, և պատերազմին որ 'ի Ռասապ, եկն ետհաս յօգնութիւն Նափոլէոնի 'ի կղզին՝ ուր փակեալն էր: Զկնի քառասնօրեայ վաստակոց ձգեաց Նափոլէոն երիս մեծամեծ կամուրջս 'ի վերայ Դանուբայ, և միացոյց զկղզիսն, որոց եդ անուանս ըստ անուանց քաջացն անկելոց Լան, Տէսվայնը, Սէնդ Իլէր, և էանց հարիւր յիսուն հազար զօրօք և հինգարիւր թնդանօթովք յայնկոյս ընդդէմ Աւստրիացւոց 'ի Վակրամ: Դուն ուրեք է տեսանել 'ի վէպս գործ յանդգնութեան իբրև զայժմուս զոր գործեաց Նափոլէոն. քանզի 'ի պարտելն զմնայր նմա ակնկալութիւն յետս նահանջելոյ կամ տեղի փախստի, բայց եթէ գետակուր կորընչել. այլ նա անվեհեր ձեռն արկ 'ի կատարումն խորհրդոցն: Եւ զաջ թև բանակին 'ի Տավու և յՈւանինոյ, զբուն յԵւգինէոս և 'ի Պեռնատոդ և 'ի Սաքսոնս հանդերձ Իտալական գնդիւ, և զահեակն 'ի Մասենա. խմբեցաւ պատերազմն գոռ և յամառեալ. բազում Ճապաղիք արեանց խաղացին ասի և անտի. և ուր ուրեմն վրիպանօք թշնամւոյն և նահատակութեամբ բազմութեան իւրայոցն տարաւ Նափոլէոն զյաղթութիւնն: Այլ թէ որքան արեանց գինք եղև բազմաղէտ յաղթութիւնն, քաջ 'ի միտ առնուլ է 'ի թղթոյ

ուրումն 'ի սպայից՝ որ գրէր առ բարեկամ իւր թէ "Մնացորդքն 'ի զօրաց մերոց հետամուտ են գնդից Աւստրիացւոց,, : Տավուէառ զՎակրամ, արին Մաքտոնալ՝ որ խբրև մրրիկ փոթորկեալ սասանեցոյց զթշնամին, եհաս մինչև ցՊրիւն. անդր հարեալ Նափոլէոնի զյաղթական վրանսն՝ գիրկս էարկ քաջի զօրավարին, և պատուեաց զնա իշխանութեամբ մարաջախտութեան. նոյնպէս և զՈւտինոյ և զՄարմոն :

Արիւնահեղ պատերազմն Վակրամայ վճռեաց զբաղդ Աւստրիոյ. և զկնի խորտակելոյ Յովհաննու և Փերտինանտոսի 'ի Լոմպարտիա և 'ի Լեհս՝ խոնարհեցաւ կայսրն Փրանկիսկոս 'ի հաշտութիւն, և կռեցան դաշինք խաղաղութեան 'ի Վիեննա, որով թողեալ բազում գաւառս 'ի յաղթողն, ընկալաւ կայսրն զօրէնս հրովարտակին Նափոլէոնի ընդդէմ Անգղիոյ :

ԳԼՈՒԽ Ժ.

Գրաբել Նափոլէոնի զՀռոմ, և արքայական առնել զյահանայապետն :

ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՆ Պիոս Է, վշտացեալ ընդ կորուստ գաւառաց իւրոց և ընդ արհամարհութիւն իշխանութեան իւրոյ առաջի Նափոլէոնի, մերժեալ էր զդաշնակցութիւն նորա, ընդունելով զվաճառս Անգղիացւոց յերկիր տէրութեան իւրոյ: Ծանրացաւումն լեալ ընդ այն Նափոլէոնի,

զկնի հաշտութեանն ընդ կայսեր՝ էարկ անիրաւութեամբ զքահանայապետն յաշխարհական իշխանութենէ, և առաքեաց զոմն 'ի զօրավարաց իւրոց ստիպել զնա հրաժարել 'ի տէրութենէն: Եկն եմուտ զօրավարն 'ի գիշերի առ քահանայապետն, աղդ առնել նմա զհրաման ինքնակալին. անվեհեր արութեամբ պատասխանի տուեալ սրբակենցաղ ծերունւոյն առ զօրավարն այն, ասէ. "Ոչ է ինձ մարթ հրաժեշտ տալ յիշխանութենէս, և ոչ իսկ կամիմ. քանզի առաջի Աստուծոյ խոստացայ պահել զժառանգութիւն սրբոյ եկեղեցւոյն և անհնար է ինձ անցանել զերդմամբս"։ Ասէ զօրավարն, "Ցաւէ ինձ, տէր իմ, զի չը-կամութիւն քո այդ նորանոր տառապանաց լցցի քեզ առիթ"։ Քահանայապետն ասէ. "Եւ ոչ մի ինչ յաշխարհի ոչ կարէ շարժել զիս 'ի մտացս հաստատութենէ. զի պատրաստ եմ մինչև զյետին շնթ առեան իմոյ հեղուլ, նաև մեռանել այժմէն, քան գործել ինչ ընդդէմ երդմանս"։ Տեսեալ զօրավարին զհաստատութիւն մտացն նորա, ծանոյց նմա զկամն ինքնակալին ելանել 'ի քաղաքէն։ Յայնժամ ասէ քահանայապետն. "Ահա վարձք, և փոխարէնք բարեացն ամենայնի՝ զոր արարի եկեղեցւոյն Գաղղիոյ. թերևս յանցաւոր գտայ այնու առաջի Աստուծոյ, և պատուհասել այժմ կամի զիս. խոնարհիմ ընդ ձեռամբ նորա"։ "Ցաւ է ինձ յոյժ, հայր սուրբ, ասէ զօրավարն, զի ստիպեալ եմ 'ի գլուխս տանել

զպատուէր ինքնակալին, քանզի և ես ուղ-
ղափառ եմ և որդի քո »։ Եհարց յայն-
ժամ կարդինալն Բաքքա, թէ ի՞նչ թոյլ
տուեալ կամեցողացն ուղեկից քահանայա-
պետին լինել։ Եւ լուեալ զի ինքեան միայնոյ
թոյլ տուեալ էր ուղեկցութեան, և զի
կէս ժամ ևեթ շնորհեալ է նոցա 'ի պա-
տրաստութիւն, յարեաւ քահանայապետն
յաթոռոյն, և զայս ևեթ ասաց բան. « Եր-
թիցուք. կատարեսցին կամք Տեառն յիս »։
Եւ այսպէս հապճեպ տագնապաւ գիշե-
րայն հանին Գաղղիացիք զծերունին սուրբ
'ի պալատանէն և 'ի քաղաքէն, և յուղար-
կեցին 'ի Սաւոնա, և անտի 'ի Ֆոնդէնը-
պլոյ, տառապանօք գերութեան արգելա-
կան պահեալ զամս չորս. և տիեզերահռչակ
վաղեմի քաղաքն աշխարհի փոխեցաւ 'ի
մարզս պետութեան Գաղղիոյ։

Սակս անիրաւ բռնութեանցն ասելի լի-
նէր Նափոլէոն առ օտարս, և ուրեք ուրեք
կենաց իսկ նորա դարանս գործէին, որպէս
և յառաջ քան զկռել վերջին դաշանցն ընդ
կայսերն. յանցանէին նորա ընդ Գերմանիա
զօրօք իւրովք, եկն եկաց առաջի նորա
պատանի մի գերմանացի և սկսաւ խօսել 'ի
բարբառ իւր հայրենի։ Սիրեաց զնա Նա-
փոլէոն և առաքեաց առ զօրավարն Ռափ,
որ լսէր զլեզու պատանւոյն. այլ նորա
խոյս տուեալ և կրկին շրջան արարեալ 'ի
Թիկանց ամբոխին, մերձեցաւ առ ինքնա-
կալն, և տեսեալ Ռափայ առ նմա զէնս
ծածկեալս՝ կալեալ էած առ Նափոլէոն,

մինչ դեռ գոչէր պատանին եթէ յաղատել զՀայրենիս իմ 'ի բռնաւորէն եկեալ եմ աստ։ Նափոլէոնի կոչեալ զնա առաջի իւր, համարէր լինել յիմար ոք և հիւանդ. բայց նա պնդագոյնս աղաղակէր թէ ոչ յիմար եմ և ոչ հիւանդ. և վկայեալ 'ի բը-ժըշկաց վասն առողջութեանն, "Եւ կարի իսկ քաջ, ասէր Փրեդերիկոս Սթապս, քան-զի այս էր անուն պատանւոյն, կարի իսկ քաջ առողջ եմ"։ Զարմացեալ Նափոլէոնի ընդ հաստատութիւն մտաց նորա, շնոր-հել խոստացաւ զկեանսն՝ եթէ զղջասցի։ Եւ նա ասէ. "Զիղջ է ինձ, զի ոչ կարացի 'ի գլուխ տանել զոր կամէի"։ Արկաւ 'ի բանտ և անյողդողդ կացեալ 'ի խորհուրդսն զա-ւուրս չորս անսուաղ, յետ այնորիկ ընկա-լաւ զմահուն դատակնիք. և յորժամ 'ի տեղի պատուհասին ածաւ, լուեալ անդ՝ զի կնքեցան դաշինք խաղաղութեան ընդ կայսեր, գոչեաց 'ի ձայն մեծ. "Կեցցէ ազատութիւն, կեցցէ Գերմանիա". և սպանաւ անդէն։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Դորչեալ Մեսոանգամ արուքինդ Սպանիոյոց ընդդէմ Գաղղիոյոց։

ԻԲՐԵՒ դարձ արար Նափոլէոն 'ի Փարիզ, Սպանիացիք ևս քան զևս զայրացեալ ընդ բռնութիւնս նորա, ամենուստ 'ի զէն դիմե-ցին. և կապեալ ուխտիւք միաբանութեան

յաղատուԹիւն աղգին, վառեցան ընդդէմ Գաղղիացւոց։ Թէպէտ զօրավարք Նափոլէոնի բազում ուրեք հարին զնոսա, այլ օրինակ քաջին Փալաֆոսայ և արուԹիւն քաջուԹեան բնակչացն Սարակոսայ վառէր զեռանդն և զհայրենասէր ոգի նոցա. մինչև ձեռնտուուԹեամբ Անգղիացւոց զօրացեալ հարին զարքայն Յովսէփ 'ի Թալաւեյրա։ Բայց զկնի խաղաղուԹեան ընդ Աւստրիոյ օգնականուԹեամբ նորոց գնդից զօրացեալ Գաղղիացւոց, 'ի ձեռն քաջ զօրավարաց իւրեանց մեծամեծ յաղԹուԹեամբ յառաջ խաղային, առնուին զԿրանադա, զՔորտովա, զՄալակա և զՍեւիլիա. պաշարէին և զանառիկն Քատիչէ ուր փոխեալն էր ատեան ժողովոյն Սպանիացւոց, որում յանձն էր վարչուԹիւն ԹագաւորուԹեանն ցորչափ օրինաւոր Թագաւոր իւրեանց Փերտինանտոս 'ի գերուԹեան կայր։ Այլ Թէպէտ և ամենայն ուրեք յաղԹական գտան 'ի Ճակատամարտս, բայց ոչ էին տեսարք անկասկածք քաղաքացն և երկրին՝ զոր կոխէին։ Քանզի մեկնակազէնք Սպանիացւոց յանկարծօրէն հասեալ 'ի վերայ գնդից նոցա հարուածէին չարաչար, և 'ի չուտ նոցա առ կողուք գնալով բանակին, հրձիգ 'ի նոսա լինէին։ Դարձեալ բազում անգամ դարանամուտ լեալ 'ի Թփուտս և յեակոյս տանց և ժայռից, մնային որսալ զԹշնամին. էր զի հալածեալք և ցրուէին, բայց իսկոյն երԹեալ այլուր դարանամուտ լինէին. վասն որոյ

գնդից զօրայ պէտք էին Գաղղիացւոց առ 'ի տանել զհրամանս զօրավարաց իւրեանց, և 'ի բերել զհամբարս։ Զօրականք նոցա վիրաւորք, հիւանդք կամ խոնջք և վերջալեալք 'ի ձեռս նոցա անկեալ՝ փողոտեալ լինէին 'ի վրէժ քինու անգթութեան իւրեանց. և նորահաս զօրականք յանդուլ վաստակս աշխատութեան, 'ի չքաւորութեան, 'ի տօթի և 'ի պատերազմունս ծախեալ սպառէին. և յայտնի երևէր խոհական մտաց՝ զի հնար էր ասպատակել և աւարել զՍպանիա, այլ ոչ եթէ խաղաղութեամբ տիրապետել նմին։ Պատերազմն զոր 'ի սակս ազատութեան և կրօնից մղէր ազգն, վառէր զամենեցուն զմիտս, և իւրաքանչիւր ըստ կարի ձեռնտու լինէր 'ի գործն. մինչդեռ արք դիմագրաւէին 'ի վտանգ մահու զէն 'ի ձեռին, կանանին և մանկունք զլրտեսի սպաս հարկանէին նոցա. միանձունք և միանձնուհիք յաւելուին 'ի պահս և յաշխատութիւնս, և զգիշերս ողջոյն անցուցանէին յաղօթս 'ի յաջողութիւն իրաց Սպանիոյ. և որ յոյժ զարմանալին է և յիշատակաց արժանի, զօրն 'ի բուն պարապեալ 'ի պատրաստութիւն գեղոց, առաքէին աննախանձ և առ վիրաւորս Գաղղիացւոց. ընդ գեղեցիկ միաբանութիւն հայրենասիրութեան՝ և քրիստոնէական եղբայրսիրութեան զարմացեալ վկայեաց և նորաղանդ զօրագլուխն գաղղիացի, անձամբ առեալ զփորձ (1810)։

Մինչդեռ 'ի Սպանիա և 'ի Փորթուգալ

ծախէին ընտիր ընտիր զօրք Գաղղիոյ, Նափո-
լէոն ամբառնայր զանձն 'ի գերագոյն պայ-
ման բաղդին։ Փառասիրութիւն ազգախառ-
նելոյ ընդ վաղեմի կայսերական տոհմին, և
ցանկութեամբ թողլոյ իւր ժառանգս, ար-
ձակեաց զՅուսեփինա զկին իւր վասն ամ-
լութեան, և ամուսնացաւ ընդ Մարիայ
Լուիզայ դստեր Փրանկիսկոսի կայսեր։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Վէլինկդընի զօրավարին Անգղիոյ-ոյ աղաչել
զՓորթոգալս և զՍպանիա 'ի թերապետութենէ
Գաղղիոյ։

ՅԱՒՈՒՐՍՆ յայնոսիկ տակաւ երևելի լի-
նէր անգղիացի զօրավարն Վէլինկդըն՝ ո-
րում մնայր հալածել յաւուր միում 'ի
Սպանիոյ զԳաղղիացիս, և 'ի սպառ ջաղ-
խել զզօրութիւն Նափոլէոնի. Նմա յանձն
արարեալ էր պահել անգղիացի գնդաւն
զՓորթոգալս յահաւոր արշաւանաց Մասե-
նայ, որ ութսուն հազար ընտիր զօրք գայր
մոտանէր յաշխարհն։ Վէլինկդըն սակաւա-
ձեռն գնդաւն ոչ իշխեաց կալ առաջի նորա,
տեղի ետ և գումարեալ ընդ իւր 'ի ժողովրդենէ
երկրին՝ բանակեցաւ առաջի մայրաքաղա-
քին Լիզպոնայ. և զամիսս վեց 'ի դերև
հանէր զամենայն ճիգն Գաղղիացւոց։ Մա-
սենայ տագնապեալ յերեսաց գիւղակա-
նաց երկրին՝ որք արդելեալ զհամբարս նո-
րա սով 'ի բանակն արկանէին, ստիպեցաւ

յետոյ նահանջել կորակոր. ընդ որ տրրատ-
մեալ զօրականացն ընդ անկուիս պարտու-
թիւն իւրեանց, ձեռն արկին աւազակօրէն
գերել և գերփել զաշխարհն. և ոչ շատա-
ցեալ աւարհարուքն, հրձիգ լինէին յաւանս
և 'ի գիւղս, ապականէին զեկեղեցիս, պըղ-
ծէին զշիրիմս, և զվրէժ քինու իւրեանց
ընդ մեռեալսն հանէին: Անմարթ է ասել
զամենայն զնոցա դժնդակ գործս անգթու-
թեան և զմոլեգնութեան, ընդ որ քրստ-
ոնեին և լսելիք. քանզի պատմեն զնոցանէ
բազում անգամ հիւրընկալեալս 'ի կրօնա-
ւորաց աշխարհին, և յանկարծ զամենե-
սեան զնոսա սրոյ տուեալ Ճարակ, յաւեր
և յաՃիւն դարձուցանելով զմենաստանս
նոցին. զոր օրինակ և զօրավարն Սիւշէ
առեալ զքաղաքն Թարակոնա, սրոյ Ճա-
րակ տայր զպահակապանսն և զբնակիչսն.
զօրականք նորա արիւնրուշք 'ի նախկին
թափ ցասման իւրեանց՝ անլուր անողոք
յաղաչանաց և յողբոց հառաչանաց եղկե-
լեացն, կոտորեցին անխտիր զորս և գտին, և
զովացուցեալ զծարաւ զայրագին սրտմտու-
թեան իւրեանց, ապա ցրտութեամբ կա-
լեալ զապրեալսն յերկաթոյ՝ ամային ընդ
խաղ իմն 'ի ջրհորս, և դիղեալ կուտէին
մինչև ցբերան ջրհորոցն: Զանձրացեալք 'ի
կոտորածէն դիմեցին յաւար, և յայնմանէ
փոխեցան 'ի հրձգութիւն շինից: Սակայն
անգթութեամբն՝ ինքեանց առաւել զեան
գործեցին Գաղղիացիք. քանզի կորուսեալ
զերկիր աշխարհակալութեան իւրեանց՝ ա-

ռաւել ևս գրգռեցին զյուսահատ զայրագնութիւն Սպանիացւոց։

Վէլինկդրն ազատեալ զՓորթոգալս, էանց 'ի Սպանիա. զոր նորա փորձք 'ի մարտս, և ուսեալ զհնարս արուեստից պատերազմացն Գաղղիացւոց, և նախկին յաջողութեամբն վստահացեալք 'ի յաղթութիւն, յարձակեցան առին զՊատայոս. անտի դիմեցին 'ի վերայ զօրավարին Մարմոնայ և խորտակեալ զնա՝ տիրեցին Սալամանքայ, և ուր ուրեմն հասին և 'ի Մադրիտ։ Ի մտանել Վէլինկդրնի 'ի քաղաքն, բնակիչք ըզգերարտօսրն ի՛ջուցանելով յաչաց առ խնդին, ընդառաջ ելին նմա, և իւրաքանչիւր գիրկս արկեալ սպայիցն և զօրականին, ամ՚ոք ջանայր հանգուցանել զնոսա և սապնջականնոցին լնել. հանդէս լուսաւորութեան կարգեցին 'ի գիշերի, զարդարեցան ճակատք ապարանից գոյնագոյն նարօտիւք, և Անգղիացիք խնդամիտ բարձրագլուխ շրջէին՝ աղաստարարք յամենեցունց կարգացեալ. (1812). և կարապետք լինէին իրքս այսոքիկ կործանման Նափոլէոնի։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Աշխարհաշինութիւն Նափոլէոնի, և պատճառք Բարբրութեան և անկման նորա։

ԱՐԺԱՆ է աստանօր առ վայր մի զկայ առնուլ 'ի զնին մեծամեծ վաստակոց Նափոլէոնի, և 'ի քննել զտարապայման իշխանու-

թիւն նորա, և զպատճառս բարձրութեան նորին և զանկման։

Ամբարձաւ նա 'ի ծագ մեծութեան հանճարո

կարևորն Թուէր՝ յօրինեաց նա Ճանա-
պարհս, պեղեաց ջրանցս, հաստատեաց
կամուրջս, շինեաց աղբիւրս ոչ՚ի Գաղղիա
միայն, այլ և յամենայն տեղիս որոց տիրէր
աշխարհակալութեամբ: Երևելի են Ճանա-
պարհք անցեալ Սէնիսիլոնի լերին, ջրանցքն
Գենուայ և այլուր, տուազանք նաւակառու-
ցեալ յԱնվերսա և'ի Շերպուրկ և'ի Ֆրէսլէնկ.
Ճանապարհքն 'ի Պիրենեանց յԱլպեանս,
'ի Բառմայ, 'ի Սվեցիա, 'ի Սաւոնայ, 'ի Բիէ-
մոնդ. ջրաբաշխական շէնք 'ի Տընքէրք, 'ի
Հավր, 'ի Նիցցա. ծովային շինուածք և ծա-
ռատունկ պարտէզն 'ի Վենետիկ. գեղեցիկ
Ճանապարհքն յԱնվերսայ ընդ Ամդեր-
տամ, 'ի Մոգունտիոյ ընդ Մէց, 'ի Պորտոյ
ընդ Պայոն. մայրաքաղաքին Փարիզու մե-
ծահռչակ կառոյցք, ժողովարանն վաճառա-
կանաց, Մատրէն եկեղեցի, կոթողն որ 'ի
հրապարակին Վանտոմայ, յաղթական կա-
մարն Ատեղ վերաձայնեալ. և արտաքոյ
դարձեալ կամուրջն յԱւստերլից և յԵնա,
յԱր, 'ի Սէվր, 'ի Թուր, 'ի Ռան, 'ի Լիոն,
'ի Դուռին, յիրէր և այլն, և բազում այլ
այսպիսիք: Ճոխացոյց Նափոլէոն և զմա-
տենադարանն ազգային, կանգնեաց զան-
դրիս ամենայն զօրավարաց իւրոց քաջաց
անկելոց 'ի մարտի. Թող և զայլ շինուածս
կարևորս:

Զամենայն հոգս պետութեան զանձամբ
առեալ, գտանէր և ժամ պարապոյ համարս
պահանջելոյ 'ի պաշտօնէից իւրոց, որոց
քաջ խելամուտ էր բնաւորութեան և

հանձարոյ, որով զամենայն զկամս իւր 'ի գլուխ տանէր, և դուն ուրեք փոխէր զպաշտօնեայս իւր զվարիչս և զխորհրդականս. և էին նորա պաշտօնեայք երևելիք Թալէյրան, Շանփայնի, դուքսն Քատոր, Կոտէն, դուքսն Կայէթ, Մոլիէն և Պարպէ-Մարպուա. կոմսն Մոնդալիվէ, Ֆոնդան, Լըպրէօն, Ռէնիէ, Տարիւ և այլք: Քաջ գիտէր Նափոլէոն ճարտարութեամբ իւրով 'ի գործ ածկանել զհանձար նոցա, որով յայն ծագ ամբարձ զԳաղղիա, մինչև փառաւորեցաւ քան զամենայն թագաւորս Եւրոպայ. ընդ պետութեամբ նորա կային յիսուն միլիոն ժողովուրդք 'ի հարիւր երեսուն գաւառս:

Սակայն 'ի մեծութեան անդ և 'ի յաջողութիւնս, պեղէր Նափոլէոն տակաւ զխորխորատ կորստեան իւրոյ: Եթէ չէր նորա բաժանեալ զշահ անձին յօգուտից Գաղղիոյ՝ յաղթանակէր արդեօք ամենայն դիմակալաց իւրոց. այլ անդուլ արշաւանք նորա, աշխարհակալութիւնք վասն իւր և վասն տոհմին իւրոյ՝ շարժեցին զատելութիւն և զմախանս օտար իշխանաց, հանդերձ բազում ինաստուք Գաղղիոյ, կորստեամբ զօրաց և գանձուց: Յայնժամ զարթեաւ և առաջնին ատելութիւն յերկպառակ խմբից, որք գային իւրեանց կուսակիցս յօգնականաց հաստատութեան կայսերական գահուն: Ունէին իրաւունս ատելութեան և հասարակապետականք և սիրողք ազատութեան և ազատանուոյն. քանզի ազնուա-

կանքն հայէին 'ի Նափոլէոն իբրև 'ի վա-
տատոհմիկ ոք և ըստ բաղդի մեծացեալ,
ծնունդ խառովութեան՝ զոր առէին մահու
չափ, և զայն ոչ յիշէին բնաւ թէ Նափոլէոն
հեղձոյց զնռովութիւնն։ Ռամկավարք հայ-
հոյէին զանուն նորա, զի յետ հիմնելոյ զիշ-
խանութիւն իւր 'ի վերայ օրինաց կարգելոց
'ի նոցանէ՝ բնաջինջ արար զայնոսիկ։ Հաս-
տատութիւն նորոց ազնուականաց առեալ էր
առաջնոցն և ազատասէր մարդկան. բար-
ձումն ազատ տպագրութեան գրգռէր զա-
մենեցուն զմիտս. և ոչ էին բաւական յաղ-
թանակք նորա 'ի լուեցուցանել զթշնամիս.
քանզի 'ի յոլովութենէ յաղթութեանցն
մաշէր զօրութիւն գաղղիոյ։ Եւ արտաքոյ
չկայր յակաստանի իշխանութիւն նորա.
քանզի եղբարքն նորա թագաւորեալք նո-
վաւ, ոչ հանդուրժէին աեղակալս նորա հա-
մարել. և քաջ 'ի վերայ հասեալ, զի գրեա-
թէ զանուն միայն թագաւորի տուեալ
նոցա՝ ինքնին կամի միահեծան իշխել, հրա-
ժարեաց մին 'ի նոցանէ 'ի գահէն, և այլքն
տարակուսեալ խորհէին կամ հրաժարել
և կամ ընդվզել. ժողովուրդք գաւառացն
մարզ կարգելոց ինքնակալութեանն՝ ընդ
ծանր ծանր հարկօք և զինուորութեամբ
քրթմնջէին և հեծէին։ Վայրապար էր
ինքնակալին վստահանալ 'ի դաշնակցութիւն
մեծամեծ թագաւորաց. քանզի անմարթ էր
նոցա մոռանալ զայն՝ զի պարտութեամբ
իւրեանց յայն խոնարհեցան, և անշէջ էր
'ի սիրտ նոցա քէն վրիժուն 'ի սրբել զնա-

խատինս իւրեանց։ Աւստրիա և Բրուսիա հանգերձ ամենայն կորանօքն՝ կորուսեալ էին և զբազում գաւառս իւրեանց, զոր պատեհի մեայլին անդրէն 'ի ձեռս բերելոյ. յուզէր 'ի ծածուկ աղմուկ խռովութեան և 'ի Գերմանիա. յամենայն համալսարանս և 'ի գաղանի ընկերութիւնս մարդկան՝ ձայն ազատութեան և զայրագին սրտմտութեան ընդդէմ բռնաւորին Եւրոպայ՝ հնչէր ամենայն ուրեք։

Սպանիա զորոյ զգաւառս պատառեալ յաւելոյր Նափոլէոն 'ի տէրութիւն իւր, և Փորթոգալ՝ զոր ըստ կամի բաժանել կամէր, վանեալ զլուծ բռնութեան նորա՝ օգնութեամբ Անգղիացւոց և աննկուն գիմակալութեամբ մարտնչէին ընդ նմա, վանեալ զբանակս զօրաց նորա։ Զախողակի հրամանք նորա ընդդէմ վաճառականութեան Անգղիոյ, շարժեաց զբազումս 'ի թշնամութիւն. և իբրև ետես թէ ծանր էր յոյժ և անբերելի ժողովրդոց և թագաւորաց հնազանդել հրամանին՝ եթէ ոչ ինքնին փոյթ ունիցի կատարման իրացն, կարգեաց 'ի մարզպետութիւն Գաղղիոյ զՀոլանտա և զգաւառս Հռոմէական իշխանութեան։ Եւ իբրև այսպէս թշնամի եղև քահանայապետին և եկեղեցական դասուն և արհամարհեաց զնորհուրդս արանց զդասից, և օրինօք ծերակուտին միացոյց ընդ գաւառս տէրութեան իւրոյ զաղատ քաղաքս Գերմանիոյ, և զծովափնեայս Պաղդիականին, սկսեալ յԷմնայ մինչև ցԷլպա կղզի։ Քանզի ըստ հանգամա-

նաց ժամանակին, ասէր, պարտ է կշռել զամենայն. և այսպիսի դժպհի օրինաք այնուհետև ոչ ոք յիշխանաց աներկևան էր'ի գահուն, և ոչ մի հաստատութիւն դաշանց զօրել բաւէր. վասն որոյ հարկ'ի վերայ կայր յառնել զօրութեանց Եւրոպայ 'ի վերայ Գաղղիոյ, կամ բնաւ ամենեցուն փոխել յօրէնս Գաղղիացիս: Եւ մինչդեռ ինքնակալն համարէր ընկճել զԵւրոպա՝ անկաւ յինքնագործ գուբկորատեանն:

ԳԼՈՒԽ ԺԴ.

Գրգռել Ռուսաց ընդ Նափոլէոնի, և ժողով Բագաւորաց 'ի Տրէպպա:

Քան զամենայն թագաւորս Եւրոպայ կարևորագոյն էր Նափոլէոնի բարեկամութիւն ինքնակալին Ռուսաց՝ որ հզօրն էր զօրութեամբ զինուց, և գոդցեալ անընկճելի դրիւք աշխարհին: Աղեքսանդր 'ի հաստատութիւն դաշանց իւրոց ընդ Պոնափարթեայ, ընդ երկար անլուր եղև թախանձանաց Անգղիոյ և վաղեմի դաշնակցաց իւրոց 'ի ցամաքի, և ազնուականաց իւրոց ազգին Ռուսաց, և վաճառականաց, որոց խափանեալ էր գուռն շահու: Այլ իբրև ընկալաւ նա զհաստատութիւն տէրութեան 'ի վերայ գաւառաց Ֆինլանտիոյ, Մոլատաւիոյ և Վալաքիոյ, և ետես զի մերժեաց Նափոլէոն զինդիր իւր որ վասն չկանգնելոյ զթագաւորութիւն Լեհաց, դժկամակեցաւ

յոյժ. և առաւել ևս գրգռեալ յաւա-
դանուոյն՝ թշնամեաց Գաղղիոյ, վասն նա-
խատանաց փեսային իւրոյ դքսին Օլսեն-
պուրկայ, զոր արկեալ էր Նափոլէոնի յիշ-
խանութենէ, արգել հրովարտակաւ զմուտս
բազում վաճառուց Գաղղիոյ յաշխարհ իւր,
և եբաց նաւաց գաղթականացն Անգղիոյ
զնաւահանգիստս իւր. զօրաժողով արար 'ի
տէրութեան իւրում, և առաքեաց գունդս
զօրաց 'ի Նիեմէն (1811)։

Յաւուրսն յայնոսիկ ծնաւ որդի արու
Նափոլէոնի 'ի Մարիայ Լուիզայ, և 'ի խան-
ձարրոց անտի կոչեցաւ նա թագաւոր Հռո-
մայ, ժառանգ համարեալ և հաստատու-
թիւն գահուն՝ որոյ մերձ էր կործանումն.
և կարապետ մրրկին լինէր հրովարտակն
Աղեքսանդրի։ Նափոլէոն բազումս աշխատ
եղև տալ յետս կոչել զայն, այլ վայրապար.
և տեսեալ զի Աղեքսանդր ամրացուցանէր
զսահմանս պետութեան իւրոյ, աճապա-
րեաց ըստ իւրումն սովորութեան կանխել
քան զթշնամին 'ի մարտ։ Գումարեաց
զզօրս իւր 'ի Լեհաստան, և չոգաւ անտի 'ի
Տրեզտա 'ի ժողով կոչել անդ զթագաւորս.
այլ միտք իւր հաստատեալ էին 'ի զօրաժողովն
'ի գլուխ նոցին կալ։ Եկին ժողովեցան 'ի
Տրեզտա կայսերք Ռուսիոյ և Աւստրիոյ,
թագաւորն Բրուսիոյ և բազումք յիշխա-
նաց Եւրոպիոյ. անդ Նափոլէոն 'ի գերա-
գոյն իշխանութեան իւրում պերճացեալ
փառօք, տեսանէր զթագաւորս ընդ իշխանս
իւր համապատիւ, և զպերճապսակ գլուխս

խոնարհեալս առաջի իւր. այլ անհնար եղև նմա խոնարհեցուցանել և զԱղեքսանդր և զթագաւորն Շուեդացոյ։

Անդէն Անգղիացիք, Ռուսք, Շուեդք, Սպանիացիք և Փորթուգալք միաբանեցան ընդդէմ ինքնակալին այս վեցերորդ անգամ. իսկ Նափոլէոն վստահացեալ 'ի զօրութիւն Իտալացւոց, Լեհաց, Գերմանացւոց, Աւստրիացւոց և Բրուսաց, մանաւանդ Լեհաց որք ակնկալութեամբ կանգնելոյ թագաւորութեան իւրեանց՝ վասնեալ յեռանդն քաջութեան զինուորէին ընդ գրօշս նորա. իսկ Գերմանացիք, Աւստրիացիք և Բրուսք ակամայ կամօք գային զհետ նորա։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Խաղաղ Նափոլէոնի 'ի Ռուսս. առնմն Մոսկուայ, և հրդեհ նորին։

ԽԱՂԱՑ գնաց Նափոլէոն 'ի Ռուսաստան չորեքհարիւր հազար զօրօք և երկերիւր թնդանօթովք (1812)։ Էանց ընդ Նիեմէն և եմուտ 'ի Վիլնա, ուր եհաս նմա նամականի յԱղեքսանդրէ՝ հրաւիրեալ զնա 'ի հաշտութիւն խաղաղութեան։ Այլ նորա նախատինս անձին համարեալ զնհանջելն յարշաւանաց իւրոց՝ մերժեաց զհաշտութիւն, և զաւուրս եօթն և տասն յապաղեաց 'ի Վիլնա. և այն յապաղումն ծանր վնասուց պատճառք եղև զօրացն։ Անդ եկին նմա դեսպանք 'ի դքսութենէն Լեհաց աղերսա-

ւորք 'ի հաստատութիւն թագաւորութեան իւրեանց. այլ զի մասն գաւառաց աշխարհի նոցա անկեալ էր ընդ տէրութեամբ Աւստրիոյ և Բրուսիոյ, առ 'ի չարտուցանել զնոսա յիւրոյ դաշնակցութենէն, վեր 'ի վերոյ արարն նոցա յայնժամ պատասխանի։ Եւ ինքն ամբարձեալ 'ի Վիեննայ մեկնեցաւ 'ի միջերկրեայս Ռուսիոյ։ Ոչ կարելով Աղեքսանդրի պատերազմաւ զառաջս ունել զահաւոր արշաւանացն, կալաւ այլ ճանապարհ փրկութեան աշխարհին, և յաջողեաց. քանզի խոյս տայր 'ի պատերազմէ, հատեալ զպաշարս 'ի գաւառաց, և հեռացուցեալ անտի զբնակս աշխարհին, և քաղաքս թողոյր թշնամւոյն դատարկս, անապատս, աւազուտս և անտառս թաւս։ Այսպէս ձգէր զթշնամին յաշխարհ իւր երկերիւր յիսուն փարսախաւ խորագոյն մինչ չև մեկեալ 'ի մարս պատերազմի։

Իսկ Նափոլէոն անդուլ դիմէր խաղայր 'ի Նեբքս և հասեալ Ռուսաց հարկանէր զնոսա 'ի Վիթէփսք, և 'ի Սմոլենսք, յորում քաջութեամբ մարտուցեալ զօրավարացն Ռուսաց Պարքլայայ և Բագրատիոնի, հրոյ ճարակ եւուն զքաղաքն թողեալ զաճիւնս մոխրոցն 'ի թշնամին։

Կարծէին այնուհետեւ վախճան տալ Նափոլէոնի աշխարհակալութեանց իւրոց և արշաւանաց, վեցհարիւր փարսախաւ հեռի գոլով Նորա 'ի Գաղղիոյ, և մնալ բանալոյ դրանց գարնայնոյն և ոչ մեկել 'ի գաւառս անմարդաբնակս, ուր վտանգ մեծ էր կորստեան

յերեսաց սովոյ և ցրտոյ։ Այլ նա անլսող լեալ խորհրդոց և խրատուց՝ միայն յառաջել փութայր առանց բարեզգաստութեան պատերազմի, ընդ անհաստատ վայրս։ Ի սկզբան անդ յաջողութիւնքն իրաւացուցին նմա զյանդգնութիւն նորա. քանզի եհար չարաչար զԹշնամիս, և եթէ չէին վրիպեալ հրամանքն նորա՝ սպառասպուռ ջախջախեալ էր Թերևս զզօրութիւնս Ռուսաց։

Արդ հետամուտ եղև նոցին յաղթական բանակաւն, մինչև եկեալ եհաս 'ի Պորտին յափունս գետոյն Մոսկովայ յիսուն փարսախաւ հեռի 'ի մայրաքաղաքէն. անդ ստիպեցան Ռուսք Ճակատ յարդարել 'ի պաշտպանութիւն մայրաքաղաքին իւրեանց, և զօրավար նոցա Ծերունին Քութուսով կարգեաց զնոսա 'ի մարտ։ Յառաւօտուն եղեալ Նափոլէոնի 'ի վրանէն ասէր ցսպայսիւր. «Ահաւադիկ արեգակնդ ծագեալ որպէս յաւուրն Աւսթէրլիցայ. ահա պատերազմն որում ցանկայիք, արդ զօրացարուք, լերուք քաջք. 'ի ձեզ է ապաստան յաղթութիւնս և գալիք առատութիւն բաղում, ձմերոց բարեյարմար, և դարձ 'ի հայրենի երկիրս։ Յիշեցէք զարութիւն քաջութեան ձերոյ Աւսթէրլիցայ, 'ի Ֆրիտլանտ, 'ի Վիթէպսք, 'ի Սմոլէնսք. յիշեսցեն պանծանօք զօրս զայս պատերազմի՝ որդիք որդւոց ձերոց; և թոռունք թոռանց ձերոց. և մատնացոյց 'ի ձեզ լիցի ամենայն ոք թէ և սա 'ի պատերազմին Մոսկուայ էր»։

Ընդ հուպ խառնեցաւ պատերազմն. ա-

հագին էր կռիւն և յամառ, յորում զօրավարքն Նէյ, Միւրատ, Եւգինէոս, Տաւու, Ժէրար և Փոնիատովսքի մեծապէս արիացան, և Օգոստոս Քոլէնքուր զրահաւոր հեծելագնդաւն արշաւեալ էառ ամրոց մի հզօր վաղեմի, և ընկալաւ անդ վէրս աղդոյ: Ուր ուրեմն յետս ընկրկեցան Ռուսք, որոց զօրավարքն էին Բագրատիոն, Քութուսով և Պաքևիչ: Դադարեաց և Նափոլէոն և եթող թշնամւոյն ազատ փախուստ, զոր մարթ էր արդեօք 'ի սպառ կոտորել: Եւ եղև թիւ անկելոցն և վիրաւորելոց 'ի մարտին քսան և երկու հազար 'ի Գաղղիացւոց, և յիսուն հազար 'ի Ռուսաց, յորում անկան և բազումք 'ի զօրավարաց Գաղղիացւոց. իսկ մարաջախտն Նէյ պատուեցաւ կոչիլ իշխան Մոսկուայ:

Իսկ 'ի վաղիւ անդր խաղաց Նափոլէոն 'ի վերայ մայրաքաղաքին Մոսկուայ, յուսով գտանելոյ անդ առատութիւն համբարոց ռովալլուկ զօրականին, և հանդիստ յերկար վաստակոց նոցա. մօտ 'ի նա եհար միւսանգամ զՌուսս և վանեաց: Իսկ Գաղղիացւոց տեսեալ 'ի բարձուէ զհռչակաւոր քաղաքն յորում ասիական և եւրոպական ճարտարապետութիւնք մրցէին ընդ իրեար և ութհարիւր եկեղեցիք 'ի նմա հազար ոսկեծայր աշտարակօք ամբառնային փայլատակուն հատանելով 'ի ճառագայթից արեգական, յայլ յայլմէ լեալ զարմացմամբ աղաղակէին, Մոսկուա՜ Մոսկուա՜: Զուարճացաւ ինքնակալն յանձն իւր, և խնդամիտ

սրտիւ գոչեաց առ զօրսն. “Ահա Մոսկուա, ահա վարձք այնչափ շքեղ վաստակոց ձեր, և վախճան բազմապատիկ աշխատութեանց ձերոց,,: Որ ուրեմն ապա հասեալ մտին Գաղղիացիք յամայացեալ փողոցս մեծատարած քաղաքին, զարմացեալ ընդ լռիկ առանձնութիւնն և ընդ դատարկանալ քաղաքին 'ի բնակչացն:

Եմուտ Նափոլէոն յամրոցն Քրէմլին, և գտեալ 'ի նաւակառոյցս և 'ի զինարանին Քրէմլինայ վաթսուն հազար անգլիացի, գերմանացի և ռուս հրացանս, հարիւր թնդանօթս և բազմութիւն յոյժ վառօդոց, ուրախացաւ յոյժ և խորհէր ձմերել անդ: Այլ 'ի գիշերին յայնմիկ վառեցաւ ամենուրեան 'ի փողոցաց քաղաքին հրդեհ ահագին. քանզի քաղաքապետին Ռոսթոփչինայ տեսեալ զի 'ի գտանել Գաղղիացւոց ապաւէն 'ի Մոսքուա՝ վճարեալ է վասն Ռուսաց, եդ 'ի մտի յաղագս թիւրեն հայրենեացն ուիրել զմեծութիւն մայրաքաղաքին, և հան արձակեաց զբնակիչս, և 'ի գիշերի աղատեաց զկալանաւորս՝ և ջահ 'ի ձեռս տուեալ հրամայեաց հուր տալ քաղաքին: Պակեաւ Նափոլէոն ընդ տեսիլն, իսկ զօրքն զուարճացեալ ընդ բոց հրոյն գիմեցին յաւար: Աղաղակ գազանացեալ զօրականին խառնէր ընդ ճայթմունս տանց կործանելոց, և հողմոյն առեալ մղէր զբոցն և զծուխ ընդ տարածութիւն քաղաքին: Բազումք 'ի զօրականէն անյագք յաւարել՝ ոչ գտեալ էլս փախստի յերեսաց բոցոյն՝ հրկէզ եղեն 'ի

հմին. և ապա ուրեմն բռնադատեալ եղին 'ի Մոսկուայ լցեալ աւարաւ ոսկւոյ և արծաթոյ և պատուական զարդուց (1812):

Ակն ունէր Նափոլէոն արշաւանաքն 'ի Մոսկուա՝ կնքել փառաւք զհաշտութիւն, կամ գտեալ անդ պատրաստութիւնս պատերազմի և համբարս՝ խաղալ 'ի փեդրոպուրկ 'ի սկսանել գարնայնոյն. այլ 'ի գերև եղին ակնկալութիւնքնորա. և մինչ նա թմբրեալ յուսով խաղաղութեան դանդաղէր, Աղեքսանդր վայրապար բանագնացութեաք հաշտութեանն հնարէր սովալուկ և ջարատանչ ցրտոյ մատնել և արգելուլ զդարձ նորա յաշխարհ իւր: Այսպէս և զօրականն յղփացեալ Հոխութեամբ ոսկւոյ և զարդուց, և գտեալ լիութեամբ շաքար 'և խահուէ, գինի և օղի, ջածէին ամենևին զմտաւ զի այն ամենայն ոչ կարէր զդէմ ունել սպառնացեալ սովոյն, քանզի պակասէր նոցա միս և հաց և հանդերձ:

ԳԼՈՒԽ ԺԶ.

Սկիզբն հարուածոց Նափոլէոնի, և աղէտք որ 'ի ցրտոյ և 'ի սովոյ:

ԽԱՐՏԵԼ սկսան Ռուսք և յարձակել 'ի ձմերոցս Գաղղիացւոց, հարկանել յաւար զգաշտարայս, յափշտակել զերիվարս, կոտորել զդարմանածուս երիվարաց և զհամբարարաբերս: Իսկ իբրև գաշինս խաղաղութեան կռեցին ընդ Օսմանեան պետու-

թեան, հատաւ իսպառ ակնկալութիւն յուսոյ հաշտութեան, և հրամայեաց Նապոլէոն նահանջ գարձի :

Յուլի և տասն ամսեան հոկտեմբերի էլ ինքնակալն հարիւր հազար զօրք 'ի Մոսկուայ. այլ մինչ չև հեռացեալ 'ի քաղաքէն՝ պատահեցաւ Ռուսաց, և բախեալ ընդ նոսա պատերազմաւ՝ կռուեցաւ ժամս հինգ գետասան, և այնպէս եբաց իւր ճանապարհ : Ի գերեւ ելին խորհուրդք և ջանք Ռուսաց փակել առաջի թշնամւոյն զճանապարհն յՈՒքրանիա, և ստիպել զնա դառնալ ընդ ճանապարհ ընդ որ արշաւեալն էր, քանզի ամայացուցեալ անապատ կացուցեալ էր նորա զայն. և այս երկրորդ անգամ զաչացու անգթութեամբն հրամայեալ ապականել հրով զամենայն որ զճանապարհայն, բառնայր 'ի զօրաց իւրոց զամենայն գիւտ գարմանոյ ընդգէմ սովոյն և վնասակարութեան օդոց : Քանզի երթայր և զօրանայր սովն, պակասէր գարման ձիոց, մինչև զիսոզան յարկաց տնակաց գեղջէից կորզեալ տալ նոցա 'ի կերակուր. և բազմաց 'ի նոցանէ սատակեալ՝ սակայն զօրքն թողուլ 'ի բաց 'ի վերայ ճանապարհին զայլս իւրեանց և զաղխս կարևորս : Այլ առաւել վերջապահ գունդն նեղեալ տագնապէր յերեսաց սովոյն և անդուլ արշաւանաց անխոնջ և ոխերիմ թշնամեաց :

Յաւելաւ անդէն 'ի վնաս տառապանաց նոցա և այլ տագնապ. 'ի վերջերորդում աւուր ամսեան նոյեմբերի ցրտացան օդք որ

ցայն վայր պայծառ էին, և ծածկեալ արեգակն ընդ թանձր ամպովք ձիւնաբեր լինէր սաստիկ, և շնչէր հողմն ուժգին ցրտաստառոյց։ Ընդ բնեալ զօրուն 'ի բաբերս անդ, անպարապարք, բրտացեալք, սովալլուկք, հազիւ քայլափոխ լինէին, և իւրաքանչիւր զիւր չարիսն ողբալով, չգտանէր ոք մխիթար և ձեռնտու շնչասպառ անկելոցն։ Ասելի լինէր ձայն եղկելեացն թաղելոց ընդ ձեամբք. հինաւուրց մարտիկքն տային զվերջին ողջոյն զինուորակցաց իւրեանց, իսկ երիտասարդք և պատանիք 'ի յետին շունչս անդ հառաչանաց յիշէին աղիողորմ զանուն ծնողաց և զսիրելեաց և զհայրենի գաւառին։ Ծածկէր զդիակունս նոցա ձիւնն, և ճանապարհն 'ի բազմութենէ թաղելոցն ընդ ձեամբք՝ զգերեզմանաց բերէր զնմանութիւն։ Յառաջնոյ անտի աւուրց ցրտոյն՝ եղեալ բանակն զզինուորական կարգ և զհրահանգ. ոչինչ խոսիր էր այնուհետև ընդ զօրագլուխ և ընդ սինկքոր զօրական, և ոչ մի զանազանութիւնս գնդից, այլ խառն 'ի խուռն խաղայր բանակն։ Թընդանօթք, արկեղք, ծրարք դիպակաց, անօթք պատուականք յաւարի հարեալք 'ի Մոսկուայ, ցիր և ցան աստ և անդ սփռեալ կային յերեսս սառամանեացն, և ոչ ոք հայէր 'ի նոսա. այլ եթէ յանկարծ երիվար ուրուք մեռեալ անկանէր, հարիւրաւորք 'ի սովալլուկ զօրականէն կուտեալ զնովաւ, խլէին 'ի ձեռաց միմեանց զչաղնին։ Էր զի ասպատակ սփռէին 'ի մօտաւոր վայրս առ 'ի յագե-

ցուցանել զքաղց իւրեանց, այլ անդէն 'ի վերայ նոցա հասեալ գեղջկաց և խաղախից՝ հարկանէին և 'ի նոյն ճանապարհ դարձուցանէին։ Եւ էր զի յանցս գետոց և կրճից տագնապեալք 'ի դարանամտից Ռուսաց հարկանէին չարաչար, և մերկ կողոպուտ 'ի զգեստուց թաղեալք լինէին 'ի վերայ ձեանց. իսկ գիշերապահքն անդէն պաղեալք 'ի ցրտոյ՝ գի ցուրտ յառաւօտուն շուրջ զբանակաւն գտանէին։ Այսպէս լըլկեալք հասին 'ի Սմոլենսք ակն ունելով զվախճան չարեացն գտանել անդ. սակայն և անդ աւերակաց հանգիպեալ՝ ոչ գտին ոչ համբար և ոչ բնակութիւն. և այնպէս խստացեալ էր ցրտութիւն ձմերայնոյն, մինչև բազմաց 'ի զօրականէն անդէն 'ի կարգս ճակատուն անկեալ նուաղել։ Ապա բարձեալ և անտի զսակաւ ինչ համբար բրնձոյ և օղւոյ, անկան 'ի չուս յուսահատ. քանզի չև էին հատեալ տակաւին զկէս ճանապարհին որ 'ի Մոսկուայ ընդ Նիէմէն. և 'ի տասն աւուրս կորուսեալ էին 'ի ցրտոյ և 'ի սովոյ արս քառասուն հազար և երեսուն հազար երիվարս. և ոչ ինչ պակաս քան զքառասուն հազար արանց անկեալ էին 'ի գերութիւն, հանդերձ քսան և եօթն զօրավարօք, և հինգհարիւր թնդանօթովք, և ամենայն աւարաւ և ճոխութեամբ Մոսկուայ։ Երեսուն հազարք միայն մնացին 'ի բանակին, և 'ի նոցանէ և ոչ տասն հազար կարող էր զէն առնուլ 'ի պատերազմ։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Որ ինչ եղեալ Նիեբեր գեղովգաղղիացւոց աղէտ, և թարձ Նափոլէոնի 'ի Փարիզ։

ԱՐԴ յառաջ վարեալ զչուն հասին 'ի Նիեբեր, և ոչ հանդիպեալ անդ Ռուսաց, համարեցան զերծանիլ այնուհետև 'ի ձեռաց նոցա. բայց Թշնամիքն մնային 'ի Պերլինա, յորոց 'ի դիմել ամենայն զօրութեամբ 'ի վերայ Նափոլէոնի՝ անհնար էր նմա ճողոպրել զանձն 'ի նոցանէ, այլ գէպք 'ի բարի յաջողեալ նմա՝ յապաղեցին նոքա. և Նափոլէոն աճապարեալ արկ կանգնեաց կամուրջս կրկին 'ի վերայ գետոյն, որ յետ լուծանելոյ սառամանեացն յորդեալ գայր։ Հասեալ անդր կաց և մնաց զօրուն միացան ընդ գնդի ինքնակալին. այլ անպաշար առանց պատրաստութեան պատերազմի, թուէր բազմութիւն մարդկան դումարեալ 'ի սառոյցս անսպասին առ 'ի միահաղոյն կորուստ։ Նախ ինքնակալն անց ընդ կամուրջն, և 'ի 28 ամսեանն նոյեմբերի յառաւօտուն իբրև անցանէր զօրն՝ մի 'ի կամրջացն խորտակեցաւ ընդ ծանրութեամբ սայլեցն, և դարձոյց հետևակախումբն զաղխս և զթնդանօթս ընդ միւս կամուրջն. յորմէ դրդեցաւ կռիւ ընդ հեծելազօրն և ընդ հետևակախումբն, մինչև զէն առնուլ ընդդէմ միմեանց, և յոլովագունից 'ի գլուխ կամրջ-

ջին դիսթաւալ անկանել և այլոց գետամոյն կորնչել։ Հարկ լինէր մնացեալոցն յանցանելն ընդ կամուրջն կոխել ընդ ոտիւք զդիայ կոյտ անկեալոցն եղբարց խառն ընդ կիսամեռ վտանգեալոցն, որոց մրցեալ ընդ մահու՝ գուն գործէին կանգնել յոտին. վասն որոյ կալեալ զհանդերձից և զզրուանից անցաւորացն՝ զբազումս 'ի նոցանէ յերկիր թաւալէին. և մինչ անդ անցաւորքն ընդ անկեալսն կռուէին, բազմութիւնն որ 'ի Թիկանց երրև զալիս ծովու խռովելոյ զմիմեանս մղեալ դիզեալ կուտէր 'ի վերայ։ Եւ յայսպիսումն վտանգի չարագոյն 'ի վերայ հասանէր. զի երկուատեք փակէին զնոսա Ռուսք և հարկանէին չարաչար։ Անհնարին տագնապ ժամանակին 'ի յետին ճիգն զօրացոյց զԳաղլիացիս, և յուսահատ կռուեցան վասն կենաց, և մեծապէս առաքինացան Վիկտոր և ՌէՃՃիոյ. այլ 'ի բազմանալ զօրացն Ռուսաց, մղեալ վանեցան առաջի Վիթթէնկշթայնայ զօրավարի նոցա յետս ընդդէմ յափունս Պերեզինայ։ Եւ սկսան Ռուսք տեղալ տարափս ռմբաց 'ի վերայ կամրջաց 'ի գլուխ բիւրաւորաց մարդկան, հիւանդաց, վիրաւորելոց; կանանց և անզէն զօրականին, որ արդելուին զանցս կամրջին։ Դարձեալ զօրացաւ Վիկտոր 'ի վերայ գնդին Ռուսաց, այլ և կրկին պաշարեալ և խորտակեալ՝ մինչդեռ և կենացն վտանգ կայր, յարձակեալ հեծելագնդաւն Ֆուրնիէ և Լաթուր Մոպուրկ՝ զերծուցին զզօրավարն քաջ։ Եւ յայնժամ կրկին գրոհ եռուն

զօրքն ընդ կամուրջն միախուռն աղխիւք և թնդանօթովք հեծելագունդն և հետեւակախումբ, և մղեալ զմիմեանս կոխոտէին, հզօրին յաղթահարեալ զտկարն և 'ի գետ ամացեալ, սակայն և ինքն զնոյն անգթութիւն 'ի հզօրագունէն կրեալ, անկանէր ողորմելի: Բազմաց անդէն հասանէր օրհաս ջրահեղձոյց մահու. ոմանց խառն 'ի խուռն տալով զանձինս 'ի ջուրն անցանել ընդ լոյլ· և զոմանս կամրջացն ծանրացելոց ահաւոր ճայթմամբ խորտակելով և ընկղուզանելով յալիս Պերեզինայ. և արք քսան հազար աղխիւք և երկերիւր թնդանօթով անկանէին 'ի ձեռս թշնամեաց: Անմարթ է տալ զնկարագիր տառապելոցն, կամ զանկելոցն բերել զհամար. զի իբրև թումբս առ գետափամբն դիզեալ բարձրանայր դիակոյսն, և ձոր գետոյն ընոյր նոքօք. և ոչ էր հնար զերծանել յահաւոր կոտորածէն և յերեսաց խազախաց. բայց թողլով զկնի զդիակունս ընկերաց, և այն բաղդ սակաւուց շնորհեալ էր. և սոքն և ցուրտ առաւել զայրանային. և հացիկն որ յընթացս անդ բաշխէր՝ վիմատառեալ ցրտասառոյց մածանէր ընդ երկիր, և ոչ էր մարթ զօրականին առնուլ զայն, թող թէ ըմբոշխանել. զօրագլուխք անգամ չէին ազատք 'ի հասարակաց վտանգէն. քուրձ զանձամբ արկեալ, հերք և մորուսք դիզացեալք 'ի ցրտոյ, յեցեալք 'ի ցուպ դանդաչէին զհետ բանակին: Դէպ լինէր բազում անգամ զի 'ի զկայ առնուլ բանակին՝ ամբոխ կիսամեռ դիմէր առ խա-

բոյկն որ 'ի վերայ ոգեսպառ դիակնացեալ զինուորակցաց, և հարեալ աչսնուաղեալս 'ի հուրն, որոյ թուէր կորուսեալ զջերուցիչ բնութիւն, ընդ շինչանելնորին՝ անկեալ առ դիակամբ ընկերացն թաւալէին։ Իսկ ոմանք առ վշտին խելագարեալք, մերկք և սառուցեալ ոտիւք արկանէին զանձինս 'ի բոցն, և կորնչէին աղիողորմ աղաղակաւ։ Վկայ են այս ամենայն աղիտից ցայսօր ականատես մարդիկ։ Ի չորից հարիւրոց հազարաց՝ որք անցին ընդ Նիեմէն, և ոչ չորիր մասն դարձաւ ընդ նոյն։

Այս վախճան եղև անմիտ արշաւանացն որ անլուր է 'ի վէպս ազգաց, բազմութեան զօրաց գերազանցելոց քաջութեամբ և հրահանգօք՝ այսօրինակ զրաւել առանց մարտի քաջութեան։

Իսկ Նափոլէոն զերծեալ 'ի հետամտից Ռուսաց, էանց ընդ ձիւնախառաղ ընդարձակութիւն վայրաց, և հասեալ տագնապաւ եհաս 'ի Փարիզ։ Ի գիշերի եմուտ 'ի քաղաքն, և ընկճեաց զմոտալուտ զապստամբութիւն որ 'ի ձեռն Մալէի զօրավարին. քանզի մեռեալ համարելով զինքնակալն բնակիչք մայրաքաղաքին խորհէին փոխել զվարչութիւն աշխարհին։ Զօրաժողով եղև Նափոլէոն վերատին ընդդէմ դաշնակցացն Ռուսաց, Անգղիացւոց և Շուեդաց, որոց թագաւորն Պեռնատոդ երբեմն զօրավար Գաղղիացի՝ յուսով յաւելլոյ 'ի տէրութիւն իւր զՆորվեկիա՝ զինեալ էր ընդդէմ Նափոլէոնի։ Յաւելան 'ի նոսա և Բրուսք թողեալ

զնիզակակցութիւն կայսեր, իսկ Աւարիացիք տարակուսեալ դեղեցին։ Սպանիացիք ա-րութեամբ քաջութեան վանեալ հալա-ծեալ էին զարքայն Յովսէփ և զԺուռտան զօրավար յաշխարհէն իւրեանց. Քաթալո-նիա միայն կայր 'ի ձեռս Սիւզէ զօրավարին։ Լուեալ Նափոլէոնի և զապատամբութիւն Միւրատայ փեսային իւրոյ Թագաւորին Նէապոլսոյ՝ զոր ապարապետ էր կացու-ցեալ զօրաց իւրոց, աճապարեաց խմբեաց զմնացորդս զօրացն որ ընդ Եւգինէոսիւ էին 'ի Լուցէն. և արիացեալ եհար զնի-զակակիցս 'ի պատերազմունս Լուցէնայ, Պոցէնայ, և Վիւրշէնայ միմեանց զկնի, և կրկին զօրացաւ։ Այլ ցաւ մեծ եղև ինքնակալին մահ դքսին Իտարիոյ՝ Պէ-սիէրայ, որ հարեալ անկաւ 'ի մարտին, և դքսին Ֆրիուլայ՝ զօրավարին Տիւրոյ, զորոյ ելաց նա զմահ, և գնեալ զտուն՝ յորում մեռաւ քաջն, ետ առաջնորդի գեղջն՝ պայ-մանաւ կանգնելոյ վէմ յիշատակի 'ի տեղ-ւոջն։

ԳԼՈՒԽ ԺԸ.

ԺՈՂՈՎ ԹԱԳԱՒՈՐԱՑ 'Ի ՓՐԱԿԱ Ե ՄԻԱԲԱՆԵԼ ԸՆԴԴԷՄ 'ՆԱՓՈԼԷՈՆԻ. ՊԱՊԷՐԱՂՄ Ե ՅԱՂԹՈՒԹԻՒՆ ԳԱՂՂԻԱՅՈՑ 'Ի ՏՐԷՂԱ Ե ՊԱՐԱՊՈՒԹԻՒՆ 'Ի ԼԻԲԻԱ:

ԶՀԱՄԲԱՒ ձախողակի արշաւանաց 'Նափոլէոնի առեալ Թագաւորաց, ժողով արարին 'ի Փրակա, և կայսրն Աւստրիոյ միջնորդ հաշտութեան եկաց 'ի միջի. ընկալաւ 'Նափոլէոն զմիջնորդութիւն անեղոյն, այլ ինքնին կամէր պայմանս կարգել խաղաղութեան, երդուեալ չթողուլ և ոչ քաղաք մի յաշխարհակալութենից իւրոց, թէպէտ և թշնամին մնա 'ի Փարիզ հաստեալ կայցէ: Յամառութիւն խստութեան նորա գրգռեաց զամենեցուն զմիտս և վառեցան 'ի զէն. յաւելան 'ի դաշնակիցսն և կայսրն Աւստրիոյ և Թագաւորն Պաւիերայ. 'Նափոլէոն պաշարեալ ամենուստ 'ի Ռուսաց, 'ի Պաւիերայ, յԱւստրիոյ, 'ի Բրուսաց, 'ի Շուեդաց, յամառէր տակաւին պնդել պահել զՍաքսոնիա: Հինգհարիւր հազար զօրք էին դաշնակցաց ընդ երևելի զօրավարօք. Շուարցենպերկ սպարապետ էր զօրաց Աւստրիոյ, Պլիւխէր Բրուսաց, Պէնիկսէն Ռուսաց, Պեռնատոդ Շուեդաց. ընդ որս էին և կայսերքն Փրանկիսկոս և Աղեքսանդր, և Թագաւորն Բրուսաց Գու-

լիէլմոս։ Իսկ Նափոլէոնի երեք հարիւր հազար միայն զօրք էին, զորս բաժանէր 'ի մետասան գունդս 'ի ձեռս երեսելի զօրավարաց որ էին յայնժամ Վանտամ, Վիկտոր, Պէրթրան, Նէյ, Լորիսթոն, Մարմոն, Ռէյնիէ, Պէրթիէ, Փոնիատովսքի, Մաքտոնալ, Ուսինոյ, Սէն-Սիր, Միւրատ, Լաթուր Մոպուր, Սեպաստիանի, Քէլէրման, Մորթիէ և Նանսութի։

Բաղխեցաւ Նափոլէոն ընդ Թշնամին մերձ 'ի Տրեզտա. և 'ի նմին պահու սկսաւ տեղալ տարափ սաստիկ անձրևոյ, և զօրաց Թողեալ զհրացան գործիս՝ դիմեցին 'ի սուսեր և 'ի սլաք. և այլ ամբաձիգք Թնդանօթաց Թօրթափել հուր ամենուստ. անդ հարաւ Մորոյ նախանձընդդէմ փառաց Նափոլէոնի, որ յաւելեալ 'ի Թշնամիս ինքնակալին մարանչէր ընդդէմ հայրենեաց և կորոյս զարուն։ Քաջացան 'ի մարտին մեծապէս Թագաւորն Նէապոլսոյ Միւրատ, և զօրավարն Վիկտոր և Նէյ, հալածական տարեալ զՌուսս. իսկ Մարմոն և Սէն-Սիր վանեցին զԲրուսս և զԱւստրիացիս։ Կալան գաղղիացիք յաղթութիւն մեծ, կոտորեալ ասս երեսուն հազար 'ի Թշնամեաց, և տասն հազար գերեալ 'ի նոցանէ, Թող զաւար բազում, երկերիւր Թնդանօթս, հազար սայլս և զբազմութիւն Թնդանօթաձիգ կառաց։ Այլ յետ յաղթութեանս անկաւ Նափոլէոն խօթացեալ 'ի Տրեզտա։

Մինչդեռ զօրավարքն նորա բազում ուրեք խորտակէին առաջի Թշնամեաց, Վանտամ

կորուսանէր երեքհազարս 'ի զօրաց իւրոց 'ի Քուլմ, և ինքն եօթն հազար զօրօք գերի անկանէր 'ի ձեռս Թշնամեաց. Ուտինոյ՝ հարաւ 'ի Կրոսպէրէն, Նէյ՝ 'ի Տէննէվից, Մաքտոնալ՝ 'ի Քացպախ։ Ընդ գոյժ պարտութեան իւրոցն ընդոստուցեալ Նափոլէոնի եկ անձամբ 'ի մարտ. Թէպէտև յաղթեաց, այլ ոչ ինչ առաւելեալ 'ի զօրութիւն բաղդի՝ պատգամարար 'ի հաշտութիւն. և ոչ ընկալեալ պատասխանի, ստիպեցաւ հարիւր եօթանասուն հազար զօրօք մօտ 'ի Լիփսիք Ճակատ տալ ընդ երեք հարիւր հազար զօրաց Թշնամեաց։

Ի վեշտասաներորդ աւուր ամսեանն հոկտեմբերի յառաւօտուն յարշալուրջս բնակիչք Լիփսիքայ տեսին 'ի ծայրից պարըսպաց իւրեանց եռակարդ զօրօք պաշարեալ զքաղաքն, զորոց զսկիզբն անմարթ էր նշմարել 'ի հեռուստ։ Իմացեալ ապա թէ ոչ էին զօրք Գաղղիացւոց տողեալ կիսաբոլոր շուրջ զքաղաքաւն, և դաշնակցացն բանակ կարգեալ ընդ ուղղագիծ երկայնութիւն Ճակատու Թշնամեաց, սկսան երկուստեք հրձիգ 'ի միմեանս լինել և տևեաց ահաւոր հրձգութիւնն ժամս վեց. ծուխ Թանձր ծածկեալ ունէր զբանական և անընդհատ կայծակունք բոցոյ հատանէին։ Զայն օր յերկբայս եկաց յաղթութիւն, և յաւուրն երկրորդի դուլ եղև զինուց. լցաւ զեղաւ քաղաքն բազմութեամբ վիրաւորաց Գաղղիացւոց։ Ի վաղիւ անդր պնդեալք վառեալք դաշնակիցք 'ի յաղթութիւն, ա-

րիագոյնս սկսան կռուել. յետ երկար դիմակալութեան՝ տեսեալ Գաղղիացւոց զհատուածել Սաքսոնաց 'ի Թշնամիս անդր, վհատեալ տեղի ետուն։ Ահապարեաց Նափոլէոն Ճողոպրել զանձն 'ի սպառ 'ի սպուսա կոտորածէ, և անցանել գիշերի ընդ գետն Ելսթէր ընդ կամուրջ մի փոքր. այլ հրաման նորա վրիպեալ՝ յանկարծ 'ի վեր ոստուցին իւրքն զկամուրջն, մինչև ամենայն զօրացն անցեալ, և այս աղէտք լուան արարին պարտութեանն. քսան հազար զօրք գերի անկան, և բազմագոյնք կոտորեցան. անդ կորեաւ և քաջն Փոնիաթովսքի, որ մեծալ երիվարաւն 'ի գետն, ընկղմեցաւ 'ի խորս, ոչ ևս երևելով։ Իսկ Նափոլէոն եօթանասուն և երկու հազար զօրօք ապրեցեալով 'ի մեծէ բանակէն՝ հալածական փախչէր յերեսաց Թշնամեաց, և քաջութեամբ Թիկնապահ գնդին խորտակեալ զՊաւարացիս 'ի Հանաւ, անցեալ ընդ մէջ նոցա հասեալ կալաւ զափունս Հռենոսի (1813)։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Խրախուսել անդրէն Նափոլէոնի ընդդէմ համագումար պէպուլիանոցն 'ի պոպերաղմ։

ՈՒՐ ուրեմն ետես Նափոլէոն զունայնութիւն խորհրդոց իւրոց միահեծան ունելոյ զթագաւորութիւնս աշխարհի. սակայն յամառեալ պնդեալ սակաւին 'ի փա-

ռասիրութեան, և ոչ զինչանէր յամբարհաւաճմնացն, ոչ 'ի տեսիլ տարածութեան գաւառացն մասանելոց 'ի յաջշտակութիւն և 'ի սուր, ոչ 'ի կարուստ հարիւր և քսան բիւր մարդկան 'ի վերջին պատերազմունսն, ոչ յաղաղակ վշտագնելոց ընտանեաց, և ոչ յերկիւղէ կասկածանաց ընկճելոյ Գաղղիոյ 'ի թշնամեացն։

Այն ինչ հասեալ նորա 'ի Փարիզ գումարեաց զծերակոյսն, խօսեցաւ ընդ նոսա այսպէս. "Ո՞ խորհրդակիցք պետութեան, նուիրակք գաւառաց և գումարք Օրէնդրաց, ցարդ հոյակապ յաղթութեամբք փառաւորեցան զէնք Գաղղիոյ 'ի պատերազմունս, այլ պարտութիւնք անակնուն ելիք 'ի դերև հանին զյաղթանակս մեր։ Արդ փութաջան ժրութիւն և միաբանութիւն Գաղղիացւոց զերծուցէ զաշխարհն 'ի մատաղուտ վտանգէն։ Ոչ երբէք պատրեցայ 'ի յաջողութիւնս բաղդին, ոչ ընկճեցայց և 'ի ձախողելն։ Խաղաղութիւն շնորհեցի ազգաց ընկճելոց. կանգնեցի զաթոռս թագաւորաց, այլ նոքա լքին զիս։ Բազում ինչ եգեալ էր իմ'ի մոլ 'ի բարօրութիւն և յերջանկութիւն աշխարհի . . . . . Այլ զի թագաւոր եմ և հայր, գիտեմ զի օգտաւէտ է խաղաղութիւն և գահոյից և տոհմից. բայց հատաւ յինէն ակնկալութիւն խաղաղութեան յերեսաց դաշնակցեալ պետութեանց. խոնարհեցայ յինչ յինչ 'ի կամս նոցա, և յինէն կողմանէ չէք խափան հաշտութեան ,,։ Պատասխանի արար ծերա-

կոյսն առ այս. «Շնորհեմք դաշնակցեալ պետութեանց զամենայն զոր խնդրեն, քանզի այս կամք են Գաղղիոյ, այս կարևոր պէտք մարդկութեանս. սակայն եթէ յամառեալ պնդեալ կացցեն նոքա 'ի պատերազմ, մարտիցուք վասն հայրենեաց մերոց 'ի մէջ շիրմաց հարց մերոց և խանձարրոց որդեկաց»։ «Իմ կեանք, ասէ Նափոլէոն, սահմանեալ են 'ի բարօրութիւն Գաղղիոյ, զիարդ ժուժայցեմ տեսանելով զբազումգաւառս հատեալ 'ի նմանէ. գերլուն զաղիս իմ աղաղակք բնակչաց նոցա։ Բողոքեմ առ Գաղղիացիս 'ի փրկութիւն Գաղղիացւոց... Համառօտ է ժամանակս, թշնամիք առ դուրս հասեալ կան. մի՛ լիցուք մատնտու փառաց մերոց. գումարեսցուք ընդ թագիւս՝ որ յինեակ յաղթութեամբք պերճացեալ շողայ։ Ոչ վրիպեսցէ բաղդ յազգէ որ գիտէ արիապէս պնդեալ չպակասել 'ի քաջութենէ»։

Յետ այնորիկ հարկս Ծանուցնս սահմանեալ Նափոլէոնի հրամայեաց զօրաժողով լինել երիքհարիւր հազար զօրաց։ Ծերակոյտն 'ի բազմաց հետէ սովորեալ կուրօրէն հպատակել հաճոյից նորա, գովեաց զձախողակի խորհուրդն, այլ ոչ նոյնպէս և ժողովն Օրէնսդիր. քանզի համարձակեալ ընդդէմ եկաց քաջութեամբ հրամանացն, թողուլ ասէր զաշխարհակալութեան խորհուրդս, և հաստատել զազատութիւն։ Ընդ որ բարկացեալ Նափոլէոնի փակեաց արգել զժողով նոցա։

Իսկ դաշնակից պետութիւնք Եւրոպայ

ծանուցեալ յայտարարութեամբ թէ թշնամիք են Նափոլէոնի և ոչ Գաղղիոյ, խոստացան չհատանել բնաւ գաւառս 'ի թագաւորութենէն, և խաղացին անցին ընդ Հռենոս 'ի բազում կողմանց առանց դէգերելոյ 'ի պաշարումն ամրոցաց, զեղան 'ի գաւառս արևելից, դէմ եդեալ անոր արշաւել 'ի Փարիզ։ Մինչդեռ օգնականութեամբ նոցա Հելուետիացիք, Հսպանտացիք և Բեղգիացիք թօթափէին զլուծ բռնութեան Գաղղիացւոց, և խոալացիք ընդ առաջ ելանէին խնդութեամբ Աւստրիացւոց։ Պակեաւ Նափոլէոն յահաւոր արշաւանացն, և ջանացեալ յապաղեցուցանել զթշնամին՝ բանագնաց լինէր 'ի խաղաղութիւն. այլ կանխեալ մատեալ էր նոցա 'ի Ֆրանք կոմսութիւնն յԱլսակիա, 'ի Բուրգունտիա, 'ի Լորենա, և դիմէին 'ի Կամպանիա, մինչ դեռ ևս պատրաստէր Նափոլէոն խաղալ ընդ առաջ նոցա։

Զև ելեալ 'ի մայրաքաղաքէն, ժողովեաց զսպայս ազգային զօրաց, եկաց 'ի միջի նոցա կալեալ զձեռանէ կնոջ իւրոյ և մանկանն արքայորդւոյ, խօսեցաւ ընդ նոսա ազդու և վսեմ բանիւք. 'ի վախճան բանից յանձն արար 'ի նոսա զմայրաքաղաքն, զամուսին իւր և զորդեակն։ Ընդ որ շարժեցաւ գութ տեսողացն ամենեցուն. այլ 'ի վաղիւ անդր ընկնեցաւ այն ամենայն 'ի մտաց նոցա, իմացեալ զի տեսարանն այն կեղծիք իմն էին ուսեալք 'ի դերասանից։ Իսկ Նափոլէոն կարգեալ զՄէզոն զօրավար հիւսիսակողմանն,

զՕժլրոյ'ի Լուգդոն, և զՍուլ'ի Պիրենեանս սահ ունել ընդդէմ թշնամեաց, ինքն խաղաց 'ի Շալոն բազմահոգ և մեսայոյզ (1814):

ԳԼՈՒԽ Ի.

Յաղթութիւն Պլի-խերայ 'ի Պրիէն 'ի վերայ Նափոլէոնի: Մի-սանգամ զօրանալ սորա և մերժել զպայմանս դաշնակից պէպոլիանոց:

ԴԻՄԵԱՑ Նափոլէոն վաթսուն հազար զօրօք յանդուգն 'ի վերայ Պլիւխէրայ 'ի Պրիէն, բախեցաւ ընդ նմա և վանեաց. այլ յաւուրն երկրորդի կանգնեաց զկորանսիւր Պլիւխէր, և տարաւ յաղթութիւն մեծ 'ի վերայ Նափոլէոնի, հալածական տարեալ զնա մինչև 'ի Թրուա, ուր իբրև քսան հազար զօրականք դասալիք փախատեայ գնացին յանտառս: Մեծ էին զարմանք Թրուացւոց, որք 'ի հռչակել ցնծութեամբ զյաղթութիւն ինքնակալին. իւրեանց 'ի Պրիէն, տեսին զնա յանկարծ առ գուրս աշտանակեալ յերիվար տղմալից և ձիւնաթաթախ, և ընդ նմա գունդ զօրաց խառն 'ի խուռն խուճապեալ. և անդէն զցնծութիւն իւրեանց 'ի արտունջ լուծանէին, և յաղաղակ անյուսութեան. այլ փութացան ժողովել թիկնապահք ինքնակալին զմնացորդս զօրուն և եղեն քառասուն և հինգ հազար:

Մինչդեռ դանդաղէին թշնամիք դիմել միախուռն 'ի վերայ Նափոլէոնի և վախճան

տալ մարտին, և Պլիւխէր դիմէր 'ի Մարն, և Շուարցէնպէրկ ընդ երկայնութիւն Սենա գետոյն 'ի Փարիզ. լուեալ Նափոլէոնի թէ յառաջապահ գունդ Պլիւխերայ մերձ է 'ի Մոյ, և Փարիզ զարհուրեալ ճնայ յետ երից աւուրց տեսանել զթշնամին, յանկարծ բնաւորեալ յանդգնութեամբն չու արար տագնապաւ 'ի Մարն, եհար զյառաջապահ գունդ թշնամեաց 'ի Մոնմիրայլ և վանեաց: Անտի անկեալ 'ի վերայ Պլիւխերայ, որ քան հազարաւ էր միայն, բռնագատեաց զնա նահանջել յետս մինչև 'ի Շալոն, և հուչակ եհան թէ 'ի սպառ խորտակեաց զՊլիւխեր: Եւ զի բանակն Սենայ տիրելով քաղաքաց յառաջ խաղայր, և Փարիզ այս երկրորդ անգամ ըմբռնեալ յահի մեծի ճնայր թշնամւոյն, եթող զՄարն, յարձակեցաւ ի բրև զկայծակն 'ի Սենա, վանեաց զգունդ մի Ռուսաց, և զկնի զայլ գունդ Աւստրիացւոց. էառ զՄոնդերոյ և յետս նահանջեցոյց զՇուարցէնպէրկ զօրավար: Բայց պատերազմունքս այսոքիկ իբրև վերջին նշոյլք փառաց Նափոլէոնի, առկայծեալք ընդ հուպ շիջանելին. և յաջողութիւնքն ինչ սակարագոյնք լինէին նմա, քանզի խրոխտացեալ նոքօք մերժէր զհաշտութիւն պայմանս առաջարկեալս 'ի թշնամեաց, ոչք թողուին 'ի նա զմտաւորութիւն Գաղղիոյ, միայն զի մոցեն միանգամ 'ի Փարիզ, և ցասուցեալ պատասխանէր զթուղթ պայմանացն գոչելով. "Մօտ ևս կամ 'ի Վիեննա քան 'ի Փարիզ":

Եւ իբրև մուտանէր վերոտին 'ի Թրուա ակնկալութեամբ արագ արագ վանելոյ զթշնամին անդր քան զՀռենոս. Պլիւխէր զատուցեալ 'ի Շուարցէնպէրկայ հալածական տարաւ առաջի իւր զՄարմոն և զՄորթիէ, և միացեալ ընդ այլ երկուս գունդս զօրաց եհաս առնուլ զՍուասսոն, և այս երրորդ անգամ ահաբեկ լինէր Փարիզ։

Խաղաց դարձեալ Նափոլէոն 'ի վերայ Պլիւխէրայ, և նա առ 'ի հեռացուցանել զՆափոլէոն 'ի Սենայ, մեկնեցաւ 'ի Լան, և ամրացաւ 'ի բարձրաւանդակի ուրեք տեղւոջ։ Մերձեցաւ Նափոլէոն, և զօրն ողջոյն մարտուցեալ, ոչ ինչ կարաց ստանել նմա. և 'ի գիշերին անկեալ Խազախաց 'ի ձախ թև բանակին Գաղղիացւոց, կոտորեցին 'ի նոցանէ արս երկոտասան հազար, և այնպէս ահ արկին 'ի նոսա, մինչև բազմաց զինաթափ փախստեայ մնել յանտառս։ Յառաւօտուն ժողովեալ Նափոլէոնի զփախստեայսն, կրկին փորձ փորձեաց. և անդէն առ ոտս լերինն կորոյս զընտիր ընտիրս 'ի զօրացն, և կոր 'ի գլուխ մեկնեցաւ 'ի բաց։

Մինչդեռ ինքնակալն 'ի Լան մարտնչէր, Շուարցէնպէրկ եհար զՎիկտոր և զՈւտինոյ, կալաւ զԹրուա, և ստիպեաց զզօրն Գաղղիացւոց անցանել յաջակողմն Սենայ. և եթէ անդէն յարձակեալ էր 'ի վերայ նոցա, զէնրնկէց առնէր անշուշտ ղպարտեալ յուսաբեկ և զսոնջ զօրականն։ Վրիպեցաւ և Պլիւխէր յեռ պատերազմին 'ի Լան՝ թո-

ղեալ զԹշնամին, դարձ առնելով 'ի Սուասոն, որով պարապ գտեալ Նափոլէոնի, յարձակեցաւ էառ զՀռեմն քաղաք 'ի ձեռաց Ռուսաց. և այս նորա վերջին լինէր յաղթութիւն: Սակայն յաջողութեամբս փքացեալ յոյժ, ոչ ևս այլ կամեցաւ լսել զխաղաղութենէ. և ցասուցեալ Դաշնակցաց՝ բարձին այնուհետև զամենայն բանագնացութիւն և զակնկալութիւն հաշտութեան: Այս էին և կամք Նափոլէոնի, զի անյոյս լեալ ժողովրդեան 'ի խաղաղութենէ՝ 'ի վէն դիմեցէ առհասարակ. և զինէին այնուհետև բնակիչք քաղաքաց և գիւղից, և ալք անօրէնք յարձակեալ կոտորէին զպատգամաբերս Թշնամեաց 'ի գրգռել զնոսա 'ի քէն վրիժուն: Հրաման լինէր քաղաքապետաց հրատարակել ժողովրդոց, կուտակելով 'ի վերայ և խաբէութեամբ զաւարհարութիւնս և զանգթութիւն Թշնամեաց, ցուցանել իբրև զմտրդակերս ոմանս զՌուսս և զԲրուսիացիս, մինչև պատմել զխազախաց Թէ կալեալ զմանկունս խորովիցեն, և 'ի կոչունս ուրախութեան իւրեանց ուտիցեն: Հանէր և Նափոլէոն վճիռս անօրէնս 'ի զայրացուցանել զատելութեանն բոց, և հրաման տայր սպանանել զգերեալսն 'ի պատերազմի. վատահամբաւ լինել քաղաքաց՝ որ անձնատուր 'ի Թշնամիս լիցին, և մասնիչ համարել հայրենեաց զայր Գաղղիացի՝ որ զձեռն եղբօր իւրոյ լքուցէ. և ինքն խնդութեամբ հայէր յաւերս քաղաքաց և գիւղից. "Ուրախ եմ,

ասէր, զի այնու զօրք ինձ պատրաստես ցին ,, :

ԳԼՈՒԽ ԻԱ.

Գիմէլ դաշնակցացն 'ի Մայրաքաղաքն 'ի Փարիզ և առնուլ:

ՄԻՆՉԴԵՌ յայս միտս էր Նափոլէոն, խուսափեցոյց զնա յոյժ լուր մահուց կոմսին Արդուայ եղբօր Լուդովիկոսի ԺԸ'ի Գաղղիա, և խնդամիտ ընդունելութիւն ժողովրդեանն: Նոյնպէս և յարձակումն Անգղիացւոց ընդ զօրավարութիւն Վելլինկդընի 'ի Կիէն, առուն Պորտոյի և մեծափառ մուտք դքսին Անկուլէմայ: Այլ խնամով ծածկեալ նորա զայս ամենայն, խրախուսեաց վերսաին՝ ըմբռնել յանկարծ օրէն զԹըշնամին. բայց դաշնակցացն Թողեալ զԹրուա յեաս նահանջեցան: Ընդ վատութիւն նի զակակցացն զամսոթի հարեալ և ցասուցեալ Աղեքսանդրի կայսեր, 'ի ժողովն ուրեք կշտամբեաց զդանդաղութիւն զօրավարացն, և ազգու բանիւք վառեաց զամենեցուն զմիտս միախուսմբ առնել զյարձակումն 'ի վերայ Նափոլէոնի՝ որ 'ի Թիկանց Ջանայր ըմբռնել զնոսա: Քաջալերեալ զօրավարացն 'ի բանից անտի Աղեքսանդրի, յարձակեալ վանեցին զԳաղղիացիս և զՆափոլէոն անդր քան զՎիԹրի, և հատուածեալ տարն հաղար հեծեալս հետամուտ նոցին, ինքեանք միահամուռ խաղացին 'ի վերայ մայրաքա-

ղաքին՝ զոր պահէին Մարմոն և Մորթիէ փախուցեալք անդր յերեսաց Շուարցեն. պէրկայ զօրավարի, և երկիւղիւ լցեալ զքաղաքն։

Անագան ուրեմն իմացաւ Նափոլէոն՝ զի յառաջապահ գունդ մի՝ այն Թշնամեացն հետամուտ է ինքեան, և դարձուցեալ զերեսս իւր սնդեցաւ զհետ նոցա։ Թիկնադարձոյց եղեն և նոքա փախստեայ գնալով և զհետ ձգելով զնա հեռի 'ի մայրաքաղաքէն։ Ուր ուրեմն լուեալ Նափոլէոնի զգոյժ յարձակման Թշնամեացն 'ի Փարիզ, չուդարձի հրամայէր տագնապաւ, և եթէ ընդ Շալոն գիմեալ էր՝ յերկուս աւուրս կարէր հասանել 'ի վերայ Թշնամեացն, և նեղեալ զնոսա 'ի Թիկանց՝ Թերևս և ձեռնթափ իսկ առնէր 'ի գործոյն. այլ ոգի խռովութեան աղմկեալ զնա, Թափառեցոյց յափունս Վասեայ. և յետ երկուց աւուրց անցեալ ընդ Թրուա, ուղղէր զընթացս իւր 'ի Փարիզ։ Ի նմին աւուր հասին անդր և դաշնակիցք երկերիւր հազար զօրք. յաւուրն երկրորդի կալան զամենայն բարձունս հարաւոյ և զպատուարս, և մտին յարուարձան քաղաքին սուր 'ի ձեռին։ Մարմոն և Մորթիէ բաղխեալ ընդ նոսա, իբրև տեսին զի անհնար է զդէմ ունել՝ լքին զմարտն, և Յովսէփ Պոնափարթէ որում յանձն էր մայրաքաղաքն՝ հրամայեաց անձնատուր լինել, և ինքն Թողեալ գնաց յԱերեղիոն։ Աճապարեալ Նափոլէոն եհաս մատեաւ ջորիւք մղոնաւ մերձ 'ի Փարիզ, և գրեաց առ իշխանս քաղաքին

տոկալ մինչև ցգալուստ օգնականութեան զօրաց. այլ մինչ չև հասեալ հրամանին՝ անձնատուր լեալ էր քաղաքն։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Անկումն Նափոլէոնի, և ամենապրուրիւն դաշնակից պէպուրէանց 'ի Փարիզ։

Լուսի Նափոլէոն զգոյժ առման մայրաքաղաքին, և մեկնեցաւ 'ի Ֆոնդէնբլոյ, և անդ եհաս նմա 'ի ծերակուտէն վճիռ՝ անկման յինքնակալութենէ։ Իսկ Գաղղիացիք յուզէին 'ի միտս թէ զոր վարչութիւն հաստատեացեն. և զայն պատեհ առեալ թագաւորականաց գողացան զմիտս ամբոխին և յառաւօտէ աւուրն ցրուեալ ընդ թաղս քաղաքին՝ կանգնեցին զսպիտակ դրօշ Պորպոնեանց, և վառեալ 'ի նոյն միտս զփարիզացիս՝ հակառակ Ճգանց խռովարար մարդկանն, սկսան աղաղակել. "կեցցէ արքայ, կեցցեն Պորպոնեանք, կեցցեն ազատարարքք մեր"։

Ի միջօրէի մտին 'ի Փարիզ Ալեքսանդր կայսր Ռուսաց, և Գուլիելմոս թագաւոր Բրուսաց հեծեալք յերիվարս, շուրջ պար առեալ յիշխանաց և 'ի զօրավարաց. և զկնի բանակ յիսուն հազար այրընտիր զօրու 'ի ձայն թմբկաց և զինուորական նուագաց։ Զարհուրեալ քաղաքացեաց հայէին զարմացմամբ ընդ բանակ զօրուն գումարելոյ

'ի տասանց այլալեզու ազգաց՝ որոց բազում անգամ խորտակեալ առաջի զօրութեան Գաղղիացւոց՝ յայնժամ մեծափառ Ճոխանային. և որ յերեկն թշնամիք՝ յայնժամ իբրև բնիկ Գաղղիացիք երևէին: Եւ անդէն հաստատեալք 'ի խաղաղութեան և 'ի հանդարտութեան, երախտագէտ խնդութեամբ ընդ առաջ ելանէին թագաւորացն. և ամենայն ոք ցանկայր մերձենալ 'ի նոսա, փարիլ զոտիւք նոցա, և գէթ հպել 'ի հանդերձս նոցին. և որոց անմարթ լինէր մերձենալ, 'ի հեռուստ ողջունէին զնոսա իբրև զազատարարս Գաղղիոյ: Զուարճացեալ և թագաւորացն ընդ խնդութիւն մեծի ժողովրդեանն, քաղցրութեամբ պատասխանի առնէին. "Զեկաք մեք իբրև զաշխարհակալս 'ի նուաճել, զի դաշնակից ձեր եմք, և զցանկալին խաղաղութիւն ածեալ բերեմք ձեզ,,: Ընդ այս առաւել ևս զուարճացեալ ժողովրդեան, 'ի ձայն ծափահարութեան շուրջ զնոքօք խառնեալ՝ խնդրէին զառաջին տոհմ թագաւորաց իւրեանց. և այլք դիմեալ բաղմութեամբ, արկանէին տուն ընդ պարանոց պատկերի Ինքնակալին կանգնելոյ 'ի հրապարակին Վանտոմի, և կործանէին գոչելով. "Անկցի բռնաւորն,,:

Յառաջին աւուր յամսեանն ապրիլի դատաւորք Փարիզու հրաժարեալք 'ի ծառայութենէ Նափոլէոնի՝ խնդրէին իւրեանց 'ի թագաւոր զԼուդովիկոս ԺԸ, և յաւուրն երկրորդի զնոյն արար և Ծերակոյտն, որով ծածկէր արդեօք զնախատինս կուրօրէն

սպասահարկութեան կամաց բռնակալին զամն տասն, եթէ ոչ նոր սահմանագրութիւնս 'ի գուլս հանելով պահանջէր 'ի թագաւորէն իւրմէ երդումն հաւատարմութեան, չև ամբարձեալ զնա 'ի գահ:

Իսկ Նափոլէոն յիսուն հազար զօրք ամրացեալ 'ի Ֆոնդէնբլոյ խորհէր յարձակել 'ի Փարիզ. այլ լուութիւն զօրացն նշանակ լինէր նշկահելոյ զնա. և անդէն բազումք 'ի զօրավարացն թօթափէին 'ի նմանէ մատնութեամբ կամ առ ձանձրութեան պատերազմաց խնդրելով պարապ հանգստի: Տեսեալ Նափոլէոնի և զմատնութիւն Մարմոնի զոր սիրէրն յոյժ, և զթագաւորել Լուդովիկոսի ԺԸ., առ յուսահատ ամօթոյն խորհէր երթալ զիւրովին, զի միանգամայն իւրով ձեռամբ կնքել զանկումն իւր և զյաջորդաց իւրոց: Էառ զդէզ մահու՝ զոր 'ի ժամանակէ անտի արշաւանացն 'ի Մոսքուա կրէր ընդ իւր. այլ հնացելոյ դեղոյն ոչ ինչ զօրեալ, էարկ միայն զնովաւ թմբրութիւն խոր, յորմէ սթափեալ՝ եկաց մնայորդ վասն կենացն և աղաղակեալ ասէ. "Ձկամի զայդ Աստուած", և թողեալ զանձն 'ի խնամս վերին տեսչութեան, խոնարհեցաւ կնքել զպայմանս՝ յանկումն իւր և յաջորդաց իւրոց 'ի թագաւորութենէ Գաղղիոյ ըստ այսմ բանի. "Տէրութիւնք դաշնակցայ բողոքեն զինքնակալէն արգելլինել խաղաղութեան Եւրոպայ. վասն որոյ և նա հաւատարիմ երդմամբ ծանուցանէ զի հրաժարէ ինքն և որդիք իւր 'ի թագաւորու-

թենէն Գաղղիոյ և Իտալիոյ. և զկեանս ևս զոհեսցէ նա յօգուտ Գաղղիոյ,,:

Յետ այսորիկ յաւուր քսանեւրորդի վեցերորդի ամսեան ապրիլի էջ Նափոլէոն յապարանիցն Ֆոնդէնբլոյ, ողջունեաց զհաւատարիմ պաշտօնեայս իւր և զսպայս որ մնային դեռ առ նմա, և եկեալ 'ի գաւիթն, ուր թիկնապահ գունդն պատերազմական օրինօք տողեալ կարգեալ կայր, հայեցաւ դիմով 'ի հինաւուրց զօրականն և ասէ. "Ողջամբ երթիջիք զօրականք քաջք, այս քան ամք են զի 'ի շաւիղս փառաց ահսի զձեզ միշտ. և 'ի յետին պահուս որպէս յաւուրս յաջողութեանց՝ դուք օրինակ կացէք քաջութեան և հաւատարմութեան: Քաջութեամբ ձերով մարթ էր մեզ յոտին ունել զբազդ մեր, այլ ոչ լինէր այնուհետև վախճան պատերազմաց, և Գաղղիա ձեզ քեալ 'ի քաղաքական կռիւս՝ յոյժ ապառապեալ դատանէր. վասն որոյ նուիրեցի ես զամենայն շահ օգտի անձանց մերոց յօգուտ հայրենեաց, և ահա մեկնիմ 'ի ձէնջ: Զօրացին ձեռք ձեր 'ի ծառայութիւն Գաղղիոյ՝ յորոյ յերջանկութիւն խորհէի միշտ. մի՛ ինչ դժկամակ լինիցիք ընդ բազդիմ. կամեցայ կեալ յառաւելութիւն փառաց ձերոց, զի զդործսն մեծամեծս՝ զոր 'ի միասին գործեցաք, արձանացուցից 'ի դիր յաւերժական յիշատակ զկնի եկելոց: Ողջոյն ձեզ, որդեակք, մնացէք բարեաւ. կամէի գրկախառն համբուրել զմի մի 'ի ձէնջ, այլ ընդ ամէն ձեր ահաւադիկ համբուրեմ

զդրոշ ձեր»: Եւ զայս ասացեալ համբուրեաց զդրոշն. յայնժամ յարտասուս լուծեալ առ հասարակ զօրականին՝ Ճմլէին և զսիրտ Նափոլէոնի, որոյ բուռն արտրեալ անձին գոչեաց. «Ողջամբ կացջիք, ընկերք իմ, համբոյրս այս վերջին՝ դրոշմեացի 'ի սիրտս ձեր»: Եւ վաղվաղակի եղեալ 'ի կառս իւր ընդ Պէրթրանայ զօրավարի հանդերձ չորեքհարիւր թիկնապահ զօրօք և երկու ևս զօրավարօք ուղղեաց զընթացս իւր 'ի կղզին Էլպա, զոր պայմանօքն Ֆոնդէնբլոյ սահմանեալ էր նմա թագաւորաց Եւրոպայ 'ի բնակութիւն:

Այսպէս անկաւ ինքնակալն մեծ, որ զամս չորեքտասան թագաւորեալ 'ի Գաղղիա, ընդ օրինօք իւրովք հնազանդեցոյց գրեթէ զողջոյն Եւրոպա: Ոչ ոք քան զսա բարեբաղդ գտաւ ուրեք, ոչ զօրավար մեծ քան զնա, և ոչ քաղաքավար հմուտ. յաղթութեամբք իւրովք 'ի գերագոյն փառս ամբարձ զԳաղղիա առաջի օտար ազգաց, և առաւել պերճացոյց իմաստուն կարգօքն վարչութեան: Այլ ուր ուրեք փառասիրութեամբն գործեաց զնաս Գաղղիոյ, անդ և ինքեան եբեր տոյժս մեծամեծս: Մահուամբ դքսին Էնկիէնայ զբազումս զինեաց իւր ոխերիմ թշնամիս. նենգաւոր յափշտակութեամբ թագաւորութեանն Սպանիոյ, եհան 'ի ձեռաց զՀզոր դաշնակցութիւն նորա, ընդդէմ իւր զինեաց զԱնգղիացիս և կորոյս զընտիր ընտիրս 'ի զօրաց իւրոց. և խորհրդովք խափանելոյ զվաճառականութիւն Անգղիոյ, թշնամի իւր արար զա-

մենայն տէրութիւնս Եւրոպայ. իսկ ապա փառասէր և անմիտ խորհրդով արշաւանացն 'ի Ռուսս՝ կնքեաց զկործանումն իւր։ Բայց տակաւին խլրտէր նա զանխուլ միւսանգամ գլուխ ամբառնալ, որպէս զի 'ի սպառ կոր-ծանեսցի (1814)։

ՊԱՅՄԱՆԱՒՈՐ

ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա.

Թագաւորել Լուդովիկոսի ԺԸ։

ՀՐԱՒԻՐԵԱԼ Լուդովիկոսի ԺԸ. յԱնգղիոյ 'ի ձեռն նուիրակաց Ժողովրդեան իւրոյ 'ի գահ, 'ի 25 ապրիլի անկաւ յուզի ընդ դքսուհւոյն Անկուլէմայ, ընդ իշխանին Քոնտեայ, և ընդ որդւոյ նորա դքսին Պուրպոնի. և իբրև ե հաս 'ի Քալէ եգիտ զծովափունսն Գաղղիոյ խառնեալ բազմութեամբ մարդկան, որք 'ի մտանել արքունի նաւուն 'ի նաւահանգիստ-անդր՝ սկսան գոչել. "Ահաւասիկ նա. կեցցէ արքայ, կեցցէ դշխոյ, կեցցեն Պորպոնեանք"։ Եւ խառն ընդ ձայնս ծափահարութեան արձակեցան թնդանօթք յամրոցաց, հնչեցին զանգակք և նուագք երաժշտականք։ Կացեալ թագաւորին կանգուն 'ի նաւուն, շուրջ պարառեալ յընտանեաց իւրոց և 'ի հաւատարիմ ծառայից, ամբարձ զաչս իւր յերկինս,

և զաջ ձեռն 'ի վերայ լանջացն եդեալ. գոհացաւ զԱստուծոյ՝ որ դարձոյց ուրեմն զնա 'ի թագաւորութիւն իւր: Ապա դարձուցեալ զաչս առ Ժողովուրդն, ձգեաց առ նոսա 'ի հեռուստ զբազուկս իւր հայրենի գթով. և Ժողովուրդն ձայնիւ խնդութեամբ և հրճուալից արտասուօք պատասխանի առնէր թագաւորին: Որ ուրեմն ապա էլ 'ի ցամաք յերկիր հայրենեաց իւրոց, և մինչև յամսոյ բարձրանային աղաղակ ցնծութեան մարդկան, ոչք անդուլ աղաղակաւն յուսարկաւոր երթային նմա մինչև 'ի մայրաքաղաքն:

Յաւուրն երրորդի ամսեանն մայիսի եմուտ Լուդովիկոս Ցանկալին, զի այսպէս կոչէցաւ 'ի Ժողովրդենէն, 'ի մայրաքաղաքն 'ի Փարիզ. զարդարեցաւ քաղաքն պսակօք և թագօք և սպիտակ կերպասիւք և դունակ դունակ զարդուք. ձայնք թմբկաց, զանգակաց և թնդանօթից հնչէին անդադար, և աղաղակ բազմութեան ամբոխին, կեցցէ արքայ, ընոյր զքաղաքն ծայր 'ի ծայր: Եմուտ թագաւորն 'ի քաղաքն հեծեալ յերկանիւ կառս՝ ձգեալ հանդարտիկ յուլթից գեղեցիկ սպիտակ երիվարաց. և դրքաւուհին Անկուլէմայ դուստր Լուդովիկոսի Ժ. Զ. բազմեալ կայր առ նմա. էին ընդ նոսա և իշխանն Գոնտեայ և դուքսն Պուրպոնի. և առընթեր երթային հեծեալք յերիվարս՝ կոմսն Արդուայ եղբայր թագաւորին, և դուքսն Պեռեայ երկրորդ որդի նորա. և զկնի զորավարք, իշխանք, ատենակալք և ամենայն

մեծամեծք տէրութեանն. իսկ հանդիսատեսքն էին անդանօր ամենայն ժողովուրդք Եւրոպայ խառն ընդ Գաղղիացիս իբրև ազգ մի և ժողովուրդ մի: Զոգան անդէն 'ի մայր եկեղեցին մատուցանել հանդիսիւ Աստուծոյ գոհութիւնս, անտի ուղղեցան գնալ յապարանս Թիւյլրեռի. ուր սպասէին արքայազուն օրիորդին՝ մեծուհիք մայրաքաղաքին, զգեցեալ սպիտակս և շուշանազգեստ զարդարեալք: Իբրև ետես օրիորդն զտեղիս աստուածպաշտութեան և զաղէտից ծնողաց իւրոց, յարտասուս հարեալ լայր դառնապէս. յայնժամ խանգաղատեալ տիկնանցն 'ի վերայ դատեր նահատակելոյ Թագաւորին՝ անկան յոտս նորա իբրև 'ի խոստովանութիւն յանցանաց 'ի դիմաց ազգին, և խնդրէին զօրհնութիւն նորա: Ընդ այս գործ նոցա ոչ էս կարացեալ ժոյժ ունել մեկնեցաւ օրիորդն աղաղակելով. "Ո՜հ, կարի է ինձ այդ,,. և անկաւ նուաղեալ:

Յերեկոյին շարժեալ Թագաւորին յանդուլ աղաղակէ ցնծութեան ժողովրդեանն երևեցաւ նոցա 'ի պարտիզին Թիւյլրեռի. "Ահա, ասէին, ահա բարի Թագաւոր մեր, զոր ոչ ծանեաք. կեցցէ Թագաւոր մեր, կեցցէ հայր մեր,,: Իբրև եկն երևեցաւ և օրիորդն դքսուհին Անկուլէմայ, դադարեցաւ աղաղակն լուծեալ 'ի ձայն լալեաց:

Այսպիսի եղև հանդէս վերատին հաստատութեան Թագաւորութեան Գաղղիոյ, առհաւատչեայ փրկութեան Թագաւորաց և ժողովրդոց, յաղթանակ ա-

ռաքինութեան 'ի վերայ անօրէնութեանց, յաղթանակ կրօնից 'ի վերայ ամբարիշտ անաստուածութեան, յաղթանակ ընկերութեան մարդկան 'ի վերայ խռովարար անիշխանութեան:

Ոչ անփոյթ եղև և թագաւորն 'ի խնամել զպէտս ազգին՝ որ 'ի քսան և հինգ ամաց հետէ բարձի թողի լեալ էր յիրս իրս. արար խաղաղութիւն ընդ դաշնակից պետութեանց Եւրոպայ՝ որով 'ի նախկին սահմանս ամփոփեցաւ Գաղղիա. և դարձուցին 'ի նա Անգղիացիք զգաղթականս նորա, զԿուինէա, զՄարթինիկեան կղզիս, զԿուատէլուփա, զկղզին Պուրպոն, պահեալ միայն ինքեանց զկղզին Գաղղիոյ, զսուրբ Լուչիա, զԹապագոյ. քան զայսոսիկ ոչինչ այլ կորուսին Գաղղիացիք, և ոչ առուգանս տուգանեցին, մինչև երևելի երևելի գործք իսկ Ճարտարաց աւարք յաղթանակաց նոցա մնացին 'ի ձեռս նոցա: Եւ ոչ զգերիս փրկանաւորէին, քանզի 'ի շնորհս Լուդովիկոսի՝ կայսրն Աղեքսանդր զքսան հազար Գաղղիացիս գերեալս 'ի Ռուսիա արձակեր ազատս:

ԳԼՈՒԽ Բ.

Սահմանագրութիւն Լուդովիկեայ, և գծագրութիւն անգի գրգռեալ յաղգին:

ԻՒՐԵՒ հանդարտեցաւ երկիրն, և հեռացան օտարք, ժողովեաց Թագաւորն զծերակոյտն և զօրէնագիր ժողովն, զոր բռնութեամբ լուծեալ էր Նափոլէոնի. և առաջի նոցա եւ նոր սահմանագրութիւնս Գաղղիոյ: Կարգեցաւ վարչութիւն տէրութեան 'ի ձեռս Թագաւորին և երկուց ժողովոց, պատրկացն և ընտրելոց յարքայէն նուիրակաց գաւառաց, որոյ հաւանութեամբ հրամանք Թագաւորին յօրէնս կարգէին: Տուաւ և ազատութիւն հաւատարութեան ամենայն առն գաղղիացւոյ, ազատութիւն տպագրութեան և կրօնից. և այլ բազում կարգք կամ Թոյլատուութիւնք ըստ ժամանակին հանգամանաց յարմարեցան ըստ մտաց ազատասէր ժողովրդեան Գաղղիոյ:

Այլ մեծապէս վրիպեցաւ Թագաւորն 'ի հրատարակել անդ զօրէնս նորոյ սահմանագրութեան. քանզի չառեալ յանձն համարել զայնոսիկ իբրև պայմանս Թագաւորելոյ իւրոյ, այլ որպէս իւր ինչ շնորհս տայր ազգին՝ եգեալ և զԹուականն յիններատանեցորդի ամի Թագաւորութեան իւրոյ, որով

անգամանէր զամենայն անցս՝ որ 'ի քսան և հինգ ամաց հետէ անցին 'ի Գաղղիա. արհամարհէր և զհրաւէր իւր 'ի գահ և զկամս բոլոր ազգին. չտայր և սահմանագրութեանն զհաստատութիւն օրինաց, համարելով զայն փոփոխելի ըստ կամաց Թագաւորին. և ասէր սոսկ գրգռեցան բազմաց միտք, և օտարացան 'ի նմանէ: Մանաւանդ որք 'ի խռովութեանն ժամանակի մեծացեալք էին՝ երկնչէին թէ գուցէ յաւուր միում քննութիւն լիցի յափշտակելոց գանձուց ազգին, կալուածոց և ընչից կղերոյ. և ատիպեացին համարս տալ, որպէս և բան ընթանայր: Եւ զօրականք հեռացեալք 'ի մայրաքաղաքէն և կարգեալք 'ի պահպանութիւն անշուք վայրաց, ողբային զկայսերական արծուին, և ընդ նշանաւ շուշանի 'ի ծածուկ տանէին զնոյն. մանաւանդ տեսեալ փոխանակ զօրավարաց իւրեանց քաջաց՝ զազնուականս ոմանս, որոց պարծանք՝ ծնունդ և էթ բաղդին էր, կամ օտար Թագաւորաց ծառայութիւնն, առաւել իսկ զայրացեալ՝ զինքնակալն իւրեանց զՆապոլէոն յիշէին. ևս առաւել յուզէր գրգռէր ամբոխս մարդկանն որոց շահաւէտ էր խռովութիւն: Ի Փարիզ գշխոյն Որդենախա կին Լուդովիկոսի Պոնապարթեայ գլուխ կայր ապատամբութեանն՝ խրախուսիչ 'ի կողմն ինքնակալին. և անգէն պաշտօնեայք նորա ընթացեալ ընդ գաւառս, չարախօս լինէին զկորիրդոց Թագաւորին, երկեցուցանէին զմշակս՝ թէ ընդ հուպ հասասատեացին տասանորդք,

զյափշտակիչս ազգային ընչից՝ թէ քննութիւն լեցի ընդ հուպ, և զլրկեացին յամենայնէ, և զժողովուրդս քաղաքաց՝ թէ դարձցի ժառանգական իշխանութիւն: Ունէին դաւաճանքն իւրեանց կուսակիցս և 'ի պաշտօնէից արքայի զոմանս, և անարգել բանագնաց լինէին ընդ Նափոլէոնի յԷլպա. և նշան ժողովելոյ 'ի միասին և գալստեան Նափոլէոնի եդին յիւրեանս զմանուշակ՝ գուշակ դարձի գարնան: Էին և ոմանք որ 'ի հասարակապետութիւն թևակոխէին, առաջնորդս ունելով իւրեանց զՓուշէ, զԿրէկուար, զՊառա և զՔարնոյ. էին դարձեալ և սիրողք պայմանաւոր թագաւորութեան, և սոցա առաջնորդք Լաֆայէթ, Պէնժամէն, Լանժուինէ և այլք:

ԳԼՈՒԽ Գ.

Դարձ Նափոլէոնի 'ի կղզոյն Էլպայ 'ի Փարիզ:

ՋԱՑՍ ամենայն շփոթս և զերկպառակութիւնս ժողովրդեան լուեալ Նափոլէոնի 'ի ձեռն գործակցաց իւրոց յԷլպա, ուրախ լինէր: Իմացեալ Պառայ և Փուշէի զգաղտնիսն և երկուցեալ 'ի դերև ելանելոյ խորհրդոց իւրեանց որ 'ի կանգնումն հասարակապետական վարչութեան, 'ի վերայ հանին արքունեաց զդաւաճանութիւնն: Կոմսն Պլաքա չհաւատացեալ բանին՝ հանդարտեցոյց զթագաւորն. իսկ Փուշէ ցասուցեալ ասէր. «Եթէ կալցի արքայ զայրս

զայս 'ի ծառայութիւն իւր, ոչ զմի ևեթ այլ և զտասն կորուսցէ թագաւորութիւնս զմիմեանց կնի ,, : Զայս օրինակ երթայր և 'ի վատթարն դիմէր նորոգ վարչութիւն թագաւորութեան Գաղղիոյ. չկայր 'ի նմա ոչ միաբանութիւն, ոչ հանճար և ոչ զօրութիւն. Թալէյրան տեսուչ արտաքին իրաց պետութեան, չէր հաղորդ 'ի խորհուրդս, քանզի 'ի Վենետա էր նա յայնժամ 'ի ժողովի պետութեանց Եւրոպայ, զոր գումարեաց Աղեքսանդր առ 'ի բաժանել յիւրեանս զաշխարհակալութիւնս Նափոլէոնի :

Բրուսացոյ անկանէր բաժին՝ գաւառք կայսրընտրին Սաքսոնիոյ, Շուեդացոյ՝ Պոմերանիա և քաղաքքընդ մէջ Հռենոսի և Մէօզ գետոց. Ռուսաց բաժին լինէր մեծ դքսութիւնն Վարսաւիոյ և թագաւորութիւն Լեհաց՝ առանձին սահմանաւոր վարչութեամբ վարել զայն՝ իսկ Աւստրիա էառ զԼոմպարտիա և զքաղաքս Վենետկեան հասարակապետութեան. Տոսկանա տուաւ Փերդինանտոսի մեծի դքսին, Գենուա թագաւորին Սարդենիոյ. իսկ Բառմա և Բիաչենցա կայսրուհւոյն Մարիայ Լուիզայ: Ի թագաւորութիւն Շուեդացոյ յաւելաւ և Նորվեկիա հատեալ 'ի Դանեաց, և Անգղիացիք պահեցին զՀելիկոլանտ՝ զոր 'ի Դանեացն առին. Նոյնպէս և զգաւառս աշխարհակալութեանցն 'ի Հնդիկս, զԳլուին Բարեյուսոյ, զկղզին Գաղղիոյ, զՄելիտինէ և զՅոնիական կղզիս: Կարգեցաւ և թագաւորութիւն Սաորին գաւառաց միու-

թեամբ Հոլանդայ և Բելգիոյ։ Այս կարգք
եդան Եւրոպայ 'ի սկիզբն 1815 ամին։

Եւ մինչ թուէր այնու հաստատեալ եր-
կարատև խաղաղութեան, ահա յանկարծ
նոր և զարմանալի արկածք խռովեցին զաշ-
խարհ։ Քանզի խոյս եառ Նափոլէոն 'ի կըղ-
զեոյն Էլպայ վեց հարիւր քաջարի թիկնա-
պահ զօրականօք և խաչացեալք ոմանքք և
լեհացեալք, էանց ընդ Միջերկրական ծով,
եկ 'ի ծովեզերս Պրովենկիոյ, և յառաջ խա-
ղայր շտապաւ՝ գողացեալ 'ի ճանապարհին
զսիրաս զօրականին ազգաւ պերճախօսու-
թեամբն, և յիշատակաւ քաջութեանց իւ-
րոց. նոյնպէս և զմիտս ժողովրդեան յան-
կարծ ափշեցուցեալ ահորժելի խոստմամբք։
Զկիրճս Վիզելայ պահէր գունդ էօթն
հարիւր արանց ընդդէմ Նափոլէոնի, և
զօրագլուխ նոցա հաւատարիմ իւրոյ թա-
գաւորի ոչ կամեցաւ լսել և տեղի տալ թըշ-
նամւոյն. Նափոլէոն միայնակ հետիոտս
մերձեցեալ 'ի պահակապանն, 'ի վեր էառ
զոյառատակ իւր և ասէ. "Զօրականք իմ,
ես եմ, ծանեարուք, եթէ ելցէ ոք որ համար-
ձակիցի սպանանել զինքնակալ իւր, ահաւա-
սիկ ես,,. և ամենեքեան զարմացմամբ աղա-
ղակեցին. "Կեցցէ ինքնակալ մեր,,. անդէն 'ի
վերայ հասեալ և այլոց գնդից խառնեցան
ընդ նոսա։ Անձնատուր եղեն Կրընոպլ և
Լուգդոն. ուստի հալեալ Ճողոպրէր զանձն
կոմն Արդուայ։ Իսկ Նափոլէոն աճապա-
րեալ ծանուցանէր 'ի ձեռն էղբօր իւրոյ
Յովսեփայ՝ կայսերացն Ռուսիոյ և Ա-

ուքսարիոյ, թէ հաւատարմութեամբ այնու-
հետև պահէ նա զդաշինս խաղաղութեան
Փարիզու. և զի 'ի դիպաց բռնութենէ
ձգեալ 'ի թիւր Ճանապարհ, փորձիւք ու-
սեալ յայնժամ հրաժարէր 'ի սիրոյ փառաց.
«Քանզի այս, ասէր, աղիտաբեր եղև բազ-
մոք և ինձ և Գաղղիոյ... Սխալեցի կար-
ծելով թէ հասեալ ի՞ցէ ժամանակ ամբառ-
նալոյ զԳաղղիա 'ի պետութիւն հզօր 'ի վե-
րայ երկրի»:

Առաքեցաւ 'ի թագաւորէն ընդդէմ Նա-
փոլէոնի մարաջախտն Նէյ, որ մեծամեծ
խոստմամբ խաղաց ընդդէմ նորա, իբրու-
այն թէ կալեալ զնա երկաթի վանդակաւ
ածցէ 'ի Փարիզ. սակայն մատնիչ լեալ թա-
գաւորին յաւելաւ 'ի Նափոլէոն. նոյնպէս
և ամենայն գունդք զօրացն: Լուդովիկոս
մատնեալ յոմանց և լքեալ յայլոց, բռնա-
դատեցաւ թողուլ զՓարիզ և անցանել 'ի
Փլանդրիա՝ 'ի Կանդ քաղաք, եկին առ նա
Թալէյրան և հաւատարիմ ծառայք նորա:

Ի վաղիւ անդր 'ի 20 մայիսի մերձեցաւ Նա-
փոլէոն 'ի դրուն մայրաքաղաքին, վայրք հա-
սարակաց և փողոցք անմարդի ամայացեալ,
և բազումք 'ի կրպակաց փակեալ. 'ի խոր
լռութեանդ ըսելի լինէր վայրագ գոչիւն
ամբոխի ապստամբաց՝ զարդարելոց մանու-
շակ ծաղկամբ, որոց միաք յիմարեալք արբե-
ցութեամբ անաստուածութեամբ՝ խառն ընդ աղա-
ղակին կեցցէ ինքնակալն, յաւելուին և զսոս-
կալին զայն գոչիւն, դիւաց ևեթ պատկանա-
ւոր. «կեցցեն դժոխք, անկցին երկինք»:

Այսպիսիք ոմանք մնացին կողմնակիցք Նա-
փոլէոնի, և այս օրինակ նշանք խնդութեան
նոցա յընդունելն վնա: Յայսր ամենայնի
վերայ ոչ համարձակեցաւ Նափոլէոն 'ի
ցերեկի մտանել 'ի քաղաքն, այլ մնաց գի-
շերոյ. և խաւարաւ եմուտ գաղտաբար 'ի
Թիւյլերի, և յետ ժամուց հրատարակեցաւ
ժողովրդեան դալուստ ինքնակալին:

Այլ անհնար էր հաստատութիւն առ-
նուլ խորհրդոց Նափոլէոնի, և բազմավանգ
էին պայմանք նորա: Գաղղիա խոնջ 'ի պա-
տերազմաց, պառակտեալ 'ի բազում ժո-
ղովս և 'ի կարծիս, և բազմաց գոհ գոլով
ընդ տուչութիւն նորոյ սահմանադրու-
թեանն, երկնչէին 'ի միապետական իշխա-
նութենէ ինքնակալին. շուինդն քաղաքա-
կան մարտի լսելի լինէր 'ի հարաւակողման
գաւառս Գաղղիոյ. խլրտէր ահաւորն Վան-
դէա ընդդէմ բռնակալին և զինէր զնոսա
քաջն Լուդովիկոս Լարոշժաքլէն, ժառանգ
մեծի անուան և առաքինութեանց վեհին
այնորիկ դիւցազին՝ որ 'ի պաշտպանութիւն
կրօնից և թագաւորութեան նահատակե-
ցաւ փառօք. և ընդ նմա Սափինոյ և Տ'ո-
թիշան: Ի Փարիզ և 'ի Լուգդոն խառնի-
ճաղանճն 'ի նախկին ապստամբութիւն
թևակոխէր, և Եւրոպա ողջոյն դեռ ևս
զինեալ և կազմ յոտին կալով, շարժէր հա-
րիւր հազար զօրօք 'ի վերայ Գաղղիոյ:

ԳԼՈՒԽ Դ.

Վայրապար Ջանֆ Նափոլէոնի առ'ի փաղցրութեամբ որսալ զսիրտ ծողովրդեանն։

ԴԱՐՁ Նափոլէոնի՝ զօրաց էր հրաւէր և ոչ ազգին. և յայսպիսի հանգամանս ժամանակին խիթալի էր բռնակալութեան հանդիպել. այլ գիտացեալ Նափոլէոնի թէ ոչ վճարէ բռնութիւն ազատասէր ազգի, Ջանաց քաղցրութիւն յինքն գողանալ զսիրտ հզօրագունից հասարակապետականաց։ Առաջին հրովարտակաւն եւրոյծ զժողովս կարգեալս 'ի Լուգովիկոսէ. եբարձ զնախնի ազնուականութիւն, գրաւեաց կալաւ զինչս Պուրպոնեանց. 'ի մահ դատապարտեաց զարս մետասան, յորս էին և Թալէյռան և Մարմոն, 'ի բարձ աւագութեան եհան զառաջնորդս հասարակապետականաց զՔարնոյ և զՖուշէ. նոյնպէս և զկողմնակիցս սահմանաւոր թագաւորութեան պատուեաց իշխանութեամբ և 'ի ձեռն գլխաւորի նոցա Բենիամենի Կոստանդայ յաւել նոր օրէնս 'ի սահմանադրութիւնս կայսերութեան, ամփոփեալ զմիապետական իշխանութիւն նորանոր ազատութեամբք ազգին. և ինքն հրապարակական հանդիսիւ երդուաւ 'ի պահպանութիւն նոցունց։ Քանզի ժողովեալ զքաղաքացիս զամենայն, խօսեցաւ ընդ նոսա այսպէս.

“Ինքնակալ, հիւպատոս, զօրական, զամենայնն 'ի քաղաքացւոց իմոց ունիմ. յօգուտ եւեթ Գաղղիոյ են նպատակք խորհրդոցս՝ 'ի յաջողս և 'ի ձախողս, յասպարիզի պատերազմաց և յատեան խորհրդոց։ Իբրև զարքայն Ամերիկացւոց զոհեցի զանձն իմ վասն ժողովրդեանս՝ յուսով խոստման պահելոյ զսահմանս, զպատիւ և զիրաւունս Գաղղիոյ. այլ ցասումն ընդ մոռացօնս և ընդ կորուստ սրբազան իրաւանց ազգիս՝ զոր յաղթութեամբք քան և հինգ ամաց ստացաւ, բողոք վրիժու փառացն արհամարհելոց, և իրաւ ժողովրդեանս դարձուցին զիս յաթոռս յայս, որ սիրելի է ինձ 'ի հաստատութիւն ազատութեան, փառաց և իրաւանց Գաղղիացւոց։ Խորհեցայ ամրապնդել զազատութիւն մեր նոր սահմանադրութեամբ, յարմարելով 'ի կամս և յօգուտ ժողովրդեան. քանզի գիտացի զի թագաւորք թշնամիք ազատութեան ժողովրդոց, հղծիչք կարծեաց նոցա և օգտից, գումարին 'ի վերայ մեր, Ճեղքել հատանել զգաւառս աշխարհիս։ Հարկ 'ի վերայ կայ մեզ ձեռն 'ի գործ առնել 'ի մարտ, այլ մինչ չև միսեալ 'ի նոյն՝ փութացայ օրէնս տալ ժողովրդեան, և ընկալաւ զայն ժողովուրդն։ Գաղղիացիք, յորժամ մերժեցուք զանիրաւ յարձակմունս թշնամեաց, և ծանիցէ Եւրոպա զիրաւունս Գաղղիոյ, յայնժամ ապա և օրէնքս մեր հաստատութիւն առցեն։ Դարձարուք 'ի գաւառս ձեր, և ձայն տուք ժողովրդեան եթէ գոյժ

մեծ 'ի վերայ կայ, միաբանութեան պէտք են, ժրութեան և հաստատուն պնդութեան. և յաղթող ելցուք 'ի կռուոյ զոր ժողովուրդ մի մեծ կռուի ընդ հարստահարողաց իւրոց: Ասացէք նոցա, զի թագաւորք զորս ամբարձի 'ի գահոյս, կամ հաստատեցի 'ի նոյն, որք 'ի յաջողութեանս ժամէին զիմ հովանաւորութիւն և զերաւունս օրինաց Գաղղիոյ, այժմ գումարեալ կան 'ի վերայ իմ: Այլ եթէ ինձ միայնոյ և ոչ և աշխարհին իմոյ ոխերիմն զնոսա տեսանէի, մատնէի զանձն իմ յօժարութեամբ յատելութիւն նոցին: Ասացէք դարձեալ ժողովրդեանդ թէ ցորչափ Գաղղիացիք կապեալք են սիրով ընդ իս, ոչ ինչ զօրեսցէ կատաղութիւն թշնամեաց: Ո՛ Գաղղիացիք, կամք իմ՝ կամք են ժողովրդեան, իրաւունք իմ՝ իրաւունք նոցա, պատիւ և փառք և երջանկութիւն իմ, պատիւ և փառք և երջանկութիւն են Գաղղիոյ,,:

Ի վախճան բանիցն հնչեաց ժողովն 'ի ծափահար գովութենէ հանդիսականաց. էջ Նափոլէոն 'ի գահոյիցն, և մերձեցաւ 'ի սեղանն հայրենեաց՝ տալ զերդումն հաւատարմութեան 'ի պահպանութիւն նորոյ սահմանադրութեանն 'ի վերայ սրբոյ աւետարանի: Երդուան անդէն և ժողովուրդն և զօրականք, և հնչեաց դաշտն առ հասարակ 'ի գոչիւն ցնծութեան. „Կեցցէ ինքնակալն,,:

Յետ այսորիկ փոխեաց և զամենայն աւագանի պետութեանն զորոց կասկածէրն

զհաւատարմութիւնէն և 'ի տեղի նոցա կար-
գեաց զկուսակիցս իւր և զհակառակորդս
Պուրպոնեանց. ապա զհետ եղև պատրաս-
տութեաց մարտի ընդդէմ Եւրոպայ. քանզի
հանդարտեցաւ Գաղղիա ողջոյն ընդ ձեռամբ
նորա, էր որ խաստմամբ և էր որ սպառնա-
լեօք, և էր զի բռնութեամբ զինուց. էր-
կուցեալ թերևս 'ի քաղաքական պատերազ-
մաց՝ յորս մատնութիւնք և հատուածք առ
թշնամիս յաճախէին, մնային յուսով գալըս-
տեան օտարաց. քանզի և դուքսն Անկու-
լէմայ յետ յաջող պատերազմաց ինչ՝ մատ-
նութեամբ զօրաց իւրոց անկաւ 'ի ձեռս
թշնամեաց, որք մերկացուցեալ զնա արկին
'ի բանտ. յորմէ հանեալ յետ երից աւուրց,
հրամանաւ Նափոլէոնի եթող զԳաղղիա
և հեռացաւ: Եւ Վանտէացիք խոստմամբ
խաղաղութեան 'ի ձեռն Լամարքայ զօրա-
վարի հաւանեալ հանդարտեցան առ ժամն
(1815):

ԳԼՈՒԽ Ե.

Դիմել համագումար պէպռուէանցն ընդդէմ
Նափոլէոնի, պարպուրիան նորա, և
ապստամբ անդարձ 'ի սուրբն
Հելինէ:

ԳՐԵԱԼ էր Նափոլէոնի թուղթ 'ի Վենն-
ցուցանել պետութեանց Եւրոպայ՝ թէ
միայն զնչեալ 'ի կամս հաւանութեան ժո-
ղովրդեան, յօգուտ նոցա և 'ի բարօրութիւն՝

դարձաւ 'ի Գաղղիա, և զի հեռի է ամենևին 'ի խորհրդոց պատերազմի: Եւ իբրև ինքն ընդ վայր յուսացուցանէր զԳաղղիա ակն-կալութեամբ խաղաղութեան, պետութիւնք Եւրոպայ սպառնալից յառաջ խա-ղային. Անգղիացիք առաջնորդութեամբ քաջին Վէլլինկդընի, և Բրուսք ընդ զօրա-վարութեամբ Պլիւխէրայ մտանէին 'ի Բելգիա. խլրտէին և Գերմանացիք և Ռուսք:

Զօրաժողով եղև Նափոլէոն զօրաց բազ-մաց իբրև երեքհարիւր հազարաց, թէպէտ հարստահարութեամբ, թէպէտ բռնու-թեամբ. և հարիւր տասն հազարաւ խաղաց 'ի Բելգիա, աճապարել հարկանել ուրոյն առանձին զՎէլլինկդըն և զՊլիւխէր, և դարձառնել 'ի վերայ Աւստրիացւոց և Ռու-սաց: Խրախուսեալ յորդորէր զզօրականն մարտնչել յուսահատ 'ի յաղթութիւն կամ 'ի մահ. և մինչդեռ խաղացոյց զնոսա, յան-հոգս կային Բրուսք, և մինչ չև խլրտեալ նո-ցա աճապարել միանալ ընդ Անգղիացիս, հասեալ 'ի վերայ՝ բաղխեցաւ մարտիւ 'ի դաշտս Ֆլէօրիւսայ. եհար զնոսա և կոտո-րեաց արս քսան և երիս հազար: Եւ խա-ղաց անտի շտապ տագնապաւ յաղթական զօրքն 'ի վերայ Անգղիացւոց որք ամրացեալ մնային նմա 'ի Վաթերլու: Խառնեցաւ մար-տն 'ի հինգերորդ ժամու առաւօտուն. և անհնարին քաջութեամբ մարտուցեալ Գաղղիացւոց՝ 'ի նեղ զթշնամիս արկանէին. և իբրև 'ի վերայ կայր յաղթութիւնն, 'ի հեռուստ երևեցաւ բանակն Բրուսաց.

քանզի Պլիւխէր պարտեալ զզօրավարն Կրուշի՝ զոր Նափոլէոնի թողեալ էր ընդ դէմ նորա՝ աճապարեաց յօգնութիւն Անգղիացւոց։ Անկաւ 'ի կողմանէ յաջ թեւ բանակին Գաղղիացւոց, և շփոթեալ տագնապեցոյց զնոսա. զօրացան և Անգղիացիք, և սկսաւ կոտորածն ահաւոր 'ի Գաղղիացիս։ Մեծապէս արիացաւ զօրավարն Նէյ, ընդ որով հինգ երիվարք անկան, և հեծիոսս սուր 'ի ձեռին ընդ քաջաց զօրավարացն Ֆրիանայ և Քամպրոնի խրախոյս իւրոցն տայր։ Նոյնպէս և Նափոլէոն զէն 'ի ձեռին կամէր անդէն արուեստամբ անկանել. այլ բռնադատեալ յիւրոցն տեղի եա. և բազմութիւնք արի նահատակաց տապաստ անկան 'ի դաշտին, ուր ծածկեցան փառք յինկից յաղթանակաց Գաղղիոյ։

Ի մեծի կոտորածի անդ զօրաց պաշարեալ և գունդ մի կայսերական 'ի թշնամեաց ամենուստ, իբրև հրաւիրեցան անձնատուր լինել, նոքա յուսահատ խորհրդով գոչեցին միաբերան. „Քաւ լիցի կայսերական գնդիս անձնատուր 'ի թշնամին լինել, լաւ է մեռանել քան զայս վատութիւն„։ Եւ անդէն անկեալ 'ի վերայ միմեանց սուր 'ի կող ընկերին եդեալ, 'ի միմեանց կոտորէին՝ 'ի զարմացումն և յահարկութիւն թշնամեաց։ Իսկ մնացեալոցն զօրաց խառն 'ի խուռն տագնապաւ անկեալ 'ի Գաղղիա, որք բռնի ածեալք էին 'ի մարտ՝ 'ի տունս իւրեանց դարձան։

Նափոլէոն իբրև փախստեայ դարձեալ 'ի

փարիզ ծածկեաց զերեսս իւր, ապա կրկին երևեցաւ 'ի Ժողովի ծերակուտին ծանուցանել զվտանգ հայրենեաց. խորհուրդ եառ Լաֆայէթ 'ի կրկին ազատութիւն ռամկապետութեան ածել զտէրութիւնն 'ի փլուկութիւն, այլ իբրև այլք կային տարտամ, դարձեալ հրաժարեցաւ Նափոլէոն 'ի կայսերութենէն՝ թողեալ զայն որդւոյ իւրում, և ինքն խորհէր անցանել յԱմերիկա. այլ անդէն Անգղիացիք և Բրուսք մխեցան 'ի Գաղղիա, և եկին երևեցան յանդիման մայրաքաղաքին: Տեսեալ Նափոլէոնի զյանդուգն արշաւանս թշնամեացն, վառեցաւ ոգի իւր յարութիւն պատերազմական. ինդրեաց յորոց յայնժամ 'ի ձեռս էր վարչութիւն Գաղղիոյ՝ զի թոյլ տացեն իբրև զլոկ զօրավար 'ի գլուխ կալ զօրացն և բնաջինջ սպառել անդէն զթշնամիս. այլ նոքա մերժեցին զնդիր նորա. և զօրքն բանագնաց լեալ ընդ թշնամիս, թողին զքաղաքն և հեռացան. և ահա եկն եմուտ վերստին Լուդովիկոս 'ի Փարիզ:

Նափոլէոնի տեսեալ թէ անմարթ է Հողոպրել զանձն 'ի ձեռաց թշնամեաց իւրոց, ինքնին անձնատուր եղև յԱնգղիացիս. և գնացեալ 'ի նաւ նոցա, գրեաց անտի թուղթ առ արքայն Անգղիոյ, իբրև նոր ոմն Թեմիստոկղէս գտանել ասպնջականութիւն առ նմա: Եւ 'ի պատասխանի թղթոյն ընկալաւ զհրաման աքսորանաց իւրոց 'ի սուրբն Հեղինէ 'ի կղզին յԱտլանդեան Ովկիանու, հեռի 'ի մարդկան բնա-

կութենէ՝ 'ի խաղաղութիւն հանդարտութեան աշխարհի։ Զայրացաւ նա ընդ լուր աքսորանացն և գոչէր. "Անուն միայն կրեալ զոյս ահաբեկէ զիս. տարագիր լինել 'ի կղզի ուրեք հեռաւոր, օտար 'ի մարդկանէ և 'ի սիրելեաց. չարագոյն է ինձ այս քան զվանդակ Լէնկթիմուրայ. լաւ էր ինձ առնուլ ստէն զվէրս մահուս"։ Բողոք ե բարձ զի ընդդէմ իրաւանց ասպնջականութեան գործեն Անգղիացիք, զի իբրև 'ի բարեկամս ասէր զանձն ապաւինեալ 'ի նոսա։ Այլ ելուաւ ոք նմին, և չարար նմա պատասխանի, խորհեցան իւրքն զինեալ յանկարծ ընդ սուր հանել զԱնգղիացիս 'ի նաւին, և ինքեանք անցանել յԱմերիկա. և 'ի ձախողել իրացն հուր տալ նաւին, և ընդ նոսին կորնչել. զառաջինն հաւանեցաւ ընդ այս Նափոլէոն, ապա երկուցեալ թէ գուցէ կորուսցէ և զիւր ընկերակիցս, և խստացուսցէ ևս յիւր վերայ զԱնգղիացիս արգել զգործն։ Եւ 'ի հեռանալն 'ի Գաղղիոյ ետ Նափոլէոն զվերջին ողջոյն հրաժեշտի հայրենեացն. "Ողջոյն, ողջոյն հրաժեշտի երկիրդ քաջաց. ողջոյն սիրելիդ Գաղղիա. եթէ չէին 'ի քեզ և մատնիչք ոմանք, տակաւին ազգ մեծ էիր և տէր աշխարհիս"։

ԳԼՈՒԽ Զ.

Տարաշ կենաց Նափոլէոնի յաւուրսն ի՝ :

Եւ քանզի անպատեհ թուի պատմել զառնն երևելւոյ՝ որ կերպարանափոխ արար գոգցեաս զաշխարհ, զծնունդ, զզարգացումն և զգործս կենաց, և լռել զմահուանէն, թէպէտ և արտաքոյ ժամանակագրութեանս իցեն վէպքս, արժան համարիմք դադար տալ փոքր մի կարգի գաղղիական պատմութեանս, և զհետ երթալ Նափոլէոնի :

Ածաւ Նափոլէոն 'ի կղզին 'ի սուրբն Հելինէ 'ի սահմանեալն նմա վայր աքսորանաց. և երիւք փարսախօք հեռի 'ի քաղաքէն՝ սահմանեցաւ նմա բնակութիւն 'ի տան Լոնկվուտի անգղիացւոյ զօրավարի, որ էր տեղակալ իշխան տեղւոյն : Յայնժամ բողոք կալաւ Նափոլէոն առ պետութիւն Անգղիոյ, քանզի չէր նա գերեալ 'ի մարտի, և մարթ էր նմա ապաւինիլ 'ի կայսրն Փրանկիսկոս յաներ իւր և կամ յԱղեքսանդր, և զի վստահութեամբն 'ի հաւատարմութիւն Անգղիացւոց խաբեցաւ. նա թէ և կալանաւոր ևս 'ի պատերազմի համարէր, օրէնք էին ազգաց՝ ընդ վճարել մարտին՝ վախճան առնել և գերութեանն. և զի լաւագոյն էր նմա մահ, քան զդառն զայն աքսոր յամայի ժայռ մի ահաւոր : Յետ հնգետասան աւուրց հասանելոյ 'ի կղզին, անկաւ

'ի հիւանդութիւն յանսովորութենէ օգոց տեղւոյն, և պէտք եղեն նմա զբօսանաց հեծելութեան. այլ զի չեղև նմա հրաման յանգղիացւոյ իշխանէն անպահասան շըրջել, բարկացեալ յետս առաքեաց զերիվարն, և սրտառուչ բողոքէր առ ընկերսն զխստութենէ Անգղիացւոց, և ասէր. "Ամբարձէք զարդարացի տրտունջ ձեր և զբողոք, լուիցէ Եւրոպա և ցասնուցու: Դառնութիւն սրտի յաղթէ յիս անձնասիրութեան, և հակառակ բնութեանս իմոյ է տրտունջս: Հրամայեալ սիրելի է ինձ ապաթէ ոչ՝ լռել,,:

Յետ երկուց ամսոց հասանելոյ իւրոյ 'ի կղզին Եմուտ Նափոլէոն 'ի բնակութիւնն սահմանեալ նմա: Եւ էր բնակարանն կառուցեալ 'ի գլուխ բլրոյ միոյ 'ի սարահարթի, որ բարձր էր իբր երկու հազար ոտնաչափ յերեսաց ծովուն, անդադար բախեալ 'ի հողմոց և 'ի սաստիկ անձրևաց՝ որ ոչեն առաւել քան զկէս տարւոյն, ծածկեալ միշտ 'ի թանձր ամպոց: Ժայռք սեպացեալք 'ի խոր անդնդոց կանգնեն լերինս ցամաքս և անջրգիս. փոփոխական են յոյժ օդք տեղւոյն, և տիրեն անդ թանչք և լերդացաւ դառնակսկիծ և երկարատև, ախտք մահացուք անդարմանելիք. որպէս զի և 'ի բնիկս տեղւոյն չգտանել զոք երկարակեաց, ուր գրեթէ 'ի քառասուն և հինգ ևեթ ամս չափեալ են կեանք մարդոյ: Անդ սահմանեալ էր աշխարհակալին Եւրոպայ բնակարան, և շիրիմ ոսկերաց նորա: Եւ ինքն իսկ

ասէր. “Մահաբեր է երկիրս, ուր թարշամին ծաղկունք՝ չկարէ կեալ մարդ. քանզի դիտեն զայս աշակերտք Փիլիպայ, ոսկերիմ Անգղեսացիք, որք դահիճ ինձ զոգս երկրիս խորհեցան կացուցանել. այս անագորոյն խորհուրդ չանկաւ 'ի միտս վայրենագունիցն իսկ վոսիահիւպատից մերոց. զի անմարթ իսկ էր հեռի յափանց թամիզայ երկնել ումեք խորհուրդ այսպիսի,,:

Ի տան Լոնկվուտայ էին բնակարանք քսան փոքրիկունք և առ հասարակ փայտաշէնք. զամիսս ինն 'ի տարւոջ բորբոսէին 'ի խոնաւոյ որմունք, և զամիսս երեք 'ի սաստիկ տօթոյ արեգական՝ որ ուղղակի զտեղեաւն ճառագայթէր, անտանելի լինէր ժահ ձիւթոյն որով օծեալ էր տունն: Աղքատին էր յոյժ սենեակ Նափոլէոնի, և զարդք 'ի նմա էին կենդանագիր որդւոյն և կանանցն Յոսեփինայ և Մարիայ Լուիզայ. մետասան ծառայք էին նորա, և քանզի բժիշկն Օ'Մէարա առ նմա: Պարապէր նա զօրն 'ի բուն 'ի յօրինել զայիշատակարանս իւր օգնութեամբ ընկերաց իւրոց:

Ի 1816 փոխեցաւ Իշխան կղզւոյն ծովակալն Բոքպերն՝ և յաջորդեաց զնա Հուասսն Լօվ. յառաջնուն նուագի գալոյ նորա 'ի Լոնկվուտ յայցելութիւն Նափոլէոնի, ասաց զնմանէ Նափոլէոն. “Այր գժոխագէմ, արժանի կախաղանի երեսք նորա, և բարք համեմատ կերպարանացն,,: Անգլեթացան յոյժ Անգղեսացիք 'ի փակել զՆափոլէոն 'ի մահաբեր կղզւոջն. և մանաւանդ

'ի յանձն առնել զազնուական կալանաւորն 'ի ձեռս Հուասին Լօվայ։ Թէպէտ Քոքպերն խիստ էր և ցասկոտ և վրէժխնդիր իշխանութեան իւրոյ, այլ չէր հեռի 'ի վեհ ազնուականութենէ բարուց. իսկ սա այր անգութ և նենգաւոր և ոխերիմ Գաղղիացւոց, խստացաւ յոյժ ընդ Նափոլէոնի. յաւել զզգուշութիւն պահպանութեան 'ի վերայ նորա, և արգել նմա զամենայն հաղորդութիւն ընդ բնակիչս քաղաքին։ Խափանեաց զնամականի՝ չառնուլ նմա լուր զմօրէն, զամուսնոյն, զորդւոյ և զեղբարցն. և զօրագիրս իսկ Անգղիոյ և Գաղղիոյ և զգրեանս ինչ՝ զորս ցանկայր ընթեռնուլ, կարձեաց 'ի նմանէ, և զրկեաց զնա յամենայն կցորդութենէ ընդ Գաղղիոյ և ընդ բոլորումն իսկ աշխարհի։ Եւ առ 'ի սփոփումն ինն այնքանոյ խստութեանն դնէին երբէք երբէք առաջի նորա Անգղիացիք հատուածս յօրագրաց կամ տետրակս լի նախատանօք զնմանէ. մերթ ևս ընդ հենգն մատուցանէին նմա իբրև յանգէտս յընթերցումն զգոյժ մահու սիրելեաց։

Լուաւ Նափոլէոն թէ գայր ոք յԵւրոպայ՝ որոյ խօսակից լեալ էր ընդ Մարիայ Լուիզայ և գգուեալ զորդին իւր, և շարժեալ 'ի գութ՝ խնդրեաց տեսանել զայրն. այլ անողորմն Հուասն՝ մերժեաց զնդիր նորա, և ևս սասակացոյց զնեղութիւնն, պատճառելով թէ զպարսն կատարէր զհրամայեալս 'ի պետութենէն։ Ընդ որ ցասուցեալ Նափոլէոնի ասաց. «Այո՛,

հանգոյն իմն և դահիճն զՀրամայեալսն ինքեան կատարէ։ Ոչ կարծեմ յայդչափ վատութիւն հատանել զպետութիւն Անգղիոյ և տալ քեզ պատուէրս այդպիսիս։ Է քեզ իշխանութիւն 'ի վերայ մարմնոյ իմոյ, այլ 'ի վերայ հոգւոյս ոչ բնաւ. այս հոգի այնպէս վեհ է և արի, որպէս յորժամ հրամայէրն Եւրոպայ. դահիճդ Սիկիլիացի, և ոչ Անգղիացի, մի՛ և ես երևեսցիս առաջի իմ, բայց 'ի բերել զդատակնիք մահուս. և դրատցես յայնժամ զամենայն դրուն բաց առաջի քոյ ,,։ Եւ 'ի բռնադատել զօրաց Հուատսնի մտանել բռնութեամբ 'ի ներքս 'ի բնակարան նորա, սպառնացաւ Նափոլէոն անկանել ընդ զինուք և չթողուլ նոցա մուտ 'ի ներքս. և այնպէս հեռացոյց զնոսա։ Ապա 'ի բաց էառ անագորոյնն Հուատսն զչորս 'ի պահապանաց նորա. և Օ՛Մէարա բժիշկ նորա որ առելի էր յոյժ Անգղիացւոյ իշխանին վասն մտերիմ բարեկամութեանն ընդ Նափոլէոնի, հիւանդացաւ հիւանդութիւն և սոսկեցաւ երթալ յԵւրոպայ։ Նափոլէոն 'ի տալ նմա զվերջին ողջոյն հրաժարական՝ ասաց. "Երթ առ եղբայրն իմ Յովսէփ և ասա՛ նմա 'ի դիմաց իմոց, զի տացէ քեզ զթղթեանն աւանդեալ նմա յինէն զգրեալսն առ իս 'ի կայսերացն յԱղեքսանդրէ և 'ի Փրանկիսկոսէ, և 'ի Թագաւորէն Բրուսիոյ, և յայլոց իշխանաց Եւրոպայ. և հրատարակեսջիր զայնոսիկ 'ի նախատինս նոցա, աշխարհագոյժ առնելով զվատ սպասաւորութիւն գոռոզ սրիկացն՝

զոր մատուցանէին ինձ, աղերս արկեալ վասն դահոյից իւրեանց։ Յորժամ հզօր էի և իշխանութիւն էր 'ի ձեռս իմ, ժամէին զօգնականութիւն և զնիզակակցութիւն բարեկամութեան, և լիզուին զփոշի ոտից իմոց. և արդ զի յաղթեցայ, բռնանան զինև վրստահութեամբ, բաժանեալ զիս 'ի կնոջէս և յորդւոյ՝՝։

Վիրաբոյժն Սթոքոյէ յաջորդեաց Օ՝Մէարայ բժշկի. այլ իշխանն անգղիացի զնա ևս հեռացոյց, թողեալ զՆափոլէոն առանց բժշկի զամ մի։ Եւ իբրև հիւանդութիւն նորա հնացեալ՝ եղև անդարմանելի, ապա հասին Անգոմալքի բժիշկ Ճարտար Փլորենտացի և Պոնավիդա և Վէնիալի երիցունք, երեքեան իսկ հայրենակիցք նորա, առաքեալք 'ի Ֆէշ կարդինալէ։ Եւ առեալ Նափոլէոնի ուրախութեամբ զպատկերս որդւոյն, հայէր 'ի նա ընդ երկար, և ասէր արտասուօք. ՝՝Որդեակ սիրեցեալ, եթէ չբարձցէ զկեանս քո վատախորհուրդ քաղաքավարութիւն, լինցիս որդի արժանի հօր քում՝՝։ Եւ 'ի գառն անձկութենէն յիշեալ զհայրենի աշխարհ իւր՝ հառաչէր. ՝՝Ո՜ երկիր հայրենի, ո՜վ հայրենիք իմ. եթէ կղզիս այս Գաղղիա էր, քաղցրանային ինձ արդեօք ժայռքն ահագինք՝՝։

ԳԼՈՒԽ Է.

Մահ Նափոլէոնի և նկարագիր նորա։

ՅԱՄԻՆ 1819 զայրացաւ հիւանդութիւն նորա. և թէպէտ վերատին 'ի լաւ անդր թուէր փոխել, սակայն երթային և մաշէին կեանք նորա։ Ի սաստկանալ ապա ցաւոց փայծեղանն, և տոչորելոյ ընդերացն, անկաւ 'ի մահիճս մահու, և հանդարտ սրտիւ, ժպիտ 'ի դէմս, ասէր. «Ոչ ինչ դեղ դարմանոյ կարէ այսուհետև բժշկել զիս. մահ իմ՝ լիցի աւետիք փրկութեան թշնամեաց իմոց։ Ցանկալի էր ինձ տեսանել զկին իմ և զորդիս. այլ եղիցին կամք Տեառն։ Ձիք ինչ երկիւղալի 'ի մահու. այս երեք եօթնեակք են զի ընկերէ նա ինձ 'ի մահճիս, և հնարի ընկճել զիս»։ Յետ այնորիկ արարեալ զխոստովանութիւն իւր, ասաց 'ի վերջին կտակն. «Մեռանիմ ես 'ի ծոց առաքելական և հռոմէական Եկեղեցւոյ, յորում ծնայ։ Ցանկամ զի աճիւնս իմ ամփոփեսցի յափունս Սենայ 'ի մէջ ժողովրդեան Գաղղիոյ՝ զոր ոգւով ջափ սիրեցի. և եթէ ժիտեսցի այս վերջին խղճ սրտիս, գոնեա ամփոփեցայց ընդ հարս իմ 'ի մայր եկեղեցւոջ Այաչչիոյ քաղաքի. և եթէ այս իսկ անմարթ լիցի, թաղեցէք ապա զիս ընդ Հութակէյդ աղբերբ, յորմէ քաղցր և հեզիկ ջուրքն հոսեն։ Սիրեցի և սիրեմ զցանկալի

ամուսին իմ զՄարիա Լուիզա, և զայս վերջին առնա ուղղեմ իղձ, զգուշանալ որդեկիս 'ի դարանակալաց անմեղ մանկութեան նորա: Եւ որդեկին իմում պատուիրեմ, չմոռանալ զի ծիրանածին է արքայորդի Գաղղիոյ, և չլինիցի բնաւ գործի 'ի ձեռին եռապետացն՝ որ հարստահարեն զԵւրոպա: Մի՛ երբէք զէն առցէ ընդդէմ Գաղղիոյ, և մի՛ իւիք ինաստեցէ նմին. զօրինակի իմում զհետ եկեսցէ, զամենայն ինչ յօգուտ ժողովրդեան Գաղղիոյ գործել: Մեռանիմ ես՝ սպանեալ յաղնուապետաց Անգլիոյ, և յանգութ դահճէ նորա. այլ ոչ յապաղեսցէ ժողովուրդ Բրիտանիոյ խնդրել զվրէժ իմ: Ներեմ մատնչաց իմոց և թշնամեաց,, : Եւ յերկրորդում աւուր մայիսի 'ի զառանցել մտաց իւրոց կարծէր նա զանձն 'ի պատերազմունս Իտալիոյ, և գոչէր առ զօրավարս իւր. "Սթէնկէլ, Տրսէ և Մասենա, ընթացարուք, յարձակեցէք, զդէմ կալարուք զճակատուդ. առ մեզ ուղղեն նոքա,, : Եւ յետ երկուց աւուրց 'ի սաստիկ մրրկէ խըլեցաւ յարմատոյ ծառն՝ ընդ որոյ հովանեաւ սիրէր նստել Նափոլէոն, գուժելով իմն գոգցեալ զմահ առնն մեծի: Եւ 'ի հինգերորդ ժամու երեկոյին ընդոստ 'ի խոր թըմբրութենէն, ասէ. "Զօրավարդ,,. և այս եղև վերջին բարբառ յաղթողին Եւրոպայ. և յետ քսան վայրկենի ետ զչունչ իւր (1821):

Ի վաղիւ անդր ըստ հրամանի նորին իսկ Նափոլէոնի արարին քննութիւն հիւանդութեան նորա հատեալ զդիակն. և

թէպէտ յայտնի եղև զի փայծաղնացաւ էր
ախան՝ 'ի վատուրթենէ օդոց տեղւոյն, այլ
հնարեցան ծածկել զայն Անգղիացիք, համ-
բաւեալ զայն լինել քաղցկեղ ժառանգա-
կան ախտ տոհմին Պոնապարթեայ: Եւ ար-
գել հուտսքն Լօվ չտանել ըստ կոտակի նորա
զսիրտն և զստամոքս յԵւրոպա. վասն որոյ
ստիպեցան իւրքն դնել զայնոսիկ յանօթս
'ի ցքւոջ և զարդարեցին զդի նորա ամենայն
զարդու իշխանութեան նորա, արկեալ 'ի վե-
րայ նորա զկրկնոցն զոր կրէր 'ի պատերազ-
մին Մարենկոյ. և կաշանաւորն թագաւո-
րաց էջ 'ի գերեզման ամենայն շքով թագա-
ւորութեան Եւրոպայ:

Այս վախճան եղև կենաց առնն մեծի զոր
յիրաւի արդեօք հարուած աստուածատաստ
կոչեցին: Որ եռանդնոտ բնաւորութեամբ,
յամառ, և անողոք բարուք յառեալ 'ի խոր-
հուրդս մեծամեծս և բարձունս, անսահման
փառասիրութեամբ և յանդգնութեամբ
զայնքան ամս տառապեցուցանէր զաշխարհս
յիւր օգուտ: Քաջ գիտաց ձեռնտու իւր
առեալ զհանգամանս ժամանակին ամբառ-
նալ զանձն յառաջնորդութիւն ազգի խոն-
ջեալոյ յաղմկաց անիշխանութեան. և նոքօք
զօրացեալ յոյժ՝ միապետականաւն վարել
սաստիւ առաւել քան զկայսերս նախնոյն
Հռովմայ. քանզի ինքնիշխանաբար սահմա-
նէր զբաղդ թագաւորաց և ժողովրդոց ամ-
բառնայր զնոսա և խոնարհէր, և իբրև իւր
խաղալիս ըստ հաճոյս ածէր շարժէր զնոսա:
Հանդերձ զարմանալի յանդգնութեամբն

յամենայն 'ի գործս իւր, սքանչելի էր և ժրութեամբն 'ի ձեռնարկս։ Անշուշտ 'ի յաղթութիւն՝ յառաջին պատերազմի անդ նուաճեաց կալաւ զբաղդ զինուց. յոչ-ինչ համարէր զկեանս զօրականին առ միով իսկ յաղթութեամբ. և հանդերձ այսու անգթութեամբ, սիրելի ևս էր նոցա և մեծարոյ, այնպէս իմն հաստատեալ նոցա 'ի մտի թէ ընդ զօրավարութեամբ նորա անմարթ էր ընկճել նոցա։ Եթէ ընդ հմտութեան 'ի գործս մարտի կցորդէր Նափոլէոն և զնորագիտութիւն վարչութեան, ընկճեալ ունէր արդեօք այժմ ընդ ձեռամբ զողջոյն իսկ զԵւրոպա։ Օտարացոյց նա յինքենէ բռնաւորական իշխանութեամբն և զսիրտս քաջի ազգին Գաղղիացւոց, որովք յայն մեծութիւն եհաս, անդուլ պատերազմօքն և զինուորութեամբ և ծանր ծանր հարկօք հնգապատիկ առաւելեալ քան որ առ ընիկ թագաւորօք երկրին։ Զամենայն արու յութուտասանամենից 'ի վերս գրէր 'ի զինուորս անպատճառ. և ինքն 'ի մէջ կոտորածոց հանդարտ մտօք հայէր ընդ կոյտս դիականց, և ոչ երբէք սարջացաւ ընդ զուր անողորմն կորուստ այնքան մարդկութեան. տեսեալ զբազմութիւն զօրաց անկելոց առ զօրավարութեամբ իւրով և առ ինքնակալութեամբ իւրև երեք միլիոն և կէս 'ի Գաղղիացւոց, և առաւել քան զչորս միլիոն յօտարաց. այսպիսւոյ առն մարթէր պատրաստել անձին ինքնակալուն, այլ ոչ և պահել զայն, և պայազատաց իւրոց թողուլ։

ԳԼՈՒԽ Ը.

Կրկին հասպատրուիրան Ռագատորուիէան Լուդովիկոսի։

ԱՅՍ երկրորդ անգամ'ի ձեռն օտար տէրութեանց հաստատեալ Լուդովիկոսի 'ի գահուն, անոխակալ մտաւք ներեաց մոլորելոց իւրոց ապգին. և իբրև հայր որդեգորով խանդաղատեալ զժողովրդեամբն, մոռացաւ դարձեալ զոր ինչ կրեացն 'ի նոցանէ։ Եմուտ յութերորդ աւուր յուլիսի 'ի Փարիզ, ընտրեաց զԹալէյրան նախագահ նորոց պաշտօնէից տէրութեան, և զարքայասպանն Փուշէ զպաշտօնեայ Նափոլէոնի, խորհրդական իւր փոխանակ իւրոց Ջանից 'ի դարձ արքայի։ Հանաւ 'ի ժամանակին և վՃիռ աքսորանաց ինն եւ տասն զօրավարաց և սպայից, և երեսուն և ինն գլխաւորաց ապստամբութեան, յորս էր և Քարնոյ։

Այլ մինչ չև մտեալ արքայի 'ի Փարիզ, խուժեցին 'ի նեղքս զօրք թշնամեաց. ոչ իբրև զառաջինն բարեկամութեամբ, այլ իբրև զթշնամի յաղթական. մանաւանդ Բրուսացն զօրք՝ որոց տեսեալ զյաղթանակս և զյիշատակարանս յաղթութեանց Գաղղիացւոց՝ կրՃտէին զատամունսն. և զօրավար նոցա Մուքլէնկ հրաման ետ զօրացն 'ի մահ տալ զայնոսիկ՝ որք բանիւք կամ շարժմամբ և կամ հայեցուածով արհամար-

հիցեն զնոսա. այլ Տրքազ, որ մի էր յայն-
ժամ 'ի վարչաց պետութեան, համարձա-
կեալ պատուեաց զթուղթ խուժադուժ
հրամանին: Կողոպտեցին զորքն զամենայն
ձեռագործս երևելի ճարտարաց, ժողովեալս
յիտալիոյ և յամենայն քաղաքաց և դար-
ձուցին զայնոսիկ յիւրաքանչիւր տեղիս: Իբր
հարիւր բիւր զորք թշնամեաց հեղեղեալ 'ի
Գաղղիա, աւերեցին զգիւղս, գերփեցին
զքաղաքս, և կործանեցին զամուրս աշխար-
հին. և եթէ չէր նոցա ակն ածեալ Լուդո-
վիկոսի, անդէն իսկ յիւրեանս լարաբաժին
զաշխարհն առնէին:

Ճատարեաց թագաւորն 'ի կնքել զհաշ-
տութիւն խաղաղութեան, արձակելով
զբանակ զորաց Նափոլէոնի, և վճարելով
հարիւր միլիոն ֆրանքս անդէն 'ի տուգանս
մարտի. խոնարհեցաւ և 'ի ծանր ծանր պայ-
մանս նոցա՝ որ 'ի հինգ գլուխս ամփոփէին.
ա. Թողուլ զքաղաքս Ֆիլիփվիլ, Մարիէն-
պուրկ, Սարբլուփ, Լանդոյ. բ. Կործանել
զամրութիւնս Հիւնէնկայ. գ. Եօթն հարիւր
միլիոն ֆրանքս տուգանել. դ. Դարձուցա-
նել զգաւառն Մոն-Պլան 'ի թագաւորն
Սարտենիոյ. ե. Զամս երիս կամ հինգ ըստ
կամաց դաշնակցեալ պետութեանց կարգել
հարիւր յիսուն հազար օտար զորս 'ի քա-
ղաքս Գաղղիոյ նոցին Գաղղիացւոցն ռոճ-
կոք: Եւ կնքեցան դաշինքս այս 'ի 1815 'ի
նոյ. 20:

Հանդերձ ծանր ծանր աղէտիւքս յերկ-
սաց օտարաց, և ներքին քաղաքական պա-

տերազմն 'ի գաւառս Հարաւոյ բազում և մեծամեծս վնաս հասոյց աշխարհին: Յետ պատերազմին որ 'ի Վաթէրլու, ժողովուրդն զինեալ 'ի Տոլովա, 'ի Մարսիլիա և յԱւինիոն կոտորեցին զզօրս Նափոլէոնի. սպանին զզօրավարսն զՊրիւն, և զՌամել. 'ի Նիմ և յԻուզէ կոտորեցին անխնայ զՆորաղանդս, յաւար հարին այրեցին զտունս նոցա և զեկեղեցիս. և տկարացեալ զօրութիւն թագաւորին, չմարթէր ընկալեալ զխռովիչս: Անգղիա 'ի պաշտպանութիւն կանգնեցաւ Նորաղանդից, և Աւստրիա առաքեաց զօրս 'ի հարդարտել զխռովութիւնն. զօրավարն Լակարա սպանաւ 'ի խռովչաց, և դուքսն Անկուլէմայ երկիցս մտեալ 'ի քաղաքն չկարաց ինչ վնասել բռնութեամբ. մինչև խոհական գնացիւքն արգել խափանեաց զանիրաւ կոտորածն:

Յետ այսորիկ վնռով ժողովոյն Նուիրակաց սպանան առաջնորդք խռովչացն Գաղղիոյ Լապէտուայէր, քաջն Նէյ, երկու եղբարքն Ֆոշէ, զօրավարքն Մուլթոն–Տիւվերնէ, Շարթրան, Պոնէր և այլք բազումք. և ոմանք փախստեամբ ղերծան 'ի մահուանէ: Իսկ ոմանք աքսորեցան 'ի Գաղղիոյ, և այլք 'ի մայրաքաղաքէն միայն. և ինն եւտասան անձինք մերժեցան 'ի ժողովոյ ծերակուտին: Իսկ Նուիրակացն ժողով նախանձաւոր ըստ չափ իշխանութեան թագաւորին, և հակամետ 'ի միապետութիւն, բարձին զբազում աղատութիւնս տուեալս Նորատահմանադրութեաբ օրինաց, արկին ընդ խիստ

քննութեամբ զապագրութիւն, բարձին զառանձին ազատութիւն Գաղղիացւոց, և սկսան 'ի քննութիւն մատուցանել զտիրապանս և զառուիչս: Անկաւ երկիւղ մեծ 'ի վերայ ամենեցուն յերեսաց Թագաւորականաց, և սկսաւ շուինդն քաղաքական մարտի լսելի լինել ամենայն ուրեք: Մօտ 'ի Կրենոպլ երեք հարիւր գիւղականք զինեալ յարձակեցան 'ի քաղաքն, կեցցէ ինքնակալն գոչելով. զօրավարն Տոնատիէօ էլ ընդ առաջնոցա, և հարեալ ցրուեաց զնոսա: Այլ երկուցեալ Թագաւորին զի մի 'ի զօրանալ միապետական կողմանն՝ նորանոր խառնութեանց և քաղաքական պատերազմաց լցին պատճառք, խորհրդով Ռիշելիոյ, Տրքազայ և Լինէի իմաստուն խորհրդականաց իւրոց, եղոյծ զժողովն նուիրակաց, և նորս գումարեաց յերկերիւր վաթսուն արանց, հրամայեալ նոցա չխափանել և ոչ մի ինչ 'ի նորոց օրէնսդրութեանց (1817): Դադարեցաւ յայնժամ քննութիւն յանցաւորաց, և շնորհեցաւ ամենեցուն ազատութիւն. և այլ բազում բարեկարգութեամբք եգիտ աշխարհն զխաղաղութիւն:

Խորհեցաւ յայնժամ Թագաւորն հեռացուցանել զօտար զօրականն յաշխարհէ իւրմէ. և զի ըստ դաշանցն պայմանի՝ պետութիւնք իւրաքանչիւր պահանջէին զտոյժս պատերազմացն 'ի Գաղղիոյ, հարկ եղև վճարել և Անգղիոյ զոր պահանջէին. այլ զի կարի ծանր էր գումար պահանջեցն 1,300 միլիոն Ֆրանքս, միջնորդութեամբ

Աղեքսանդրի կայսեր Ռուսաց խոնարհեալ շատացաւ 370 միլիոնաւ։ Յետ այսորիկ տպա միաբան հաւանութեամբ թագաւորաց 'ի ժողովին յԱկուիսկրանա, մեկնեցան 'ի Գաղղիոյ օտար զօրականն զկնի երամեայ ծանր հարկապահանջութեանց և հարստահարութեանց իւրեանց (1818)։

Աշատեալ այնուհետև Գաղղիոյ 'ի բռնութէ օտարաց, մեծաքայլ ընթանայր 'ի վիճակ բարելաւ. մինչ զի 'ի հոլովել ամաց հնգից յետ տառապանաց աշխարհին, յորում ժամանակի առաւել քան զերեք բիւր միլիոնս կորոյս յայսանի երևէին 'ի նմա բարգաւաճանք և ճոխութիւնք։ Քանզի մեծ էր և զարմանալի ճարտարութիւն հանճարոյ 'ի ձեռակերտից յաճախութիւնս, 'ի վաճառականութեան, յերկրագործութեան և յամենայն ջանս։ Եւ այս խաղաղութիւն բարօրութեան և անսայթաք վարչութիւն պետութեան կապէր յօժարութեամբ զմեծ մասն աղգին ընդ Պուրպոնեանս. հանգարտէին և խորհուրդք խռովարար մարդկան. քանզի իմաստունքն 'ի նոսա քաջ խելամուտ եղեն ձախողութեան անմիտ ռամկավարութեան և անիշխանութեան։

ԳԼՈՒԽ Թ.

ԽԼՐՊԷԼ ԳԱՂԼԻԱՅՈՅ ՎԵՐՍՊԻՆ ԸՆԴԴԷՄ ՊԱՊԷ-ՊՈՒԼԷԱՆ :

ԱՑԼ իբրև հանդարտեալ թուէր Գաղղիա, օրինակ նոցա գրգռեալ զժողովուրդս Եւրոպայ՝ յարոյց ընդդէմ Թագաւորաց իւրեանց յամփոփել զմիապետական իշխանութիւն նորովք սահմանադրութեամբ օրինաց. և 'ի Գաղղիա իսկ կրկին սկսան գլուխ ամբառնալ նափոլէոնեանք և հասարակապետականք : Եւ իբրև եկն յաւելաւ 'ի ժողովն նուիրակաց Կրեկուար՝ սահմանաւոր թագաւորութեան կուսակից, երկեաւ յոյժ թագաւորն, և խորհէր բառնալ զիրաւունս ընտրութեան նուիրակաց 'ի ժողովրդենէ. և թագաւորականք բոլոր բարձեալ խնդրէին հաստատել վերսին զքննութիւն դաւաճան և խռովարար մարդկան : Եւ յանկարծ ուրեմն դէպք ինչ աղէտալի խստացոյց զվարչութիւն թագաւորութեանն. զուրան Պերեայ յելանել իւրում 'ի թատերէ յերեկոյին՝ հարեալ վիրաւորեցաւ 'ի մահ յանուրէն դաւաճանէ ումեքէ, որում անուն էր Լուվել. և զկնի ժամուց ինչ ներեալ սպանչին՝ մեռաւ (1820) : Իշխանս այս առաքինի ճոխացեալ ազնուական ձրիւք բնութեան, ամուսնացեալ էր ընդ թոռին արքային Նէապոլսոյ, և վերջին շառաւիղ համարէր՝ անդրանիկ ցեղին Պուրպոնեանց. քանզի հար-

ցեալ և անօրէն սպանողն, թէ յինչ պատ-
ճառաց եկն յայս եղեռն անօրէնութեան,
խոստովան եղև. «Զի ջնջեացի, ասէ, ընդ
նմա տոհմն Պուրպոնեանց»։ Այլ յետ մա-
հու դքսին Պեռեայ, ծնաւ նմա տիկինն մա-
նուկ արու, այն ինքն է Հենրիկոս դուքսն
Պորտոյի։

Մահ իշխանին ահաբեկ արար զՓարիզ և
զԳաղղիա. զայրագնեալ սրտմտեցան թա-
գաւորականք, արկին յիշխանութենէ զմոե-
ռիմն արքայի զՏրքաղ, դադարեցուցին զо-
րէնս ազատութեան իւրաքանչիւր անձին,
և հաստատեցին քննիչս։ Ընկալան վերսին
զՅիսուսեան միանձունս 'ի տէրութեան,
զորս կրկին հաստատեալ էր քահանայա-
պետն Պիոս Է։ Այլ սոցա համարձակ քա-
րոզութիւն ընդդէմ ապստամբողական ազա-
տութեան, յուզեալ գրգռեաց վերսին
զխռովարարացն ոգիս, և Քարպոնար ա-
նուանեալ ազանդաւորք սկսան տարածել
զվարդապետութիւն իւրեանց, և սպրդեցին
մտին և 'ի դպրոցս իսկ և 'ի զօրս։ Ի վեր ել
մատնութիւն դաւաճանութեան 'ի կրկին լե-
գէոնս զօրաց պահակապետս Փարիզու, այլ
խոհական վարչութիւն տէրութեան հեղ-
ձուցեալ զսերմանս խռովութեան, 'ի մահ
դատապարտեաց զզօրավարս նոցա զՆանթիլ։
Նուաճեալ և զապստամբութիւն նորավարժ
հեծելազօրուն 'ի Սոմիւր, ելոյծ զնոսա 'ի
զինուորութենէն. ձերբակալ արար և զզо-
րավարն Պէրթոն, որոյ ժողովեալ գունդ
մի պատանեաց 'ի զինուորաց և 'ի գիւղա-

կանաց և ամբարձեալ զդրօշն Եռագոյն, կալաւ յանակնկալս զքաղաքն Թուար՝ յանուն Նափոլէոնի Բ. և անտի յարձակեալ 'ի Սոմիւր, լքեալ եղև յիւրոցն։ Առ սոքօք և 'ի Պէֆոր քաղաք յարեաւ խռովութիւն 'ի ղինուորս, այլ անդէն նուաճեալ սպանան առաջնորդք նոցա. այսպէս պետութիւնն սպանմամբ միայն գտանէր դարման չարեաց խռովութեան։

Եւ իբրև յայս պայման էին իրք Գաղղիոյ, և հիւանդութեամբ Լուդովիկոսի վարչութիւն պետութեան անցանէր 'ի ձեռս եղբօր իւրոյ, ինքնակալն Ռուսաց Աղեքսանդր, և Փրանկիսկոս կայսրն Աւստրիոյ և արքայն Բրուսաց միաբանեալ 'ի Դաշնակցութիւն որբազան, 'ի հաստատութիւն կրօնից խաղաղութեան և արդարութեան, կամեցան արհամարհ ցուցանել զոգի ապստամբութեան առաջի ժողովրդոց՝ ընկճելով զխռովութիւն Սպանիացւոց 'ի ձեռն Գաղղիոյ, առ 'ի փորձել թէ իցէ՞ հաստատեալ Պուրպոնեանն իշխանութիւն 'ի Գաղղիա։

Հնազանդեալ կամաց Սրբազան դաշնակցութեանն գումարեցան Գաղղիացիք արքութեան հաղար ընդ ձեռամբ դքսին Անկուլէմայ և Ռոհինոյ զօրավարին. խաղացին 'ի Սպանիա, ուր յերկուս ճեղքեալ ժողովուրդն՝ կէսք 'ի կողմն Թագաւորին, և կէսք 'ի կողմն նորոյ սահմանադրութեան մարտընչէին։ Զոքան պաշարեցին Գաղղիացիք զՔասիչէ քաղաք, և խոնարհեցուցեալ ընկճեցին զկուսակիցս նորոյ սահմանադրու-

թեանն և զհակառակորդս Փերսինանտոսի։ Որով զերծեալ Փերսինանտոս՝ ջրեաց զօրէնս նորոյ սահմանադրութեան, և սկսաւ պատուհասել զապստամբս։ Շատ ջանաց դուքսն Անկուլէմայ միջնորդ կալ ընդ թագաւորն և ընդ նոր օրէնսն, այլ ոչ ինչ կարացեալ վճարել դարձ արար վերստին 'ի Գաղղիա՝ տեսեալ ընդ անգութ թագաւորաւն ընկճեալ զքաջ ժողովուրդն Սպանիացւոց։

Այս արշաւանք Գաղղիացւոց 'ի Սպանիա թուականին 'ի սպառ զմիտս ապստամբաց, և դողցեաս իմն անդէն 'ի նախկին կարգս օրինաց առեալ ածէր զթագաւորութիւնն Գաղղիոյ. թէպէտ անդուլ քրթմնջիւն էր 'ի ժողովրդեանն, և երկիւղ 'ի վերայ կայր 'ի հաստատութեան նորոյ սահմանադրութեան օրինաց՝ քաղաքական խռովութեան ծագելոյ, որ մահուամբ Լուդովիկոսի 'ի վեր երևեցաւ։ Մեռաւ Լուդովիկոս ԺԸ, թողեալ զթագաւորութիւնն յեղբայր իւր Իբրև յաւանդ. քանզի 'ի ժամու անդ մահուն եդեալ զձեռն իւր 'ի գլուխս մանկանն դրքսին Պորտոյ, վերջնոյ շառաւիղն զարմին իւրոյ, ասէր խանդակաթ. "Պահեսցէ Կարոլոս մանկանս զթագն" (1824)։

ԳԼՈՒԽ Ժ.

Թագաւորութիւն Կարոլոսի Ժ. և անկումն նորա։

ԿԱՐՈԼՈՍ, իշխան բարեպաշտ և կրօնասէր, 'ի սկզբանէ ոխերիմ թշնամի էր տպլատամբողական ոգւոյ և ամբարշտութեան Գաղղիոյ. և նովին իսկ խորհրդով վտարանդի գնաց 'ի Հայրենեաց, և 'ի նոյն խորհուրդս ամբարձաւ 'ի գահ թագաւորութեան։ Քանզի եդ 'ի մտի և հաւանեցոյց զիւրսն զի 'ի հաստատել վաղեմի կարգաց՝ դարձցի անդրէն պետութիւնն 'ի նախկին իւր պայծառութիւն, և աշխարհն հանդարտեալ գոյցէ զնաղալութիւն։

Օծաւ նա 'ի թագաւոր ըստ վաղեմի սովորութեանն երդուեալ 'ի պահպանութիւն նորոյ սահմանադրութեան օրինաց (1825)։ Այլ յետ ոչ բազմաց՝ խորհրդով պաշտօնէից իւրոց Վիլլէլայ, Քորպիէրայ, և Փէրոնեայ առաջի արար ժողովոյ նուիրակաց և ծերակուտին՝ հատուցանել տան դաղար միլիոն ֆրանքս վտարանդի Գաղղիացւոց, հաստատել զմենաստանս կանանց, պատուհասել մահուամբ զսեղանակապուտս և զսրբապիղծս, և 'ի բաժանման ժառանգութեանց առաւելուլ զմասն անդրանկին։ Ժողովն նուիրակաց ընկալաւ զայս ամենայն վճիռս արքունի. իսկ ծերակոյտն ընդ առաջին երկուսն միայն հաւանեալ, մերժեաց զայլսն։ Ոմանք 'ի թագաւորականաց տեսեալ

զվարչութիւն պետութեանն հակամէտ 'ի միապետութիւն, և զի անհնար համարէին առանց նորոց օրինադրութեանց հաստատուն ունել զխաղաղութիւն աշխարհին, զատուցեալ բաժանեցան 'ի Յիսուսեանց և 'ի պաշտօնէից ալքային. և ասցա առաջնորդ եկաց Շաթոպրիան մեծանուն մատենագիր, որ ժողովեաց զիւրև արս խորագէտս և իմաստունս, զօրացաւ ազգս Ճարտարիսատութեամբն յատենի պատրիկաց, և եղ մերժել զօրէնս ընդդէմ սեղանակատարացն և իրաւանց անդրանկութեան: Տակաւ ստուարացեալ բազմութեան ասցա, 'ի կողմն միապետական իշխանութեան վարանդիքն միայն մնացին և քահանայք: Որպէս զի 'ի կամել պաշտօնէից աէրութեան ամփոփել զազատութիւն տպագրութեան, ամբարձաւ քրիստնչիւն ժողովրդեան, մինչև երկուցեալ յետս զվերձիւն կոչեցին. և գունդն ազգային՝ որ ընդդէմ պաշտօնէից թագաւորին բողոքեալ էր, լուծաւ 'ի զինուորութենէն (1827): Բողոք բարձին ընդ այս նուիրակք և պատրիկք. Վիլլել ոչ միայն ոչ անսաց նոցա այլ և փոխեաց զնոսա. այլ երկուցեալ 'ի սպառնալեաց ժողովրդեան, մեկնեցաւ և ինքն 'ի բաց. որով զօրացաւ կողմն Շաթոպրիանայ 'ի պետութեան:

Խակ նոր գումարեալ ժողովն՝ որոյ նախագահ էր Մարթինեաք՝ եբարձ զքննութիւնս դլոց, կարդեաց օրէնս վայելուչս, խոնարհեցաւ 'ի կամս ժողովրդեան՝ յազատութիւն տպատամբելոցն Յունաց 'ի աէրու-

թենէ Օսմանեանց. քանզի և կանխեալ նոցա օգնականութեամբ Անգղիացւոց և Ռուսաց խորտակեալ էր 'ի Նաւարին զտորմիղ նաւացն Օսմանեանց։ Առաքեաց Մարթինեաք արս հնգետասան հազար ընդդէմ Օսմանեանց, մինչև հասանեցաւ Մահմուտ ընդ ազատութիւն Յունաց (1828)։ Բայց 'ի Գաղղիա անկեալ յիշխանութենէ Մարթինեաք, ընտրեցաւ 'ի տեղի նորա Փոլինեաք. այլ ժողովրդեանն միաբան յուզէին ընդդէմ միապետական իշխանութեան թագաւորին (1829)։

Եւ իբրև վարիչք պետութեանն կամէին զինուորական ինչ փառաք արշաւանաց ընդ միտ մտանել ռամկին, դէպք 'ի բարի յաջողէին նոցա. զի իշխանն Ճէզայիրայ յանդգնեալ նախատինս ինչ գործեաց ընդդէմ Գաղղիոյ. և շարժեցաւ անդէն պետութիւնն 'ի վրէժխնդրութիւն, խորհրդով սրբելոյ զՄիջերկրականն ծով 'ի հինահարութենէ բարբարոսաց։ Զօրավար էկաց բանակին Պուրմոն, և տորմղի նաւացն ծովակալն Տիւփերէ։ Հասեալ պաշարեցին Գաղղիացիք և կալան զմայրաքաղաք աշխարհին։ Լուր մեծատպայծառ աշխարհակալութեանն էլից խնդութեամբ զարթուն իսկ, այլ 'ի մեծի երկիւղի և 'ի տարակուսի էր ժողովուրդն, զի մի՛ խրախոյս ինչ այնու առցեն միապետականք տալ զվերջին հարուածս ազատութեան աշխարհին, յետս կոչելով զնոր սահմանադրութիւնն։

Կարոլոս պարտս իմն անձին հաւնարեալ

սրբազանս 'ի գլուխ հանել զայս գործ մեծ և դժուարին, յոր համարէր առ յապայ երջանկութիւն Գաղղիոյ, սահմանեաց օր ընդ կուսակից իշխանս իւր զ26 ամսեանն յուլիսի և հրատարակեցին զբարձումն նորոյ սահմանագրութեան։ Զառաջինն քրիստնջիւն և բոլոր միայն լսելի լինէր 'ի մայրաքաղաքին, այլ յաւուրն երկրորդի գըղըրդեցաւ քաղաքն համօրէն յապստամբութիւն. կանգնեցին պատնէշս, կործանեցին զնշանս թագաւորականս և զդրօշս 'ի գոչիւն աղաղակին, Կեցցէ նոր սահմանադրութիւն օրինաց։ Պաշարեցաւ Փարիզ, և դուքսն Ռակուզայ Մարմոն խաղաց զօրօք 'ի վրայ ապստամբելոց ամբոխին։ Այլ Լաֆայէթ 'ի վեր երևեալ առաջնորդ եկաց ժողովրդեան, գումարեաց և զազգային զօրս 'ի նշան եռագոյն. և սկսաւ պատերազմն յամենայն փողոցս քաղաքին։ Տևեաց քաղաքականս այս մարտ զաւուրս երիս. և յաղթական կողմն ժողովրդեան հալածեաց 'ի մայրաքաղաքէն զզօրս արքունի. և խաղաց անտի 'ի Սէն-Քլու ուր ամրացեալ էր թագաւորն, և խուճապեցոյց զնա խոյս տալ անտի։ Հաստատեցաւ վարչութիւն ինչ առժամանակեայ, և Գաղղիա ողջոյն շփոթեալ յուզէր, կիսոց զհասարակապետութիւն կամելով հաստատել, այլոց թագաւորեցուցանել զդուքսն Աբրեղիոնի և ոմանց զմանուկ դուքսն Պորտոյ (1830)։

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԹԱԳԱՒՈՐԷ ԼՈՒԳՈՎԻԿՈՍ ՓԻԼԻՊՊԷՈՅ։

ԳՈՒՄԱՐԵՑԱՆ Ժողովք նուիրակացն և պատրիկաց, և տեղակալ կացուցին զահոն զՓիլիպպոս զդուքան Աբրեզիոնի, կարգեցին ըստ կամաց Ժողովրդեան օրէնս, յաւելեալ ինչ ինչ յառաջին սահմանադրութիւնս, և հատեալ զորս ոչ հաճեցան։ Հալածեցին 'ի Ռապուլլեայ զԿարոլոս՝ որ հրաժարեալ 'ի Թագաւորութենէն՝ եթող զայն 'ի դուքան Պորսոյ, և ինքն վտարանդի չոքաւ 'ի Սկովտիա, և անտի յետ ամաց ինչ յերկիր տերութեանն Աւստրիոյ 'ի Կորինցիա։

Յայնժամ Փիլիպպոսի հաճութեամբ մեծի մասին Ժողովրդեան երդուեալ պահել հաւատարմութեամբ զնոր սահմանադրութիւն օրինաց, ամբարձաւ 'ի գահ Թագաւորութեան Պուրպոնեանց, կոչեցեալ Լուդովիկոս Փիլիպպոս Թագաւոր Գաղղիացւոց, յիններորդում աւուր ամսեանն օգոստոսի (1830)։

Եւ զի գործ դժուարին է, ճշգրիտ տալ զնկարագիր Փիլիպպէայ Թէ որպիսի՞ ոք է, կայց նա Թագաւոր. ապա արժան համարիմ ժամանակին Թողուլ և հանդարտելոյ ոգեացն, զի 'ի նոցուն իսկ 'ի բնիկ ազգէն մարթասցուք ինչ առնուլ մեզ զուղղագատ տեսութիւն զնմանէ։ Մեք առ այժմ զԹագա-

հոլուեթեան նորա կարևոր դէպքն ժամանակագրական կարգաւ ամփոփեալ, 'ի վերջն հատուցուք զպատմութիւնն։

Զայսու ժամանակաւ այլք 'ի պետութեանցն Եւրոպայ ոչ սակաւ ահ երկիւղն ունէին յերեսաց գաղղիական յեղափոխութեանն, զի կասկածէին թէ գուցէ և յիւրեանց հպատակացն միտս մուտ գտանիցէ ազատասիրութիւն յեղյեղուկ ազգին։ Եւ յիրաւի. քանզի անդէն իսկ յառաջին աւուրս յեղափոխութեանն Գաղղիացւոց՝ ազնուականացն գաստուն ազգաց իշխանութիւն յԱնգղիա, և 'ի Գերմանիա բարձրամ ուրեք աղմուկք շփոթի յուզեցան. իսկ յամսեանն սեպտեմբերի խռովութիւն մեծ յարեաւ 'ի Պրուքսէլ մայրաքաղաքի Սաորին նահանգաց, որ և տեւեաց աւուրս երիս. և յետ մեծամեծ կոտորածից՝ յերկուս հերձաւ պետութիւնն այն. և Բելգիա նոր ըստացաւ թագաւորութիւն սահմանադրական՝ որիշ 'ի թագաւորութենէն Հոլանտիոյ։

Գրգռեցան և Լեհացիք, ոչ այնչափ օրինակաւ՝ որչափ խրախուսանօք և խոստմամբք Գաղղիացւոցն, թօթափել զլուծ կայսերութեանն Ռուսաց. այլ վրիպեալք յակնկալութենէ իւրեանց՝ ոչ կարացին տոկ ունել ընդդէմ բազմութեան թշնամեացն, և յետ վեցից ամսոց դարձեալ վերստին նուաճեցան (8 սեպտ. 1831)։

Այլ և ոչ 'ի Գաղղիա հանդարտեալ կայր ժողովուրդն. զի որպէս զհետ ամենայն

յեղափոխութեանց սովոր է պատահել, դադարեցին տուրեաուիկ վաճառաշահութիւնք յաշխարհին, և 'ի սկզբան 1831 ամին անկաւ ժողովուրդն յաղքատութիւն յոյժ։ Զայն պատճառս կալեալ խռովայոյզ մարդկան՝ գրգռեցին զամբոխն հակառակ երիցանուոյն, և յ13 և 'ի 14 փետրուարի յարձակեալ աւազակաբարոյ արանց յարքեպիսկոպոսարան Փարիզու, հիմն 'ի վեր տապալեցին զայն, և զկարասին և զգրեանն և սպասքաղուստ ամացին 'ի Սէն գետ. և անոի ընթացեալ ընդ ամենայն քաղաքն խորտակեցին յոլով ուրեք զնշանս սրբոյ խաչին։

Յամենայն մարտի տմբարձաւ յիշխանութիւն Քազիմիր Փէռիէ, որ խստութիւն 'ի գործ արկեալ ոանձ եդ խռովարարացն՝ ոչ ինչ միտ եդեալ քրիստոնէիցոյ բազմաց 'ի խորհրդարանին և 'ի ժողովակս և յօրագիրս. որով և կրկին աշխարհին սկսան 'ի կարգ և 'ի յառաջադիմութիւն անկանել։

Ի վերջ կոյս այնր տարւոյ գործաւորք Լ՝ուգդունի աղմուկ ապստամբութեամբ յարուցեալ տիրեցին քաղաքին՝ այլ ապարատեան Սուլ երթեալ ոտուար գնդաւ նուաճեաց զնոսա 'ի հնազանդութիւն։

Ընդ այն աւուրս օրէնք եդան բաւնալոյ ժառանգական իշխանութեան պատրիկաց, և դարձեալ այլ օրէնք՝ զի յաքսորս դատապարտեսցի ազգատոհմն Պուրպոնեանց, և վճիռ աքսորանաց տոհմին Պոնապարթեայ հատատուն կացցէ։

Յամին 1832 յետ զանազան խռովու-

թեանց յուզելոց 'ի Փարիզ, անկաւ 'ի քաղաք անդր և ընդ ամենայն Գաղղիա մարձախան ժանտ, և արար կոտորած անհնարին, մանաւանդ 'ի դասուէ չքաւոր և անպատսպար ամբոխին։ Որոց կասկածեալ 'ի տգիտութեան իւրեանց թէ մեծատունքն լցեն պատճառք մարդամահուն՝ դեղեալ դոլով զչուր քաղաքին, հեղին արիւն բազում, և զինու զօրութեամբ հազիւ ուրեմն հանդարտեցին։

Յամենայն յունիսի յաւուր հանդիսի թաղման Լամարք զօրավարին՝ յայտնեցաւ դաւաճանութիւն մեծ նիւթեալ 'ի հասարակապետականաց անտի, և զաւուրս երկուս ներկան փողոցք Փարիզու արեամբ անմեղաց։

Օրինաւորականքն ևս անուանեալք, կուսակիցք տոհմին Պուրպոնեանց, յարուցին խռովութիւն ապստամբութեան 'ի սահմանս Վանտէի. և դքսուհին Պէռեայ՝ որ կցորդհամարէր ապստամբացն՝ ձերբակալ եղև 'ի Նանթ քաղաքի։

Յամենայն նոյեմբերի ապարապետն Ժէռառ, զօրավիգն ունելով զարքայորդիսն երկոսին զդուքն Օռլէանի և զդուքն Նէմուրի, պաշարեաց զԱնվերս քաղաք, և առեալ ետ զայն արքային Բեղգիոյ։— Ինչմին ամի դուսարն Լուդովիկոսի Փիլիպպեայ հարանացաւ արքային Բեղգիացւոց Լէոփոլտի։ Եւ որդին Նափոլէոնի Պոնապարթեայ՝ որ կոչէր թագաւոր Հռովմայ և դուքս Ռայխշթատի՝ մեռաւ 'ի Շէնպրուն մերձ 'ի Վիեննա Աւստրիացւոց։

Յամին 1833 մեծահանդէս շքով վերոյին կանգնեցաւ 'ի գլուխ սեանն որ 'ի Վանսոմ անուանեալ հրապարակին Փարիզու պղնձաձոյլ առնապատկերն Նափոլէոնի։

Ի միւսում ամին ընկերութիւն ինչ նոր 'ի վեր երևեցաւ 'ի Գաղղիա՝ անուանեալ ընկերութիւն Իրաւանց մարդոյ, որոյ վախճան նպատակին էր կործանել զմիապետական իշխանութիւն, և 'ի տեղի նորին զհասարակապետութիւն հաստատել։ Պետութիւնն օրէնս և վճիռ դատապարտութեան հրատարակեաց ընդդէմ ընկերութեանն, սակայն ոչ կարաց խափանել զյոյզս խռովութեանցն որ ծագեցան 'ի Փարիզ, 'ի Լուգդոն, 'ի Լիւնէվիլ և յայլ բազում քաղաքս, և հեղաւ արիւն յոյժ, թէպէտ և 'ի վախճանի պետութիւնն կալաւ զյաղթութիւն։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Դատաստան ընդդէմ կէնաց արքային, և այլ դէպք ժամանակաց։

Յամսեանն յուլիսի յամին 1835 մինչդեռ արքայն Լուդովիկոս Փիլիպպոս հանդերձ որդւովքն և զօրավարօք հանդէս առնէր ազգային պահանորդացն և հասարակ զօրականաց, ճայթեցաւ յանկարծ 'ի կրպակէ ուստեք դժոխաղէն գործի զոր պատրաստեալ էր Ֆիէսքի անուն ոմն, և տապաստ արկ զամենս որ ընդ արքայի կային, և յանուանէ զզօրավարն Մորթիէ։ Այս երկրորդ ան-

գամ էր դաւ գործելոյ Հարամանդրայ ընդ-
դէմ կենաց արքայի։

Ի միւսում ամին 'ի 25 յունիսի Ալիպոյ
անուն ոմն զոլոզ գաղղիի ընկերութեանց՝
կամեցեալ սպանանել զարքայ, ձերբակալ
եղև և դատապարտեցաւ 'ի մահ։

Լուդովիկոս Նափոլէոն եղբօրորդի Նա-
փոլէոնի Պոնափարթեայ, փորձ փորձեաց
տիրել Սթրասպուրկ քաղաքի, այլ կալա-
նաւորեալ իւրովքն հանդերձ արկաւ 'ի
բանտ։

Ի նմին ամի 'ի 6 Նոյեմբերի մեռաւ Կարո-
լոս Ժ։

Յամսեանն դեկտեմբերի Մէօնիէ անուն
ոմն այր տննշան արձակեաց հրազէնս 'ի վե-
րայ Լուդովիկոսի Փիլիպպեայ, և վիրաւորեաց
յակնկալութենէն։ Խորհրդարանն պատուլ-
կաց դատապարտեաց զայրն 'ի մահ, այլ
արքայ շնորհեաց նմա զկեանսն։

Յամին 1837 տիրեցին Գաղղիացիք մեծաւ
պատերազմաւ Կոստանդինա քաղաքի որ
յԱֆրիկէ։

Ի 24 օգոստոսի յամին 1838 ծնաւ որ-
դի մի դքսին Աբրեղլանի անդրանկան Լու-
դովիկոսի Փիլիպպեայ, և կոչեցաւ Կոմս Փա-
րիզոյ։

Յամին 1839 վէճք սաստիկք յուզեցան
'ի խորհրդարանս Գաղղիացւոց, և ատե-
նակալ իշխանաց վերատին փոփոխմունք ե-
ղեն։

Ի մայիսի 12 յարեաւ խռովութիւն մեծ
յուզեալ 'ի Պարպէս և Պլանքի անուն ռամ-

կավարաց, այլ հուպ ընդ հուպ նուաճեցաւ։

Յամին 1840 այլք 'ի մեծամեծ պետութեանց Եւրոպայ դաշնագիր եղեն ընդ միմեանս 'ի Լոնտոն յապաղս իրացն Արևելից, և չընկալան 'ի խորհրդակցութիւն զպետութիւնն Գաղղիոյ. որով և շշուկ պատերազմի յարուցեալ Գաղղիացւոց ընդդէմ Անգղլիոյ՝ այլ վաղ ընդ փոյթ և լռեցին։

Ի 15 դեկտեմբերի ածան 'ի Փարիզ հանդիսիւ մեծաւ ոսկերք Նափոլէոնի Պոնապարթեայ և եդան յեկեղեցւոջ մեծի օթևանին անկարող զօրականաց։

Ի նմին ամի միւս ևս փորձ փորձեաց Լուդովիկոս Նափոլէոն՝ յապստամբութիւն հրաւիրեալ զամբոխն 'ի Պուլոյն քաղաքի, և անկեալ 'ի ձեռս պետութեան արդեալաւ յամուրն Համ։

Դարձեալ և այլ ոմն Ցարմէս անուն կամեցաւ սպանանել զԼուդովիկոս Փիլիպպոս արքայ, և ոչ կարաց, և 'ի պատրկացն 'ի մահ դատապարտեալ դլխատեցաւ։

Յամին 1841 արքայորդին դուքսն Օմալի և սպարապետն Պիւժոյ մեծամեծ արութիւնս ցուցին յԱֆրիկէ։

Ի միւսում ամին յ13 յուլիսի դուքսն Աբրեղիոնի անկեալ յերիվարէն և մեռաւ 'ի հասակի երեսուն և երկուց ամաց, և 'ի սուգ մեծ նսայոյց զԳաղղիա առ հասարակ։ Ժողովեցաւ խորհրդարանն և անուանեաց խնամակալ կոմսին Փարիզու զդուքսն Նէմուրսի։

Յամին 1843 տիրեցին Գաղղիացիք Մարքիզեան կղզեաց և Օթայիթի կղզւոյ։

Ի 14 օգոստոսի յամին 1844 յաղթութիւն մեծ կալան Գաղղիացիք՝ ի վերայ զօրաց ազգային Մարոքայ յԱփրիկէ առ Իսլի գետով։

Յամին 1845 դաշն ինչ նոր հաստատեցին դարձեալ Անգղիացիք ընդ Գաղղիացիս՝ ի խափանել զմարդավաճառ տուրհառս Ափրիկեցւոց։

Ի նմին ամի Ապոստոլական Ափրիկեցւոց սաստկագոյնս շարժեաց ընդդէմ Գաղղիացւոց զբնակիչս իւրոյ աշխարհին, և ինչս բազում հասոյց սոցա. այլ՝ ի վերջ կոյս ճմերայնոյն արիացան Գաղղիացիք և նուաճեցին դարձեալ զաշխարհն։

Ի 16 ապրիլի յամին 1846 Պետրոս Լըքոնթ անուն ոմն սպանանել մտաբերեաց զԼուդովիկոս Փիլիպպոս, և ոչ յաջողեալ՝ դատապարտեցաւ՝ ի մահ։ Դարձեալ և այլ ոմն Հանրի անուն վրիպեալ՝ ի նմանօրինակ խորհրդոյն՝ դատապարտ եղև կենաց ջամբ՝ ի բռնի աշխատութիւն։

Ի նմին ամի դուքսն Պորտոյի (Հենրիկոս Ե) էառ՝ ի կնութիւն զդուստր դքսին Մոտենայի։

Յամին 1847 Ապոստոլական՝ ի նեղ անկեալ յանձն էառ անձնատուր լինել՝ ի Գաղղիացիս. և նոքա կալան զնա և ընտանեաքն հանդերձ անցուցին՝ ի Գաղղիա։

ԳԼՈՒԽ. ԺԳ.

Վասն վերջնոյ խռովութեանն և մերժելոյ Լուդովիկեայ Փիլիպպեայ 'ի գահոյն, և վասն մահուանն արքային արփայի, և այժմեան պայմանի Գաղղիոյ:

Ի սկզբան 1848 ամին յաճախեցին տըրտունջք 'ի Գաղղիա զընտրութենէ նուիրակաց խորհրդարանին և զկաշառակրծութենէ իշխանաց պետութեանն: Օրլեան Պաւոյ և այլք ոմանք գրգռեցին զժողովուրդն խնդրել յարքայէ նոր ինչ օրէնս ընտրութեան նուիրակաց: Լուդովիկոս Փիլիպպոս զառաջինն արհամարհեաց զխնդիր նոցա. ապա անագան ուրեմն զինչեալ 'ի կամս ժողովրդեանն, և յաստենակալս իւր ևս խոստացաւ առնել փոփոխութիւն: Սակայն ամբոխն զայրացեալ յերկուց աւուրց հետէ՝ յերրորդումն՝ որ էր 24 օր փետրուարի դիմեաց 'ի վերայ Թիւյիլերիապարանիցն արքունի: Լուդովիկոս Փիլիպպոս տեսեալ զանձն իւր անպատասպար թողեալ լքեալ յամենեցունց հրաժարեաց 'ի թագաւորութենէն՝ թողեալ զայն 'ի կոմսն Փարիզոյ. եմուտ փութանակի 'ի կառս և փախստեամբ զերծաւ յԱնգղիա: Դքսուհին Աւրելիանի առեալ զորդին իւր զկոմսն Փարիզու չոգաւ 'ի խորհրդարան նուիրակացն. այլ նոքա մերժեցին զնա, և անդէն հրատարակեցին զբարձումն թագաւորական իշխանութեան 'ի Գաղղիոյ և զհաստատել հասարակապե-

տուլթեան։ Գաղղիացիք առ հասարակ հաւանեցան ընդ եղեալսն, և Լամարթին մի յատենակալաց առժամանակեայ տեսչութեանն՝ մեծաւ քաջութեամբ և հզօր պերճախօսութեամբ իւրով յանդգնորդու կալաւ զժողովուրդն մինչև 'ի գումարել Սահմանագիր ժողովոյն 'ի 4 Մայիսի։

Ի 15 նորին ամսոյ ամբոխն խռով արարեալ յարձակեցաւ 'ի վերայ խորհրդարանին։

Ի 23, 24 և 25 աւուրս յունիսի մարտ քաղաքական յուզեալ 'ի Փարիզ, և արիւն բազում հեղաւ։ Յայնմ բազմավտանգ խռովութեան մեծապէս արիացաւ զօրավարն Քավէնեաք։

Ի 4 նոյեմբերի եղև հանդէս հրատարակման սահմանագրութեանն նորոյ, և 'ի 10 դեկտեմբերի ընտրեցաւ Գահերէց հասարակապետութեանն Գաղղիացւոց Լուդովիկոս Նափոլէոն Եղբօրորդի մեծին Պոնափարթեայ։

Իսկ արքայն Լուդովիկոս Փիլիպպոս կեցեալ յԱնգղիա զամս երկուս՝ վախճանեաց անդէն զկեանսն յայսմ ամի (1850) յօգոստոսի։ Առ նմա էին 'ի վերջնումն պահու և որդիք իւր և ազգատոհմն համօրէն, որք և սուգ մեծ առին 'ի վերայ նորա։ Ընդ նոսին և ոչ սակաւ Գաղղիացիք, որ զկողմն այնր ազգատոհմի ունելով Աւրեղիանեանք կոչեցան, և ակն ունին դարձեալ բառնալոյ հասարակապետութեանն և կանգնելոյ թագաւորական իշխանութեան։

Զնոյն ակնկալութիւն ունին և Օրինաւորականքն կուսակիցք դքսին Պորտոյի, որք և հնարին դարձուցանել զնա յաթոռն հայրենի. և սոքա հզօրագոյնք գտանին քան զԱբրեզինեանսն։

Միւս ևս հերձուած Պոնափարթեանցն է, որ զգահերիցուն իշխանութիւն կամին վերսել 'ի կայսերութիւն, այլ սոքա տկարագոյնք քան զառաջինսն են։

ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

ԵՐԿՐՈՐԴԻ ՀԱՏՈՐԻՍ

Ա. Խնամք Լուդովիկեայ ԺԴ. 'ի բարեկարգութիւն տէրութեան իւրոյ 1
Բ. Զէն առնուլ Գաղղիոյ ընդդէմ Անգղիացւոց 'ի Թիկունս օգնականութեան գաղթականաց Նոցա ապստամբելոց յԱմերիկա . 5
Գ. Խորտակիլ Անգղիացւոց առաջի հզօր Նիզակակցացն և խոնարհիլ 'ի հաշտութիւն Թողեալ զգաղթականս իւրեանց յազատութիւն 11
Դ. Նեբքին ողորմելի վիճակ Գաղղիոյ, մինչև 'ի սկիզբն աղգախուսմբ ժողովոյն 17
Ե. Ազգային ժողով, և անսասանել նուիրակաց ժողովրդեան հրամանի Թագաւորին 23
Զ. Աղմուկ ապստամբութեան ժողովրդեանն, և առումն ամրոցին Պաստիլլեայ 28

Է. Ի պատճառս սովոյն զայրանալ խռովութեան ռամկին, և տարածանել ընդ ամենայն Գաղղիա 32
Ը. Յափշտակել ազգային Ժողովոյ զնրաւորունս օրէնս տալոյ ազգին. 34
Թ. Յարձակումն խառնիճաղանճ ամբոխին 'ի Վերսայլ և դարձուցանել զթագաւորն 'ի Փարիզ: 37
Ժ. Նորանոր ամբարիշտ օրինադրութիւնք Ազգային Ժողովոյ . . 42
ԺԱ. Ստրջանալ թագաւորին ընդ երդումն: Մահ Միրապոյի . . 50
ԺԲ. Փախուստ թագաւորին և անկանել նորա 'ի ձեռս խռովչաց, և շարժել վտարանդելոցն Գաղղիացւոց զօտար պետութիւնս ընդդէմ աշխարհին իւրեանց . 53
ԺԳ. Ակիզբն Օրինադիր Ժողովոյ և պատրաստութիւնք նորա 'ի մարտ ընդ թշնամիս ապստամբութեան Գաղղիոյ 59
ԺԴ. Խորտակել Գաղղիացւոց առաջի թշնամեաց իւրեանց, և յաճախել մոլեգնութեան խռովչաց. 66
ԺԵ. Ի բուռն առնուլ Ժաքոպէնաց զապարանս արքունի 70
ԺԶ. Վերսային զօրանալ խռովչաց և խնդրել բառնալ զանուն թագաւորութեան 76
ԺԷ. Տարեդարձ հանդէս յիշատակի դաշնակցութեան. 78

ԺԸ. Յաղագս Ժողովոյ խռովարարացն 81
ԺԹ. Խորհուրդ արքունեաց 'ի փախուստ և սպառնալիք խռովչացն կալանաւորել զԹագաւորն. 85
Ի. Յարձակիլ խռովարար մարդկան յապարանս արքունի 'ի Թիւլըռի, և բառնալ զԹագաւորական վարչութիւն 'ի Գաղղիոյ . . . 88
ԻԱ. Անիշխանութիւն 'ի Գաղղիա, և արշաւանք օտարաց 'ի վերայ խռովչաց աշխարհին 92
ԻԲ. Կոտորած անմեղ բազմութեան քաղաքացւոց և քահանայից 'ի մարդախոշոշ խուժանէն . . 97
ԻԳ. Աղատել Տիւմուրիեայ զԳաղղիա յարշաւանաց Թշնամւոյն . 101

ԴԱՀՆԱԿՑ. ԱԶԳԱՅԻՆ

Ա. Գումարումն Դաշնակից ժողովոյ, և գժտութիւնքն 'ի նմա . 104
Բ. Դարձ Տիւմուրիեայ 'ի Փարիզ առ արդարացուցանելոյ զանձն, և յաՃախել խռովութեանց ընդ Ժիրոնտեանս և ընդ Լեռնականս 107
Գ. Յաջողութիւն զինուց Գաղղիոյ 'ի վերայ Թշնամեաց իւրոց, և աշխարհակալութիւն 'ի Բելգիա . 111
Դ. Յաղագս Թագաւորին և ընտանեաց նորա բանտելոց 'ի Տա-

Ճարին 116
Ե . Դատ ազգային Լուդովիկեայ . 119
Զ . Դատակնիք Լուդովիկեայ և ողորմ մահ նորա 125
Է . Նկարագիր բարուց Լուդովիկեայ, և համառօտ տեսութիւն զվարչութենէ նորա 131
Ը . Միաբանել պետութեանց Եւրոպայ ընդդէմ Գաղղիոյ . . 137
Թ . Սասոկանալ նեղբին խռովութեան Գաղղիոյ ընդ Ժաքոպէնս և ընդ Ժիրոնտեանս 141
Ժ . Զինեալ գաւառաց Գաղղիոյ ընդդէմ խռովչաց աշխարհին . . 145
ԺԱ . Յառնել ռամկին և Ժաքոպէնաց ընդդէմ Ժիրոնտեանց . . . 149
ԺԲ . Վասն քաղաքական կռուոյ ընդ Ժաքոպէնս ռամկավարս և ընդ Ժիրոնտեանս, և մահ Մարաթայ 153
ԺԳ . Հանդէս տարեդարձ յիշատակի անկման Թագաւորին 'ի գլուխոյն 157
ԺԴ . Զօրանալ ռամկավարացն 'ի տեսչութեան աշխարհին, կոտորած խաղաղասէր մարդկան, և ընկճել քաղաքացն ապստամբելոց Լուգդոնի և Թուլոնի . . 160
ԺԵ . Մահ դշխոյին Անդոնիեդդայ, և կոտորած Ժիրոնտեանց . . 166
ԺԶ . Դէպք պատերազմացն Գաղղիացւոց ընդդէմ դաշնակցեալ

պետութեանց Եւրոպայ . . 170
ԺԷ. Ամբարշաւութիւն խռովչաց Գաղղիոյ 'ի ջնջել զամենայն կրօնս յաշխարհէն, և անաստուածութիւն նոցա 174
ԺԸ. Գժտութիւն երկպառակութեան 'ի ռամկավարս և կոտորած Տանթոնեանց 179
ԺԹ. Մահ Տիկնոջ Եղիսաբեթի քեռաղքային Լուդովիկեայ և բիւրաւորաց անմեղ մարդկան . . 183
Ի. Պաշտօն և հանդէս տօնի գերագոյն Էին 187
ԻԱ. Անկումն Ռոպէսպիէռայ և մահ նորա 190
ԻԲ. Յաջողութիւնք զինուց Գաղղիոյ 'ի վերայ թշնամեաց իւրեանց առ բռնակալութեամբ Ռոպէսպիէռայ 194
ԻԳ. Պայման Գաղղիացւոց յետ անկանելոյ բռնակալութեան Ռոպէսպիէռայ 200
ԻԴ. Բարձումն Ժողովոյ խազմարար ժաքոպէնաց 203
ԻԵ. Յաջողութիւնք զինուց Գաղղիացւոց. արշաւանք նոցա 'ի Հոլանտա, 'ի Գերմանիա և 'ի Բիէմոնդ 206
ԻԶ. Մահ ազգայորդւոյն Լուդովիկեայ ԺԷ. և հօրեղբօր նորա Լուդովիկեայ ԺԸ առնուլ զանուն թագաւորի. 211

ԻԷ. Ընկճել 'ի սպառ ռամկավար խռովչաց և Ժաքոպէնաց . . 213
ԻԸ. Թէ որպէս Ազգային դաշնակցութիւնն փոխեցաւ յոտնիկանացն վարչութիւն 217
ԻԹ. Հակառակ կալ Վանդէացւոց զինուք ընդդէմ խռովչացն Գաղղիոյ 220
Լ. Յաջողութիւնք զինուց Վանդէացւոց 223
ԼԱ. Օրէնք պատերազմի Վանդէացւոց, և քաջութիւնք նոցա . 226
ԼԲ. Զօրաժողով և արշաւանք հասարակապետականաց ընդդէմ Վանդէացւոց, անգութ կոտորած նոցին և աւերս աշխարհին . 231
ԼԳ. Դարձ Վանդէացւոց յաշխարհն իւրեանց. վերջին դիւցազնական արութիւնք նոցա և 'ի սպառ 'ի սպուռ կոտորած 235
ԼԴ. Մահ զօրավարացն Վանդէացւոց, և աւերս երկրի նոցա. և հաշտութիւն խաղաղութեան ընդ հասարակապետականան . 240
ԼԵ. Պատերազմ Շուանաց 'ի Բրետոնիա, և ընկճել նոցա ընդ հասարակապետութեամբ . . 243

ՈՍՏԻԿԱՆՔ

Ա. Զազգայինն դաշնակցութիւն յաջորդէ ռասիկանացն վարչութիւն. և զինեալ հասարակապետութեան ընդդէմ թշնամեաց օտարաց 250
Բ. Ծնունդ և կեանք Նափոլէոնի մինչև ցզօրավարութիւն նորա իտալական բանակին 254
Գ. Զօրավարութիւն Նափոլէոնի իտալական բանակին, և յաղթութիւնք նորա 'ի վերայ Աւստրիացւոց և Բիէմոնդեցւոց . . . 256
Դ. Համառօտագիծ տեսութիւն տէրութեանց Իտալիոյ 'ի ժամանակի արշաւանաց Գաղղիացւոց . 263
Ե. Աշխարհակալութիւնք Նափոլէոնի 'ի Լոմբարդիա. և խոնարհեցուցանել նորա զամենայն իշխանս Իտալիոյ 'ի ծանր ծանր պայմանս հաշտութեան. 266
Զ. Խորտակել զօրացն Ժուռատանայ 'ի գքսէն Կարոլոսէ, և հռչակաւոր նահանջն Մորոյի . . . 271
Է. Պաշարումն Մանդուայ քաղաքի և պատերազմն որ 'ի պատճառս նորին 273
Ը. Տագնապել Նափոլէոնի յերեսաց թշնամեաց իւրոց, և մեծահռչակ յաղթութիւն նորա առ-

Արքոլեաւ 277
Թ. Արշաւանք Գաղղիացւոց յԻռ-
լանտա, և առումն Մանդուայ
յԻտալիա 281
Ժ. Առանին կացք հասարակապե-
տութեանն Գաղղիոյ, և դաւա-
դիր մենքենայք թագաւորակա-
նաց և ռամկավարաց 284
ԺԱ. Ցաղթութիւն Նափոլէոնի 'ի
վերայ Հռովմայ, խորտակել
նորա զԿարոլոս 'ի Թիրոլ. և
բարձումն Վենետկեան հասա-
րակապետութեան 289
ԺԲ. Ներքին ողորմ վիճակ հասարա-
կապետութեան Գաղղիոյ յերկ-
պառակ հերձուածս, և ընկճել
սպառ թագաւորականաց . . 295
ԺԳ. Հաշտութիւն Քամփոֆորմիոյ.
երթ Նափոլէոնի 'ի գումար ժո-
ղովոյ պետութեանց 'ի Ռաշ-
դատ և դարձ նորա 'ի Փարիզ . 300
ԺԴ. Գնացք հասարակապետութե
Գաղղիոյ ընդդէմ դաշնակից պետու-
թիւնս Եւրոպայ, և բողոք նո-
ցա զնոմանէ 304
ԺԵ. Արշաւանք Նափոլէոնի յԵգիպ-
տոս, և համառօտագիծ նկարա-
գիր բնակչաց աշխարհին . . . 308
ԺԶ. Զու Նափոլէոնի 'ի Գահիրէ,
և յաղթութիւնք նորա 'ի վերայ
Մէմլիւքաց 'ի Կէսարիս և 'ի պա-
տերազմին Բրդանց, և խորտա-

կումն նաւաց նորա յԱպուքիր. 311
ԺԷ. Խորագիտութիւն Նափոլէոնի 'ի գողանալ զսիրտ բնակչաց Եր-
կրին, և կարգաւորութիւն վար-
չութեան աշխարհին 314
ԺԸ. Խորտակեալ Նափոլէոնի զսպըս-
տամբս Արաբացւոց, և խաղալ
նորա յԱսորիս 317
ԺԹ. Պաշարումն Աքէայ և յաղթու-
թիւն Նափոլէոնի 'ի Թափոր և յԱ-
պուքիր 'ի վերայ Օսմանեանց . 320
Ի. Գաղղիացիք նուաճեալ զիտա-
լիա, պատրաստին 'ի մարտ ընդ-
դէմ դաշնակից պետութեանց
Եւրոպայ 322
ԻԱ. Պարտութիւն Գաղղիացւոց, սպա-
նումն զեսպանաց նոցա, և բո-
ղոք ժողովրդեանն 325
ԻԲ. Դարձեալ խորտակումն Գաղ-
ղիացւոց յԻտալիա և 'ի Հոլան-
տա, և առտնին խռովութիւնք
քաղաքականք 339

ՀԻՊԱՏՈՍՈՒԹԻՒՆ

Ա. Դարձ Նափոլէոնի 'ի Փարիզ, և
փոխեալ զվարչութիւն հասարա-
կապետութեանն 'ի հիւպատոս-
ութիւն 344
Բ. Հոգ խնամոց Նափոլէոնի 'ի կար-
գել զառտնին իրս պետութեան,
և կալ դարձեալ սպարապետ ի-

տալական բանակին 348
Գ. Յաղթութիւն Նափոլէոնի 'ի Մարենկոյ 350
Դ. Զօրանալ Գաղղիացւոց և խոնարհեցուցանել զկայսրն 'ի հաշտութիւն: Թողուլ նոցա զԵգիպտոս 354
Ե. Խաղաղութիւն Եւրոպայ դաշնադրութեամբ Ամիէնայ. առանին խնամք հիւպատին, և դաւադրութիւնք ընդդէմ կենաց նորա 357
Զ. Իմաստուն օրէնսդրութիւնք Նափոլէոնի, դաշնադրութիւն նորա ընդ քահանայապետին Պիոսի Է. և խստանալ նորա ընդդէմ թագաւորականաց . . . 361

ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ա. Ինքնակալել Նափոլէոնի . . . 366
Բ. Պատկել Նափոլէոնի 'ի թագաւոր Իտալիոյ, և գրգռել ընդ նմա ազգաց Եւրոպայ 370
Գ. Մեծ ճակատամարտն ՅԱուստերլից, և յաղթանակ Նափոլէոնի 373
Դ. Խորտակիլ նաւատորմին Գաղղիացւոց, և շահասէր աշխարհակալութիւնք Նափոլէոնի . 375
Ե. Նափոլէոն հաստատէ զդաշնակցութիւնն Գերմանական. և

պատերազմի ընդ Բրուսացս և
ընդ Ռուսաց 378
Զ. Գրգռեալ Նափոլէոնի զԱնգղիա-
ցիս 'ի պատերազմ 382
Է. Տիրակալութիւնք Նափոլէոնի 'ի
Սպանիա 285
Ը. Վտարանջեալ Սպանիոյ 'ի ներ-
քուստ ձեռին Գաղղիացւոց, և
պատերազմաւ ընդդէմ կալ . 388
Թ. Միւսանգամ պատերազմն Աւս-
տրիացւոց ընդ Նափոլէոնի . . 395
Ժ. Գրաւեալ Նափոլէոնի զՀռոմ, և
արտասահման առնեալ զքահա-
նայապետն. 401
ԺԱ. Դարձեալ միւսանգամ արու-
թիւնք Սպանիացւոց ընդդէմ
Գաղղիացւոց 404
ԺԲ. Վելինկդրնի զօրավարին Անգ-
ղիացւոց աղատել զՓորթոգալս
և զՍպանիա 'ի տիրապետու-
թենէ Գաղղիացւոց 407
ԺԳ. Աշխարհաշինութիւնք Նափո-
լէոնի, և պատճառք բարձրու-
թեան և անկման նորա . . . 409
ԺԴ. Գրգռեալ Ռուսաց ընդ Նափո-
լէոնի, և ժողով թագաւորաց
'ի Տրեզտա. 415
ԺԵ. Խաղալ Նափոլէոնի 'ի Ռուսա-
առումն Մոսկուայ, և հրդեհ
նորին 417
ԺԶ. Սկիզբն հարուածոց Նափոլէո-
նի, և աղէտք որ 'ի ցրտոյ և 'ի

սովոյ 422
ԺԷ. Որ ինչ առ Նիեբեր գետով Գաղղիացւոց աղէտք, և դարձ Նափոլէոնի 'ի Փարիզ. 426
ԺԸ. Ժողով Թագաւորաց 'ի Փրակա և միաբանել ընդդէմ Նափոլէոնի. պատերազմ և յաղթութիւնք Գաղղիացւոց 'ի Տրեզտա և պարտութիւն 'ի Լիպսիա. 431
ԺԹ. Խրախուսել անդրէն Նափոլէոնի ընդդէմ համագումար պետութեանցն 'ի պատերազմ. . 434
Ի. Յաղթութիւն Պլիւխէրայ 'ի Պրիէն 'ի վերայ Նափոլէոնի: Միւսանգամ զօրանալ Նորա և մերժել զպայմանս դաշնակից պետութեանց. 438
ԻԱ. Դիմել դաշնակցացն 'ի մայրաքաղաքն 'ի Փարիզ և առնուլ . 442
ԻԲ. Անկումն Նափոլէոնի, և սահմանադրութիւնք դաշնակից պետութեանց 'ի Փարիզ. . . . 444

ՊԱՅՄԱՆԱՒՈՐ ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Ա. Թագաւորել Լուդովիկեայ ԺԸ. 450
Բ. Սահմանադրութիւնք Լուդովիկեայ, և գժտութիւնք անտի դրդռեալ յազգին. 454
Գ. Դարձ Նափոլէոնի 'ի կղզւոյն Էլպայ 'ի Փարիզ 456

Դ. Վայրապար ջանք Նափոլէոնի առ 'ի քաղցրութեամբ որսալ զսիրտ Ժողովրդեանն . . . 461
Ե. Դիմել համագումար պետութեանցն ընդդէմ Նափոլէոնի, պարտութիւն նորա, և աքսոր անդարձ 'ի սուրբն Հեղինէ . . 464
Զ. Տարազ կենաց Նափոլէոնի յաքսորանս իւր 469
Է. Մահ Նափոլէոնի և նկարագիր նորա 475
Ը. Կրկին հաստատութիւն թագաւորութեան Լուդովիկոսի . 479
Թ. Խլրտել Գաղղիացւոց վերստին ընդդէմ միապետութեան . . 484
Ժ. Թագաւորութիւն Կարոլոսի Ժ. և անկումն նորա 488
ԺԱ. Թագաւորել Լուդովիկոսի Փիլիպպեայ 492
ԺԲ. Դաւաճանք ընդդէմ կենաց արքային, և այլ դէպք ժամանակաց 496
ԺԳ. Վասն վերջնոյ խռովութեանն և մերժելոյ Լուդովիկեայ Փիլիպպեայ 'ի գահուն, և վասն մահու նորին ալքայի, և այժմեան պայմանի Գաղղիոյ . . 500

ԱՆՈՒԱՆՔ ԹԱԳԱՒՈՐԱՑՆ

ԳԱԼԼԻԱՅԻՈՅ

Ա. ՏՈՀՄ. ՄԵՐՈՎԵԱՆՔ

Փարամոնտ.	Pharamond.
Կղոդիոն.	Clodion.
Մերովէ.	Merové.
Քիլդեբիկոս Ա.	Childéric I.
Կլովիս Ա.	Clovis I.
Թէոդորիկոս կամ Թիէրրի Ա.	Thierri I.
Կլոդիմիրոս.	Clodomir.
Քիլդիբերտոս Ա.	Childebert I.
Կլոտարիոս Ա.	Clotaire I.
Թէոդեբերտոս.	Théodebert.
Թէոդեբալտոս.	Theodobald.
Քարիբերտոս Ա.	Charibert I.
Կոնդրանոս.	Gontran.
Սիգեբերտոս Ա.	Sigebert I.
Քիլբերիկոս Ա.	Chilpéric I.
Քիլդիբերտոս Բ.	Childebert II.
Թէոդեբերտոս Բ.	Théodebert II.
Թիէրրի Բ.	Thierri II.
Կլոտարիոս Բ.	Clotaire II.
Քարիբերտոս Բ.	Charibert II.
Դագոբերտոս Ա.	Dagobert I.
Սիգեբերտոս Բ.	Sigebert II.
Կլովիս Բ.	Clovis II.

Կլոտարիոս Գ.	Clotaire III.
Քիլդերիկոս Բ.	Childéric II.
Թիէրրի Գ.	Thierri III.
Դագոբերտոս Բ.	Dagobert II.
Կլովիս Գ.	Clovis III.
Քիլդիբերտոս Գ.	Childebert III.
Դագոբերտոս Գ.	Dagobert III.
Քիլբերիկոս Բ.	Chilpéric II.
Կլոտարիոս Դ.	Clotaire IV.
Թիէրրի Դ.	Thierri IV.
Քիլդերիկոս Գ.	Childéric III.

Բ. ՏՈՀՄ. ԿԱՐՈԼՈՍԵԱՆՔ

Պեպինոս Կարճն.	Pepin le Bref.
Մեծն Կարոլոս.	Charlemagne.
Լուդովիկոս Ա. Բարեպաշտ.	Louis I. le Débonnaire.
Կարոլոս Բ. Ճաղատ.	Charles II. le Chauve.
Լուդովիկոս Բ. Թոթով.	Louis II. le Begue.
Լուդովիկոս Գ.	Louis III.
Կարլոմանոս.	Carloman.
Կարոլոս Գ.	Charles III.
Եուդէոս.	Eudes.
Կարոլոս Դ. Պարզամիտ.	Charles IV. le Simple.
Հռոբերտոս Ա.	Robert I.
Հռոտոլփոս կամ Հըռաուլ	Rodolphe ou Raoul.
Լուդովիկոս Դ. Տ'ուր	Louis IV. Outre-

թերմեր.	mer.
Լոթարիոս.	Lothaire.
Լուդովիկոս Ե.	Louis V. le Fainéant.

Գ. ՏՈՀՄ. ԳԱՊԷԹԵԱՆՔ

Ուկոս Գաբէթ.	Hugues Capet.
Հռոբերտոս Բ.	Robert II. le Saint.
Հենրիկոս Ա.	Henri I.
Փիլիպպոս Ա.	Philippe I.
Լուդովիկոս Զ. Յոյր.	Louis VI. le Gros.
Լուդովիկոս Է. Կըրտսեր.	Louis VII. le Jeune.
Փիլիպպոս Բ. Օգոստոս.	Philippe II. Auguste.
Լուդովիկոս Ը.	Louis VIII.
Լուդովիկոս Թ.	Louis IX.
Փիլիպպոս Գ. Յանդուգն.	Philippe III. le Hardi.
Փիլիպպոս Դ. Գեղեցիկ.	Philippe IV. le Bel.
Լուդովիկոս Ժ. Խեռ.	Louis X. le Hutin.
Յովհաննէս Ա.	Jean I.
Փիլիպպոս Ե. Երկայն.	Philippe V. le Long.
Կարոլոս Դ. Գեղեցիկ.	Charles IV. le Bel.
Փիլիպպոս Զ. Վալուա.	Philippe VI. le Valois.
Յովհաննէս Բ.	Jean II.
Կարոլոս Ե. Զգօն.	Charles V. le Sage.
Կարոլոս Զ.	Charles VI.

Կարոլոս Է.	Charles VII.
Լուդովիկոս ԺԱ.	Louis XI.
Կարոլոս Ը.	Charles VIII.
Լուդովիկոս ԺԲ.	Louis XII.
Փրանկիսկոս Ա.	Francois I.
Հենրիկոս Բ.	Henri II.
Փրանկիսկոս Բ.	Francois II.
Կարոլոս Թ.	Charles IX.
Հենրիկոս Գ.	Henri III.
Հենրիկոս Դ.	Henri IV.
Լուդովիկոս ԺԳ.	Louis XIII.
Լուդովիկոս ԺԴ.	Louis XIV.
Լուդովիկոս ԺԵ.	Louis XV.
Լուդովիկոս ԺԶ.	Louis XVI.
Լուդովիկոս ԺԷ.	Louis. XVII.
Նափոլէոն Պոնապարթէ.	Bonaparte.
Լուդովիկոս ԺԸ.	Louis XVIII.
Կարոլոս Ժ.	Charles X.
Լուդ. Փիլիպպոս.	Louis Philippe.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՍՍՀ-ում
Ա. Մաշտոցի անվան

20

31/I..42